ՊԼԱՏՈՆ

ԵՐԿԵՐ
ՉՈՐՍ ՀԱՏՈՐՈՎ

ՀԱՏՈՐ IV

ՍԱՅԱՆ ԽԱՉԵՆՑ • ՕՐԻՆԱՑԻՆՅԱՆ • ԱՆՏԱՐԵՍ

‘ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ’ ԳՐԱԴԱՐԱՆ

փիլիսոփայություն

1915.info

ΠΛΑΤΩΝ

ΠΟΛΙΤΕΙΑ

Αρμενική μετάφρασις από τα
Ελληνικά και σημειώματα
ΣΕΡΓΕΙ ΣΤΕΦΑΝΙΑΝ

ΕΡΕΒΑΝ 2017
ΣΑΡΚΙΣ ΧΑΤΣΕΝΤΣ • ΠΡΙΝΤΙΝΦΟ • ΑΝΤΑΡΗΣ

ՊԼԱՏՈՆ

ԵՐԿԵՐ ՉՈՐՍ ՀԱՏՈՐՈՎ

Հատոր IV

Հին հունարենից թարգմանեց և
ծանոթագրությունները գրեց՝
ՍԵՐԳԵՅ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2017
ՍԱՐԳԻՍ ԽԱՉԵՆՑ • ՓՐԻՆԹԻՆՖՈ • ԱՆՏԱՐԵՍ

Խմբագիր՝ Սարգիս Լևոնյան

Գիրքը լույս է տեսել
5165 ակումբի
աջակցությամբ

ISBN 978-9939-852-13-3

© Սերգեյ Ստեփանյան, 2017
© Սարգիս Խաչենց & ՓՐԻՆԹԻՆՖՈ, 2017, *'Իմացություն' գրադարան*
© Անտարես, 2017

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

1915.info

ՍՈԿՐԱՏԵՍ, ԳԼԱՎԿՈՆ, ՊՈԼԵՄԱՐՔՈՍ, ԹՐԱՍԻՄԱՔՈՍ, ԱԴԻՄԱՆՏՈՍ, ԿԵՓԱԼՈՍ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

Երեկ Արիստոնի որդի Գլավկոնի հետ գնացի Պիրևս՝ աղոթելու դիցուհուն[1] և տեսնելու, թե ինչպես կնշեն նրա տոնը, քանի որ դա առաջին անգամ էր տեղի ունենում: Կարծում եմ՝ տեղացիների շքերթը գեղեցիկ էր, թեպետ թրակացիներինը նրան չէր զիջում: Աղոթելուց և շքերթը դիտելուց հետո մենք ուղևորվեցինք քաղաք: Այդժամ Կեփալոսի որդի Պոլեմարքոսը[2], հեռվից մեզ տեսնելով, հրամայեց ստրուկին հասնել մեզ և խնդրել, որ սպասենք իրեն: Ստրուկը, ետևից բռնելով իմ հիմատիոնը, ասաց. 327 b

– Պոլեմարքոսը խնդրում է, որ սպասեք իրեն:

Շրջվելով՝ հարցրի, թե որտեղ է նա:

– Այնտեղ, մոտենում է: Սպասեք:

– Իհարկե կսպասենք,– պատասխանեց Գլավկոնը: c

Քիչ անց մոտեցավ Պոլեմարքոսը: Նրա հետ էին Գլավկոնի եղբայր Ադիմանտոսը, Նիկիոսի որդի Նիկերատոսը և էլի ոմանք, որ վերադառնում էին հանդիսությունից: Պոլեմարքոսն ասաց.

– Ինձ թվում է, Սոկրատես, դուք քաղաք եք վերադառնում:

– Քեզ ճիշտ է թվում:

– Տեսնու՞մ ես, ինչ շատ ենք մենք:

– Ինչպե՞ս չէ:

– Կա՛մ պետք է մեր հախից գաք, կա՛մ էլ մնաք մեզ հետ: d

– Բայց գուցե կարողանանք ձեզ համոզե՞լ, որ մեզ բաց թողնեք:

– Ինչպե՞ս կհամոզեք նրանց, ովքեր չեն էլ լսում:

– Ոչ մի կերպ,– ասաց Գլավկոնը:

– Ուրեմն համարեք, որ չենք լսի:

328 Ադիմանտոսն ասաց.

– Մի՞թե չգիտեք, որ երեկոյան ջահերով ձիավազք է լինելու աստվածուհու պատվին:

– Ձիավա՞զք,– հարցրի ես,– սա նորություն է: Այսինքն՝ ձիավազքի ընթացքում հեծյալները միմյանց պիտի փոխանցեն ջահե՞րը: Դա՞ նկատի ունես:

– Հենց դա,– պատասխանեց Պոլեմարքոսը,– և բացի այդ, կլինեն գիշերային հանդիսություններ, որոնք արժե դիտել: Ընթրիքից հետո կգնանք դիտելու հանդեսը, ուր կհանդիպենք բազում երիտասարդների և կզրուցենք նրանց հետ: Անպայման մնացեք:

b Գլավկոնն ասաց.

– Թերևս մնանք:

– Եթե համաձայն եք,– պատասխանեցի ես,– այդպես էլ կանենք:

Գնացինք Պոլեմարքոսի տուն և այնտեղ տեսանք Լիսիասին և Եվթիդեմոսին՝ Պոլեմարքոսի եղբայրներին, քաղկեդոնցի Թրասիմաքոսին, պեանացի Քարմանտիդեսին և Արիստոնիմոսի որդի Կլիտոփոնին: Այստեղ էր նաև Պոլեմարքոսի հայրը՝ Կեփալոսը: Նա ինձ ծերացած թվաց, քանի որ շատ ժա-
c մանակ էր անցել, ինչ վերջին անգամ տեսել էի նրան: Նա նստած էր բազկաթոռին դրված բարձի վրա՝ պսակը գլխին, որովհետև քիչ առաջ բակում զոհաբերություն էր կատարել: Մենք նստեցինք նրա կողքին՝ շուրջանակի դրված աթոռներին: Տեսնելով ինձ՝ Կեփալոսն իսկույն ողջունեց և ասաց.

– Սոկրատես, դու Պիրևս հազվադեպ ես այցելում: Եվ իզուր: Եթե նախկինի պես հեշտությամբ կարողանայի քաղաք գալ, դու ստիպված չէիր լինի այստեղ հասնել, մենք կգայինք քեզ մոտ: Բայց հիմա դու պետք է ավելի հաճախ այցելես մեզ:
d Լավ իմացիր, որ ինչքան նվազեցին իմ մարմնական հաճույք-

ները, այնքան աճեց զրույցների և դրանց պատճառած հաճույքների կարիքը: Մի՛ խուսափիր այս երիտասարդների հետ շփվելուց և ընդունիր մեզ իբրև քո բարեկամների և հարազատների:

– Ո՛վ Կեփալոս,– պատասխանեցի ես,– ուրախ եմ զրուցել տարեց մարդկանց հետ, քանզի հավատացած եմ, որ մենք նրանցից պիտի տեղեկանանք այն ճանապարհի մասին, որն e
ինքներս էլ գուցե անցնենք, և պիտի պարզենք, թե ինչպիսին է այն՝ փշոտ ու դժվարի՞ն, թե՞ հարմար ու դյուրանցանելի: Եվ քանի որ դու արդեն այն տարիքում ես, որը բանաստեղծները մոտալուտ ծերություն են կոչում, սիրով կհարցնեի, թե ինչպիսին է հիմա քեզ թվում կյանքդ: Ծա՞նր է արդյոք: Ի՞նչ կասես:

– Զնսը վկա, Սոկրատես, կասեմ, թե ինչպիսին է այն ինձ թվում: Ես և իմ տարիքի մարդիկ հաճախ ենք հավաքվում՝ 329
հաստատելով հին ասացվածքը: Եվ երբ հավաքվում ենք, մեզնից շատերը ափսոսանքով հիշում են երիտասարդ տարիքի հաճույքները՝ սիրային վայելքները, գինարբուքները, խրախճանքները և այլն, ու տրտնջում, որ զրկվել ենք մեծ բանից, որ լավ ենք ապրել այն ժամանակ, իսկ հիմա չենք ապրում: Ոմանք էլ դժգոհում են տնեցիներից, որոնք արհամարհում են b
իրենց տարիքի համար, և կրկնում հին երգը, թե ծերությունը բազում չարիքների պատճառ է: Բայց ես, Սոկրատես, կարծում եմ՝ նրանք չեն նշում իրական պատճառը: Քանզի եթե պատճառը ծերությունը լիներ, ես էլ իմ տարեկիցների պես պիտի զգայի նույնը: Բայց ես հանդիպել եմ նաև այնպիսի տարեցների, որոնք նման են ինձ: Այսպես, բանաստեղծ Սոփոկլեսին իմ ներկայությամբ հարցրեցին.

«Ի՞նչ ես զգում սիրային վայելքների հանդեպ, դեռ կարո՞ղ c
ես կնոջ հետ կենակցել»:

Իսկ սա պատասխանեց.

«Վե՛րջ տուր, ա՛յ մարդ, ես մեծագույն ուրախությամբ փախա դրանից, ինչպես որ փախչում են կատաղի ու դաժան մի տիրակալից»:

Սոփոկլեսի պատասխանն ինձ այն ժամանակ էլ չթվաց վատը, բայց հիմա ավելի է դուր գալիս: Չէ՞ որ ծերության տարիներին կատարյալ խաղաղություն և ազատություն է սկսվում, դադարում և թուլանում են տենչանքներն ու իղձե-
d ը, սկիզբ է առնում մի վիճակ, երբ, ինչպես ասում է Սոփոկլեսը, ազատվում ես բազում մոլի տիրակալներից: Իսկ այդ ամենի և տնեցիների հետ ծագող խնդիրների պատճառը մեկն է՝ ոչ թե ծերությունը, Սոկրատես, այլ մարդու բնությունը: Ժուժկալներն ու բարեհոգիները ծեր տարիքում լոկ չափավոր դժվարություններ են կրում: Իսկ ով այդպիսին չի եղել, Սոկրատես, բախվում է դժվարությունների թե՛ ծեր և թե՛ երիտասարդ տարիքում:

Հիանալով այդ խոսքերով՝ ես ցանկացա շարունակել զրույցը և ասացի.

e – Ո՛վ Կեփալոս, շատերն ըստ իս, լսելով քեզ, չեն ընդունի դա, այլ կկարծեն, թե հեշտ ես տանում ծերությունը ոչ թե շնորհիվ քո բնության, այլ մեծ ունեցվածքի: Չէ՞ որ, ինչպես ասում են, «հարուստին՝ բազում սփոփանք»:

– Ճիշտ ես ասում,– պատասխանեց Կեփալոսը,– չեն ընդունի ու կառարկեն, սակայն ինչ էլ ասեն, տեղին կլինի պա-
330 տասխանը, որը Թեմիստոկլեսը տվեց մի սերիփոսցու, երբ սա նախատում էր իրեն՝ հայտարարելով, թե իր փառքով պարտական է ոչ թե իրեն, այլ քաղաքին: Թեմիստոկլեսն ասաց. «Իհարկե, եթե ես սերիփոսցի լինեի, այդքան հռչակ չէի ունենա, բայց դու չէիր հռչակվի, անգամ եթե աթենացի լինեիր»[3]: Այսպես կարելի է պատասխանել նաև այն հարուստներին, որոնք ծանր են տանում ծերությունը: Ժուժկալ մարդուն այնքան էլ դյուրին չէ տանել աղքատ ծերությունը, մինչդեռ ոչ ժուժկալին, որքան էլ հարուստ լինի, չքավոր ծերությունը միշտ էլ անտանելի է:

– Կեփալոս,– հարցրեցի ես,– իսկ քո ունեցվածքը դու ձե՞ռք ես բերել, թե՞ հիմնականում ժառանգել ես:

b – Ինչպե՞ս թե ձեռք եմ բերել, Սոկրատես,– պատասխանեց

նա,– որպես գործի մարդ ես գտնվում եմ իմ պապի և հորս ճիշտ մեջտեղում: Իմ պապը՝ անվանակիցս, ժառանգեց գրեթե այնքան, որքան ես ունեմ հիմա, բայց մի քանի անգամ բազմապատկեց այն, իսկ իմ հայր Լիսանիասը դարձրեց իմից էլ պակաս: Ես ուրախ եմ, որ ահա սրանց կթողնեմ ոչ թե պակաս, այլ ավելի շատ, քան ստացել եմ:

– Հարցրեցի, որովհետև կարծում եմ՝ դու առանձնապես c
փողասեր չես: Իրականում այդպիսին են նրանք, ովքեր իրենք չեն ձեռք բերել իրենց հարստությունը: Բայց նրանք, ովքեր իրենք են ձեռք բերել, գնահատում են կրկնակի: Ինչպես որ բանաստեղծներն են սիրում իրենց երկերը կամ հայրերն՝ իրենց զավակներին, այդպես էլ հարստացածները հոգ են տանում իրենց հարստության մասին ասես մի ստեղծագործության, որին դիմում են միայն ըստ անհրաժեշտության և գործածում, ինչպես ուրիշները: Նրանց հետ դժվար է շփվել, քանի որ բացի դրամից ուրիշ ոչինչ նրանց սրտով չէ:

– Իրավացի ես:

– Բայց ասա ինձ, հարստություն ունենալու դեպքում d
ի՞նչը կարող է լինել մեծագույն բարիք:

– Գուցե շատերը չհավատան ինձ: Բայց լավ իմացիր, Սոկրատես, որ երբ որևէ մեկին մոտ է թվում իր վախճանը, նրա մեջ վախ է մտնում, և նա սկսում է մտածել բաներ, որոնք նախկինում չի մտածել: Հադեսի մասին պատմությունները, թե անարդարին այնտեղ պատիժ է սպասում, նա մինչ այդ ծաղրում էր, բայց հիմա դրանք տակն ու վրա են անում իր e
հոգին,– գուցե դրանք ճշմարի՞տ են: Եվ ծերունական անկարողության պատճառով կամ՝ որ արդեն մոտ է այն աշխարհին, ավելի պայծառ է տեսնում: Դառնում է կասկածամիտ ու զգուշավոր, խորհում է և փորձում է պարզել՝ չի՞ գործել արդյոք որևէ մեկի հանդեպ ինչ-որ անարդարություն: Նա, ով իր կյանքում գործած բազում անարդարություններ է գտնում, քնից հանկարծ արթնացած մանկան պես վախենում է և հետագա կյանքից սպասում միայն չարիք: Իսկ նա, ով ոչ ոքի հանդեպ

331 անարդարություն չի գործել, միշտ ապրում է լավագույնի հույսով, որը, ինչպես ասում է Պինդարոսը[4], ծերության բարի ստնտուն է: Հրաշալի է ասել, Սոկրատես, քանզի ասել է, որ նա, ով արդար և բարեպաշտ է ապրում իր կյանքը,

Ունի սիրտ փայփայող քաղցր հույս,
Ծերության ստնտու,
Որ ամենից շատ է կառավարում
Փոփոխական մարդու միտք:

Լավ է ասել, զարմանալիորեն արտահայտիչ: Ես կավելաց-
b նեմ դրան, որ հարստություն ունենալը շատ արժանի բան է, բայց ոչ ամեն մարդու, այլ ազնիվի համար: Քանզի հեռանալ այն աշխարհ առանց վախենալու, որ որևէ մեկին ակամա խաբել ես կամ մոլորեցրել, թերացել ես աստծուն հասանելիք զոհ մատուցելու մեջ կամ յուրացրել ես ուրիշի դրամը,– այս ամենը մեծ չափով կապված է ունեցվածքի հետ: Կան նաև ուրիշ բազում կարիքներ, սակայն դնելով դրանք մեկը մյուսի կողքին՝ ես, Սոկրատես, գտնում եմ, որ խելամիտ մարդու համար հարստությունը չափազանց կարևոր է:

– Հրաշալի ասացիր, ո՛վ Կեփալոս: Իսկ ինքը՝ այդ արդա-
c ությու՞նը: Համարենք այն պարզապես ազնվություն և պարտքի վերադա՞րձ, թե՞ միևնույն արարքը երբեմն արդար է, երբեմն՝ անարդար: Օրինակ՝ եթե մեկն իր բարեկամից զենք է վերցրել, երբ սրա խելքը տեղն էր, իսկ հետո, երբ սա ցնորվի և հետ պահանջի իր զենքը՝ վերադարձնի, բոլորը կասեն, որ վերադարձնելը ճիշտ չէ, և անարդար է նա, ով այդպես է վարվում կամ որոշել է ասել այդպիսի մարդուն ողջ ճշմարտությունը:

d – Իրավացի ես:

– Հետևաբար ճշմարտության սահմանումը ճիշտ խոսելը կամ վերցրածը վերադարձնելը չէ:

– Հենց դա է, Սոկրատես,– առարկեց Պոլեմարքոսը,– եթե հավատանք Սիմոնիդեսին[5]:

– Լավ,– ասաց Կեփալոսը,– ձեզ եմ թողնում այս զրույցը: Իսկ ես պիտի զոհ մատուցեմ:

– Ուրեմն,– ասացի ես,– քո ժառանգը կլինի Պոլեմարքո՞սը:

– Իհարկե,– ժպտալով պատասխանեց Կեփալոսը և դուրս եկավ բակ:

– Դե՛, զրույցի ժառանգ, ասա՛, ըստ քեզ այդ ի՞նչ ճշմարիտ e
բան է ասել Սիմոնիդեսը արդարության մասին:

– Այն, որ պարտք վերադարձնելն արդար է: Իմ կարծիքով, շատ գեղեցիկ է ասել:

– Դժվար է չհավատալ Սիմոնիդեսին: Նա իմաստուն և աստվածային մարդ է: Թե ինչ նկատի ունի, դու հավանաբար հասկանում ես, Պոլեմարքոս, իսկ ես՝ ոչ: Պարզ է, որ Սիմոնիդեսը նկատի չունի այն, ինչ նոր ասացինք, այսինքն՝ որ
հարկ է վերադարձնել պարտքը տիրոջ պահանջով, անգամ 332
եթե խելքը տեղը չէ, թեև հենց նա է փոխ տվել այն, ինչ օգտագործել ենք: Այդպես չէ՞:

– Այդպես է:

– Բայց չէ՞ որ ոչ մի դեպքում չի կարելի վերադարձնել, երբ դա պահանջում է ցնորվածը:

– Ճշմարիտ է:

– Ուրեմն Սիմոնիդեսը, ինչպես երևում է, այլ բան նկատի ունի՝ ասելով, թե պարտք վերադարձնելն արդարացի է:

– Այո, Զևսը վկա,– պատասխանեց Պոլեմարքոսը,– նա համարում է, որ բարեկամների պարտքն է բարիք գործել իրենց բարեկամներին և չգործել չարիք:

– Հասկանում եմ,– պատասխանեցի ես,– իրեն փոխ տրված b
դրամը վերադարձնելիս պարտառուն չի վերադարձնում այն, ինչ պիտի վերադարձնի, եթե տալն ու առնելը վնաս են հասցնում, չէ՞ որ տվողն ու առնողը բարեկամներ են: Մի՞թե դա նկատի չունի, ըստ քեզ, Սիմոնիդեսը:

– Իհարկե դա:

– Իսկ եթե հարկ է լինում պարտքը վերադարձնել թշնամիների՞ն:

– Անպատճառ պետք է վերադարձնել: Ես կարծում եմ, որ թշնամին պետք է, ինչպես հարկն է, թշնամուն հատուցի չարիքով[6]:

c – Այդ դեպքում, ինչպես երևում է, Սիմոնիդեսը բանաստեղծորեն մթնեցրել է արդարության էությունը: Միգուցե նա նկատի ունի, որ արդար է յուրաքանչյուրին վերադարձնել այն, ինչ հարկ է, և դա կոչում է պարտավորություն:

– Իսկ դու՞ ինչ ես կարծում:

– Ձևսը վկա,– պատասխանեցի ես,– եթե որևէ մեկը հարցներ նրան. «Սիմոնիդես, ի՞նչ և ինչի՞ն պետք է նշանակել,– իհարկե պիտանի և օգտակար,– որպեսզի դա կոչվի բժշկության արվեստ», ի՞նչ կպատասխաներ նա մեզ քո կարծիքով:

– Պարզ է, մարմնին՝ դեղեր, սնունդ և խմիչք:

– Իսկ ի՞նչ պետք է ավելացնել և ինչի՞ն, որպեսզի դա հատուկ լինի խոհարարական արվեստին:

d – Համեմունք՝ կերակուրներին:

– Շատ լավ: Իսկ ի՞նչ պետք է տալ և ու՞մ, որպեսզի դա հատուկ լինի արդարություն կոչվածին:

– Եթե հետևենք քիչ առաջ ասվածին, Սոկրատես, բարեկամներին՝ օգուտ, իսկ թշնամիներին՝ չարիք:

– Ուրեմն բարեկամներին բարիք, իսկ թշնամիներին չարիք գործելը նա համարում է արդարությու՞ն:

– Ըստ իս, այո:

– Իսկ հիվանդության և առողջության վերաբերմամբ ո՞վ կարող է ամենից շատ բարիք գործել իր բարեկամներին և չարիք՝ թշնամիներին:

– Բժիշկը:

e – Իսկ նավագնացներին ծովում վտանգի պահի՞ն:

– Նավավարը:

– Իսկ արդարի հարցու՞մ: Ի՞նչ գործերով և ի՞նչ բնագավառում է նա ամենից շատ ունակ օգուտ բերելու բարեկամներին և վնասելու թշնամիներին:

– Ինձ թվում է, թշնամիներին՝ նրանց դեմ պատերազմելով, և բարեկամներին՝ նրանց հետ համատեղ կռվելով:

– Լավ: Սակայն, սիրելի՛ Պոլեմարքոս, նրանց, ովքեր հիվանդ չեն, բժիշկ հարկավոր չէ:

– Ճշմարիտ է:

– Իսկ նրան, ով չի նավարկում, հարկավոր չէ նավավար:

– Այո:

– Ուրեմն նաև նրանց, ովքեր չեն պատերազմում, արդար մեկը հարկավոր չէ:

– Ինձ այդպես չի թվում:

– Ուրեմն արդարությունը պետք է նաև խաղա՞ղ ժամանակ: 333

– Պետք է:

– Իսկ հողագործությունը պե՞տք է, թե՞ ոչ:

– Այո:

– Բերք ունենալու համա՞ր:

– Այո:

– Բայց անհրաժեշտ է նաև կոշկակարությունը:

– Այո:

– Որպեսզի ոտնամաններ ունենանք, այնպես չէ՞:

– Իհարկե:

– Ուրեմն ի՞նչ կարիք հոգալու և ի՞նչ ստանալու համար է անհրաժեշտ արդարությունը խաղաղ ժամանակ:

– Գործերի համար, Սոկրատես:

– Գործեր ասելով նկատի ունես որոշակի ընկերակցությու՞ն, թե՞ ոչ:

– Այո, ընկերակցություն:

– Իսկ լավ և օգտակար ընկերակից տամախաղի մեջ կլինի b
նա, ով արդա՞ր է, թե՞ ով լավ է խաղում:

– Լավ խաղացողը:

– Իսկ քար ու աղյուս շարելիս արդարն ավելի օգտակար և ավելի՞ հմուտ է շինարարից:

– Բնավ:

– Կիթառահարության մեջ կիթառահարն ավելի հմուտ է

արդար մեկից: Իսկ ինչու՞մ է արդար մարդու ընկերակցությունն առավել նախընտրելի կիթառահարի ընկերակցությունից:

– Կարծում եմ, դրամական հարցերում:

– Բացի այն դեպքերից, երբ հարկ է լինում ծախսել դրա-
c մը, Պոլեմարքոս: Չէ՞ որ եթե պետք լինի միասին ձի գնել կամ վաճառել, այդժամ, կարծում եմ, օգտակար կլինի հեծյալը: Այդպես չէ՞:

– Երևում է, այդպես է:

– Իսկ նավ գնելիս՝ նավաշինարարը կամ նավավարը:

– Թերևս:

– Երբ հարկ է համատեղ օգտագործել արծաթն ու ոսկին, արդյո՞ք արդարն ավելի օգտակար է մյուսներից:

– Այո, երբ դրանք ի պահ են տրվում կամ ավանդ են թողնվում, Սոկրատես:

– Այսինքն, երբ դրանք, քո ասելով, ոչ թե օգտագործվում են, այլ պահվու՞մ:

– Իհարկե:

d – Ուրեմն, երբ դրամն անօգուտ է, օգտակար է արդարությու՞նը:

– Երևում է, այո:

– Երբ հարկավոր է պահ տալ այգեգործական դանակը, օգտակար է հանրային և մասնավոր արդարությունը, իսկ օգտագործելու համար հարկավոր է խաղողագործի հմտությու՞նը:

– Թերևս:

– Հավանաբար կասես, որ երբ անհրաժեշտ է պահ տալ վահանն ու քնարը և միևնույն ժամանակ չօգտվել դրանցից, արդարությունն օգտակար է, իսկ երբ պետք է օգտվել դրանցից, օգտակար է հոպլիտների և երաժիշտների արվեստը:

– Անհրաժեշտաբար:

– Մնացյալի մեջ ևս ինչ-որ բանից օգտվելիս արդարությունն օգտակար չէ, իսկ չօգտվելիս օգտակա՞ր է:

– Ըստ երևույթին:

– Հետևաբար, բարեկա՛մս, արդարությունը մեծ բան չէ, եթե օգտակար է միայն անօգտակարության մեջ: Քննենք հետևյալը: Նա, ով ուժեղ է բռնցքամարտում կամ մեկ այլ մարտարվեստում, գիտի նաև պաշտպանվել, այդպես չէ՞: e

– Իհարկե:

– Իսկ նա, ով կարող է պաշտպանվել և խույս տալ հիվանդությունից, կարող է հիվանդության հասցնել ուրիշին:

– Կարծում եմ, այո:

– Եվ իր զորքի ավելի լավ պաշտպան է նա, ով կարող է թափանցել թշնամու ծրագրերի մեջ և կանխել նրա գործողությունները: 334

– Իհարկե:

– Ուրեմն նա, ով լավ պահապան է, նաև խարդախի մեկն է:

– Թերևս:

– Հետևաբար, եթե արդար մարդը կարող է լավ պահպանել դրամը, կարող է նաև գողանալ այն:

– Դա է բխում մեր քննությունից:

– Հետևաբար արդար մարդը, ինչպես երևում է, գող է: Դա պիտի որ սովորած լինես Հոմերոսից: Բանաստեղծը բարձր է գնահատում Ավտոլիկոսին՝ Ոդիսևսի մորական պապին, և ասում, որ սա մարդկանց մեջ ամենամեծ գողն ու ուխտադրուժն էր[7]: Այնպես որ, ըստ քեզ, Հոմերոսի և Սիմոնիդեսի՝ արդարությունը մի տեսակ գողություն է, սակայն օգուտ է բերում բարեկամներին և վնասում մեր թշնամիներին: Այդպես չէի՞ր ասում: b

– Ո՛չ, Զևսը վկա. ես այլևս չգիտեմ, թե ինչ էի ասում: Բայց կարծում եմ՝ բարեկամներին օգուտ տալն ու թշնամիներին վնասելը արդարություն է:

– Իսկ ովքե՞ր են բարեկամները: Նրանք, ովքեր թվո՞ւմ են լավ մարդ, թե՞ նրանք, որ այդպիսին են, թեկուզև այդպիսին չեն թվում: Նույնը նաև թշնամիների պարագայում: c

– Թերևս նրանց, ովքեր համարվում են լավը, պետք է սի-
րել, իսկ նրանց, ովքեր համարվում են հոռի՝ ատել:

– Մի՞թե մարդիկ այդկերպ սխալ չեն վարվում: Չէ՞ որ շա-
տերը նրանց օգտակար են թվում, թեպետ այդպիսին չեն, և
հակառակը:

– Սխալվում են:

– Ուրեմն բարի մարդիկ նրանց թշնամի են, իսկ հոռիները՝
բարեկամնե՞ր:

– Այո:

– Բայց այդ դեպքում արդար կլինի օգուտ տալ հոռի
d մարդկանց, իսկ բարիներին՝ վնասե՞լ:

– Երևում է, այդպես է:

– Սակայն բարի մարդիկ արդար են և ունակ չեն անար-
դարություն գործելու:

– Ճշմարիտ է:

– Քո ասելով, արդար կլիներ չարիք գործել նրանց, ովքեր
անարդարություն չեն գործում:

– Ոչ մի դեպքում, Սոկրատես: Այդպիսի հետևությունն,
իհարկե, սխալ է:

– Ուրեմն արդար կլիներ վնասել անարդարներին և օգուտ
տալ արդարներին:

– Սա կարծես ավելի լավ հետևություն է:

– Արդ, Պոլեմարքոս, մարդկանցից շատերի հետ, որոնք
սխալվում են, պատահում է, որ իրենց կարծիքով արդար է
e բարեկամներին վնասելը, քանզի նրանց վատն են համարում,
իսկ թշնամիներին օգնում են, որովհետև համարում են բարի:
Այսկերպ մենք Սիմոնիդեսի ասածի հակառակն ենք պնդում:

– Այդպես հաճախ է պատահում: Բայց ավելացնենք, որ
թերևս ճիշտ չենք որոշել, թե ով է մեզ բարեկամ և ով՝ թշնամի:

– Իսկ ինչպե՞ս ենք որոշել, Պոլեմարքոս:

– Նա, ով արդար է թվում, բարեկամ է:

– Իսկ ի՞նչ հավելենք:

– Բարեկամ է նա, ով և՛ թվում է այդպիսին, և՛ այդպիսին է

իրականում: Իսկ նա, ով թվում է, բայց իրականում այդպիսին
չէ, թվացյալ բարեկամ է, բայց ոչ իրական: Նույնը հարկ է 335
ասել նաև թշնամու մասին:

– Քո պնդմամբ, բարեկամ կլինի բարի մարդը, իսկ հոռի մարդը՝ թշնամի:

– Այո:

– Իսկ արդարի մասին մեր նախորդ պնդումները, որ արդար է բարիք գործել բարեկամին և չարիք՝ թշնամուն, պետք է լրացնել և ասել, որ արդար է բարիք գործել բարեկամին, եթե նա լավ մարդ է, և վնասել թշնամուն, եթե վա՞տ մարդ է:

– Իհարկե: Կարծում եմ, սա հրաշալի ձևակերպում է:

– Ուրեմն արդար այրը որոշ մարդկանց վնասու՞մ է: b

– Իհարկե: Պետք է վնասել հոռիներին և թշնամիներին:

– Իսկ ձիերը, երբ նրանց վնաս են հասցնում, դառնում են ավելի լա՞վը, թե՞ ավելի վատը:

– Ավելի վատը:

– Իսկ ի՞նչ արժանիքների առումով՝ որ հատուկ են շների՞ն, թե՞ ձիերին:

– Ձիերին:

– Իսկ շները, եթե նրանց վնասում են, ավելի վատն են դառնում շների արժանիքների առումով, և ո՞չ ձիերի:

– Անշուշտ:

– Իսկ մարդկանց մասին, բարեկա՛մս, չե՞նք ասի, որ եթե c
նրանց վնասում են, իրենց մարդկային արժանիքները ավելի վատն են դառնում:

– Իհարկե:

– Բայց մի՞թե արդարությունը մարդու առաքինություն չէ:

– Անհրաժեշտաբար:

– Եվ նրանք, բարեկա՛մս, որոնց վնասել են, անպայման դառնում են անարդա՞ր:

– Թերևս:

– Իսկ կարո՞ղ են երաժիշտները երաժշտության միջոցով ոչ երաժշտական դարձնել որևէ մեկին:

– Անկարելի է:

– Իսկ հեծյալները՝ ձիարշավի միջոցով ոչ ձիավարժ դարձնե՞լ:

– Բնավ:

d – Իսկ կարո՞ղ են արդար մարդիկ արդարության միջոցով որևէ մեկին անարդար դարձնել, կամ կարո՞ղ են լավ մարդիկ իրենց առաքինությամբ հոռի դարձնել ուրիշներին:

– Անհնար է:

– Քանզի տաքը չի կարող սառեցնել, այլ՝ դրա հակառակը:

– Իհարկե:

– Իսկ թրջելը ոչ թե չորի, այլ դրա հակադիրի գործն է:

– Իհարկե:

– Եվ վնասելը բարի մարդու գործ չէ, այլ՝ նրան հակադիր մարդու:

– Ակնհայտորեն:

– Սակայն արդարը բարի մարդ է:

– Անշուշտ:

– Ուրեմն, Պոլեմարքոս, արդար մարդու գործ չէ վնասել բարեկամին կամ ուրիշ որևէ մեկին. դա նրան հակադիր մարդու՝ անարդարի գործ է:

– Միանգամայն իրավացի ես, Սոկրատես:

e – Արդ, եթե ոմն ասի, թե յուրաքանչյուրին ըստ արժանվույն հատուցելն արդար է, և նկատի ունենա, որ արդար մարդը պիտի վնասի թշնամիներին, իսկ բարեկամներին օգուտ տա, ապա այդպես ասողը բնավ իմաստուն չէ: Նա չի ասում ճշմարտությունը, քանի որ մենք պարզեցինք, որ արդար է ոչ ոքի չվնասելը:

– Համաձայն եմ,– պատասխանեց Պոլեմարքոսը:

– Ուրեմն ես և դու միասին կռիվ կտանք բոլոր նրանց դեմ, ովքեր կասեն, թե դա են նկատի ունեցել Սիմոնիդեսը, Բիասը, Պիտտակոսը կամ իմաստուն և երանելի այրերից ուրիշ որևէ մեկը[8]:

– Ես պատրաստ եմ կռիվ տալու,– ասաց Պոլեմարքոսը:

– Իսկ գիտե՞ս,– հարցրեցի ես,– թե, ըստ իս, ում խոսքն է 336
դա, իբր արդարությունը բարեկամներին օգուտ տալն է, իսկ թշնամիներին՝ վնասելը:

– Ու՞մ,– հարցրեց Պոլեմարքոսը:

– Կարծում եմ՝ Պերիանդրոսի կամ Պերդիկկասի, միգուցե Քսերքսեսի և թեբեացի Իսմենիասի, կամ էլ ոմն հարուստի, որն իրեն շատ մեծ է երևակայել[9]:

– Շատ ճիշտ ես ասում:

– Լավ: Բայց քանի որ պարզվեց, որ արդարությունը կամ արդարը դա չէ, ուրիշ ի՞նչ առաջարկենք:

Թրասիմաքոսը զրույցի ընթացքում հաճախ էր ուզում մի- b
ջամտել, բայց նրան խանգարում էին կողքին նստածները, որոնք շատ էին ցանկանում մեզ լսել: Բայց երբ իմ տված հարցից հետո մենք մի պահ դադար առանք, նա այլևս չհամբերեց. հարձակվեց գազանի պես, ասես պատրաստ էր մեզ հոշոտելու: Ես և Պոլեմարքոսը վախեցած մի կողմ քաշվեցինք, իսկ նա բղավեց.

– Այդ ի՞նչ հիմարություններ եք ասում, Սոկրատես, այն էլ
արդեն երկար ժամանակ: Ի՞նչ եք կոտրատվում ու սուտ կռիվ c
տալիս: Եթե իրոք ուզում ես իմանալ, թե ինչ է արդարությունը, հարցեր մի՛ տուր և մի՛ տրվիր սնապարծության, երբ պատասխանները թույլ են, քանզի պատասխանելն ավելի դժվար է, քան հարցեր տալը, այլ ինքդ պատասխանիր և ասա՝ ի՞նչ է
արդարը: Միայն չասես, թե դա պարտականությունն է, օգտա- d
կարը, նպատակահարմարը, շահավետը կամ պիտանին: Ինչ էլ ասելու լինես, խոսիր պարզ և հստակ, քանզի ես քեզ չեմ լսի, եթե շարունակես փուչ բաներ մոգոնել:

Թրասիմաքոսի խոսքերից ապշած՝ ես երկյուղով նայեցի e
նրան և, կարծում եմ, եթե չանեի դա առաջինը և նախ ինքը նայեր ինձ, իսպառ կկորցնեի խոսելու ունակությունս: Բայց հիմա, երբ զրույցն այսպիսի ցասման հասցրեց նրան, ես առաջինը նայեցի նրան և փորձելով հավաքել ինձ՝ վախվորած ասացի.

– Ո՛վ Թրասիմաքոս, մի՛ բարկացիր մեզ վրա: Եթե ես և նա

սխալվել ենք հարցի քննության մեջ, վստահ եղիր, որ սխալվել ենք ակամա: Դու, իհարկե, չես կարծում, թե ոսկի փնտրելու դեպքում կգիջեինք միմյանց այնպես, որ դա խանգարեր մեզ: Բայց մենք փնտրում ենք արդարությունը, մի բան, որ ավելի թանկ է ամեն ոսկուց, և մի՞թե կարող ենք զիջել միմյանց և ջանք ու եռանդ խնայել: Մտածիր, բարեկա՛մս: Ես կարծում եմ՝ ոչ: Մենք պարզապես բավականաչափ ուժեղ չեղանք: Հետևաբար դուք՝ ավելի ուժեղներդ, պիտի ոչ թե բարկանաք մեզ վրա, այլ խղճաք:

337 Լսելով դա՝ Թրասիմաքոսը սարդանիկաբար ծիծաղեց[10] և ասաց.

– Ո՜վ Հերակլես, ահա և Սոկրատեսի մշտական հեգնանքը: Սրանից առաջ էլ ասում էի ներկաներին, որ չես ուզի պատասխանել, կհեգնես և, եթե քեզ հարց ուղղեն, ամեն ինչ կանես, որ խուսափես պատասխանից:

– Դու իմաստուն ես, Թրասիմաքոս,– ասացի ես,– և լավ գիտես, որ եթե հարցնես, թե որքան է տասներկուսը, բայց նախապես զգուշացնես՝ «Ո՜վ մարդ, միայն թե չասես, թե դա վեցի կրկնակին է, չորսի եռակին, երկուսի վեցակին կամ երեքի
b քառակին, այլապես չեմ լսի քո ցնդաբանությունները», կարծում եմ՝ այդ հարցին այդպես էլ ոչ ոք չի պատասխանի: Բայց եթե քեզ ասեն. «Ո՜վ Թրասիմաքոս, ի՞նչ նկատի ունես: Ինչպե՞ս պատասխանեմ առանց հիշատակելու այն, ինչի դեմ զգուշացնում ես: Չէ՞ որ այդ դեպքում, սիրելիս, ես պիտի ասեմ
c ոչ ճշմարիտ ինչ-որ բան: Ի՞նչ ես կարծում»: Ի՞նչ կասես:

– Բավական է,– ընդհատեց Թրասիմաքոսը,– դու էլի քոնն ես պնդում:

– Իսկ ինչու՞ չէ: Անկախ նրանից՝ պնդում եմ, թե ոչ, նա, ում հարցնում ես, այդպես կմտածի: Իսկ ինչ ես կարծում՝ կարո՞ղ է արդյոք պատասխանել իր համոզմունքներին հակառակ, անկախ նրանից՝ կարգելենք, թե ոչ:

– Ուրեմն դու էլ կվարվես այդկերպ և կպատասխանես ճիշտ այնպես, ինչպես արգելեցի՞:

– Չեմ զարմանա, եթե իմ քննությունը նման տպավորություն թողնի:

– Իսկ եթե ես տամ արդարությանը վերաբերող ուրիշ պա- d
տասխան, ավելի լա՞վը: Ի՞նչ պատիժ կընդունես:

– Ուրիշ ինչ պատիժ, եթե ոչ այն, որին պիտի ենթարկվի տգետը, այսինքն՝ սովորի ուսյալից: Ահա այդ պատիժն էլ կընդունեմ:

– Քաղցր ես երգում: Ավելի լավ է ուսման վարձ վճարես:

– Երբ ունենամ՝ կվճարեմ:

– Համարիր, որ արդեն ունես,– միջամտեց Գլավկոնը,– և եթե հարցը դրամն է, ո՛վ Թրասիմաքոս, բոլորս էլ կվճարենք Սոկրատեսի փոխարեն, դու միայն շարունակիր:

– Որպեսզի Սոկրատեսը վարվի իր սովորության համա- e
ձայն, այսինքն՝ ոչ թե ինքը պատասխանի, այլ քննի և հերքի պատասխանողի խո՞սքը:

– Բայց ինչպե՞ս պատասխանեմ, հարգելիս,– ասացի ես,– եթե ոչինչ չգիտեմ ու չեմ հավակնում իմանալ և, բացի այդ, եթե ինչ-որ կարծիք էլ ունեմ, ինձ արգելում են արտահայտել այն, ընդ որում դա անում է երևելի մեկը, և ես չեմ կարող ասել մտքինս: Քանի որ դու պնդում ես, թե գիտես և ասելիք ունես, ինքդ խոսիր: Մի՛ վարանիր և շնորհ արա. պատասխա-
նիր հարցերիս և մի՛ հրաժարվիր խրատել Գլավկոնին և 338
մյուսներին:

Այս խոսքիս վրա թե՛ Գլավկոնը և թե՛ մյուսները խնդրեցին նրան չմերժել: Ակնհայտ է, որ Թրասիմաքոսն ինքն էր փափագում խոսել, որպեսզի փայլի, քանի որ համոզված էր, թե հրաշալի պատասխաններ ունի: Նա միայն ձևացնում էր, թե ուզում է, որ ես պատասխանեմ: Ի վերջո, տեղի տվեց և ասաց.

– Ահա՛ Սոկրատեսի իմաստությունը. նա ինքը չի ուզում
սովորեցնել և միայն այցելում է ուրիշներին ու սովորում b
նրանցից առանց վարձահատույց լինելու:

– Որ ուրիշներից եմ սովորում, ճիշտ նկատեցիր, Թրասիմաքոս, բայց որ վարձահատույց չեմ լինում՝ սխալվում ես:

Հատուցում եմ՝ ինչպես կարող եմ: Իսկ կարող եմ միայն գովք անել, քանի որ դրամ չունեմ: Բայց ի՞նչ հաճույքով եմ անում դա, երբ ինձ թվում է, թե ինչ-որ մեկը լավ է խոսում: Ինքդ կտեսնես, հենց որ սկսես պատասխանել, քանզի վստահ եմ, որ լավ ես պատասխանելու:

c – Այդ դեպքում լսիր: Ես պնդում եմ, որ արդարությունն այն է, ինչը պիտանի է ուժեղին[11]: Բայց ինչու՞ չես գովում: Թե՞ չես ցանկանում:

– Նախ պետք է հասկանամ՝ ինչ նկատի ունես: Դեռ չեմ հասկանում: Դու ասում ես, թե արդարությունն այն է, ինչ պիտանի է ուժեղին: Եթե Պոլիդամասը[12] մեզ մոտ ամենաուժեղն է բռնցքամարտում և նրա մարմնին անհրաժեշտ է տավարի

d միս, ուրեմն այդպիսի սնունդն արդարացիորեն պիտանի է նաև մեզ՝ առավել թույլերի՞ս:

– Ի՞նչ գարշելին ես, Սոկրատես: Այդպես աղճատել խոսքը:

– Բնավ, սիրելի՛ս: Ավելի պարզ խոսիր:

– Մի՞թե չգիտես՝ որոշ պետական կարգեր բռնապետական են, որոշ կարգեր՝ դեմոկրատական, իսկ մյուսները՝ արիստոկրատական:

– Ինչպե՞ս չէ:

– Եվ յուրաքանչյուր քաղաքում կառավարում է նա, ով իշխանություն ունի:

– Իհարկե:

e – Իսկ օրենքներն ամեն իշխանություն սահմանում է հոգուտ իրեն: Դեմոկրատիան հաստատում է դեմոկրատական օրենքներ, բռնապետությունը՝ բռնապետական, և այդպես նաև այլ դեպքերում: Սահմանելով օրենքները՝ դրանք հռչակում են հպատակների համար արդար, և հենց դա է օգտակար իշխանությանը: Խախտողին պատժում են որպես օրինազանցի և անարդարություն գործածի: Եվ ահա, հարգելիս, ես ասում եմ,

339 որ բոլոր պետություններում արդար է համարվում նույնը՝ այն, ինչ օգտակար է հաստատված իշխանությանը: Իշխանությունն է ուժեղը, հետևաբար ճիշտ խորհրդածողի համար

արդարությունը ամենուր նույն բանն է՝ առավել ուժեղի օգուտը:

– Հիմա հասկացա՝ ինչ նկատի ունեիր: Բայց ճշմարիտ է ասածդ թե ոչ՝ դեռ պիտի փորձեմ հասկանալ: Թրասիմա՛քոս, դու պատասխանեցիր, որ արդար է օգտակարը, թեև արգելեցիր ինձ այդպես պատասխանել: Դու ավելացրիր միայն՝ b
առավել ուժեղին:

– Գուցե քիչ բան եմ ավելացրել:

– Դեռ պարզ չէ, գուցե և շատ: Պարզ է միայն, որ պետք է քննել՝ արդյո՞ք ճշմարիտ ես ասում: Որ արդարությունն օգտակար ինչ-որ բան է, ես ընդունում եմ: Բայց դու հավելում ես՝ առավել ուժեղին, իսկ ես դա չգիտեմ, այնպես որ հարկ է քննել սա:

– Քննիր:

– Դա էլ անում եմ: Ասա ինձ, իշխանությանը ենթարկվելը արդար չե՞ս համարում:

– Համարում եմ:

– Իսկ իշխանավորներն իրենց պետության մեջ անսխալա- c
կա՞ն են, թե՞ կարող են և սխալվել:

– Իհարկե, կարող են նաև սխալվել:

– Ուրեմն, ձգտելով օրենքներ սահմանել, նրանք օրենքների մի մասը սահմանում են ճիշտ, իսկ մյուս մասը՝ ո՞չ:

– Ինձ այդպես է թվում:

– Ճիշտ սահմանվածներն օգտակար են իշխանություններին, իսկ ոչ ճիշտ սահմանվածները՝ վնասակար: Ի՞նչ կասես:

– Այդպես է:

– Ինչ էլ սահմանեն, հպատակները պիտի կատարեն, և դա կլինի արդա՞ր:

– Իհարկե:

– Այդ դեպքում, քո ասելով, արդար կլինի կատարել ոչ միայն օգտակարը առավել ուժեղին, այլև հակառակը՝ վնասակա- d
րը:

– Ի՞նչ նկատի ունես:

– Նույնը, ինչ դու: Ինձ այդպես է թվում: Բայց ավելի լավ քննենք սա: Մի՞թե չհամաձայնվեցինք, որ իշխանավորները, հարկադրելով հպատակներին կատարել իրենց հրամանները, երբեմն սխալվում են իրենց իսկ համար լավագույնի հարցում, մինչդեռ արդար կլինի, որ հպատակները կատարեն իշխանավորների հրամանները: Չընդունեցի՞նք դա:

– Կարծում եմ, ընդունեցինք:

e – Ուրեմն մտածիր նաև, որ դու ընդունեցիր այն, որ իշխանությանը և առավել ուժեղներին վնաս հասցնելն արդար է. երբ իշխանությունն ակամա որևէ բան է հրահանգում ի վնաս իրեն, դու պնդում ես, որ արդար է կատարել նրա հրահանգները: Այդ դեպքում, ո՛վ ամենահիմաստուն Թրասիմաքոս, չի՞ նշանակի սա արդյոք, որ արդար կլինի անել քո ասածի հենց հակառակը: Չէ՞ որ հպատակներին պատվիրում են գործել այն, ինչը վնասակար է առավել ուժեղներին:

340 – Այո, Սոկրատես, Զևսը վկա,– ասաց Պոլեմարքոսը,– դա ակնհայտ է:

– Եթե դու վկայես դա Սոկրատեսի համար,– ավելացրեց Կլիտոփոնը[13]:

– Վկաների կարիք չկա: Թրասիմաքոսն ինքը համաձայնեց, որ իշխանավորները երբեմն պատվիրում են գործել ինչ-ինչ բաներ ի վնաս իրենց, մինչդեռ արդար է համարվում, որ հպատակները կատարեն այդ պատվիրանները:

– Թրասիմաքոսն արդար է համարել իշխանությունների հրամանների կատարումը, Պոլեմարքոս:

b – Որովհետև նա արդար է համարում այն, ինչ օգտակար է առավել ուժեղներին, Կլիտոփոն: Սահմանելով այդ երկու դրույթները՝ նաև համաձայնեց, որ ուժեղները երբեմն հրամայում են անել իրենց համար վնասակարը, իսկ հպատակներն ու թույլերը պիտի կատարեն դա: Այդ ենթադրությունից բխում է, որ ուժեղի համար օգտակարն ավելի արդար չէ, քան ոչ օգտակարը:

– Սակայն ուժեղի համար օգտակար ասելով Թրասիմաքո-

սը հասկանում էր այն, ինչն ուժեղն էր իրեն օգտակար համարում,– պատասխանեց Կլիտոփոնը,– և հենց դա էլ պիտի կատարի թույլը. դա էր արդար համարում:

– Թրասիմաքոսն այդպես չէր ասում,– առարկեց Պոլեմարքոսը:

– Տարբերություն չկա,– ասացի ես,– և եթե հիմա Թրասիմաքոսը դա նկատի ունի, մենք հենց դա էլ կընդունենք: c

– Ասա ինձ, Թրասիմաքոս, քո ասելով արդարն այն է, ինչն օգտակար է թվում ուժեղին անկախ այն բանից՝ օգտակար է, թե ո՞չ: Այդպե՞ս հասկանանք քեզ:

– Բնավ,– պատասխանեց Թրասիմաքոսը,– մի՞թե կարծում ես, թե ուժեղ եմ համարում նրան, ով սխալվում է, այն էլ սխալվելու պահին:

– Ինձ թվում էր, թե դա նկատի ունես, երբ համաձայնում ես, թե իշխանավորները անսխալական չեն, այլ ինչ-ինչ d
հարցերում սխալվում են:

– Ա՛յ քեզ նենգափոխություն, Սոկրատես: Նրան, ով սխալ է բժշկում հիվանդներին, մի՞թե բժիշկ կկոչես, կամ մի՞թե թվաբան կկոչես նրան, ով սխալվում է իր հաշվարկի մեջ, այն էլ սխալվելու ժամանակ և հենց սխալի համար: Մենք միայն խոսքի մեջ ենք այդպես ասում՝ «բժիշկը սխալվեց», «թվաբանը կամ քերականը սխալվեց», քանզի եթե նա իսկապես այն է, e
ինչ կոչում ենք նրան, երբեք չի սխալվի, այնպես որ ճշգրիտ սահմանումով, եթե այդքան հետամուտ ես ճշգրտությանը, վարպետներից և ոչ ոք չի սխալվում: Սխալվում են իմացության պակասի պատճառով, երբ սեփական գործի վարպետ չեն: Ուստի վարպետը, իմաստունը կամ իշխանավորը չի սխալվում, եթե տիրապետում է իր արվեստին, չնայած որ հաճախ է ասվում՝ «բժիշկը սխալվեց» և «իշխանավորը սխալվեց»: Այդպես էլ ընդունիր պատասխանս: Ամենաճշգրիտ պատասխանը հետևյալն է. իշխանավորը, եթե նա իսկապես իշ- 341
խանավոր է, սխալներ թույլ չի տալիս, այլ անսխալ կերպով սահմանում է իր համար լավագույնը, իսկ հպատակը պետք է

1915.info

կատարի դա: Այնպես որ, ինչպես ասացի սկզբում, արդարություն եմ կոչում առավել ուժեղի համար օգտակարը:

– Շատ լավ, Թրասիմաքոս,– ասացի ես,– դու ինձ նենգամի՞տ ես համարում:

– Իհարկե,– պատասխանեց նա:

– Եվ կարծում ես, որ քեզ դավադիր հարցե՞ր եմ տալիս:

– Վստահ եմ, բայց դու ոչ մի բանի չես հասնի: Չես թաքցնի չար մտադրությունդ, իսկ եթե չես կարող թաքցնել, չես էլ հաղթի մեր զրույցում:

b

– Չեմ էլ փորձի, սիրելիս: Բայց որպեսզի մեզ նորից չպատահի նույնը, սահմանիր իշխանավորին և առավել ուժեղին, որոնց մասին խոսում ես: Նկատի ունես այդ բառերի տարածվա՞ծ, թե՞ ճշգրիտ նշանակությունը, երբ ասում ես, թե արդար է, որ թույլը կատարի ուժեղի համար օգտակարը:

– Նկատի ունեմ իշխանավորին բառիս ամենաճշգրիտ իմաստով: Դե հիմա չարախոսիր և նենգափոխիր, եթե կարող ես: Քեզ ուրիշ ոչինչ չի մնում: Թեպետ դա էլ չես կարող անել:

c

– Կարծում ես՝ այնքան խենթ եմ, որ կփորձեմ խուզել առյուծին և նենգափոխել Թրասիմաքոսի խո՞սքը:

– Հենց նոր փորձեցիր, թեպետ, իհարկե, դա քո ուժերից վեր էր:

– Այդ մասին բավական է: Ասա ինձ. նա, ով ճշգրիտ բնորոշմամբ բժիշկ է, ում քիչ առաջ հիշատակեցիր, մտահոգ է վճարվելիք դրամո՞վ, թե՞ հիվանդների բուժմամբ: Ո՞վ է իրական բժիշկը:

– Նա, որ բուժում է հիվանդներին:

d

– Իսկ նավավա՞րը: Ո՞վ է ճշմարիտ նավավարը, թիավարների առաջնո՞րդը, թե՞ թիավարը:

– Թիավարների առաջնորդը:

– Քանզի, կարծում եմ, չի կարելի բավարարվել նրանով, որ նա նույնպես նավարկում է նավով, և ասել, որ նավաստի է: Չէ՞ որ նրան նավավար են կոչում ոչ թե նավով նավար-

կելու համար, այլ նրա արվեստի, և որովհետև թիավարների առաջնորդն է:

– Ճշմարիտ է:

– Ուրեմն և՛ բժիշկը, և՛ նավավարը օգտակար ինչ-որ բա՞ն ունեն:

– Անշուշտ:

– Մի՞թե դա չէ արվեստի էությունը՝ փնտրել և պարզել յուրաքանչյուրի համար պիտանին:

– Դա է:

– Իսկ ամեն արվեստի համար մի՞թե պիտանի է մեկ ուրիշ բան, բացի իր բարձրագույն կատարելությունից:

– Ի՞նչ նկատի ունես:

– Եթե ինձ հարցնեին՝ ինքնաբա՞վ է արդյոք մարմինը, թե՞ e
ինչ-որ բանի կարիք ունի, ես կպատասխանեի՝ իհարկե կարիք ունի: Ահա ինչու են ձեռք բերում բուժական հմտություններ. քանզի մարմինը տկար է և ոչ ինքնաբավ: Մարմնին օգտակարը հայթայթելու համար պահանջվեց բուժական արվեստը: Քո կարծիքով ճի՞շտ եմ ասում, թե՞ ոչ:

– Ճիշտ ես ասում:

– Եվ ինչ, մի՞թե այդ արվեստն ինքը անկատար չէ, և մյուս
արվեստները չունե՞ն արդյոք ինչ-որ բարեմասնության կա- 342
րիք, ինչպես օրինակ, աչքերը՝ տեսողության, իսկ ականջները՝ լսողության: Պետք չէ՞ արդյոք այդ պատճառով յուրաքանչյուր արվեստին ավելացնել նաև մեկ ուրիշ արվեստ, որը կորոշեր, թե ինչ պետք է ավելացնել նրան: Մի՞թե հենց արվեստի մեջ չկա ինչ-որ անկատարություն, և յուրաքանչյուր արվեստ մի՞թե չունի մեկ ուրիշ արվեստի կարիք, որը կքններ, թե ինչն է օգտակար իրեն, իսկ այնուհետև կպահանջվեր մեկ ուրիշ ար-
վեստ, և այդպես անվերջ: Թե՞ ամեն արվեստ ինքն է որոշում b
իրեն օգտակարը: Կամ գուցե իր անկատարությունը շտկելու հարցը քննելու համար նրան չի օգնում ո՛չ ինքը, ո՛չ էլ ուրի՞շ որևէ արվեստ: Չէ՞ որ արվեստը չունի ոչ մի անկատարություն կամ թերություն և կարիք չունի իրեն օգտակարը փնտրելու

ուրիշ արվեստի մեջ: Լինելով ճիշտ՝ այն անկատար և տկար չէ, քանի դեռ անթերի և ամբողջական է: Քննի՛ր սա քո ճշգրիտ մոտեցումներով: Այդպե՞ս է, թե՞ ոչ:

– Երևում է, այդպես է:

c – Ուրեմն բժշկությունը չի քննում այն, ինչ օգտակար է բժշկությանը, այլ այն, ինչ օգտակար է մարմնին:

– Այո:

– Եվ հեծելարվեստը չի քննում այն, ինչ օգտակար է ձիարշավին, այլ այն, ինչ օգտակար է ձիերին: Եվ ամեն ուրիշ արվեստ այն չէ, ինչի կարիքն ունի ինքը, քանի որ օգտակար է ոչ թե իրեն, այլ իր առարկային:

– Թերևս այդպես է:

– Բայց չէ՞ որ, Թրասիմաքոս, արվեստներն իշխանություն և ուժ են իրենց ոլորտում:

d Թրասիմաքոսը համաձայնեց, բայց մեծ դժկամությամբ:

– Հետևաբար արվեստը նկատի ունի այն, ինչ օգտակար է ոչ թե ուժեղին, այլ թույլին, որին և ղեկավարում է:

Թրասիմաքոսը թեպետ փորձում էր ընդդիմանալ, ի վերջո համաձայնեց: Իսկ երբ համաձայնեց, ես ասացի նրան.

– Ուրեմն բժիշկը, քանի որ բժիշկ է, չի փնտրում այն, ինչ օգտակար է բժշկին, և դրա մասին չէ, որ հոգ է տանում, այլ միայն այն, ինչ օգտակար է հիվանդին: Մի՞թե չհամաձայնեցինք, որ ըստ էության բժիշկը դրամաշորթ չէ, այլ նա, ով իշխում է մարմնին:

Թրասիմաքոսը համաձայնեց:

– Ուստի նաև նավավարն իրականում նավաստիների վրա իշխողն է, այլ ոչ թե նավաստի:

Համաձայնեց:

e – Ուրեմն այդպիսի նավավարն ու կառավարիչը նկատի կունենա և կհրահանգի օգտակարը ոչ թե նավավարի, այլ նավաստու և ենթակայի համար:

Թրասիմաքոսը դժկամությամբ համաձայնեց:

– Հետևաբար, Թրասիմաքոս, ոչ ոք, եթե նա իշխանություն

ունի և քանի որ իշխանավոր է, երբեք նկատի չունի և չի հրահանգում այն, ինչ օգտակար է իրեն, այլ միայն այն, ինչ օգտակար է իր ենթակային, որի համար էլ գործում է, այնպես որ ինչ էլ ասի կամ անի, միշտ ուշադիր է իր ենթակայի համար օգտակարի և հարմարի հանդեպ:

Երբ մեր վեճի մեջ հանգեցինք սրան և բոլոր ներկաներին 343
պարզ դարձավ, որ արդարության մեր քննությունը հասավ իր հակառակ կետին, Թրասիմաքոսը պատասխանելու փոխարեն հարցրեց.

– Ասա ինձ, Սոկրատես, դու դայակ ունե՞ս:

– Ի՞նչ նկատի ունես,– ասացի ես,– ավելի լավ է պատասխանես, քան այդպիսի հարցեր տաս:

– Որովհետև դայակդ մոռանում է քիթդ սրբել, և դու չես տարբերում ոչխարներին հովվից:

– Բայց ինչու՞:

– Քեզ թվում է, թե հովիվները կամ եզնարածները հաշվի b
են առնում ոչխարների և եզների բարիքը, երբ կերակրում և խնամում են նրանց, որ անում են դա հանուն ուրիշ ինչ-որ բանի, և ոչ հանուն դրանց տերերի ու սեփական բարիքի: Դու կարծում ես, թե պետության մեջ իշխանավորները, այսինքն նրանք, ովքեր իսկապես իշխում են, այլ կերպ են վերաբերվում իրենց հպատակներին, քան հովիվներն իրենց ոչխարներին, և իբր գիշեր ու զօր մտածում են ոչ թե իրենց քաղելիք օգուտի, այլ ուրիշ ինչ-որ բանի մասին: Այնքան հեռու ես արդարից, արդարությունից, անարդարից և անարդարությունից, c
որ անգամ չգիտես, որ արդարությունն ու արդարը իրականում ուրիշի բարիքն է, իսկ ուժեղի և իշխանավորի օգուտը հպատակի համար իսկական վնաս է, մինչդեռ անարդարությունը՝ հակառակը. ըստ էության այն իշխում է պարզամիտների և արդարների վրա: Հպատակները կատարում են այն, ինչ օգտակար է իշխանավորին, քանի որ նա ուժեղ է: Իրենց հնազանդությունից նա բարգավաճում է, բայց իրենք՝ ոչ:
Հարկ է նկատել, ո՛վ պարզամիտ Սոկրատես, որ արդարը d

ամենուր պարտվում է անարդարին: Նախ՝ փոխադարձ պար-
տավորություններում, երբ կողմերը ընդհանուր ինչ-որ գործ
ունեն, դու ոչ մի տեղ չես գտնի, որ վերջնահաշվի ժամանակ
արդարն անարդարից ավելի շատ ստանա: Այնուհետև, երբ
հարկ է լինում վճարել պետական տուրքեր, արդարը, ունե-
նալով անարդարի հետ հավասար միջոցներ, վճարում է ավե-
լի շատ, իսկ անարդարը՝ պակաս, այնպես որ շահույթ ստա-
նալու ժամանակ նա ոչինչ չի ստանում, իսկ անարդարը
e ստանում է շատ: Եվ երբ նրանք գալիս են իշխանության, ար-
դարը, եթե նրան ոչինչ չպատուհասի, իր տան գործերում
վնասներ է կրում, քանի որ անուշադրության է մատնում
դրանք, իսկ հանրային գործերում օգուտ չի ստանում հենց
այն պատճառով, որ արդար է: Բացի այդ, նա արժանանում է
տնեցիների և ծանոթների կշտամբանքին, որովհետև չի ցան-
կանում օգտակար լինել նրանց, եթե դա հակասում է արդա-
րությանը: Իսկ անարդար մարդու պարագայում ամեն ինչ
344 ճիշտ հակառակն է: Ես կրկնում եմ քիչ առաջ ասածս. իշխա-
նությունը մեծ առավելություններ է տալիս: Հենց դա պիտի
նկատի առնես, եթե ուզում ես դատել այն մասին, թե որքան է
յուրաքանչյուրի համար առավել օգտակար անարդար, քան
արդար լինելը: Ամենից հեշտ դու կհասկանաս դա, եթե
վերցնես անարդարությունն իր ամենաավարտուն վիճակով,
երբ բարգավաճում է նա, ով անարդարություն է գործել, իսկ
նրանք, որոնց դեմ անարդարություն են գործել և ովքեր չեն
ընդվզել այդ անարդարության դեմ, թշվառ են: Այդպիսին է
բռնապետությունը, որը մերթ գաղտնի, մերթ բացահայտ զավ-
b թում է ուրիշինը՝ տաճարներինը և պետականը, մասնավորը
և հանրայինը, ընդ որում՝ միանգամից: Արդարության մասնա-
կի խախտումը, երբ դա բացահայտվում է, պատժվում է և մեծ
անամոթություն է համարվում: Այդպիսի մասնակի անարդա-
րություն գործած մարդիկ, կախված իրենց հանցանքի տեսա-
կից, կոչվում են սրբապիղծներ, ստրուկների գողեր, տան կո-
ղոպտիչներ, ավազակներ և գրպանահատներ: Երբ որևէ մեկը

այս ամենից զատ յուրացնելով քաղաքացիների դրամը նաև
ստրկացնի նրանց, նրան այդ ամոթալի անուններով կոչելու
փոխարեն կոչում են հաջողակ և երջանիկ, ընդ որում ոչ մի-
այն նրա համաքաղաքացիները, այլև օտարները, որովհետև c
համոզված են, որ այդ մարդն անարդարություն է գործել: Չէ՞
որ նրանք, ովքեր դատապարտում են անարդարությունը, չեն
դատապարտում անարդար գործերը, այլ վախենում են, որ
իրենց կաշվի վրա կզգան անարդարությունը: Արդ, Սոկրա-
տես, անարդարությունը ավելի ուժեղ, ավելի ազատ և զորեղ
է արդարությունից, իսկ արդարությունը, ինչպես ասացի
սկզբում, այն է, ինչ օգտակար է առավել ուժեղին, մինչդեռ
անարդարությունը նպատակահարմար և օգտակար է ինքնին:

Ասելով սա՝ Թրասիմաքոսը, որ կարծես մի բաղնիսպան d
լցրել էր մեր ականջներն իր շատախոսությամբ, միտք ուներ
հեռանալու: Բայց ներկաները բաց չթողեցին նրան և
ստիպեցին մնալ ու հիմնավորել իր խոսքը: Ես ինքս էլ դրա
կարիքն ունեի, ահա ինչու ասացի.

– Ո՛վ զարմանալի Թրասիմաքոս, այդպիսի ճառով մեզ
վրա հարձակվելուց հետո ուզում ես հեռանալ առանց բավա-
րար չափով բացատրելու և ինքդ էլ հասկանալու՝ արդյո՞ք
ամեն ինչ ասածիդ նման է, թե՞ ոչ: Թե՞ կարծում ես այդպիսի e
հարցում որոշակիության հասնելը քիչ բան է: Եվ մի՞թե դա չի
կարող յուրաքանչյուրիս կյանքում ուղեցույց լինել, որին հե-
տևելով կկարողանայինք մեր կյանքն ապրել նպատակահար-
մար ձևով:

– Ես կարծում եմ,– պատասխանեց Թրասիմաքոսը,– ամեն
ինչ այլ կերպ է:

– Ուրեմն քեզ չի մտահոգում, ինչպես կապրենք՝ լավ, թե
վատ, անտեղյակ այն ամենին, ինչ քո պնդմամբ գիտես դու:
Բայց, սիրելի՛ս, փորձիր սովորեցնել նաև մեզ: Այդպիսի բա-
րեգործությունը քեզ համար վատ ներդրում չի լինի, քանի որ
մենք այստեղ քիչ չենք: Իսկ ես քեզ կասեմ, որ չեմ հավատում
և չեմ կարծում, թե անարդարությունն առավել շահեկան է 345

արդարությունից, անգամ եթե ոչինչ չի խանգարում անարդարություն գործելու: Դիցուք, իմ սիրելի՛ Թրասիմաքոս, ոմն անարդար է և կարող է անարդարություն գործել կա՛մ ծածուկ, կա՛մ բռնի, բայց դա ինձ չի համոզում, թե անարդարությունն առավել շահեկան է: Գուցե ինձնից բացի որևէ մեկն էլ է այդպես մտածում: Ուրեմն ինչպես հարկն է համոզիր մեզ,
b սիրելի՛ս, որ մենք սխալ ենք վարվում՝ արդարությունը գերադասելով անարդարությունից:

– Ինչպե՞ս համոզեմ,– հարցրեց Թրասիմաքոսը,– եթե քեզ չհամոզեց այն, ինչ արդեն ասացի: Էլ ի՞նչ կարող եմ անել: Ինչ է, հոգուդ մե՞ջ պիտի դաջեմ փաստարկներս:

– Հանուն Զևսի, ոչ մի դեպքում,– պատասխանեցի ես: – Միայն թե հավատարիմ մնա պնդումներիդ, իսկ եթե դրանք փոխվել են, բացահայտ ասա այդ մասին և մի՛ խաբիր մեզ: Տեսնում ես, Թրասիմաքոս (քննենք արդեն դիտարկվածը),
c նախ սահմանելով ճշմարիտ բժշկին, դու չմտածեցիր, որ նույն ճշգրտությունը պետք է պահպանել նաև հետո՝ իսկական հովվի մասին խոսելիս. դու մտածում ես, որ նա արածեցնում է ոչխարներին, քանի որ հովիվ է, բայց հոգ չի տանում նրանց համար լավագույնի մասին, այլ մտածում է պորտաբույծի պես, որ ցանկանում է մի լավ ուտել խրախճանքի ժամանակ, կամ, ինչ վերաբերում է եկամուտներին, ասես շահամոլ, և ոչ հովիվ: Մինչդեռ հովվությունը հոգ է տանում իր բուն կոչման մասին, որը և լավագույնն է ոչխարների համար:
d Այդպիսի արվեստը արդարացված կլինի այնքան ժամանակ, քանի դեռ կատարում է իր խնդիրը: Ահա ինչու, կարծում եմ, մենք անպատճառ կհամաձայնենք, որ ամեն իշխանություն, քանի որ իշխանություն է, հետամուտ է լավագույնն անելու իր հպատակներին և իր խնամքի տակ գտնվողներին՝ թե՛ հան-
e ռային, թե՛ մասնավոր առումով: Մի՞թե կարծում ես՝ պետության մեջ իշխանության գլուխ կանգնածները՝ իսկական իշխանավորները, իշխում են կամավոր:

– Զևսը վկա, ոչ միայն կարծում եմ, այլև գիտեմ:

– Թրասիմաքոս,– ասացի ես,– չե՞ս նկատում, որ մյուս իշխանավորներից ոչ ոք չի ցանկանում իշխել կամավոր, այլ պահանջում է վարձատրություն, որովհետև իշխանությունը օգուտ է բերում ոչ թե նրանց, այլ հպատակներին: Ասա ինձ հետևյալը. մի՞թե մենք նրա համար չենք մի արվեստը տարբերում մյուսից, որ յուրաքանչյուրն ունի իր առաքելությունը: 346
Եվ տարօրինակ ոչինչ մի՛ ասա, սիրելիս, որպեսզի կարողանանք ի վերջո եզրակացության գալ:

– Այո, դրանով են տարբեր:

– Հետևաբար դրանցից յուրաքանչյուրը մեզ բերում է առանձին օգուտ, և ոչ ընդհանուր: Օրինակ, բժշկությունը՝ առողջություն, նավավարությունը՝ անվտանգ նավարկություն, և այլն:

– Իհարկե:

– Իսկ վարձատրության արվեստը գործ ունի վարձի՞ հետ, b
չէ՞ որ դա է նրա առաքելությունը: Կամ բժշկությունը և նավավարությունը մի՞թե նույնն ես համարում: Բայց դու ցանկանում ես ամեն բան ճշգրիտ սահմանել: Արդ, եթե ոմն նավավարություն անելով առողջանա, քանի որ ծովով նավարկելը օգտակար է, նավավարությունը բժշկություն կկոչե՞ս:

– Իհարկե ոչ: c

– Չեմ կարծում, թե դու բժշկություն կկոչես վարձատրության արվեստը, եթե ինչ-որ մեկը վարձով աշխատելով առողջանա:

– Իհարկե ոչ:

– Ուրեմն ինչ, բժշկությունը նույնպե՞ս չես կոչի վարձու աշխատանք, երբ բժիշկը վարձով է աշխատում:

– Ոչ:

– Այդ դեպքում մենք համաձա՞յն ենք, որ ամեն արվեստ յուրովի օգտակար է:

– Թող այդպես լինի:

– Ուրեմն, ինչ ընդհանուր օգուտ էլ ունենան վարպետնե-

որը, պարզ է, որ նրանք միասին մասնակցում են այն գործին, որը նրանց օգուտ է բերում:

– Թերևս:

– Մենք ասացինք, որ վարպետներին, որոնք վարձ են ստանում, օգտակար է, որ նրանք շահ են ստանում վարձատրության արվեստից:

Թրասիմաքոսը դժվարությամբ համաձայնեց:

– Այդ դեպքում յուրաքանչյուրի համար օգուտը, այսինքն վարձ ստանալը, իր արվեստից չէ: Եթե ավելի ճշգրիտ խո-
d սենք, ապա բժշկությունը տալիս է առողջություն, իսկ վարձատրության արվեստը՝ աշխատավարձ: Շինարարության արվեստը տալիս է տուն, իսկ վարձատրության արվեստը՝ վճար: Այդպես է նաև մյուս բոլոր դեպքերում: Յուրաքանչյուր արվեստ տալիս է իր արգասիքն ու օգուտը համաձայն իր առաքելության: Իսկ եթե տվյալ արվեստին վճար չավելանա, մի՞թե վարպետն օգուտ կունենա:

– Ըստ երևույթին՝ ոչ:

e – Ուրեմն նա որևէ օգուտ չունի, երբ աշխատում է անվճար:

– Ինձ այդպես է թվում:

– Արդ, Թրասիմաքոս, հասկանալի է, որ ոչ մի արվեստ և ոչ մի իշխանություն վարպետին օգուտ չի տալիս, բայց, ինչպես արդեն ասացինք, օգուտ է բերում ենթակային՝ նկատի առնելով, թե ինչն է պիտանի թույլին, և ոչ ուժեղին: Ահա ինչու ես, սիրելի՛ Թրասիմաքոս, քիչ առաջ ասում էի, որ կամավոր ոչ ոք չի ցանկանա իշխանություն ստանձնել և զբաղվել ուրիշների արատների շտկմամբ, այլ հակառակը՝ կուզենա վարձատրվել, որովհետև նա, ով կկամենար հաջողությամբ գործի դնել իր արվեստը, երբեք չի գործում և չի հրահան-
347 գում հանուն սեփական բարօրության, այլ՝ իր հպատակների: Ահա ինչու ես կարծում եմ, որ իշխանություն ստանձնել ցանկացողներին պետք է վարձատրել դրամով ու փառքով և կամ էլ պատժել, եթե չեն կամենում իշխել:

– Ի՞նչ նկատի ունես, Սոկրատես,– հարցրեց Գլավկոնը,–

ինձ հայտնի է վարձատրության առաջին երկու տեսակը, բայց դու պատիժն էլ ես վարձատրություն կոչում: Դա չեմ հասկանում:

– Ուրեմն չես հասկանում լավագույնների վարձատրությունը, որի շնորհիվ իշխանության գլուխ կանգնում են ամենաարժանի մարդիկ, երբ ցանկանում են պաշտոնավարել: Մի՞թե չգիտես, որ փառասիրությունն ու դրամասիրությունը b
ամոթալի են և այդպիսին էլ համարվում են:

– Գիտեմ:

– Լավ մարդիկ չեն ցանկանում պաշտոնավարել ո՛չ վարձատրության, ո՛չ էլ փառքի համար, քանզի չեն ցանկանում կոչվել վարձկաններ՝ բացահայտորեն վճար վերցնելով, և ոչ էլ գողեր՝ ծածուկ օգտվելով իրենց իշխանությունից: Հանուն
փառքի նրանք նույնպես չեն ցանկանում իշխել, քանի որ c
փառատենչ չեն: Պետք է ստիպել, որպեսզի ստանձնեն իշխանություն և, եթե չցանկանան, պատիժներ կիրառել: Ահա ինչու ամոթալի է համարվում իշխանության կամավոր ձգտելը, երբ չկա ոչ մի հարկադրանք: Իսկ ամենամեծ պատիժը քեզնից վատթար մեկի իշխանության տակ գտնվելն է, եթե ինքդ իշխել չես ցանկանում: Ինձ թվում է, դրանից վախենալով է, որ արժանի մարդիկ իշխանության են գալիս ու պաշտոնավարում: Նրանք անցնում են իշխանության ոչ այնպես, ինչպես եթե մի լավ բան ստանձնեին և ներքուստ բավարարվեին դրանով, այլ՝ անհրաժեշտությունից դրդված, չկարողանալով փոխանցել այն ավելի արժանի մեկին կամ իրենց նմանին: Եթե պե- d
տությունը միշտ կազմված լիներ լավ մարդկանցից, բոլորը կվիճարկեին իշխանությունից խուսափելու իրավունքը, ինչպես որ հիմա վիճարկում են իշխանության գալը: Այստեղից պարզ կդառնար, որ իրականում ճշմարիտ իշխանավորը հետամուտ է օգտակարին ոչ թե իր, այլ հպատակի համար, այնպես որ ամեն ոք, ով հասկանում է դա, ուրիշի օգուտի մասին հոգալու փոխարեն, կգերադասեր, որ ուրիշները հոգ տանեն իր օգուտի մասին: Ես ոչ մի դեպքում չեմ համաձայնի

Թրասիմաքոսին, թե արդարությունն այն է, ինչը պիտանի է
e ուժեղին: Բայց այդ մասին կխոսենք ուրիշ անգամ: Հիմա ինձ ավելի կարևոր է թվում Թրասիմաքոսի այն պնդումը, թե անարդար մարդու կյանքն ավելի լավն է արդար մարդու կյանքից: Իսկ դու, Գլավկոն, ո՞րն ես ընտրում: Երկու պնդումներից քո կարծիքով ո՞րն է ավելի ճշմարիտ:

– Ինձ թվում է,– ասաց Գլավկոնը,– ավելի նպատակահարմար է արդար մարդու կյանքը:

– Իսկ լսեցի՞ր, թե այլևայլ որքան բարիքներ է Թրասիմա-
348 քոսը վերագրում անարդար մարդու կյանքին:

– Լսեցի, բայց չեմ հավատում:

– Ուզու՞մ ես տարհամոզենք նրան, եթե ինչ-որ կերպ կարողանանք պարզել, որ նա իրավացի չէ:

– Ինչպե՞ս չէ,– պատասխանեց Գլավկոնը:

– Բայց եթե մենք առարկենք նրա յուրաքանչյուր բառին՝ թվարկելով արդարության բարիքները, հետո նորից խոսի նա, իսկ հետո՝ նորից մենք, հարկ կլինի հաշվել և չափել այդ բա-
b րիքները՝ պարզելու համար, թե մեզնից ով ինչ ասաց, կպահանջվեն դատավորներ: Իսկ եթե մենք քննենք, ինչպես քիչ առաջ արեցինք, երբ համաձայնության եկանք, կլինենք միաժամանակ և՛ դատավորներ, և՛ դատապաշտպաններ:

– Իհարկե:

– Եվ ո՞ր տարբերակն ես նախընտրում:

– Այդ վերջինը:

– Դե, Թրասիմաքոս,– ասացի ես,– պատասխանի՛ր մեզ ամենասկզբից: Դու պնդում ես, թե կատարյալ անարդարությունն ավելի՞ օգտակար է կատարյալ արդարությունից:

c – Իհարկե պնդում եմ և արդեն ասացի, թե ինչու:

– Իսկ ի՞նչ կասես հետևյալի մասին: Երկուսից մեկը առաքինություն ես կոչում, իսկ մյուսը՝ արա՞տ:

– Ինչու՞ չէ:

– Ուրեմն առաքինություն ես կոչում արդարությունը, իսկ արատ՝ անարդարությու՞նը:

– Թերևս, սիրելիս: Չնայած որ ասում եմ՝ անարդարությունը նպատակահարմար է, իսկ արդարությունը՝ ոչ:

– Բայց ինչպե՞ս ասենք:

– Ճիշտ հակառակը:

– Արդարությու՞ննն է արատավոր: d

– Ոչ, սակայն արդարությունը ազնիվ անխոհեմություն է:

– Իսկ անարդարությունն անվանում ես չարամտությու՞ն:

– Ոչ, ողջախոհություն:

– Մի՞թե, ո՛վ Թրասիմաքոս, դու անարդարներին համարում ես խոհեմ և բարի:

– Միայն նրանց, ովքեր կատարելապես անարդար են և կարող են իրենց ենթարկել պետություններ և ժողովուրդներ: Իսկ դու գուցե մտածում էիր, թե ես նկատի ունեմ գրպանահատների՞ն: Դա էլ նպատակահարմար է, քանի դեռ չի բացահայտվել: Բայց չարժե նրանց մասին խոսել, ես այլ բան էի ուզում ասել:

– Լավ եմ հասկանում՝ ինչ նկատի ունես, բայց ինձ զարմացնում է, որ անարդարությունը դասում ես առաքինությանն e
ու իմաստությանը, իսկ արդարությունը՝ հակառակ բաներին:

– Այո, հենց դա եմ անում:

– Դա արդեն շատ կոպիտ է, բարեկամս, և դժվար թե լինի մեկը, որ կարողանա պատասխանել քեզ: Եթե հայտարարեիր, թե անարդարությունը նպատակահարմար է, բայց ուրիշների պես համարեիր չարիք և խայտառակություն, մենք, ելնելով ընդունված կարծիքներից, կկարողանայինք ինչ-որ բան ասել: Իսկ հիմա, քանի որ համարձակվում ես անարդարությունը 349
դասել առաքինությանն ու իմաստությանը, կասես, թե անարդարությունը գեղեցիկ է և ուժեղ, և այդպես շարունակ՝ անարդարությանը կվերագրես այն ամենը, ինչ վերագրում ենք արդարին:

– Շատ ճիշտ ես կռահել:

– Ուրեմն կարիք չկա մեր զրույցի մեջ խուսափելու այդ ամենի մանրազնին քննությունից, քանի դեռ դու, որքան

նկատում եմ, ասում ես այն, ինչ մտածում ես: Ինձ թվում է, Թրասիմաքոս, դու հիմա բնավ չես կատակում, այլ ասում ես իսկապես մտածածդ:

– Իսկ քեզ միևնույն չէ՞՝ այդպես եմ կարծում, թե ոչ: Դու ամեն դեպքում կմերժես փաստարկս:

b – Իհարկե միևնույն է: Սակայն փորձիր պատասխանել նաև հետևյալին: Դու կարծում ես՝ արդարը կուզե՞ր ինչ-որ բան ավել ունենալ մեկ ուրիշ արդարից:

– Բնավ, քանզի հակառակ դեպքում նա չէր լինի այդքան բարեկիրթ ու պարզմիտ, ինչպես հիմա է:

– Իսկ արդարությա՞ն հարցում:

– Ոչ էլ արդարության:

– Իսկ կհավակնե՞ր առավելություն ստանալ անարդար մարդու նկատմամբ և կհամարե՞ր դա արդար, թե՞ ոչ:

– Կհամարեր և կհավակներ, բայց չէր կարողանա:

– Իմ հարցը ոչ թե դրա մասին է, այլ՝ ճի՞շտ է համարում և

c ցանկանու՞մ է արդյոք արդարն ունենալ ավելին, քան անարդարը:

– Հենց այդպես:

– Իսկ անարդա՞րը: Մի՞թե նա արժանի է համարում առավելություն ունենալ արդար մարդու նկատմամբ, այդ թվում և արդար գործերում:

– Ինչպե՞ս չէ: Նա հավակնում է ունենալ բոլորից շատ:

– Ուրեմն անարդար մարդը կհավակնի առավելություն ունենալու մեկ ուրիշ անարդար մարդու և նրա գործերի նկատմամբ և կպայքարի նրա դեմ առավելագույնը վերցնելու համա՞ր:

– Այդպես է:

d – Ուրեմն մենք կասենք հետևյալը. արդարը ցանկանում է առավելություն ունենալ ոչ թե իր նմանի, այլ իրեն ոչ նմանի նկատմամբ, մինչդեռ անարդարն ուզում է առավելություն ունենալ և՛ նմանի, և՛ ոչ նմանի նկատմամբ:

– Լավ ասացիր:

– Բայց անարդարը կարող է լինել խոհեմ և բարի, իսկ արդարը ո՛չ խոհեմ է, ո՛չ էլ լավը:

– Դա էլ լավ ասացիր:

– Ուրեմն անարդար մարդը կարող է նման լինել խոհեմ և լավ մարդուն, իսկ արդարը՝ ոչ:

– Բայց ինչպե՞ս նման չլինի, եթե ինքն է այդպիսին: Իսկ եթե այդպիսին չէ, նման էլ չէ:

– Շատ լավ: Ուրեմն նրանցից յուրաքանչյուրն այնպիսին է, ինչպիսին որ նրանք են, որոնց նա նման է:

– Ինչու՞ ոչ:

– Թող այդպես լինի, Թրասիմաքոս, իսկ կոչու՞մ ես մեկին e
երաժիշտ, իսկ մյուսին՝ ոչ:

– Իհարկե:

– Նրանցից ո՞րն է խոհեմ, և ո՞րը՝ ոչ:

– Երաժիշտն անշուշտ խոհեմ է, իսկ ոչ երաժիշտը՝ անխոհեմ:

– Եվ հարցերում, որոնցում նա խոհեմ է, լավն է, իսկ անխոհեմը՝ վա՞տը:

– Այո:

– Իսկ բժի՞շկը: Նրա դեպքում էլ այդպես չէ՞: 350

– Այդպես է:

– Իսկ ի՞նչ ես կարծում, հարգելիս, քնարը լարելիս, երբ երաժիշտը ծգում և թուլացնում է լարերը, հավակնու՞մ է անելու ավելին, քան հենց դա:

– Ոչ:

– Իսկ ոչ երաժշտի համեմատ ավել ինչ-որ բան անելու հավակնու՞մ է:

– Անհրաժեշտաբար:

– Իսկ բժի՞շկը: Սնունդ և խմիչք նշանակելով հավակնու՞մ է ուրիշ ինչ-որ բանի, բացի բժիշկ և իր գործի գիտակ լինելուց:

– Բնավ:

– Իսկ ոչ բժշկի համեմատ ավել ինչ-որ բան անելու հավակնու՞մ է:

– Այո:

– Դիտարկիր սա ամեն տեսակ իմացության և չիմացության առնչությամբ և տես՝ ի՞նչ ես կարծում՝ գիտակը իր գործերում և խոսքում հավակնում է ավելի՞ն լինելու մեկ ուրիշ գիտակից, թե՞ նույնը լինելու իրեն նմանի հետ:

– Թերևս պիտի համաձայնեմ, որ այդպես է:

– Իսկ տգե՞տը: Մի՞թե նա գիտակի նմանությամբ չէր հա-
b վակնի մեկ ուրիշ տգետից ավելին լինելու:

– Գուցե:

– Բայց չէ՞ որ գիտակն իմաստուն է:

– Ես այդպես կասեի:

– Իսկ իմաստունը լավն է:

– Այո:

– Ուրեմն լավ և իմաստուն մեկը չի ցանկանա ավելին լինել իրեն նմանից, այլ՝ իրեն ոչ նմանից ու հակառակից:

– Թերևս:

– Իսկ հոռի և տգետ մարդը կհավակնի՞ լինելու ավելին և՛ իր նմանի, և՛ իր հակադիրի համեմատ:

– Ակնհայտորեն:

– Արդ, Թրասիմաքոս, անարդարը մեզ մոտ կցանկանա գերազանցել և՛ իրեն նմանին, և՛ ոչ նմանին: Թե՞ այդպես չէիր ասում:

– Այդպես:

– Իսկ արդարը չի հավակնի ավելիին նմանի համեմատ,
c այլ՝ միայն նրա, ով իրեն նման չէ:

– Այո:

– Հետևաբար արդարը նման է իմաստունին և բարիին, իսկ անարդարը՝ հոռիին և տգետին:

– Թերևս:

– Բայց չէ՞ որ մենք արդեն համաձայնվեցինք, որ ով ում նման է, ինքն էլ այդպիսին է:

– Համաձայնվեցինք:

– Ուրեմն պարզեցինք, որ արդարը բարի և իմաստուն մարդ է, իսկ անարդարը՝ տգետ ու հոռի:

Թրասիմաքոսը համաձայնեց այս ամենին, բայց ոչ դյուրին, ինչպես որ պատմում եմ, այլ դժգոհ ու քրտինք կտրած, d
մանավանդ որ ամառ էր: Ու ես տեսա, որ Թրասիմաքոսն էլ կարմրել գիտի:

Այն բանից հետո, երբ մենք համաձայնվեցինք, որ արդարությունն առաքինություն և իմաստություն է, իսկ անարդարությունը՝ արատ և տգիտություն, ես ասացի.

– Լավ, սա էլ հաստատված համարենք: Բայց մենք ասում էինք, որ անարդարությունը զորեղ է: Հիշու՞մ ես, Թրասիմաքոս:

– Հիշում եմ: Բայց համաձայն չեմ քո այս պնդումին և այդ առիթով ասելիք ունեմ: Գիտեմ, որ դատարկաբանություն e
պիտի կոչես այն, ինչ կասեմ: Կա՛մ թույլ տուր խոսեմ, կա՛մ էլ, եթե հարցեր ունես, հարցրու: Իսկ ես կպատասխանեմ գլխի շարժումով, այնպես, ինչպես անում ենք պառավների հեքիաթներ լսելիս, երբ հավանության կամ տարակուսանքի նշաններ ենք տալիս:

– Բայց ոչ սեփական կարծիքիդ հակառակ:

– Կանեմ այնպես, որ քեզ հաճելի լինի, քանի որ թույլ չես տալիս խոսել: Ուրիշ ի՞նչ ես ուզում:

– Ոչինչ, Զևսը վկա, վարվիր ինչպես որոշել ես, իսկ ես հարցեր կտամ:

– Տուր:

– Կրկնում եմ քիչ առաջ տվածս հարցը, որպեսզի մեր խորհրդածությունը հետևողական լինի. ինչպե՞ս են հարա- 351
բերվում արդարությունն ու անարդարությունը: Չէ՞ որ արդեն ասվեց, որ անարդարությունն ավելի զորեղ և նշանակալի է արդարությունից: Իսկ հիմա, քանի որ արդարությունը իմաստություն և առաքինություն է, կարծում եմ՝ հեշտ է պարզել, որ ավելի զորեղ է անարդարությունից, եթե սա տգիտություն է: Դա հայտնի է ամենքին: Բայց ես, ո՛վ Թրասիմաքոս, չեմ ուզում խնդիրն այդքան պարզ տեսնել, այնպես որ քննենք հե- b
տևյալը: Ինձ թվում է, թե պետությունը կարող է լինել անար-

դար և անարդար կերպով ստրկացնել ուրիշ պետություններ և ստրկության մեջ պահել: Այդպես կարող է հպատակեցնել շատերին:

– Ինչու՞ չէ: Դա կարող է անել ամենահրաշալի պետությունը, այն, որ ամենից կատարյալն է իր անարդարությամբ:

– Ես հասկանում եմ, որ սա քո պնդումն է: Ինքս մտածում եմ այսպես. պետությունը, դառնալով մեկ ուրիշ պետությունից առավել զորեղ, իր զորությունը ձեռք է բերում արդարությունից անկա՞խ, թե՞ անպայման արդարությամբ հանդերձ:

c – Եթե, ինչպես քիչ առաջ ասացիր, արդարությունն իմաստություն է, ապա արդարությամբ հանդերձ: Իսկ եթե այնպես է, ինչպես ես էի պնդում, ապա անարդարությամբ հանդերձ իմաստություն է:

– Ինձ շատ է ուրախացնում, Թրասիմաքոս, որ դու միայն չես հաստատում կամ ժխտում, այլ նաև միանգամայն հրաշալի դատողություններ ես անում:

– Ուզում եմ հաճոյանալ քեզ:

– Եվ շատ լավ ես անում: Այդ դեպքում հաճոյացիր ինձ նաև հետևյալ հարցում և ասա՝ պետությունը, բանակը, ավազակների և գողերի ջոլիրը կամ մարդկանց որևէ խումբ, որ համատեղ որևէ անարդարություն է գործում, կարո՞ղ է արդյոք ինչ-որ բան անել, եթե հիշյալ մարդիկ անարդար են վարվում միմյանց հետ:

– Իհարկե ոչ:

d – Իսկ եթե անարդար չվարվեն, նրանց գործն ավելի հե՞շտ գլուխ կգա:

– Այո:

– Քանզի, Թրասիմաքոս, անարդարությունն առաջ է բերում ատելություն և գժտություն, իսկ արդարությունը՝ համերաշխություն և բարեկամություն: Այդպես չէ՞:

– Թող այդպես լինի, որ քո ասածից տարբեր բան ասած չլինեմ:

– Շատ ճիշտ ես վարվում, սիրելիս: Բայց ասա ինձ՝ եթե

անարդարության գործն ամենուր ատելություն սերմանելն է, ապա ազատների կամ ստրուկների մեջ տարածվելով՝ մի՞թե չի ստիպի նրանց ատել միմյանց ու գժտվել և մի՞թե անհնար e
չի դարձնի նրանց համատեղ գործունեությունը:

– Իհարկե:

– Անգամ եթե նրանք երկուսը լինեն, կգժտվեն, կատեն իրար և թշնամի կդառնան թե՛ միմյանց, թե՛ արդար մարդկանց:

– Այո, կդառնան:

– Բայց, ո՛վ զարմանալի Թրասիմաքոս, եթե անարդարությունը ծագի միայն մեկի մոտ, մի՞թե կկորցնի իր ուժը, թե՞ կպահպանի եղածը:

– Ասենք, կպահպանի:

– Իսկ անարդարության այդ ուժը, ինչպես երևում է, այնպիսին է, որ ուր էլ ծագի՝ պետության մեջ, տոհմի, բանակի կամ մեկ ուրիշ տեղ, նախ և առաջ անհնար է դարձնում սրանց գործունեությունը, քանի որ ամեն գործ կապված է 352
դրա հետ և հանգեցնում է գժտության, տարաձայնությունների, արտաքին ու ներքին թշնամության, ընդ որում նաև արդար հակառակորդի հետ: Այդպես չէ՞:

– Իհարկե այդպես է:

– Ծագելով նաև մեկ մարդու մեջ՝ անարդարությունն, ըստ իս, առաջ է բերում այն ամենը, որ հատուկ է իրեն: Նախ՝ նրան դարձնում է անգործունյա, քանի որ այդ մարդն ինքնապառակտվում է և թշնամանում ինքն իր և արդարների հետ: Այդպես չէ՞:

– Այդպես է:

– Իսկ արդարների թվում են, բարեկամս, նաև աստվածները՞ը:

– Այո:

– Եվ աստվածներին, Թրասիմաքոս, անարդարը թշնամի է, b
իսկ արդարը՝ բարեկա՞մ:

– Ինքդ ճաշակիր դատողությունդ և մի՛ վախեցիր, որով-

հետև ես այլևս չեմ առարկի քեզ, որպեսզի իմ դեմ չգրգռեմ ներկաներին:

– Ուրեմն տուր նաև մնացյալ պատասխանները, ինչպես քիչ առաջ: Երևում է, արդարներն ավելի իմաստուն, ավելի առաքինի և ավելի գործունյա են, իսկ անարդարները չեն կարող գործել համատեղ: Եվ անգամ եթե ասում ենք, թե անար-
c դարները երբևէ գործել են միասնաբար, դա լիովին ճիշտ չէ: Չէ՞ որ լինելով անարդար՝ նրանք չէին խնայի միմյանց, ուրեմն պարզ է, որ նրանց մեջ նաև արդարություն է եղել, որը խանգարել է չարիք գործել ինչպես միմյանց, այնպես էլ նրանց հանդեպ, որոնց հետ ցանկացել են անարդար վարվել, ահա ինչու արել են այն, ինչ արել են: Նրանց անարդարության էր դրդում անարդարությունը, և նրանք հոռի էին միշտ կիսով
d չափ, որովհետև կատարելապես հոռիները և լիովին անարդարներն ընդհանրապես չեն կարող գործել: Այսպես եմ հասկանում, և ոչ այնպես, ինչպես պնդեցիր սկզբում: Բայց մենք դեռ պիտի քննենք նաև այն, ինչ մտադիր էինք դիտարկել սրանից հետո, այն է՝ արդյո՞ք ավելի լավ են ապրում արդար մարդիկ անարդարներից և արդյո՞ք ավելի երջանիկ են: Թեպետ հիմա էլ դա, իմ կարծիքով, երևում է ասվածից, սակայն ամեն դեպքում լավ կլինի քննության առնել: Չէ՞ որ խոսքը պատահական բանի մասին չէ, այլ՝ թե ինչպես պետք է ապրել:

– Դե, քննիր:

– Դա էլ անում եմ: Ասա ինձ՝ ձին ունի՞ իր հատուկ գործը:

– Այո:

e – Իսկ ձիու կամ ուրիշի գործը չե՞ս համարի այն, ինչը կարող է կատարվել միայն այդ ձիու միջոցով կամ լավագույնս նրա հետ:

– Չեմ հասկանում:

– Այսպես, աչքերից բացի ուրիշ որևէ գործարանով կարո՞ղ ես տեսնել:

– Իհարկե ոչ:

– Իսկ ականջներից բացի մեկ ուրիշ գործարանով լսել կարո՞ղ ես:

– Բնավ:

– Ուրեմն այդ գործողությունները տվյալ գործարանների արգասի՞ք են:

– Իհարկե:

– Իսկ խաղողի ճյուղերը կարող ես կտրել ինչպես այգեգործական, այնպես էլ սովորական դանակով կամ մեկ ա՞յլ գործիքով: 353

– Ինչպե՞ս չէ:

– Բայց, կարծում եմ, ոչնչով չես անի դա այնքան լավ, որքան էտոցով, որը հենց դրա համար է նախատեսված:

– Ճշմարիտ է:

– Ուրեմն դա՞ է էտոցի գործը:

– Դա է:

– Հիմա, կարծում եմ, դու ավելի լավ կհասկանաս, թե ինչ էի հարցնում քիչ առաջ: Մի՞թե ամեն գործիքի գործն այն չէ, ինչ կատարում ենք միայն դրա օգնությամբ կամ կատարում ենք լավագույնս:

– Հասկանում եմ, և ինձ թվում է, դա է ամեն գործիքի գործ ասածը:

– Լավ: Իսկ չե՞ս կարծում, թե ամեն գործիք, որքանով որ b
ունի իր գործը, ունի նաև իր արժանիքը: Վերադառնանք նույն օրինակներին: Աչքերն ունե՞ն իրենց գործը:

– Այո:

– Ուրեմն աչքն ունի նաև իր արժանի՞քը:

– Նաև արժանիքը:

– Եվ ինչ, ականջները նու՞յնպես ունեն իրենց գործը:

– Այո:

– Ուրեմն նաև արժանի՞քը:

– Նաև արժանիքը:

– Իսկ մնացյալի դեպքում մի՞թե նույնը չէ:

– Նույնն է:

– Բայց տե՛ս, մի՞թե աչքերը կարող են լավ կատարել իրենց գործը՝ ունենալով ոչ թե իրենց բնատուր առաքինությունը, այլ որևէ արատ:

c – Այդ ինչպե՞ս: Հավանաբար տեսողության փոխարեն նկատի ունես կուրությու՞նը:

– Աչքերի առաքինությունը տեսողությունն է: Բայց ես դրա մասին չեմ հարցնում, այլ՝ արդյո՞ք իրենց հատուկ առաքինության միջոցով չեն աչքերը լավ կատարում իրենց գործը, իսկ արատի պարագայում՝ վատ:

– Ճիշտ ես ասում:

– Նաև ականջները, զուրկ լինելով իրենց առաքինությունից, վա՞տ են կատարում իրենց գործը:

– Իհարկե:

d – Ամեն բան կենթարկե՞նք այս դատողությանը:

– Կարծում եմ, այո:

– Այդ դեպքում քննիր նաև հետևյալը. ունի՞ արդյոք հոգին որևէ գործ, որը ոչ մի ուրիշ գոյ չի կարող կատարել, օրինակ՝ հոգ տանել, իշխել, խորհրդակցել և այլն: Գոյություն ունի՞ արդյոք հոգուց զատ մեկ ուրիշ բան, որին իրավացիորեն կարող ենք վերագրել այս ամենը և ասել, որ դա միայն իր գործն է:

– Ամենևին:

– Իսկ կյանքի մասին ասում ենք, որ այն հոգու գործն է:

– Անպատճառ:

– Ուրեմն կասե՞նք նաև, որ հոգին ունի ինչ-որ արժանիք:

– Կասենք:

e – Իսկ զրկվելով իրեն հատուկ այդ առաքինությունից՝ կարո՞ղ է հոգին լավ դրսևորել իրեն հատուկ արժանիքը, թե՞ դա անհնար է:

– Անհնար է:

– Ուրեմն ասեմ հոգու իշխանությունն ու հոգածությունը անհրաժեշտաբար կլինի վատը, իսկ վսեմ հոգու դեպքում՝ լավը:

– Անհրաժեշտաբար:

– Բայց մենք համաձայնվեցինք, որ հոգու առաքինությունն

արդարությունն է, իսկ արատավորությունը՝ անարդարությունը:

– Համաձայնվեցինք:

– Ուրեմն արդար հոգին և արդար մարդը կապրեն լավ, իսկ անարդարը՝ վատ:

– Քո խոսքից այդպես է բխում:

– Բայց լավ ապրողը երանելի է և երջանիկ, իսկ անար- 354
դարը՝ հակառակը:

– Ինչպե՞ս չէ:

– Ուրեմն արդարը երջանիկ է, իսկ անարդարը՝ դժբախտ:

– Թող այդպես լինի:

– Բայց դժբախտությունը շահեկան չէ, իսկ երջանիկ լինելը՝ այո:

– Իհարկե:

– Այդ դեպքում, զարմանալի՛ Թրասիմաքոս, անարդարությունը երբեք չի կարող ավելի շահավետ լինել արդարությունից:

– Ուրեմն դրանից էլ հենց համտեսիր Բենդիսի խնջույքին, Սոկրատես:

– Իրականում դու ես հյուրասիրում ինձ, Թրասիմաքոս, քանի որ սիրալիր դարձար և այլևս չբարկացար: Բայց ես դեռ կարգին ոչինչ չեմ ճաշակել, և մեղավորը ես եմ, ոչ թե դու: Մատուցված ամեն կերակուրի վրա հարձակվող համեղակե- b
ռի նման, որը դեռ չի հագեցել նախորդ կերակուրից, ես, չգտնելով սկզբում փնտրածս, այսինքն՝ թե ինչ է արդարությունը, թողեցի դա և սկսեցի պարզել՝ արատ է, տգիտություն, իմաստություն, թե առաքինություն: Իսկ հետո, երբ բախվեցի դրույթին, իբր անարդարությունն առավել նպատակահարմար է արդարությունից, չդիմացա և անցա այդ հարցի քննությանը, այնպես որ հիմա ես չգիտեմ, թե ինչ է արդարությունը: Բայց
եթե չգիտեմ՝ ինչ է արդարությունը, դժվար թե իմանամ՝ ունի c
այն որևէ առաքինություն, թե ոչ, և դժբախտ է արդյոք դա ունեցողը, թե երջանիկ:

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

357 Ես կարծում էի՝ սրանով կավարտեմ խոսքս, սակայն, ինչպես պարզվեց, սա միայն նախերգանք էր: Գլավկոնը, որը խիզախ մարդ է, չցանկացավ ընդունել Թրասիմաքոսի նահանջը և ասաց.

b – Սոկրատե՛ս, ուզում ես, որ միայն թվա՞, թե հաղթեցիր մեզ, թե՞ որ ճշմարտապես համոզվենք, որ ամեն դեպքում ավելի լավ է լինել արդար, քան անարդար մարդ:

– Ես, իհարկե, կնախընտրեի ճշմարտապես համոզել, եթե դա կախված լիներ ինձնից:

– Բայց դու չես անում ուզածդ: Ասա ինձ՝ բարի՞ք ես համարում այն, ինչ ընդունում ենք ոչ թե իր հետևանքների համար, այլ հանուն իրեն: Օրինակ՝ բերկրանքը, հաճույքը և մյուս այդպիսի անմեղ բաները, որոնց շնորհիվ հետագայում ոչինչ չեն շահում, բայց որոնք ուրախություն են պատճառում:

– Այո, ըստ իս բարիքն այդպիսին է:

c – Իսկ այն, ինչ մենք արժևորում ենք և՛ հանուն իրեն, և՛ իր հետևանքների՞: Օրինակ՝ բանականությունը, տեսողությունը, առողջությունը, չէ՞ որ մենք երկու առումով էլ բարիք ենք համարում դրանք:

– Այո:

– Իսկ չե՞ս տեսնում նաև բարիքի երրորդ տեսակ, որին դասվում են մարմնամարզությունը, հիվանդների բժշկումն ու ապաքինումը և այլ շահավետ զբաղմունքներ: Մենք կընդունեինք, որ դրանք աշխատատար են, բայց դրանք օգտակար

են մեզ. չեինք ընդունի հանուն հենց իրենց, սակայն դրանք d
վարձատրվում են և տալիս են բազում ուրիշ օգուտներ:

– Գոյություն ունի նաև երրորդ տեսակը: Եվ ի՞նչ:

– Որի՞ն ես դասում արդարությունը:

– Կարծում եմ՝ լավագույնին, որը պիտի արժևորվի և՛ ինքնին, և՛ իր հետևանքների համար, եթե ուզում ենք երջանիկ 358
լինել:

– Բայց շատերն այդպես չեն կարծում և այն համարում են ծանր աշխատանք, որին կարելի է տրվել միայն վարձատրության, հարգանքի և փառքի համար: Այդ զբաղմունքն այնքան դժվար է, որ արժե անգամ խուսափել դրանից:

– Գիտեմ, որ այդպես են կարծում, և Թրասիմաքոսն արդեն երկար ժամանակ է, ինչ պարսավում է այդպիսի բարիքն ու գովաբանում անարդարությունը: Բայց ես, ինչպես երևում է, շատ բթամիտ եմ:

– Այդ դեպքում ինձ էլ լսիր, գուցե պարզվի, որ ինձ նման b
ես մտածում: Ինձ թվում է, Թրասիմաքոսը շատ արագ, ինչպես մի օձ, հանձնվեց քո հմայախոսությանը, բայց քո փաստարկը երկու առումով էլ սրտովս չէ: Կուզեի լսել, թե ինչ են արդարությունն ու անարդարությունը և ինչ ուժ են առաջ բերում՝ գտնվելով մարդու հոգում, իսկ վարձատրությունը և դրա հետևանքների հարցը առայժմ թողնենք: Եթե համամիտ
ես, կանեմ այսպես. կվերադառնամ Թրասիմաքոսի դատողու- c
թյանը և նախ կասեմ, թե ինչպես են պատկերացնում արդարությունն ու դրա ծագումը: Այնուհետև ցույց կտամ, որ բոլոր արդար գործողները վարվում են իրենց կամքին հակառակ, ասես դա անհրաժեշտություն է, և ոչ բարիք: Երրորդը՝ որ այդպես գործելն արդարացված է, քանզի, ինչպես ասում են, անարդարի կյանքը շատ ավելի լավն է արդարի կյանքից: Ինքս, Սոկրատես, այդպես չեմ կարծում և տարակուսում եմ, երբ Թրասիմաքոսը և շատ ուրիշներ լցնում են գլուխս նման բաներով, մինչդեռ արդարությունը պաշտպանող խոսք, որը կապացուցեր դրա առավելությունն անարդարությունից, հակա-

d ռակ ցանկությանս, ոչ ոքից չլսեցի: Կուզեի լսել հենց արդա-
ության, ինքնին արդարության գովքը: Կարծում եմ, որ հենց
քեզնից կլսեմ դա, ահա ինչու դիտավորյալ կգովաբանեմ ան-
արդար կյանքը, որպեսզի հուշեմ քեզ, թե անարդարության
ինչպիսի կշտամբանք և արդարության ինչպիսի գովք կուզեի
լսել: Դեմ չե՞ս առաջարկիս:

– Բոլորովին: Մի՞թե խելամիտ մարդու համար ամենից
e հաճելին նման հարցերի շուրջ հնարավորինս հաճախ զրու-
ցելը չէ:

– Հրաշալի է,– ասաց նա:– Ահա ինչ կուզեի քննել առա-
ջինը՝ ինչ է արդարությունը և ինչից է ծագում: Ասում են՝ ան-
արդարություն գործելը բնականորեն բարիք է, իսկ կրելը՝ չա-
րիք: Սակայն անարդարություն կրելիս չարիքն ավելի մեծ է,
քան անարդարություն գործելիս բարիքը, այնպես որ երբ
մարդիկ անարդարություն են գործում և կրում այն՝ չկարողա-
նալով խուսափել երկուսից էլ, նպատակահարմար են գտնում
359 պայմանավորվել այլևս անարդարություն չգործել և չկրել:
Այստեղից են սկիզբ առնում օրենքներն ու դաշինքները: Այդ
պայմանավորվածությունները կոչվեցին օրինական և արդար.
այդպիսին էր արդարության ծագումն ու էությունը: Այն զբա-
ղեցնում է միջին տեղ լավագույնի, որն անպատիժ անարդա-
րություն գործելն է, և վատագույնի միջև, որը անարդարու-
թյուն կրելն է առանց պատասխանել կարենալու: Արդարու-
թյունն այս երկուսի միջև է և արժևորվում է ոչ թե իբրև բա-
b րիք, այլ որպես անարդարություն գործելու անկարողություն:
Նա, ով կարող է անարդարություն գործել և իսկական տղա-
մարդ է, երբեք չի կնքի այնպիսի դաշինք, որը կարգելի ան-
արդարություն գործել կամ կրել այն: Միայն եթե խելքը չի
կորցրել: Այսպիսին է, ո՛վ Սոկրատես, արդարությունը, և այս-
պես է այն ծագել, ըստ հիշյալ տեսակետի:

Իսկ որ արդարություն պահպանողները այդպես են վար-
վում անարդարություն գործելու անկարողությունից, և ոչ կա-
մովին, լավագույնս կնկատենք, եթե մտածենք այսպես: Յու-

ռաքանչյուրին՝ արդարին և անարդարին ազատություն տալով
անելու ինչ կամենա, հետևենք նրան և տեսնենք, թե ուր կտա-
նեն նրան իր տենչանքները: Մենք կտեսնենք, որ արդարն իր c
շահի համար պատրաստ է անելու նույնը, ինչ անարդարը,
որովհետև սեփական շահին, որպես բարիքի, հետևում է
ամեն բնություն, և միայն օրենքն է բռնի ստիպում հարգել
հավասարությունը: Այդ մարդիկ, կրկնում եմ, կունենային կա-
րողություն անելու այն, ինչ արեց Լիդոսի որդի Գիգեսը[1]: Սա d
հովիվ էր Լիդիայի արքայի մոտ: Մի անգամ հորդառատ անձ-
րևից և երկրաշարժից հետո առաջացան սողանքներ, և հողը
ճեղքվեց: Գիգեսը հետաքրքրությունից իջավ ճեղքի մեջ և,
ինչպես պատմում են, տեսավ բազում հրաշալիքներ, այդ
թվում պղնձե ձի, որ սնամեջ էր և ուներ դռնակներ: Ներս
մտնելով՝ տեսավ մի դիակ, որը, ինչպես թվում էր, չափերով
ավելի մեծ էր սովորական մարդուց: Հագին ոչինչ չուներ, մի-
այն ձեռքին ոսկե մատանի կար, որը վերցնելով՝ Գիգեսը
դուրս եկավ ձիուց: Երբ հովիվները սովորականի նման հա- e
վաքվեցին ամեն ամիս գումարվող ժողովի՝ արքային հոտի
մասին զեկուցելու, Գիգեսը նույնպես ներկայացավ՝ մատա-
նին մատին: Երբ նա նստած էր մյուս հովիվների կողքին, այն-
պես պատահեց, որ մատանու քարը շրջեց դեպի ափը: Նա իս-
կույն անտեսանելի դարձավ ներկաների համար, և նրանք
խոսում էին նրա մասին որպես բացակայի: Գիգեսը զարմա-
ցավ և ետ շրջելով մատանին՝ իսկույն նորից տեսանելի դար- 360
ձավ: Այդժամ նա որոշեց ստուգել՝ արդյոք մատանին իրոք
այդպիսի ուժ ունի, և տեսավ, որ բավական է մատանու քարը
շրջվի դեպի ներս, դառնում է անտեսանելի, իսկ դեպի դուրս
շրջելու դեպքում նորից տեսանելի է դառնում: Երբ հասկա-
ցավ դա, այնպես արեց, որ հայտնվի արքային շրջապատող
սուրհանդակների մեջ, այնուհետև գայթակղեց նրա կնոջը, b
սրա հետ հարձակվեց արքայի վրա, սպանեց նրան և տիրա-
ցավ իշխանությանը: Եթե լիներ երկու այդպիսի մատանի՝
մեկը արդարի ձեռքին, իսկ մյուսը՝ անարդարի, ապա, ինչպես

երևում է, նրանցից ոչ ոք չէր լինի այնքան հաստատուն, որ
մնար արդար և չհավակներ յուրացնելու ուրիշի ունեցվածքն
c ու դիպչելու դրան, անվտանգ վերցնելու շուկայում իր
ուզածը, մտնելու տներն ու կենակցելու ում հետ կամենա,
սպանելու կամ ազատելու բանտից ցանկացածին և առհա-
սարակ գործելու ինչպես աստծուն հավասար մեկը: Այդպես
վարվողները ոչնչով չէին տարբերվի իրարից, այլ երկուսն էլ
կհանգեին նույնին: Հենց սա է մեծ ապացույցն այն բանի, որ
ոչ ոք արդար չէ կամովին, այլ՝ ստիպողաբար, քանի որ ոչ բո-
լորն են բարիք համարում արդարությունը և, եթե ի վիճակի
են անարդարություն գործելու, այդպես էլ անում են: Չէ՞ որ
d ամեն մարդ ներքուստ համոզված է, որ անարդարությունն
ավելի նպատակահարմար է արդարությունից, և դա է ճիշտ
համարում. այսպես կասի նա, ով հանդես է գալիս այս փաս-
տարկի օգտին: Քանզի եթե այդպիսի կարողության տեր լի-
նելով՝ մարդ երբեք չի ցանկանում անարդարություն գործել և
դիպչել ուրիշի ունեցվածքին, թշվառ և անմիտ կթվա բոլորին,
ովքեր կնկատեն դա: Թեպետ, իհարկե, միմյանց ներկայու-
թյամբ նրանք կեղծաբար կգովեն նրան, որովհետև վախենում
են անարդարությունից: Այս մասին այսքանը:

Ինչ վերաբերում է նրանց կյանքի գնահատականին, ապա
e այդ մարդկանց մասին կկարողանանք ճիշտ դատել, միայն
երբ համեմատենք ամենաարդար մարդուն ամենաանարդարի
հետ, այլապես չենք հաջողի: Ի՞նչ համեմատություն է դա: Ահա
այն: Անարդար մարդուց մենք չենք վերցնի իր անարդարու-
թյունը և ոչ էլ արդարից՝ իր արդարությունը, այլ յուրաքանչ-
յուրին կքննենք իր որակի կատարելության մեջ: Նախ թող ան-
արդարը գործի, ինչպես հմուտ վարպետները: Հմուտ նավա-
վարը կամ բժիշկը գիտի, թե ինչն է անհնար իր արհեստում:
Մի գործ նա ձեռնարկում է, իսկ մյուսը՝ ոչ, իսկ երբ սխալվում
361 է, կարող է ուղղել իր սխալը: Անարդարը, եթե ուզում է իսկա-
պես անարդար լինել, իր անարդարությունները պիտի գործի
ծածուկ: Եթե նրան բռնեն, ուրեմն նա գործել է ոչ հմտորեն:

Չէ՞ որ ծայրահեղ անարդարությունը կարող է արդար թվալ
այդպիսին չլինելով: Կատարելապես անարդար մարդը պետք
է ցուցադրի կատարյալ արդարություն և ոչինչ չպակասեցնի
դրանից, և հարկ է ենթադրել, որ նա, ով մեծագույն անար-
դարություն է գործում, նախապատրաստում է իր մեծագույն b
փառքը արդարության մեջ: Եվ եթե նա ինչ-որ բանում սխալվի,
կկարողանա շտկել դա, քանզի բավականաչափ պերճախոս է
և կարող է համոզել, եթե բացահայտվեն իր անարդարություն-
ները, իսկ եթե բռնության կարիք լինի, կարող է նաև բռնու-
թյուն գործել, քանի որ խիզախ և ուժեղ է, ձեռք է բերել ընկեր-
ներ և հարստություն:

Այսպես պատկերացնելով անարդարին՝ մենք այժմ նրան
կհակադրենք պարզ և ազնիվ մարդուն, որը, ինչպես ասում է
Էսքիլոսը, կցանկանա ոչ թե թվալ, այլ լինել լավը[2]: Հարկ է
ազատել նրան թվացյալից, քանզի եթե նա արդար լինի ցու-
ցադրաբար, նրան կտրվեն պատիվներ և ընծաներ, բայց չի c
հասկացվի, թե ինչի համար է նա այդպիսին՝ հանուն արդա-
րության՞ն, թե՞ ընծաների ու պատիվների: Նրան պետք է մեր-
կացնել ամբողջությամբ՝ իրեն թողնելով միայն արդարությու-
նը, որպեսզի դառնա այն առաջին մարդու հակադիրը: Չգոր-
ծելով ոչ մի անարդարություն՝ թող նա ունենա մեծագույն ան-
արդարի համբավ, որպեսզի այդկերպ անցնի արդարության
փորձության միջով ու չվաստակի վատ համբավ և այն ամե-
նը, որ հետևում է սրան: Թող իր այդ ճանապարհով շարժվի
մինչև մահ՝ կյանքի օրոք համարվելով անարդար, լինելով, d
սակայն, արդար. իսկ երբ երկուսն էլ հասնեն սահմանին՝
մեկը արդարության, իսկ մյուսը՝ անարդարության, վերջապես
կորոշվի, թե ով է նրանցից ավելի երջանիկ:

– Սիրելի՛ Գլավկոն,– ասացի ես,– ինչ լավ հղկեցիր մեր
դատողության համար այդ երկու այրերին, ասես քանդակ լի-
նեն:

– Փորձեցի անել դա լավագույն ձևով,– պատասխանեց
նա,– և եթե սրանք այսպիսին են, կարծում եմ՝ այլևս դժվար

չէ քննել, թե ինչ կյանք է սպասում յուրաքանչյուրին: Հարկ է
c խոսել այդ մասին, իսկ եթե ասվածը կտրուկ լինի, դու, Սո-
կրատես, մտածիր, որ դա ասում եմ ոչ թե ես, այլ նրանք, ով-
քեր արդարության փոխարեն գովաբանում են անարդարու-
թյունը: Կասեն այսպես. «Եթե քո արդար մարդն այդպիսին է,
362 ապա ենթակա է խարազանման, խոշտանգման, շղթայման,
կուրացման և ի վերջո, բոլոր այդ չարչարանքներից հետո,
ցցահանման. այնժամ նա կհասկանա, որ ցանկալի է ոչ թե լի-
նել, այլ թվալ արդար»: Էսքիլոսի խոսքը շատ ավելի ճիշտ կլի-
նի հիշել անարդարի առիթով: Չէ՞ որ իսկապես կասեն, որ ան-
արդարը գործ ունի ճշմարիտ բաների հետ, ապրում է ոչ հա-
նուն փառքի և ուզում է ոչ միայն թվալ անարդար, այլև լինել:

Սնուցում է խորախորհուրդ իր հոգու մեջ
Նա բեղուն հող, ուր ծագում են խոհեմ մտքեր[3]:

b Նա կպաշտոնավարի պետության մեջ, քանի որ կթվա ար-
դար, կնության կառնի ում կուզի և իր զավակներին կամուս-
նացնի ում հետ կկամենա, կշփվի նրա հետ, ում կհավանի, ու
դրանից կստանա ամեն տեսակ օգուտ, քանզի չի խուսափում
անարդարությունից: Բռնվելով մասնավոր կամ հանրային
վեճի՝ նա կգերազանցի և կհաղթի իր թշնամիներին, իսկ հաղ-
թելով՝ կհարստանա և ընկերներին բարիք կգործի, թշնամի-
ներին՝ չարիք, աստվածներին կմատուցի ճոխ զոհաբերու-
c թյուններ ու ընծաներ և կերկրպագի նրանց, իսկ մարդկան-
ցից՝ ում կցանկանա: Այդ ամենը կանի ավելի լավ, քան ար-
դարը, այնպես որ ամենայն հավանականությամբ հենց նա
պիտի ավելի սիրելի լինի աստվածներին, և ոչ արդարը: Սա
նկատի ունեն, Սոկրատես, երբ ասում են, որ ինչպես աստ-
վածների, այնպես էլ մարդկանց կողմից անարդար մարդուն
սպասում է ավելի լավ կյանք, քան արդարին:

Երբ Գլավկոնն ավարտեց, ես ի մի բերեցի մտքիս եղածը,
որպեսզի պատասխանեմ նրան, սակայն նրա եղբայրը՝ Ադի-
մանտոսը, ասաց ինձ.

– Դու, Սոկրատես, իհարկե չես կարծում, թե ասվածը բա- d
վական էր մեր հարցը լուծելու համար:

– Իսկ ուրիշ ի՞նչ կա ասելու:

– Չասվեց այն, ինչը պիտի ասվեր առաջին հերթին:

– Ուրեմն, ինչպես ասում են, թող եղբայրն օգնի եղբորը[4]: Եթե Գլավկոնը ինչ-որ բան բաց թողեց, օգնի՛ր նրան: Թեև ասածն էլ բավական էր ինձ տապալելու համար, որ այլևս անզոր լինեմ օգնելու արդարությանը:

– Անհեթեթ բան ես ասում: Բայց լսիր նաև հետևյալը: Մենք e
պիտի քննենք նաև Գլավկոնի ասածի հակադիր փաստարկ-
ները, նրանք, որ գովերգում են արդարությունը և վատաբա-
նում անարդարությունը, որպեսզի,– ես այդպես եմ կարծում,–
ավելի հստակ երևա Գլավկոնի միտումը: Հայրերը, ինչպես
նաև բոլոր նրանք, ովքեր հոգ են տանում որևէ մեկի մասին,
երբ հորդորում և պատվիրում են արդար լինել, չեն գովաբա-
նում հենց արդարությունը, այլ՝ նրանից կախված բարի համ-
բավը, որպեսզի արդար համարվողին բաժին հասնեն ինչպես 363
իշխանությունը, այնպես էլ շահավետ ամուսնությունը: Գլավ-
կոնը դա նկատի ուներ, երբ խոսում էր բարի համբավի տեր
անարդարի մասին: Հիշատակում են բարի համբավի նաև
ուրիշ առավելություններ: Հատկապես նշում են աստվածների
մոտ վայելած հարգանքը, որի համար, ինչպես պնդում են,
աստվածներն առատ բարիքներ են շնորհում բարեպաշտնե-
րին: Այդպես են ասում նաև ազնվագույն Հեսիոդոսն ու Հոմե-
րոսը: Առաջինն ասում է, որ արդարների համար աստվածնե- b
րը ստեղծեցին կաղնիներ, և ահա.

Պտղաբերում է հողն առատ, իսկ սարերում՝ կաղնիների
Սաղարթներից անբավ կաղին, փչակներից մեղր է թափվում[5]:

Եվ շատ ուրիշ բարիքներ ևս ստեղծեցին: Իսկ Հոմերոսն ասում է.

Ինչպես փառքը գերահռչակ մի արքայի, որն իշխում է
աստծո պես
Իր քաղաքի և բազմամարդ ազգի վրա արդարադատ ու
ճշմարիտ
c *Ու սն երկիրն իր ծեռքի տակ առատ ու լի բերում է միշտ*
ցորեն, գարի.
Ծանրաբեռնված են բյուր ծառեր պտուղներով փարթամ ու
լի և ակաղծուն...[6]

d Իսկ Մուսեոսը և իր որդին[7] արդարներին աստվածների կողմից շնորհում են ավելի գայթակղիչ բարիքներ: Համաձայն նրանց ուսմունքի, երբ արդարներն իջնում են Հադես, նրանց որպես բարեպաշտների կանչում են խնջույքի և առաջարկում են ընկողմանել, այնպես որ սրանք ողջ ժամանակն անցկացնում են արբեցած և պսակները գլուխներին, քանզի համարվում է, որ առաքինության համար լավագույն վարձատրությունը հավերժ արբեցած լինելն է: Կան նաև ուրիշ ուսմունքներ, որ ավելի են մեծացնում աստվածների շնորհները ստացողների շարքը, որովհետև ասում են, թե բարեպաշտ ու երդմնապահ մարդիկ իրենցից հետո այդ շնորհները թողնում են իրենց զավակների զավակներին և ողջ սերնդին: Ահա սրա և ուրիշ այդպիսի բաների համար են նրանք գովաբանում արդարությունը: Իսկ ոչ բարեպաշտ և անարդար մարդ-
e կանց նրանք տեղավորում են Հադեսի ինչ-որ ծանծաղուտում և ստիպում են մաղով ջուր կրել, քանի որ այդպիսիք արդեն կենդանության օրոք վայելում են վատ համբավ: Իրականում արդար, բայց անարդարի համբավ ունեցող մարդկանց պատիժ, որի մասին խոսում էր Գլավկոնը, ստանում են հենց անարդար մարդիկ, և այստեղ ավելացնելու ոչինչ չկա: Այսպիսին է նրանցից յուրաքանչյուրի գովեստն ու պարսավանքը:

Բացի այդ, Սոկրատես, դիտարկիր նաև արդարության և անարդարության ուրիշ տեսակետներ, որ հանդիպում են մասնավոր զրույցներում և բանաստեղծների մոտ: Բոլորը մի-

աբերան պնդում են, թե խոհեմությունն ու արդարությունը գե-
ղեցիկ են, բայց նաև դժվար ու ծանր, իսկ սանձարձակու-
թյունն ու անարդարությունը հաճելի են և միայն համբավի և
օրենքի տեսակետից են ամոթալի: Շատ են ասում, թե անար- 364
դարների համար անարդարություններն ավելի նպատակա-
հարմար են. հանրային ու մասնավոր կյանքում երջանիկ են
համարվում և հարգված են հարուստ ու ազդեցիկ սրի-
կաները, իսկ թույլ ու աղքատ արդարներին անարգում են և
վերևից նայում, թեպետ համաձայն են, որ սրանք ավելի լավն b
են առաջիններից: Ամենազարմանալի բաները պատմում են
աստվածների և առաքինության մասին: Ասում են, թե աստ-
վածները դժբախտություններ և վատ կյանք են տալիս շատ
բարի մարդկանց, իսկ չար մարդկանց՝ հակառակը: Մուրացիկ
գուշակներն ընկնում են հարուստների դռներն ու պնդում, թե
աստվածներից ստացած զորությամբ կարող են զոհաբերու-
թյուններով և հմայախոսություններով սրբել որևէ մեկի կամ
նրա նախնիների մեղքը, ընդ որում հաճելի ծնով և տոնակա- c
տարությունների ժամանակ: Իսկ եթե ոմն ցանկանա վնասել
իր թշնամուն, ապա աննշան վարձի դիմաց կարող է արդար
մարդուն վնասել նույնքան, որքան անարդարին. նրանք հայ-
տարարում են, թե ինչ-ինչ հմայախոսությունների և հանգույց-
ների միջոցով կարողանում են համոզել աստվածներին օգ-
նել իրենց: Այս բոլորի համար վկայակոչում են բանաստեղծ-
ներին, որոնք խոսում են չարագործության դյուրինության
մասին.

Շատ դյուրին է՝ առատորեն նյութել վատթար պատուհասներ, d
Դեպի չարը կարճ է ուղին, հույժ մոտիկ է նա բնակվում:
Աստվածները տանջանքներ են դրել մեր և բարու միջև[8]:

Դեպի բարին տանող ճանապարհը երկար է ու զառիվեր:
Իսկ որ մարդիկ կարող են համոզել աստվածներին, վկայում
է նաև Հոմերոսը, երբ ասում է.

1915.info

Որ գերազանց են թե՛ պատվով, թե՛ զորությամբ և թե՛ փառքով:
Նույնիսկ նրանց՝ աղոթող մարդն իր մատուցած նվերներով
e *Կամ մաղթանքով աղերսալի, ուխտած զոհով ու ծեսերով*
Կարեկից է դարձնում հաճախ, երբ որ մի մեղք է կատարում[9]:

Քրմերի տրամադրության տակ են Մուսեոսի և Օրփեոսի կամ, ինչպես ասում են, Սելենեի և Մուսայի[10] հետնորդների բազում գրքեր, որոնց հետևելով նրանք կատարում են իրենց ծեսերը՝ համոզելով ոչ միայն առանձին մարդկանց, այլև պետությունների, որ թե՛ ողջերի և թե՛ մահացածների համար կա ազատում և մաքրագործում մեղքերից շնորհիվ զոհաբերությունների և հաճելի մի ժամանցի, որը նրանք համարում են
365 հաղորդություն, և իբր թե սրանք ազատում են մեզ այնտեղի չարիքներից, իսկ նրանց, ովքեր զոհեր չեն մատուցել, սարսափներ են սպասում[11]:

Որքա՜ն բան է ասվում առաքինության և արատավորության մասին, սիրելի՛ Սոկրատես, և թե ինչպես են մարդիկ և աստվածները գնահատում դրանք: Ինչպե՞ս վարվեն այդ ամենը լսած պատանիների հոգիները, որոնք լինելով օժտված՝ ձգտում են մասնակցել նման զրույցների և դատել այն մասին, թե ինչպես պետք է ապրել կյանքը լավագույն ձևով: Այդ-
b պիսի պատանին Պինդարոսի նմանությամբ կարող է ինքն իրեն հարցնել.

Արդարությա՞մբ նվաճեմ աշտարակը բարձր,
Թե՞ սուտ ու կեղծիքով[12]

և ապրեմ կյանքը դրանք դավանելով: Քանզի նրանց պնդմամբ, եթե ես արդար եմ, իսկ ինձ այդպիսին չեն համարում, ոչ մի օգուտ ես դրանից չունեմ, լոկ դժվարություններ և ակնհայտ վնաս: Իսկ արդարի համբավ վայելող անարդարի կյան-
c քը, ինչպես ասում են, հրաշալի է: Ուրեմն, եթե համբավը, ինչ-

պես բացատրում են ինձ իմաստունները, վեր է անգամ ճշմա-
ռիտից և պատճառ է բարեկեցության, ես պիտի ամբողջու-
թյամբ կենտրոնանամ դրա վրա: Որպես նախամուտք՝ այդ
համբավի համար ես պետք է գծեմ իմ շուրջը առաքինության
ստվերապատկեր և իմ ետևից քարշ տամ իմաստնագույն Ար-
քիլոքոսի ճարպիկ և ճապուկ աղվեսին[13]: Բայց ինչ-որ մեկը
կարող է ասել, թե հեշտ չէ միշտ թաքցնել սեփական արատա-
վորությունը: Իսկ մենք կպատասխանենք, որ նշանակալի d
որևէ բան առանց ջանքերի չի տրվում: Այդուհանդերձ, եթե
մենք ձգտում ենք երջանկության, հարկ է գնալ մեր փաս-
տարկների հետքերով: Թաքնվելու համար մենք կկազմենք
միություններ և ընկերություններ: Մեր մեջ կան նաև համոզե-
լու վարպետներ, որոնք մեզ կփոխանցեն հանրային և դատա-
կան ճառերի իմաստությունը, և մենք կկարողանանք ինչպես
համոզել, այնպես էլ բռնություն կիրառել, որպեսզի միշտ
հաղթենք և երբեք չպատժվենք: Բայց չէ՞ որ անհնար է թաքն-
վել աստվածներից կամ բռնանալ նրանց: Ուրեմն, եթե աստ-
վածները գոյություն չունեն, կամ նրանց չեն հուզում մարդ-
կանց գործերը, մենք էլ չպիտի մտածենք նրանցից թաքնվե- e
լու մասին: Իսկ եթե գոյություն ունեն և մարդկանց գործերը
հուզում են նրանց, մեր իմացածը և լսածը նրանց մասին
սահմանափակվում է բանաստեղծների պատմություններով և
նրանց կազմած տոհմաբանություններով: Հենց նրանք էլ
ասում են, թե աստվածներին կարելի է տարհամոզել զոհա-
բերություններով, աղոթքներով և ընծաներով: Արդ, մնում է
կա՛մ հավատալ նրանց երկու պնդումներին էլ, կա՛մ չհավա-
տալ առհասարակ: Եթե պետք է հավատալ, ուրեմն պետք է
անարդարություն գործել և աստվածներին զոհ մատուցել ան-
արդարությամբ ծեռք բերած բարիքներից: Չէ՞ որ մնալով ար- 366
դար՝ չենք պատժվի աստվածների կողմից, սակայն կզրկվենք
անարդարության բերած շահից: Անարդար լինելը շահեկան է,
իսկ մեր հանցանքների և սխալների համար կհամոզենք
աստվածներին և կփրկվենք պատիժներից: Բայց Հադեսում

մեզ կամ մեր զավակներին մեր գործած անարդարություն-
ների համար պատիժներ են սպասում: Սակայն, բարեկամս,
կշռադատող մարդը կասի, որ հենց այստեղ են խորհուրդնե-
րին հաղորդակից լինելու մեծ ուժն ու փրկիչ աստվածները,
b իսկ սա նշանակալի է ինչպես մեծ պետությունների, այնպես
էլ աստվածների զավակների համար, որոնք դարձել են բա-
նաստեղծներ ու աստվածային մարգարեներ և որոնք մեզ
վստահեցնում են, թե ամեն բան հենց այդպես է:

Ուրիշ ի՞նչ հիմունքով էիք ընտրելու արդարությունը մեծ
անարդարության փոխարեն: Եթե մեր անարդարությունը հա-
մադրված լինի կեղծ բարեպաշտության հետ, մենք խոհեմ
գործած կլինենք թե՛ աստվածների, թե՛ մարդկանց առաջ, ընդ
որում ինչպես կյանքի օրոք, այնպես էլ հետմահու: Սա են
պնդում շատ հեղինակավոր մարդիկ: Ասվածից հետո, Սոկրա-
c տես, ինչպե՞ս կարող է հոգեպես և մարմնապես օժտված, հա-
րուստ և ազնվատոհմ մարդը ցանկանալ հարգել արդարու-
թյունը և չծիծաղել՝ լսելով, թե ինչպես են այն գովաբանում:
Անգամ եթե որևէ մեկը կեղծ հռչակի մեր ասածը, բավականա-
չափ համոզված լինելով, որ լավագույնը արդարությունն է,
միևնույն է՝ կկարեկցի անարդարներին և չի բարկանա նրանց
վրա, հասկանալով, որ մարդը վրդովվում է անարդարությու-
նից լոկ այն դեպքում, երբ ունի աստվածային բնություն, և
խուսափում է դրանից, երբ ունի իմացություն: Մնացյալ դեպ-
քերում ոչ ոք կամովի չի հետևում արդարությանը և պարսա-
d վում է անարդարությունը վախի, ծերության կամ որևէ այլ
տկարության պատճառով, քանի որ չի կարող գործել այն:
Պարզ է, որ դա այդպես է: Չէ՞ որ այդպիսի մարդկանցից առա-
ջինը, ով գործելու հնարավորություն է ստանում, առաջինն էլ
ուժերի ներածին չափով անարդարություն է գործում: Այս
ամենի պատճառն այն է, ինչը սկիզբ դրեց մեր ողջ քննությա-
նը, այնպես որ, ինչպես և նա, ես նույնպես կասեմ քեզ. «Ո՜վ
e զարմանալի Սոկրատես, որքան էլ շատ լինեք դուք՝ արդարու-
թյուն գովաբանողներդ, ոչ ոք, սկսած առաջին հերոսներից,–

քանզի նրանց ասույթները պահպանվել են,– և վերջացրած մեր ժամանակակիցներով, երբևէ չի պարսավել անարդարությունը որևէ այլ բանի, քան դրանից բխող փառքի, պատվի և շնորհների համար: Իսկ ինքը արդարությունը կամ անարդարությունը, որոնք իրենց ողջ ներուժով մարդու հոգում են՝ աստվածներից և մարդկանցից թաքնված, ոչ ոք երբևէ բավարար չափով չի քննել ո՛չ բանաստեղծորեն, ո՛չ էլ արձակ: Ոչ ոք երբևէ չի ասել, թե անարդարությունը մեծագույն չարիք է, որ հոգին կարող է կրել իր մեջ, իսկ արդարությունը՝ մեծա- 367
գույն բարիք: Եթե բոլորդ ի սկզբանե սա ասեիք և երիտասարդ տարիքից համոզեիք մեզ, մենք չէինք արգելի միմյանց անարդարություն գործել, այլ յուրաքանչյուր ոք կլիներ ինքն իր պահապանը՝ վախենալով հանցակից լինել մեծագույն անարդարությանն ու չարիքին: Սոկրատես, սա այն է, ինչ կասեր Թրասիմաքոսը կամ մեկ ուրիշը: Գուցե նաև ավելին: Բայց այսպես խոսելով արդարության և անարդարության մասին, կարծում եմ, նա շատ կխեղաթյուրեր դրանց նշանակությունը:
Իսկ ես, քանի որ քեզնից թաքցնելու ոչինչ չունեմ, ցանկա- b
նում եմ լսել հակառակը, ահա ինչու այսպես ձգձգում եմ խոսքս: Իսկ դու քո խոսքում ցույց տուր մեզ ոչ միայն, որ արդարությունն անարդարությունից լավ է, այլ նաև այն, թե ինչ են արդարությունն ու անարդարությունը գործում մեր մեջ՝ չարի՞ք, թե՞ բարիք: Բայց խուսափիր կարծիքների քննությունից, ինչպես առաջարկեց Գլավկոնը: Չէ՞ որ եթե երկու դեպքում էլ ընտրես ճշմարիտ կարծիքները և դրանց գումարես կեղծերը, մենք կասենք, որ գովում ես ոչ թե արդարը, այլ դրա պատրանքը, և պարսավում ես ոչ թե անարդարությունը, c
այլ դրա մասին առկա կարծիքը: Այդկերպ խորհուրդ ես տալիս անարդարին թաքնվել և համաձայնում ես Թրասիմաքոսին, որ արդարությունը ուրիշի բարիքն է, որ ուժեղի օգուտն է, ում շահավետ և նպատակահարմար է սեփական անարդարությունը: Իսկ ահա թույլին արդարությունն անօգուտ է: Չէ՞ որ դու համաձայնեցիր, որ արդարությունը մեծագույն

բարիք է, որին արժե տիրանալ հանուն դրանից բխող հետևանքների, իսկ առավել շատ՝ հանուն հենց իրեն. այդպիսի բարիքներ են նաև տեսողությունը, լսողությունը, բանականությունը, առողջությունը և շատ ուրիշ բարիքներ, որոնք լավն են իրենց բնությամբ, և ոչ ըստ կարծիքի: Գովիր ար-
d դարությունն ինքնին, ասա, որ արդարին այն օգնում է, իսկ անարդարին՝ վնասում: Վարձատրությունն ու փառքը թող գովաբանեն ուրիշները: Նրանցից, երբ նրանք գովերգում են արդարությունը հանուն փառքի և պատիվների, կամ, ընդհակառակը, դրանց համար պարսավում են անարդարությունը, ես դա կարող եմ լսել, իսկ քեզնից՝ ոչ, եթե իհարկե ինքդ չպահանջես դա: Չէ՞ որ ամբողջ կյանքում քննել ես հենց այս
e հարցը և ուրիշ ոչինչ: Քո խոսքում ցույց տուր ոչ միայն, որ արդարությունն ավելի լավ է անարդարությունից, այլև թե ինչ ազդեցություն է թողնում դրանցից յուրաքանչյուրն իրենց դիմողի վրա, անկախ նրանից՝ թաքուն է դա աստվածներից և մարդկանցից, թե ոչ, բարի է, թե չար:

Լսելով սա՝ ես, որ միշտ հիանում էի Գլավկոնի և Ադիմանտոսի բնությամբ, առանձնահատուկ ուրախություն ապրեցի:
368 – Երևելի մարդու զավակնե՛ր, վատ չէր էլեգիայի սկիզբը, որով ձեզ դիմեց Գլավկոնի սիրահարն այն բանից հետո, երբ փառքով պսակվեցիք Մեգարայի ճակատամարտում, ասելով.

Արիստոնի որդինե՛ր, հրաշալի մարդու աստվածային սերունդ[14]*:*

Ինձ թվում է, լավ է ասված: Քանզի ձեզ աստվածային ինչոր բան է պատահել, եթե դուք չեք հավատում, որ անարդարությունն արդարությունից ավելի լավն է, և կարող եք այդպես խոսել դրա մասին: Ինձ թվում է, դուք իրականում այդպես չեք կարծում, քանզի դա է հուշում ձեր պահվածքը. իսկ ձեր խոսքերով ես չէի բավարարվի: Բայց որքան շատ եմ հա-
b վատում, այնքան ավելի վատ եմ պատկերացնում անելիքս: Չգիտեմ՝ ինչո՞վ օգնել ձեզ և, կարծում եմ, անզոր եմ: Դրա նշանն այն է, որ իմ փաստարկներն ընդդեմ Թրասիմաքոսի,

որոնք, ըստ իս, ցույց տվեցին, որ արդարությունն անարդարությունից ավելի լավ է, դուք չընդունեցիք: Մյուս կողմից՝ չեմ կարող չօգնել ձեզ, քանզի կարծում եմ, որ ազնիվ չէ, ներկա լինելով արդարության վատաբանմանը, նրան օգնության չհասնել, քանի դեռ շնչում ես և կարող ես խոսել: Լավագույնը c
ուժերը ներածին չափ այն պաշտպանելն է: Չէ՞ որ Գլավկոնը և մյուսները խնդրեցին ինձ ամեն կերպ օգնել և չդադարեցնել քննությունը, այլ պարզել, թե ինչ է արդարությունն ու անարդարությունը և թե դրանցից յուրաքանչյուրն ինչ օգուտ է բերում: Ես արդեն հայտնել եմ կարծիքս, որ մեր նախաձեռնած այս քննությունը աննշան բան չէ և, ինձ թվում է, խորաթափանց մարդու խնդիր է: Ըստ իս՝ մենք բավականաչափ հմուտ չենք այդպիսի քննություն կատարելու համար, քանզի d
դա նույնն է, ինչ թույլ տեսողություն ունեցողին մեծ տարածության վրա ստիպել կարդալ փոքր տառերը: Չէ՞ որ կարող են գլխի ընկնել, որ նույն այդ տառերը մեկ ուրիշ տեղ ավելի մեծ չափերի են: Կարծում եմ, Աստծո շնորհ կլիներ, եթե մենք նախ կարողանայինք կարդալ մեծը, իսկ այնուհետև քննել փոքրը, եթե իհարկե դրանք նույն բանն են:

– Անշուշտ,– ասաց Ադիմանտոսը,– բայց ի՞նչ նմանություն e
ես տեսնում այստեղ՝ արդարության քննության մեջ:

– Ասեմ: Մենք նշեցինք, որ արդարությունը հատուկ է մեկ առանձին մարդուն, բայց երբեմն նաև ամբողջ քաղաքին:

– Անշուշտ:

– Բայց չէ՞ որ քաղաքը մեկ մարդուց ավելի մեծ է:

– Մեծ է:

– Գուցե արդարությունն էլ մեծի մեջ ավելի մեծ է, և այն դյուրին է ուսումնասիրել այդտեղ: Եթե կուզեք, մենք նախ կքննենք, թե ինչ է արդարությունը պետություններում, իսկ
այնուհետև՝ առանձին մարդու մեջ, և առավել փոքրի մեջ կդի- 369
տարկենք առավել մեծի նմանությունը:

– Իմ կարծիքով,– պատասխանեց Ադիմանտոսը,– հրաշալի առաջարկ է:

– Եթե մենք դիտարկենք պետության առաջացումը, չե՞նք տեսնի արդյոք նաև արդարության և անարդարության առաջացումը նրանում:

– Թերևս:

– Ուրեմն հույս կա, որ այդժամ մեզ ավելի դյուրին կլինի տեսնել այն, ինչ փնտրում ենք:

– Իհարկե:

b – Ինձ թվում է, մենք պիտի փորձենք իրագործել դա, և ըստ ամենայնի դա հեշտ գործ չէ: Դե, որոշե՛ք:

– Որոշել ենք,– ասաց Ադիմանտոսը,– սկսի՛ր:

– Պետությունն, իմ կարծիքով, առաջացել է այն պատճառով, որ մեզնից յուրաքանչյուրն առանձին ինքնաբավ չէ և շատ ուրիշ բաների կարիք ունի: Իսկ քո կարծիքով պետությունն ուրի՞շ ծագում ունի:

– Բնավ:

c – Ուրեմն տարբեր կարիքները ստիպում են մեզ ձեռք մեկնել միմյանց, և քանի որ կարիքները շատ են, մարդիկ միավորվում են համատեղ բնակության և փոխադարձ օգնության համար: Այդպիսի համատեղ կեցությունը մենք կոչում ենք պետություն: Այդպես չէ՞:

– Իհարկե:

– Այդկերպ բարիքներ են փոխանակում, և ամեն ոք կարծում է, թե այդպես ավելի լավ է իր համար:

– Այո:

– Այդ դեպքում մտովի կառուցենք պետությունը սկզբից: Ինչպես երևում է, պետությունը ստեղծում են մեր կարիքները[15]:

– Ինչպե՞ս չէ:

d – Իսկ առաջին և ամենամեծ կարիքը սննդի հայթայթումն է գոյության և կյանքի համար:

– Իհարկե:

– Երկրորդ կարիքն է կացարանը, երրորդը՝ հագուստը, և այլն:

– Այդպես է:

– Տե՛ս,– ասացի ես,– ինչպե՞ս կարող է պետությունը տրամադրել այդ ամենը: Երևի այնպես, որ մեկը լինի հողագործ, մյուսը՝ շինարար, իսկ երրորդը՝ ջուլհակ: Չավելացնե՞նք նաև կոշկակարին և որևէ մեկին նրանցից, ովքեր հոգ են տանում մարմնավոր կարիքների մասին:

– Անշուշտ:

– Ուրեմն պետությունը պիտի կազմված լինի չորս կամ հինգ մարդուց:

– Երևում է, այո: e

– Եվ ի՞նչ: Նրանցից յուրաքանչյուրը պիտի կատարի իր աշխատանքը՝ հաշվի առնելով բոլորին: Այսպես օրինակ՝ հողագործը, լինելով միայնակ, պե՞տք է ցորեն նախատեսի չորս հոգու համար, չորս անգամ ավել ժամանակ ու քրտինք վատնի և կիսվի մյուսների հետ: Թե՞ առանց այդ ամենը հոգալու պիտի ստեղծի հացի չորրորդ մասը միայն իր համար, վատնի իր ժամանակի միայն չորրորդ մասը, իսկ մյուս երեք մասերը տրամադրի տան շինարարությանը, հագուստի և կոշիկների 370
պատրաստմանը և չկիսվի ուրիշների հետ, այլ ամեն բան ստեղծի ինքնուրույն և իր համար:

Ադիմանտոսը պատասխանեց.

– Սոկրատե՛ս, թերևս առաջին տարբերակը երկրորդից ավելի դյուրին է:

– Տարօրինակ ոչինչ չկա, Զևսը վկա, քանզի ես հասկացա՝ ինչ նկատի ունեիր սկզբում, ասելով, թե ամեն ոք կազմավորվում է մյուսներին ոչ նման եղանակով և բնությամբ լինելով b
նրանցից տարբեր՝ հակված է որոշակի մի արհեստի: Այդպես չէ՞:

– Այդպես է:

– Եվ ի՞նչ: Ո՞վ է լավ աշխատում՝ նա, որ տիրապետում է բազու՞մ արհեստների, թե՞ միայն մեկին:

– Միայն մեկին:

– Սակայն պարզ է նաև, որ եթե ոմն բաց է թողնում աշխա-

տանքի համար հարմար պահը, անհաջողության է մատնվում:

– Պարզ է:

– Կարծում եմ, աշխատանքը չի հանդուրժում արհեստավորի պարապուրդ, քանի որ նա պիտի հետևի իր աշխատանքին և չզբաղվի դրանով իմիջիայլոց:

– Իհարկե:

c – Ահա ինչու ամեն ինչ կարելի է ստեղծել ավելի շատ, ավելի կատարյալ և դյուրին, եթե աշխատանքը համեմատ է արհեստավորի ուժերին և կատարվում է ժամանակին:

– Միանգամայն ճիշտ է:

– Ուրեմն, Ադիմանտոս, պատրաստելու համար այն, ինչ մենք թվեցինք, կպահանջվի չորսից ավելի քաղաքացի: Հողագործը, եթե պետք ունի լավ արորի, ինքնուրույն չի պատրաստում այն: Նմանապես նաև քլունգի և մյուս հողագործական գործիքների դեպքում: Այդպես նաև շինարարը: Չէ՞ որ նրան

d էլ շատ բան է անհրաժեշտ: Այդպես նաև ջուլհակը և կոշկակարը:

– Ճշմարիտ է:

– Հյուսնը, դարբինը և ուրիշ վարպետները, միանալով մեր պետությանը, մարդաշատ կդարձնեն այն:

– Իհարկե:

– Բայց այն չի լինի շատ մեծ, անգամ եթե մենք հավելենք

e եզնարածներին, խաշնարածներին և մյուս հովիվներին, որպեսզի հողագործները եզներ ունենան հողը վարելու համար, շինարարներն ունենան լծկան կենդանիներ բեռները տեղափոխելու համար, իսկ ջուլհակներն ու կոշկակարները՝ կաշի և բուրդ:

– Այդ ամենն ունեցող պետությունը չի լինի փոքր:

– Բայց հիմնել պետություն այնպիսի տեղում, որտեղ չի պահանջվի ներկրում, գրեթե անհնար է:

– Այո, անհնար է:

– Բացի այդ, կպահանջվեն ուրիշ մարդիկ, որոնք ինչ-ինչ բաներ կներկրեն նաև ուրիշ պետությունից:

– Կպահանջվեն:

– Բայց այդպիսի միջնորդը կմեկնի դատարկածեռն, եթե
եկել է դատարկածեռն և անհրաժեշտ ոչինչ չի բերել: Այդպես 371
չէ՞:

– Ինձ թվում է, այդպես է:

– Անհրաժեշտ է ստեղծել ոչ միայն այն, ինչ կբավարարի տնեցիներին, այլև այն ամենը, ինչ պահանջվում է ուրիշներին և որքան որ պահանջվում է:

– Այո, անհրաժեշտ է:

– Մեր պետությանը պետք են ավելի շատ հողագործներ և տարբեր արհեստավորներ:

– Այո, ավելի շատ:

– Եվ ավելի շատ միջնորդներ՝ ներկրման և արտահանման համար: Իսկ դրանք առևտրականներն են, այդպես չէ՞:

– Այո:

– Ուրեմն մեզ կպահանջվեն նաև առևտրականներ:

– Իհարկե:

– Եվ եթե դա լինի ծովային առևտուր, կպահանջվեն նաև b
շատ ուրիշ մարդիկ, որոնք կիմանան այդ գործը:

– Այո, կպահանջվեն շատերը:

– Եվ ի՞նչ: Պետության մեջ ինչպե՞ս կարող են նրանք միմյանց փոխանցել իրենց ստեղծածը: Չէ՞ որ մենք հիմնեցինք պետությունը, որպեսզի տեղի ունենա հաղորդակցություն:

– Ակնհայտ է, որ նրանք կվաճառեն և կգնեն:

– Այստեղից մեզ մոտ կգոյանան շուկան և դրամը՝ որպես փոխանակման միջոց:

– Իհարկե:

– Եթե հողագործը կամ ուրիշ ինչ-որ վարպետ շուկա բերի c
իր ստեղծածը, բայց ոչ այն ժամին, երբ շուկա են եկել իր հետ փոխանակում կատարել ցանկացողները, մի՞թե նա պարապ կնստի շուկայում՝ աշխատելու փոխարեն:

– Բնավ, որովհետև դա տեսնողները կցանկանան լինել միջնորդներ: Բարգավաճ պետության մեջ դրանք մարմնով

բոլորից տկար և ուրիշ որևէ աշխատանքի ոչ պիտանի մարդիկ են: Նրանք սպասում են շուկայում և դրամով ինչ-որ բան են ծեռք բերում նրանցից, ովքեր ուզում են վաճառել դա, իսկ
d հետո փոխանակում են նրանց հետ, ովքեր պիտի ինչ-որ բան գնեն:

– Այդ կարիքը ստիպում է, որ մեր քաղաքում ի հայտ գան վաճառականներ: Այդպես կոչե՞նք առևտրի միջնորդներին, որոնք նստում են շուկաներում: Իսկ քաղաքից քաղաք շրջողներին կոչենք առևտրականներ:

– Իհարկե:

– Կան նաև այնպիսիք, որ, ինչպես կարծում են, ուրիշ միջ-
e նորդություն են իրագործում: Նրանց մտավոր ունակություններն այնպիսին են, որ նրանց հետ չարժե շփվել: Սակայն մարմնով նրանք բավականաչափ զորեղ են ծանր աշխատանք կատարելու համար: Նրանք վաճառում են իրենց ուժը և դրա դիմաց վարձավճար են վերցնում: Ահա ինչու, ըստ իս, նրանք կոչվում են վարձկաններ[16]: Այդպես չէ՞:

– Իհարկե այդպես է:

– Որպեսզի պետությունն ամբողջանա, ինչպես երևում է, հարկավոր են վարձկաններ:

– Կարծում եմ, այո:

– Արդ, ո՛վ Ադիմանտոս, աճե՞ց արդյոք մեր պետությունն այնքան, որ կատարյալ համարենք:

– Թերևս:

– Եվ որտե՞ղ են նրանում արդարությունն ու անարդարությունը: Մեր քննածներից ո՞ր մեկի մեջ են դրանք գոյանում:
372 – Չեմ հասկանում, Սոկրատես, ուրիշ որտեղ, եթե ոչ բոլոր այդ զբաղմունքների փոխադարձ կապի մեջ:

– Գուցե ճիշտ ես ասում: Պետք է քննել և չընկրկել: Նախ դիտարկենք նրանց ապրելակերպը, ովքեր այդպես են նախապատրաստված: Նրանք ստեղծում են հաց, գինի, հագուստ, կոշիկ, կառուցում են տներ, ամռանը հիմնականում աշխատում են մերկ և ոտաբոբիկ, իսկ ձմռանը՝ լավ հագնված և

ոտնածածկ: Սնվում են գարուց պատրաստված փոխինձով և
ցորենի ալյուրով: Ձավարը կեփեն, իսկ ալյուրից խմոր կհունեն, b
կթխեն հրաշալի բոքոններ և կշարեն եղեգնյա թերթերի
կամ տերևների վրա: Կընկողմանեն արմավենու ճյուղերով ու
մրտենու տերևներով հարդարված բարձերի վրա և խրախճանք կանեն՝ խմելով գինի, զարդարելով իրար պսակներով,
գովերգելով աստվածներին և հաճելի ժամանակ անցկացնելով միմյանց հետ: Զգուշանալով աղքատությունից և պատերազմներից՝ այնքան զավակ կունենան, որքան թույլ կտա c
իրենց կարողությունը:

Գլավկոնն ընդհատեց ինձ.

– Ինչպես երևում է, դու հյուրասիրում ես մարդկանց առանց ուտեստներ մատուցելու:

– Իրավացի ես: Մոռացա, որ անհրաժեշտ են նաև ուտեստները: Պարզ է, որ նրանց պետք կլինի աղ ու ձիթապտուղ, պանիր, սոխ ու կաղամբ, որպեսզի գյուղական ապուրներ պատրաստեն: Մենք կավելացնենք նաև ընդեղեն՝ ոլոռ, լոբի, նաև թուզ: Մրտենու պտուղներն ու հաճարենու ընկույզները նրանք կբովեն և վրայից չափավոր գինի կխմեն: Այդպես
նրանք կապրեն իրենց կյանքը խաղաղ ու առողջ, կհասնեն d
խոր ծերության և իրենց սերունդներին կպատգամեն նման կյանք:

– Սոկրատե՛ս, եթե քո կառուցած պետությունը խոզերի համար լիներ, դու, իհարկե, նրանց կմատուցեիր հենց այդ խորտիկները:

– Իսկ ուրիշ ի՞նչ, Գլավկո՛ն:

– Այն, ինչ անհրաժեշտ է համարվում զրկանքներից չտառապելու համար. ընկողմանել բարձերի վրա, ճաշել սեղանի
մոտ և ուտել այն ճաշատեսակներն ու խորտիկները, որ e
ունենք ներկայում:

– Լավ,– պատասխանեցի ես,– հասկանում եմ: Մենք դիտարկում ենք ոչ միայն պետության առաջացումը, այլև պետության բարգավաճումը: Գուցե դա վատ չէ: Չէ՞ որ դիտար-

կելու դեպքում կտեսնենք, թե ինչպես են պետություններում գոյանում արդարությունն ու անարդարությունը: Պետությունը, որը քննեցինք, ինձ թվում է ճշմարիտ, այսինքն՝ առողջ: Եթե կուզեք, ոչինչ չի խանգարում դիտարկելու նաև տենդա-
373 հար պետությունը: Կլինեն այնպիսիք, որոնց չի բավարարի ո՛չ այդ պետությունը, ո՛չ էլ նրա ապրելակերպը. նրանք պահանջում են մահիճներ, սեղաններ և ուրիշ կահավորանք, կերակուրներ, քսուքներ և անուշաբույր օծանելիք, հետերաներ, անուշեղեն, և այդ ամենը առատ: Ուրեմն բնավ չպիտի շատ համարվի այն, ինչ թվարկեցինք սկզբում՝ տունը, հագուստը և կոշիկները, այլ շատ պիտի համարել նկարները, զարդեղենը, ոսկին, փղոսկրը և նման շատ ուրիշ բաներ: Այդպես չէ՞:

b – Այո:

– Ուրեմն հարկավոր է մեծացնել պետությունը, քանզի նշածս առողջ պետությունն այլևս բավարար չէ և այն հարկ է լցնել այնպիսի բազմությամբ, որի անհրաժեշտությունը պետության մեջ չկա. օրինակ՝ որսորդներով, նմանակողներով[17], որ գործ ունեն պատկերների ու ներկերի հետ, և նրանցով, որ կապված են մուսայական արվեստների հետ, բանաստեղծներով և նրանց կատարողներով, հագներգուներով, դերասաններով, խորհրդատուներով, կապալառուներով, զանազան սպասքի և կանացի զարդեղենի արհեստավորներով: Կլինի
c նաև մեծ թվով միջնորդների կարիք: Մի՞թե չես կարծում, որ անհրաժեշտ կլինեն դաստիարակներ, ստնտուներ, ուսուցիչներ, վարսավիրներ, ինչպես նաև խոհարարներ: Հարկավոր կլինեն նաև խոզարածներ: Նախորդ պետության մեջ մենք դրանք չունեինք, քանզի չկար դրանց կարիքը: Սակայն այս պետության մեջ մենք զգում ենք այդ ամենի պահանջը, և մեզ դեռ պետք կլինեն այլևայլ անասուններ, քանի որ դրանք անհրաժեշտ կերակուր են: Այդպես չէ՞:

– Իհարկե:

d – Նման կենցաղի պարագայում բժիշկների կարիքը կլինի ավելի մեծ, քան նախորդ պետության դեպքում:

– Շատ մեծ:

– Նաև երկիրը, մեզ կերակրելու համար նախկինում լինելով բավականաչափ մեծ, այժմ կդառնա փոքր: Այդպես չէ՞:

– Այդպես է:

– Ուրեմն պիտի կտրենք մոտակա երկրի մի հատվածը, եթե ուզում ենք բավականաչափ վարելահողեր և արոտավայրեր ունենալ, և նույնը կանեն նաև մեր հարևանները, եթե ընկնեն չափ չճանաչող հարստահարման հետևից և անցնեն անհրաժեշտի սահմանը:

– Միանգամայն անխուսափելի է, ո՛վ Սոկրատես: e

– Ուրեմն պատերազմնե՞ր ենք մղելու, Գլավկոն: Ինչպե՞ս կվարվենք:

– Պատերազմելու ենք:

– Մենք չենք ասի, թե ինչ է բերում պատերազմը՝ չարիք կամ բարիք, այլ միայն այն, որ գտել ենք պատերազմի առաջացման պատճառը և որ սա, երբ պատահում է, պետությունների համար մասնավոր և հանրային չարիք է դառնում:

– Իհարկե:

– Բացի այդ, բարեկամս, մեր պետությանը պիտի ավելացնենք ոչ ավել, ոչ պակաս, քան մի ամբողջ զորաբանակ, որը կպաշտպանի ողջ ունեցվածքը, այն, որի մասին հիմա խոսում 374
էինք:

– Ինչու՞: Մի՞թե մենք դա ի վիճակի չենք անելու:

– Ոչ, եթե դու և մենք վերջնական համաձայնության եկանք, թե ինչպիսին պիտի լինի պետությունը: Մենք որոշեցինք, եթե հիշում ես, որ մի մարդը չի կարող լավ տիրապետել բազում արվեստների:

– Ճշմարիտ ես ասում:

– Եվ ինչ, մի՞թե ռազմական գործը չի պահանջում արվեստ:

– Այն էլ ինչպես: b

– Մի՞թե հարկ կլինի ավելի հոգ տանել կոշկակարության մասին, քան ռազմական գործի:

– Բնավ:

– Բայց որպեսզի կոշկակարությունը շահի, մենք արգելեցինք կոշկակարին զբաղվել հողագործությամբ, ջուլհակությամբ կամ շինարարությամբ և բոլոր մյուսներին նույնպես հանձնարարեցինք մեկ արհեստ, որի հանդեպ նրանք ունեն
c բնական հակում, որով կզբաղվեն ողջ կյանքում, որին կնվիրեն իրենց ողջ ժամանակը և կհասնեն հաջողության: Իսկ մի՞թե հարկավոր չէ ամենից լավ կատարել այն, ինչ վերաբերում է ռազմական արվեստին: Թե՞ դա այնքան դյուրին է, որ հողագործը, կոշկակարը կամ մեկ ուրիշ արհեստավոր կարող է միաժամանակ լինել նաև զինվոր: Լավ ճատրակ կամ զառ խաղալ ոչ ոք չի սովորի, եթե չի զբաղվել դրանով մանկուց, այլ խաղացել է առիթի դեպքում միայն: Վերցնելով վահանը,
d ուրիշ զենքեր և տարբեր ռազմական պիտույքներ՝ մի՞թե իսկույն կռվել կկարողանանք, ասենք, հոպլիտների կամ մեկ այլ մարտում: Ոչ մի գործիք երբեք չի դարձնի մարդուն վարպետ ու աթլետ և անօգուտ կլինի, քանի դեռ նա չգիտի վարվել դրա հետ և բավականաչափ չի վարժվել:

– Հակառակ պարագայում այդ զենքերն անգին կլինեին:

– Ուրեմն որքան ավելի կարևոր է պահապանների գործը, այնքան ավելի մեծ ջանք ու ժամանակ է պահանջում մյուս գործերի համեմատ, քանի որ այստեղ անհրաժեշտ է վարպետություն և մեծ նվիրում:

e – Կարծում եմ, այո:

– Դրա համար պահանջվում է բնական օժտվածություն:

– Ինչպե՞ս չէ:

– Եթե կարողանայինք անել դա, ապա մեր գործը հավանաբար կլիներ ընտրել նրանց, ովքեր իրենց բնական օժտվածությամբ հարմար են պետության պաշտպանության համար:

– Այո, կլիներ:

– Զնսը վկա, դժվար բան ընտրեցինք: Այդուհանդերձ ուժերը ներածին չափ պետք է չընկրկել:

– Իհարկե ոչ:

– Ինչ ես կարծում, պաշտպանության գործում կա՞ տարբերություն ազնվացեղ լակոտի և տոհմիկ երիտասարդի միջև: 375

– Ինչի՞ մասին ես խոսում:

– Երկուսն էլ պիտի ուշադիր լինեն և պիտի արագորեն հետապնդեն նրանց, որոնց կնկատեն, իսկ եթե հասնեն, կատաղի կռվեն նրանց դեմ:

– Այդ ամենն անհրաժեշտ է:

– Եվ լավ կռվելու համար արիություն է պետք:

– Ինչպե՞ս չէ:

– Իսկ կցանկանա՞ արի լինել նա, ով սրտոտ չէ՝ լինի ձի թե մեկ ուրիշ կենդանի: Մի՞թե չես տեսնում, որ սրտոտությունն անհաղթ է և անպարտելի, և եթե այն կա, յուրաքանչյուր ոք անվախ է և անզիջում ամեն ինչի հանդեպ: b

– Տեսնում եմ:

– Արդ, հասկանալի է, թե ինչպիսին պիտի լինեն պահապանի մարմնավոր հատկությունները:

– Այո:

– Նաև հոգևոր հատկությունները, այսինքն՝ սրտոտությունը:

– Նաև դա:

– Եվ ի՞նչ, Գլավկոն, եթե պահապաններն իրենց բնությամբ այդպիսին են, մի՞թե դաժան չեն լինի միմյանց և մյուս քաղաքացիների նկատմամբ:

– Զնսը վկա, հեշտ չէ պատասխանել:

– Նրանք պետք է լինեն հնազանդ սեփական քաղաքացիների և դաժան՝ թշնամիների նկատմամբ: Այլապես հարկ չի լինի սպասելու, որ ուրիշները կործանեն իրենց. նրանք իրենք կանեն դա և կկործանեն իրենք իրենց: c

– Ճշմարիտ է:

– Ուրեմն ինչպե՞ս վարվենք: Որտե՞ղ գտնենք միաժամանակ հեզ և արի բնավորություն: Չէ՞ որ հեզ բնավորությունը հակադիր է արի բնությանը:

– Ակնհայտ է:

– Իսկ եթե ոմն երկուսից ոչ մեկն էլ չունի, չի կարող դառ-

d նալ լավ պահապան: Դա, ինչպես երևում է, անկարելի է, նշանակում է՝ լավ պահապան դառնալ անհնար է:

– Թերևս,– ասաց Գլավկոնը:

Ես բարդ խնդրի առաջ էի և վերհիշում էի նախկինում ասվածը:

– Բարեկամս,– շարունակեցի ես,– մենք իրավամբ դժվարացանք, որովհետև շեղվեցինք նախապես ընտրված պատկերից:

– Ի՞նչ նկատի ունես:

– Մենք չանդրադարձանք, որ լինում են խառնվածքներ, որոնց մասին չմտածեցինք, մինչդեռ դրանք ունեն հակադիր հատկություններ:

– Որո՞նք են:

– Դա նկատվում է նաև ուրիշ կենդանիների մոտ, բայց ամենից շատ այն մեկի, որին մենք համեմատեցինք մեր պա-
e հապանի հետ: Չէ՞ որ դու գիտես ազնվացեղ շների մասին, որ նրանք բնույթով ավելի հնազանդ են նրան, ում սովոր են և ում գիտեն, իսկ անծանոթների հետ՝ ճիշտ հակառակը:

– Իհարկե գիտեմ:

– Ուրեմն պահապանի այդպիսին լինելու մեր պահանջը անբնական չէ:

– Երևի թե ոչ:

– Չե՞ս կարծում, որ ապագա պահապանն ունի նաև հետևյալ հատկության կարիքը. սրտոտ լինելուց բացի նա պիտի սիրի իմաստությունը:

– Ինչպե՞ս: Չեմ հասկանում:

376 – Այդ հատկությունն էլ կարող ես տեսնել շների մեջ, ինչը բավականին զարմանալի է կենդանու պարագայում:

– Ո՞ր հատկությունը:

– Տեսնելով անծանոթի՝ նա կատաղում է, թեպետ սա ոչ մի վատ բան չի արել: Իսկ ծանոթին դիմավորում է քնքշանքով, թեպետ սա երբեք ոչ մի լավ բան իրեն չի արել: Դա քեզ չի՞ զարմացրել:

– Բոլորովին դրան ուշադրություն չեմ դարձրել: Բայց իրոք այդպես է:

– Նրա բնության այդ հատկությունը հրաշալի է և իսկապես b
փիլիսոփայական:

– Ինչպե՞ս:

– Որովհետև շունը իր տեսած մարդուն բարեկամաբար կամ թշնամաբար է վերաբերվում, կախված նրանից՝ ճանաչում է նրան, թե ոչ: Մի՞թե այստեղ չկա ճանաչելու ցանկություն, եթե յուրայինը և օտարը որոշվում է ճանաչել-չճանաչելու հիմամբ:

– Իհարկե, այդպես է:

– Բայց չէ՞ որ ճանաչելու և փիլիսոփայելու հակումը նույնն է:

– Այո, նույնն է:

– Հետևաբար կարող ենք ընդունել նույնը նաև մարդու պարագայում: Եթե նա հեզ է յուրայինների և ծանոթների հետ, c
պիտի իր բնությամբ լինի փիլիսոփա և ուսումնատենչ:

– Ընդունենք:

– Նշանակում է՝ մեր պետության լավ և բարի պահապանը բնությամբ կլինի փիլիսոփա, ուսումնատենչ, արի, ճարպիկ և ուժեղ:

– Միանգամայն ճիշտ է:

– Ուրեմն թո՛ղ այդպիսին լինի: Բայց ինչպե՞ս աճեցնենք և դաստիարակենք նման պահապաններ: Արդյո՞ք այդ հարցի d
քննությունը կօգնի մեզ մեր բուն հետազոտության մեջ, և կտեսնե՞նք, թե ինչու են պետության մեջ առաջանում արդարությունն ու անարդարությունը: Չլինի այնպես, որ կորցնենք բուն թեման և միայն երկարացնենք մեր խոսքը:

Գլավկոնի եղբայրն ասաց.

– Կարծում եմ, որ այդ քննությունը օգտակար կլինի մեր հետազոտության համար:

– Զնսը վկա, սիրելի՛ Ադիմանտոս,– ասացի ես,– ուրեմն պետք է շարունակել քննությունը, անգամ եթե այն շատ երկար լինի:

– Այո, իհարկե:

e – Այդ դեպքում հետևենք պատմողներին, փորձենք չշտապել և քննելով դաստիարակենք այդ այրերին:

– Այո, հարկավոր է այդպես վարվել:

– Ինչպիսի՞ն կլինի այդ դաստիարակությունը: Դժվար թե գտնենք ավելի լավը նրանից, որն արդեն հնուց ի վեր գտնված է: Մարմնի համար դա մարմնամարզությունն է, իսկ հոգու համար՝ մուսայական արվեստը[18]:

– Այդպես է:

– Իսկ մուսայական արվեստները չե՞ն նախորդի մարմնամարզությանը:

– Ինչպե՞ս չէ:

– Խոսելով մուսայական դաստիարակության մասին՝ դու նկատի ունես նաև խոսքի՞ արվեստը, թե՞...

– Իհարկե:

– Բայց խոսքի արվեստը երկու տեսակ է՝ մեկը ճշմարիտ է, իսկ մյուսը՝ կեղծ:

– Այո:

377 – Եվ դաստիարակությունը երկուսի դեպքում էլ անհրաժեշտ է, բայց նախ՝ կեղծի՞ պարագայում:

– Չեմ հասկանում, ինչ նկատի ունես:

– Չե՞ս հասկանում, որ մանուկներին մենք նախ պատմում ենք առասպելներ: Դրանք սուտ են, որի մեջ կա նաև ճշմարտություն: Մանուկների դեպքում մենք դիմում ենք առասպելներին ավելի վաղ, քան մարմնամարզությանը:

– Այդպես է:

– Ահա ինչու ասացի, որ նախ պետք է զբաղվել մուսայական արվեստներով, իսկ հետո մարմնամարզությամբ:

– Ճիշտ է:

b – Մի՞թե չգիտես, որ ամեն գործում կարևորը սկիզբն է, հատկապես երբ հարցը վերաբերում է երիտասարդին և մատաղ սերնդին: Հենց այդ ժամանակ են ամենից շատ կազմավորվում և արմատավորվում այն գծերը, որոնք ուզում ենք ամրագրել:

– Իհարկե:

– Մի՞թե կարող ենք այդքան հեշտությամբ թույլ տալ, որ մանուկները լսեն և հոգով ընկալեն առաջին իսկ պատահած մարդու հորինած առաջին իսկ առասպելը, որը հակասում է այն կարծիքներին, որոնք, մեր համոզմամբ, պիտի նրանց հետ մնան, երբ նրանք հասակ առնեն:

– Ոչ, թույլ չենք տա:

– Նախ, ինչպես երևում է, մենք պիտի հետևենք առասպե- c
լաբաններին. եթե նրանց հորինած առասպելները լավն են, ընդունենք, իսկ վատերը՝ մերժենք: Մենք կհամոզենք դաստիարակներին ու մայրերին, որ զավակներին պատմեն սոսկ ճանաչված առասպելները և նախ առասպելներով կազմավորեն նրանց հոգիները, հետո միայն նրանց մարմինները՝ ձեռքերով: Իսկ առասպելների մեծ մասը, որ հիմա պատմում են, պետք է դեն նետել:

– Որո՞նք:

– Մեծ առասպելները կօգնեն մեզ քննելու նաև ան-
նշանները: Չէ՞ որ ինչպես մեծ, այնպես էլ աննշան առաս-
պելներն ունեն նույն գծերը և նույն ուժը: Այդպես չե՞ս կար- d
ծում:

– Իհարկե: Միայն թե չեմ հասկանում, թե ինչ մեծ առասպելներից ես խոսում:

– Նրանցից, որ մեզ պատմում են Հեսիոդոսը, Հոմերոսը և ուրիշ պոետներ: Մարդկանց համար կազմելով կեղծ առասպելներ՝ պատմեցին նրանց և հիմա էլ պատմում են[19]:

– Ի՞նչ առասպելներ: Եվ ինչու՞մ ես մեղադրում նրանց:

– Նրանում, ինչը մեղադրելի է առաջին հերթին, հատկապես եթե սուտն էլ անհաջող է:

– Այդ ինչպե՞ս:

– Երբ որևէ մեկը խոսելով աստվածների կամ հերոսների e
մասին վատ է պատկերում նրանց, դա նման է նրան, որ նկարիչը բոլորովին նման չի պատկերում նրանց, որոնց ցանկանում էր պատկերել:

– Այդպիսի մեղադրանքը ճիշտ է: Բայց ի՞նչ ենք ուզում դրանով ասել:

– Նախ մեծագույնի մասին մեծագույն սուտն ասել է նա, ով հայտարարել է, թե Ուրանոսը իսկապես գործել է այն, ինչի մասին խոսում է Հեսիոդոսը, և իբր Կրոնոսը վրեժխնդիր է
378 եղել նրանից[20]: Իսկ Կրոնոսի գործերի և որդուց կրած տառապանքի մասին, անգամ եթե դա ճշմարիտ լիներ, ես անհրաժեշտ չէի համարի հեշտությամբ պատմել անխոհեմներին և երիտասարդներին, այլ ավելի շուտ կնախընտրեի լռել այդ մասին: Եթե այդուհանդերձ պատմելու լինեմ, թող միայն քչերը լսեն դա՝ զոհաբերելով ոչ թե խոճկոր[21], այլ կատարելով մեծագույն ու դժվարին մի զոհաբերություն, որպեսզի միայն շատ քչերը կարողանան լսել այդ պատումը:

– Այո, այդպիսի պատմությունները բարդ են:

b – Մեր պետության մեջ, Ադիմանտոս, դրանք չարժե պատմել, և երիտասարդը չպիտի լսի, թե անարդարություն գործելով՝ արտակարգ ոչինչ չի անում, անգամ եթե ամեն կերպ պատժում է անարդարություն գործած սեփական հորը, և որ վարվում է, ինչպես առաջին մեծ աստվածները:

– Ձևսը վկա, ես նույնպես կարծում եմ, որ դրա մասին չարժե խոսել:

– Եվ ընդհանրապես այն մասին, թե ինչպես են աստվածները պատերազմում աստվածների դեմ, դավեր նյութում ու
c կռվում: Չէ՞ որ դա չէ ճշմարտությունը: Նրանք, ովքեր պիտի պաշտպանեն պետությունը, մեծ ամոթ պիտի համարեն այն, որ փոխադարձ ատելությունն այդքան հեշտ է գոյանում: Ամենևին հարկ չկա պատմելու և նկարագրելու գիգանտների պայքարը կամ աստվածների ու հերոսների գժտությունները հարազատների և մերձավորների հետ: Հակառակը, մենք ուզում ենք համոզել նրանց, որ քաղաքացիներից ոչ ոք երբևէ թշնամություն չի տածել մյուսի հանդեպ և որ դա ամբարշտություն կլիներ: Հենց այս մասին պետք է նախ պատմեն ծերու-
d նիներն ու պառավները մանուկներին, ու նաև հետո, երբ

նրանք հասակ կառնեն: Եվ բանաստեղծներին հարկ է ստիպել միշտ հենց դա երգել: Իսկ որ Հերային շղթայել է իր իսկ որդին՝ Հեփեստոսը[22], որին ցած է նետել հայրը, ցանկանալով պաշտպանել ծեծվող կնոջը, կամ աստվածների կռիվների պատմությունները[23], որոնք հաղորդում է Հոմերոսը,– դրանք մեր պետության մեջ պետք է արգելվեն, անկախ այն բանից՝ e
կա դրանց մեջ որոշակի դիտավորություն, թե ոչ: Երեխան անկարող է որոշել՝ կա այստեղ այլաբանություն, թե ոչ: Իսկ այդ տարիքում յուրացված կարծիքները սովորաբար դառնում են անջնջելի և անփոփոխ: Գուցե հենց այդ պատճառով պետք է անել այնպես, որ երեխաների լսած առաջին առասպելները լինեն գեղեցիկ պատմություններ առաքինության մասին:

– Դա ունի իր հիմնավորումը: Բայց եթե մեզ հարցնեն, թե ինչ առասպելներ են դրանք և ինչի մասին են, ի՞նչ պատասխանենք:

Եվ ես ասացի.

– Ո՛վ Ադիմանտոս, մենք հիմա ոչ թե բանաստեղծներ ենք, 379
այլ պետության հիմնադիրներ: Իսկ հիմնադիրները պետք է գիտենան առասպելների ընդհանուր բնույթը և թույլ չտան խեղաթյուրել դրանք, և ոչ թե առասպելներ հորինեն:

– Ճիշտ է: Իսկ ինչպիսի՞ն է այդ բնույթը աստվածներին վերաբերող պատմություններում:

– Ահա այսպիսին. աստված պիտի պատկերվի ինչպիսին որ կա՝ լինի էպիկական ասքում, մելոսում, թե ողբերգության մեջ:

– Այո, պիտի:

– Քանի որ աստված իրականում բարի է, այդպես էլ պետք b
է պատմել:

– Անշուշտ:

– Որովհետև ոչ մի բարիք վնասաբեր չէ: Այո՞:

– Ինձ թվում է, այո:

– Իսկ ոչ վնասաբերը վնասու՞մ է:

– Ոչ մի դեպքում:

– Իսկ չվնասողը գործու՞մ է չարիք:

– Ոչ:

– Բայց չէ՞ որ չարիք չգործողը չի կարող որևէ չարիքի պատճառ լինել:

– Ինչպե՞ս կարող է լինել:

– Ուրեմն ի՞նչ: Բարիքն օգտակա՞ր է:

– Այո:

– Եվ ճիշտ վարվեցողության պատճա՞ռ է:

– Այո:

c – Ուրեմն բարիքը ոչ թե բոլոր, այլ միայն բարի գործերի պատճառն է և չարիքի պատճառ չէ:

– Միանգամայն:

– Ուստի նաև աստված, քանի որ բարի է, չի կարող ամեն ինչի պատճառ լինել՝ հակառակ շատերի պնդման. նա պատճառ է միայն մարդկանց համար սակավ բաների, և ոչ՝ շատ, չէ՞ որ բարիքը մեզ մոտ անհամեմատ քիչ է չարիքից: Բարիքի պատճառ չի կարելի համարել ուրիշ մեկին, իսկ ահա չարիքների համար պետք է փնտրել այլ պատճառ, բայց ոչ աստծուն:

– Ճշմարիտ ես ասում:

d – Ուրեմն չի կարելի ընդունել Հոմերոսի կամ որևէ այլ բանաստեղծի մոլորություններն աստվածների մասին, երբ այդ Հոմերոսն, օրինակ, ասում է, որ

Երկու սափոր կա բախտաբաշխ Զևս արքայի շեմքին դրված,
Մեկը լցված բարիքներով, իսկ մյուսի մեջ՝ վիշտ ու չարիք,
Եվ ում Զևսը խառնելով տալիս է երկուսից էլ,
Նա կունենա կյանքում բերկրանք և փորձանքի ցավ ու վշտեր,
Իսկ նրան, ում տալիս է անխառն չարիքի սափորից,
Բերրի երկրում կհալածեն նրան անվերջ սով ու աղետ[24]:

e Նմանապես ճիշտ չէ, որ Զևսը

Բարիքների, բայց նաև չարիքների բաշխողն է[25]:

1915.info

Մենք չենք ողջունի նաև նրան, ով կասի, թե Աթենան և Զևսը դրդել են Պանդարոսին դրժել երդումը և խախտել դաշինքը[26]: Նույնը վերաբերում է աստվածների վեճին և գժտությանը, որը պետք չէ վերագրել Թեմիսին և Զևսին[27]: Պատանիներին թույլատրելի չէ լսել նաև այն, ինչ ասում էր Էսքիլոսը. 380

Աստված է դնում մահկանացուի մեջ պատճառը,
Երբ կամենում է ջնջել որևէ մեկի տունը[28]:

Եթե որևէ երկում պատահեն նման յամբական տողեր Նիոբեի, Պելոպյանների[29] կամ Տրոյական պատերազմի մասին, պետք է կա՛մ ընդհանրապես չընդունել, որ դրանք աստծո գործերն են, կա՛մ էլ, եթե աստծո գործերն են, գտնել իմաստը, որը հիմա փնտրում ենք, և ասել, որ աստված գործում է միայն արդարն ու բարին, իսկ նրանց, որոնց պատժում է, այդ- b
կերպ օգուտ է բերում: Չի կարելի ասել, ինչպես դա անում է բանաստեղծը, որ արժանի պատիժ կրելով՝ նրանք տառապում են և դրա պատճառն է աստված: Սակայն եթե ասեն, որ մարդիկ պատժի կարիք ունեն և որ տառապում են միայն հոռիները, որոնք արդար պատիժ են կրում և այդկերպ օգնություն ստանում աստծուց, դա պետք է ընդունել: Բայց երբ ասում են, թե աստված, լինելով բարի, որևէ մեկի համար դառնում է չարիքի պատճառ, դրա դեմ պետք է ամեն կերպ պայքարել, և ոչ ոք՝ ո՛չ պատանի, ո՛չ մեծահասակ, եթե իր պետության մեջ օրինականություն է տենչում, չպիտի խոսի և լսի c
այդ մասին, ո՛չ չափածո, ո՛չ արձակ, որովհետև այդպիսի պնդումն ամբարիշտ է, անօգուտ և անհետևողական:

– Ես քեզ հետ միասին քվեարկում եմ այդ օրենքի օգտին, այն ինձ դուր է գալիս:

– Դա կլիներ աստվածներին վերաբերող օրենքներից և պատվիրաններից մեկը, որից ելնելով և՛ արձակ, և՛ չափածո խոսքում հարկ է պնդել, որ աստված ոչ թե ամեն ինչի, այլ միայն բարիքի պատճառն է:

– Ասածդ միանգամայն բավարար է:

d – Իսկ երկրո՞րդ օրենքը: Կարծում ես, թե աստված կախա՞րդ է և դիտավորյալ հայտնվում է տարբեր կերպարանքներով, և կա՛մ հենց ինքն է փոխվում, ընդունելով տարբեր ձևեր, կա՛մ էլ մոլորության մեջ է գցում մեզ՝ ստիպելով մեր մասին տարբեր բաներ մտածել: Իսկ միգուցե աստված պա՞րզ ինչ-որ բան է և հազիվ թե դուրս գա իր ձևից:

– Չեմ կարող հիմա պատասխանել այդ հարցին:

– Իսկ սրա՞ն. եթե ինչ-որ բան լքում է իր ձևը, անհրաժեշտ չէ՞, որ կրի այդ փոփոխությունը ինքնաբերաբար կամ ուրիշ բանի ազդեցությամբ:

– Անհրաժեշտ է:

– Սակայն լավագույն դրության մեջ գտնվողը ամենից քիչ է փոխվում ուրիշ բանի ազդեցությամբ: Օրինակ՝ առողջ և
381 ուժեղ մարմինը չէ՞ արդյոք ամենից քիչ ենթարկվում սննդի, խմիչքի և աշխատանքի բերած փոփոխություններին, կամ ամեն բույս՝ արևի ջերմության, քամու և այլ ազդեցությունների:

– Իհարկե:

– Իսկ առավել քաջ և խոհեմ հոգին ամենից քիչ կանհանգստանա և կփոխվի արտաքին ազդեցություններից:

– Այո:

– Եվ ամեն բաղադրյալ իր՝ սպասք, շինություններ, հագուստ, եթե լավ է պատրաստված և լավ է պահվում, ժամանակի և այլ ազդեցությունների պատճառով ամենից քիչ է ենթարկվում փոփոխության:

– Այդպես է:

b – Ամեն բան, որ գեղեցիկ է իր բնությամբ կամ արվեստի շնորհիվ, կամ էլ և՛ բնությամբ, և՛ արվեստի, ամենից քիչ է փոխվում ուրիշի ազդեցությունից:

– Թերևս:

– Բայց չէ՞ որ աստված և աստվածային ամեն բան լավագույնն է:

– Անշուշտ:

– Հենց այդ պատճառով աստված պիտի ամենից քիչ ընդունի տարբեր ձևեր:

– Այո, ամենից քիչ:

– Միայն եթե ինքն է փոխում իրեն և այլակերպվում:

– Եթե, իհարկե, այլակերպվում է:

– Իսկ նա փոխվում է ավելի լավ և ավելի գեղեցի՞կ բանի, թե՞ ավելի վատ և այլանդակ:

– Իհարկե ավելի վատ բանի, եթե այլակերպվում է: Չէ՞ որ c
չենք ասի, թե աստված գեղեցկության և առաքինության պակաս ունի:

– Շատ ճիշտ ես ասում: Բայց եթե այդպես է, Ադիմանտոս, կարծու՞մ ես, թե ոմն՝ աստված թե մարդ, կամովին ինչ-որ առումով իրեն ավելի վատը կդարձնի:

– Դա անհնար է:

– Ուրեմն անհնար է նաև այն, որ աստված ցանկանա այլակերպվել. ակներևաբար, աստվածներից յուրաքանչյուրը, լինելով հնարավորինս գեղեցիկ և կատարյալ, մշտապես մնում է իր ձևի մեջ:

– Դա ըստ իս միանգամայն անհրաժեշտ է:

– Այդ դեպքում, սիրելիս, թո՛ղ բանաստեղծներից ոչ ոք d
չպատմի մեզ, թե

...աստվածները, օտարներին նմանվելով,
Այլափոխվում ու շրջում են քաղաքներում և գյուղերում[30],

և ոչ էլ ստեր մոգոնի Պրոտևսի ու Թետիսի[31] մասին ողբերգություններում և այլ երկերում և չպատկերի Հերային որպես մի քրմուհու, որ մուրացկանություն է անում

Արգոսցի Ինաքոսի կենսատու որդիների համար[32], e

և, ընդհանրապես, ուրիշ նման բաներով չխաբի մեզ: Եվ մայրերը նույնպես, հավատալով նրանց, չպիտի վախեցնեն որդի-

ներին, պատմելով չար հեքիաթներ՝ իբր որոշ աստվածներ շրջում են գիշերով տարբեր օտարականների տեսքով. դա կնշանակեր վատաբանել աստվածներին ու հետն էլ վախկոտ դարձնել երեխաներին:

– Ճիշտ է:

– Նշանակում է՝ աստվածները չեն փոփոխվում, բայց գուցե նրանք կարող են մեզ խաբել և կախարդանքով ներկայանալ տարբեր կերպարանքներո՞վ:

– Գուցե:

382 – Եվ ինչ, կուզի՞ աստված խաբել՝ խոսքով կամ գործով մեզ հրամցնելով որևէ պատրանք:

– Չգիտեմ:

– Չգիտես, որ իսկական սուտը, եթե այդպես կարելի է ասել, ատում են բոլոր աստվածները և բոլոր մարդի՞կ:

– Ի՞նչ նկատի ունես:

– Այն, որ իր համար կարևորագույնի մասին և կարևորագույն հարցերում ոչ ոք կամավոր չի ցանկանա ո՛չ խաբել, ո՛չ էլ խաբվել, այլ՝ ամեն ոք ամենից շատ հենց այստեղ է վախենում ստից:

– Ես դեռ չեմ հասկանում:

b – Որովհետև քեզ թվում է, թե երևելի ինչ-որ բան եմ ասում: Իսկ ես նկատի ունեմ, որ իրականության հարցում հոգով խաբվելը, խաբված մնալը, տգետ ու մոլորյալ լինելը անընդունելի է բոլորի համար. այստեղ սուտը շատ ատելի է:

– Այո, շատ:

– Ուրեմն այն, ինչի մասին հիմա խոսեցի, իրավացիորեն կարելի է սուտ կոչել. հոգու այսպիսի տգիտությունը հատուկ

c է մոլորյալներին: Իսկ բանավոր սուտը հոգու ներքին վիճակի վերարտադրումն է՝ ավելի ուշ գոյացող պատկերը, որն արդեն չի լինի անխառն սուտ: Այդպես չէ՞:

– Իհարկե:

– Իրականում սուտն ատելի է ոչ միայն աստվածներին, այլև մարդկանց:

– Ես էլ եմ այդպես կարծում:

– Իսկ բանավոր սուտը երբևէ լինու՞մ է օգտակար, և եթե այո՝ ե՞րբ: Գուցե չարժե՞ ասել այն: Գուցե օգտակա՞ր է թշնամիներին և այսպես կոչված բարեկամներին, եթե մոլեգնության կամ խելագարության մեջ նրանք պատրաստվում են ինչ-որ չարիք գործելու: Չի՞ լինի այդժամ սուտը նրանց զսպող օգտակար միջոց: Նաև այն առասպելներում, որոնց մասին քիչ առաջ խոսեցինք, չե՞նք դարձնում արդյոք սուտն օգտակար, երբ առավելագույնս նման ենք դարձնում ճշմարտությանը՝ անտեղյակ, թե իրականում ինչպես է եղել հնում: d

– Այո, իհարկե այդպես է:

– Նշվածներից ո՞ր առումով է սուտն օգտակար աստծուն: Գուցե չիմանալով հնում կատարվածի մասին, նա խաբում է նմանությա՞մբ:

– Դա զավեշտալի կլիներ:

– Այդ դեպքում աստված ստախոս բանաստեղծ չէ:

– Կարծում եմ, ոչ:

– Իսկ թշնամիների վախից կստե՞ր: e

– Բնավ:

– Իսկ իր հարազատների անմտությունից ու խելագարությունի՞ց:

– Ոչ մի անմիտ և խելագար սիրելի չէ աստծուն:

– Ուրեմն չկա ոչինչ, որի համար նա կստեր:

– Չկա:

– Եվ դեմոնային ու աստվածային ամեն բան զերծ է ստից:

– Լիովին:

– Այդ դեպքում աստված, իհարկե, պարզ և ճշմարիտ է ինչպես խոսքով, այնպես էլ գործով, և ո՛չ ինքն է փոխակերպվում, ո՛չ էլ խաբում է ուրիշներին՝ ո՛չ առերևույթ, ո՛չ խոսքով, ո՛չ նշաններ առաքելով, ո՛չ էլ երազում:

– Քո խոսքից հետո ինձ էլ այդպես է թվում: 383

– Ուրեմն համաձայն ես, որ ինչպես տեսականորեն, այնպես էլ գործնականում աստվածների վերաբերյալ կունենանք

այդ երկրորդ օրինակը, այսինքն՝ որ աստվածները կախարդներ չեն, որպեսզի փոխակերպվեն և իրենց խոսքով ու գործով խաբեն մեզ:

– Համաձայն եմ:

– Արդ, Հոմերոսի մոտ գովելի շատ բան գտնելով, մենք այդուհանդերձ չենք փառաբանի այն երազը, որ Ագամեմնոնին հղեց Զևսը[33]: Չենք դրվատի նաև էսքիլոսի այն դրվագը,
b երբ Թետիսն ասում է, թե Ապոլլոնն իր հարսանիքին այսպես է երգել.

Ազատ է հիվանդությունից և տառապանքից նրանց կյանքը երկար,
Քո բախտը սիրելի է աստվածներին,–
Այդպես երգեց ինձ ողջունելով:
Իսկ ես հույս ունեի, որ անկեղծ են Ֆեբոսի աստվածային շուրթերը
Գուշակության նրա արվեստի մեջ:
Քանզի նա այդպես երգեց խնջույքի ժամանակ, որին ներկա էր.
Ինքը գուշակեց և ինքը սպանեց
Իմ զավակին[34]:

c Երբ ոմն այսպիսի բան կասի աստվածների մասին, կշարժի մեր զայրույթը, և մենք նրան չենք տա երգչախումբ ու թույլ չենք տա ուսուցիչներին պատանիներին խրատելիս օգտվել այդպիսի տողերից, քանի որ պահապանները մեզ մոտ պետք է լինեն աստվածավախ և աստվածային, որքան որ թույլ է տալիս մարդկային բնությունը:

– Լիովին համաձայն եմ այդ խրատներին, մենք պետք է օգտագործենք դրանք որպես օրենքներ:

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

– Ինչ վերաբերում է աստվածներին,– ասացի ես,– ըստ 386
երևույթին, այս ամենը մանկուց պիտի լսեն և կամ էլ չլսեն
նրանք, ովքեր պետք է պատվեն աստվածներին և իրենց
ծնողներին ու չեն թերագնահատի բարեկամությունը մարդ-
կանց միջև:

– Ես կարծում եմ,– ասաց Ադիմանտոսը,– սա ճիշտ տե-
սակետ է:

– Եվ ի՞նչ: Եթե նրանք ցանկանում են արի լինել, մի՞թե
չարժե ասել նրանց այս ամենի մասին, ինչը թույլ կտա նրանց
դույզն իսկ չվախենալ մահից: Թե՞ կարծում ես, ոմն կարող է b
արի դառնալ իր մեջ կրելով այսպիսի վախ:

– Զնսը վկա, ըստ իս, ոչ:

– Ուրեմն ի՞նչ: Նա, ով կարծում է, թե Հադեսը գոյություն
ունի և սարսափելի է, մի՞թե չի վախենա մահից և մարտում
չի նախընտրի մահը պարտությունից ու ստրկությունից:

– Իհարկե կվախենա:

– Ինչպես երևում է, մենք պետք է հոգ տանենք նաև այդ-
պիսի առասպելների մասին և նրանցից, ովքեր պատրաստ-
վում են պատմել դրանք, պահանջենք, որ չպարսավեն Հա-
դեսում եղածը, այլ ավելի շատ փառաբանեն, չէ՞ որ հակառակը c
չէր լինի ճշմարիտ և ոչ էլ օգտակար ապագա մարտիկներին:

– Այո, պետք է հոգ տանենք նաև դրա մասին:

– Ուրեմն մենք, սկսելով առաջին տողից, պիտի ջնջենք
բոլոր հետևյալ դրվագները.

Ավելի շուտ կցանկանայի լինել աղքատ մի գյուղացի կամ մի վարձկան
Եվ ծառայել, հանց չքավոր, խեղճ մարդու մոտ, որի ապրուստն է աղքատիկ
Բայց դու պատմիր և լուր տուր ինձ որդուս մասին վսեմագույն ու փառաշուք[1],

և

b Եվ բաց չանի՞ անմահների և մարդկանց դեմ կացարաններն
Իր մութ, ահեղ, որոնց տեսքից սարսափում են աստվածներն իսկ[2],

կամ

Ո՞հ, աստվածնե՞ր, մի՞թե և անդ,– սանդարամետ տանն Հադեսի,–
Կա կերպարանք, մարդու հոգի, սակայն միայն առանց սրտի[3],

և

Պերսեփոնեն միայն նրա՛ն մահից հետո թողեց ուժը գիտակցության,
Իսկ մյուսների հոգիները սուրում են ու շրջում այնտեղ որպես ստվեր[4],

և

Եվ բաժանվեց հոգին մարմնից՝ թռավ, իջավ տունն Հադեսի,
Ողբալով իր բախտի վրա, կյանքն ու կորովը թողնելով[5],

և

387 Սակայն հոգին, զիլ շչելով, ինչպես մի ծուխ, չքվեց, մտավ
Խորքը երկրի[6],

և

Հանց երամը չղջիկների քարանձավի խորքերի մեջ սրբազնաբույր,
Սերտ իրար հետ և խմբովի, աջ ու ձախ են այնտեղ սուրում,
Երբ ինչ-որ բան հանկարծակի պոկվի ժայռից և ընկնի ցած,
Այդպես նրանք ճղրտացին ու սլացան[7]:

Մենք կխնդրենք Հոմերոսին և մյուս բանաստեղծներին, որ b
չբարկանան մեզ վրա բոլոր այս և նման տողերը ջնջելու համար, ընդ որում ոչ այն պատճառով, որ բանաստեղծական չեն և տհաճ են շատերի ականջին, այլ հենց որովհետև շատ բանաստեղծական են, և այդուհանդերձ դրանք չարժե լսել ինչպես փոքրերին, այնպես էլ մեծերին, եթե մարդը պիտի ազատ լինի և մահից շատ վախենա ստրկությունից:

– Միանգամայն:

– Արդ, պետք է դեն նետել սրա հետ կապված բոլոր ահասարսուռ ու զարհուրելի անունները՝ Կոկիտոս, Ստիքս, հանգուցյալներ, մահացածներ և այլն, որոնք ունկնդիրներին c
սարսափ են ազդում[8]: Գուցե սա անհրաժեշտ է մեկ ուրիշ նպատակի պարագայում: Բայց մենք վախենում ենք մեր պահապանների համար, որ չլինի, թե նրանք այդ սարսափներից չափից շատ դյուրագրգիռ ու տպավորվող դառնան:

– Եվ ճիշտ ենք անում, որ վախենում ենք:

– Ուրեմն սրանք պետք է բացառել:

– Այո:

– Եվ պետք է առաջադրել առասպելների և բանաստեղծության հակառակ օրինակ:

– Ակնհայտ է:

– Ուրեմն մենք կբացառենք մեծահամբավ այրերի ողբն ու d
աղաղակը:

– Ըստ արդեն ասվածի՝ դա անհրաժեշտ է:

– Տե՛ս, ճի՞շտ ենք անում բացառելով դրանք, թե՞ ոչ: Մենք ասում ենք, որ արժանի այրը սարսափելի ինչ-որ բան չի համարում մեկ ուրիշ, նույնպես արժանի մարդու մահը, անգամ եթե դա լիներ իր ընկերը:

– Այո, ասում ենք:

– Ուրեմն նա չի ողբա, ինչպես եթե իր ընկերոջը պատուհասած լիներ սարսափելի մի բան:

– Իհարկե ոչ:

– Բայց մենք նաև ասում ենք, որ այդպիսի մարդը առավե-

լագույնս ինքնաբավ ու առաքինի է կյանքում և բոլորից տարբերվում է նրանով, որ չունի ուրիշ որևէ մեկի կարիքը:

e – Ճշմարիտ է:

– Ուրեմն նա բոլորովին չի վախենում զրկվել որդուց կամ եղբորից, հարստությունից կամ ուրիշ նման բաներից:

– Բոլորովին:

– Ուրեմն նա բոլորովին չի ողբա և ամենայն հնազանդությամբ կտանի իրեն պատահած դժբախտությունը:

– Իհարկե:

– Եվ մենք շատ ճիշտ կվարվեինք, բացառելով մեծանուն
388 հերոսների արցունքները և թողնելով դրանք կանանց, և այն էլ անլուրջ կանանց, ու մեկ էլ թույլ տղամարդկանց, որպեսզի դա անարժան համարեն նրանք, որոնց մենք դաստիարակում ենք երկրի պաշտպանության համար:

– Ճիշտ է:

– Եվ մենք նորից կխնդրենք Հոմերոսին և մյուս բանաստեղծներին չասել Աքիլլեսի՝ դիցուհու որդու մասին, իբր նա

Պառկում է մեջքի վրա, մերթ էլ շուռ է գալիս կողքին
Եվ կամ ընկնում բերանքսիվայր: Վերջը՝ մահճից նա դուրս թռավ
Եվ ծովափին շրջեց մենակ:

Կխնդրենք չստիպել ծեռքն առնելով մոխիրը՝ լցնել գլխին,
b լալ ու ողբալ, ինչպես ասում է Հոմերոսը: Եվ Պրիամոսը, հայտնվելով աստվածների կողքին, չպիտի թավալ գա ցեխի մեջ և հետո դիմի «յուրաքանչյուրին հականե և հանվանե»[9]: Պիտի խնդրենք Հոմերոսին չստիպել աստվածներին ողբալ և ասել.

Ավաղ, եղու՜կ ինձ, դժբախտի՛ս, հզոր քաջին ծնող մորը[10]:

c Եթե առհասարակ չի կարելի այդպես պատկերել մեծ աստվածներին, ապա ինչ հանդգնություն է պատկերել աստվածներից մեծագույնին այնպես, որ նա նման չլինի ինքն իրեն և ասի.

Ո՜հ, տեսնում եմ ես աչքով շատ սիրելի մեծ հերոսին
Պարիսպի շուրջն հալածվելիս,– և իմ սիրտն է խիստ
մորմոքում[11],

կամ

Ավա՜ղ, ահա մարդկանց միջև ամենից շատ ինձ սիրելի
Սարպեդոնին վիճակված է զարկվել ծեռքով Մենիտյանի[12]:

Եթե մեր պատանիները, ո՛վ Ադիմանտոս, լրջորեն լսեն այս d
ամենը և չծիծաղեն դրա վրա որպես անարժան մի բանի,
ապա ոմն, լինելով մարդ, երբեք անարժան չի համարի և չի
մեղադրի ինքն իրեն, եթե մտքով անցնի նման մի բան ասել
կամ գործել, այլ առանց որևէ ամոթի և ամեն աննշան առիթով
կողբա և սուգ կանի:

– Շատ ճիշտ ես ասում: e

– Բայց դա, ինչպես հենց նոր ցույց տվեց մեր քննությունը, պիտի տեղի չունենա, եթե, իհարկե, մեզ չտարհամոզեն ուրիշ, ավելի լավ փաստարկներով:

– Այդպես է:

– Բայց մեր պատանիները չպիտի լինեն նաև չափից ավելի ծիծաղասեր: Ուժեղ ծիծաղը գրեթե միշտ փոխվում է բոլորովին ուրիշ տրամադրության:

– Ինձ էլ է այդպես թվում:

– Ուրեմն չի կարելի ընդունել, որ պատկերեն, թե ինչպես 389
է ծիծաղը մարդկանց հախից գալիս, առավել ևս՝ աստվածների:

– Այո, առավել ևս աստվածների:

– Հետևաբար չենք ընդունի նաև աստվածների մասին Հոմերոսի հետևյալ հաղորդումը.

Երջանկափառ աստվածների դասում հնչեց ծիծաղն անվերջ,
Երբ որ նրանք տեսան այնտեղ իրարանցումն Հեփեստոսի[13]:

Դու պնդում ես, որ սա չպիտի՞ ընդունենք:

b – Այո, եթե համամիտ ես ինձ, պետք չէ ընդունել:

– Չէ՞ որ ամենից բարձր պետք է դասել ճշմարտությունը: Եթե ճիշտ ասացինք քիչ առաջ, որ սուտն աստվածների համար անօգուտ է, իսկ մարդկանց օգտակար է որպես դեղամիջոց, պարզ է, որ այն պետք է տրամադրել բժիշկներին, իսկ անտեղյակները չպիտի դիպչեն դրան:

– Պարզ է:

– Պետության իշխանավորները պետք է դիմեն խաբեությունների՝ օգտագործելով դրանք ինչպես թշնամիների դեմ,
c այնպես էլ ի շահ համաքաղաքացիների և պետության, իսկ բոլոր մյուսները պիտի ձեռք քաշեն ստից: Եթե առանձին մարդը ստի իշխանավորներին, մենք կհամարենք դա ավելի մեծ մեղք, քան երբ հիվանդը ստում է բժշկին կամ երբ մարմնամարզիկը ճիշտ չի ներկայացնում իր մարմնի վիճակը մարզչին, կամ երբ նավաստին չի ասում նավավարին, թե ինչ է իրականում կատարվում իր և մյուս նավաստիների հետ:

– Շատ ճիշտ է:

– Արդ, եթե իշխանավորը տեսնում է, որ պետության մեջ
d արհեստավորներից մեկը՝ նա, ով պատկանում է

մարդկանց միշտ օգտակար,
Գուշակներին, բժիշկ մարդկանց, նավակառույց և քաջընտիր
վարպետներին...[14]

ստում է, կպատժի նրան այն բանի համար, որ սա պետություն է ներմուծում կործանարար մի վարվելակերպ, որը շրջում է պետությունը, ինչպես նավը:

– Եթե իհարկե խոսքին հետևում է գործը:

– Լավ, իսկ խոհեմություն մեր պատանիներին պետք չէ՞:

– Ինչպե՞ս չէ:

– Իսկ խոհեմությունն առավելապես այն չէ՞ արդյոք, որ հպատակվեն տիրակալներին, իսկ իրենք լինեն այն հաճույք-
e ների տիրակալները, որ մեզ պարգևում են խմիչքն ու ուտեստները:

– Ես էլ եմ այդպես կարծում:

– Ինձ թվում է, մենք կհաստատենք, որ Հոմերոսի Դիոմեդեսը լավ է ասում.

Լռի՛ր, ընկե՛ր, տեղդ նստիր և խոսքերն իմ լսիր միայն[15]:

– Գեղեցիկ է:

– Իսկ սա՞.

Իսկ բոցաշունչ աքայացիք անցնում էին լուռ և մնջիկ,
Իրենց սրտում լոկ մի փափագ՝ միշտ զորավիգ լինել միմյանց[16]:

Բոլոր նման խոսքերը շատ գեղեցիկ են:

– Շատ գեղեցիկ:

– Իսկ սա՞.

Ո՜հ, դու շնակն ու գինեմոլ, եղջերուի սիրտ ունեցող[17]:

Մի՞թե սա և հաջորդ տողերը գեղեցիկ են, և լա՞վ է արդյոք,
եթե հասարակ մարդկանցից մեկը խոսքով կամ գործով այդ- 390
պիսի անլուրջ վերաբերմունք ցուցաբերի իշխանավորների հանդեպ:

– Լավ չէ:

– Կարծում եմ, նման բաներ լսելով պատանիները չեն դառնա առավել ողջախոհ: Իսկ որ դրանք կարող են ուրիշ հաճույք պարգևել, բնավ զարմանալի չէ: Քեզ այդպես չի՞ թվում:

– Այդպես է թվում:

– Եվ ինչ, պե՞տք է ուրեմն պատկերել ամենաիմաստուն այրին, որի կարծիքով ամենահրաշալին այն է, երբ

...սեղանն է նրանց առաջ ծանրաբեռնված
Մսեղենով և քաղցր հացով, իսկ մատրռվակն համեղ գինին պերճ գավաթից
Հանում է լի և պտղտվում ամենուրեք, որ բաժակներն հապճեպ լցնի[18]: b

Կարծում ես, սա լսելով՝ պատանին առավել ինքնատիրապետո՞ղ է դառնում: Կամ հետևյալը.

Մինչդեռ սովից մահանալը թշվառագույնն է ամենից[19]:

Կամ լսելով, թե ինչպես Զևսը, որն արթուն էր, երբ մյուս բոլոր աստվածներն ու մարդիկ քնած էին, տարփանքից մո-
c ռացավ իր բոլոր մտադրությունները և, տեսնելով Հերային, այնքան բորբոքվեց, որ չուզեց ննջարան մտնել, այլ ցանկացավ միանալ նրա հետ հենց գետնին՝ ասելով, որ իրեն պաշարել է այնպիսի մի կիրք, որպիսին չէր ունեցել նույնիսկ իրենց առաջին հանդիպման ժամանակ,

...երբ սիրելի
Ծնողներից ծածուկ մտան անկողինը ամուսնության[20]:

Թող չլսեն նաև Արեսի և Ափրոդիտեի մասին, որոնց նույն պատճառով շղթայել էր Հեփեստոսը:

– Զևսը վկա, այս ամենն ինձ օգտակար չի թվում:

– Սակայն տոկունության օրինակները, որոնք ամեն ին-
d չում ցուցաբերել են նշանավոր այրերը և որոնց մասին պատմում են, հարկ է տեսնել:

Եվ ծեծելով նա իր կուրծքը՝ այս խոսքերն էր ասում սրտին.
«Սի՛րտ իմ, տոկա՛, դու ավելի մեծ դառնության ես
տոկացել...»[21]:

– Իհարկե:

– Մենք չպիտի թույլ տանք մեր այրերին լինել կաշառակեր կամ ընչասեր:

e – Ոչ մի դեպքում:

– Նրանք չպիտի լսեն, որ

Ընծաները համոզում են ինչպես աստվածներին, այնպես էլ
մեծ թագավորներին[22]:

Ոչ էլ պիտի լսեն Աքիլլեսի դաստիարակ Փյունիկին հասցեագրված գովեստները, որն իբրև թե ճիշտ խորհուրդ է տվել Աքիլլեսին՝ ընդունել ընծաները և պաշտպանել աքայացիներին, իսկ ընծաներ չստանալու դեպքում շարունակել մնալ ցասման մեջ[23]: Չենք ընդունի նաև այն, ինչը վայել չէ Աքիլլեսին, իբր նա այնքան ընչասեր էր, որ Ագամեմնոնից ընծաներ ընդունեց[24], կամ փրկագին վերցնելով՝ վերադարձրեց դիակը և այլ կերպ գործել չէր ցանկանում[25]: 391

– Նման գործերն արժանի չեն գովեստի:

– Քանի որ դա Հոմերոսն է, վարանում եմ ասել, թե ամբարշտություն է այդպես խոսել Աքիլլեսի մասին և հավատալ, երբ դա ասում են ուրիշները և դեռ ավելացնում, թե Աքիլլեսը այսպես է դիմել Ապոլլոնին.

Խաբեցիր ինձ, ո՞վ հեռաձիգ, ժանտագու՛յնդ աստվածներից,

. . . . . .

Քեզնից վրեժն իմ կառնեի, թե որ ձեռքիս մի ճար լիներ[26]:

Նաև գետին, որ աստված է, Աքիլլեսը չանսաց և հանդգնեց կռվել նրա դեմ[27]: Իսկ մեկ ուրիշ գետի՝ Սպերքեոսին, որին զոհաբերել էր իր գանգուրները, Աքիլլեսն ասաց. b

Գանգուրներն իմ կտամ հերոս Պատրոկլեսին,– թող նա՛ տանի[28]:

Բայց Պատրոկլեսն արդեն մեռած էր: Չի կարելի հավատալ, թե Աքիլլեսն այդպիսի բան է գործել: Որ քարշ է տվել Հեկտորի դին Պատրոկլեսի գերեզմանի շուրջը[29], որ սրախողխող է արել գերիներին և հրո ճարակ դարձրել[30],– բոլոր այս պատմությունները ճշմարիտ չեն, և մենք թույլ չենք տա մեր c
պատանիներին հավատալ, թե Աքիլլեսը՝ դիցուհու և Պելևսի[31]՝ խոհեմագույն մարդու որդին և Զևսի թոռը, որին դաստիարակել էր իմաստուն Քիրոնը[32], այնքան լցված լիներ ցասումով, որ իր մեջ կրեր միմյանց հակադիր երկու հիվանդություն՝

ստորություն ու ընչաքաղցություն և, բացի այդ, անարգանք աստվածների ու մարդկանց նկատմամբ:

– Ճիշտ ես ասում:

– Մենք ոչ մի դեպքում չենք հավատա պատմություններին, իբր Թեսևսը՝ Պոսեյդոնի որդին, և Պիրիթոոսը՝ Զևսի որ-
d դին, դիմել են սարսափելի կողոպուտի[33] և կամ էլ՝ որ աստծո որդիներից կամ հերոսներից մեկը համարձակվում է գործել սարսափելի և սրբապիղծ բաներ, որոնք հիմա վերագրում են նրանց: Մենք կստիպենք բանաստեղծներին հաստատել, որ կա՛մ այդ գործերը կատարել են ուրիշները, կա՛մ էլ, եթե նրանք են կատարել, ապա աստվածների որդիներ չեն: Բայց ասել, թե աստվածների որդիներ են և գործել են այդ արարքները, թույլ չենք տա: Թույլ չենք տա նաև համոզել պատանիներին, իբր աստվածներն են ծնում չարիքը և իբր հերոսները
e մարդկանցից ավելի լավը չեն: Ինչպես արդեն ասացինք, դա ազնիվ և ճշմարիտ չէ, քանզի ապացուցեցինք, որ նման բաները չեն կարող սկիզբ առնել աստվածներից:

– Իհարկե:

– Անգամ դրա մասին լսելն է վնասակար: Ամեն ոք, լինելով հոռի, ներողամիտ կլինի ինքն իր հանդեպ՝ հավատալով, որ նման արարքներ գործում են և կգործեն

...նրանք, որ ազգակից են
Աստվածներին և մոտ են հայր Զևսին,
Ում բագինը դրված է Իդեյան լեռներում,
Նրանք, ում մեջ չի մարում աստվածային արյունը[34]:

Ահա ինչու մենք պիտի դադարենք պատմել այդ առասպել-
392 ները, որպեսզի դրանք չծնեն մեր պատանիների մեջ արատավոր հակումներ:

– Անշուշտ:

– Խոսքի ուրիշ ի՞նչ տեսակ մնաց սահմանելու համար այն, ինչի մասին պետք է խոսել և ինչի մասին պետք չէ

խոսել: Այն, ինչ պետք էր ասել աստվածների, դեմոնների, հերոսների և Հադեսի վերաբերյալ, արդեն ասվեց:

– Իհարկե:

– Մնաց, որ խոսենք մարդկանց մասին:

– Պարզ է:

– Սակայն, բարեկա՛մս, հիմա մենք չենք կարող առաջադրել դա:

– Ինչու՞:

– Որովհետև ինձ թվում է, մենք պիտի ասենք, որ բանաստեղծներն ու արձակագիրները հիմնականում վատ են խոսում մարդկանց մասին՝ ասելով, որ անարդար մարդկանցից շատերը երջանիկ են, իսկ արդարները՝ դժբախտ, և իբր նպա- b
տակահարմար է գործել անարդար, եթե դա մնա գաղտնի, և որ անարդարությունը բարիք է ուրիշի համար, իսկ քեզ համար՝ պատիժ: Նման պնդումները մենք կարգելենք, իսկ ահա դրանց հակառակը կկարգադրենք գովերգել և պատմել առասպելների տեսքով: Համամիտ չե՞ս:

– Համոզված եմ դրանում:

– Արդ, եթե համաձայն ես, որ իրավացի եմ, ուրեմն համաձայն ես նաև մեր նախկի՞ն խորհրդածությանը:

– Ճիշտ ես ենթադրում:

– Որ մարդկանց մասին չպիտի այդպես խոսեն, մենք կըն- c
դունենք այն ժամանակ, երբ պարզենք, թե ինչ է արդարությունը և ինչ բնական օգուտ կա դրանից արդարի համար, անկախ այն բանից՝ արդար են նրան համարում, թե ոչ:

– Շատ ճիշտ է:

– Ուրեմն ավարտենք առասպելների քննությունը, քանի որ հիմա հարկ է դիտարկել բուն խոսքը, և մենք դիտարկած կլինենք այն ամենը, ինչի՛ մասին պետք է խոսել և ինչպե՛ս պետք է խոսել:

Ադիմանտոսն ասաց.

– Չեմ հասկանում՝ ինչ նկատի ունես:

– Բայց պետք է հասկանաս: Գուցե ավելի շուտ հասկանաս

d հետևյալ կերպ. այն ամենը, ինչի մասին պատմում են առաս-
պելաբաններն ու բանաստեղծները, վերաբերում է անցյալին,
ներկային և ապագայի՞ն:

– Ինչպե՞ս չէ:

– Եվ դա անում են կա՛մ պարզ պատումի, կա՛մ նմանակ-
ման, կա՛մ էլ երկուսի միջոցով միաժամանա՞կ:

– Ես պիտի փորձեմ ավելի լավ հասկանալ դա:

– Ինչպես երևում է, զավեշտալի և անշնորհք ուսուցիչ եմ:
e Խոսել չիմացողների նման կվերցնեմ ոչ թե ամբողջը, այլ
մասը և դրա միջոցով կփորձեմ բացատրել մտքինս: Ասա ինձ,
քեզ ծանո՞թ է «Իլիականի» սկիզբը, որտեղ բանաստեղծը
պատմում է, թե ինչպես Քրիսեսը խնդրում է Ագամեմնոնին
ազատ արձակել իր դստերը, իսկ սա բարկանում, է, և ինչպես
393 Քրիսեսը, անհաջողության մատնվելով, խնդրում է աստծուն
պատժել աքայացիներին[35]:

– Այո:

– Դու գիտե՞ս, որ ասելով՝

Թախանձագին խնդրում էր նա աքայացոց և մանավանդ
Աթրևսի որդոցն երկու՝ զորագլուխ հերոսներին[36],

խոսում է ինքը բանաստեղծը և չի փորձում շեղել մեր միտքը,
իբրև թե ինքը չէ, որ խոսում է, այլ ուրիշը: Այնուհետև նա խո-
b սում է այնպես, ինչպես եթե ինքն է Քրիսեսը և առավելա-
գույնս փորձում է ստիպել մեզ կարծելու, թե դա խոսում է ոչ
թե Հոմերոսը, այլ ծեր քուրմը[37]: Եվ մնացյալ ամեն բան Հոմե-
րոսը հենց այսպես է պատմում՝ լինի Իլիոնի, Իթակեի, թե ընդ-
հանրապես «Ոդիսականում» պատմվող բոլոր դեպքերը:

– Իհարկե:

– Հետևաբար նաև այն ժամանակ, երբ շարադրում է
ուրիշների խոսքը և երբ ինքն է միջամտում, դա նույնպե՞ս
պատում է:

– Ինչպե՞ս չէ:

– Բայց երբ խոսում է ուրիշի անունից, չե՞նք ասում, որ c
իր խոսքը նման է դարձնում նրա խոսքին, ում մասին ասել է,
թե սա պատրաստվում է խոսել:

– Ասում ենք:

– Իսկ մեկ ուրիշին նմանվելը՝ ձայնով, արտաքինով, մի՞թե
չի նշանակում նմանակել նրան, ում նմանվում ես:

– Եվ ի՞նչ:

– Այդ դեպքում, ինչպես երևում է, և՛ Հոմերոսը, և՛ մյուս
բանաստեղծները պատմում են նմանակելով:

– Իհարկե:

– Եթե բանաստեղծը ոչ մի տեղ չթաքնվեր, նրա ողջ ստեղ-
ծագործությունն ու պատումը զուրկ կլինեին նմանակումից:
Իսկ որպեսզի չասես, թե չես հասկանում, կասեմ՝ ինչպես է դա d
պատահում: Եթե ասելով, որ եկել է Քրիսեսը, բերել է դստեր
փրկանքը և թախանձում է աքայացիներին, հատկապես ար-
քաներին, Հոմերոսն այնուհետև չվերածվեր Քրիսեսի, այլ
մնար Հոմերոս, հասկանում ես, որ դա չէր լինի նմանակում,
այլ՝ մի պարզ պատում: Եվ կլիներ այսպիսին (ես կասեմ ար-
ձակ, քանի որ բանաստեղծ չեմ). «Գալով՝ քուրմն աղոթեց
աստվածներին, որպեսզի աքայացիները, գրավելով Տրոյան, e
իրենք ողջ մնան և ազատ արձակեն իր դստերը: Երբ ասաց
դա, մյուսները մեծարեցին նրան և տվեցին իրենց համաձայ-
նությունը, սակայն Ագամեմնոնը խիստ զայրացավ և հրամա-
յեց հեռանալ ու երբեք չգալ նորից, հակառակ դեպքում նրան
չի փրկի ո՛չ գավազանը, ո՛չ էլ աստծո պսակը: Իսկ աղջկա
մասին ասաց, որ ազատ չի արձակի, մինչև որ նա չպառավի
իր մոտ Արգոսում: Ագամեմնոնը հրամայեց քրմին հեռանալ և
չզայրացնել իրեն, եթե ուզում է տուն դառնալ ողջանդամ:
Լսելով սա՝ ծերն ահաբեկվեց և անխոս հեռացավ, իսկ դուրս 394
գալով ճամբարից աղերս ուղղեց Ապոլլոնին՝ կանչելով աստ-
ծուն նրա բոլոր անուններով և հիշեցնելով երբեմնի բերած
իր ընծաները, այն, որ տաճար է զարդարել և զոհեր մատու-
ցել: Փոխարենը աղերսեց, որ Ապոլլոնը նետերով վրեժը լուծի

b իր արցունքի»: Ահա ինչպիսին է, բարեկամս, պարզ պատումը, որ զերծ է նմանակումից:

– Հասկանում եմ:

– Այժմ տեսնում ես, որ կարող է լինել նաև սրան հակառակը, եթե հանենք այն, ինչ բանաստեղծն ասում է ուրիշների խոսքի միջև, և թողնենք միայն ուղիղ խոսքը:

– Դա էլ հասկանում եմ. այդպես է ողբերգություններում:

– Շատ ճիշտ ես ըմբռնել, և կարծում եմ՝ քեզ արդեն պարզ է այն, ինչը չկարողացա բացատրել սկզբում, որ պոեզիայի և
c դիցաբանության մի տեսակն ամբողջությամբ նմանակող է: Այդպիսին են, ինչպես նշեցիր, ողբերգությունն ու կատակերգությունը: Մյուս տեսակը հենց բանաստեղծի հորինվածքներն են, որոնք կգտնես դիթիրամբներում: Իսկ էպիկական պոեզիայում և շատ ուրիշ տեղերում երկուսն էլ առկա են, եթե, իհարկե, հասկանում ես ինձ:

– Հասկանում եմ, թե ինչ էիր ուզում ասել:

– Հիշիր նաև, թե ինչ էինք ասում դրանից առաջ: Պոեզիայում ասվողի մասին խոսեցինք, իսկ ահա, թե ինչպես է ասվում՝ դեռ պիտի քննենք:

– Հիշում եմ:

d – Հենց դրա մասին ասացի, որ մեզ պետք է համաձայնության գալ հետևյալի շուրջ. ընդունե՞նք նմանակումը բանաստեղծական պատումներում, թե՞ մի մասի դեպքում ընդունենք, իսկ մյուսի դեպքում՝ ոչ, և ո՞ր պատումներում: Կամ գուցե բացառե՞նք նմանակումը:

– Կռահում եմ, թե ինչ նկատի ունես: Մտածում ես՝ ընդունե՞նք մեր պետության մեջ ողբերգությունն ու կատակերգությունը, թե՞ ոչ:

– Թերևս,– ասացի ես,– բայց գուցե ոչ միայն դա: Դեռ չգիտեմ: Կգնանք այնտեղ, ուր կտանի խոսքը, որ նման է քամու:

– Լավ ասացիր:

e – Արդ, Ադիմանտոս, պարզենք՝ պե՞տք է արդյոք մեր պահապանները լինեն նմանակողներ, թե՞ ոչ: Թե՞ դա բխում է

նախորդ պնդումից, ըստ որի ամեն ոք կարող է լավ զբաղվել միայն մեկ գործով, բայց ոչ շատերով: Եթե նա ուզում է զբաղվել շատ գործերով, բոլորի մեջ էլ ծախողվում է և ոչնչով աչքի չի ընկնում:

– Այդպես էլ պիտի լինի:

– Մի՞թե նմանակմանը վերաբերող փաստարկն էլ այդպիսին չէ: Մեկը չի կարող նմանակել շատ բաներ այնպես, ինչպես եթե դրանք լինեին մեկը: 395

– Ոչ:

– Դժվար թե ոմն զբաղվի հիշարժան որևէ բանով, եթե դիմում է նմանակման և դառնում նմանակող: Քանզի նաև այն ժամանակ, երբ նմանակման երկու ձևերը մոտ են իրար, դա, միևնույն է, չի հաջողվում նույն մարդուն, օրինակ՝ նրան, ով գրում է և՛ կատակերգություններ, և՛ ողբերգություններ[38]: Կարծեմ երկուսն էլ կոչեցիր նմանակումներ:

– Այո, և դու ճշմարիտ ես ասում, որ նույն մարդը չի կարող անել երկուսն էլ:

– Եվ հագներգուները չեն կարող միաժամանակ լինել նաև դերասաններ:

– Ճշմարիտ է:

– Եվ նույն դերասանը չի կարող խաղալ կատակերգություն և ողբերգություն, չնայած որ երկուսն էլ նմանակումներ b
են: Այդպես չէ՞:

– Այո, նմանակումներ են:

– Ադիմանտոս, ինձ թվում է, որ մարդու բնությունը բաղկացած է այնքան փոքր մասնիկներից, որ անհնար է նմանակել նմանակման ենթակա առարկան:

– Շատ ճիշտ է:

– Ուրեմն, եթե պահպանենք մեր առաջին դատողությունը, պահապանները պիտի մի կողմ դնեն բոլոր մյուս արհեստները և ամենաբծախնդիր կերպով զբաղվեն միայն պետու- c
թյան ազատության պահպանմամբ՝ առանց տրվելու որևէ ուրիշ զբաղմունքի: Նրանք ուրիշ որևէ բանով զբաղվելու կամ

որևէ բան նմանակելու կարիք չունեն: Իսկ եթե նմանակեն, ապա լոկ նրան, ինչին մանկուց պիտի նմանակեն արի, խոհեմ, բարեպաշտ և ազատ մարդիկ: Իսկ անազատ մարդուն հատուկ գծերը, որոնք ամոթալի են, նրանք չպիտի փոխառեն, չպիտի նմանակեն դրանք (և չեն էլ կարող նմանակել), որպեսզի նմանակումը իսկապես այդպիսին չդարձնի նրանց:
d Չե՞ս նկատել, որ նմանակումը, եթե դրանով զբաղվում են մանկուց, դառնում է բնավորություն և բնություն՝ փոխելով արտաքինը, ձայնը և մտածողությունը:

– Նկատել եմ, ինչպե՞ս չէ:

– Մենք թույլ չենք տա, որ նրանք, որոնց մասին հոգ ենք տանում և որոնք պիտի լինեն լավ մարդիկ, նմանակեն կնոջը, թեպետ տղամարդ են, անկախ այն բանից՝ երիտասարդ կին է, թե ծեր, վիճում է արդյոք իր ամուսնու հետ, թե աստվածների,
e մեծամտաբար իրեն երջանիկ կարծելով, կամ էլ, հակառակը, տխուր է և արտասվալից երգեր է երգում սիրային կամ այլ ցավի մասին:

– Իհարկե:

– Չի կարելի նմանակել նաև ստրուկներին ու ստրկուհիներին և գործել ստրկաբար:

– Այո:

– Ինչպես երևում է, չի կարելի նմանակել նաև հոռի մարդկանց, քանի որ նրանք վախկոտ են և դեմ են այն ամենին, ինչի մասին խոսեցինք. հայհոյում են, ծաղրում, վատաբանում, ինչպես հարբած, այնպես էլ սթափ վիճակում և առհա-
396 սարակ վիրավորում են միմյանց և՛ իրենց խոսքում, և՛ գործում: Պահապաններն իրենց խոսքով ու գործով չպիտի նմանակեն նաև խելագարներին: Պետք է ճանաչել խելագար և հոռի մարդկանց, լինեն կին, թե տղամարդ, և ոչնչով չնմանակել նրանց ու չկրկնել նրանց արարքները:

b – Շատ ճիշտ է:

– Իսկ պե՞տք է նմանակեն դարբիններին, ուրիշ արհեստավորներին, տրիերների թիավարներին ու նրանց պետերին և

առհասարակ նրանց, ովքեր զբաղված են այդպիսի բաներով:

– Ինչպես թե: Նրանց արգելված է դա անել:

– Իսկ պե՞տք է նմանակեն ձիերի խրխնջոցը, ցուլերի բառաչը, գետերի աղմուկը, ծովի շառաչը, ամպրոպը և մյուս նման բաները:

– Բայց նրանց արգելված է մոլեգնել և նմանակել խելագարներին:

– Եթե քեզ ճիշտ եմ հասկանում, գոյություն ունի խոսքի և
պատումի այնպիսի տեսակ, որից կարող է օգտվել միայն շատ c
առաքինի մարդը, երբ նա անհրաժեշտություն է զգում ինչ-որ բան ասելու: Կա նաև ուրիշ մի տեսակ, որը նման չէ սրան և որից կարող է իր պատումի ընթացքում օգտվել հակառակ բնական հատկությունների և դաստիարակության տեր մարդը:

– Որո՞նք են այդ տեսակները:

– Ինձ թվում է, որ ժուժկալ մարդը, երբ իր պատմության մեջ հասնում է առաքինի մարդու որևէ խոսքի կամ արարքի, ցանկանում է այնպես հաղորդել դա, ինչպես եթե ինքը լիներ այդ մարդը: Այդպիսի նմանակումը ամոթալի չէ, հատկապես երբ նմանակում են վստահելի և խոհեմ արարքները: Սակայն նմանակումը շատ վատ և թույլ է, երբ նմանակում են սիրա-
ռատությամբ, հարբեցողությամբ կամ մեկ ուրիշ բանով տա- d
ռապող մեկին: Իսկ երբ պատմողը հանդիպում է իրեն ոչ արժանի մեկին, չի ուզում իսկապես նմանվել իրենից ավելի վատին, գուցե միայն շատ կարճ, եթե այդ հոռի մարդը օգտակար ինչ-որ բան է անում: Բայց նրա համար ամոթալի է նմանակել այդպիսի մարդկանց, քանի որ այդ հարցում նա անվարժ է և ստիպված է հրաժարվել ինքն իրենից ու մտնել իրենից ավելի հոռիների կերպարի մեջ, որոնց իր մտակեցվածքի պատճառով չի կարող վերաբերվել լուրջ, այլ՝ միայն հեգնաբար:

– Թերևս: e

– Ուրեմն իր պատումի մեջ նա կօգտվի դիտողություններից, որոնք մենք ցույց տվեցինք Հոմերոսի պոեմների օրինակի վրա: Նրա խոսքը կներառի երկու տեսակն էլ, այսինքն՝ ն՛

նմանակումը, և՛ պարզ պատումը, ընդ որում նմանակման չափը ողջ խոսքի մեջ կլինի աննշան: Թե՞ անհեթեթություն եմ ասում:

– Իհարկե, հիշյալ հռետորը կօգտվի այդպիսի տեսակներից:

397 – Ուրեմն նա, ով այդպիսին չէ և ավելի վատն է, շատ ավելի կդիմի նմանակման և ոչնչից չի խորշի, ամեն բան կփորձի և կնմանակի շատերի ներկայությամբ և, ինչպես ասացինք, այդ թվում՝ ամպրոպը, քամու և կարկուտի շառաչը, անիվների և առանցքների ճռնչյունը, շեփորների, ֆլեյտաների, սրինգների, բոլոր գործիքների և անգամ շների, ոչխարների և

b թռչունների ձայները: Նրա ողջ պատումը կլինի ձայների և արտաքինի նմանակում, իսկ բուն հաղորդածը կլինի աննշան:

– Անհրաժեշտաբար:

– Ահա սրանք են խոսքի նշածս երկու տեսակները:

– Այդպես է:

– Դրանցից մեկն ունի միայն աննշան շեղումներ, և եթե դրան հաջորդեն ներդաշնակությունն ու ռիթմը, ապա լավ խոսողները կասեն գրեթե նույնը և շատ ներդաշնակ, քանի որ շեղումներն այստեղ աննշան են: Ռիթմի հարցում իրավիճակը գրեթե նույնն է:

c – Իրոք այդպես է:

– Իսկ ինչպիսի՞ն է մյուս տեսակը: Մի՞թե այն չի պահանջում հենց հակառակը, այսինքն՝ ուրիշ ներդաշնակություն, ուրիշ ռիթմ, քանի որ ձգտում է ավելի ազդեցիկ լինել և կարող է ընդունել ամենատարբեր ձևերը:

– Հենց այդպիսին է:

– Բայց մի՞թե բոլոր բանաստեղծներն ու պատմողները գործ ունեն պատումի այս կամ մյուս տեսակի կամ էլ դրանց համադրության հետ:

– Անհրաժեշտաբար:

– Ուրեմն ինչպե՞ս վարվենք: Ընդունե՞նք մեր պետության

d մեջ բոլոր այդ տեսակները, թե՞ անխառն մեկը: Կամ գուցե որևէ խա՞ռը տեսակ:

– Ըստ իս՝ կարող էր հաղթել անխառն տեսակը, որով բանաստեղծը նմանակում է պարկեշտ մարդուն:

– Սակայն, ո՛վ Ադիմանտոս, հաճելի է նաև խառը տեսակը. մանուկներին և նրանց դաստիարակներին ամենից հաճելի է քո նախընտրածի հակառակը: Այդպես է նաև ամբոխի մեծամասնության համար:

– Այո, հաճելի է:

– Բայց գուցե դու կասես, որ այդ տեսակը չի պատշաճում մեր պետական կառույցին, որովհետև մարդը մեզ մոտ չի կա- e
րող լինել երկակի և ոչ էլ բազմակի, քանի որ ամեն մարդ մեկ բան է անում:

– Այո, չի պատշաճում:

– Ահա ինչու միայն մեր պետության մեջ կտեսնենք, որ կոշկակարը կոշկակար է, և ոչ նաև նավավար, որ հողագործը հողագործ է, և ոչ նաև դատավոր, իսկ զինվորը զինվոր է, և ոչ նաև գործարար, և այդպես շարունակ:

– Ճիշտ է:

– Իսկ եթե նա, ով կարող է փոխակերպվել և նմանակել 398
ամեն բան, գա մեր պետություն՝ ցանկանալով ցույց տալ մեզ իր գործերը, մենք կխոնարհվենք նրա առջև որպես սրբազան, զարմանալի և հաճելի մի բանի, սակայն կասենք, որ այդպիսի մարդ մեր պետության մեջ չկա և արգելված է այդպիսին դառնալ: Նրան կարտաքսենք ուրիշ պետություն՝ օծելով նրա գլուխը մյուռոնով և պսակելով բրդյա կապով, իսկ ինքներս կբավարարվենք առավել օգտավետ, թեկուզ և ավելի խիստ և պա-
կաս հաճելի բանաստեղծով ու առասպելաբանով, որը մեզ b
մոտ կնմանակեր պարկեշտ մարդուն և որի պատմությունները կհետևեին սկզբից նեթ հաստատված տիպարներին, նրանց, որոնցով որոշեցինք դաստիարակել մեր զինվորներին:

– Մենք, իհարկե, այդպես կվարվեինք, եթե դա կախված լիներ մեզնից:

– Այժմ, բարեկամս, մենք կարծես թե ամբողջությամբ քննեցինք մուսայական արվեստի այն մասը, որը վերաբե-

ռում է պատումներին և առասպելներին: Տեսանք, թե ինչ պետք է խոսել և ինչպես պետք է խոսել:

– Ինձ էլ այդպես է թվում:

c – Ուրեմն, մեզ մնում է դիտարկել երգերի և մելոսի տեսակները:

– Պարզ է:

– Թե ինչպիսին պիտի լինեն դրանք և ինչ պիտի ասենք դրանց մասին, յուրաքանչյուր ոք կկարողանա դուրս բերել նախապես ասվածից, եթե, իհարկե, մենք հետամուտ լինենք մեր իսկ առաջադրած սկզբունքներին:

Գլավկոնը ժպտաց:

– Ես, ո՛վ Սոկրատես, իհարկե քո նշած յուրաքանչյուրը չեմ, որովհետև բավականաչափ լավ չեմ հասկանում, թե ինչ պիտի ասենք: Միայն կռահում եմ:

– Ամեն դեպքում,– պատասխանեցի ես,– դու հանգիստ կարող ես պնդել, որ մելոսը բաղկացած է երեք տարրերից՝ բառերից, ներդաշնակությունից և ռիթմից:

d – Այո, կարող եմ:

– Քանի որ մելոսում կան բառեր, այն ոչնչով չի տարբերվում չերգվող խոսքից, և պիտի համապատասխանի այն տիպերին, որոնց մասին հենց նոր խոսեցինք:

– Ճիշտ է:

– Եվ բառերը պիտի զուգակցված լինեն ներդաշնակությամբ ու ռիթմով:

– Ինչպե՞ս չէ:

– Բայց մենք ասացինք, որ պատումը չպիտի բովանդակի ողբ և սուգ:

– Այո:

– Բայց որո՞նք են ուրեմն ողբասացության ձայնակարգե-

e րը: Ասա՛, չէ՞ որ դու երաժիշտ ես:

– Խառը լիդիական եղանակը, խիստ լիդիական եղանակը և ուրիշ այդպիսիք:

– Ուրեմն դրանք հարկավոր է բացառել. դրանք հարիր չեն

անգամ կանանց, եթե վերջիններս պետք է պարկեշտ լինեն, էլ ուր մնաց թե տղամարդկանց:

– Իհարկե:

– Պահապաններին բոլորովին վայել չեն հարբեցողությունը, քնքշակեցությունը և պարապուրդը:

– Անշուշտ:

– Իսկ ո՞ր ծայնակարգերն են նպաստում հարբեցողությանն ու պարապուրդին:

– Հոնիականն ու լիդիականը, որոնք կոչվում են թուլացնող:

– Բարեկա՛մս, կարո՞ղ են արդյոք դրանցից օգտվել ռազմի 399
մարդիկ:

– Բնավ: Բայց դու չհիշատակեցիր դորիականն ու փռյուգիականը:

– Ձայնակարգերից գլուխ չեմ հանում, բայց դու թող ինձ այն մեկը, որը հաջողությամբ նմանակում է ռազմական գործողություններին մասնակից քաջարի այրի ձայնն ու երգը, նրա, ով ստիպված է փորձություններ հաղթահարել, երբ վիրավոր է ու մահվան է գնում կամ երբ նրան մեկ ուրիշ
դժբախտություն է պատուհասում: Բոլոր այդ իրավիճակնե- b
րում նա, ասես շարք կանգնած, քաջաբար դիմագրավում է իր ճակատագիրը: Թող նաև ուրիշ մի ձայնակարգ նրա համար, ով խաղաղ ժամանակ զբաղվում է ոչ թե հարկադիր, այլ կամավոր գործով, երբ աղաչանքներով ու աղոթքներով համոզում է աստծուն կամ խրատներով ու խորհուրդներով՝ մարդուն, երբ խնդրում է կամ ինքն է խրատներ լսում ու վարվում խոհեմաբար, չի մեծամտանում, այլ գործում է ողջամտորեն
և զուսպ, հաշվի առնելով հետևանքները: Այս երկու ձայնա- c
կարգերը՝ «հարկադիրն» ու «կամավորը», որոնք հրաշալիորեն նմանակում են դժբախտ, երջանիկ, խոհեմ և քաջարի մարդկանց ձայները, թող ինձ:

– Բայց դու ինձ խնդրում ես թողնել հենց այն, ինչի մասին այժմ խոսում էի:

– Արդ, երգեցողության և մելոսի մեջ կարիք չկա ո՛չ բազմաձայնության, ո՛չ էլ բոլոր ձայնակարգերի համադրության:

– Ինձ թվում է՝ ոչ:

d – Ուրեմն մենք չենք պատրաստի վարպետներ, որոնք ստեղծում են տրիգոններ, պեկտիսներ[39] և շատ ուրիշ բազմալար և բազմաստեղն նվագարաններ:

– Երևում է՝ ոչ:

– Իսկ ֆլեյտագործ վարպետներին և ֆլեյտահարներին կընդունե՞նք մեր պետություն: Մի՞թե պետությունը ամենաբազմաձայն գործիքը չէ, որը նաև բոլոր ձայնակարգերի համադրությամբ սոսկ նմանակում է ֆլեյտային:

– Ակնհայտ է, որ այդպես է:

– Քեզ մնում են քնարն ու կիթառը. սրանք են տարածված քաղաքներում: Իսկ գյուղերում, հովիվների մոտ տարածված է սրինգը:

– Մեր քննությունը դա է ցույց տալիս:

– Ապոլլոնին և նրա գործիքները Մարսիասից և նրա գոր-
e ծիքներից առավել բարձր դասելով՝ արտասովոր ոչինչ չենք անում[40]:

– Ձևսը վկա, կարծում եմ, այդպես է:

– Եվ շունը վկա, չնկատեցինք անգամ, թե ինչպես նորից մաքրեցինք պետությունը, որը քիչ առաջ քնքշակյաց կոչեցինք:

– Քանզի գործում ենք ողջամտորեն:

– Այդ դեպքում մաքրենք նաև մնացյալը: Ձայնակարգերից հետո ծագում է ռիթմի հարցը, այսինքն՝ որ չարժե ընկնել բազմազանության և ամեն տեսակ չափերի ետևից, այլ հակառակը՝ պետք է պարզել, թե որ ռիթմերն են պատշաճում համեստ և արի կյանքին: Իսկ հասկանալով դա՝ պետք է անել
400 այնպես, որ չափն ու երգը հետևեն խոսքին, և ոչ թե խոսքը՝ չափին ու երգին: Քո գործը կլինի նշել, թե ինչ ռիթմեր են դրանք, այնպես, ինչպես արեցիր ձայնակարգերի համար:

– Բայց, Ձևսը վկա, չեմ կարող նշել: Ես նախ կասեի, որ գոյություն ունեն ոտքի երեք տեսակներ, որոնցից կազմված

են բանաստեղծական չափերը, ինչպես որ բոլոր ձայնակարգերը կազմվում են չորս հնչողություններից: Բայց դրանցից որը որ կյանքին է նմանակում՝ չեմ կարող բացատրել:

– Այդ մասին մենք կխորհրդակցենք Դամոնի[41] հետ և b
կպարզենք, թե ինչ չափեր կան, որ հարմար են արտահայտելու համար ստորությունը, լկտիությունը, խելագարությունը և մնացյալ չարիքները, և ինչ ռիթմեր են մնում դրանց հակադիր վիճակներն արտահայտելու համար: Ես աղոտ կերպով հիշում եմ, որ ինչ-որ բան եմ լսել Դամոնի նշած մի չափի մասին՝ էնոպլիոսի, համադրական չափի՝ դակտիլային և հերոսական[42], բայց չգիտեմ, թե ինչպես էր այն կազմվում և ինչպես էր հավասարակշռում բանաստեղծական [շեշտի] բարձրացումն ու իջեցումը, որ պայմանավորված է կարճությամբ ու երկարությամբ: Ինձ թվում է՝ Դամոնը նշում էր յամբոսը և ուրիշ մի չափ՝ տրոքեոսը, որի մեջ միանում են երկար
և կարճ վանկերը[43]: Որոշ դեպքերում նա քննադատում կամ c
գովում էր ոտքի տեմպը ոչ պակաս, քան ռիթմերը, երբեմն երկուսն էլ միասին, սակայն ես չեմ կարող դա հաղորդել: Այս ամենը, ինչպես ասացի, թողնենք Դամոնին: Չէ՞ որ դա պահանջում է երկար քննարկում: Թե՞ այդպես չես կարծում:

– Այդպես, Զևսը վկա:

– Բայց դու կարող ես նկատել, որ բարեհնչությունը կապված է ռիթմի հետ, իսկ անբարեհնչությունը՝ անռիթմավորության:

– Անշուշտ:

– Սակայն ռիթմը հետևում է բարեհնչությանը, իսկ ոչ ռիթ- d
մավորությունը՝ անբարեհնչությանը: Լավ և վատ ներդաշնակության դեպքում էլ նույնն է, եթե, ինչպես ասացինք քիչ առաջ, ռիթմը և ներդաշնակությունը պիտի հետևեն խոսքին, և ոչ թե խոսքը՝ նրանց:

– Իհարկե, դրանք պիտի համապատասխանեն խոսքին:

– Իսկ խոսքի եղանակը և խոսքը մի՞թե չեն համապատասխանում հոգու կերպին:

1915.info

– Ինչպե՞ս չէ:

– Իսկ մնացյալ ամեն բան՝ խոսքի՞ն:

– Այո:

– Ուրեմն բարեհունչ խոսքը, ներդաշնակությունը, բարեկարգությունն ու ռիթմը համապատասխանում են պարզամտությանը, բայց ոչ այն անմտությանը, որը մենք մեղմորեն
e պարզամտություն ենք կոչում, այլ հոգեկերտվածքի ճշմարիտ և գեղեցիկ կերպին:

– Միանգամայն ճիշտ է:

– Մի՞թե երիտասարդները չպետք է ամեն կերպ հետևեն դրան, եթե ցանկանում են կատարել իրենց գործը:

– Պետք է հետևեն:

401 – Դրանով է լեցուն նկարչությունը և ամեն այդպիսի արվեստ՝ ջուլհակությունը, ձեռագործը, շինարարությունը, սպասքի պատրաստումը և, բացի այդ, մարմինների և բույսերի բնությունը: Դրանց բոլորի մեջ կա բարետեսություն կամ այլանդակություն: Այլանդակությունն ու անռիթմավորությունը, աներդաշնակությունը ազգակից են չարախոսությանն ու հոռի բարքին, իսկ դրանց հակադիրները, ընդհակառակը, ազգակից են խոհեմագույն և լավ բարքերի նմանակմանը:

– Լիովին:

b – Արդ, մի՞թե մենք պետք է հսկենք միայն բանաստեղծներին և պարտադրենք, որ իրենց երկերում նրանք կերտեն միայն բարոյական պատկերներ, կամ էլ արգելենք ստեղծագործել մեզ մոտ: Մի՞թե չպիտի հետևենք նաև մյուս վարպետներին և նրանց խանգարենք կենդանի էակների պատկերներում, շինություններում և այլ աշխատանքներում ներմուծել անբարոյականը, սանձարձակը, ստորը և այլանդակը: Եվ
c նրան, ով չի կարող դա անել, մենք թույլ չենք տա ստեղծագործել, որպեսզի մեր պահապանները չդաստիարակվեն չարիքի պատկերներով՝ ասես հոռի մի արոտավայրում օրեցօր քիչ-քիչ հավաքելով ու կլանելով այն, ինչի մեծ կուտակումից նրանց հոգիներում կկազմավորվի մեծագույն չարիքը: Պետք

է փնտրել այնպիսի վարպետների, որոնք իրենց օժտվածությամբ կարող են հետևել գեղեցիկի և բարետեսի բնությանը, որպեսզի երիտասարդներին, ինչպես առողջ տեղանքը բնակիչներին, ամեն ինչ օգտակար լինի, անկախ այն բանից, թե ինչպես է որևէ գեղեցիկ երկ ներկայանում նրանց աչքին կամ լսողությանը: Որպեսզի դա լինի ասես առողջարար վայրերից փչող կազդուրիչ զեփյուռ, որն անմիջապես, դեռ մանկուց, անկատ կերպով մերձեցնում է պատանիներին գեղեցիկ d
խոսքին և բարեկամ դարձնում:

– Դա կլիներ լավագույն դաստիարակությունը:

– Արդ, Գլավկոն, հենց սա է մուսայական արվեստի դաստիարակիչ նշանակությունը. այն ավելի ու ավելի է թափանցում հոգու խորքը, իսկ ռիթմն ու ներդաշնակությունը դիպչում են հոգուն և իրենց հետ բերում բարեկարգություն՝ մարդուն դարձնելով բարեպաշտ, եթե նա ճիշտ է դաստիարակված, իսկ եթե ոչ՝ հակառակը[44]: Եվ նա, ով այդպես է դաստիարակվել, շատ սուր է նկատում բացերը, անմշակությունը և
բնական թերությունները: Տհաճության և հաճույքի նրա զգա- e
ցումը կլինի ճիշտ, նա կգովի գեղեցիկը և ընդունելով իր հոգու մեջ՝ կսնվի դրանով և կլինի գեղեցիկ ու առաքինի, իսկ ամոթալին իրավամբ կդատապարտի ու կատի դեռ վաղ հասակից, դեռ նախքան բանական փաստարկներն ըմբռնելը,
իսկ երբ կգա այդպիսի փաստարկների ժամանակը, կսիրի 402
դրանք՝ հասկանալով, որ շատ հոգեհարազատ են իրեն շնորհիվ իր դաստիարակության:

– Ինձ թվում է,– ասաց Գլավկոնը,– դա է մուսայական արվեստի դաստիարակիչ նշանակությունը:

– Այդպիսին է նաև տառաճանաչությունը, երբ մենք տիրապետում ենք գրերին և հասկանում, որ տառերն այնտեղ, ուր
հանդիպում են, այդքան էլ շատ չեն, և մենք ո՛չ քչի, ո՛չ էլ շա- b
տի դեպքում չենք քամահրում դրանք որպես ուշադրության անարժան բաներ, այլ ամենուր ձգտում ենք ճանաչել, և սովորում ենք կարդալ այդ ամենը հաղթահարելուց հետո միայն:

– Ճշմարիտ է:

– Հետևաբար, նաև տառերի արտացոլումները ջրի կամ հայելու մեջ մենք ճանաչում ենք լոկ այն բանից հետո, երբ ճանաչում ենք իրենք տառերը, իսկ սա նույնպես պահանջում է արվեստ և վարժանք:

– Շատ ճիշտ է:

c – Բայց ես հենց դա էի ասում, աստվածները վկա: Մենք ինքներս և պահապանները, որոնց մեր ասելով պիտի դաստիարակենք, չենք կարող տիրել մուսայական արվեստներին, քանի դեռ չենք ճանաչել ամենուր հանդիպող խոհեմության, արիության, ազատամտության, մեծահոգության և սրանց ազգակից և հակադիր բոլոր տեսակները և քանի դեռ չենք նկատել այս ամենն այնտեղ, ուր դա գոյություն ունի ինքնին կամ պատկերների մեջ: Ո՛չ աննշան և ո՛չ էլ կարևոր հարցերի առնչությամբ չենք քամահրի դա, այլ կհամարենք, որ այստեղ էլ անհրաժեշտ է արվեստ և վարժանք:

– Միանգամայն անհրաժեշտ է:

d – Ուրեմն, եթե պատահի, որ որևէ մարդու հոգում եղած գեղեցիկ բարոյական հատկությունները համաձայնության մեջ լինեն իր արտաքինի հետ, քանի որ ունեն ընդհանուր գծեր, դա հրաշալի տեսարան կլինի տեսնել կարողացողի համար:

– Իհարկե:

– Իսկ ամենագեղեցիկը ամենասիրելի՞ն է:

– Ինչպե՞ս չէ:

– Հենց այդպիսի մարդկանց ամենից շատ կսիրեր նա, ով սիրում է մուսայական արվեստը: Իսկ նրան, ով զգայուն չէ ներդաշնակության հանդեպ, չէր սիրի:

– Այո, եթե դա հոգու պակասություն է: Իսկ եթե մարմնավոր է, ապա կարելի է դիմանալ և վայելել միմյանց ներկայությունը:

e – Հասկանում եմ, որ դու ունես կամ ունեցել ես նման սիրեցյալ, և կարեկցում եմ քեզ: Բայց ասա ինձ՝ խոհեմությունը և ծայրահեղ հաճույքն ընդհանուր ինչ-որ բան ունե՞ն:

– Ինչպես թե: Ծայրահեղ հաճույքը խենթացնում է ոչ պակաս, քան վիշտը:

– Իսկ այլ առաքինության հետ ընդհանուր բան ունի՞:

– Բոլորովին: 403

– Իսկ լկտիության և սանձարձակությա՞ն:

– Ամենից քիչ:

– Կարո՞ղ ես նշել ավելի մեծ և սուր հաճույք, քան սիրային հաճույքները:

– Չեմ կարող, քանի որ չկա ավելի մոլեգին հաճույք:

– Սակայն ճիշտ սերը ի բնե սիրում է չափավորն ու գեղեցիկը և սիրում է խոհեմաբար ու ներդաշնակորեն:

– Իհարկե:

– Ուրեմն ճիշտ սիրո մեջ չի կարելի ներմուծել մոլեգնություն և այն ամենը, որ ազգակից է սանձարձակությանը:

– Չի կարելի:

– Հետևաբար չի կարելի ներմուծել նաև հաճույքը. դրա b
հետ ընդհանուր ոչինչ չպիտի ունենան ճիշտ սիրահարներն ու սիրեցյալները, այսինքն՝ սիրահարվածը և սիրվածը:

– Այո, Սոկրատե՛ս, Զևսը վկա, չի կարելի ներմուծել:

– Մեր կառուցած պետության մեջ դու կհաստատես օրենք, ըստ որի սիրահարը պետք է ընկեր լինի իր սիրեցյալին, ժամանակ անցկացնի նրա հետ և վերաբերվի նրան, ինչպես որդուն, հանուն գեղեցիկի, եթե նա, իհարկե, համաձայնվի: Եվ թող չփվի սիրեցյալի հետ այնպես, որ ոչ ոք երբևէ չմտածի, թե նրանց միջև ավելի մեծ ինչ-որ բան կա: Հակառակ դեպքում կմեղադրվի անճաշակության և կոպտության մեջ: c

– Այդպես է:

– Արդ, չի՞ թվում քեզ, որ մուսայական արվեստի մեր քննությունն ավարտվեց, ընդ որում այնպես, ինչպես և պիտի ավարտվեր՝ գեղեցիկի սիրով:

– Համաձայն եմ:

– Մուսայական արվեստից հետո պատանիները պիտի զբաղվեն մարմնամարզությամբ:

– Իհարկե:

– Եվ այստեղ էլ նրանք պետք է դաստիարակվեն ամենայն
d բծախնդրությամբ՝ դեռ մանկուց և ողջ կյանքի ընթացքում: Կարծում եմ, բանն այսպես է: Ինքդ քննիր: Ինձ չի թվում, թե երբ մարմինը լավ վիճակում է, ինքն է իր առաքինությամբ բարի դարձնում հոգին. ընդհակառակը՝ հոգին է իր բարությամբ առաջ բերում մարմնի առաքինություն և հասցնում լավագույն վիճակի: Ի՞նչ ես կարծում:

– Այդպես եմ կարծում:

– Ուրեմն, եթե նրանց մտավոր ունակությունները բավականաչափ հոգալու դեպքում նրանց հոգուն թողնենք հիմնավոր կերպով հոգ տանել իրենց մարմնի մասին, իսկ ինքներս
e շատախոսության մեջ չմեղադրվելու համար ցույց տանք միայն օրինակները, ճի՞շտ կվարվենք:

– Լիովին:

– Արդեն ասացինք, որ պետք է խուսափեն հարբեցողությունից: Պահապանը բոլորից քիչ իրավունք ունի հարբելու այնպես, որ չիմանա՝ որտեղ է գտնվում:

– Զավեշտալի կլիներ, եթե պահապանը պահապանի կարիք ունենար:

– Իսկ սննդի հարցու՞մ: Չէ՞ որ այդ մարդիկ մեծագույն մրցության մասնակիցներ են: Թե՞ ոչ:

– Այո:

404 – Իսկ չի՞ պատշաճի նրանց արդյոք աթլետների կենսակերպը:

– Գուցե:

– Բայց չէ՞ որ դա քնկոտ է դարձնում և վտանգավոր է առողջության համար: Մի՞թե չես տեսնում, որ աթլետները ողջ կյանքը քնած են և եթե փոքր-ինչ շեղվում են իրենց նշանակված կենսակերպից, անմիջապես ծանր հիվանդանում են:

– Տեսնում եմ:

– Զինվոր աթլետները պետք է ավելի լավ պատրաստված լինեն: Պետք է զգոն լինեն, ինչպես շները, ունենան սուր տե-

սողություն ու լսողություն և այնպիսի առողջություն, որ արշավանքների ժամանակ այն չվատթարանա ջրի փոփոխությունից, ամեն տեսակ սննդից, շոգից կամ ցրտից:

– Կարծում եմ, այո: b

– Եվ լավագույն մարմնամարզությունը մի՞թե ազգակից չէ մուսայական այն արվեստին, որը քիչ առաջ քննեցինք:

– Ի՞նչ նկատի ունես:

– Այդպիսի դաստիարակությունը պարզ և հարմար է, հատկապես պատերազմի ժամանակ:

– Ի՞նչ առումով:

– Այդ մասին կարելի է իմանալ անգամ Հոմերոսից. դու գիտես չէ՞, որ արշավանքի ժամանակ Հոմերոսը չի կերակրում իր հերոսներին ո՛չ ծկնեղենով,– չնայած որ ամեն բան տեղի c
է ունենում Հելլեսպոնտոսի մոտ,– ո՛չ էլ եփած մսով, այլ՝ միայն տապակած մսով, ինչը շատ հարմար է զինվորներին, որովհետև խարույկն ըստ էության միշտ ձեռքի տակ է և անհրաժեշտություն չկա իրենց հետ ամանեղեն տանելու:

– Իհարկե:

– Իմ կարծիքով՝ համեմունքները նույնպես Հոմերոսը երբեք չի հիշատակում: Բոլոր աթլետները, քանի որ ցանկանում են առողջ պահել իրենց մարմինը, գիտեն, որ այդ ամենից պիտի խուսափեն:

– Շատ ճիշտ է. գիտեն և խուսափում են:

– Ուրեմն, բարեկամս, ճիշտ համարելով աթլետների կենսակերպը՝ դու չես ընդունում սիրակուզյան սեղանն[45] ու սի- d
կիլիական բազմազանությունը:

– Չեմ ընդունում:

– Այդ դեպքում չես ընդունում նաև այն, որ կորնթացի աղջիկը սիրելի լինի մարմինը լավ վիճակում պահել ցանկացողին:

– Բոլորովին:

– Նմանապես նաև չես ընդունում ատտիկյան համեղ թխվածքները:

– Անհրաժեշտաբար:

– Այդպիսի սնունդն ու կենսակերպը մենք կարող ենք նմանեցնել մելոսին ու երգին, որը ստեղծվում է միաժամանակ
e բոլոր ձայնակարգերում և բոլոր ռիթմերով:

– Անշուշտ:

– Խայտաբղետությունը երաժշտության մեջ ծնում է սանձարձակություն, իսկ այստեղ՝ հիվանդություն, մինչդեռ պարզությունը մուսայական արվեստում տալիս է հոգու խոհեմություն, իսկ մարմնամարզության մեջ՝ առողջություն:

– Շատ ճիշտ է:

405 – Իսկ երբ պետության մեջ տարածվեն սանձարձակությունն ու հիվանդությունները, չե՞ն բացվի արդյոք դատարաններ ու հիվանդանոցներ, և չի՞ կարևորվի արդյոք դատական գործն ու բժշկությունը, երբ դրանով լրջորեն զբաղվեն նաև ազատ մարդիկ:

– Այդպես կլինի:

– Իսկ պետության մեջ վատ և ամոթալի դաստիարակության ուրիշ ի՞նչ ավելի մեծ օրինակ կարող ես բերել, քան այն, որ բժիշկների և դատավորների կարիք ունեն ոչ միայն վատթարներն ու արհեստավորները, այլև նրանք, ովքեր դաս-
b տիարակվել են ազատության մեջ, և մի՞թե դաստիարակված լինել նշանակում է արդարության օրինակ վերցնել ուրիշներից, ասես նրանք տերեր են ու դատավորներ, և օգտվել դրանից, որովհետև դժվարանում ես ունենալ սեփականը:

– Սա շատ ամոթալի է:

– Իսկ չե՞ս կարծում, որ սրանից է՛լ ավելի ամոթալի է այն, որ մարդը կյանքի մեծ մասն անցկացնում է դատարաններում
c որպես պատասխանող կամ հայցող ու դեռ պարծենում է՝ վստահ, որ կարող է անարդարություն գործել ու գիտի պատժից խուսափելու զանազան հնարքներ, և այդ ամենը չնչին գործերի համար: Նա չգիտի, թե որքան ավելի հրաշալի և լավ է կյանքը կառուցել այնպես, որ չլինի հավերժ քնկոտ դատավորի կարիքը:

– Այո, դա է՛լ ավելի ամոթալի է:

– Իսկ երբ բժշկությունն անհրաժեշտ է ոչ թե վնասվածքների կամ պարբերաբար կրկնվող հիվանդությունների, այլ անգործության և հիշյալ կենսակերպի դեմ պայքարելու համար,– երբ հեղուկն ու գոլորշիները ասես ճահճանում են, իսկ հնարամիտ Ասկլեպիականներն[46] այդ հիվանդությունները կոչում են «քամիներ» և «հեղումներ»,– դա ամոթալի չե՞ս համարում: d

– Իրոք որ, հիվանդությունների նոր և տարօրինակ անուններ են:

– Որքան գիտեմ, Ասկլեպիոսի օրոք դրանք չկային: Դրա ապացույցն այն է, որ Տրոյայում Ասկլեպիոսի որդիները[47] չէին կշտամբում վիրավոր Էվրիպիլոսին պրամնևսյան գինի տված կնոջը, որը գինու մեջ առատորեն գարի և քերած պանիր էր խառնել, ինչն էլ պետք է որ առաջ բերեր լորձային բորբոքում: Նրանք չէին առարկում նաև Պատրոկլեսին[48]: 406

– Դա շատ տարօրինակ խմիչք է այդպիսի վիճակում գտնվող մարդու համար:

– Դու գիտես, որ մինչև Հերոդիկոսը[49] Ասկլեպիականները, ինչպես հաղորդում են, չէին կարողանում օգտվել այժմյան բժշկության միջոցներից: Իսկ Հերոդիկոսը, երբ հիվանդացավ, դիմեց մարմնամարզության օգնությանը՝ համակցելով սա բժշկությանը: Սկզբում հիմնականում տանջում էր ինքն իրեն, իսկ հետագայում նաև շատ ուրիշների: b

– Ինչպե՞ս:

– Նա մեծապես հետաձգեց իր մահը՝ վերահսկելով իր հիվանդությունը, որ մահացու էր: Բժշկվել նա, կարծում եմ, չէր կարող, սակայն ամբողջ կյանքում բուժվում էր, պահպանելով սովորական կենսակերպը, և շնորհիվ իր իմաստության՝ այդպես մահանալով ապրեց մինչև խոր ծերություն:

– Լավ մրցանակ է իր իմաստության համար:

– Լավ մրցանակ է նրա համար, ով չիմացավ, որ Ասկլեպիոսն անգիտությունից կամ անփորձությունից չէ, որ ոչինչ չի հաղորդել բժշկության այդ արվեստի մասին սերունդնե- c

րին: Ասկլեպիոսը գիտեր, որ նրանց, ովքեր կարգապահ են և բարեպաշտ, նշանակված է որևէ գործ պետության մեջ և նրանք պարտավոր են կատարել այն, այլ ոչ թե ողջ կյանքում բուժել իրենց հիվանդությունը: Զավեշտական է, որ մենք տեսնում ենք դա արհեստավորների մոտ, իսկ հարուստ և բարեկեցիկ մարդկանց մոտ՝ ոչ:

– Ինչու՞:

d – Հյուսնը հիվանդանալու դեպքում բժշկից դեղամիջոց է խնդրում, որպեսզի փսխի և այդկերպ ազատվի հիվանդությունից, կամ էլ դիմում է այրման ու վիրահատության: Եթե նրան նշանակում են երկար բուժում, ստիպում են կապել գլուխը և ուրիշ նման բաներ, իսկույն ասում է, որ հիվանդանալու ժամանակ չունի և կյանքն անիմաստ է, եթե իր ամբողջ ուշադրությունը պիտի կենտրոնացնի հիվանդության վրա, իսկ իրեն վստահված գործը անուշադրության մատնի: Հրաժեշտ
e տալով նման բժշկին՝ նա վերադառնում է իր սովորական կենսակերպին և, եթե առողջանում է, զբաղվում է իր գործով: Բայց եթե նրա մարմինը չի կարողանում դիմակայել, նա վախճանվում է և ազատվում է գործերից:

– Նման մարդը, կարծում եմ, հենց այդպես պիտի օգտվի բժշկությունից:

407 – Որովհետև նա ունի գործ, և եթե չկատարի այն, նրա կյանքը նպատակ չի ունենա:

– Պարզ է:

– Իսկ հարուստը, ինչպես ասացինք, չունի այդպիսի հաստատուն գործ, որը թողնելու դեպքում կյանքը դադարի կյանք լինելուց:

– Բայց մի՞թե դա խոստովանում են:

– Չէ՞ որ դու համաձայն չես Փոկիլիդեսին[50], երբ նա ասում է, որ մարմնի առաքինությունը պետք է զարգացնել այն բանից հետո, երբ բարեկեցությունն ապահովված է:

– Կարծում եմ, դա պետք է անել նաև մինչև բարեկեցության հասնելը:

– Չվիճենք Փոկիլիդեսի հետ, այլ ինքներս մեզ համար
պարզենք, պե՞տք է արդյոք հարուստը հոգ տանի [մարմնի] b
առաքինության մասին և մի՞թե նրա կյանքը կյանք չի լինի,
եթե չանի դա: Եվ եթե մարդ դրանով չի զբաղվում, եթե հյուսն
է կամ մեկ ուրիշ արհեստավոր և չի կարող ուշք դարձնել իր
հիվանդություններին, Փոկիլիդեսի խորհուրդը նրան չի խան-
գարի:

– Ինչը վկա, շատ է խանգարում, եթե մարմնի հոգսն անց-
նում է մարմնամարզության սահմանները: Այդժամ խոչընդո- c
տում է և՛ տնային գործերում, և՛ արշավանքների ժամանակ,
նաև տհաճ է, երբ հանդիպում է պետության իշխանավորների
մոտ: Ամենակարևորն այն է, որ դա խանգարում է ուսմանը,
խորհրդածությանը, ինքնակատարելագործմանը և առաջ է բե-
րում գլխապտույտ, գլխացավ, որի պատճառը համարում են
փիլիսոփայությամբ զբաղվելը, իբրև թե փիլիսոփայությունը,
որի շնորհիվ զարգացնում և ստուգում են առաքինությունը,
ամեն բանի խոչընդոտն է և միշտ ստիպում է մարդուն իրեն
հիվանդ կարծել ու անդադար տառապել իր մարմնի պատ-
ճառով:

– Թերևս:

– Արդ, չասե՞նք, որ Ասկլեպիոսին դա հայտնի էր. ի բնե
առողջ մարմին և առողջ կենսակերպ ունեցողներին, երբ
նրանք հիվանդանում էին անհայտ մի ախտով, նա նշանա- d
կում էր որոշակի բուժում: Դեղերը, վիրահատությունները,
ըստ նրա, վերացնում են հիվանդությունները, և մարդը շա-
րունակում է վարել իր սովորական կյանքը, որպեսզի չտուժի
հասարակական գործունեությունը: Իսկ ներքին հիվանդու-
թյունների դեպքում, որոնք ձգվում են ողջ կյանքի ընթացքում,
նա դույզն իսկ չէր փորձում օգնել հիվանդին, փոխել նրա
կենսակերպը, երկարաձգել հիվանդությունը՝ այդկերպ վատ-
թարացնելով նրա կյանքը և հնարավորություն տալով նույն-
պիսի սերունդ ծնելու: Նրան, ով կյանքին հատկացված
ժամանակամիջոցում ունակ չէ ապրելու, ըստ Ասկլեպիոսի e

պետք չէ բժշկել, քանի որ նա պիտանի չէ ո՛չ ինքն իրեն, ո՛չ էլ պետությանը:

– Ուրեմն Ասկլեպիոսը պետության պաշտպա՞ն էր:

– Ակնհայտորեն: Նրա որդիները նույնպես. չե՞ս տեսնում, թե ինչ լավ հանդես եկան Տրոյայի պատերազմում և գործի դրեցին իրենց բժշկության արվեստն այնպես, ինչպես արդեն
408 նկարագրեցի: Թե՞ չես հիշում, որ Մենելաոսի վերքից, որը ստացավ Պանդարոսի նետից,

Ձեռքով քամեց
Արյունն իսկույն, վերքի վրա դեղեր ցանեց նա հմտորեն[51]:

Իսկ ուտելու և խմելու հարցում խորհուրդ տվեցին նույնը, ինչ Եվրիպիլոսին, որովհետև ապաքինվելու համար, եթե նախքան վիրավորվելը մարդ առողջ էր և առողջ կյանք էր վարել,
b բավարար է նաև դեղը, անգամ եթե հիմա գինի է խմել: Իսկ ի ծնե հիվանդոտ ու ոչ ժուժկալ մարդու կյանքը Ասկլեպիոսի որդիները համարում էին անօգուտ թե՛ իր, թե՛ ուրիշների համար և որ նրան պետք չէ բուժել և հարկ չկա կիրառելու իրենց արվեստը, անգամ եթե նա Միդասից էլ հարուստ է[52]:

– Ասկլեպիոսի որդիները շատ խելամիտ էին:

– Այդպես էլ պիտի լիներ, թեպետ ողբերգակները և Պինդարոսը չէին համաձայնվի մեզ հետ: Նրանք ասում են, որ
c թեև Ասկլեպիոսն Ապոլլոնի որդին է, սակայն թույլ տվեց համոզել իրեն ոսկով և բուժեց մի հարուստ մահամերձի, ինչի համար շանթահարվեց[53]: Իսկ մենք, համաձայն նախապես ասվածի, չենք հավատում նրանց հաղորդումներին: Եթե աստծո որդի էր, չպիտի ընչաքաղց լիներ, իսկ եթե ընչաքաղց էր, աստծո որդի չէր:

– Շատ ճիշտ է: Բայց, ո՛վ Սոկրատես, ի՞նչ կասես հետևյալի մասին: Մի՞թե մեր պետությունը լավ բժիշկների կարիք չու-
d նի: Իսկ լավ բժիշկներ են նրանք, ովքեր գործ են ունեցել բազմաթիվ առողջների և բազում հիվանդների հետ: Նմանապես նաև դատավորների հարցում. լավ դատավորներ են

նրանք, ովքեր գործ են ունեցել ամենատարբեր մարդկանց հետ:

– Այո, ես նկատի ունեմ լավ բժիշկներին: Իսկ գիտե՞ս, թե ում եմ ես այդպիսին համարում:

– Գուցե ասե՞ս:

– Կփորձեմ: Բայց դու մեկ հարցով հարցնում ես տարբեր բաների մասին:

– Ինչպե՞ս:

– Նրանք լավ բժիշկներ կդառնային, եթե մանկուց սովորելով իրենց արվեստը՝ նաև գործ ունենային բազմաթիվ հիվանդ մարմինների հետ, իրենք էլ տառապած լինեին ամեն տեսակ հիվանդություններով և ի ծնե չլինեին լիովին առողջ: e
Չէ՞ որ մարմինը մարմնով չեն բուժում, քանի որ բժշկի տկար մարմինն այդ դեպքում անընդունելի կլիներ, այլ հոգով, որը չի կարող լինել կամ դառնալ վատը, բայց լավ բուժել:

– Ճիշտ է:

– Իսկ դատավորը, բարեկամս, հոգով իշխում է հոգիների վրա, և չի կարելի թույլ տալ, որ նա մանկուց դաստիարակվի հոռի հոգիների մեջ և շփվի նրանց հետ, կրի ամեն տեսակ 409
անարդարություններ և ինքը անարդարություններ գործի, որպեսզի իր օրինակով ճանաչի ուրիշների անարդարությունները, ինչպես որ սեփական մարմնով ճանաչում են հիվանդությունները: Հակառակը՝ հոգին մանկուց պետք է լինի անարատ և անմասն չար սովորություններից, եթե պիտի գեղեցիկ և բարի ձևով դատի արդար գործերի մասին: Ահա ինչու պարկեշտ պատանիները թվում են պարզամիտ և հեշտ են խաբվում անարդարների կողմից, քանի որ չունեն արատավորների բնավորության գծեր: b

– Եվ շատ ուժեղ տառապում են դրանից:

– Հետևաբար լավ դատավոր կլինի ոչ թե պատանին, այլ ծերունին, որը միայն ուշ է սովորել, թե ինչ է անարդարությունը: Նա նկատել է, որ դա ոչ թե իր հոգու ներքին հատկություն է, այլ օտար ինչ-որ բան օտարների մեջ, և երկար

ժամանակ է պահանջվել, որպեսզի նա հասկանա, թե ինչպի-
c սին է այդ չարիքի բնությունը, քանզի դա իմացություն է, այլ
ոչ սեփական փորձի արգասիք:

– Ինչպես երևում է, նա կլինի շատ ազնիվ դատավոր:

– Այո, լավ: Ահա այն, ինչի մասին հարցնում էիր: Չէ՞ որ
առաքինին ունի առաքինի հոգի: Իսկ ամենազոր մեկը, որ
միշտ չար կասկածներ ունի և ինքն էլ բազում անարդարու-
թյուններ է գործել, որ ինքն իրեն կարծում է ամենազոր և
իմաստուն, շփվելով նմանների հետ, միայն թվում է, թե հմուտ
է իր գործի մեջ, քանզի դիտելով իր մեջ եղած օրինակները,
միշտ զգուշավոր է, բայց երբ հանդիպում է իրենից տարիքով
d լավ մարդկանց, թվում է հիմար, քանի որ թերահավատ է դառ-
նում առողջ բարքերի իր չիմացության պատճառով, քանզի չու-
նի իր մեջ առողջ բարքերի օրինակներ: Իսկ սովորաբար հան-
դիպելով ավելի շատ հոռի, քան առաքինի մարդկանց, նա ինքն
իրեն և ուրիշներին թվում է ավելի շուտ իմաստուն, քան տգետ:

– Միանգամայն ճիշտ է:

– Ուրեմն այդ տեսակ բարի և իմաստուն դատավոր չպետք
է փնտրենք, այլ այնպիսի, որի մասին ասացինք քիչ առաջ:
Արատավորությունը երբեք չի կարող ճանաչել ո՛չ առաքինու-
թյունը, ո՛չ էլ ինքն իրեն, մինչդեռ մարդու բնության առաքի-
նությունը, որն իր ժամանակին դաստիարակություն է ստա-
ցել, ճանաչում է և՛ ինքն իրեն, և՛ արատավորությունը: Այդ-
e պիսի մարդը, իմ կարծիքով, դառնում է իմաստուն և ոչ արա-
տավոր:

– Համամիտ եմ:

– Ուրեմն այդպիսի դատական արվեստի կողքին դու կո-
րինականացնես մեր պետության մեջ նաև բժշկությունը, այն-
պես, ինչպես ասացինք: Եվ այդ երկու արվեստները կխնամեն
մարմնով և հոգով լիարժեք քաղաքացիներին, իսկ նրանց, ով-
410 քեր այդպիսին չեն և առողջ են միայն մարմնով, թույլ կտան
մեռնել: Ինչ վերաբերում է հոգով արատավորներին, որոնք
անբուժելի են, իրենք նմաններին կսպանեն:

– Դա կլինի լավագույնը և՛ այդպիսի արատներով տառապողների, և՛ պետության համար:

– Իսկ պատանիները քեզ մոտ կզգուշանան օգտվել դատական արվեստից, քանի որ օգտվում են մուսայական արվեստից, որը, ինչպես ասացինք, խոհեմություն է ծնում:

– Իհարկե:

– Գնալով այդ ճանապարհով՝ նա, ով տիրապետում է մուսայական արվեստին, եթե ցանկանա, կընտրի նույնը և b
կգբաղվի մարմնամարզությամբ, այսինքն՝ անհարկի չի դիմի բժշկությանը:

– Համաձայն եմ:

– Նա կդիմի մարմնամարզության և դժվարություններ կհաղթահարի հանուն բնական խիզախության, այդ խիզախությունն արթնացնելու համար, այլ ոչ հանուն ուժի, ինչպես մյուս մարզիկները, որոնք սնվում և դժվարություններ են կրում միայն ուժեղանալու համար:

– Շատ ճիշտ է:

– Արդ, Գլավկոն, նրանք, ովքեր հաստատել են, որ պետք է դաստիարակել մուսայական արվեստի և մարմնամարզութ- c
յան միջոցով, այդպես են արել, որպեսզի հոգ տանեն համապատասխանաբար հոգու և մարմնի մասի՞ն:

– Իհարկե:

– Բայց, թվում է, այդ երկու արվեստները հաստատվել են առավելապես հոգու համար:

– Ինչպե՞ս:

– Չե՞ս տեսնում, թե ինչպիսին է մտավոր ունակությունը նրանց, ովքեր ամբողջ կյանքում զբաղվել են մարմնամարզությամբ և խուսափել են մուսայական արվեստներից: Եվ ինչպիսի՞ն է այն սրանց հակառակ մարդկանց պարագայում:

– Ի՞նչ նկատի ունես:

– Վայրենությունն ու կոպտությունը մի կողմից և փափկու- d
թյունն ու մեղմությունը՝ մյուս:

– Այո, տեսել եմ. մարմնամարզությամբ զբաղվողները

դառնում են հարկ եղածից ավելի կոպիտ, իսկ մուսայական արվեստով զբաղվողները՝ փափկասուն, ինչը չի գեղեցկացնում նրանց: Մինչդեռ կոպտությունը կարող է նպաստել մեր սրտոտությանը և ճիշտ դաստիարակության դեպքում՝ արիությանը: Սակայն մեծ չափի կոպտությունը դառնում է վայրենություն և չարիք:

– Ինձ էլ է այդպես թվում:

e – Եվ ի՞նչ: Մի՞թե հեզությունը հատուկ չէ փիլիսոփային: Թեպետ, իհարկե, չափից ավելի հեզությունը դարձնում է չափից ավելի փափկասուն: Բայց լավ դաստիարակության դեպքում մնում է հեզություն և համեստություն:

– Այդպես է:

– Բայց մենք ասում ենք, որ մեր պահապանները պիտի ունենան այդ երկու հատկությունները:

– Այո, պիտի ունենան:

411 – Ուրեմն այդ հատկությունները պետք է ներդաշնակ լինեն միմյանց:

– Ինչպե՞ս չէ:

– Եվ նա, ում մեջ դրանք ներդաշնակ են, հոգով իմաստուն է և քաջ:

– Իհարկե:

– Իսկ նա, ում մեջ ներդաշնակ չեն, վախկոտ ու կոպիտ է:

– Այն էլ ինչպես:

– Արդ, եթե որևէ մեկը թույլ է տալիս, որ մուսայական արվեստը ֆլեյտայի հնչյուններով ականջների, ասես ձագարի միջոցով լցնի իր հոգին քաղցրահունչ, մեղմ և ողբալից եղանակներով, որոնց մասին քիչ առաջ խոսեցինք, եթե նա ողջ կյանքն ապրում է թախծելով կամ ցնծալով տարբեր երգերի

b ներքո, այդժամ իր սրտոտ ոգին փափկում է, ինչպես երկաթը, և անօգուտից վերածվում օգտակարի: Բայց եթե անդադար և շարունակաբար տրվում է այդ հմայքներին, ասես հալչելով ու ծորալով, նա թուլացնում է իր ոգին, ասես կտրելով ոգու ջլերը և դառնալով «թույլ տեգակիր»[54]:

– Իհարկե:

– Դա արագ է տեղի ունենում, եթե պատահում է ի բնե
ոգով թույլ մեկը: Իսկ ոգով ամուր մարդը, սանձելով իր ոգին, c
դառնում է բռնկուն, և ամեն մանրուք իսկույն գրգռում է նրան,
թեպետ նա նաև արագ սթափվում է: Ոգեշունչ մարդկանցից
այդպիսիք վերածվում են բռնկունների, բարկացկոտների և
դժգոհների:

– Իհարկե:

– Եվ ինչ, եթե մարդ դժվարություններ է հաղթահարում
մարմնամարզության մեջ և լավ է սնվում, սակայն անհաղորդ
է մուսայական արվեստներին և փիլիսոփայությանը, չի՞ լցվի
նա մեծամտությամբ ու գոռոզությամբ և չի՞ դառնա արդյոք
ինքն իրենից ավելի քաջ:

– Այն էլ ինչպես:

– Եվ ի՞նչ: Եթե ուրիշ ոչինչ չի անում և չի հաղորդակց-
վում մուսայի հետ, ապա անգամ եթե նրա հոգու մեջ կար էլ d
ուսման տենչ, այն չի կապվում ճանաչողության կամ փնտր-
տուքի հետ, անմասն է մնում քննախոսությունից և մուսա-
յական տարբեր արվեստներից, դառնում է թույլ, խուլ ու
համր, քանի որ չի մղում նրան, չի սնում և չի մաքրագործում
նրա զգայությունները:

– Այդպես է:

– Նման մարդն ըստ իս դառնում է բանատյաց և արվեստ-
ներից հեռու մեկը. համոզելու համար բոլորովին չի օգտվում
խոսքից, այլ ամեն բանի հասնում է գազանային բռնությամբ e
և կոպտությամբ, ապրում է տգիտության և հիմարության մեջ,
անկանոն ու անշնորհք:

– Հենց այդպես է:

– Այս երկուսի համար, իմ կարծիքով, ինչ-որ աստված
մարդկանց տվել է երկու արվեստ՝ մուսայական արվեստը և
մարմնամարզությունը, բայց ոչ ի սեր հոգու և մարմնի,– սա
իմիջիայլոց,– այլ մարդու մեջ սրտոտ և փիլիսոփայական տա-
րերքի համար, որպեսզի դրանք լինեն միմյանց ներդաշնակ՝

412 մերթ ծգվելով, մերթ թուլանալով, մինչև որ կհասնեն պատշաճ վիճակի:

– Ըստ երևույթին այդպես է:

– Մուսայական արվեստը մարմնամարզությանը ճիշտ համադրողին և իր հոգուն չափավոր կերպով մատուցողին մենք իրավամբ կկոչենք մուսայական արվեստում կատարելության և ներդաշնակության կազմակերպիչ ավելի լայն իմաստով, քան նրան, ով լարում է գործիքը:

– Թերևս, ո՛վ Սոկրատես:

– Ուրեմն, Գլավկոն, մեր պետության մեջ այդ կարգը պահպանելու համար միշտ ինչ-որ վերակացուի կարիք կլինի:

b – Այն էլ ինչպես:

– Դաստիարակության և կրթության օրինակները պիտի լինեն այսպիսին: Ինչու՞ թվարկել խմբային պարերը, գազանորսությունը, շներով որսը, ըմբշամարտը և ձիարշավը: Ընդհանուր առմամբ դրանք պետք է հետևեն նշված օրինակներին, ուստի այստեղ դժվար չէ գտնել պիտանին:

– Գուցե դժվար չէ:

– Լավ: Իսկ ի՞նչ քննենք հիմա: Գուցե այն, թե նրանցից ով պիտի իշխի և ով՝ ենթարկվի:

c – Իհարկե:

– Պարզ է, որ պետք է իշխեն ավագները, իսկ երիտասարդները՝ ենթարկվեն:

– Պարզ է:

– Ընդ որում պետք է իշխեն լավագույնները:

– Այո:

– Իսկ հողագործներից լավագույնները մի՞թե նրանք չեն, որ ավելի լավ են հասկանում հողագործությունից:

– Այո:

– Արդ, եթե մեր պահապանները պիտի լինեն լավագույնները, ուրեմն պետք է լավագույն կերպով գլուխ հանեն պետության պաշտպանությունից:

– Այո:

– Այդ դեպքում նրանք պիտի լինեն խելացի և ընդունակ և հոգ տանեն պետության մասին:

– Այդպես է:

– Չէ՞ որ ամեն ոք առավելագույնս հոգ է տանում նրա մա- d
սին, ինչը սիրում է:

– Անհրաժեշտաբար:

– Եվ նա շատ է սիրում, երբ համոզված է, որ իր պաշտ-
պանյալի հաջողությունը նաև իր հաջողությունն է, իսկ գործի
հաջողությունը իր հաջողությունն է, այլապես՝ հակառակը:

– Այդպես է:

– Ուրեմն մենք պիտի ընտրենք պահապաններից այնպի-
սի մարդկանց, որոնք ողջ կյանքում նպատակ կունենան օգ-
տակար լինել պետությանը և ոչ մի դեպքում չեն ցանկանա e
անել հակառակը:

– Այդպիսիք իրավամբ վերակացուներ կլինեն:

– Ինձ թվում է, բոլոր տարիքի մարդկանց մեջ պետք է
առանձնացնենք նրանց, ովքեր կարող են լինել նման կարիք-
ների պաշտպաններ, այնպես որ ո՛չ գայթակղությունները, ո՛չ
էլ հարկադրանքը չեն ստիպի նրանց հրաժարվել պետության
մեջ անհրաժեշտը գործելու իրենց կարծիքից:

– Ինչպե՞ս թե հրաժարվել:

– Ասեմ: Ինձ թվում է, կարծիքը դուրս է մղվում մարդու
մտքից կամովին և ակամա: Կամովին, երբ մարդը մտափոխ- 413
վելով՝ հրաժարվում է կեղծ կարծիքից, ակամա, երբ նա դեն է
նետում ամեն ճշմարիտ կարծիք:

– Կամովինը ես հասկանում եմ, բայց ակամա դեռ պիտի
հասկանամ:

– Ինչու՞: Մի՞թե քեզ չի թվում, որ մարդիկ բարիքներից
զրկվում են ակամա, իսկ չարիքներից՝ կամովին: Մի՞թե չարիք
չէր ճշմարտության հարցում խաբվելը և մի՞թե բարիք չէ հա-
վատալ ճշմարտությանը: Մի՞թե իրականում գոյություն ունե-
ցողի մասին կարծիք ունենալը չի նշանակում հավատալ
ճշմարտությանը:

– Ճիշտ ես ասում, և ինձ թվում է՝ ճշմարիտ կարծիքներից մարդիկ զրկվում են միայն ակամա:

– Հետևաբար դա պատահում է, երբ մարդկանց կողոպտում, գայթակղում կամ բռնանու՞մ են:

– Հիմա էլ չեմ հասկանում:

b – Գուցե ես խոսում եմ ողբերգության լեզվով[55]: Կողոպտված եմ կոչում տարհամոզվածներին և մոռացկոտներին. սրանց կողոպտում է ժամանակը, իսկ մյուսներին՝ փաստարկը: Հիմա հասկանու՞մ ես:

– Այո:

– Ես բռնության ենթարկվածներ եմ կոչում նրանց, որոնց ցավն ու վիշտը ստիպել են փոխել իրենց կարծիքը:

– Դա էլ հասկացա: Իրավացի ես:

c – Իսկ գայթակղվածներ, կարծում եմ, ինքդ էլ համարում ես նրանց, ովքեր փոխել են իրենց կարծիքը՝ հաճույքով հմայված կամ վախից:

– Քանի որ խաբուսիկ ամեն բան գայթակղում է:

– Ինչպես քիչ առաջ ասացի, պետք է փնտրել մարդկանց, որոնք լավագույնս կպաշտպանեն իրենց այն կարծիքը, որ հարկ է անել այն, ինչն իրենց համոզմամբ լավագույնն է պետության համար: Արդեն մանուկ հասակից նրանց որևէ զբաղմունք առաջարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել, թե նրանցից յուրաքանչյուրը հատկապես ինչում է մոռացկոտ և խաբվող: Պետք է առանձնացնել լավ հիշողություն ունեցող-

d ներին և չխաբվողներին, իսկ նրանց, ովքեր այդպիսին չեն, մերժել: Այդպես չէ՞:

– Այո:

– Նրանց պետք է առաջադրել խնդիրներ, խոչընդոտներ և մրցույթներ, որոնց ընթացքում անհրաժեշտ է նկատել նույն հատկությունները:

– Ճիշտ է:

– Ուրեմն նրանց պետք է առաջադրել փորձության երրորդ տեսակը՝ գայթակղությունը, և հետևել ինչպես մտրուկների,

որոնց գոռում-գոչյունով քշում են ստուգելու՝ արդյո՞ք երկչոտ
են[56]: Այդպես էլ երիտասարդներին հարկ է նախ ենթարկել
որևէ սարսափի, իսկ այնուհետև սա փոխարինել որոշակի e
հաճույքով՝ այդկերպ փորձելով նրանց առավել խիստ պայ-
մաններում, քան ոսկին հրում: Այդժամ կպարզվի նրանց գայ-
թակղվելու և ամեն բանում բարեպաշտ լինելու չափը: Նա, ով
լավ պահապան է ինքն իր և մուսայական արվեստի համար,
որ սովորել է, ժուժկալ և ներդաշնակ կդրսևորի իրեն բոլոր
այդ փորձությունների ընթացքում, կկարողանա առավելա-
գույնս օգտակար լինել թե՛ իրեն, թե՛ պետությանը: Եվ նրան,
ով անցել է փորձությունների միջով մանուկ, երիտասարդ և
հասուն տարիքում, եղել է շիտակ, մենք կկարգենք պետու-
թյան գլուխ և պահապան, կպատվենք թե՛ կյանքի օրոք, թե՛ 414
հետմահու, կթաղենք հատուկ պատիվներով և վառ կպահենք
նրա հիշատակը: Իսկ նրանց, ովքեր այդպիսին չեն, կմերժենք:
Այնպես որ, Գլավկոն, ինձ թվում է այսպիսին պիտի լինի տի-
րակալների և պահապանների ընտրությունն ու նշանակումը.
թեպետ առայժմ դրա մասին խոսվեց միայն ընդհանուր գծե-
րով և ոչ հանգամանորեն:

– Ինձ էլ է այդպես թվում:

– Մի՞թե լիովին արդարացի չէ այդպիսի պահապաններին
կոչել կատարյալ: Նրանք կպաշտպանեին իրենց համաքաղա-
քացիներին արտաքին թշնամիներից, որպեսզի առաջինները b
չցանկանան, իսկ երկրորդները՝ չկարողանան չարիք գործել:
Իսկ երիտասարդները, որոնց մենք այժմ պաշտպաններ կոչե-
ցինք, կլինեն տիրակալների օգնականներ և նրանց կարծիք-
ների տարածողներ:

– Համամիտ եմ:

– Բայց ո՞ր հնարքով պիտի ստիպենք հատկապես տիրա-
կալներին,– իսկ եթե դա անհնար է, ապա մյուս քաղաքացի-
ներին,– հավատալ մի ազնիվ հորինվածքի, որը, ինչպես c
ասացինք քիչ առաջ[57], ծնվում է անհրաժեշտությունից:

– Ի՞նչ հորինվածքի:

– Դա նոր հորինվածք չէ, այլ՝ փյունիկյան[58]: Նախկինում, ինչպես հաղորդում և համոզում են բանաստեղծները, այն հաճախ է հանդիպել, իսկ մեր ժամանակներում չի եղել և չգիտեմ՝ կլինի արդյոք, քանի որ դրանում համոզելու համար հարկավոր են մեծ ջանքեր:

– Ինչպես երևում է, չես համարձակվում ասել:

– Երբ ասեմ, իմ անհամարձակությունը քեզ տեղին կթվա:

– Մի՛ վարանիր, ասա՛:

– Կասեմ: Թեպետ չգիտեմ, ինչպես սկսեմ և ինչպիսի բա-
d ռեր ընտրեմ: Կփորձեմ նախ համոզել տիրակալներին և զորավարներին, իսկ հետո մյուս քաղաքացիներին, որ այն ամենը, ինչով դաստիարակեցինք և կրթեցինք, նրանց երևացել է երազում որպես հիրավի իրենց պատահած մի բան, բայց իրականում նրանք գտնվել են երկրի տակ, որտեղ կերտվել են և աճեցվել՝ թե՛ իրենք, թե՛ իրենց զենքն ու մնացյալ սպասքը: Իսկ երբ ամեն բան պատրաստ էր, երկիրը՝ հենց մայրը,
e ծնեց նրանց[59], ուստի հիմա էլ իրենք պիտի հոգ տանեն երկրի մասին, ուր ապրում են, և պաշտպանեն, ինչպես մորն ու ստնտուին, եթե որևէ մեկը հարձակվի նրա վրա, իսկ մյուս քաղաքացիներին համար են եղբայրներ ու երկրածիններ:

– Զուր չէիր երկար ժամանակ ամաչում դիմել այդ հորինվածքին:

415 – Դա լիովին բնական է: Բայց լսիր նաև պատմության մնացյալ մասը: Թեպետ պետության բոլոր քաղաքացիները եղբայրներ են,– կասենք, շարունակելով մեր պատմությունը,– սակայն աստված, որը կերտել է ծեզ, նրանց մեջ, ովքեր ունակ են իշխելու, ծննդյան պահին խառնել է ոսկի, որի շնորհիվ նրանք ունեն ավելի բարձր հարգ: Նրանց օգնականների մեջ խառնել է արծաթ: Իսկ հողագործների և մյուս վարպետների մեջ խառնել է երկաթ և պղինձ: Բոլորդ, լինելով ազգա-
b կից, հիմնականում ծնում եք ծեզ նմաններին, բայց նաև պատահում է, որ ոսկուց ծնվում է արծաթե, իսկ արծաթից՝ ոսկե սերունդ, և այդպես նաև մնացած դեպքերում: Տիրակալներից

աստված նախ և առաջ ու հատկապես պահանջում է, որ նրանք լինեն առաքինի պահապաններ և ոչինչ չպահպանեն այնքան նախանձախնդրորեն, որքան իրենց սերունդը՝ հետևելով նրան, թե ինչ է միախառնված իրենց զավակների հոգիներին: Եթե մանուկը ծնվել է պղնձի և երկաթի խառնուրդով, ոչ մի դեպքում չպիտի խղճան նրան, այլ իր բնության c
համաձայն հանձնեն վարպետներին և հողագործներին: Եթե ծնվել է ոսկու և արծաթի խառնուրդով, դա պետք է գնահատել և դարձնել նրան տիրակալ կամ օգնական: Չէ՞ որ կա գուշակություն, որ պետությունը կկործանվի, եթե նրան պահպանի երկաթե կամ պղնձե պահապանը[60]: Բայց ինչպե՞ս հավատանք այդ պատմությանը, ունե՞ս որևէ միջոց:

– Ոչ, պահապաններին համոզելու միջոց չունեմ: Բայց d
կարելի է համոզել նրանց որդիներին և հետագա սերունդներին:

– Սակայն արդեն դա կստիպեր նրանց ավելի շատ հոգ տանել պետության և միմյանց մասին: Ես թերևս այսպես եմ հասկանում քո խոսքերը: Դա տեղի կունենա, եթե գործի դրվի համբավը: Իսկ մենք, զինելով մեր երկրածիններին, առաջ կշարժվենք տիրակալների ղեկավարությամբ: Տեղ հասնելով՝ թող որոշեն, թե քաղաքի որ մասում ավելի հարմար կլինի ճամբարել և լավագույնս հնազանդության մեջ պահել քաղա- e
քացիներին, եթե ոմն չցանկանա ենթարկվել օրենքներին, և պաշտպանվել արտաքին թշնամուց, եթե սա հարձակվի պետության վրա, ինչպես գայլը՝ հոտի: Ճամբարելով և կատարելով անհրաժեշտ զոհաբերությունները, նրանք կկառուցեն իրենց կացարանները: Այդպես չէ՞:

– Այդպես է:

– Իսկ կացարանները պե՞տք է լինեն այնպիսին, որ ամառ-
ծմեռ պաշտպանեն նրանց:

– Ինչպե՞ս չէ: Ինձ թվում է, դու խոսում ես տների մասին: 349

– Այո, բայց ես խոսում եմ զինվորների տների մասին, այլ ոչ գործարար մարդկանց:

416 – Իսկ ըստ քեզ ինչո՞վ են դրանք տարբերվում:

– Փորձեմ բացատրել: Ամենասարսափելին և այլանդակը կլինի այն, որ հովիվները հոտին հետևող օգնական շներին դաստիարակեն այնպես, որ սրանք սանձարձակությունից, սովից կամ վատ սովորության պատճառով վնաս հասցնեն ոչխարներին և նմանվեն ոչ թե շների, այլ գայլերի:

– Իրոք սարսափելի է:

b – Պետք է ամեն կերպ հետևել, որ օգնականները չգործեն նույնը համաքաղաքացիների նկատմամբ, քանզի ավելի զորեղ են վերջիններից, այլ մնան բարյացակամ դաշնակիցներ և չնմանվեն վայրի տիրակալների:

– Այո, պետք է հետևել:

– Լավագույն հսկողությունը կլիներ այն, որ նրանք իսկապես պատշաճ դաստիարակություն ստանային:

– Այո, իհարկե,– համաձայնվեց Գլավկոնը:

Եվ ես ասացի.

– Չարժե նորից պնդել դա, սիրելի՛ Գլավկոն: Արժե պնդել

c այն, ինչի մասին խոսեցինք քիչ առաջ: Նրանք պետք է ստանան ճիշտ դաստիարակություն, ինչպիսին էլ այն լինի, եթե, իհարկե, ցանկանում են կատարել կարևորագույնը՝ բարեկամ լինել իրար և քաղաքացիներին, որոնց հսկում են:

– Դա մենք ճիշտ ենք ասել:

– Ի լրումն դաստիարակության,– կասի ամեն ողջամիտ մարդ,– պետք է հոգ տանել նաև նրանց տների և ունեցվածքի մասին, որպեսզի դա չխանգարի նրանց լինել լավագույն պա-

d հապանններ և թույլ չտա չարիք գործել մնացյալ քաղաքացիներին:

– Ճիշտ որ, այդպես կասի:

– Տե՛ս,– շարունակեցի ես,– եթե նրանք պետք է լինեն այդպիսին, միգուցե նրանց կյանքն ու կացարանները կազմակերպվեն հետևյալ կերպ: Նախ, ոչ ոք չպիտի ծեռք բերի մասնավոր ունեցվածք, եթե ծայրահեղ անհրաժեշտություն չկա: Այնուհետև, ոչ ոք չպիտի ունենա այնպիսի տուն և պահեստ,

որն անհասանելի լինի ամեն ցանկացողի: Պարենը, որ անհրաժեշտ է ռազմի իմաստուն և արի մարդկանց, նրանք պետք է ստանան մյուս քաղաքացիներից որպես վարձավճար իրենց պահպանության դիմաց: Այդ պարենը պիտի բավարարի նրանց մեկ տարի, ոչ ավել: Սնվելով միասին, ինչպես արշավանքի ժամանակ, նրանք կապրեն միատեղ: Իսկ ոսկու և արծաթի մասին նրանց պետք է ասել, որ աստվածային է աստվածների տված ոսկին և այն իրենց հոգու մեջ է: Նրանք բնավ մարդկային ոսկու կարիք չունեն և սրբապղծություն կլիներ ունենալով աստվածային ոսկի՝ այն պղծել մահկանացու ոսկու խառնուրդով: Այն պիտի լինի անխառն և չդառնա շրջանառու մետաղադրամ, որը շատ հաճախ կեղծվում է: Միայն նրանց չի թույլատրվում պետության մեջ օգտվել ոսկուց, դիպչել ոսկուն և արծաթին, անգամ մնալ դրանց հետ նույն հարկի տակ, զարդարվել ոսկով, խմել ոսկե կամ արծաթե գավաթներից: Միայն այդպես կարող են փրկել իրենց և պետությունը: Իսկ սեփական հողատարածք, տուն և դրամ ձեռք բերելուն պես, պահապաններից կվերածվեն տանտերերի ու հողատերերի և համաքաղաքացիների դաշնակիցներից՝ թշնամական տիրակալների, ամբողջ կյանքում ատելով և արժանանալով ատելության, դավեր նյութելով և ապրելով դավերի մեջ, վախենալով ավելի շատ ներքին, քան արտաքին թշնամիներից, շարժվելով դեպի իրենց և պետության մոտալուտ կործանումը: Ահա թե ինչու ասացի, որ այսպես պետք է կազմակերպել պահապանների կացարաններն ու մնացյալ ամեն բան և ապա օրինականացնել դա: Ի՞նչ ես կարծում:

e 417 b

– Միանգամայն ճիշտ է,– պատասխանեց Գլավկոնը:

ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ

419 Այստեղ միջամտեց Ադիմանտոսը:

– Ինչպե՞ս ես պաշտպանվելու, Սոկրատես, եթե քեզ ասեն, որ դու այնքան էլ երջանիկ չես դարձնում այդ մարդկանց, ընդ որում նրանց իսկ մեղքով: Քանզի, թեպետ իրականում պետությունը իրենցն է, նրանք չեն օգտվի դրա բարիքներից. ուրիշները ձեռք կբերեն հողեր, կկառուցեն մեծ ու շքեղ տներ, ըստ պատշաճի կկահավորեն դրանք, զոհաբերություններ կկատարեն աստվածներին և կգոհացնեն հյուրերին, կունենան այն, ինչի մասին հիմա խոսում էիր՝ ոսկի, արծաթ և այն ամենը, ինչն անհրաժեշտ է համարվում երջանիկ կյանքի համար: Կարելի է ասել, նրանք որպես վարձու օգնականներ
420 հաստատվել են պետության մեջ բացառապես հսկելու նպատակով:

– Այո,– պատասխանեցի ես,– և նրանք վարձատրվում են միայն պարենով և դրանից զատ ոչինչ չեն ստանում, այնպես որ մասնավոր ճամփորդություններ իրենց ցանկությամբ կատարել չեն կարող, չեն կարող ընծաներ մատուցել հետերաներին և հոգալ այլ ծախսեր, որ անում են երջանիկ համարվողները: Այս ամենը և շատ ուրիշ նման բաներ դու մոռացար, երբ հնչեցրիր մեղադրանքդ:

– Թող դա էլ մեղադրանքի մաս կազմի,– ասաց Ադիմանտոսը:

– Դու հարցնում ես՝ ինչպե՞ս պաշտպանվենք:

– Այո:

– Շարժվելով նույն ճանապարհով, ինձ թվում է, մենք b
կգտնենք մեր ասելիքը: Կասենք, որ զարմանալի ոչինչ չկա, եթե մեր պահապանները այդ եղանակով լինեն ամենաերջանիկ մարդիկ: Մենք չենք հիմնում պետություն, որ ժողովրդի տարբեր խավերը նրանում երջանիկ լինեն, այլ որպեսզի առավելագույնս երջանիկ լինի ողջ պետությունը: Չէ՞ որ մենք հույս ունեինք այդպիսի պետության մեջ գտնել արդարություն, իսկ անարդարությունը, հակառակը, վատթարագույն պետության մեջ, և պարզելով դա՝ վճռել հարցը, որ երկար ժամանակ է, ինչ քննում ենք: Հիմա մենք կերտում ենք մեր c
պատկերացրած երջանիկ պետությունը, բայց ոչ թե նկատի առնելով առանձին որևէ խավ, այլ ողջ պետությունը: Այնուհետև մենք կդիտարկենք սրան հակադիր պետությունը: Սա նման է նրան, որ մենք նկար անելու լինեինք, իսկ մեկը մոտենար և մեզ քննադատեր, թե կենդանի էակի ամենագեղեցիկ մասերը պատկերելու համար չենք օգտվում ամենագեղեցիկ ներկերից: Օրինակ, աչքերը, որ ամենագեղեցիկ մասն
են, նկարված են ոչ թե պուրպուրով, այլ սևով: Տեղին կլիներ d
այդպիսի մեղադրանքներից պաշտպանվել՝ ասելով. «Ո՛վ զարմանալի, մի՛ կարծիր, թե մենք պիտի նկարենք աչքերն այնքան գեղեցիկ, որ դրանք դադարեն աչքեր լինելուց: Նույնը վերաբերում է նաև մարմնի մյուս մասերին: Տե՛ս, մասերից յուրաքանչյուրը հավուր պատշաճի պատկերելիս գեղեցի՞կ ենք արդյոք ներկայացնում ամբողջը»:

Արդ, մի՛ ստիպիր մեզ համադրել այդպիսի երջանկությունը պահապանների արվեստին այնպես, որ նրանք լինեն ամեն ինչ, բացի պահապանից: Մենք կարող ենք հողագործներին էլ պճնել շքեղ զգեստներով, զարդարել ոսկով և թույլ e
տալ հող մշակել միայն հաճույքի համար, իսկ բրուտները թող ընկողմանեն կրակի շուրջը, խմեն ու խրախճանք անեն՝ ձեռքի տակ պահելով անիվը, որպեսզի ցանկության դեպքում զբաղվեն նաև բրուտագործությամբ: Մյուսներին էլ կարող

ենք այդ եղանակով երջանիկ դարձնել, որպեսզի ամբողջ պետությունը բարգավաճի: Ոչ, մի՛ համոզիր մեզ, քանզի եթե լսենք քեզ, ո՛չ հողագործը հողագործ կլինի, ո՛չ էլ բրուտը՝ բրուտ, և ընդհանրապես պետության բոլոր քաղաքացիները կկորցնեն իրենց դեմքը: Թեպետ որոշ պարագաներում դա պակաս կարևոր է: Քանզի եթե կոշկակարները դառնան ան-
421 պիտան, այլասերվեն և հանդես գան ուրիշի անվան տակ, դա չի վնասի պետությանը: Բայց եթե օրենքների և պետության պահապաններն իրականում այդ չեն, այլ միայն թվում են այդպիսին, կտեսնես, որ նրանք հիմնահատակ կկործանեն ողջ պետությունը և միայն իրենք հնարավորություն կունենան ապրելու բարեկեցիկ ու երջանիկ: Եթե մենք իսկական պա-
b հապան դարձնենք նրանց, հազիվ թե նրանք վնաս հասցնեն պետությանը: Իսկ նա, ով խոսում է ինչ-որ հողագործների մասին ոչ որպես պետության անդամների, այլ համաժողովրդական տոնախմբության մասնակից խրախճանավորների, նկատի ունի մեկ այլ բան, բայց ոչ պետություն: Անհրաժեշտ է պարզել՝ մենք պահապաններ ենք նշանակում, որպեսզի նրանք առավելագույնս երջանի՞կ լինեն, թե՞ ամբողջ պետության և նրա բարգավաճման մասին հոգ տանելու համար: Հարկավոր է ստիպել պահապաններին և իրենց օգնականնե-
c րին կատարել դա և համոզել, որ լինեն իրենց գործի հրաշալի վարպետներ, նմանապես նաև բոլոր մյուսներին: Պետության աճի և բարեկեցության պայմաններում պետք է բոլոր խավերին թույլ տալ ունենալ երջանկության իրենց բաժինը՝ կախված իրենց բնական օժտվածությունից:

– Ինձ թվում է, ճիշտ ես ասում:

– Իսկ ճշմարիտ կհամարե՞ս համանման ուրիշ փաստարկներ:

– Որո՞նք:

d – Տե՛ս, մի՞թե չի այլասերում և վատը դարձնում մյուս վարպետներին...

– Ի՞նչը:

– Հարստությունը և աղքատությունը:

– Ինչպե՞ս:

– Այսպես: Հարստացած բրուտը կուզի՞ ժամանակ վատնել իր արվեստի վրա:

– Բոլորովին:

– Նա ավելի շուտ դառնում է ծույլ և անփու՞յթ:

– Իհարկե:

– Ուրեմն նա դառնում է ավելի վա՞տ բրուտ:

– Այո, անկասկած:

– Իսկ եթե աղքատության պատճառով չի կարող գործիք կամ մեկ ուրիշ ինչ-որ բան հայթայթել, որն անհրաժեշտ է իր e
արվեստի համար, նրա աշխատանքները վատանում են, և նա ավելի վատ է փոխանցում իր արվեստը որդիներին կամ աշակերտներին:

– Անշուշտ:

– Ուրեմն ինչպես աղքատության, այնպես էլ հարստության պատճառով վատն են դառնում թե՛ աշխատանքները, թե՛ վարպետները:

– Թերևս:

– Ուրեմն մեր պահապանների համար, ինչպես երևում է, գտանք մի բան, որից պետք է ամեն կերպ զգուշանալ, որպեսզի այն չմտնի պետություն առանց նրանց գիտության:

– Ի՞նչը:

– Հարստությունը և աղքատությունը: Առաջինը բերում է 422
ճոխություն, ծուլություն, նորույթներ, իսկ երկրորդը՝ նորույթներից բացի նաև ստորություն և չարագործություն:

– Իհարկե: Բայց, ո՛վ Սոկրատես, ինչպե՞ս կարող է մեր պետությունը պատերազմել, եթե չի կուտակել դրամ, հատկապես եթե ստիպված է պատերազմ վարել մեծ և հարուստ պետության դեմ:

– Պարզ է, որ մեկ այդպիսի պետության դեմ դժվար կլիներ կռվել, իսկ երկուսի դեմ՝ հեշտ:

– Ի՞նչ նկատի ունես: b

1915.info

– Այն, որ մեր զինվորները այդ դեպքում պիտի կռվեին հարուստ մարդկանց դեմ:

– Իհարկե:

– Սակայն, Ադիմանտոս, մի՞թե լավ պատրաստված բռնցքամարտիկը չի կարող հեշտությամբ կռվել երկու ոչ պատրաստված, հարուստ և գեր հակառակորդների դեմ:

– Գուցե, բայց ոչ միաժամանակ:

– Հակառակը, քանի որ նա ետ կփախչի, իսկ հետո շրջվե-
c լով կհարվածի առաջին մոտեցողին: Հաճախակի կիրառելով այդ հնարքը, այն էլ արևի տակ և տապին, մի՞թե մեր բռնցքամարտիկը չի հաղթի բազում այդպիսի հակառակորդների:

– Իհարկե: Այստեղ զարմանալի ոչինչ չկա:

– Իսկ չե՞ս կարծում, թե հարուստներն ավելի շատ հմուտ և փորձառու են բռնցքամարտում, քան ռազմական գործում:

– Անշուշտ:

– Ուրեմն մեր ռազմիկներն ի վիճակի են կռվելու և՛ երկու, և՛ երեք անգամ գերազանցող հակառակորդների հետ:

– Համաձայն եմ: Եվ ինձ թվում է, ճիշտ ես ասում:

d – Արդ, եթե դեսպաններ ուղարկեն ուրիշ պետություն և ասեն ճշմարտությունը, թե՝ «Մենք չենք օգտվում ո՛չ ոսկուց, ո՛չ էլ արծաթից. մեզ արգելված է դրանք ունենալ, իսկ ձեզ թույլատրվում է: Եթե դուք պատերազմեք որպես մեր դաշնակիցներ, կունենաք թշնամուց խլված ավարի ձեր բաժինը»,– ի՞նչ ես կարծում, լսելով դա՝ ո՞վ կնախընտրի պատերազմել պինդ և փորձառու շների դեմ, նրանց հետ միասին պարարտ ու փափկասուն ոչխարների դեմ կռվելու փոխարեն:

– Կարծում եմ՝ ոչ ոք: Բայց եթե նաև մյուս պետությունների
e հարստությունը կուտակվի մեկի մեջ, մի՞թե դա վտանգավոր չի լինի պետության համար, որը զուրկ է հարստությունից:

– Երջանիկ ես, եթե մտածում ես, թե պետություն անունն արժանի է կրելու որևէ մեկը, բացի նրանից, որը մենք ենք հիմնում:

– Բայց ինչու՞:

– Մյուսների պարագայում անունը պիտի ավելի երկար լինի, որովհետև դրանցից յուրաքանչյուրը բազում պետություններ միասնություն է, բայց ոչ «քաղաք», ինչպես ասում են խաղացողները[1]: Այդ պետություններից երկուսը միմյանց
թշնամի են. մեկը աղքատների պետություն է, իսկ մյուսը՝ հա- 423
ռուստների: Եվ յուրաքանչյուրի մեջ դարձյալ կան բազում պետություններ, և դու կսխալվես, եթե մոտենաս դրանց որպես մեկ ինչ-որ բանի: Իսկ եթե մոտենաս որպես բազում պետությունների և մի մասի դրամն ու իշխանությունը փոխանցես մյուսին կամ հենց բնակիչներին մի խմբից տեղափոխես մյուսի մեջ, ձեռք կբերես բազում դաշնակիցներ և սակավ թշնամիներ: Եվ քանի դեռ պետությունը կառավարվում է խոհեմաբար, ինչպես որ քիչ առաջ նշեցինք, այն կլինի մեծագույնը: Ես խոսում եմ ոչ թե ցուցադրական, այլ ճշմարիտ մեծության մասին, անգամ եթե պետությունը պաշտպանում են
ընդամենը հազար զինվորներ: Ո՛չ հելլենների, ո՛չ էլ բարբա- b
րոսների մեջ հեշտ չէ գտնել այդպիսի մեծ պետություն, մինչդեռ թվացյալ մեծ պետությունները շատ-շատ են և ավելի մեծ են մեր պետությունից: Թե՞ այլ կերպ ես մտածում:

– Ոչ, Զևսը վկա:

– Ուրեմն մեր տիրակալների համար հենց դա կլիներ իրենց հիմնած պետության մեծության սահմանը, և դրա չափերով կորոշվեր պետության տարածությունը: Ավելիին չէին հավակնի:

– Ի՞նչ սահման է դա:

– Կարծում եմ՝ այդ սահմանը հետևյալն է: Նրանք պիտի թույլ տան, որ պետությունն աճի այնքան, քանի դեռ շարունակում է մնալ մեկ պետություն, բայց ոչ ավելի:

– Հրաշալի է: c

– Ուրեմն, մեր պահապաններին մենք կտանք նաև այսպիսի առաջադրանք՝ ամեն կերպ հետևել, որպեսզի պետությունը լինի ո՛չ շատ փոքր, ո՛չ էլ թվացյալ մեծ, այլ բավարար և մեկը:

– Ա՛յ թե հեշտ խնդիր է:

– Իսկ ավելի հեշտ խնդիր կլինի այն մեկը, որ հիշատակեցինք քիչ առաջ. պահապանների անհաջող սերունդը պետք է բաշխել ուրիշ խավերի մեջ, իսկ մյուս խավերի նշանակալի
d մարդկանց՝ պահապանների խավի մեջ: Մենք կամեցանք ցույց տալ, որ մյուս քաղաքացիներին պետք է հանձնարարել այն գործը, որին նրանք ի բնե հակված են, որպեսզի կատարելով իրեն բնորոշ գործը՝ յուրաքանչյուր ոք լինի մեկ, այլ ոչ բազում: Այդպես էլ ամբողջ պետությունը կդառնա մեկ, և ոչ բազում:

– Դա ավելի հեշտ խնդիր է:

– Իմ սիրելի՛ Ադիմանտոս, գուցե կարծեն, թե մեր պահանջները շատ են ու դժվար պահապանների համար, սա-
e կայն դրանք բոլորն էլ հեշտ կլինեն, եթե նրանք, ինչպես ասում են, հետամուտ լինեն մեկ մեծ խնդրի կամ ավելի շուտ՝ ոչ թե մեծ, այլ բավարար:

– Ի՞նչ խնդիր է:

– Դաստիարակությունը և ուսումը: Եթե լավ ուսման շնորհիվ պահապանները դառնան չափավոր մարդիկ, հեշտությամբ կպարզեն իրենց համար և՛ դա, և՛ ուրիշ բաներ, որ մենք հիմա բաց ենք թողնում՝ կնոջ ընտրությունը, ամուսնությունը
424 և զավակածնությունը, քանի որ այստեղ տեղին է հետևյալ ասացվածքը՝ «ընկերների մեջ ամեն բան ընդհանուր է»[2]:

– Դա շատ ճիշտ կլիներ:

– Եվ պետությունը, երբ այն ստեղծվում է, շարժվելիս թափ է հավաքում, ինչպես անիվը: Չէ՞ որ ճիշտ դաստիարակությունն ու ուսումը զարգացնում են լավ բնությունը, իսկ նա, ով արդեն լավ բնություն ուներ, այդպիսի դաստիարակության արդյունքում դառնում է է՛լ ավելի լավը, քանի որ կարող է դա
b փոխանցել իր սերունդներին, ինչը տեսնում ենք նաև բոլոր կենդանիների մոտ:

– Բնական է:

– Կարծ ասած, պետության մասին հոգ տանողները պետք է այնպես անեն, որ պետության վնասներն աննկատ չմնան

իրենցից, և պիտի պաշտպանեն պետության կարգը շեղող նորամուծություններից, որոնք կարող են մուտք գործել մարմնամարզության և մուսայական արվեստների ոլորտ, և զգուշանան, որ չլինի այնպես, թե ամենից շատ մարդիկ գնահատեն երգն ու խինդը և մտածեն իբր՝

> *մարդիկ սովորաբար հրապուրվում են այն երգով,*
> *Որն իսկապես նորագույնն է*[3],

որ բանաստեղծը խոսի ոչ թե նոր երգասացության, այլ երգերի նոր եղանակի մասին, և դա գովաբանեն: Չէ՞ որ նման c
բաները պետք չէ գովաբանել, և ասվածն էլ պետք չէ այդպես հասկանալ: Հարկ է զգուշանալ մուսայական արվեստի նոր տեսակից, քանի որ այստեղ վտանգի տակ է ամեն-ամեն բան: Քանզի մուսայական արվեստի եղանակները չեն փոխվում առանց փոխելու նաև պետական կարևոր օրենքները, ինչպես ասում է Դամոնը, իսկ ես հավատում եմ նրան:

– Ինձ էլ դասիր նրան հավատացողների թվին,– ասաց Ադիմանտոսը:

– Պահապանները, ինչպես երևում է, հենց այստեղ պիտի d
հաստատեն իրենց պահակակետը՝ մուսայական արվեստների մեջ:

– Իսկապես, օրինքի խախտումներն այստեղ հեշտությամբ են թափանցում:

– Այո, անվնաս զվարճանքի տեսքով:

– Իրականում, սակայն, այստեղ կա այն վնասը, որը քիչ-քիչ մուտք գործելով բարքերի և սովորույթների մեջ՝ մեծանալով թափանցում է նաև քաղաքացիների փոխհարաբերությունների, օրենքների և պետական կառույցի մեջ և, ո՛վ Սո- e
կրատես, ի վերջո սանձարձակորեն ամեն բան շուռ է տալիս ինչպես մասնավոր, այնպես էլ հասարակական կյանքում:

– Թող այդպես լինի:

– Ես կարծում եմ՝ այդպես է:

– Հետևաբար, ինչպես ասացինք սկզբում, մեր զավակնե-
րի խաղերն անգամ պիտի առնչակից լինեն օրենքներին,
որովհետև եթե զերծ են օրենքներից և մանուկները կանոններ
չեն ճանաչում, անհնար է մեծացնել նրանց որպես լուրջ և
425 օրինապահ այրեր:

– Իհարկե:

– Իսկ եթե մանուկները հենց սկզբից ճիշտ խաղան, մու-
սայական արվեստի շնորհիվ կյուրացնեն օրինապահությու-
նը, ի տարբերություն ուրիշ մանուկների կհետևեն դրան, և
այն միայն ավելի կամրանա նրանց մեջ՝ անգամ ուղղելով պե-
տության թերությունները, եթե այդպիսիք կան[4]:

– Ճշմարիտ է:

– Եվ աննշան համարվող ամեն բանում նրանք կգտնեն
կանոններ, որ բոլորովին կորցրել են նրանք, որոնց մասին
խոսեցինք սկզբում:

– Ի՞նչ կանոններ:

b – Ահա դրանք. կրտսերները ավագների ներկայությամբ
պիտի ոտքի կանգնեն, պիտի մեծարեն իրենց ծնողներին և,
բացի այդ, հետևեն իրենց արտաքինին, այսինքն՝ սանրված-
քին, հագուստին, կոշիկներին և այլն: Քեզ այդպես չի՞ թվում:

– Իհարկե:

– Բայց կարծում եմ, որ անհիմաստ է օրենքով սահմանել
այդ ամենը: Դա ոչ մի տեղ էլ ընդունված չէ, չի պահպանվում
և չի էլ պահպանվի՝ անկախ այն բանից, թե ինչպես կսահման-
վի՝ բանավոր, թե գրավոր:

– Ինչու՞:

c – Ադիմանտոս, ինչպես դաստիարակվեն, այդպես էլ հե-
տագայում առաջ կընթանան: Թե՞ չես ընդունում, որ նմանը
պայմանավորված է նմանով:

– Ինչպե՞ս չէ:

– Եվ ես կարծում եմ, որ ի վերջո դաստիարակությունից է
կախված ավարտուն և որոշակի արդյունքը՝ բարիքը կամ դրա
հակառակը:

– Իհարկե:

– Ահա ինչու ես չէի փորձի օրենքներ սահմանել այդտեղ:

– Բնականաբար:

– Բայց հանուն աստվածների, ասա՛ ինձ, օրենքներ սահմանելու՞ ենք շուկայի վերաբերյալ, այսինքն այն գործարքների, որ կնքվում են շուկաներում, և, եթե կուզես, նաև արհեստավորների փոխհարաբերությունների, երբ հարցն առնչվում է վեճերին, կռիվներին, հայցերին և դատավորների նշանակմանը: Պետք է նաև հարկեր նշանակել շուկաներում ու նավահանգիստներում և, ընդհանրապես, պետք է օրենքներ սահմանել շուկայական, քաղաքային, նավահանգստային և համանման բոլոր գործերում: d

– Չարժե պատվիրաններ սահմանել առաքինի այրերի համար: Նրանցից շատերը իրենք էլ կարող են հեշտությամբ գլխի ընկնել, թե ինչ օրենքներ են այստեղ պահանջվում:

– Այո, բարեկամս, եթե աստված թույլ տա նրանց պահպանել օրենքները, որոնք քիչ առաջ քննեցինք: Իսկ եթե ոչ, նրանք ողջ կյանքը կանցկացնեն բազում օրենքներ հաստատելով, դրանք շտկելով և մտածելով, թե այդկերպ կհասնեն լավագույնին: e

– Քո ասելով, նրանք կապրեն, ինչպես այն հիվանդները, որոնք իրենց սանձարձակության պատճառով չեն ցանկանում թողնել իրենց հոռի կենսակերպը:

– Իհարկե:

– Նրանց կյանքը շատ ուրախ կանցնի, քանզի բուժվելիս նրանք միայն ավելի բազմազան ու ծանր կդարձնեն իրենց հիվանդությունները և միշտ կապրեն այն հույսով, թե կա ինչ-որ մեկը, որը կարող է իրենց ճիշտ դեղամիջոց նշանակել և այդպես բուժել: 426

– Իհարկե, նման հիվանդները հենց դա են անում:

– Իսկ մի՞թե զվարճալի չէ նաև, որ նրանք թշնամի են համարում նրան, ով ասում է ճշմարտությունը՝ որ քանի դեռ նրանք չեն հրաժարվել հարբեցողությունից, որկրամոլությու-

նից, սիրային վայելքներից ու պարապությունից, նրանց չեն
օգնի ո՛չ դեղերը, ո՛չ այրումները, ո՛չ վիրահատումները, ինչ-
b պես նաև աղոթքները, հմայիլները և նման այլ բաներ:

– Բայց դա ոչ էլ զվարճալի է: Մի՞թե զվարճալի է, երբ բար-
կանում են ճիշտ խորհուրդների վրա:

– Ինչպես երևում է, դու չէիր գովաբանի նման մարդկանց:

– Ոչ, Ձևսը վկա:

– Ուրեմն չես գովերգի նաև պետությունը, որը, ինչպես
նշեցինք քիչ առաջ, ամբողջությամբ տրվել է նման բաների:
Թե՞ քեզ չի թվում, որ նույնը տեղի է ունենում նաև վատ կա-
ռավարվող պետություններում, որոնց քաղաքացիներին ար-
c գելվում է փոխել պետական կարգը և որտեղ նրանց մահա-
պատիժ է սպասում, եթե անեն դա: Եվ նա, ով ձգտում է հա-
ճելի լինել և հաճոյանում է քաղաքացիներին, որոնք այդպիսի
կառավարման տակ են, շողոքորթում է նրանց, կանխում
նրանց ցանկություններն ու կատարում դրանք, լավ մարդ է,
կարևոր հարցերում իմաստուն և յուրայինների մեջ մեծ
պատվի արժանի:

– Ինձ թվում է՝ այդպիսի պետությունը ես չեմ կարող գովա-
բանել, քանզի այն վարվում է, ինչպես հիշյալ հիվանդները:

d – Իսկ քեզ չի՞ հիացնում այդ պետության մասին կամավոր
հոգ տանողների խիզախությունն ու ճարպկությունը:

– Հիացնում է, բայց ոչ նրանց, որոնք թյուր կարծիք ունեն
այդպիսի պետությունների մասին և մտածում են, թե իսկա-
կան պետական գործիչներ են լոկ այն պատճառով, որ իրենց
տարփողում է ամբոխը:

– Ի՞նչ նկատի ունես: Համաձայն չե՞ս նրանց հետ: Թե՞
կարծում ես, որ երբ մարդ չգիտի չափել, իսկ չիմացող շատ
e ուրիշ մարդիկ պնդում են, թե նրա հասակը չորս արմունկ է,
նա այդուհանդերձ կարող է չընդունել դա:

– Դա անհնար է:

– Ուրեմն մի՛ բարկացիր նրանց վրա: Այդպիսիք ամենա-
զվարճալի օրենսդիրներն են, քանզի անվերջ շտկումներ են

կատարում՝ ինչպես ասացի, հույս ունենալով վերջ դնել գործարքներում առկա չարաշահումներին, և իրականում փորձում են կտրել հիդրայի գլուխը[5]:

– Այո, հենց դա են անում:

– Արդ, ես կմտածեի, որ թե՛ լավ, թե՛ վատ կառավարվող 427
պետության մեջ իսկական օրենսդիրը չպետք է հոգ տանի այդ տեսակ օրենքների մասին, որովհետև առաջին դեպքում դրանք անօգուտ են և բոլորովին անիմաստ, երկրորդ դեպքում դրանց մի մասը կսահմանի ամեն ոք, իսկ մնացյալը ինքնաբերաբար բխում է նախապես սահմանվածներից:

– Օրենսդրության առումով մեզ ուրիշ էլ ի՞նչ է մնում: b

Եվ ես ասացի.

– Մեզ՝ ոչինչ: Բայց Ապոլլոնին, որ Դելփիքում է, մեծագույն, գեղեցկագույն և առաջնային օրենքներ[6]:

– Որո՞նք:

– Սրբատեղիների կառուցման, զոհաբերությունների և բոլոր բաների մասին, որ կապված են աստվածների, դեմոնների և հերոսների հետ, ինչպես նաև մահացածների թաղմանը վերաբերող և այն ամենին, ինչը հարկ է կատարել այնտեղ [Հադեսում] գտնվողներին սիրաշահելու համար: Այդ բաները c
մենք չգիտենք, սակայն հիմնելով պետությունը, եթե խելք ունենք, չենք լսի ոչ ոքի և չենք դիմի մեկ այլ վերակացուի, հայրենականից բացի: Իսկ նման հարցերում հենց այդ աստվածն է բոլոր մարդկանց հայրենական վերակացուն, այն աստվածը, որ գտնվում է Երկրի մեջտեղում, այնտեղ, ուր Երկրի պորտն է:

– Լավ ես ասում: Այդպես էլ կանենք:

– Այդ դեպքում, Արիստոնի՛ որդի, համարենք, թե արդեն d
հիմնել ես պետությունը: Այժմ վերցնելով բավականաչափ լուսավոր լապտեր՝ տես ինքդ և կանչիր եղբորդ, Պոլեմարքոսին և մյուսներին. գուցե մենք տեսնենք, թե ուր է այնտեղ արդարությունը և ուր է անարդարությունը, ինչով են դրանք տարբերվում միմյանցից և որը պիտի ձեռք բերի մարդը, որպեսզի

երջանիկ լինի, անկախ նրանից՝ կկարողանա թաքնվել բոլոր աստվածներից ու մարդկանցից, թե՝ ոչ:

e – Ասածդ փուչ բան է,– պատասխանեց Գլավկոնը,– չէ՞ որ ինքդ խոստացար կատարել այդպիսի հետազոտություն՝ անազնիվ համարելով ուժերդ ներածին չափ ամեն կերպ չօգնել արդարությանը:

– Լավ հիշեցրիր, այդպես էլ կանենք, բայց դուք էլ ինձ պիտի օգնեք:

– Կօգնենք:

– Ես հույս ունեմ, որ մենք կգտնենք պատասխանն այսպես. կարծում եմ, պետությունը, եթե այն ճիշտ է հիմնված, լիովին կատարյալ կլինի:

– Անհրաժեշտաբար:

– Պարզ է, որ այն իմաստուն է, արի, խոհեմ և արդար:

– Պարզ է:

– Ուրեմն եթե մենք գտնենք նրանում [այն, ինչ ուզում ենք], չգտնված կլինի միայն մնացյալը:

428 – Իհարկե:

– Ինչպես ցանկացած չորս իրերի դեպքում, երբ մենք գտնում ենք որևէ մեկը, մեզ բավական է կա՛մ ի սկզբանե իմանալ այն, կա՛մ էլ ի սկզբանե իմանալ մյուս երեքը և գտնել չորրորդը: Չէ՞ որ պարզ է՝ չորրորդը ոչ այլ ինչ է, եթե ոչ մնացորդ:

– Ճիշտ ես ասում:

– Ուրեմն, եթե պետության հատկությունները չորսն են՝ պիտի իրագործենք մեր քննությունը համարժեք եղանակով:

– Պարզ է:

– Եվ նախ, կարծում եմ, ակնհայտ է այդ պետության իմաս-

b տությունը, թեպետ ինձ այն թվում է տարօրինակ:

– Ինչու՞:

– Ինձ թվում է՝ մեր քննած պետությունն իրականում իմաստուն է, քանզի նրանում կայացվում են ճիշտ վճիռներ, այդպես չէ՞:

– Այո:

– Մինչդեռ այդ վճիռները ակներևաբար ինչ-որ իմացություն են: Չէ՞ որ խորհրդածում են ոչ թե տգիտության, այլ իմացության շնորհիվ:

– Պարզ է:

– Իսկ պետության մեջ կան բազում այլևայլ իմացություններ:

– Ինչպե՞ս չէ: c

– Մի՞թե հյուսնի արվեստն է պատճառը, որ մենք իմաստուն և լավ վճիռներ կայացնող ենք կոչում պետությունը:

– Բնավ: Այդ դեպքում այն կլիներ հյուսնական:

– Քանզի թեև պետությունը ցանկանում է, որ գոյություն ունենա փայտյա իրեր պատրաստելու իմացություն, սակայն իմաստուն է ոչ այդ պատճառով:

– Իհարկե ոչ:

– Իսկ ո՞ր պատճառով, պղնձե և այլ սպասքի պատրաստման իմացությա՞ն:

– Ամենևին ոչ:

– Եվ ոչ էլ հողից աճեցված բերքի պատճառով, այլապես կլիներ հողագործական:

– Կարծում եմ, այո:

– Եվ ի՞նչ, մեր հենց նոր հիմնած պետության որևէ քաղաքացի ունի՞ արդյոք այնպիսի իմացություն, որի շնորհիվ կա- d
յացվում են համապետական վճիռներ և կարգավորվում ինչպես ներքին, այնպես էլ արտաքին հարցեր:

– Ունի:

– Ի՞նչ իմացություն է դա և ո՞վ ունի:

– Դա պահպանության արվեստն է, որին տիրապետում են այն կառավարիչները, որոնց քիչ առաջ կոչեցինք կատարյալ պահապաններ:

– Ինչպիսի՞ն կկոչես մեր պետությունը, եթե նա ունի նման իմացություն:

– Բարեկարգ և իսկապես իմաստուն:

– Իսկ ինչ ես կարծում, ովքեր են ավելի շատ մեր պետու-

e թյան մեջ՝ դարբիննե՞րը, թե՞ այդ ճշմարիտ պահապանները:

– Իհարկե դարբինները:

– Եվ բոլոր նրանց մեջ, ովքեր ինչ-որ իմացություն ունեն և այդ իմացության անունով են կոչվում, պահապաններն ամենից քիչն են:

– Շատ քիչ են:

– Ուրեմն բնության համաձայն հիմնված պետությունը միանգամայն իմաստուն կլիներ բնակչության փոքրագույն՝ իշխող ու կառավարող մասի և այդ մասի իմացության շնորհիվ:

429 Եվ, ինչպես երևում է, ի բնե շատ սակավաթիվ է այն խավը, որը կարող է ունենալ բոլոր իմացությունների մեջ իմաստություն կոչվելու արժանի միակ իմացությունը:

– Շատ ճիշտ ես ասում:

– Ահա և գտանք, չգիտեմ ինչպես, չորս հատկություններից մեկը և դրա դերը պետության մեջ:

– Ինձ թվում է, մենք այն բավականաչափ հետազոտեցինք:

– Ինչ վերաբերում է արիությանը, թե որն է նրա տեղը պետության մեջ և ինչու է որևէ պետություն արի կոչվում, ապա դա դժվար չէ հասկանալ:

– Ինչպե՞ս:

– Կոչելով պետությունը վախկոտ կամ արի, ո՞վ նկատի

b ունի այլ բան, քան նրա այն մասը, որը կռվում և պատերազմում է հանուն նրա:

– Ոչ ոք այլ բան նկատի չունի:

– Չէ՞ որ, թվում է, նրա մյուս քաղաքացիներով չէ պայմանավորված,– լինեն նրանք վախկոտ, թե արի,– պետության այսպիսին կամ այնպիսին լինելը:

– Ոչ:

– Պետությունն արի է շնորհիվ իր մեկ մասի, շնորհիվ այդ

c մասի ունեցած ուժի, որը միշտ հավատարիմ է վտանգների այսպիսին կամ այնպիսին լինելու վերաբերյալ այն կարծիքին, որը դաստիարակելիս նրան հաղորդել է օրենսդիրը: Մի՞թե սա չես կոչում արիություն:

– Լավ չհասկացա, թե ինչ նկատի ունես: Կրկնի՛ր:

– Ես կոչում եմ արիությունը որոշակի պաշտպանություն:

– Ի՞նչ պաշտպանություն:

– Այն, որ պահպանում է վտանգների մասին օրենքի դաստիարակությամբ կազմված կարծիքը. այն, որ վերաբերում է վտանգների որպիսությանը: Ես ասացի, որ այդ կարծիքը պահպանվում է և՛ տառապանքների մեջ, և՛ վայելքների, d
և՛ տենչանքների, և՛ վախերի: Նրանից երբեք չեն հրաժարվում: Եթե կուզես, կարող եմ ցույց տալ, թե ինչի է դա նման:

– Ուզում եմ:

– Դու գիտես, որ ներկարարները, երբ ցանկանում են պուրպուր ներկել բուրդը, նախ բրդի բազում երանգներից ընտրում են միայն սպիտակի մեկ տեսակ, զանազան հնարներով այնպես են անում, որ սա առավելագույնս պատրաստ
լինի ընդունելու պուրպուրը, և այնուհետև ներկում են: Այդ- e
կերպ ներկված բուրդն այլևս չի խամրում, և լվացքը՝ լուծույթով լինի, թե առանց լուծույթի, չի կարող փոխել գույնը: Հակառակ դեպքում ինքդ գիտես, թե ինչ է լինում, երբ ներկում են,– այս կամ մեկ ուրիշ գույնով,– առանց նախապատրաստության:

– Գիտեմ՝ ներկն այդ ժամանակ անկայուն է և ծիծաղելի տեսք ունի:

– Ուրեմն նկատի առ, որ նման մի բան մենք ենք անում, երբ ընտրում և դաստիարակում ենք զինվորներին մուսայա-
կան արվեստով և մարմնամարզությամբ: Մեր նպատակն այլ 430
բան չէ, քան այն, որ նրանք լավագույնս ընկալեն օրենքները, ասես մի գունավորում, և որ նրանց կարծիքը վտանգների ու մնացյալի մասին բնական ձիրքի և ստացած դաստիարակության շնորհիվ ամուր դառնա, և այդ գույնը ոչ մի ուժեղ լու-
ծույթով հնարավոր չլինի լվանալ՝ ո՛չ հաճույքով, որ ավելի b
ուժեղ է քալեստրյան պոտաշից[7] ու մոխրից, ո՛չ վշտով, ո՛չ երկյուղով, ո՛չ տենչանքով, ո՛չ էլ նման այլ լուծույթներով:

Այնպես որ, եթե դեմ չես, վտանգավորի և անվտանգի մասին ճիշտ և օրինավոր կարծիքի ուժն ու կայունությունը ես կոչում եմ արիություն:

– Դեմ չեմ, որովհետև ինձ թվում է, որ այդ կարծիքը, թեպետ ճշմարիտ է՝ առաջ է եկել անկախ դաստիարակությունից, ինչպես նկատում ենք կենդանիների և ստրուկների մոտ, դու օրինական չես համարում և կոչում ես ոչ թե արիություն, այլ ուրիշ ինչ-որ բան:

c – Շատ ճիշտ ես ասում:

– Ընդունում եմ, որ դա արիություն է:

– Ընդունիր նաև, որ խոսքը քաղաքացիական արիության մասին է: Եթե կուզես, մեկ ուրիշ անգամ ավելի մանրամասն կխոսենք դրա մասին: Չէ՞ որ հիմա փնտրում ենք ոչ թե արիությունը, այլ արդարությունը: Իսկ արիության մասին այսքանը բավական է:

– Լավ:

– Մնում է դիտարկել պետության ևս երկու հատկություն՝ խոհեմությունը և այն, հանուն ինչի ձեռնարկեցինք մեր

d քննությունը՝ արդարությունը:

– Ինչպե՞ս գտնենք արդարությունը, որպեսզի էլ գործ չունենանք խոհեմության հետ:

– Եթե ցանկանում ես ինձ հաճելին մատուցել, նախ դիտարկիր խոհեմությունը:

e – Սակայն հենց դա էլ ցանկանում եմ, և չդիտարկելը սխալ կլիներ:

– Այդ դեպքում քննիր:

– Այո, հարկ է քննել: Եվ այսպես, մեր համոզմամբ խոհեմությունն ավելի, քան նախորդող մյուս հատկությունները, նման է որոշակի համահնչության և ներդաշնակության:

– Ինչպե՞ս:

– Խոհեմությունը որոշակի կարգ է[8]. իշխում է ինչ-ինչ հաճույքների և տենչանքների վրա, և դրա առիթով է, որ խոսում են ինքնահաղթահարման մասին, որին հասնելու եղանակն

ինձ անհայտ է: Սրա նման նաև շատ ուրիշ բաների վերաբերյալ ասում են, որ դրանք խոհեմության հետքեր են: Այդպես չէ՞:

– Լիովին:

– Մի՞թե զավեշտալի չէ «ինքն իրեն հաղթահարել» ասվածը: Քանի որ ինքն իրեն հաղթահարողը թույլ է ինքն իրենից, 431
ստացվում է, որ հենց այդ թույլն էլ հաղթում է: Չէ՞ որ տվյալ դեպքում մենք խոսում ենք նույն մարդու մասին:

– Իհարկե:

– Բայց ինձ թվում է՝ այդ արտահայտությամբ նկատի ունեն, որ հենց մարդու մեջ, նրա հոգում կա ինչ-որ լավ մաս և ինչ-որ վատ մաս, այնպես որ երբ բնությամբ լավը հաղթահարում է վատթարը, ասում են, թե վերջինս հաղթահարում է ինքն իրեն: Սա գովեստ է: Իսկ երբ վատ դաստիարակության
կամ շրջապատի պատճառով հաղթում է վատթարը (չէ՞ որ այն b
շատ է, իսկ լավը՝ քիչ), այդժամ պարսավելով ու կշտամբելով դա կոչում են «ինքնապարտություն», իսկ այդ վիճակում գտնվողին՝ անզուսպ:

– Թերևս:

– Այժմ նայիր մեր նոր պետությանը և կգտնես այդ երկու վիճակներից մեկը: Դու կհամաձայնես, որ այդպիսի պետությունը կարելի է արդարացիորեն կոչել ինքն իրեն հաղթահարած, քանի որ հարկ է խոհեմ և ինքն իրեն հաղթահարած կոչել այն, ինչում լավագույնը իշխում է վատագույնին:

– Տեսնում եմ, և դու ճիշտ ես ասում:

– Բազմաթիվ և զանազան տենչանքներ, հաճույքներ ու
տառապանքներ կարելի է գտնել կանանց և ընդոծինների c
մոտ, իսկ ազատների մեջ դա կարելի է նկատել մեծամասնության հոռի ներկայացուցիչների մոտ:

– Իհարկե:

– Իսկ պարզ, ժուժկալ, ճիշտ կարծիքով ու խորհրդածությամբ ուղղորդվող տենչանքները կգտնես շատ քչերի՝ իրենց բնությամբ ու դաստիարակությամբ առավել լավերի մոտ:

– Ճիշտ է:

– Մի՞թե չես տեսնում դա նաև մեր պետության մեջ: Բազ-
d մության նսեմ տենչանքները կախված են քչերի և առաքինի-
ների խոհեմ ցանկություններից:

– Իհարկե:

– Արդ, եթե ընդունենք, որ ինչ-որ պետություն հաղթահա-
րել է հաճույքները, տենչանքները և ինքն իրեն, դա կլինի մեր
պետությունը:

– Միանգամայն ճշմարիտ է:

– Իսկ մի՞թե այդ ամենից ելնելով՝ չհամաձայնենք նաև, որ
այդ պետությունը խոհեմ է:

– Անշուշտ:

– Արդ, եթե ինչ-որ պետության մեջ իշխողների և կառավա-
րողների շրջանում տարածված է նույն կարծիքն այն մասին,
e թե ով պիտի իշխի, ապա այդ կարծիքը գոյություն ունի նաև
մեր պետության մեջ: Այդպես չե՞ս կարծում:

– Հենց այդպես:

– Եթե այդպես է, ու՞մ է հատուկ խոհեմությունը՝ իշխողնե-
րի՞ն, թե՞ ենթականերին:

– Երկուսին էլ:

– Տեսնու՞մ ես, ուրեմն ճիշտ գուշակեցինք քիչ առաջ, որ
խոհեմությունը համազոր է ինչ-որ ներդաշնակության:

– Եվ ի՞նչ:

– Խոհեմության դեպքը տարբեր է արիության և իմաստու-
432 թյան դեպքից, որոնք գոյություն ունեն պետության ինչ-որ մեկ
մասում և պետությունը դարձնում են կա՛մ արի, կա՛մ իմաս-
տուն: Սակայն խոհեմությունն այդպես չի գործում: Այն հիմ-
նովին կարգավորում է ամբողջը. իր բոլոր՝ և՛ ուժեղ, և՛ թույլ,
և՛ միջին չափով ձգված լարերին այն ստիպում է հնչել ներ-
դաշնակ, եթե կուզես՝ շնորհիվ բանականության, կամ էլ ուժի,
իսկ երբեմն քանակի, դրամի կամ մեկ ուրիշ նման բանի. այն-
պես որ իրավացիորեն կարող ենք ասել, որ այս ներդաշնակ-
ությունը խոհեմություն է: Սա լավի և վատթարի բնական

համաձայնությունն է նրանում, ինչը բացատրում է, թե որ սկզբունքը պիտի իշխի պետության և առանձին մարդու մեջ:

– Լիովին համամիտ եմ: b

– Լավ: Դիտարկեցինք պետության երեք հատկություններ-ը, իսկ այն մեկը, որ մնացել է, որի շնորհիվ պետությունը հաղորդակից է դառնում առաքինությանը, ինչպիսի՞ն է: Պարզ է, որ դա արդարությունն է:

– Պարզ է:

– Ուրեմն, Գլավկոն, մենք, ինչպես որսորդները, պետք է շարվենք այդ թավուտի շուրջ և հետևենք, որ արդարությունը չփախչի մեզնից և չթողնի մեզ անհայտության մեջ: Պարզ է, c
որ այն այստեղ է: Նայիր և փորձիր տեսնել այն, իսկ եթե տեսնես առաջինը, ասա ինձ:

– Երանի՜ թե կարողանայի: Գուցե լավագույնն էլ դա է՝ հետևել քեզ և տեսնել այն, ինչ ցույց ես տալիս ինձ: Սա է, ինչով առավելագույնս կարող եմ օգտակար լինել:

– Ուրեմն հետևիր ինձ և միացիր աղոթքիս:

– Հետևում եմ, միայն թե առաջնորդիր:

– Սա իրոք անանցանելի վայր է՝ անթափանց և աներևույթ: Այդուհանդերձ հարկավոր է առաջ շարժվել:

– Շարժվենք:

Այդ պահին ինչ-որ բան նկատելով՝ ես բացականչեցի. d

– Հե՜յ, Գլավկո՛ն, մենք կարծես թե գտել ենք նրա հետքը, և ինձ թվում է, որ այն շատ չի հեռացել մեզնից:

– Բարի լուր է:

– Ի՜նչ դանդաղամիտն ենք, սակայն:

– Ինչպե՞ս թե:

– Սիրելի՛ս, այն արդեն վաղուց է, ինչ պտտվում է մեր ոտքերի տակ, իսկ մենք չենք էլ տեսնում: Իսկական զավեշտ: Ասես փնտրենք արդեն մեր ձեռքին եղածը: Փնտրում էինք ոչ e
թե այստեղ, այլ հեռվում, կարծես թաքնվել էր մեզնից:

– Ի՞նչ նկատի ունես:

– Հետևյալը: Զրույցի ընթացքում ինքներս մեզ չհասկա-

ցանք, ավելի շուտ այն, որ ինչ-որ իմաստով արդեն իսկ խոսել ենք արդարության մասին:

– Նախաբանդ երկար է նրա համար, ով կուզեր լսել և հասկանալ:

– Դե, լսի՛ր և տե՛ս, թե ինչ կասեմ: Դեռ սկզբում, երբ մենք
433 հիմնում էինք պետությունը, պարզեցինք, որ դա պետք է անել հանուն ամբողջի: Եվ այդ ամբողջը արդարությունն է կամ էլ դրա ինչ-որ տեսակը: Մենք հաստատեցինք և բազմիցս կրկնեցինք, եթե հիշում ես, որ յուրաքանչյուր ոք պիտի զբաղվի պետությանը անհրաժեշտ միայն մեկ գործով՝ նրանով, որի հանդեպ նա ի բնե հակում ունի:

b – Այո, ասացինք:

– Սակայն անել իր գործը և չխառնվել մյուսների գործերին արդարություն է. այդ մասին մենք լսել ենք շատ ուրիշներից և ինքներս էլ հաճախ կրկնել ենք:

– Այո, կրկնել ենք:

– Արդ, բարեկա՛մս, սեփական գործով զբաղվելն արդարություն է: Գիտե՞ս՝ ինչպես հասկացա:

– Ոչ, ասա:

– Պետության մեր դիտարկած հատկություններից՝ խոհեմությունից, արիությունից և բանականությունից բացի, կա նաև մեկը, որը դրանց թույլ է տալիս լինել և պահպանվել:
c Մենք ասացինք, որ այն բանից հետո, երբ գտնենք երեք հատկությունները, մնացորդը կլինի արդարությունը:

– Անհրաժեշտաբար:

– Բայց եթե հարկ լիներ որոշել, թե դրանցից որն է ավելի կատարյալ դարձնում մեր պետությունը, մենք կդժվարանայինք: Արդյո՞ք կլինի կառավարիչների և ենթակաների համակարծություն կամ օրենքներին համապատասխանող կարծիքների առկայություն և պահպանում զինվորների մոտ,– կարծիքներ այն մասին, թե ինչն է վտանգավոր, իսկ ինչը՝ ոչ,– և,
d վերջապես, կլինի՞ արդյոք կառավարիչներին հատուկ բանականություն և զգոնություն: Թե՞ մեր պետության կատարելու-

թյանը նպաստում է այն, ինչը հատուկ է և՛ երեխային, և՛ կնոջը, և՛ ստրուկին, և՛ ազատին, և՛ վարպետին, և՛ կառավարչին, և՛ ենթակային, այսինքն՝ որ յուրաքանչյուր ոք զբաղված է իր գործով և չի խառնվում մյուսներին:

– Դա, իհարկե, դժվար է որոշել:

– Ինչպես երևում է, պետության առաքինության հարցում յուրաքանչյուր քաղաքացու իր գործն անելու կարողությունը մրցում է իմաստության, խոհեմության և արիության հետ:

– Այն էլ ինչպես: e

– Չե՞ս կարծում, որ արդարությունը նույնպես մրցում է նրանց հետ հանուն պետության առաքինության:

– Իհարկե:

– Իսկ ի՞նչ կասես հետևյալի մասին: Մի՞թե պետության կառավարիչներին չես հանձնարարի դատական գործերը:

– Ինչպե՞ս չէ:

– Իսկ դատական վճիռներ կայացնելիս նրանք մի՞թե ձգտելու են ուրիշ ինչ-որ բանի, բացի նրանից, որ ոչ ոք չյուրացնի ուրիշինը և չզրկվի սեփականությունից:

– Հենց դրան էլ կձգտեն:

– Քանի որ դա արդա՞ր է:

– Այո:

– Ուրեմն այս տեսակետից ևս կարելի է համաձայնել, որ արդարությունն այն է, երբ յուրաքանչյուր ոք ունի և կատարում է իր գործը:

– Այդպես է: 434

– Իսկ կհամաձայնե՞ս ինձ հետևյալ հարցում. եթե հյուսնը փորձի կատարել կոշկակարի աշխատանք կամ կոշկակարը՝ հյուսնի, փոխանակելով նրա հետ գործիքներն ու կոչումը, կամ եթե նույն մարդը փորձի կատարել երկու աշխատանքներն էլ, և բոլորը փոխվեն տեղերով, ինչ ես կարծում՝ պետությունը մե՞ծ վնաս կկրի:

– Ոչ:

– Բայց եթե արհեստավորը կամ մեկ ուրիշը, որն իր էութ-

b յամբ գործարար է, բարձրանա իր հարստության, կապերի, ուժի կամ մեկ ուրիշ բանի շնորհիվ և փորձի անցնել զինվորականների խավ, կամ եթե զինվորականներից ինչ-որ մեկը փորձի անցնել պատգամավորների կամ պահապանների խավ, չլինելով դրան արժանի, և նրանք փոխանակեն իրենց գործիքներն ու կոչումները, կամ եթե որևէ մեկը փորձի ամեն բան կատարել միաժամանակ, կարծում եմ՝ կհամաձայնես, որ այդպիսի փոխանակությունն ու միջամտությունը կործանարար կլինի պետության համար:

– Լիովին:

e – Այդ երեք խավերի միջամտությունը միմյանց գործերին և մեկ խավից անցումը մյուսին մեծագույն վնաս է պետությանը և իրավացիորեն կարող է համարվել մեծագույն չարագործություն:

– Համաձայն եմ:

– Իսկ սեփական պետության դեմ մեծագույն չարագործությունը չե՞ս կոչի արդյոք անարդարություն:

– Ինչպե՞ս չէ:

– Ուրեմն դա՞ է անարդարությունը: Ասենք ևս մեկ անգամ. ի տարբերություն դրա՝ արդարություն կլինի և պետությունն արդար կդարձնի գործարարների, օգնականների և պահապանների նվիրվածությունն իրենց գործին, երբ յուրաքանչյուրը զբաղված կլինի իր գործով:

d – Ինձ թվում է, որ ամեն ինչ հենց այդպես է:

– Մենք դա չենք պնդի շատ կտրուկ, բայց եթե այդ գաղափարը համապատասխանի յուրաքանչյուր մարդու և յուրաքանչյուր դեպքում լինի արդարություն, մենք վերջնականապես կընդունենք դա,– ուրիշ էլ ի՞նչ անենք: Իսկ եթե ոչ, մենք կդիտարկենք մեկ այլ բան: Հիմա ավարտենք մեր քննությունն այնպես, ինչպես որ մտադիր էինք, երբ փորձեցինք դիտարկել արդարությունը մեծ ինչ-որ բանի մեջ. այժմ դա նկատել առանձին մարդու մեջ ավելի հեշտ է: Մեծը պետու-

e թյունն էր, և մենք հիմնեցինք այն հնարավորինս կատարյալ,

որպեսզի լինի լավագույնը, քանզի քաջ գիտակցում ենք, որ
կատարյալ պետության մեջ կլինի նաև արդարություն: Այն,
ինչ բացահայտվեց այստեղ, տեղափոխենք առանձին մարդու
վրա, և եթե համընկնի, շատ լավ, իսկ եթե առանձին մարդու
դեպքում ի հայտ գա ուրիշ ինչ-որ բան, մենք դա կստուգենք՝ 435
դիմելով պետությանը: Այսպես, քննելով դրանք մեկը մյուսի
կողքին, ասես իրար շփելով փայտի կտորները, կստիպենք
արդարությանը բոցավառվել, իսկ երբ հայտնվի, կամրա-
գրենք մեր մեջ:

– Նշածդ ուղին ճիշտ է, և հարկավոր է այդպես վարվել:

– Եթե ոմն նույնն է կոչում մեծը և փոքրը, մի՞թե դրանց
նմանությունն այն չէ, ինչի պատճառով դրանք նման են կոչ-
վում: Թե՞ նման չեն:

– Նման են:

– Ուրեմն արդար մարդը ոչնչով չի տարբերվի արդար պե-
տությունից արդեն իսկ արդարության գաղափարի իմաստով, b
այլ նման կլինի դրան:

– Այո, նման կլինի:

– Բայց մենք արդար համարեցինք պետությունը, երբ նրա՝
բնությամբ տարբեր երեք խավերից յուրաքանչյուրը կատա-
րում է իր գործը: Իսկ խոհեմ, արի և իմաստուն համարեցինք
պետությունը այդ խավերի դրության և հատկությունների հա- c
մար:

– Ճշմարիտ է:

– Ուրեմն, բարեկամս, մենք այդպես էլ կգնահատենք նաև
առանձին մարդուն, որն իր հոգու մեջ կրում է նույն այդ տե-
սակները. դրանց համանման վիճակի պատճառով ճիշտ կլի-
նի դրանք կոչել նույն անուններով, ինչ պետության դեպքում:

– Անհրաժեշտաբար:

– Հրաշալի է, սիրելիս: Ուրեմն դարձյալ մի պարզ խնդրի
առաջ ենք: Խոսքը վերաբերում է հոգուն. ունի՞ այն արդյոք
այս երեք տեսակները, թե՞ ոչ:

– Ինձ թվում է, որ դա իրականում դժվար խնդիր է: Քանզի,

Սոկրատես, ճշմարիտ են ասում, որ գեղեցիկը դժվար է[9]:

d – Երևում է, այո: Բայց լավ իմացիր, Գլավկոն, իմ կարծիքով՝ եղանակները, որոնցից մինչ այս պահն օգտվել ենք մեր քննության մեջ, երբեք չեն կարող ճշգրտորեն որսալ արդարությունը: Դեպի արդարություն տանող ճանապարհն ավելի մեծ ու երկար է: Թեև այն արժանի է, որ մենք խոսեինք և քննեինք այն, ինչի մասին արդեն խոսեցինք:

– Բայց մի՞թե դա բավարար չէ: Ինձ այս պահին եղածն էլ բավարար կլիներ:

– Իսկ ինձ՝ ավելի քան բավարար:

– Ուրեմն մի՛ վհատվիր և քննիր:

e – Մի՞թե մենք անհրաժեշտաբար չենք համաձայնվի, որ մեզնից յուրաքանչյուրի մեջ առկա են բարքերի այն տեսակները, որ կան պետության մեջ: Այլապես որտեղի՞ց պիտի ծագեն դրանք: Ծիծաղելի է կարծել, թե սրտոտությունը որոշ պետություններում ծագել է ոչ առանձին մարդկանցից, ինչպես որ, օրինակ, Թրակիայում է, Սկյութիայում կամ գրեթե բոլոր հյուսիսային երկրներում. մինչդեռ մեր կողմերում մարդիկ
436 աչքի են ընկնում ուսումնատենչությամբ, իսկ փյունիկեցիների ու եգիպտացիների մոտ՝ դրամասիրությամբ:

– Այն էլ շատ:

– Եվ դժվար չէ նկատել, որ ամեն բան հենց այդպես է:

– Միանգամայն:

– Դժվար է հասկանալ հետևյալը. արդյո՞ք մեր գործողությունների հիմքում մեկ հատկություն է, թե՞ այդ հատկությունները երեքն են և դրանցից յուրաքանչյուրն առաջ է բերում առանձին գործողություն: Մենք ճանաչում ենք մի հատկությամբ, իսկ ցասման մեջ ընկնում ենք մյուսով, երրորդով տենչում ենք ճաշակելու կամ կենակցելու հետ կապված վայելքները և այն ամենը, որ ազգակից է սրանց: Թե՞ յուրա-
b քանչյուր դեպքում գործում ենք ողջ հոգով: Սա է, որ դժվար է սահմանել այնպես, ինչպես պահանջում է խնդիրը:

– Ինձ էլ է այդպես թվում:

– Փորձենք հիշյալ հատկությունների նույնական կամ տարբեր լինելը սահմանել հետևյալ կերպ:

– Ինչպե՞ս:

– Հասկանալի է, որ նույնականը չի ձգտում միաժամանակ գործել և կրել այն, ինչը հակադիր է իր նույնականությանը և ուղղված է դրա դեմ: Եթե մենք հայտնաբերենք, որ այստեղ նման բան կա, կիմանանք, որ դա ոչ թե նույնն է, այլ բազումը: c

– Թող այդպես լինի:

– Տե՛ս, թե ինչ նկատի ունեմ:

– Խոսի՛ր:

– Կարո՞ղ է արդյոք նույն բանը մեկ ուրիշ բանի հարաբերությամբ միաժամանակ լինել դադարի մեջ և շարժվել:

– Բնավ:

– Փորձենք գալ ավելի հստակ համաձայնության, որպեսզի առաջ շարժվելով չընկնենք թյուրիմացության մեջ: Եթե դադարի մեջ գտնվողի, բայց ձեռքերն ու գլուխը շարժողի մասին ասեն, որ նա միաժամանակ կանգնած է և շարժվում է, մենք, կարծում եմ, այդպիսի ձևակերպման հետ չէինք համաձայնվի, այլ կասեինք, որ նրա մի մասը կանգնած է, իսկ մյուս մասը d շարժվում է: Այդպես չէ՞:

– Այդպես է:

– Բացի դրանից, այդպես ասողները կարող էին ավելի սրամիտ օրինակ բերել. հոլը միաժամանակ և՛ պտտվում է, և՛ կանգնած է, քանի որ ծայրով հենվում է նույն կետին: Ուրիշ բաներ էլ կան, որ շարժվում են պտույտներով և չեն փոխում իրենց տեղը, բայց մենք դրանք չենք հիշատակի, քանզի բոլոր այդ դեպքերում առարկաները մնում են իրենց տեղում և e չեն շարժվում նույն իմաստով, այլ կասենք, որ դրանք ուղիղ են կամ շրջանաձև: Ուղղաձիգ կանգնում են և ոչ մի կողմ չեն թեքվում, իսկ շրջագծով պտտվում են: Բայց շրջագծով պտտվող առարկաների մասին, երբ ուղիղ գիծը տեղաշարժվում է աջ կամ ձախ, առաջ կամ հետ, արդեն անհնար է ասել, թե դրանք դադարի մեջ են:

– Ճիշտ է:

– Հետևաբար, նշված բաները մեզ չեն շփոթեցնի և չեն տարհամոզի, իբրև թե որևէ առարկա, մնալով ինքը, կարող է
437 կրել կամ լինել իր նույնությանը հակադիր ինչ-որ բան:

– Ինձ չեն շփոթեցնի և չեն տարհամոզի:

– Բայց որպեսզի մենք ստիպված չլինենք անցնել այդպիսի հակասությունների միջով և երկար-բարակ ապացուցել դրանց սխալությունը, ընդունենք, որ այդ ամենն այդպես է, և առաջ շարժվենք՝ համաձայնության գալով, որ եթե երբևէ հայտնաբերենք ուրիշ ինչ-որ բան, այստեղից արված մեր բոլոր հետևությունները կմերժենք:

– Հարկ է այդպես վարվել:

b – Ի նշան հավանության գլխով անել կամ ժխտականորեն շարժել գլուխը, դեպի իրեն ձգել ինչ-որ բան և վանել այն՝ այս ամենը մի՞թե չես համարի իրար հակադիր բաներ կամ վիճակներ:

– Իհարկե, դրանք հակադիր են:

– Եվ ինչ, ծարավը, սովը և բոլոր այդպիսի տենչանքները, ինչպես, օրինակ, ցանկանալն ու կամենալը, մի՞թե չես դասի
c արդեն նշված տեսակին: Չե՞ս ասի, որ տենչացողի հոգին ձգտում է իր տենչանքի առարկային և իրեն է ձգում այն, ինչ տենչում է, որ գլխով է անում ինքը իրեն, ասես իրեն ինչ-որ հարց են տալիս, և փորձում է իրագործել իր տենչանքը:

– Իհարկե կասեմ:

– Իսկ չուզելը, չկամենալը և չտենչալը մի՞թե նույն տեսակից չեն, ինչ վանելը, հեռանալը և մնացյալ հակադիր բաները:

d – Ինչպե՞ս չէ:

– Եթե դա այդպես է, չե՞նք ասի արդյոք, որ գոյություն ունի տենչանքների ինչ-որ տեսակ և դրանցից ամենաուժեղները նրանք են, որոնք կոչում ենք ծարավ և սով:

– Կասենք:

– Ուրեմն մեկը կապված է խմելու, իսկ մյուսը ուտելու ցանկության հե՞տ:

– Այո:

– Քանի որ մեկը ծարավն է, չի՞ գոյանում արդյոք մարդու հոգու մեջ մեր նշածից բացի ուրիշ մի տենչանք: Այսինքն՝ ծարավը կլինի տա՞ք ըմպելիքի տենչանք, թե՞ սառը, շատի՞, թե՞ քչի, այլ կերպ ասած՝ չի՞ լինի արդյոք ըմպելիքի որոշակի որակի տենչանք: Եթե որևէ մեկը շոգում է, ծարավն աճում է, և նա ցանկանում է խմել պաղ ըմպելիք, իսկ եթե մրսում է՝ e
տաք: Եթե կան բազում ըմպելիքներ, ծարավն էլ բազմազան է դառնում. այդժամ ցանկանում են շատը: Իսկ եթե դա պարզապես ծարավ է, ցանկանում են քիչը: Բայց ինքը ծարավը երբեք այլ բան չէ, քան ըմպելիքի բնական տենչանք, իսկ սովը՝ ուտելիքի տենչանք:

– Այսպիսով, ամեն տենչանք միայն իր առարկայի բնական պահանջն է: Իսկ այս կամ այն տարբերակի տենչանքը արդեն կողմնակի ինչ-որ բան է:

– Բայց չլինի այնպես, որ ոմն, օգտվելով մեր անզգուշու- 438
թյունից, անակնկալի բերի մեզ, ասելով, թե ոչ ոք չի տենչում պարզապես ըմպելիք, այլ՝ լավ ըմպելիք, որ տենչում է ոչ թե պարզապես սնունդ, այլ՝ լավ սնունդ: Բոլորը տենչում են լավը: Եթե ծարավը տենչանք է, ապա պիտի լինի լավ ըմպելիքի տենչանք և կամ ուրիշ մի բանի, որ տենչանքի առարկա է: Այսպես նաև մնացյալ հարցերում:

– Դա կլիներ լուրջ առարկություն:

– Բայց միայն իրերի հարաբերականության առումով, այսինքն՝ քանի որ դրանք այդպիսին են ինչ-որ բանի հարաբե- b
ությամբ. մինչդեռ առանձին վերցրած՝ դրանք հարաբերվում են միայն իրենք իրենց հետ:

– Չհասկացա:

– Չհասկացար, որ առավել մեծը այդպիսին է ինչ-որ բանից առավել մեծ լինելու պատճառո՞վ:

– Իհարկե:

– Առավել փոքրի՞ց:

– Այո:

– Իսկ շատ ավելի մեծն այդպիսին է շատ ավելի փոքրի հարաբերությամբ, այդպես չէ՞:

– Այո:

– Եվ մի ժամանակ առավել մեծը՝ մի ժամանակ ավելի փոքրի՞ց, իսկ ապագայում ավելի մեծը՝ ապագայում ավելի փոքրի՞ց:

– Ինչպե՞ս չէ:

– Եվ բազումը այդպիսին է քչի հարաբերությամբ, իսկ կրկնակին՝ կեսի, և այլն, ինչպես, ասենք, ավելի ծանրը՝ ավե-
c լի թեթևի հարաբերությամբ, ավելի արագը՝ ավելի դանդաղի, տաքը՝ սառի, և այդպես շարունակ: Այդպես չէ՞:

– Իհարկե:

– Իսկ իմացությունների առնչությամբ մի՞թե նույնը չէ: Ինքը իմացությունը, ինչ իմացություն էլ վերցնենք, հարաբերվում է ճանաչողության առարկայի հետ. այն այդպիսին է, որովհետև հարաբերվում է այս կամ այն առարկայի հետ: Նկատի ունեմ հետևյալը. երբ առաջ եկավ տուն կառուցելու իմացությունը, վերջինս անջատվեց մյուս իմացություններից,
d այնպես որ դա կոչեցինք շինարարական արվեստ:

– Եվ ի՞նչ:

– Այդ իմացությունը տարբե՞ր է մյուսներից:

– Այո:

– Ինչպիսին որ առարկան է, այնպիսին էլ դառնում է նրա իմացությունը: Դա այդպես է բոլոր մյուս արվեստների և իմացությունների պարագայում:

– Այդպես է:

– Ուրեմն իմացիր, որ ես այն ժամանակ հենց սա նկատի ունեի, եթե հիմա հասկացար, թե ինչ է նշանակում որևէ հարաբերությամբ առարկաների այսպիսին կամ այնպիսին լինե-
e լը: Միայն իրենք իրենց հարաբերությամբ են նրանք նույնական, իսկ ուրիշների առնչությամբ հարաբերական են: Ես նկատի չունեմ, որ այնպիսին են, ինչպիսին որ այդ իրերն են, այսինքն՝ որ, օրինակ, առողջության և հիվանդության իմացու-

թյունը առողջ կամ հիվանդ է, իսկ բարիքի և չարիքի իմացությունը՝ բարի կամ չար: Իմացությունը չի դառնում իր առարկայի նման, այլ գործ ունի առարկայի որակի հետ՝ առողջության և հիվանդության որակների, ինչը և թույլ է տալիս, որ առաջ գա իմացությունը. սա իր հավելյալ որակի համար մենք կոչում ենք ոչ թե պարզապես իմացություն, այլ բժշկության արվեստ:

– Հասկացա, և ինձ թվում է, դա այդպես է:

– Իսկ ծարավը մի՞թե չես դասի այնպիսի բաների շարքում, որոնք այնպիսին են, ինչպիսին որ կան, մեկ ուրիշ բանի հարաբերությամբ: Այդպիսին չէ՞ արդյոք ծարավը: 439

– Այո, ըմպելիքի հարաբերությամբ:

– Ուրեմն որոշակի ըմպելիքի համապատասխանում է որոշակի ծարավ, իսկ ինքը ծարավը ո՛չ շատ, ո՛չ էլ քիչ, ո՛չ լավ, ո՛չ էլ վատ ըմպելիքի, մի խոսքով՝ որևէ որակի հետ կապված չէ: Ծարավն իր բնությամբ հարաբերվում է միայն ըմպելիքի b
հետ:

– Միանգամայն ճիշտ է:

– Ուրեմն ծարավ մարդու հոգին, քանի որ նա ծարավ է զգում, ուզում է ոչ այլ ինչ, եթե ոչ խմել, և դրան է միտված ու դրան է ձգտում:

– Ակնհայտ է:

– Եվ եթե ծարավ զգալով հանդերձ նրան ինչ-որ բան ետ է պահում [խմելուց], ուրեմն նա իր ծարավող մասից տարբեր ինչ-որ բան ունի իր մեջ, այն մասից, որը, ինչպես գազանին, նրան ստիպում է խմել: Մենք ասացինք, որ միևնույն իրը չի կարող միաժամանակ իր մի մասով հակադիր գործողություններ կատարել ինքն իր հարաբերությամբ:

– Ոչ:

– Այսպես, ճիշտ չէր լինի աղեղնավորի մասին ասել, որ նրա ձեռքերը ձգում են աղեղը միաժամանակ դեպի իրեն և հակառակ ուղղությամբ, այլ՝ որ մի ձեռքը ձգում է դեպի իրեն, իսկ մյուսը՝ հակառակ ուղղությամբ:

– Շատ ճիշտ է:

c – Կարո՞ղ ենք ասել, որ կան այնպիսի ծարավ մարդիկ, որոնք չեն ցանկանում խմել:

– Այն էլ շատերը և հաճախ:

– Եվ ի՞նչ կարելի է ասել նրանց մասին: Որ նրանց հոգում կա [խմել] հրահանգող ինչ-որ բան, բայց նաև այն, ինչը խո-

d չընդոտում է խմելուն, և դա հաղթում է խմել հրահանգողի՞ն:

– Կարծում եմ, այդպես է:

– Խոչընդոտողը գոյանում է,– եթե գոյանում է,– խորհրդածության շնորհիվ, իսկ դրան մղողն ու ստիպողը՝ տառապանքներից և հիվանդությունների՞ց:

– Ըստ երևույթին:

– Մենք արդարացիորեն կհամարենք այդ սկզբունքները երկակի և միմյանցից տարբեր. հոգում եղած խորհրդածելու կարողությունը կկոչենք բանական սկիզբ, իսկ այն մեկը, որի շնորհիվ մարդը սիրահարվում է, զգում է քաղց, ծարավ և ուրիշ տենչանքներ, կկոչենք ոչ բանական և տենչացող սկիզբ՝ ամեն տեսակ գոհացումների և վայելքների բարեկամ:

e – Այդպես մտածելը ոչ թե անհիմն է, այլ բնական:

– Թող ուրեմն մեր հոգում այդ երկու տեսակները լինեն սահմանազատված: Իսկ ցասումը, որի պատճառով մենք մոլեգնում ենք, արդյո՞ք մի երրորդ տեսակ է, թե՞ նախորդ երկուսի հետ ունի միևնույն բնությունը:

– Թերևս այն ազգակից է տենչացող տեսակին:

– Ես լսել եմ և հավատում եմ լսածիս, որ Ագլայոնի որդի Լեոնտիոսը, վերադառնալով Պիրևսից, նկատեց, որ հյուսիսային պատի մոտ, դահճի շուրջը, դիակներ են ընկած: Ուզեց

440 տեսնել այդ ամենը, բայց միաժամանակ գարշանք էր զգում, և շրջվեց: Սակայն որքան էլ պայքարում էր ու ծածկվում, տենչանքը հաղթեց, և լայն բացված աչքերով նա վազեց դեպի դիակներն ու բացականչեց. «Չարաբաստիկնե՛ր, հագեցե՛ք գեղեցիկ տեսարանով»[10]:

– Ես լսել եմ դրա մասին:

– Բայց այս պատմությունը ցույց է տալիս, որ ցասումը երբեմն պայքարի մեջ է տենչանքների հետ և, ուրեմն, նրանցից տարբեր է:

– Այո, ցույց է տալիս:

– Շատ ուրիշ դեպքերում էլ մենք նկատում ենք, որ երբ b
ոմն ի հեճուկս բանականության բռնության է ենթարկվում տենչանքների կողմից, կշտամբում է ինքն իրեն և բարկանում իր մեջ բույն դրած երկու սկզբունքների վրա, ցասումը դառնում է բանականության դաշնակից այդ գժտության մեջ, որն ասես երկու կողմերի պայքար է: Բայց որ ցասումը ընկերակցի տենչանքներին, երբ բանականությունը պատվիրում է ինչ-որ բան չանել, այդպիսի դեպք, կարծում եմ, չի պատահել ո՛չ քեզ, ո՛չ էլ ուրիշներին:

– Ոչ, Զևսը վկա:

– Արդ, եթե ոմն գիտակցում է, որ անարդարություն է գործել, ապա որքան ավելի է ազնիվ, այնքան ավելի քիչ կբար- c
կանա նրա վրա, ով, իր կարծիքով, իրավամբ դատապարտում է իրեն սովի, ցրտի և այլ տառապանքների: Ես նկատի ունեմ, որ նա չի բարկանա այդ մարդու վրա:

– Ճշմարիտ է:

– Իսկ երբ կարծում է, թե իր հետ անարդար են վարվել, բորբոքվում է, բարկանում ու դառնում իրեն արդար թվացող սկզբունքների դաշնակիցը, և նա պատրաստ է հանուն դրանց կրել սով, ցուրտ և նման այլ տառապանքներ, հաղթել ու
չհրաժարվել իր ազնիվ ձգտումներից, մինչև որ կհասնի իր d
ուզածին կամ կմեռնի, կամ էլ կհնազանդվի իր բանականության կանչին, ինչպես շներն են հնազանդվում հովվին:

– Միանգամայն ճիշտ ես ասում: Մեր պետության մեջ մենք պատվիրեցինք վերակացուներին ծառայել, ինչպես ծառայում են պահապան շները, իսկ կառավարիչներին՝ ինչպես ծառայում են հովիվները:

– Հրաշալի հասկացար, թե ինչ եմ ուզում ասել: Սակայն ուշադրություն դարձրու նաև հետևյալին:

e – Ինչի՞ն:

– Նրան, որ այժմ սրտոտությունը երևաց մեզ հակառակ տեսքով: Նախկինում մենք կարծում էինք, թե այն տենչացող բնության մաս է, իսկ հիմա՝ որ բնավ այդպես չէ, քանի որ հոգու մեջ տեղի ունեցող պայքարի ժամանակ ցասումը զենք է բարձրացնում հօգուտ բանական բնության:

– Իհարկե:

– Ուրեմն սրտոտությունը տարբերվու՞մ է բանական բնությունից, թե՞ դա սոսկ բանական սկզբունքի տեսակ է, այնպես որ հոգու մեջ գոյություն ունի լոկ երկու տեսակ՝ բանական և տենչացող: Թե՞ ինչպես որ պետության մեջ կա երեք խավ՝ գործարարների, վերակացուների և խորհրդականների, այդպես էլ հոգու մեջ կա երրորդ բնությունը՝ սրտոտությունը: Ի
441 բնե սա բանական մասի վերակացուն է, եթե խեղաթյուրված չէ վատ դաստիարակությամբ:

– Անհրաժեշտաբար պիտի լինի երրորդը:

– Այո, եթե միայն պարզվի, որ տարբեր է բանական մասից, ինչպես պարզվեց, որ տարբեր է տենչացող մասից: Դա դժվար չէ պարզել: Մանուկների վրա կարելի է տեսնել, որ ծնված իսկ պահից սրտոտ են, մինչդեռ բանականությանը, ինչպես ինձ է թվում, շատերը բոլորովին անհաղորդ են, և
b մեծամասնությունը հաղորդակից է դառնում շատ ուշ:

– Այո, Զևսը վկա, ճիշտ ես ասում: Կենդանիների վրա նույնպես կարելի է տեսնել, որ այնպես է, ինչպես դու ես ասում: Դեռ ավելին, դա է վկայում Հոմերոսի արդեն հիշատակված տողը.

Ոդիսևսը կուրծքն իր թակեց և իր սրտին այս խոսքն ասաց...[11]

c Այստեղ Հոմերոսը հստակ ասում է, որ մեր միջի երկու տարբեր սկզբունքներից մեկը, այն, որ հասկանում է, թե որն է ավելի լավը, իսկ որն՝ ավելի վատը, կշտամբում է ոչ բանական սրտոտ սկզբունքին:

– Միանգամայն իրավացի ես:

– Ուրեմն մենք թեև դժվարությամբ, բայց հաղթահարեցինք սա և ամբողջությամբ ընդունեցինք, որ պետության մեջ և յուրաքանչյուր առանձին մարդու հոգում կան միևնույն սկզբունքները և թվով դրանք հավասար են:

– Այդպես է:

– Ուրեմն պիտի անհրաժեշտաբար լինի նաև հետևյալը. այնպես, ինչպես որ իմաստուն է պետությունը, այնպես էլ իմաստուն է նաև առանձին մարդը:

– Ինչպե՞ս չէ:

– Եվ ինչում արի է առանձին մարդը, դրանում էլ արի կլինի պետությունը: Երկուսն էլ այդկերպ ունեն առաքինությանը d
վերաբերող ամեն բան:

– Անհրաժեշտաբար:

– Ես կարծում եմ, Գլավկոն, մենք կհաստատենք, որ առանձին մարդն արդար է այնպես, ինչպես արդար է պետությունը:

– Դա էլ անհրաժեշտաբար այդպես է:

– Բայց մենք չմոռացանք, որ պետությունն արդար է, եթե երեք խավերից յուրաքանչյուրն անում է իր գործը:

– Չմոռացանք:

– Ուրեմն պիտի հիշենք, որ մեզնից յուրաքանչյուրը կարող է լոկ այն ժամանակ արդար լինել և գործել, երբ գործում e
է մեր միջի մասերից յուրաքանչյուրը:

– Դա հարկ է լավ հիշել:

– Բանական բնությանը հատուկ է իշխելը, քանի որ նա իմաստուն է և հոգ է տանում ամբողջ հոգու համար, իսկ սրտոտ մասը պիտի ենթարկվի նրան և լինի նրա դաշնակիցը:

– Իհարկե:

– Եվ ինչպես ասացինք, մուսայական և մարմնամարզության արվեստների համադրությունը համահունչ կդարձնի այդ մասերը, կդարձնի նպատակասլաց, կկրթի գեղեցիկ խոսքերով ու գիտելիքներով, իսկ սրտոտ մասը կթուլացնի պատ- 442
մություններով, կհանգստացնի ներդաշնակությամբ ու ռիթմով:

– Շատ ճիշտ է:

– Այդպես դաստիարակված լինելով և ճշմարտապես հասկանալով իրենց նշանակությունը՝ երկու այդ սկզբունքները կղեկավարեն տենչացող մասը, իսկ սա ամեն մարդու հոգու ամենամեծ մասն է և իր բնությամբ շատ ընչաքաղց է: Պետք է հետևել, որ այն չաճի և չուժեղանա այսպես կոչված մարմ-
b նական հաճույքների պատճառով և այլևս չգործի՝ ստրկացնելով ու իրեն ենթարկելով իրեն ոչ ազգակիցը և խեղաթյուրելով կյանքին վերաբերող ամեն բան:

– Իհարկե:

– Այդ երկու մասերը լավագույն ձևով կպաշտպանեին ամբողջ հոգին և մարմինը արտաքին թշնամիներից: Մեկը կլիներ խորհրդատու, իսկ մյուսը՝ զինված ուժ: Մարմինը կհետևեր իշխող մասին և արիաբար կկատարեր նրա որոշումները:

– Եվ արի, կարծում եմ, մենք կկոչենք յուրաքանչյուր առանձին մարդուն հենց այն չափով, որով նրա սրտոտությու-
c նը ցավի ու հաճույքի մեջ կատարում է բանականության հրահանգները վտանգավորի և անվտանգի վերաբերյալ:

– Ճիշտ է:

– Իսկ իմաստուն կկոչենք այն փոքր չափով, որն իշխում և հրահանգում է՝ ունենալով այն բանի իմացությունը, ինչը պիտանի է յուրաքանչյուր մասին և երեք մասերին միասնաբար:

– Իհարկե:

– Չէ՞ որ այն խոհեմ է դրանց ընկերակցության և համահնչության շնորհիվ, երբ իշխող և իշխվող մասերը համակարծիք
d են, որ խոհեմ մասը պիտի իշխի և որ նրա դեմ չի կարելի ըմբոստանալ:

– Իրոք, խոհեմությունը, ինչպես պետության, այնպես էլ առանձին մարդու պարագայում, ոչ այլ ինչ է, եթե ոչ հենց դա:

– Բայց, ինչպես արդեն հաճախ ասել ենք, մարդն արդար կլինի հենց դրա շնորհիվ և այդկերպ:

– Անհրաժեշտաբար:

– Այդ դեպքում թերևս շատ աղոտ կերպով, բայց նշմար-

վում է, որ արդարությունն ուրիշ ինչ-որ բան է, և ոչ այն, ինչ գոյություն ունի պետության մեջ:

– Ինձ թվում է, ոչ:

– Եթե մեր հոգում դեռ կասկած կա, լրիվ կցրենք այն՝ դի- e
մելով առօրյա կյանքի օրինակներին:

– Ի՞նչ օրինակներ:

– Եթե հարկ լիներ համաձայնության գալ պետության և սրան ի բնե նման մարդու հարցում, որ ստացել է պատշաճ դաստիարակություն, ի՞նչ ես կարծում, եթե նրան ի պահ տա-
յինք ոսկի և արծաթ, կգողանա՞ր արդյոք: Կամ ու՞մ մտքով 443
կանցնի, թե նման բան ավելի շուտ կանի այդ մարդը, քան նրանք, ովքեր այդպիսին չեն:

– Ոչ ոքի:

– Չէ՞ որ նա զերծ է սրբապղծությունից, գողությունից և դավաճանությունից՝ լինի մասնավոր կյանքում, ընկերների միջավայրում կամ պետական ու հանրային կյանքում:

– Զերծ է:

– Եվ նա, իհարկե, չի դրժում երդումներն ու ամեն տեսակ համաձայնությունները:

– Անշուշտ:

– Եվ շնացումը, ծնողներին անարգելը, աստվածներին չմեծարելը կարող է հատուկ լինել ում ասես, բայց ոչ նրան:

– Այո, ում ասես:

– Այդ ամենի պատճառն այն է, որ նրանում առկա մասե- b
րից յուրաքանչյուրը գործում է կա՛մ որպես իշխող, կա՛մ որպես ենթարկվող:

– Այո, ուրիշ պատճառ չկա:

– Եվ դու դեռ փնտրում ես այլ արդարություն, ոչ այն ուժը, որը հենց այսպիսին է դարձնում մարդկանց և պետությունները՞ը:

– Զնսը վկա, չեմ փնտրում:

– Ուրեմն մեր երազն իրականացավ, և մենք միայն ենթադրություններ էինք անում: Սկսելով կառուցել պետությունը՝

c մենք ոմն աստծո օգնությամբ իսկույն մուտք գործեցինք արդարության սկզբունքի և տիպարի ոլորտ:

– Իսկապես:

– Ուրեմն, Գլավկոն, արդարության որոշակի պատկերն է,– ինչու և օգտակար է,– այն պնդումը, որ նրա համար, ով ի բնե օժտված է կոշկակարության ձիրքով, ճիշտ է զբաղվել կոշկակարությամբ և ուրիշ ոչնչով, հյուսնի ձիրքով օժտվածին՝ զբաղվել հյուսնի արվեստով, նույնը և մյուս դեպքերում:

– Ակնհայտ է:

– Իրոք, արդարությունը մեզ այդպիսին թվաց, բայց ոչ թե արտաքին գործունեության առումով, այլ իսկապես ներքին ազդեցության, այսինքն՝ ինքն իր և իր հատկությունների վրա

d ազդելու առումով, երբ մարդ թույլ չի տալիս իր հոգում եղած սկզբունքներից և ոչ մեկին հետևել արտաքին որևէ բանի կամ՝ որ այդ սկզբունքները խանգարեն միմյանց, այլ իրականում յուրաքանչյուր սկզբունքին ճշտորեն հատկացնում է իրեն համապատասխանը: Նման դեպքերում մարդը տիրապետում և կարգի է բերում իրեն, ներդաշնակեցնում է այդ երեք մասերը, ինչպես համահնչության երեք տոները՝ բարձրը, ցածրը և միջինը, նաև մյուս միջանկյալ տոները, եթե

e դրանք կան: Այս ամենը նա կապակցում է՝ բազմությունից վերածվելով միասնության, խոհեմության և ներդաշնակության: Այդպես է նա գործում ունեցվածք ձեռք բերելիս, իր մարմնին հետևելիս, պետական և մասնավոր համաձայնություններում: Բոլոր այս հարցերում նա արդար և գեղեցիկ է համարում ու կոչում այն գործը, որը նպաստում է այդ վիճակի պահպանմանը, իսկ իմաստություն կոչում ու համարում է այդ իմացության վերակացու լինելու կարողությունը: Անարդար է կոչում

444 զբաղմունքը, որը քայքայում է այդ ամենը, իսկ տգիտություն՝ կարծիքը, որն այդ ամենի վերակացուն է:

– Միանգամայն ճիշտ ես ասում, Սոկրատես:

– Լավ: Եթե հաստատում ենք, որ գտել ենք արդար մարդուն ու պետությունը և նրանցում հանդիպող արդարությու-

նը, ապա, կարծում եմ, մեզ չի թվա, թե ինչ-ինչ հարցերում շատ ենք սխալվել:

– Զնսը վկա, չի թվա:

– Ուրեմն հաստատենք դա:

– Հաստատենք:

– Թո՛ղ այդպես լինի: Դրանից հետո, կարծում եմ, հարկ է դիտարկել անարդարությունը:

– Պարզ է:

– Այն պետք է լինի հիշյալ երեք մասերի գժտության, փոխադարձ միջամտության, անհանգստության և ամբողջ հոգու դեմ որևէ մասի ըմբոստության մեջ, երբ այդ մասը հանիրավի ձգտում է իշխել ողջ հոգուն: Մինչդեռ անարդարության բնությունն այնպիսին է, որ նրան վայել է ստրկանալ իշխող մասին: Կարծում եմ, սա պիտի ասենք անարդարության մասին. վերջինս հոգու մասերի խռովությունն ու մոլորությունն է, սանձարձակությունն ու վախկոտությունը, տգիտությունն ու ամեն չարիքը: b

– Այդ բոլորը նույն բանն են: c

– Նշանակում է՝ միանգամայն պարզ է նաև այն, թե ինչ է անարդար վարվելը, չարիք գործելը և արդար վարվելը, քանզի արդեն պարզ դարձավ, թե ինչ են անարդարությունն ու արդարությունը:

– Բայց ինչպե՞ս:

– Արդարությունն ու անարդարությունը ոչնչով չեն տարբերվում առողջ և հիվանդ բաներից, միայն թե վերջինները գտնվում են մարմնի մեջ, իսկ առաջինները՝ հոգու:

– Ինչպե՞ս:

– Առողջ բաները առաջ են բերում առողջություն, իսկ հիվանդածին բաները՝ հիվանդություն:

– Այո:

– Այդպես էլ արդար բաները առաջ են բերում արդարություն, իսկ անարդարները՝ անարդարություն: d

– Անհրաժեշտաբար:

– Առաջ բերել առողջություն՝ նշանակում է իշխելու և ենթարկվելու բնական վիճակներ ստեղծել մարմնավոր բաների համար, մինչդեռ հիվանդությունը դրանց իշխելն ու ենթարկվելն է հակառակ բնությանը:

– Այդպես է:

– Այդ դեպքում հոգու մեջ արդարություն ներմուծել՝ նշանակում է այնտեղ հաստատել հոգևոր բաների իշխանության և հպատակության բնական հարաբերություններ, իսկ ներմուծել անարդարություն՝ նշանակում է հաստատել մի բանի իշխանությունը մյուսի նկատմամբ կամ մեկի հպատակությունը մյուսին բնությանը հակառակ:

– Ճշմարիտ է:

– Ուրեմն, ինչպես երևում է, առաքինությունը ինչ-որ առող-
e ջություն, գեղեցկություն և հոգու բարօրություն է, իսկ արատավորությունը՝ հիվանդություն, այլանդակություն և տկարություն:

– Այդպես է:

– Մի՞թե գեղեցիկ սովորությունները չեն, որ թույլ են տալիս ձեռք բերել առաքինություն, և մի՞թե վատ սովորությունները առաջ չեն բերում արատավորություն:

– Անհրաժեշտաբար:

– Թերևս մեզ մնաց քննել՝ նպատակահարմա՞ր է արդյոք գործել արդար, ունենալ գեղեցիկ սովորություններ և լինել արդար, անկախ նրանից, թե ինչպես կանենք դա՝ ծածուկ կամ
445 բացահայտ, և գործել հանցանքներ ու լինել անարդար, անգամ եթե դա մնա անպատիժ և անհատույց:

– Բայց ինձ թվում է, Սոկրատես, նման քննարկումն արդեն անտեղի է. եթե մարմնավոր բնության վնասվածության պատճառով մարդու կյանքը կյանք չէ, անգամ կերակրի ու խմիչքի առատության պայմաններում, երբ կա հարստություն և ամեն տեսակ իշխանություն, այդ դեպքում նրա կյանքը կլինի լրիվ անարժեք, քանզի խախտված և վնասված է հենց այն սկզբունքը, որի շնորհիվ մենք ապրում ենք: Եվ եթե նա անում
b է ուզած ամեն բան, բացի այն ամենից, ինչը կազատեր իրեն

արատավորությունից ու անարդարությունից և թույլ կտար գտնել արդարություն և առաքինություն: Դրանցից յուրաքանչյուրը մենք կարծես թե լավ քննեցինք:

– Այո, անտեղի կլիներ, բայց քանի որ մենք հասանք մի կետի, որտեղից ավելի հստակ է երևում, որ ամեն բան հենց այդպես է, այլևս չենք կարող ետ քաշվել:

– Զևսը վկա, ետ քաշվելը կլիներ վատագույնը:

– Իսկ հիմա արի տեսնենք, թե արատավորության քանի c
տեսակ գոյություն ունի: Կարծում եմ՝ արժե դա նկատի առնել:

– Հետևում եմ քեզ, խոսի՛ր:

– Ինձ թվում է, այստեղից, ասես դիտարկման աշտարակից, ուր բարձրացանք մեր զրույցի ընթացքում, երևում է առաքինության միայն մեկ տեսակ, մինչդեռ արատավորության տեսակներն անթիվ են: Դրանցից չորսն արժե հիշատակել:

– Ի՞նչ նկատի ունես:

– Որքան պետական կառույցի տեսակներն են, այնքան էլ, ըստ երևույթին, հոգու խառնվածքներն են:

– Իսկ որքա՞ն են դրանք:

– Պետական կառույցի տեսակները հինգն են. հինգն են d
նաև հոգու խառնվածքի տեսակները:

– Ասա՛, որո՞նք են:

– Ես պնդում եմ, որ պետական կառույցի այդպիսի տեսակներից մեկը կլինի այն, որն արդեն քննեցինք և որը, սակայն, կարելի է կոչել երկակի, այսինքն՝ եթե տիրակալներից մեկը գերազանցում է մյուսներին, նրա իշխանությունը կարելի է կոչել թագավորական, իսկ եթե տիրակալները մի քանիսն են՝ արիստոկրատական:

– Ճշմարիտ է:

– Հենց սա էլ կոչում եմ մի տեսակ: Անկախ նրանից՝ շատ են տիրակալները, թե միայն մեկն է, նրանք չեն խախտի պետության կարևոր օրենքները, այլ գործի կդնեն իրենց ստացած e
դաստիարակությունն ու կրթությունը, որի մասին խոսեցինք:

– Թերևս չեն խախտի:

ԳԻՐՔ ՅԻՆԳԵՐՈՐԴ

449 – Ես բարի և ճշմարիտ եմ կոչում այդպիսի պետությունը և պետական կառույցը, ինչպես նաև այդպիսի մարդուն, իսկ մնացյալը, եթե նման պետական կառույցը ճշմարիտ է ինչպես պետական կառավարման, այնպես էլ առանձին մարդկանց խառնվածքի առումով, կոչում եմ սխալ: Արատավոր պետությունը լինում է չորս տեսակի:

– Որո՞նք են դրանք,– հարցրեց Գլավկոնը[1]:

Ես մտադիր էի խոսել դրանց մասին այն հերթականությամբ, որով, ըստ իս, դրանք բխում են մեկը մյուսից: Սակայն
b Պոլեմարքոսը, որ նստած էր Ադիմանտոսից քիչ հեռու, երկարելով ձեռքը՝ բռնեց ուսին գցած նրա թիկնոցից, քաշեց դեպի իրեն և շշուկով ինչ-որ բան ասաց: Լսեցի միայն հետևյալը. «Բաց թողնե՞նք նրան, ինչպե՞ս վարվենք»:

– Ոչ մի դեպքում,– բարձրաձայն պատասխանեց Ադիմանտոսը:

Ես հարցրի.

– Այդ ի՞նչն է, որ այդպես բաց չեք թողնում:

– Քեզ,– պատասխանեց Ադիմանտոսը:

c – Ինչու՞ չեք ուզում ինձ բաց թողնել:

– Մեզ թվում է, որ դու, բախվելով դժվարության, ուզում ես խույս տալ զրույցի մի ամբողջ մասից և չքննել այն: Կարծում ես մոռացա՞նք՝ ինչ ասացիր կանանց և մանուկների մասին՝ թե բարեկամների մոտ դրանք ընդհանուր են[2]:

– Մի՞թե ճշմարիտ չէ, Ադիմանտոս:

– Այո, բայց այդ ճշմարիտը, ինչպես և մնացյալի դեպքում, պարզաբանման կարիք ունի: Ինչպե՞ս է կայանում այդ ընդհանրությունը: Չէ՞ որ եղանակները կարող են շատ լինել: Նշիր, թե որը նկատի ունես: Արդեն երկար ժամանակ է, ինչ սպասում ենք, որ դու կխոսես զավակածնության մասին, այս- d
ինքն՝ թե ինչպես պիտի ծնեն իրենց զավակներին, իսկ ծնելուց հետո՝ ինչպես պիտի դաստիարակեն, և առհասարակ կխոսես կանանց և զավակների քո նշած ընդհանրության մասին: Մեր կարծիքով, այդ ամենի ճիշտ ընթացքը շատ կարևոր է պետական կառույցի համար: Իսկ դու անցար ուրիշ պետական կառույցի քննության՝ կիսատ թողնելով այս մեկը: Մինչդեռ լսել էիր մեր որոշումը, թե չպիտի առաջ շարժվենք
այնքան ժամանակ, քանի դեռ մյուս հարցերի պես չես քննել 450
սա:

– Իմացեք, որ ես նույնպես այդ որոշումը ընդունածների թվում եմ:

– Իհարկե, Սոկրատես,– ասաց Թրասիմաքոսը,– համարիր, որ բոլորս ենք ընդունել այդ որոշումը:

– Այս ի՞նչ եք անում,– գոչեցի ես,– որոշել եք ինձ պահել և ստիպել, որ պետական կառույցի երկարագույն քննությունը սկսեմ նորի՞ց: Իսկ ես արդեն ուրախացել էի, թե ավարտել եմ, և դուք բավարարված եք իմ փաստարկներով: Դուք չգիտեք անգամ, թե ձեր այդ պահանջով քննության ինչ մեծ մեղվաբույն եք արթնացնում: Մինչդեռ ի սկզբանե տեսնելով այդ
վտանգը՝ ես ամեն կերպ փորձում էի խուսափել հարցերի b
նման առատությունից:

– Ինչ է,– պատասխանեց Թրասիմաքոսը,– քեզ թվում է, մենք այստեղ եկել ենք զառ խաղալու՞, թե՞ զրույց լսելու:

– Այո, բայց զրույցը պիտի չափ ճանաչի:

– Այդպիսի զրույցի համար, Սոկրատե՛ս,– ասաց Գլավկոնը,– խելամիտ մարդկանց պարագայում չափ կարող է լինել
ողջ կյանքը: Բայց մենք չենք խնդիրը: Պարզապես մի՛ համա- c

րիր մեծ հոգս և պարզաբանիր այն, ինչի մասին հարցնում ենք: Ի՞նչ բան է զավակների և կանանց ընդհանրությունը մեր պահապանների մոտ, ինչպե՞ս պետք է դաստիարակել մանուկներին նրանց ծննդից մինչև կրթության տարիքը, մի շրջանում, որ ամենադժվարն է համարվում: Փորձիր ցույց տալ, թե ինչպես է այդ ամենը տեղի ունենում:

– Դա հեշտ քննություն չէ, սիրելի՛ս: Այստեղ անհավանականն ավելի շատ է, քան մինչ այժմ քննված հարցերում: Եթե ասենք, որ դա հնարավոր է անել, չեն հավատա, իսկ եթե
d իրականանա էլ, չեն հավատա, թե դա է լավագույնը: Ահա ինչու վախ կա դիպչելու այդ հարցերին, վախ, որ մեր քննությունը, սիրելի՛ բարեկամս, կվերածվի բարեմաղթանքի:

– Մի՛ վախեցիր: Քո ունկնդիրները ո՛չ տգետներ են, ո՛չ անհավատներ, ո՛չ էլ թշնամաբար են տրամադրված:

Եվ ես ասացի.

– Սիրելի՛ս, գուցե այդ ամենն ասում ես պարզապես ինձ սիրտ տալու համա՞ր:

– Այո:

– Կստանաս լրիվ հակառակ արդյունքը: Եթե ես հավատայի ինքս ինձ և իմանայի, թե ինչ եմ ասում, քո խրախուսանքը
e տեղին կլիներ: Ճշմարտությունն իմացողը խոհեմ ու սիրելի մարդկանց ներկայությամբ կարևոր ու սիրելի հարցերի շուրջ խոսում է հանգիստ և առանց վախի: Բայց երբ խոսքիդ մեջ անվստահ ես և խարխափող, ինչպես ես, դա ահավոր է ու սարսափելի: Այդպիսի վախը երեխայություն կլիներ ոչ ծիծաղելի թվալու պատճառով. սասանելով ճշմարտությունը՝ ես ինքս կընկնեմ և իմ ետևից կտանեմ նաև բարեկամներիս, ընդ որում դա վերաբերում է այնպիսի հարցերի, որոնցում բնավ չի կարելի խարխափել: Ես ոգեկոչում եմ Ադրաստեային[3], Գլավկո՛ն, որպեսզի կարողանամ ասել այն, ինչ մտադիր եմ:
451 Հուսով եմ, որ ակամա մարդասպանը պակաս մեղավոր է նրանից, ով ստում է գեղեցիկին, բարուն, արդարին և օրինականին վերաբերող հարցերում: Այդպիսի վտանգի ավելի

լավ է ենթարկվել թշնամիների, քան բարեկամների մեջ, այնպես որ ինձ մի՛ սրտապնդիր:

Գլավկոնը ծիծաղելով ասաց. b

– Բայց, Սոկրատես, եթե քո բացատրության արդյունքում մեզ հետ որևէ վատ բան պատահի, մենք կներենք քեզ, ինչպես ներում են ակամա մարդասպանին, ասես դու անմեղ ես և չես խաբում մեզ: Խոսի՛ր համարձակ:

– Նման դեպքերում անմեղ է նա, ով ներվել է: Այդպիսին է օրենքը: Եվ եթե այնտեղ դա այդպես է, ապա այստեղ ևս այդպես է:

– Խոսի՛ր այդ իրավունքով:

– Հարկավոր է վերադառնալ զրույցի սկզբին: Ճիշտ կլիներ ամեն բան քննել հերթականությամբ: Այս պահին տեղին է վարվել այսպես. տղամարդկանց զբաղմունքը սահմանելուց c հետո սահմանել կանանց զբաղմունքը, մանավանդ որ դու էլ խորհուրդ ես տալիս դա: Մարդիկ, որոնք դաստիարակված են մեր նշած սկզբունքներով, ճիշտ կերպով զավակներ և կանայք ունենալու համար, իմ կարծիքով, չունեն ուրիշ եղանակ, բացի նրանից, որ ցույց տվեցինք սկզբում: Մեր զրույցի ընթացքում փորձեցինք հոտի պահապաններ կարգել տղամարդկանց:

– Այո:

– Փորձենք նաև կանանց տալ համանման ծնունդ ու դաս- d տիարակություն և տեսնենք՝ հարմար է սա մեզ, թե ոչ:

– Ինչպե՞ս:

– Այսպես: Կարծու՞մ ենք արդյոք, որ պահապան շների էգերը պետք է պահպանեն այն, ինչ պահպանում են արու շները, որս անեն և նրանց հետ համատեղ կատարեն նաև մնացյալը, թե՞ ունակ չեն դրան, քանի որ ծագեր են ծնում, սնում նրանց և հետևաբար պիտի հետևեն տանը, մինչդեռ արու շները հետևում են հոտին:

– Այդ ամենը պիտի անեն համատեղ: Սակայն էգերը ավելի e թույլ են արուներից:

– Իսկ հնարավո՞ր է, որ ինչ-ինչ կենդանի էակներ կատարեն նույնը՝ չստանալով միևնույն դաստիարակությունն ու կրթությունը:

– Ոչ:

– Այդ դեպքում, եթե մենք պիտի կանանցից պահանջենք նույնը, ինչ տղամարդկանցից, ուրեմն նաև նույնը պիտի սովորեցնենք նրանց:

– Այո:

452 – Բայց չէ՞ որ տղամարդկանց մենք պատվիրեցինք զբաղվել մուսայական արվեստով և մարմնամարզությամբ:

– Այո:

– Այդ դեպքում կանանց նույնպես պիտի պատվիրենք զբաղվել դրանցով և ռազմական արվեստով ու նաև նույնը պահանջենք նրանցից:

– Թերևս, քո ասածից դա է բխում:

– Գուցե մեր նշած շատ բան սովորույթներին դեմ լինելու պատճառով զավեշտ թվա, եթե կատարվի այնպես, ինչպես նկարագրում ենք:

– Իհարկե:

– Եվ ի՞նչն է քո կարծիքով ամենից զավեշտալին: Ակնհայտորեն այն, որ մերկ կանայք պալեստրաներում պիտի
b մարզվեն տղամարդկանց հետ, ընդ որում ոչ միայն երիտասարդները, այլև տարեցները, ճիշտ այն ծերունիների նման, որոնք, չնայած կնճռոտ ու տհաճ տեսքին, սիրով մարզվում են գիմնասիոններում:

– Զնսը վկա, առնվազն մեր օրերում դա զավեշտալի կլիներ:

– Քանի որ սկսեցինք խոսել, պետք չէ վախենալ սրամիտների կատակներից, որքան և ինչպես էլ ծիծաղեն մեր նորամուծությունների վրա. նկատի ունեմ կանանց գիմնասիոնները, մուսայական արվեստները և, իհարկե ոչ վերջին տեղում,
c զենքից օգտվելու հմտությունն ու ձիարշավը:

– Ճիշտ ես ասում:

– Բայց քանի որ սկսեցինք խոսել, պետք է դուրս գալ օրեն-

քի խստության դեմ, իսկ սրամիտներին խնդրել չկատակել և հիշել, որ այնքան էլ հեռու չէ ժամանակը, երբ հույների, ինչպես այժմ շատ բարբարոսների մոտ ամոթալի և ծիծաղելի էր համարվում, որ տղամարդիկ մերկ երևան, և որ երբ կրետացիք առաջինը հիմնեցին գիմնասիոններ, իսկ հետո նաև լակեդեմոնացիք[4], սրամիտները կատակելու շատ առիթներ ունեցան: d
Թե՞ այդպես չէ:

– Այդպես է:

– Բայց երբ գործնականում պարզ դարձավ, որ ավելի հարմար է մարզվել առանց հագուստի, քան հագուստով, այդ բանը դադարեց նրանց աչքին զավեշտական երևալուց, քանի որ առողջ բանականությունն ասում էր, որ այդպես ավելի ճիշտ է: Դա ցույց տվեց, որ տգետը նա է, ով զավեշտալի է համարում չարիքից տարբեր մի բան: Երբ ուզում է ինչ-որ երևույթ ծաղրել, տեսնում է զավեշտականը այլ բանի մեջ, e
բայց ոչ հիմարության ու արատի: Իսկ երբ գործ ունի գեղեցիկի հետ, դարձյալ նկատում է այլ բան, և ոչ բարիքը:

– Միանգամայն ճիշտ է:

– Այստեղ նախ պետք է համաձայնության գալ, հնարավոր լինի դա, թե ոչ, և լուծել հետևյալ վեճը (կատակով կամ լրջորեն,– ով ինչպես ցանկանա)՝ կարո՞ղ է արդյոք մարդկային ցե- 453
ղի կանացի բնությունը մասնակցել տղամարդկանց բոլոր գործերին, թե՞ ոչ մեկում էլ չի կարող. կամ գուցե ինչ-որ բան կարող է անել, իսկ մեկ ուրիշ բան՝ ոչ: Նույնը նաև ռազմական արվեստի պարագայում: Մի՞թե ավելի լավ չէ սկսել հենց այսպես, որպեսզի կարողանանք նաև լավագույնս ամփոփել:

– Իհարկե:

– Իսկ կուզե՞ս՝ ուրիշների փոխարեն մենք ինքներս վիճենք, որպեսզի հակառակորդների առարկությունները չմնան առանց պաշտպանության:

– Ոչ մի խոչընդոտ չեմ տեսնում: b

– Մենք նրանց փոխարեն կասենք այսպես. «Սոկրատե՛ս և Գլավկո՛ն, ձեզ պետք չեն ուրիշների առարկությունները: Դուք

ինքներդ ձեր պետությունը հիմնելիս հենց սկզբից համաձայնվեցիք, որ յուրաքանչյուր ոք պիտի կատարի իր գործը՝ ըստ իր բնության»:

– Կարծում եմ, համաձայնվեցինք: Ինչպե՞ս չէ:

– «Իսկ կանայք մի՞թե լիովին տարբեր չեն տղամարդկանցից»:

– Իհարկե տարբեր են:

– «Ուրեմն նրանց պետք է նշանակել ուրիշ գործ, որը կհամապատասխանի իրենց բնությանը»:

c – Եվ ի՞նչ:

– «Մի՞թե դուք հիմա չեք սխալվում և մի՞թե չեք հակաճառում ինքներդ ձեզ՝ ասելով, որ տղամարդիկ և կանայք պիտի զբաղվեն նույն գործերով, թեև իրենց բնությունը լիովին տարբեր է»: Դե, սիրելիս, ինչպե՞ս կպաշտպանվես այս առարկությունից:

– Այսպես մի շնչով դա դժվար է անել: Բայց ես կխնդրեմ քեզ, արդեն խնդրում եմ, ասել ամեն հնարավորը ի պաշտպանություն մեր փաստարկների:

d – Սա և շատ ուրիշ հարցեր, Գլավկոն, ես արդեն վաղուց կանխատեսել եմ, ահա ինչու վախեցել և վարանել եմ դիպչել օրենքին, որն առնչվում է կնության առնելուն և զավակների դաստիարակությանը:

– Ձևը վկա, ինչպես երևում է, դա հեշտ չէ:

– Իհարկե ոչ: Սակայն բանն այսպես է. եթե ոմն ընկել է փոքր լողավազանի մեջ կամ հայտնվել է մեծ ծովի մեջտեղում, ստիպված է լողալ:

– Իհարկե:

– Մենք էլ պիտի լողանք և փորձենք դուրս գալ մեր այս քննությունից՝ հուսալով, որ մեզ կօգնի ինչ-որ դելֆին կամ կփրկվենք անհայտ մի եղանակով:

e – Թերևս:

– Ուրեմն փնտրենք ելքը: Մենք համաձայնվեցինք, որ տարբեր բնությունները տալիս են տարբեր զբաղմունքներ, իսկ

տղամարդկանց և կանանց բնությունը տարբեր է: Բայց հիմա ասում ենք, որ տարբեր բնություն ունենալով՝ մարդիկ նույնպես կարող են անել նույնը: Չէ՞ որ մեզ մեղադրում են հենց սրանում:

– Անշուշտ:

– Մեծ է, Գլավկոն, վիճաբանության արվեստի ուժը: 454

– Ինչպե՞ս:

– Իմ կարծիքով, շատերն են ակամա զբաղվում դրանով և մտածում են, թե չեն վիճում, այլ զրուցում են: Նրանք չեն կարողանում դիտարկել խնդրո առարկան՝ տարբերակելով ըստ տեսակների, այլ կառչում են սոսկ բառերից, որոնք ասել է հակառակորդը, և ոչ թե զրուցում են, այլ վեճի մեջ փորձում են հաղթել միմյանց: Այս կիրքը հատուկ է շատերին:

– Բայց մի՞թե հիմա այն տարածվել է նաև մեզ վրա:

– Ամբողջությամբ, քանի որ մենք ակամա բախվեցինք այդ- b
պիսի հակասության:

– Ինչպե՞ս:

– Մենք արիաբար պնդեցինք, որ եթե մարդկանց բնությունը նույնական չէ, զբաղմունքներն էլ պիտի միանգամայն տարբեր լինեն: Վեճի պատճառ դարձան անունները. չէ՞ որ չքննեցինք՝ որոնք են բնական տարբերության և նույնության տեսակները, և չսահմանեցինք, թե որին է ձգտում դրանցից յուրաքանչյուրը, երբ տարաբնույթ մարդկանց նշանակեցինք տարբեր, իսկ նույնաբնույթ մարդկանց՝ նույնական զբաղմունքներ:

– Իրոք, չենք դիտարկել:

– Ինչպես երևում է, հիմա մենք կարող ենք հարցնել ինք- c
ներս մեզ՝ նույնակա՞ն է արդյոք մազոտ և ճաղատ մարդկանց բնությունը, թե՞ ոչ: Համաձայնելով, որ հակադիր է, հարցնենք՝ եթե ճաղատները կոշկակարություն են անում, պե՞տք է արդյոք անեն նաև մազոտները, կամ եթե կոշկակարություն են անում մազոտները, պե՞տք է անեն նաև ճաղատները:

– Ցիծաղելի է:

– Բայց ծիծաղելի է մեկ այլ պատճառով, ոչ այն, որը գործում էր, երբ սահմանեցինք տղամարդկանց և կանանց բնության նմանությունն ու տարբերությունը ոչ թե ընդհանուր առ-
d մամբ, այլ պաշտպանելով միայն այն տարբերությունն ու նմանությունը, որ կապված է նրանց զբաղմունքի հետ: Օրինակ, որ բժիշկը և նա, ով բժիշկ է միայն հոգով, ունեն նույն բնությունը: Թե՞ այդպես չես կարծում:

– Այո:

– Սակայն բժշկի և հյուսնի բնությունները տարբե՞ր են:

– Իհարկե:

– Արդ, եթե արական և իգական սեռի մեջ որևէ արվեստի կամ զբաղմունքի իմաստով բացահայտվի որևէ տարբերություն, մենք կասենք, որ դրանից ելնելով էլ պիտի որոշվի նրանց զբաղմունքը, իսկ եթե պարզվի, որ իգական սեռը միայն ծնում է, իսկ արականը՝ բեղմնավորում, կասենք, որ դա
e ամենևին չի ապացուցում նրանց տարբերությունը ասվածի հարաբերությամբ: Մենք միայն կկարծենք, որ մեր պահապանները և իրենց կանայք պիտի զբաղվեն նույն գործով:

– Եվ դա ճիշտ է:

– Հետևաբար, սրանից հետո հակառակը պնդողին կխնդրենք սովորեցնել մեզ, թե պետական կառույցին վերաբերող
455 որ արվեստի կամ զբաղմունքի հարաբերությամբ է կնոջ և տղամարդու բնությունը ոչ նույնական, այլ տարբեր:

– Եվ իրավացիորեն:

– Իհարկե, ինչպես ասացիր քիչ առաջ, և գուցե մեկ ուրիշն էլ կասի, որ [նման առարկությանը] հեշտ չէ պատասխանել մի շնչով, սակայն խորհրդածելուց հետո դա բնավ դժվար չէ:

– Այո, գուցե ասի:

– Կուզե՞ս խնդրենք այդպես առարկողին, որ հետևի մեզ և
b պարզի՝ կարո՞ղ ենք արդյոք ապացուցել իրեն, որ պետական կառույցին առնչվող զբաղմունքներում կինը առանձնահատկություններ չունի:

– Իհարկե:

– Այդ դեպքում,– կասենք նրան,– պատասխանի՛ր: Դու ասում էիր. «Մեկը ծնվել է որևէ հակումով, իսկ մյուսը զուրկ է այդ հակումից: Մեկը արվեստ է սովորում հեշտությամբ, իսկ մյուսը՝ դժվարությամբ, մեկը կարճատև ուսումից հետո իր սովորածի մեջ դառնում է շատ հնարամիտ, իսկ մյուսը երկարատև ուսումից և փորձառությունից հետո էլ չի մտապահում իր սովորածը: Մեկի դեպքում մարմնավոր տվյալները նպաստում են մտավոր ունակությունների զարգացմանը, իսկ մյուսի մոտ՝ խանգարում»: Թերևս այդպես սահմանեցիր ի բնե ինչ-որ գործի նկատմամբ հակում ունեցողներին և նրանց, ովքեր հակում չունեն այդ գործի հանդեպ: c

– Ոչ ոք չի ասի, որ այդպես չէ:

– Իսկ քեզ հայտնի՞ է մարդկային որևէ զբաղմունք, որի մեջ տղամարդիկ չեն գերազանցում կանանց: Երկարացնե՞նք մեր զրույցը՝ խոսելով այն մասին, թե ինչպես են կանայք դերձակություն անում, թխում և ապուր եփում, չէ՞ որ այդ գործերում նրանք հմուտ են համարվում, և ամենից զավեշտալին այն է, երբ կինը նաև այստեղ է ծախողվում: d

– Դու իրավացի ես. իգական սեռն ըստ էության զիջում է արական սեռին: Սակայն շատ կանայք բազմաթիվ հարցերում ավելի լավն են շատ ու շատ տղամարդկանցից, թեպետ ընդհանուր առմամբ այնպես է, ինչպես դու ես ասում:

– Ուրեմն, բարեկամս, պետություն կառուցողները չեն կարող կնոջը որևէ գործ հանձնարարել լոկ այն պատճառով, որ կին է, կամ տղամարդուն՝ որ տղամարդ է: Միանման բնությունները կենդանի էակների երկու սեռերի մոտ էլ կարող են հանդիպել: Եվ իրենց բնությամբ կինը և տղամարդը կարող են զբաղվել բոլոր գործերով, թեև կինը թույլ է տղամարդուց:

– Իրոք:

– Մի՞թե ամեն բան պիտի հանձնենք տղամարդկանց, իսկ կանանց՝ ոչինչ:

– Ինչպե՞ս թե: e

– Կարծում եմ, կասենք, որ ի բնե որոշ կանայք բժշկու-

1915.info

թյան հակում ունեն, իսկ որոշ կանայք՝ ոչ, ոմանք՝ մուսայական արվեստի հակում, իսկ ոմանք՝ ոչ:

– Եվ ի՞նչ:

456 – Մի՞թե որոշ կանայք հակված չեն մարմնամարզությանն ու ռազմական արվեստին, իսկ որոշ կանայք ռազմատենչ չեն և չեն սիրում մարմնամարզություն:

– Կարծում եմ, այո:

– Եվ ինչ, մի՞թե կանանցից ոմանք չունեն փիլիսոփայության հակում, իսկ ոմանք՝ ոչ: Ոմանք սրտոտ են, իսկ ոմանք՝ ոչ:

– Այդպես է:

– Ուրեմն կան կանայք, որոնք կարող են լինել պահապաններ, բայց կան նաև այնպիսիք, որոնք չեն կարող: Տղամարդկանցից նույնպես պահապաններ ընտրեցինք նրանց, ովքեր ի բնե հակված են դրան:

– Այո, ընտրեցինք հակում ունեցողներին:

– Ուրեմն պետությունը պաշտպանելու համար և՛ տղամարդկանց, և՛ կանանց բնական հակումները նույնն են, միայն թե կանանց մոտ դրանք ավելի թույլ են, իսկ տղամարդկանց մոտ՝ ավելի ուժեղ:

– Երևում է, այդպես է:

b – Հետևաբար այդպիսի տղամարդկանց համար պետք է ընտրել համապատասխան կանանց, որպեսզի նրանք ապրեն համատեղ և համատեղ պաշտպանեն պետությունը, եթե կարող են դա անել և իրենց բնությամբ ազգակից են պահապաններին:

– Իհարկե:

– Իսկ բնությամբ նմաններին պետք է վստահել նու՞յն զբաղմունքը:

– Նույնը:

– Այդ դեպքում մենք վերադարձանք նույն կետին և համաձայն ենք, որ պահապանների կանանց մուսայական արվեստով և մարմնամարզությամբ զբաղվել թույլ տալը դեմ չէ նրանց բնությանը:

– Բոլորովին:

– Ուրեմն մեր օրենքները անհնարին և ցնորամիտ չէին, c
եթե մենք կարողացանք հաստատել դրանք ըստ բնության: Բնությանն ավելի շատ հակասում է այն, ինչը տեղի ունի ներկայում:

– Թերևս:

– Բայց մեր խնդիրն էր պարզել՝ հնարավո՞ր են մեր օրենքները և լավագու՞յնն են արդյոք:

– Անշուշտ:

– Եվ մենք համաձայնվեցինք, որ հնարավոր են:

– Այո:

– Այժմ պետք է համաձայնվենք, որ դրանք լավագույնն են:

– Պարզ է:

– Որպեսզի կինը դառնա պահապան, նրա դաստիարակությունը չպիտի տարբեր լինի տղամարդու դաստիարակությունից, չէ՞ որ նրանց բնությունը նույնն է: d

– Այո, չպիտի տարբեր լինի:

– Իսկ ի՞նչ ես կարծում հետևյալի մասին:

– Ինչի՞:

– Չե՞ս նկատել, որ մի մարդ լավն է, իսկ մեկ ուրիշը՝ հոռի: Թե՞ բոլորին նույնն ես համարում:

– Բնավ:

– Իսկ մեր կառուցած պետության մեջ, ինչ ես կարծում, ովքեր են ավելի լավը՝ պահապանե՞րը, որոնք ստացել են մեր նշած դաստիարակությունը, թե՞ կոշկակարություն սովորած կոշկակարները:

– Ծիծաղելի հարց է:

– Հասկանում եմ: Եվ ինչ, մի՞թե մեր պահապանները չեն քաղաքացիներից լավագույնները:

– Իհարկե: e

– Այդ դեպքում մի՞թե այդպիսի կանայք չեն լինի կանանցից լավագույնները:

– Այո, իհարկե:

– Իսկ պետության համար ի՞նչն է ավելի լավ, եթե ոչ լավագույն կանանց և տղամարդկանց ներկայությունը:

– Ոչինչ:

– Իսկ դա հնարավոր են դարձնում մուսայական արվեստն ու մարմնամարզությունը, որոնք գործի են դրվում մեր ասածի համաձայն:

457 – Անշուշտ:

– Ուրեմն մեր օրենքները ոչ միայն հնարավոր են, այլև լավագույնն են պետության համար:

– Այդպես է:

– Այդ դեպքում պահապանների կանայք թող ազատվեն հագուստից, քանի որ դրա փոխարեն պիտի առաքինության թիկնոց կրեն, մասնակցեն պատերազմին, պետությունը պաշտպանելու այլ միջոցառումներին և ուրիշ ոչինչ չանեն: Սակայն բոլոր այս հարցերում կանանց, քանի որ սրանք ավելի թույլ են, պետք է հանձնարարել ավելի թեթև գործեր, քան
b տղամարդկանց: Իսկ այն տղամարդիկ, որոնք ծիծաղում են մերկ կանանց վրա, որ մերկացել են հանուն լավագույնի, «կքաղեն իմաստնության խակ պտուղը»[5] և ըստ էության չեն իմանա՝ ինչի վրա և ինչու են ծիծաղում: Բայց չէ՞ որ հրաշալի են ասում և դեռ կասեն, որ օգտակարը գեղեցիկ է, իսկ վնասակարը՝ ամոթալի:

– Լիովին:

– Կանանց վերաբերող օրենքի մասին խոսելիս մենք, թերևս, խույս տանք ալիքից, որպեսզի այն չծածկի մեզ, երբ մենք
c փորձենք համաձայնության գալ այն հարցի շուրջ, թե ինչով պիտի պահապան տղամարդիկ և կանայք զբաղվեն համատեղ: Բացի այդ, մենք կպարզենք, որ դա հնարավոր է և օգտակար:

– Իհարկե, դու կփրկվես մեծ ալիքից:

– Բայց դու այս ամենը մանրուք կհամարես, երբ տեսնես, թե հետո ինչ է գալիս:

– Խոսի՛ր, դեռ կտեսնենք:

– Սրան և նախորդ օրենքներին հետևում է սա...

– Ի՞նչը:

– Այս տղամարդկանց բոլոր կանայք պիտի լինեն ընդհա- d
նուր, իսկ նրանցից ոչ ոք թող առանձին ոչ ոքի հետ չկենակ-
ցի: Զավակները նույնպես թող ընդհանուր լինեն և թող ո՛չ
ծնողն իմանա, թե ով է իր զավակը, ո՛չ էլ զավակը՝ թե ով է իր
ծնողը:

– Այս օրենքն առաջ կբերի ավելի մեծ անվստահություն,
քան նախորդը: Այս մեկն ավելի անհիրագործելի է ու պակաս
օգտակար:

– Չեմ կարծում, որ օգտակարությունը կվիճարկվի, այս-
ինքն՝ որ կլինեն այնպիսիք, ովքեր կասեն, թե ընդհանուր կա-
նայք և, եթե իհարկե դա հնարավոր է, զավակները մեծագույն
բարիք չեն: Իսկ ահա դրա հնարավորությունը բազում վեճեր
կծնի:

– Երկուսն էլ բազում վեճեր կհարուցեն:

– Դու ասում ես, որ այստեղ անհրաժեշտ է փաստարկների
համադրություն: Իսկ ես կարծում էի, թե կխուսափեմ դրանցից e
մեկից, եթե օգտակարության հարցում դու համաձայն ես: Ինձ
կմնար խոսել լոկ դրա հնարավորության կամ անհնարինու-
թյան մասին:

– Չես խուսափի և չես փախչի: Խոսիր երկուսի մասին էլ:

– Ուրեմն, պետք է կրեմ պատիժս: Միայն թե գթասիրտ
եղիր և թույլ տուր ինձ համար տոն սարքեմ, ինչպես մեկուսի
զբոսանքների ժամանակ իրենք իրենց համար անում են պա- 458
րապ մարդիկ: Նրանք դեռ չեն գտել այն եղանակը, որով կի-
րագործվի իրենց տենչանքը: Սակայն շրջանցելով դա, որ-
պեսզի չտանջվեն հնարավորության կամ անհնարինության
մտքից, ենթադրում են, թե իրենց տենչանքի առարկան արդեն
գոյություն ունի, և լուծում են մնացած հարցերը՝ ուրախու-
թյամբ կանխագուշակելով, թե ինչ պիտի անեն, երբ այդ կա-
տարվի իրականում: Նրանց բացարձակապես պարապ հոգին
դառնում է ավելի պարապ: Ես ինքս էլ ենթարկվում եմ այդ b

գայթակղությանը՝ ցանկանալով մի կողմ դնել և ավելի ուշ քննել այս ամենի հնարավորության հարցը, իսկ հիմա, ենթադրելով, որ դա հնարավոր է, քո թույլտվությամբ կդիտարկեմ, թե ինչպես են հրահանգներ տալիս կառավարիչները, և ցույց կտամ, որ դա ամենից օգտակարն է և՛ պետության, և՛ պահապանների համար: Հենց սա կփորձեմ նախ դիտարկել քեզ հետ, իսկ այնուհետև մյուս հարցը, եթե թույլ տաս:

– Թույլ եմ տալիս: Քննի՛ր:

– Կարծում եմ, եթե կառավարիչները արժանի լինեն իրենց
c անվանը և նմանապես նաև օգնականները, այս վերջինները ցանկություն կունենան կատարել հրահանգները, իսկ առաջինները հրահանգել՝ մասամբ ենթարկվելով օրենքներին, մասամբ էլ նմանակելով այն, ինչ կպատվիրենք մենք:

– Թերևս:

– Արդ, դու նրանց օրենսդիրն ես և ինչպես որ ընտրեցիր տղամարդկանց, հնարավորին չափ ընտրիր ու իրենց հանձնիր նաև բնությամբ համանման կանանց: Նրանց կացարաններն ու ճաշատեղին կլինեն ընդհանուր, և նրանցից ոչ ոք մասնավոր ունեցվածքի տեր չի լինի: Քանի որ կհանդիպեն և
d կշփվեն գիմնասիոններում և կստանան նույն կրթությունը, նրանք, կարծում եմ, անհրաժեշտաբար, ի բնե հակում կունենան միանալու իրար: Թե՞, ըստ քեզ, դա անխուսափելի չէ:

– Սա ոչ թե երկրաչափական, այլ սիրային անհրաժեշտություն է, որը գուցե ավելի խորն է համոզում և իր ետևից տանում պետության ժողովրդին[6]:

– Եվ այն էլ ինչպես: Բացի այդ, Գլավկոն, բարեկեցիկ պե-
e տության մեջ սրբապղծություն կլիներ թույլ տալ խառնակություն և ուրիշ նման բաներ: Տիրակալները դա թույլ չեն տա:

– Այո, որովհետև դա արդար չէր լինի:

– Ակնհայտ է, որ հետագայում մենք կհաստատենք ամուսնություններ և կփորձենք այնպես անել, որ դրանք ըստ կարելվույն բարեպաշտ լինեն: Իսկ բարեպաշտ կլինեն ամենաօգտակար ամուսնությունները:

– Իհարկե:

– Բայց ինչո՞վ կլինեն ամենաօգտակարը: Ասա ինձ հետևյալը, Գլավկոն: Քո տանը ես տեսնում եմ ինչպես որսաշներ, այնպես էլ ազնվացեղ թռչուններ: Արդ, հանուն Զևսի, հետևե՞լ ես արդյոք դրանց զուգավորումներին և բազմացմանը: 459

– Այդ ինչպե՞ս:

– Նախ, թեպետ դրանք բոլորն էլ ազնվացեղ են, մի՞թե դրանցից չեն ծնվում այնպիսիք, որոնք մյուսներից ավելի լավն են:

– Ծնվում են:

– Դու բազմացնում ես բոլորին հավասարապե՞ս, թե՞ ձգտում ես ավելի շատ բազմացնել լավագույններին:

– Բազմացնել լավագույններին: b

– Եվ ինչ, որոնցի՞ց են ծնվում ավելի լավ ձագերը՝ երիտասարդների՞ց, ծերերի՞ց, թե՞ ծաղկունքի մեջ գտնվողներից:

– Ծաղկունքի մեջ գտնվողներից:

– Իսկ եթե այդպես չլինի, քո կարծիքով թռչունների և շների ցեղը շատ ավելի վա՞տը կդառնա:

– Շատ ավելի:

– Իսկ ձիերի և մյուս կենդանիների պարագայու՞մ: Թե՞ այստեղ այլ կերպ է:

– Դա տարօրինակ կլիներ:

– Ախ, իմ սիրելի՛ բարեկամ, ինչպիսի մեծ մարդիկ պիտի լինեն, ուրեմն, մեր տիրակալները, եթե մարդկային ցեղի դեպքում էլ ամեն բան այդպես է:

– Իրոք որ, այդպես է: Եվ ի՞նչ: c

– Այն, որ տիրակալները պետք է օգտագործեն բազում միջոցներ: Եթե մարմինը դեղերի կարիք չունի և մենք սիրով վարում ենք հատուկ կենսակերպ, բավական է նաև թույլ բժիշկը: Իսկ թե երբ օգտագործենք դեղերը՝ որոշում է ավելի խիզախ բժիշկը, և մենք դա գիտենք:

– Ճշմարիտ է: Բայց, ինչու՞ ես դա ասում:

– Ահա ինչու: Գուցե տիրակալները հօգուտ հպատակների

հաճախ ստիպված լինեն դիմել ստի ու խաբեության: Չէ՞ որ
d մենք արդեն ասացինք, որ նման բաները օգտակար են նաև
որպես դեղամիջոցներ:

– Եվ դա ճիշտ է:

– Դա վատ չի լինի ամուսնությունների և զավակածնության ժամանակ:

– Այդ ինչպե՞ս:

– Այն ամենից, ինչում մենք համաձայնեցինք, հետևում է, որ լավագույն տղամարդիկ և կանայք հիմնականում միանում են իրար հետ, իսկ առավել հոռի տղամարդիկ՝ հոռի կանանց հետ, և որ լավագույն տղամարդկանց և կանանց սերունդը
e հարկ է դաստիարակել, իսկ հոռիների սերունդը՝ ոչ, եթե մեր սակավաթիվ հոտը պիտի լինի ընտիր: Բայց որ դա այդպես է արվում, չպիտի իմանա ոչ ոք, բացի հենց տիրակալներից, որպեսզի պահապանների շարքերում գժտության տեղիք չտա:

– Շատ ճիշտ է:

– Պետք է օրենքով հաստատել որոշ տոնակատարություններ, որոնց ընթացքում պիտի իրար հանդիպեն հարսնացուներն ու փեսացուները, պետք է կատարվեն զոհաբերություններ և մենք պիտի մեր բանաստեղծներին պատվիրենք ամուսնությանը պատշաճող հիմներգեր: Իսկ ամուսնությունների քանակը թող որոշեն տիրակալները, որպեսզի հնարավորինս պահեն տղամարդկանց միևնույն քանակը, և պետությունը ո՛չ մեծանա, ո՛չ էլ նվազի, չէ՞ որ լինում են պատերազմներ, հիվանդություններ և ուրիշ նման բաներ:

– Ճիշտ է:

– Իսկ քվեարկությունը պետք է անցկացնել այնպես, որ ամուսնական ամեն միության համար հոռիները մեղադրեն ճակատագրիը, և ոչ թե իշխանավորներին:

– Այո, պետք է այդպես անել:

b – Իսկ պատերազմներում կամ մեկ ուրիշ որևէ բանում աչքի ընկած երիտասարդներին պետք է հանձնել մրցանակներ

և տալ կանանց հետ միանալու ավելի մեծ հնարավորություն, որպեսզի հնարավորինս շատ զավակներ ծնեն:

– Ճիշտ է:

– Ծնվող սերունդն անցնում է պաշտոնյաների տրամադրության տակ՝ կանանց կամ տղամարդկանց, քանզի երկուսն էլ կարող են հավասարապես պաշտոնավարել:

– Այո:

– Լավ ծնողների զավակներին կտանեն մսուր՝ ստնտուների մոտ, որոնք կբնակվեն քաղաքի առանձին ինչ-որ մասում: Իսկ առավել վատ ծնողներից սերած զավակներին կամ մարմնավոր արատներ ունեցողներին կթաքցնեն, ինչպես և հարկն է, դժվարահաս և գաղտնի տեղում: c

– Այո, եթե ցանկանում ենք, որ պահապանների խավը մաքուր լինի:

– Պահապանները կհոգան նաև զավակների սննդի մասին: Մայրերին, որոնց կրծքերը լիքն են, կբերեն մսուր, բայց ամեն կերպ կփորձեն այնպես անել, որ նրանցից և ոչ մեկը չճանաչի իր զավակին: Եթե մոր կաթը չբավարարի, կբերեն ուրիշներին՝ առատ կաթ ունեցողներին, և կհոգան, որ նրանք կերակրեն ճիշտ ժամանակին, իսկ գիշերային անքնությունն ու այլ դժվար գործերը կմնան դայակներին և ստնտուներին: d

– Շատ ես հեշտացնում պահապանների կանանց գործը՝ կապված զավակների խնամքի հետ:

– Այդպես է պետք: Շարունակենք քննել այն, ինչ մտադրվել ենք: Մենք ասացինք, որ սերունդը պիտի ծնվի ծաղկուն տարիքի ծնողներից:

– Ճշմարիտ է: e

– Իսկ քեզ չի՞ թվում, որ կնոջ համար ծաղկունքի ճիշտ տարիքը քսան տարին է, իսկ տղամարդու համար՝ երեսունը:

– Կինը թող սկսի պետության համար զավակներ ծնել քսան տարեկանից մինչև քառասունը: Իսկ տղամարդիկ՝ այն բանից հետո, երբ անցնի վազքի համար լավագույն տարիքը:

Այդ ժամանակվանից սկսած թող զավակներ ծնեն մինչև հիսունհինգ դառնալը[7]:

461 – Երկուսի դեպքում էլ դա մարմնի ու հոգու ծաղկման տարիքն է:

– Իսկ եթե նրանցից մեկը ավելի երիտասարդ կամ ավելի տարեց է և որոշում է մասնակցել զավակածնության ընդհանուր գործին, մենք այդ սխալը չենք համարի ո՛չ բարեպաշտ, ո՛չ էլ արդար, որովհետև նա կպարգևի պետությանը մի զավակ, որը, եթե դա գաղտնի մնա, չի բեղմնավորվի զոհաբերությունների և աղոթքների ուղեկցությամբ, երբ յուրաքանչյուր ամուսնության ընթացքում քրմուհիներն ու քրմերը, ինչպես նաև ամբողջ պետությունը աղոթում են, որպեսզի առաքինի և պիտանի մարդկանց սերունդը է՛լ ավելի լավ ու պի-
b տանի լինի, այլ կծնվի խավարում իբև ահավոր սանձարձակության պտուղ:

– Ճիշտ է:

– Նույն օրենքը թող գործի նաև այն ժամանակ, երբ սերող տղամարդկանցից որևէ մեկը մերձենա թեև հասուն տարիքի կնոջը, բայց առանց կառավարչի թույլտվության: Մենք կասենք, որ այդ տղամարդը պետությանը տվել է ապօրինի զավակ՝ արտամուսնական և օրհնությունից զուրկ:

– Շատ ճիշտ է:

– Իսկ երբ կանայք և տղամարդիկ դուրս գան զավակածնության տարիքից, մենք թույլ կտանք տղամարդկանց ազատ կենակցել ում հետ ցանկանան՝ բացառելով դստերը,
c մորը, դստեր դստերը և մոր կողմից ավագ ազգականուհիներին: Իսկ կանանց՝ բոլորի հետ, բացի որդիներից, հորից և հոր կրտսեր և ավագ ազգականներից: Բայց թույլ տալով այս ամենը՝ մենք ցանկանում ենք, որ նրանք այնպես անեն, որ ոչ մի պտուղ լույս աշխարհ չգա, իսկ եթե այնպես պատահի, որ նա ծնվի, ապա անեն այնպես, որ ստիպված չլինեն մեծացնել նրան:

– Դու ճիշտ ես ասում: Բայց ինչպե՞ս իմանան, թե ով է ում

հայրը, դուստրը և ազգականը, այնպես, ինչպես դու նշեցիր: d

– Ոչ մի կերպ: Յուրաքանչյուր ոք իր զավակը կհամարի նրան, ով կծնվի իր ամուսնության տասներորդ կամ յոթերորդ ամսում, կկոչի նրանց զավակներ, իսկ սրանք իրեն հայր կկոչեն: Իր այդ զավակների զավակներին նա կկոչի իր զավակների զավակներ, իսկ ինքը և իր կինը կկոչվեն պապ և տատ, իսկ այդ ընթացքում ծնողների սերած բոլոր զավակներին կկոչեն քույրեր ու եղբայրներ: Այնպես որ մեր ասածի համաձայն նրանք չեն կարող մերձենալ միմյանց: Քույրերից և եղբայրներից օրենքը թույլ կտա միանալ միայն նրանց, որոնց դա բաժին կընկնի քվեարկությամբ և կհաստատվի պյութիայի e
կողմից[8]:

– Շատ ճիշտ է:

– Այսպիսին է, Գլավկոն, կանանց և զավակների ընդհանրությունը մեր պետության պահապանների մոտ: Իսկ որ դա բխում է մեր պետական կառույցի բնույթից և լավագույնն է դրա համար, կապացուցվի հաջորդ խորհրդածության ժամանակ: Թե՞ այլ կերպ վարվենք:

– Զնսը վկա, հենց այդպես: 462

– Ուրեմն մեր համաձայնության սկիզբը հետևյալն է. մենք կհարցնենք ինքներս մեզ, թե ինչը կարող ենք կոչել բարձրագույն բարիք պետության համար, այսինքն՝ թե ինչի համար է օրենսդիրը օրենքներ սահմանում և ինչն ենք համարում մեծագույն չարիք: Այնուհետև մենք կքննենք՝ չի՞ կրում արդյոք իր վրա բարիքի հետքեր այն ամենը, ինչը մենք քննեցինք, և չի՞ համապատասխանում չարիքին:

– Դա ամենակարևորն է:

– Կա՞ պետության համար ավելի մեծ չարիք, քան այն մեկը, որ առաջ է բերում պառակտում և քայքայում է միաբա- b
նությունը: Եվ կա՞ արդյոք ավելի մեծ բարիք, քան այն, ինչը համախմբում և միասնական է դարձնում պետությունը:

– Չկա:

– Իսկ կարո՞ղ է միաբանություն առաջ բերել հաճույքի և

1915.info

ցավի ընդհանրությունը, երբ գրեթե բոլոր քաղաքացիները ուրախանում և ցավում են որևէ բանի առաջացման կամ կործանման առիթով:

– Միանգամայն:

– Իսկ այդպիսի զգացումների առաջ բերած մեկուսացումը քայքայում է պետությունը, քանի որ պետության և քաղաքա-
c ցիների վիճակը ոմանց չափազանց վշտացնում է, իսկ մյուսներին՝ ուրախացնում:

– Այն էլ ինչպես:

– Իսկ մի՞թե դա չի պատահում այնպիսի արտահայտությունների պատճառով, ինչպիսիք են «սա իմն է» կամ «սա իմը չէ»: Ի դեպ, նույնն է նաև «սա ուրիշինն է» արտահայտության դեպքում:

– Ճիշտ է:

– Իսկ այնտեղ, ուր պետության քաղաքացիների մեծ մասը նույնն է ասում նույնի մասին՝ «դա իմն է» կամ «դա իմը չէ», պետությունը կառուցված է լավագույն ձևով:

– Իհարկե:

– Այդպես է նաև պետության մեջ, որն ամենից մոտ է առանձին մարդուն. օրինակ՝ երբ մեզնից ինչ-որ մեկը ցավեցնում է մատը, ողջ մարմինը, ասես միասնական շարասյուն, մղվում է դեպի հոգին, և քանի որ այդ շարքը ենթարկված է հոգում իշխող սկզբունքին, հոգին դա զգում է և ցավակցում վիրավոր մատին: Այդժամ մենք ասում ենք, որ այդ մարդու
d մատը ցավում է: Նույնը կարելի է ասել նաև մարդու այլ զգացումների մասին՝ տառապանքի, երբ նրա որևէ մաս հիվանդ է, և հաճույքի, երբ նա կազդուրվում է:

– Այո, նույնը: Եվ հենց դա է այն, ինչի մասին դու հարցնում էիր: Սրան առավել մոտենում է այն պետությունը, որը կառուցված է լավագույն ձևով:

– Երբ նշված պետության քաղաքացիներից որևէ մեկը բարիք կամ չարիք է կրում, պետությունը, իմ կարծիքով, անհրաժեշտաբար կասի, որ այդ ամենը կրում է հենց ինքը, և

ամբողջությամբ հաղորդակից կլինի այդ քաղաքացու ուրա- e
խությանը կամ տառապանքին:

– Դա անխուսափելի է, եթե պետության մեջ լավ օրենքներ են:

– Ժամանակն է վերադառնալ մեր պետությանը և պարզել, թե արդյոք նրա կամ մեկ ուրիշ պետության մեջ են գերազանցապես իրագործվում մեր քննության հետևությունները:

– Այո, հարկ է այդպես անել:

– Եվ ի՞նչ: Եթե բոլոր մնացյալ պետություններում կան 463
տիրակալներ և ժողովուրդ, դրանք կան նաև մե՞ր պետության մեջ:

– Կան:

– Եվ նրանք բոլորը կոչում են միմյանց քաղաքացիներ՞:

– Իհարկե:

– Իսկ «քաղաքացիներ» ասելուց բացի, ուրիշ ինչպե՞ս է ժողովուրդը կոչում իր իշխանավորներին մյուս պետություններում:

– Շատ պետություններում «տերեր», իսկ դեմոկրատական պետություններում՝ «կառավարիչներ»:

– Իսկ մե՞ր պետության ժողովուրդը: «Քաղաքացիներ» ասելուց բացի, ուրիշ ի՞նչ կերպ կկոչի կառավարիչներին:

– «Փրկիչներ» և «վերակացուներ»: b

– Իսկ նրանք ինչպե՞ս կկոչեն ժողովրդին:

– «Հարկատուներ» և «սնողներ»:

– Իսկ ուրիշ պետություններում ինչպե՞ս են տիրակալները կոչում ժողովրդին:

– Ստրուկներ:

– Իսկ տիրակալները միմյա՞նց:

– Համատիրակալներ:

– Իսկ մեզ մո՞տ:

– Համապահապաններ:

– Կարո՞ղ ես ասել, որ ուրիշ պետություններում տիրակալներից ինչ-որ մեկը համատիրակալներից որևէ մեկին

դիմում է ինչպես մերձավորի, իսկ մյուսին՝ ինչպես օտարի:

– Դա պատահում է շատ հաճախ:

c – Մերձավորին նա համարում է իրենը և այդպես է կոչում, իսկ օտարին իրենը չի՞ համարում:

– Այդպես է:

– Իսկ քո պահապանների մոտ ինչպե՞ս է: Կա՞ նրանց մեջ այնպիսին, որն իր պահապաններից մեկին համարում և կոչում է օտար:

– Ոչ մի դեպքում: Բոլորին էլ, ում հանդիպի, նա համարում է եղբայր, քույր, հայր, մայր, որդի, դուստր, նրանց զավակներ կամ պապեր:

– Շատ լավ: Բայց ասա նաև հետևյալը. նրանց համար օրենք կսահմանես, որ այդ ազգակցական հարաբերություն-
d ները պահպանեն միայն անվանապե՞ս, թե՞ նաև գործեն համապատասխան ձևով: Հայրերի հանդեպ լինեն բարեպաշտ ու հոգատար, ինչպես որ հարիր է զավակին լինել իր ծնողի նկատմամբ, և չստացվի այնպես, որ չտեսնեն բարիք մարդկանցից ու աստվածներից, քանի որ ամբարշտություն և անարդարություն են գործել: Ըստ քեզ՝ մանուկներին նշանակված հայրերի կամ մյուս ազգականների մասին ա՞յս խոսքերը պիտի լսեն բոլոր քաղաքացիներից անգամ ամենափոքր մանուկները:

e – Հենց այդ: Քանզի զավեշտական կլիներ և ազգականների անունները դատարկ հնչյուն կմնային, եթե չհաստատվեին գործնականում:

– Ուրեմն բոլոր պետություններից միայն այդ պետության մեջ բարձր և ասես միաձայն կհնչեր հետևյալ արտահայտությունը. «Իմ գործերը լավ են» կամ «իմ գործերը վատ են», անգամ եթե դա վերաբերեր մեկ քաղաքացու:

– Շատ ճիշտ է:

464 – Բայց մենք ասացինք, որ այդպիսի համոզմունքների և արտահայտությունների հետ են կապված նաև ընդհանուր ուրախությունն ու տառապանքը:

– Եվ ճիշտ ասացինք:

– Հետևաբար մեր քաղաքացիների մոտ ամեն բան կլինի ընդհանուր, հատկապես եթե նրանք կոչեն դա «իմը»: Ընդհանուր դարձնելով ամեն ինչ՝ նրանք կունենան նաև ընդհանուր ուրախություն և տառապանք:

– Իհարկե:

– Դա՞ չէ արդյոք պատճառը, որ պահապանների կանայք և զավակներն ընդհանուր են:

– Հիմնականում այո:

– Բայց չէ՞ որ մենք համաձայնվեցինք, որ պետության համար սա մեծագույն բարիք է, քանի որ բարգավաճ պետությունը նմանեցրինք մարմնին, որի ուրախությունն ու տառապանքը կախված են մասերի վիճակից: b

– Եվ ճիշտ համաձայնվեցինք:

– Ուրեմն պետության մեջ մեծագույն բարիքի պատճառ է վերակացուների կանանց և զավակների ընդհանրությունը:

– Իհարկե:

– Սա համընկնում է մեր նախորդ պնդումների հետ: Չէ՞ որ մենք ասացինք, որ նրանք չպիտի ունենան ո՛չ սեփական տներ, ո՛չ հող, ո՛չ էլ ուրիշ ունեցվածք, այլ իրենց սնունդը պետք է ստանան ուրիշներից որպես վճար պաշտպանության c դիմաց և ամեն բանից օգտվեն համատեղ, եթե, իհարկե, իսկական պահապաններ են:

– Ճիշտ է:

– Արդ, ես պնդում եմ, որ նախկինում մեր ասածը և հատկապես այն, ինչ հիմա ենք ասում, նրանց կդարձնի ճշմարիտ պահապաններ և կօգնի, որ նրանք չհոշոտեն պետությունը. սա պատահում է, երբ մարդիկ իրենցն են համարում ոչ թե միևնույն բանը, այլ՝ յուրաքանչյուրն ուրիշը: Մեկը տուն է բերում այն ամենը, ինչ կարող է ձեռք բերել, առանց հաշվի նստելու ուրիշների հետ, մյուսն էլ այդպես է վարվում արդեն իր տան մեջ: Կանայք և զավակները, լինելով մասնավոր, առաջ են բերում մասնավոր ուրախություն ու տրտմություն: d

Բայց եթե բոլորն ունեն նույն համոզմունքը, թե ինչը պետք է համարել սեփական, նրանք ունենում են տխրության և ուրախության համանման զգացումներ:

– Իհարկե:

– Եվ ի՞նչ: Դատական գործերն ու փոխադարձ մեղադրանքները մի՞թե չեն վերանա նրանց մոտ, ըստ էության՝ որովհետև նրանք չեն ունենա ոչ մի սեփականություն, բացի իրենց մարմնից: Մնացած ամեն ինչ ընդհանուր է: Ահա ինչու նրանք հակված չեն լինի գժտությունների, որոնք այդքան հաճախ ծագում
e են ունեցվածքի, զավակների և ազգականների պատճառով:

– Անհրաժեշտաբար չեն լինի:

– Եվ հիմքեր չեն ունենա դատական գործեր հարուցելու բռնությունների և վիրավորանքների առիթով: Մենք կասենք նրանց, որ հասակակիցների մեջ ինքնապաշտպանությունը համարվում է գեղեցիկ և արդար գործ և կպատվիրենք հոգ տանել իրենց մարմինների մասին:

465 – Ճիշտ է:

– Այդ օրենքի մեջ ճիշտ է նաև հետևյալը. եթե ինչ-որ մեկը գժտվի մեկ ուրիշի հետ, այդ գժտության մեջ կբավարարի իր ցասումը, բայց չի ուռճացնի վեճը:

– Իհարկե:

– Ավագներին կպատվիրենք իշխել երիտասարդների վրա և պատիժներ սահմանել:

– Պարզ է:

– Իսկ երիտասարդը, եթե իհարկե դա չեն պատվիրում տիրակալները, երբեք չի էլ փորձի այդպիսի բան անել, երբեք չի բռնանա կամ ձեռք չի բարձրացնի տարեցի վրա և, կարծում եմ, ոչ էլ կվիրավորի նրան: Երիտասարդին կխանգարի
b երկու պահապան՝ վախը և բարեպաշտությունը: Բարեպաշտությունը արգելում է դիպչել ծնողներին, իսկ վախը ստիպում է մտածել, որ վիրավորվածին կօգնեն կա՛մ իր որդիները, կա՛մ եղբայրները, կա՛մ հայրերը:

– Թերևս այդպես է:

– Այդ օրենքների շնորհիվ նրանք բոլոր իմաստներով խաղաղության մեջ կապրեն միմյանց հետ:

– Իհարկե:

– Քանի որ չի լինի որևէ գժտություն, հարկ չկա վախենալու, որ նրանց հետ կարող է գժտվել պետության մյուս մասը և առաջ կգան ներքին բախումներ: c

– Ոչ:

– Ես անգամ դժվարանում եմ խոսել այն բազմաթիվ անանշան չարիքների մասին, որոնցից նրանք կազատվեն, օրինակ՝ աղքատների շողոքորթությունը հարուստներին, զավակների դաստիարակության դժվարություններն ու խնդիրները, ընտանիքի անհրաժեշտ կարիքները հոգալու ծախսերը, երբ պարտք են վերցնում կամ մերժում ուրիշներին, զանազան դժվարություններով ձեռք են բերում դրամը և պահ տալիս կանանց ու տնեցիներին և նրանց հանձնում բոլոր նման հոգսերը: Պարզ է, բարեկամս, որ այս ամենը հոգս է, սակայն չարժե խոսել չնչին բաների մասին: d

– Այո, կույրին էլ պարզ է:

– Ազատվելով այս ամենից՝ մեր պահապանները կապրեն երանավետ կյանքով՝ ավելի՛ երանելի, քան օլիմպիական մրցույթներում հաղթածները[9]:

– Ի՞նչ առումով:

– Նրանք երջանիկ են, թեև ունեն շատ փոքր մասն այն ամենի, ինչ կունենան մեր պահապանները: Չէ՞ որ պահապանների հաղթանակն ավելի գեղեցիկ է, իսկ հասարակական օժանդակությունն առավել լիարժեք: Նրանց հաղթանակը ողջ պետության փրկությունն է, իսկ նրանք և նրանց զավակները ստանում են ինչպես սնունդ, այնպես էլ կյանքի համար անհրաժեշտ մնացյալ ամեն բան: Արժանի պարգևներ պետությունից նրանք կստանան դեռ կյանքի օրոք, իսկ մահից հետո e պատվով կթաղվեն:

– Հրաշալի է:

– Իսկ հիշու՞մ ես, քիչ առաջ, մեր զրույցի չեմ հիշում որ

հատվածում մեզ առարկեցին, թե մենք մեր պահապաններին
466 երջանիկ չենք դարձնում, որովհետև թեպետ կարող են ձեռք գցել քաղաքացիների ողջ ունեցվածքը, նրանք ոչինչ չունեն: Այդժամ մենք ասացինք, որ եթե այդպիսի հարց ծագի, իսկույն կքննենք դա, իսկ հիմա դեռ հարկ է պահապաններին իրոք պահապան դարձնել, իսկ պետությունը՝ հնարավորինս բարգավաճ, սակայն ոչ մեկ խավի համար:

– Հիշում եմ:

– Դե ինչ, եթե մեր վերակացուների կյանքը շատ ավելի գեղեցիկ ու լավն է, քան օլիմպիական հաղթողներինը, կարո՞ղ է այն նման լինել կոշկակարների, արհեստավորների կամ հողագործների կյանքին:

b – Կարծում եմ, չի կարող:

– Բայց մենք նախկինում էլ ասացինք և հիմա էլ արժե կրկնել, որ եթե պահապանը չփորձի երջանիկ լինել մնալով պահապան և չբավարարվի այդպիսի չափավոր, ապահով և, ինչպես ասացինք, լավագույն կյանքով, այլ երջանկության մասին անմիտ ու մանկական կարծիք կազմի, որը կմղի նրան բռնի յուրացնել պետության ողջ ունեցվածքը, կհասկանա, որ
c Հեսիոդոսն իսկապես իմաստուն էր, երբ ասում էր, թե որոշ առումով «կեսը ամբողջից մեծ է»[10]:

– Եթե այդպիսի պահապանը հետևեր խորհրդիս, կվարեր մեր նշած կյանքը:

– Ուրեմն դու ընդունում ես այդ տղամարդկանց մոտ կանանց ընդհանրությունը, որի մասին խոսեցինք, և ընդունում ես այն ամենը, ինչ ասացինք մանուկների, նրանց դաստիարակության և մյուս քաղաքացիների պաշտպանության մասին, թե՝ որտեղ են լինում կանայք պատերազմի ժամանակ՝ մնում են քաղաքում, թե գնում են պատերազմի և տղամարդկանց հետ պաշտպանություն են իրականացնում, համատեղ որս անում,
d ինչպես շները, և ուժերը ներածին չափ մասնակցում ամեն բանի: Այդպես գործելով անում են լավագույնը, և դա չի հակասում արուների և էգերի փոխհարաբերության բնությանը:

– Համաձայն եմ:

– Մնում է քննել՝ արդյո՞ք մարդկանց պարագայում էլ հնարավոր է իրագործել ուրիշ կենդանի էակների մոտ գործող ընդհանրությունը և եթե հնարավոր է, ապա ինչպես:

– Դու կանխեցիր ինձ և ասացիր այն, ինչ պատրաստվում էի ասել:

– Ինչ վերաբերում է պատերազմին, կարծում եմ, պարզ է, e
թե ինչպես են պատերազմում կանայք:

– Ինչպե՞ս:

– Նրանք արշավանքների կմասնակցեն տղամարդկանց հետ միասին, իսկ մանուկներից պատերազմի կտանեն նրանց, ովքեր հասուն են, որպեսզի, ինչպես մյուս արվեստների վարպետների դեպքում է, նրանք էլ ուսումնասիրեն գործը, որի մեջ, տարիք առնելով, պիտի վարպետանան: Դիտելուց զատ պիտի նաև ծառայեն և օգնեն հոգ տանել հայրերի և մայրերի մասին: Չե՞ս նկատել դա տարբեր արվեստ- 467
ներում, օրինակ՝ բրուտների զավակների դեպքում, որոնք երկար ժամանակ ծառայում և դիտում են, մինչև որ իրենք էլ կզբաղվեն բրուտագործությամբ:

– Իհարկե նկատել եմ:

– Իսկ մի՞թե բրուտները պիտի ավելի հիմնավոր ձևով սովորեցնեն իրենց զավակներին, քան մեր պահապանները, երբ փորձի և դիտարկման միջոցով ցույց են տալիս, թե ինչ պետք է անել:

– Դա ծիծաղելի կլիներ:

– Բացի այդ, ամեն կենդանի էակ հատկապես ռազմաշունչ է, երբ կողքին իր զավակն է:

– Այդպես է, Սոկրատես: Բայց մեծ վտանգ կա, որ պարտության դեպքում,– իսկ պատերազմում դա էլ է պատահում, – նրանք իրենց հետ միասին կկործանեն նաև զավակներին, և պետությունը չի կարողանա վերականգնել դա:

– Ճշմարիտ ես ասում: Բայց կարծում ես, որ նախ պետք է b
պաշտպանե՞լ նրանց վտանգներից:

– Բնավ:

– Եվ ինչ, եթե պիտի վտանգի ենթարկեն, ապա մի՞թե ոչ այն պայմանով, որ հաջողության դեպքում նրանք կդառնան ավելի լավը:

c – Պարզ է, որ կդառնան:

– Իսկ, քո կարծիքով, դա կարևոր չէ՞ և չարժե՞ վտանգի ենթարկվել, որպեսզի մանուկները, որոնք պիտի զինվորներ դառնան, մանկուց դիտեն պատերազմը:

– Դա կարևոր է նրա համար, ինչի մասին խոսում ես:

– Պետք է թույլ տալ մանուկներին դիտել ռազմական գործողությունները, բայց նաև ապահովել նրանց անվտանգությունը, և ամեն ինչ լավ կլինի: Այդպես չէ՞:

– Այո:

– Նախ՝ նրանց հայրերը չպիտի լինեն տգետներ, նրանք պետք է իմանան, թե որ արշավանքներն են վտանգավոր, իսկ որոնք՝ ոչ:

– Թերևս:

d – Որոշ արշավանքների ժամանակ նրանք կվերցնեն իրենց հետ զավակներին, իսկ մյուսների ժամանակ՝ ոչ:

– Ճիշտ է:

– Մանուկների վերակացուները նույնպես կլինեն արժանի մարդիկ, որոնց փորձն ու տարիքը բավական է առաջնորդ և մանկավարժ լինելու համար:

– Այո, դա ճիշտ է:

– Բայց մենք կասենք, որ հաճախ պատահում են տարբեր անակնկալներ:

– Այն էլ ինչքա՜ն:

– Այդ պատճառով, բարեկամս, պետք է մանկուց թև տալ

e նրանց, որպեսզի հարկ եղած դեպքում թռչեն ու փրկվեն:

– Ի՞նչ նկատի ունես:

– Դեռ մանկուց նրանց պետք է ձի նստեցնել, իսկ երբ սովորեն ձիավարել, վերցնել ռազմական գործողություններ դիտելու, բայց նրանց ձիերը պիտի լինեն ո՛չ սրտոտ, ո՛չ էլ ռազ-

մական, այլ ամենաարագավազները և ամենահնազանդները: Այդպես մանուկները լավագույնս կվարժվեն իրենց արվեստին և հարկ եղած դեպքում ապահով կնահանջեն՝ հետևելով ավագ վերակացուներին:

– Ինձ թվում է, ճիշտ ես ասում: 468

– Ուրեմն ի՞նչ կասենք պատերազմի մասին: Ինչպե՞ս կպահեն իրենց զինվորները միմյանց և թշնամու նկատմամբ: Արդյո՞ք ճիշտ եմ կարծում, որ...

– Ասա, ի՞նչ:

– Եթե նրանցից մեկը լքի շարքը, մի կողմ գցի զենքը կամ, լինելով հոռի, մեկ ուրիշ նման քայլ կատարի, մի՞թե պետք չէ նրան դարձնել արհեստավոր կամ հողագործ:

– Իհարկե պետք է: b

– Իսկ նրան, ով ողջ-ողջ գերի է ընկել, չնվիրե՞նք արդյոք նրանց, որոնք կցանկանան օգտվել այդ ավարից իրենց հայեցողությամբ:

– Իհարկե:

– Իսկ նրան, ով իրեն արժանի ձևով է պահել և ձեռք է բերել փառք, չպիտի՞ արդյոք հենց արշավանքի ընթացքում հաջորդաբար պսակադրեն իր հետ արշաված մանուկներն ու պատանիները: Թե՞ այդպես չէ:

– Այդպես է:

– Եվ ի՞նչ: Մի՞թե նրան չեն ողջունի՝ սեղմելով աջ ձեռքը:

– Դա էլ:

– Ինձ թվում է, դու չես համաձայնի հետևյալին...

– Ինչի՞ն:

– Որ բոլորին համբուրի և բոլորը համբուրեն նրան:

– Այն էլ ինչպես կհամաձայնեմ և կավելացնեմ այդ օրենքին, որ ողջ արշավանքի ընթացքում ոչ ոք չի կարող մերժել, եթե որևէ զինվոր ցանկանա համբուրել իրեն, որովհետև սի- c
րահարվելով որևէ պատանու կամ կնոջ՝ նա ոգի է առնում և պատրաստ է մեծ սխրանքներ գործելու:

– Հրաշալի է: Մենք արդեն ասացինք, որ ամենաառաքինին

իրավունք կունենա ավելի մեծ թվով ամուսնությունների և նրա նմանները ավելի հաճախ կընտրվեն, որպեսզի նրանցից ծնված սերունդը լինի հնարավորինս մեծաթիվ:

– Այո, մենք դա ասացինք:

– Նաև, ըստ Հոմերոսի, այդպիսի պատիվներ տրվում են
d առաքինի պատանիներին: Հոմերոսն ասում է, որ Այասը, աչքի ընկնելով պատերազմում, իր մեջքի երկայնքով նվերների արժանացավ, և դա արժանի պատիվ էր քաջ և ծաղկուն տարիքի մարդուն, այնպես որ պատիվների հետ աճեց նաև նրա ուժը[11]:

– Շատ ճիշտ է:

– Ուրեմն լսենք Հոմերոսին: Առաքինի մարդկանց կպատվենք ըստ իրենց ցուցաբերած առաքինության՝ զոհաբերությունների և նման ուրիշ ծեսերի ժամանակ կատարելով երգեր և այն ամենը, ինչի մասին քիչ առաջ խոսեցինք, «խնջույքներում միշտ տալով լեցուն գավաթ, պատվավոր տեղ»[12], որ-
e պեսզի պատիվներով խրախուսենք այդ առաքինի տղամարդկանց և կանանց:

– Շատ լավ ասացիր:

– Դիցուք: Իսկ արշավանքներում զոհվածների համար, որոնք պատվավոր վախճան ունեցան, մի՞թե նախ չենք ասի, որ նրանք ոսկե սերնդից են:

– Իհարկե կասենք:

– Մի՞թե չենք հավատա Հեսիոդոսին, որ մահից հետո այդ սերնդից ոմանք

Մեծն Զևսի կամքով դարձան բարի ուրվականներ,
469 *Պահպանում են երկրի վրա մահկանացու բոլոր մարդկանց*[13]:

– Կհավատանք:

– Ուրեմն հարցնելով աստծուն, թե ինչպես պետք է թաղել
b աստվածային և բացառիկ մարդկանց, կթաղենք հենց այնպես, ինչպես կկարգադրի:

– Իհարկե այդպես կանենք:

– Իսկ մնացած ժամանակ, քանի որ նրանք դեմոններ են, մենք կպաշտենք և կերկրպագենք նրանց գերեզմանները: Նույնպիսի օրենք կընդունենք, եթե ծերությունից կամ մի ուրիշ պատճառով մահանա մեկը նրանցից, որոնք կյանքում առաքինի են եղել:

– Դա արդար է:

– Իսկ ի՞նչ են անելու մեր զինվորները թշնամիների հետ:

– Ի՞նչ նկատի ունես:

– Նախ ստրկացումը, քանզի արդար չէ, որ հույները ստրկացնեն հունական պետությունները, այլ հակառակը՝ հնարավորինս պիտի թույլ չտան դա: Պետք է խնայել հույների c
ցեղը և զգուշանալ, որ բարբարոսները չստրկացնեն նրանց:

– Միանգամայն ճշմարիտ է:

– Ուրեմն հույներին ստրկացնելը թույլատրելի չէ մեր պետության քաղաքացիներին, և դա պետք է խորհուրդ տալ նաև մյուս հույներին:

– Իհարկե: Այդկերպ նրանք կգործեն ավելի շուտ ընդդեմ բարբարոսների և կհրաժարվեն գժտություններից:

– Իսկ լա՞վ է հաղթանակի դեպքում սպանվածների վրայից զենքից բացի ուրիշ բան հանել: Մի՞թե դա պատրվակ չէ վախկոտների համար՝ խուսափելու կռվող թշնամուց: Ասես օգտակար ինչ-որ բան անելով՝ նրանք պտտվում են մեռածների
շուրջ, և նման կողոպուտի արդյունքում արդեն բազում զոր- d
քեր են կործանվել:

– Այն էլ ինչքա՜ն:

– Մի՞թե դիակապտությունը ստրկություն և ընչաքաղցություն չէ: Միայն կանացի մանրախնդիր մտածողությունն է թշնամի համարում սպանվածի մարմինը, թեև թշնամին այլևս չկա և մնացել է լոկ այն, ինչի միջոցով նա կռվել է: Թե՞ կարծում ես, որ այդպես անողներն ինչ-որ բանով տարբերվում e
են շներից, որոնց բարկացնում են իրենց վրա նետած քարերը և որոնք, սակայն, չեն նկատում քար նետողին:

– Բոլորովին չեն տարբերվում:

– Ուրեմն պետք է հրաժարվել դիակների կողոպուտից և չխոչընդոտել դրանց հավաքմանը:

– Զևսը վկա, պետք է հրաժարվել:

– Եվ մենք չենք տանի զենքերը տաճար որպես ընծա,
470 հատկապես հույների զենքերը, եթե մեզ գոնե ինչ-որ չափով հուզում են հույների բարի հարաբերությունները: Իսկ ավելի շատ կվախենանք սրբապղծել տաճարները՝ բերելով ընծաներ, որոնք խլել ենք ցեղակիցներից: Այդպես կվարվենք, միայն եթե դա պատգամի ինքը աստված:

– Շատ ճիշտ է:

– Արդ, հունական քաղաքների կողոպուտի և տների հրկիզման դեպքում ինչպե՞ս պիտի զինվորները վարվեն թշնամու հետ:

– Սիրով կլսեի քո կարծիքը:

b – Ըստ իս՝ չեն անի դա, այլ միայն կխլեն տարեկան բերքը: Կուզե՞ս ասեմ՝ ինչու:

– Իհարկե:

– Ինձ թվում է, իզուր չէ, որ գոյություն ունի երկու անուն՝ պատերազմ և գժտություն: Այս երկուսը համապատասխանում են դիմակայության երկու տեսակների: Երկուս եմ ասում, որովհետև մեկը յուրայինների և ազգակիցների մեջ է, իսկ մյուսը օտարների, այլազգիների: Յուրայինների մեջ թշնամությունը կոչեցինք գժտություն, իսկ օտարների հետ՝ պատերազմ:

– Անսովոր ոչինչ չես ասում:

c – Բայց տե՛ս, անսովոր չէ՞ այն, ինչ կասեմ հիմա: Ես պնդում եմ, որ բոլոր հույները մոտ են իրար և ազգակից, իսկ բարբարոսների համար բարբարոսներ են ու այլազգիներ:

– Շատ լավ:

– Երբ հույները կռվում են բարբարոսների դեմ, իսկ բարբարոսները՝ հույների, մենք կասենք, որ նրանք կռվում են, որ բնությամբ թշնամի են և նրանց այդ թշնամությունը հարկ է

կոչել պատերազմ: Իսկ երբ հույները կռվում են հույների դեմ, հարկ է ասել, որ իրենց բնությամբ նրանք բարեկամներ են, բայց Հունաստանը հիվանդ է, և նրանում տիրող պառակտումը, որ իսկական թշնամանք է, հարկ է կոչել գժտություն: d

– Համաձայն եմ այդպես կոչել:

– Տե՛ս, մեր քննած գժտության դեպքում, երբ այդպիսի բան է տեղի ունենում և պետությունը պառակտված է, մարդիկ ավերում են միմյանց դաշտերը, այրում տները, որքա՜ն կործանարար կլինի այդ գժտությունը և որքան քիչ կսիրեն գժտվածներն իրենց պետությունը: Չէ՞ որ հակառակ դեպքում չէին հանդգնի ավերել իրենց ստնտուին և մորը: Բավական է արդեն այն, որ ուժեղները թույլերից կխլեն նրանց աշխատանքի պտուղները, բայց թող չմոռանան, որ պետք է հաշտ- e
վեն և չպիտի պատերազմեն հավերժ:

– Այս մտածելակերպը շատ ավելի ազնիվ է, քան մյուսը:

– Եվ ինչ, մի՞թե քո կառուցած պետությունը չի լինի հունական:

– Պետք է լինի այդպիսին:

– Իսկ քաղաքացիները պիտի լինեն առաքինի և ազնի՞վ:

– Իհարկե:

– Մի՞թե չեն սիրի հունականը, չեն համարի Հունաստանը հայրենիք և մյուսների հետ չեն մասնակցի սրբազան տոնախոբություններին:

– Այն էլ ինչպես:

– Տարածայնությունները հույների հետ կհամարեն գժտու- 471
թյուն և կկոչեն պատերա՞զմ:

– Այո:

– Եվ գժտության մեջ կմտածեն համերաշխությա՞ն մասին:

– Իհարկե:

– Իրենց հակառակորդներին նրանք բարեմիտ կերպով խոհեմության կկոչեն, չեն պատժի ստրկությամբ և չեն կործանի, քանի որ խոհեմ են և թշնամի չեն:

– Այդպես է:

– Քանի որ հույներ են, չեն ավերի Հունաստանը, չեն այրի
տները, չեն համաձայնվի ամեն պետության մեջ իրենց թշնա-
b մի ճանաչել բոլորին՝ տղամարդկանց, կանանց և երեխաներին, այլ թշնամի կհամարեն միայն քչերին՝ գժտության պատճառ հանդիսացողներին: Ահա ինչու չեն ցանկանա ավերել երկիրը, այրել տները և կշարունակեն իրենց կռիվը այնքան ժամանակ, մինչև որ անմեղ տառապողները ստիպեն դրա մեղավորներին պատիժ կրել:

– Ես համաձայն եմ, որ մեր քաղաքացիները պետք է հենց այդպես վերաբերվեն մեր հակառակորդներին, իսկ բարբարոսներին՝ այնպես, ինչպես հիմա հույները միմյանց նկատմամբ:

c – Մենք կհաստատենք պահապանների համար այդ օրենքը՝ չթալանել երկիրը և չայրել տները:

– Ընդունենք, որ դա լավ է, ինչպես և այն, ինչի մասին խոսել ենք նախկինում:

– Բայց ինձ թվում է, Սոկրատես, եթե դու շարունակես խոսել այդ հարցերի մասին, երբեք չես հիշի, որ անում ես դա հետաձգելով պատասխանն ավելի վաղ հարցի, թե՝ կարո՞ղ է արդյոք հաստատվել պետական այդպիսի կառույցը և ինչպե՞ս է դա հնարավոր: Քանզի եթե դա տեղի ունենար, մեծ բարիք կլիներ այդ պետության համար: Նշեմ նաև այն, ինչ բաց թողեցիր՝ որ այդ պետության քաղաքացիները վերին աստիճանի արիաբար կկռվեին թշնամու դեմ, որովհետև երբեք չէին լքի միմյանց՝ իմանալով, որ եղբայրներ, հայրեր ու որ-
d դիներ են և այդպես են կոչում իրար: Իսկ եթե արշավանքներին մասնակցեն նաև կանայք, տղամարդկանց հետ միևնույն շարքում կամ նրանց հետևից՝ թշնամուն ահ պատճառելու կամ ինչ-որ հարցում օգնություն ցույց տալու համար, ես գիտեմ, որ այդ ամենի շնորհիվ նրանք անպարտ կլինեն: Տան բարիքները բաց եմ թողնում, քանի որ գիտեմ, թե որքան բազմաթիվ են: Ես լիովին համաձայն եմ քեզ հետ, որ դրանք և բյուրավոր ուրիշներ կլինեին, եթե հաստատվեր այդ պետա-

կան կառույցը: Այլևս մի՛ խոսիր այդ մասին, իսկ մենք կհամոզենք ինքներս մեզ, որ դա հնարավոր է, և կբացատրենք, թե ինչպես է հնարավոր: Մնացյալը թողնենք:

– Դու ասես անսպասելի հարձակում գործեցիր իմ դատո- 472
ղության վրա, առանց հաշվի առնելու՝ պատրաստ եմ դրան, թե ոչ: Դու գուցե չես հասկանում, որ հազիվ խուսափելով այն երկու ալիքներից, հիմա ստանում եմ քեզնից երրորդը՝ ամենամեծն ու ամենածանրը[14]: Երբ տեսնես այն և լսես նրա շառաչը, ըմբռնումով կմոտենաս դանդաղկոտությանս, արտասովոր միտքն արտահայտելու և քննելու իմ վախին:

– Որքան ավելի շատ այդպես խոսես, այնքան ավելի քիչ
թույլ կտանք քեզ խուսափել այն հարցից, թե ինչպես է հնա- b
րավոր նման պետական կառույցը: Ասա՛, մի՛ հապաղիր:

– Նախ պետք է հիշել, որ մենք հանգեցինք այս հարցին, երբ պարզում էինք, թե ինչ է արդարությունը և ինչ է անարդարությունը:

– Այո, պետք է: Բայց ինչու՞:

– Հենց այնպես: Բայց քանի որ գտանք և պարզեցինք, թե ինչ է արդարությունը, կպահանջե՞նք, որ արդար մարդը ոչնչով չտարբերվի դրանից և բոլոր առումներով լինի այնպիսին,
ինչպիսին արդարությունն է: Թե՞ կբավարարվենք նրանով, որ c
ինչ-որ մեկը շատ մոտ է դրան և ավելի հաղորդակից կլինի, քան բոլոր մյուսները:

– Կբավարարվենք:

– Որպես օրինակ մենք հետազոտեցինք, թե ինչպիսին է ինքը արդարությունը և ինչպիսին կլիներ կատարելապես արդար մարդը, եթե այդպիսին գտնվեր: Մենք հետազոտեցինք նաև անարդարությունը և կատարելապես անարդար մարդուն, որպեսզի տեսնելով այդ երկուսին, կախված այն բանից, թե ինչպես կերևան մեզ՝ երջանիկ, թե ոչ, համաձայնության գանք մեր իսկ հարցում. ով ում նման է, այդպիսի բախտ էլ ունի: Սակայն մենք արեցինք դա ոչ այդ ամենի հնարավորությունն ապացուցելու համար: d

– Իրավացի ես:

– Քո կարծիքով, լավ նկարիչը ավելի վատն է դառնում, եթե որպես օրինակ պատկերում է, թե ինչպիսին պիտի լինի ամենագեղեցիկ մարդը, և դա բավականաչափ արտահայտված է նկարում, թեպետ նկարիչը չի կարող ապացուցել, որ այդպիսի մարդ գոյություն ունի:

– Զնսը վկա, ինձ թվում է՝ ոչ:

e – Եվ ինչ, ասե՞նք, որ մենք էլ չտվեցինք կատարելապես առաքինի պետության օրինակը:

– Իհարկե ոչ:

– Իսկ ավելի վա՞տն է դառնում մեր խոսքը, եթե չենք կարողանում ապացուցել մեր նկարագրած պետությունը կառուցելու հնարավորությունը:

– Իհարկե ոչ:

– Արդ, սա ճշմարիտ է, բայց եթե հանուն քեզ պետք է ապացուցեմ, թե գերազանցապես ինչ եղանակով և ինչի շնորհիվ դա հնարավոր կլիներ, ապա այդպիսի ապացույցի համար շնորհիր ինձ նույնը:

– Ի՞նչ:

473 – Կարելի՞ է գործել այնպես, ինչպես ասվեց, թե՞ գործն իր բնությամբ խոսքից պակաս չափով է հաղորդակից ճշմարտությանը, անգամ եթե ոմն այդպես չի կարծում: Համաձա՞յն ես, թե՞ ոչ:

– Համաձայն եմ:

– Ուրեմն մի՛ ստիպիր ինձ ցույց տալ այն, ինչը գործնականում կերևա հենց այնպես, ինչպես քննեցինք խոսքով: Եթե ի վիճակի լինենք պարզել, թե ինչպես կարելի է հիմնել նշվածին առավելագույնս մոտ պետություն, կկարողանանք ասել, որ արդեն կատարել ենք քո պահանջը. ցույց ենք տվել՝ ինչ-

b պես կարելի է դա անել: Թե՞ չես բավարարվի դրանով: Ես կբավարարվեի:

– Ես նույնպես:

– Դրանից հետո մենք, ինչպես երևում է, կփորձենք գտնել

և ցույց տալ, թե ինչն է վատ այժմյան պետություններում և ինչու մեր ասածի նման չեն կառուցված: Սակայն փոքր փոփոխության շնորհիվ կարելի էր բերել դրանք նշված ձևին, հատկապես եթե փոփոխությունը լիներ մեկը, երկուսը կամ մի քանիսը, մի խոսքով՝ դրանք պիտի լինեին քիչ և թույլ:

– Իհարկե: c

– Բայց եթե հանկարծ որևէ փոփոխություն է պատահում, կարծում եմ, մենք կարող ենք ցույց տալ, որ ամբողջ պետությունը կհետևի դրան. չնայած սա աննշան և դյուրին փոփոխություն չէ, սակայն հնարավոր է:

– Ի՞նչ փոփոխություն է:

– Հիմա ես ընդառաջ կելնեմ նրան, ինչը նմանեցրինք մեծ ալիքի: Դա կասվի, անգամ եթե դրանից հետո ինձ ծածկի ծիծաղի և անփառունակության ալիքը: Տե՛ս, թե ինչ եմ ցանկանում ասել:

– Խոսի՛ր:

– Քանի դեռ պետություններում չեն թագավորում փիլիսոփաները կամ այժմյան այսպես կոչված արքաներն ու տիրակալները չեն կարող ինչպես հարկն է փիլիսոփայել, և այդ երկուսը՝ պետական իշխանությունն ու փիիսոփայությունը չեն միավորվել, և քանի դեռ չեն հեռացվել մարդիկ,– իսկ դրանք շատ են,– որոնք հիմա առանձին ձգտում են կա՛մ իշխանության, կա՛մ փիլիսոփայության, պետությունները, սիրելի՛ Գլավկոն, չեն ազատվի չարիքներից, և մարդկային ցեղի համար երբևէ հնարավոր չի լինի և երբեք լույս աշխարհ չի գա այն պետությունը, որի մասին հիմա խոսում ենք: Ահա այն, ինչի մասին երկար ժամանակ վարանում էի ասել՝ տեսնելով, թե որքան է դա հակասում ընդունված կարծիքին: Չէ՞ որ դժվար է հասկանալ, որ այլապես թե՛ նրանց անձնական և թե՛ հասարակական բարեկեցությունն անհնար է:

Եվ Գլավկոնն ասաց.

– Սոկրատե՛ս, դու խոցեցիր մեզ այնպիսի խոսքով ու մտքերով, որ հիմա քեզ վրա ամբողջ ուժով կհարձակվեն

474 շատերը, ընդ որում ոչ վատթարները՝ ազատվելով իրենց հագուստից, մերկ, առաջին իսկ պատահած զենքը ձեռքն առած և ամեն ինչի պատրաստ: Եվ եթե չպաշտպանվես խոսքով ու նահանջես, նրանք ծաղրելով կպատժեն քեզ:

– Բայց մի՞թե դու չես լինի դրա մեղավորը:

– Եվ միանգամայն իրավացի կլինեմ: Բայց ես չեմ մատնի քեզ, այլ կպաշտպանեմ ինչով կկարողանամ՝ բարեհաճությամբ, հորդորներով և գուցե քեզ ուրիշից ավելի հիմնավոր պատասխաններ տալով: Այդպիսի օգնականի հետ փորձի՛ր
b ապացուցել անհավատներին, որ ամեն բան այնպես է, ինչպես դու ես ասում:

– Այո, պիտի փորձեմ, քանի որ այդպիսի մեծ դաշինք ես առաջարկում: Բայց ինձ թվում է, որ եթե ուզես խուսափել նրանցից, որոնց նշեցիր, անհրաժեշտ է սահմանել նրանց որպես փիլիսոփաների և համարձակվել պնդել, որ հենց փիլիսոփաները պետք է իշխեն, իսկ երբ դա ակնհայտ դառնա, պաշտպանվել և ապացուցել, որ ինչ-ինչ մարդիկ ի բնե հակված են փիլիսոփաներ լինելու և իշխելու պետության մեջ,
c իսկ ուրիշները պետք է ոչ թե զբաղվեն դրանով, այլ հետևեն առաջնորդին:

– Ժամանակն է տալ սահմանումը:

– Դե, հետևի՛ր ինձ, և գուցե մենք կարողանանք բավարար չափով բացատրել դա:

– Առաջնորդի՛ր:

– Հիշեցնե՞մ քեզ, թե՞ հիշում ես, որ եթե ոմն ինչ-որ բան սիրում է, պարտավոր է, եթե իհարկե նրա մասին ճիշտ են ասում, ոչ թե առարկան սիրել մեկ առումով, իսկ մյուս առումով՝ ոչ, այլ պետք է սիրի այն ամբողջությամբ:

d – Ինձ թվում է, պետք է հիշեցնել, քանզի լրիվ չեմ հասկանում:

– Այդպես կարող է ասել ուրիշ մեկը, Գլավկոն, բայց ոչ դու: Քեզ պես սիրահարին վայել չէ մոռանալ, որ պատանիներին սիրող ու սիրառատ մարդուն հիացնում ու բորբոքում են

բոլոր նրանք, ովքեր փթթուն տարիքում են, իրեն արժանի են թվում ուշադրության և սիրո: Այդպե՞ս չեք վերաբերվում գեղեցիկներին: Մեկին գովաբանում եք, որովհետև կճատ է, մյուսին՝ որովհետև արծվաքիթ է և հետևաբար, ձեր կարծիքով, արքայական ինչ-որ բան ունի, իսկ նրան, որի քիթը միջին չափի է, համարում եք ժուժկալ: Սևահերներին համարում եք արի, իսկ խարտյաշներին՝ աստվածների որդիներ: Իսկ մեղրագույնահերներին, ինչ ես կարծում, ուրիշ ո՞վ է այդպես կոչել, եթե ոչ սիրահարը, որն այնքան նուրբ է, որ նրան չի վանում անգամ դալկությունը, եթե իհարկե սիրեցյալը
փթթուն տարիքում է: Մի խոսքով, ամեն առիթ և ամեն նշան 475
ընդունում եք փթթուն տարիքի պատանիներից չհրաժարվելու համար:

– Եթե կուզես իմ օրինակի վրա խոսել այն մասին, թե ինչ են անում սիրահարները, խնդրեմ, հանուն զրույցի համաձայն եմ:

– Եվ ինչ, չե՞ս տեսնում, որ գինու սիրահարները ևս այդպես են գործում: Ամեն առիթով գինի են ակնկալում:

– Այն էլ ինչպես:

– Այդպիսին են նաև փառասերները: Դու տեսնում ես, որ եթե նրանք չեն կարող գլխավորել բանակը, գլխավորում են
տրիտտիան[15], եթե չեն փառաբանվում մեծերի և նշանակալի- b
ների կողմից, բավարարվում են առավել փոքր ու աննշան մարդկանց փառաբանությամբ և միշտ փառք են տենչում:

– Իհարկե:

– Արդ, ընդունիր կամ մերժիր հետևյալը: Երբ ինչ-որ մեկին փառատենչ ենք կոչում, ասում ենք, որ նա տենչում է ամբո՞ղջ տեսակը, թե՞ տեսակի մի մասը տենչում է, իսկ մյուսը՝ ոչ:

– Ամբողջ տեսակը:

– Չե՞նք ասի, որ փիլիսոփան տենչում է ոչ միայն իմաստության մի մասը, այլև ամբողջ իմաստությունը:

– Կասենք:

c – Ուրեմն նրան, ով գարշում է գիտություններից, հատկապես երբ դեռ երիտասարդ է և չի հասկանում՝ ինչն է օգտակար, իսկ ինչը՝ ոչ, մենք չենք կոչի ուսումնատենչ կամ փիլիսոփա, ինչպես չենք ասի, որ խմիչքից կամ կերակուրներից գարշողը տենչում է դրանք, չէ՞ որ այս պարագայում նա կերակուր ատողն է:

– Եվ ճիշտ կվարվենք:

– Իսկ նա, ով ուզում է ճաշակել բոլոր գիտություններից և ուրախ է սովորել, ընդ որում՝ անհագուրդ, արդարև կկոչվի փիլիսոփա:

d Եվ Գլավկոնն ասաց.

– Դու կգտնես բազում այդպիսի անհեթեթ մարդկանց: Այդպիսիք, իմ կարծիքով, բոլորն էլ հանդիսասերներ են և ուրախ են տեսնել նորը: Անհեթեթություն է փիլիսոփաներ համարել նրանց, ովքեր սիրում են ունկնդրել: Նրանք ամենևին չեն ցանկանում լսել այդպիսի զրույցներ, սակայն նրանց ականջներն ասես հմայված են լսելու Դիոնիսոսի պատվին երգող բոլոր երգչախմբերին, այնպես որ առիթը բաց չեն թողնում ո՛չ քաղաքներում, ո՛չ գյուղերում: Մի՞թե սրանց և ուրիշներին, որոնք ուզում են նման բան իմանալ կամ որևէ երկրորդական
e արհեստ սովորել, մենք կկոչենք փիլիսոփաներ:

– Ոչ մի դեպքում: Մենք նրանց կանվանենք փիլիսոփաներին նմանակողներ:

– Իսկ ու՞մ ես կոչում ճշմարիտ փիլիսոփաներ:

– Նրանց, ովքեր սիրում են տեսնել ճշմարտությունը:

– Դա էլ ճիշտ է: Բայց ինչպե՞ս ես դա հասկանում:

– Դժվար կլիներ ասել ուրիշին, բայց դու, ինձ թվում է, կհամաձայնես հետևյալ հարցում:

– Ինչու՞մ:

476 – Քանի որ գեղեցիկը հակադիր է այլանդակին, ուրեմն դրանք երկու բաներ են:

– Ինչպե՞ս չէ:

– Արդ, եթե երկուսն են, յուրաքանչյուրը մեկն է:

– Դա էլ այդպես է:

– Նույնը կարելի է ասել նաև արդարի և անարդարի, բարու և չարի և բոլոր մյուս տեսակների մասին: Յուրաքանչյուրը մեկն է, բայց ամենուր հանդես գալով մարդկանց գործողություններում՝ թվում է բազում:

– Ճիշտ ես ասում:

– Սա է իմ բաժանումը, մի կողմում են տեսարանների և
արհեստների սիրահարներն ու գործարարները, որոնց մա- b
սին ասացիր, իսկ մյուս կողմում՝ նրանք, որոնց մասին խոսում ենք և որոնց կարելի է կոչել փիլիսոփա:

– Ի՞նչ նկատի ունես:

– Նա, ով սիրում է լսել և դիտել, ուրախանում է գեղեցիկ ձայների, գույների, ներկերի, ձևերի և դրանցից ստացվող բոլոր բաների վրա, սակայն նրա միտքը անկարող է տեսնել ինքնին գեղեցիկի բնությունը և ուրախանալ դրանով:

– Այդպես է:

– Իսկ նրանք, ովքեր կարող են հասնել հենց գեղեցիկին և c
տեսնել այն ինքնին, քչերն են:

– Շատ քչերը:

– Գեղեցիկ իրեր գնահատողները, որոնք չեն գնահատում ինքնին գեղեցիկը և չգիտեն, թե ով պիտի առաջնորդի իրենց դեպի դրա ճանաչողությունը, ինչ ես կարծում, ապրում են երազի՞ մեջ, թե՞ հարթմնի: Տե՛ս, անրջել քնած կամ հարթմնի՝ չի՞ նշանակում արդյոք նմանությունը համարել ոչ թե նմանություն, այլ այն, ինչին այն նման է:

– Ինչպե՞ս չէ:

– Իսկ նա, ով սրան հակառակ որևէ բան ինքնին գեղեցիկ
է կոչում և կարող է հայել և՛ այդ գեղեցիկը, և՛ դրան հաղոր- d
դակիցը՝ չհամարելով դա հենց գեղեցիկը, ապրում է հարթմնի՞, թե՞ քնած, ի՞նչ ես կարծում:

– Իհարկե հարթմնի:

– Նրա մտածողությունը մենք իրավացիորեն ճանաչողություն կոչեցինք, իսկ նախորդինը՝ կարծիք:

– Իհարկե:

– Եվ ինչ, եթե նա, ում մասին ասացինք, որ միայն կարծում է, բայց չի ճանաչում, բարկանա և վիճարկի այն, որ
e մենք ճշմարիտ ենք խոսում, կարո՞ղ ենք մենք ինչ-որ կերպ հանգստացնել նրան և անուղղակի համոզել, որ անառողջ է:

– Այո, դա հարկավոր է անել:

– Բայց տե՛ս, ինչ կպատասխանենք նրան: Կամ ուզու՞մ ես՝ հավաստիացնելով, որ նրա դեմ ոչինչ չունենք, այլ ի դեմս նրա տեսնում ենք գիտուն մարդու, հարցնենք այսպես. «Ասա՛ մեզ, նա, ով ճանաչում է, ճանաչում է ինչ-որ բա՞ն, թե՞ ոչինչ»:

– Ես կպատասխանեմ, որ նա ճանաչում է ինչ-որ բան:

477 – Գոյություն ունեցո՞ղ ինչ-որ բան, թե՞ գոյություն չունեցող:

– Գոյություն ունեցող: Մի՞թե կարելի է ճանաչել գոյություն չունեցողը:

– Մեզ բավական է, որ լիովին գոյություն ունեցողը լիովին ճանաչելի է՝ որ կողմից էլ դիտարկենք, իսկ գոյություն չունեցողը բոլորովին անճանաչելի է:

– Այո, դա միանգամայն բավարար է:

– Լավ: Իսկ եթե այդպես է և դա մերթ գոյություն ունի, իսկ մերթ՝ ոչ, մի՞թե զուտ գոյություն ունեցողի և գոյություն չունեցողի մեջտեղում չէ:

– Մեջտեղում է:

b – Արդ, քանի որ ճանաչողությունը միտված է գոյություն ունեցողին, իսկ չիմացությունը՝ անհրաժեշտաբար գոյություն չունեցողին, հարկ է ինչ-որ բան փնտրել չիմացության և իմացության միջև, եթե այդպիսին հանդիպում է:

– Իհարկե:

– Իսկ կա՞ ինչ-որ բան, որ կարծիք եք կոչում:

– Իհարկե:

– Դա իմացությունից տարբե՞ր ունակություն է, թե՞ նույնն է:

– Տարբեր:

– Ուրեմն, համաձայն այդ ունակությունների տարբերության, կարծիքը միտված է մի բանի, իսկ իմացությունը՝ մեկ ուրիշ:

– Այդպես է:

– Ուրեմն իմացությունն ի բնե միտված է գոյությանը և ծգտում է իմանալ, թե ինչպիսին է այն: Բայց ինձ թվում է, նախ անհրաժեշտ է հասկանալ հետևյալը:

– Ի՞նչը:

– Մենք կասենք, որ ունակությունները գոյություն ունեցողի ինչ-որ սեռ են, որոնց շնորհիվ մենք կարող ենք անել այն, ինչ կարող ենք՝ մենք և մեր ունակությունները, օրինակ՝ տեսողությունը, լսողությունը, որ այդպիսի ունակություններ են, եթե հասկանում ես՝ ինչ սեռի մասին եմ խոսում: c

– Հասկանում եմ:

– Լսիր, թե ինչ եմ մտածում դրանց մասին: Ունակությունները չունեն գույն, տեսք կամ ուրիշ հատկություններ, որոնց միջոցով ես դրանք սահմանում եմ ինքս ինձ համար, ինչպես մյուս իրողությունների դեպքում: Ունակության մեջ ես տեսնում եմ լոկ այն, ինչին սա միտված է, և սրա գործած ազդեցությունը. հենց համաձայն այդ հատկանիշի եմ ես կոչում այս կամ այն ունակությունը: Եթե միտվածությունն ու ազդեցությունը նույնն են, ես դա համարում եմ միևնույն ունակությունը, իսկ եթե միտվածությունն ու ազդեցությունը տարբեր են, դա արդեն ուրիշ ունակություն է: Իսկ դու՞: Ինչպե՞ս ես վարվում: d

– Այդպես:

– Վերադառնանք նույնին, հարգելիս: Համարու՞մ ես իմացությունը ինչ-որ ունակություն, կամ ո՞ր սեռին ես այն դասում:

– Այս սեռին, քանի որ դա ունակություններից ամենազորեղն է: e

– Իսկ կարծիքը մենք կդասենք ունակությունների՞ սեռին, թե՞ մեկ ուրիշ սեռի:

– Ոչ մի դեպքում: Քանզի կարծիքը ոչ այլ ինչ է, եթե ոչ այն, ինչի միջոցով կարծիք ենք կազմում:

– Բայց քիչ առաջ դու համաձայնվեցիր, որ իմացությունը և կարծիքը նույնը չեն:

– Ինչպե՞ս կարելի է ողջախոհություն պահպանելով նույնը համարել այն, ինչն անսխալ է, և այն, ինչը սխալ է:

– Լավ: Ակնհայտ է, որ մենք քեզ հետ համաձայնեցինք՝ իմացությունը և կարծիքը տարբեր բաներ են:

– Տարբեր են:

478 – Ուրեմն դրանցից յուրաքանչյուրն ի բնե ունի որոշակի միտվածություն և ունակություն:

– Անհրաժեշտաբար:

– Իմացությունը միտված է գոյությանը, որպեսզի ճանաչի դրա հատկությունները:

– Այո:

– Իսկ կարծիքը, մեր պնդմամբ, միտված է միայն կարծելուն:

– Այո:

– Ճանաչու՞մ է արդյոք կարծիքը նույնը, ինչ իմացությունը, և նու՞յնն է արդյոք այն, ինչը ճանաչում են, և այն, ինչի մասին կարծիք են կազմում: Թե՞ դա անհնար է:

– Անհնար է, ելնելով նրանից, ինչի շուրջ մենք համաձայնության եկանք, քանզի ամեն ունակություն ի բնե միտված է տարբեր բաների: Այդ երկուսը՝ կարծիքը և իմացությունը, ունակություններ են, սակայն տարբեր ունակություններ, ինչպես ասում ենք, ահա ինչու չի կարելի եզրակացնել, որ այն,
b ինչը ճանաչում են, և այն, ինչի մասին կարծիք են կազմում, նույնն են:

– Եթե գոյությունը ճանաչելի է, ապա այն, ինչի մասին կարծիք են կազմում, պիտի դրանից տարբեր ինչ-որ բան լինի:

– Այո, տարբեր:

– Ուրեմն կարծիքը գործ ունի չգոյությա՞ն հետ: Թե՞

չգոյության մասին անհնար է նաև կարծիք կազմել: Մտածի՛ր. մի՞թե որևէ մեկի կարծիքը ինչ-որ բանի մասին չէ, թե՞ կարելի է կարծիք ունենալ, բայց ոչինչ չկարծել:

– Անհնար է:

– Չէ՞ որ կարծիք կազմողը այդուհանդերձ կարծիք է կազմում ինչ-որ բանի մասին:

– Այո:

– Բայց չգոյությունը պետք է կոչել ոչ թե ինչ-որ բան, այլ հենց ոչինչ: c

– Իհարկե:

– Չիմացությունը մենք անհրաժեշտաբար դասեցինք չգոյությանը, իսկ ճանաչողությունը՝ գոյությանը:

– Ճիշտ է:

– Ուրեմն կարծիքները չեն վերաբերում ո՛չ գոյությանը, ո՛չ էլ չգոյությանը:

– Այո, չեն վերաբերում:

– Ուրեմն կարծիքը ո՛չ չիմացություն է, ո՛չ էլ իմացություն:

– Թերևս:

– Չլինելով դրանցից և ոչ մեկը՝ իր հստակությամբ գերազանցու՞մ է արդյոք իմացությանը, իսկ ոչ հստակությամբ՝ չիմացությանը:

– Ո՛չ մեկը, ո՛չ էլ մյուսը:

– Ուրեմն քեզ թվում է, թե կարծիքն ավելի աղոտ է, քան իմացությունը, բայց ավելի հստակ, քան չիմացությու՞նը:

– Եվ շատ ավելի:

– Բայց դուրս չի՞ գալիս դրանց սահմաններից: d

– Այո:

– Ուրեմն միջի՞ն ինչ-որ բան է:

– Իհարկե:

– Ինչպես արդեն ասացինք, եթե պարզվի, որ կա միաժամանակ գոյություն ունեցող և չունեցող ինչ-որ բան, այն կզբաղեցնի միջին տեղ զուտ գոյության և կատարյալ չգոյության միջև, և դրան միտված կլինի ո՛չ իմացությունը, ո՛չ էլ չիմացու-

թյունը, այլ չիմացության և իմացության մեջտեղում գտնվողը:

– Ճիշտ է:

– Իսկ հիմա դրանց միջև գտնվում է այն, ինչը մենք կոչում ենք կարծիք:

– Երևում է, այդպես է:

e – Մեզ թերևս մնում է գտնել դրանց երկուսին էլ հաղորդակիցը, այսինքն՝ և՛ գոյությանը, և՛ չգոյությանը, որը, սակայն, չի կարելի կոչել ո՛չ զուտ գոյություն, ո՛չ էլ զուտ չգոյություն: Եթե դա պատահի, մենք իրավունք կունենանք ասելու, որ դա այն է, ինչի մասին կարծիք է կազմվել: Ծայրագույնը պետք է ծայրագույն կոչենք, իսկ միջինը՝ միջին: Այդպես չէ՞:

– Այդպես է:

– Ենթադրելով սա, կասեմ ես, թո՛ղ ինձ հետ խոսի և պա-
479 տասխանի այն բարի մարդը, որը ոչինչ է համարում ինքնին գեղեցիկը և գեղեցիկի հավերժ ինքնանույնականության գաղափարը: Նա՝ գեղեցիկ տեսարանների այդ սիրահարը, համարում է, որ գեղեցիկը շատ է, և չի հանդուրժում, երբ նրան ասում են, թե գեղեցիկը, ինչպես և արդարը, մեկ է: Եվ այդպես նաև մյուս բաները: «Սիրելի՛ս,– կասենք նրան,– գեղեցիկ իրերի այսպիսի բազմության մեջ մի՞թե չի լինի մեկը, որ կթվա այլանդակ: Կամ չի՞ լինի արդար գործերի բազմության մեջ մեկը, որ կթվա անարդար, իսկ սրբազան գործերի մեջ մեկը՝ ոչ սուրբ»:

b – Այդ բաները ինչ-որ առումով անհրաժեշտաբար կլինեն գեղեցիկ և ինչ-որ առումով այլանդակ, և այդպես նաև մնացյալը, որի մասին հարցնում ես:

– Եվ ի՞նչ:

– Կրկնապատկված բազում իրերը մի՞թե չեն կարող ինչ-որ իմաստով կիսատ թվալ:

– Ոչ:

– Իսկ եթե մենք ինչ-որ բան կոչենք մեծ, փոքր, ծանր և թեթև, մի՞թե դա անելու ավելի շատ հիմքեր կան, քան հաստատելու հակադիր բնորոշումները:

– Ոչ, յուրաքանչյուր իրին երկու բնորոշումներն էլ հատուկ են:

– Բազում իրերից յուրաքանչյուրը կլինի՞ այնպիսին, ինչպիսին կոչեցին, թե՞ ոչ:

– Սա նման է այն երկիմաստ հանելուկներին, որ ճաշի ժամանակ ասում են երեխաներին, օրինակ՝ թե ինչպես ներքինին ցանկացավ սպանել չղջիկին: Պետք է գուշակել, թե ինչի վրա էր սա նստած և ինչ նետեց ներքինին: Այստեղ նույնպես երկիմաստություն կա, և հնարավոր չէ վստահ լինել, որ այդ իրն այսպիսին է կամ ուրիշ, կամ որ դրան համապատասխանում են երկու բնորոշումներ և կամ էլ դրանցից ոչ մեկը: c

– Ինչպե՞ս կվարվես նման բնորոշումների հետ կամ կարո՞ղ ես դնել դրանք ավելի լավ տեղ, քան գոյության և չգոյության միջև: Դրանք ավելի աղոտ չեն չգոյությունից և չեն թվա ավելի չգո, քան չգոյությունը: Բայց նաև գոյությունից ավելի հստակ չեն և չեն լինի դրանից առավել գոյող: d

– Շատ ճիշտ է:

– Արդ, ինչպես երևում է, մենք գտանք, որ բազմության կարծիքները գեղեցիկի և դրան նմանի մասին պտտվում են ինչ-որ տեղ չգոյության և զուտ գոյության միջև:

– Գտանք:

– Բայց մենք նախապես համաձայնվեցինք, որ եթե նման բան պարզվի, դա պետք է համարել այն, ինչը մենք կարծում ենք, ոչ այն, ինչը ճանաչում ենք, քանզի դրանց միջև տարուբերվողը հայտնաբերվում է միջանկյալ ունակությամբ:

– Համաձայնվեցինք: e

– Ուրեմն նրանց մասին, ովքեր բազում գեղեցիկ բաներ են տեսնում, բայց ոչ ինքը գեղեցիկը և չեն կարող հետևել նրան, ով առաջնորդում է դեպի այդ գեղեցիկը, և նրանց մասին, ովքեր բազում արդար արարքներ են տեսնում, բայց ոչ ինքը արդարությունը, և այդպես շարունակ, մենք կասենք, որ այդ ամենի մասին ունեն կարծիք, բայց նրա մասին, ինչի մասին կարծիք են կազմում, ոչինչ չգիտեն:

– Անհրաժեշտաբար:

– Իսկ ի՞նչ կասենք նրանց մասին, ովքեր հայում են հենց դրանք, որ հավետ նույնական են: Չէ՞ որ նրանք ճանաչում են, և ոչ միայն կարծում:

– Իհարկե:

480 – Կասենք, որ հարգում և սիրում են իրենց ճանաչածը: Չէ՞ որ հիշում ենք, որ սիրում և նկատում են ձայները, գեղեցիկ գույները և ուրիշ նման բաներ, բայց չեն ընդունում ինքնին գեղեցիկի գոյությունը:

– Հիշում ենք:

– Ուրեմն չենք սխալվի, եթե նրանց կոչենք ավելի շուտ կարծիքների սիրահարներ, քան իմաստասերներ [փիլիսոփաներ]: Եվ մի՞թե շատ կբարկանան, եթե այդպես ասենք:

– Չեն բարկանա, եթե լսեն ինձ: Քանզի հարիր չէ բարկանալ ճշմարտության վրա:

– Իսկ նրանց, ովքեր գնահատում են յուրաքանչյուր ինքնին գոյություն, հարկ է կոչել իմաստասերներ [փիլիսոփաներ], այլ ոչ կարծիքների սիրահարներ:

– Անշուշտ:

ԳԻՐՔ ՎԵՑԵՐՈՐԴ

– Դժվարությամբ և երկար քննության արդյունքում, Գլավկոն, պարզեցինք՝ ովքեր են փիլիսոփաներ, իսկ ովքեր՝ ոչ, և ինչ են երկուսն էլ: 484

– Թերևս կարճ քննությամբ դա հեշտ չէր լինի անել:

– Երևում է, ոչ: Բացի այդ, կարծում եմ, դա ավելի լավ կպարզաբանվեր, եթե հարկ լիներ խոսել միայն մեկ բանի մասին, չքննելով շատ ուրիշ հարցեր, որ առնչվում են արդար և ոչ արդար կյանքի տարբերությանը:

– Իսկ ի՞նչ հարց ունենք դրանից հետո: b

– Ուրիշ ի՞նչ, եթե ոչ այն, որ հետևում է սրան: Եթե փիլիսոփաները նրանք են, ովքեր ուզում են հասկանալ միշտ նույնականը, իսկ մյուսները չեն կարող և թափառում են ամենատարբեր իրերի մեջ, ուստի փիլիսոփաներ չեն, ովքե՞ր պիտի կառավարեն պետությունը:

– Ինչպե՞ս պատասխանենք դրան պատշաճ ձևով:

– Նրանք, ովքեր ունակ են պաշտպանելու օրենքները և պետության բարքերը, պետք է նշանակվեն պահապաններ:

– Ճիշտ է: c

– Իսկ պա՞րզ է, թե որ պահապանին է պետք վստահել պահպանությունը՝ կույրի՞ն, թե՞ սրատեսին:

– Իհարկե, պարզ է:

– Իսկ ինչո՞վ են կույրերից լավը նրանք, ովքեր իրականում զուրկ են ամեն իրի էության իմացությունից և իրենց հոգիներում չունեն դրա հստակ պատկերը: Նրանք չեն կարող

d նկարիչների նման դիտել ամենաճշմարիտը՝ միշտ կրելով և տեսնելով այն ամենաճշգրիտ ձևով, ահա ինչու նրանք անկարող են, երբ դա անհրաժեշտ է, հաստատել այստեղ նոր օրենքներ գեղեցիկի, արդարի և բարիքի մասին և պաշտպանել եղածները:

– Չեն կարող, Զևսը վկա, նրանք շատ չեն տարբերվում կույրերից:

– Այդ դեպքում նրա՞նց նշանակենք պահապաններ, թե՞ ամեն իրի էությունը ճանաչածներին, որոնք առաջիններից պակաս փորձառու չեն նաև այլ առաքինությունների առումով:

– Անհեթեթ կլիներ ընտրել ուրիշներին, եթե նրանք ոչնչով պակաս չեն, ավելին՝ ունեն նաև մեծ առավելություն:

485 – Ձասե՞նք նաև՝ ինչպես կարող են ունենալ թե՛ մեկը, թե՛ մյուսը:

– Իհարկե:

– Քննության սկզբում մենք ասացինք, որ նախ պետք է հասկանալ այդ մարդկանց բնությունը: Կարծում եմ, բավարար չափով համաձայնության եկանք այս հարցում և կհամաձայնենք նաև, որ այդպիսի մարդիկ կարող են ունենալ նշված հատկությունները և որ հենց նրանք պիտի լինեն պետության կառավարիչներ:

– Ինչպե՞ս:

– Ինչ վերաբերում է փիլիսոփաների բնությանը, պետք է

b ընդունել, որ նրանք սիրում են ուսումը և դրա միջոցով իրենց համար բացահայտում են հավերժ գոյողը, որի մասին ասացինք, որ այն չունի ծագում և կործանում:

– Այո, պետք է ընդունել:

– Եվ նրանք տենչում են ողջ գոյությունը և փորձում են չմոռանալ դրա մասերից և ոչ մեկը՝ ո՛չ փոքրը, ո՛չ մեծը, ո՛չ ավելի արժեքավորը, ո՛չ պակաս արժեքավորը, այնպես, ինչպես ասացինք փառասերների և սիրատենչների մասին:

– Իրավացի ես:

– Տե՛ս, պե՞տք է արդյոք, որ մարդիկ, որոնք պիտի այդպի-

սին դառնան, ունենան նաև բնավորության այսպիսի գծեր... c

– Ինչպիսի՞:

– Ազնվություն, որն ամեն տեսակ ստի հակադրությունն է, ատում է սուտը և սեր է ճշմարտության նկատմամբ:

– Թվում է, այո:

– Բարեկա՛մս, ոչ միայն թվում է, այլև բոլոր իմաստներով անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր ոք, ով բնությամբ սիրատենչ է, գնահատի իր սիրո առարկային ազգակից ամեն ինչ:

– Ճիշտ է:

– Իսկ կգտնե՞ս իմաստությանը առավել մոտ ինչ-որ բան, քան ճշմարտությունն է:

– Ինչպե՞ս:

– Կարո՞ղ է նույն մարդը սիրել և՛ իմաստությունը, և՛ սուտը:

– Ոչ մի դեպքում: d

– Հետևաբար ուսումնատենչը պետք է մանկուց նեթ առավելագույնս ձգտի՞ ճշմարտությանը:

– Այո, ամեն կերպ:

– Բայց մենք գիտենք, որ երբ մարդու տենչանքները ուժգնորեն միտվում են մի բանի, մյուս տենչանքները թուլանում են, ասես շրջած հունը:

– Եվ ի՞նչ:

– Նա, ով ձգտում է գտնել իմացություններ և նման ուրիշ բաներ, կարծում եմ, հաճույք է զգում հենց հոգով, իսկ մարմնավոր հաճույքները նրա համար ի չիք են դառնում, իհարկե, e
եթե նա իրոք փիլիսոփա է, ոչ ձնացյալ:

– Անհրաժեշտաբար:

– Այդպիսի մարդը խոհեմ է և բնավ ոչ ընչաքաղց, քանզի ջանք թափել հանուն մի բանի, որի համար մարդիկ ընկնում են դրամի ետևից, հարիր է ուրիշ որևէ մեկին, բայց ոչ իրեն:

– Այդպես է:

– Երբ ցանկանում ենք փիլիսոփայի բնությունը տարբերել ոչ փիլիսոփայի բնությունից, պետք է նկատի առնել հետևյալը: 486

– Ի՞նչը:

– Որ քեզնից թաքուն չմնան նրա նսեմ հատկությունները: Չէ՞ որ մանրախնդրությունը ամենամեծ թշնամին է հոգու, որին վիճակված է միշտ ձգտել աստվածայինի և մարդկայինի ամբողջությանը:

– Շատ ճիշտ է:

– Եթե նրա մտքերը վեհ են և նա կարողանում է հայել ժամանակի ու գոյության ամբողջությունը, ինչ ես կարծում, այդպիսի մարդու համար մարդկային կյանքը մե՞ծ բան է:

– Դա անհնար է:

b – Ուրեմն այդպիսի մարդը նաև մա՞հը չի համարի սարսափելի ինչ-որ բան:

– Հազիվ թե համարի:

– Իսկ վեհերոտ և նսեմ բնությանը իսկական փիլիսոփայությունը, ինչպես երևում է, հասանելի չէ:

– Ինձ թվում է՝ ոչ:

– Եվ ի՞նչ: Չափավոր և ոչ ընչաքաղց, ոչ նսեմ, ոչ պարծենկոտ, ոչ վեհերոտ մարդը կարո՞ղ է դառնալ անհաշտ ու անարդար:

– Չի կարող:

– Ահա ինչու քննելով՝ փիլիսոփայական է արդյոք որևէ մեկի հոգին, թե ոչ, դու դեռ իր պատանի տարիքից կնկատես՝ արդար և հե՞զ է, թե՞ դժվարահաղորդ ու վայրի:

– Իհարկե:

c – Կարծում եմ, չես մոռանա նաև հետևյալը...

– Ի՞նչը:

– Լա՞վ է արդյոք սովորում, թե՞ վատ: Թե՞ կարծում ես՝ մարդը բավականաչափ ժամանակի ընթացքում կարող է սիրել այն, ինչն իրեն չարչարանք է պատճառում և ինչը նա կատարում է մեծ դժվարությամբ:

– Այդպիսի բան չի կարող լինել:

– Եվ ի՞նչ: Եթե նա չի կարող մտապահել սովորածը և մոռացկոտ է, կարո՞ղ է արդյոք չլինել դատարկ նաև իմացության հարցում:

– Իհարկե, կլինի:

– Զուր չարչարվելով՝ մի՞թե ի վերջո չի ատի իրեն էլ, d
զբաղմունքն էլ:

– Անշուշտ:

– Մոռացկոտ հոգին մենք երբեք չենք դասի փիլիսոփայական հոգիների շարքում, այլ կփնտրենք լավ հիշողություն ունեցողին:

– Միանգամայն:

– Բայց չե՞նք ասի, որ մուսաներին անհաղորդ և այլանդակ բնությունը կարող է ձգտել ուրիշ որևէ բանի, բացի սանձարձակությունից:

– Եվ ի՞նչ:

– Իսկ ճշմարտությունը, քո կարծիքով, ազգակից է չափավորությա՞նը, թե՞ չափազրկությանը:

– Չափավորությանը:

– Այդ դեպքում մյուս բաներից զատ պետք է գտնել չափավորություն և բնատուր խելք, որը նրան հասու կդարձներ գոյության գաղափարին:

– Իհարկե: e

– Եվ ինչ, մի՞թե մենք չքննեցինք հատկություններ, որոնցից յուրաքանչյուրը, բխելով մյուսից, անհրաժեշտ է հոգուն գոյության բավարար և կատարյալ ըմբռնման համար:

– Շատ անհրաժեշտ է:

– Իսկ կարո՞ղ ես մեղադրել նման զբաղմունքը, որով ոչ 487
ոք չի կարող տանելի կերպով զբաղվել, եթե ի բնե օժտված չէ լավ հիշողությամբ, սովորելու ունակությամբ, մեծահոգությամբ, նրբությամբ, եթե չի սիրում և չի գնահատում ճշմարտությունը, արդարությունը, արիությունը և խոհեմությունը:

– Անգամ Մոմոսն այստեղ մեղադրանքի արժանի ոչինչ չէր գտնի[1]:

– Եվ մի՞թե չէիր վստահի պետության հոգսը ուսման մեջ կատարելության հասած տարեց մարդկանց:

Եվ Ադիմանտոսն ասաց. b

– Ո՛վ Սոկրատես, քեզ ոչ ոք չի կարող առարկել: Բայց ամեն անգամ, երբ խոսում ես այնպես, ինչպես հիմա, ունկնդիրներդ զգում են հետևյալը. հարցնելու և պատասխանելու անփորձության պատճառով նրանք մտածում են, թե քո հարցերից հետո մեր քննությունը փոքր-ինչ շեղում է իրենց, իսկ երբ աննշան շեղումները հավաքվում են, ակնհայտ է դառնում սրանց հակասությունը սկզբնական դրույթներին: Ինչպես
c տամախաղի լավ վարպետն ի վերջո զրկում է թույլին առաջ շարժվելու հնարավորությունից և սա չգիտի ինչ քայլ անել, այնպես էլ քո ունկնդիրները հայտնվում են փակուղու մեջ և չգիտեն ինչ ասել այս խաղի մեջ, որտեղ խաղաքարերի փոխարեն բառեր են: Իսկ իրականում դրանից ոչ ոք չի շահում: Սա ասում եմ՝ նկատի ունենալով մեզ. ներկաները կխոստո-
d վանեն, որ տվածդ ոչ մի հարցի առնչությամբ չեն կարող քեզ հակաճառել: Սակայն իրականում հարկ է նկատել. նրանք, ովքեր դիմել են փիլիսոփայությանը ոչ թե կրթվելու նպատակով, ինչպես դա անում են շատերը երիտասարդ տարիքում, իսկ հետո թողնում են, այլ երկար ժամանակ զբաղվում են փիլիսոփայությամբ, հիմնականում դառնում են շատ տարօրինակ, եթե չասենք բոլորովին անպիտան, այնպես որ անգամ նրանցից լավագույնները քո գովաբանած զբաղմունքից պետության համար դառնում են անպիտան:

Լսելով նրան՝ ես ասացի.

– Ըստ քեզ՝ այդպես ասողները սխալվու՞մ են:

– Չգիտեմ, բայց ես սիրով կլսեի քո կարծիքը:

e – Դու կլսես, որ, իմ կարծիքով, նրանք ճշմարիտ են ասում:

– Բայց ինչպե՞ս է դա համաձայնեցվում այն դրույթին, որ պետությունները չեն ազատվի չարիքներից, քանի դեռ այնտեղ չեն իշխում փիլիսոփաները, որոնց անպիտան ճանաչեցինք:

– Քո հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է դիմել օրինակի օգնությանը:

– Բայց դու, կարծեմ, սովոր չես օրինակների:

– Թո՛ղ այդպես լինի: Ինձ ներքաշեցիր դժվարին քննությանմեջ և դեռ ծաղրու՞մ ես: Լսիր օրինակս, որպեսզի տեսնես, թե որքան դժվար եմ կազմում այն: Պետության հարաբերությամբ ամենաարժանի մարդկանց վիճակն այնքան ծանր է, որ դրանից ավելի ծանր ոչինչ չկա: Օրինակ կառուցելու համար հարկ է լինում ի պաշտպանություն այդ մարդկանց վերցնել և ի մի բերել բազում գծեր, ինչպես դա անում են նկարիչները, երբ պատկերում են այծակերպ եղջերուներ[2] և նման ուրիշ բաներ: Պատկերացրու մարդու, որը մեկ կամ մի քանի նավերի նավապետ է: Նա և՛ հասակով, և՛ ուժով գերազանցում է մյուս բոլոր նավաստիներին, բայց խուլ է և վատ է տեսնում, հազիվ է գլուխ հանում նավավարությունից, իսկ նավաստիները իրար մեջ վիճում են իր պաշտոնի համար: Յուրաքանչյուրը կարծում է, թե ինքը պիտի գլխավորի նավը՝ թեպետ երբեք չի սովորել այդ արվեստը, չի կարող ասել, թե ով է իր ուսուցիչը և որքան ժամանակ է սովորել ինքը: Բացի այդ, նավաստիները հայտարարում են, թե այստեղ սովորելու ոչինչ չկա և պատրաստ են պատառ-պատառ անելու նրան, ով կասի, որ պետք է սովորել: Նրանք հետապնդում են նավավարին խնդրանքներով և ամեն ինչ անում, որպեսզի իրենց փոխանցի ղեկը: Երբեմն ոմանք չեն ենթարկվում նրան, իսկ ոմանք՝ միայն մասամբ, և այդ ժամանակ առաջինները սպանում են երկրորդներին և դուրս նետում նավից: Հաղթելով ազնիվ նավավարին մանդրագորի[3] կամ մեկ ուրիշ բանի միջոցով՝ նրանք զավթում են իշխանությունը և օգտվում բոլոր բարիքներից, խմում են, խրախճանք անում և վարում նավն այնպես, ինչպես դա բնական է նման մարդկանց համար: Բացի այդ, նրանք գովաբանում են և նավաստի, նավավար կամ նավավարության արվեստի գիտակ են կոչում նրան, ով կարող է զավթել նավի իշխանությունը բռնությամբ կամ էլ համոզելով նավավարին: Իսկ նրան, ով այդպիսին չէ, պարսավում են որպես անպիտան մեկին: Նրանք չգիտեն, որ ճշմարիտ նավարարը պետք է հաշվի առնի տար-

488 b c d

վա եղանակները, երկինքը, աստղերը, քամիները՝ ամեն ինչ, որ վերաբերում է իր արվեստին, եթե իսկապես ցանկանում է գլխավորել նավը, անկախ այն բանից՝ ցանկանում են դա ուրիշները, թե ոչ: Նրանք կարծում են, թե անհնար է ձեռք
e բերել նավավարի արվեստ, հմտություն և փորձ: Քանի որ նավերի վրա այդպիսի բաներ տեղի են ունենում, չե՞ս կարծում, որ նավաստիները պոռոտախոս ու անպետք մարդ կկոչեն հենց նրան, ով իրականում կարող է վարել նավը:

489 – Իհարկե,– ասաց Ադիմանտոսը:

– Ինձ չի թվում, որ տեսնելով այդպիսի պատկեր՝ դու կարիք ունեիր պարզաբանելու, թե ինչով է այն նման պետություններում իսկական փիլիսոփաների նկատմամբ եղած վերաբերմունքին: Հասկանու՞մ ես՝ ինչ նկատի ունեմ:

– Այն էլ ինչպես:

– Այդ դեպքում նախ բացատրիր այս օրինակը նրան, ով զարմանում է, թե ինչու փիլիսոփաները պետություններում չեն արժանանում պատվի, և փորձիր համոզել նրան, որ շատ ավելի զարմանալի կլիներ, եթե նրանց այնտեղ պատվեին:

b – Կբացատրեմ:

– Նաև այն, որ ճիշտ է ասում, թե փիլիսոփայության մեջ աչքի ընկածները շատերի համար ամենաանպիտան մարդիկ են: Սակայն հրամայիր նրան այդ անպիտանության մեջ մեղադրել նրանց, ովքեր ոչ մի կիրառություն չեն գտնում փիլիսոփաների համար, այլ ոչ այդ երևելի մարդկանց: Չէ՞ որ ան-
c բնական է, որ նավավարը խնդրի նավաստիներին ենթարկվել իրեն կամ իմաստունները թակեն հարուստների դռները, և նա, ով այդպես կատակել է, սխալվել է[4]: Իսկ ճշմարիտ և բնական է հետևյալը. լինի հարուստ թե աղքատ, եթե հիվանդացել է, պետք է դիմի բժիշկներին, իսկ յուրաքանչյուր ոք, որ ունի ենթարկվելու կարիք, պիտի դիմի նրան, ով կարող է իշխել, քանզի անբնական է, որ իշխողը, եթե, իհարկե, նա բանի պետք է, խնդրի ենթականերին ենթարկվել իրեն: Եվ սխալված չի լինի նա, ով այժմյան պետական իշխանավորներին կնմա-

նեցնի նավաստիներին, որոնց քիչ առաջ հիշատակեցինք, իսկ մարդկանց, որոնց անպետք և վերամբարձ են համարում, նմանեցնի ճշմարիտ նավավարներին:

– Շատ ճիշտ է:

– Այդ պատճառով և այդ իմաստով լավագույն զբաղմունքը չի կարող հեշտորեն պատիվ վայելել նրանց մոտ, ովքեր զբաղված են հակառակ գործով: Փիլիսոփայության վատ համբավի համար ամենից շատ մեղավոր են նրանք, ովքեր d
պնդում են, թե այդպիսի հարցերի քննությունը իրենց զբաղմունքն է. այդպիսիք ասում են, թե փիլիսոփայությամբ զբաղվողներից շատերը ամենահոռի մարդիկ են, իսկ ամենաբարեկիրթները պետության համար անպիտան են, և ես այնժամ համաձայնեցի, որ դու ճշմարիտ ես ասում: Այդպես չէ՞:

– Այո:

– Ուրեմն մենք քննեցինք երևելի մարդկանց անպիտանության պատճառը:

– Եվ շատ լավ քննեցինք:

– Կուզե՞ս հիմա էլ քննենք բազմության անխուսափելի արատավորության պատճառը և փորձենք ցույց տալ, որ այստեղ էլ մեղավորը փիլիսոփայությունը չէ: e

– Իհարկե:

– Ուրեմն լսենք և պատասխանենք՝ վերհիշելով այն, ինչ ասացինք մարդու բնության մասին, այսինքն՝ թե որ բնության դեպքում մարդը կլինի գեղեցիկ և բարի: Եթե հիշում ես, նա պիտի առաջնորդվի ճշմարտությամբ, հասնի դրան ամեն 490
կերպ ու բոլոր եղանակներով, իսկ ճամարտակը ոչ մի կերպ չի կարող հասնել ճշմարիտ փիլիսոփայության:

– Այո, մենք դա ասացինք:

– Արդեն միայն սա էականորեն հակադրվում է մեր այժմյան կարծիքին այդ ամենի մասին:

– Այն էլ ինչպես:

– Այդ դեպքում տեղին չի՞ լինի արդյոք պաշտպանել մեր կարծիքը, թե ի բնե իմացատենչը ձգտում է իսկական գոյու-

թյան և կանգ չի առնում բազում իրերի վրա, որոնք միայն
b թվում է, թե գոյություն ունեն, այլ առաջ է գնում, և նրա կիրքը
չի դադարում, մինչև չդիպչի յուրաքանչյուր իրի բնությանը
հոգու այն մասով, որով պատշաճ է դիպչել, իսկ պատշաճ է
ազգակից մասին: Մոտենալով նրանով և միանալով իսկական
գոյությանը, ծնելով խելք և ճշմարտություն՝ նա կճանաչի, իս-
կապես կապրի, կսնվի և միայն այդժամ կազատվի բեռից,
բայց ոչ դրանից վաղ:

– Այո, տեղին կլիներ:

– Եվ ի՞նչ: Արդյո՞ք այդպիսի մարդուն հատուկ կլինի սերը
ստի նկատմամբ, թե՞ հակառակը՝ ատելությունը:

c – Ատելությունը:

– Քանի որ նրան առաջնորդում է ճշմարտությունը, կար-
ծում եմ, երբեք չենք ասի, թե ճշմարտությանը ուղեկցում է
չարիքների երամը:

– Ինչպե՞ս:

– Ճշմարտությանը ուղեկցում է առողջ և արդար բարքը,
իսկ այս վերջինին՝ ողջախոհությունը:

– Ճիշտ է:

– Փիլիսոփայի բնություն ունեցող մարդու հատկանիշների
բազմությունը կարիք չկա կազմելու նորից: Դու հիշում ես, որ
այն պիտի կազմված լինի արիությունից, մեծահոգությունից,
ընկալողությունից և հիշողությունից: Դու առարկեցիր ինձ, թե
d ամեն ոք պիտի համաձայնի մեր ասածներին, մի կողմ թող-
նելով դատողությունները և դրա փոխարեն քննելով նրանց,
որոնց մասին խոսում ենք, և ասի, որ նրանց մեջ տեսնում է
բազում անպիտանների ու հոռիների: Վատ համբավի պատ-
ճառը քննելուց հետո մենք հիմա հանգեցինք հետևյալ հար-
ցին՝ ինչու՞ են նրանցից շատերը հոռի. այդ իսկ պատճառով
վերստին քննում ենք ճշմարիտ փիլիսոփաների բնությունը և
ստիպված ենք սահմանել նրանց:

– Այդպես է:

e – Այո, պետք է դիտարկել այդպիսի բնության այլասերումը,

1915.info

թե ինչպես է այն կործանվում շատերի մոտ, իսկ նրանց, որոնց մոտ նվազագույն իսկ չափով պահպանվում է, կոչում են ոչ թե հոռիներ, այլ անպիտաններ: Այնուհետև պետք է քննել սրանց նմանակողներին, որոնք զբաղվում են նրանց գործով: Այդպիսիք հոգով արժանի չեն զբաղվելու փիլիսոփա- 491
յությամբ, և դա իրենց ուժերից վեր է, այնպես որ իրենք են պատճառը փիլիսոփայությամբ զբաղվող բոլոր մարդկանց այն համբավի, որի մասին խոսում ես:

– Ի՞նչ այլասերում նկատի ունես:

– Փորձեմ բացատրել, եթե կարողանամ: Կարծում եմ, բոլորը կհամաձայնվեն, որ կատարյալ փիլիսոփա դառնալու մեր պահանջներին համապատասխանող բնության տեր մար- b
դը հազվադեպ է ծնվում մարդկանց մեջ՝ միայն որպես բացառություն: Թե՞ այդպես չես մտածում:

– Իհարկե այդպես:

– Նման մարդիկ քիչ են, բայց տե՛ս, թե որքան շատ բան է նրանց համար անչափ կործանարար:

– Այսի՞նքն:

– Ամեն ոք չափազանց կզարմանա, լսելով, որ այդ մարդկանց մեր գոված յուրաքանչյուր հատկություն կործանում է հոգին և շեղում է փիլիսոփայությունից: Նկատի ունեմ արիությունը, խոհեմությունը և այն ամենը, որ քննեցինք:

– Այո, տարօրինակ կլինի լսել դա:

– Բացի այդ, նրան կործանում և շեղում են բոլոր այսպես կոչված բարիքները՝ գեղեցկությունը, հարստությունը, մարմ- c
նի ուժը, ազդեցիկ ազգականությունը պետության մեջ և դրան առնչվող ամեն բան: Սա նկատի ունեմ:

– Հասկացա: Բայց հաճույքով ավելի հանգամանորեն կլսեի քո խոսքը:

– Ճիշտ ըմբռնիր ընդհանուր առմամբ, և քեզ միանգամայն հասկանալի կդառնա և անհեթեթ չի թվա սրա մասին նախապես ասվածը:

– Ինչպե՞ս կհրամայես անել դա:

d – Ամեն սերմի կամ սաղմի մասին, բուսական թե կենդանական, մենք գիտենք, որ զրկված լինելով իրենց սննդից, կլիմայից և տեղից՝ դրանք որքան ավելի մեծ են, այնքան ավելի շատ են կորցնում: Չէ՞ որ վատը ավելի հակադիր է լավին, քան ոչ լավին:

– Ինչպե՞ս չէ:

– Կարծում եմ, անհիմն չէ, որ սխալ սնուցման արդյունքում ազնիվ բնությունը դառնում է միջակից ավելի վատը:

– Այդպես է:

e – Ուրեմն, Ադիմանտոս, չե՞նք ասի, որ վատ դաստիարակության դեպքում նույնիսկ ամենաօժտված հոգիները դառնում են չափազանց վատը: Թե՞ կարծում ես, որ մեծագույն հանցանքները և ծայրահեղ արատավորությունը միջակության արգասիք են, այլ ոչ նրա, որ երիտասարդ բնությունը վնասված է դաստիարակությամբ: Իսկ բնությամբ տկարները չեն լինի ո՛չ մեծ բարիքների պատճառ, ո՛չ էլ մեծ չարիքների:

– Իհարկե այդպես է:

– Եթե փիլիսոփայի մեր հաստատած բնությունը ստանա
492 պատշաճ ուսում, կարծում եմ, աճելով կհասնի ամենայն առաքինության: Բայց եթե սերմանված և աճեցված է ոչ պատշաճ հողում, կլինի լրիվ հակառակը, եթե, իհարկե, աստվածներից որևէ մեկը նրան օգնության չգա: Թե՞ դու էլ շատերի պես կարծում ես՝ սոփեստներն այլասերել են միայն մի քանի երիտասարդների և իրականում նրանց այլասերում են առանձին մարդիկ, այնպես որ արժե խոսել հենց այդ մի քանիսի մասին: Մինչդեռ հենց այդպես խոսողներն են մեծագույն սոփեստներ, որոնք հրաշալիորեն գիտեն վերադաստիարակել և փոխել մարդկանց ինչպես ցանկանան՝ լինի երիտասարդ թե տարեց, տղամարդ թե կին:

b – Իսկ ե՞րբ են դա անում:

– Երբ մեծ քանակությամբ հավաքվում են ժողովարաններում, դատարաններում կամ թատրոններում, ճամբարներում կամ ուրիշ ընդհանուր հավաքներում և մեծ աղմուկով մա-

սամբ մերժում, մասամբ ընդունում են ոմանց խոսքը կամ գործը, և երկու դեպքում էլ ընկնում են ծայրահեղության մեջ: Նրանք աղաղակում են, ծափ են տալիս և, բացի այդ, նրանց c
պարսավանքը կամ գովեստը հնչեղ անդրադառնում է ժայռերից այնտեղ, ուր հավաքվել են, այնպես որ աղմուկը երկու անգամ ավելի ուժեղ է: Այսպիսի դեպքերում, ինչպես ասում են, ի՞նչ կկատարվի ըստ քեզ պատանու հոգում: Եվ մասնավոր ստացած ի՞նչ դաստիարակություն կարող է դիմակայել դրան և չքշվել այդ պարսավանքի ու գովեստի հոսանքով: Մի՞թե պատանին գեղեցիկ և այլանդակ չի համարի այն, ինչ իրենք են համարում, և չի զբաղվի նրանով, ինչով նրանք են զբաղվում: Մի՞թե նա էլ չի դառնա նրանց նման: d

– Անխուսափելիորեն, Սոկրատես:

– Մինչդեռ մենք քեզ հետ դեռ չենք խոսել բարձրագույն անհրաժեշտության մասին:

– Ո՞ր:

– Այն, որը գործով հավելում են խոսքին այդ դաստիարակներն ու սոփեստները, երբ չեն կարողանում համոզել խոսքով: Թե՞ չգիտես, որ անհնազանդին պատվազրկում են, տուգանում ու ենթարկում մահապատժի:

– Այդպես էլ անում են:

– Այդ դեպքում ի՞նչ սոփեստ կամ մասնավոր անձերի նրանց հասցեագրած ո՞ր խոսքը կարող է հաղթել նրանց, ի՞նչ e
ես կարծում:

– Ըստ իս, ոչ մի սոփեստ:

– Այո, ոչ մի: Այդպիսի փորձ անելն իսկ մեծ անմտություն կլիներ, քանզի, բարեկա՛մս, չկա, չի եղել և ոչ էլ կլինի հակադիր վերաբերմունք առաքինության նկատմամբ նրանց մոտ, ովքեր դաստիարակվել են մեծամասնության, այսինքն՝ մարդկանց կողմից: Սակայն աստվածային դաստիարակության համար մենք, ինչպես ասում է առածը, բացառություն կանենք[5]: Հարկ է լավ իմանալ, որ եթե ամեն ինչ պահպանվեց և շարունակում է գոյություն ունենալ պետությունների այսպիսի 493

դրվածքի պարագայում, կարող ես ասել, որ դա տեղի է ունենում աստվածների կամքով, և սխալված չես լինի:

– Այո, ինձ էլ է այդպես թվում:

– Մտածիր նաև հետևյալի մասին:

– Ինչի՞:

– Վարձ վերցնող բոլոր այդ մասնավոր անձանցից յուրաքանչյուրը,– իսկ նրանց կոչում են սոփեստներ և համարում ախոյան,– սովորեցնում են ոչ այլ ինչ, եթե ոչ բազմության կարծիքները, որոնք արտահայտվում են ժողովներում և որոնք նրանք կոչում են իմաստություն: Դա նման է նրան, որ
b ոմն, խնամելով մեծ և ուժեղ գազանին, ուսումնասիրեր նրա խառնվածքն ու տենչանքները, իմանար՝ որ կողմից կարելի է մոտենալ նրան, ինչպես դիպչել, երբ է սա գազազում և հանդարտվում, որն է դրա պատճառը, երբ է սովորաբար արձակում այս կամ այն ձայնը և արտաքին որ ձայներն են հանգստացնում կամ կատաղեցնում նրան: Ամեն տեսակ շփման և երկարատև փորձի արդյունքում հասկանալով այդ բոլորը՝ նա կոչում է դա իմաստություն և, ասես մի ձեռնարկ կազմելով, անցնում է դասավանդման: Սակայն իրականում նա ոչինչ չգիտի այդ կարծիքների և տենչանքների մասին, չգիտի՝ ինչն
c է դրանց մեջ գեղեցիկ, ամոթալի, բարի, չար, արդար կամ անարդար: Նա լոկ անվանում է այդ ամենը՝ ելնելով մեծ գազանի կարծիքներից. այն, ինչ հաճելի է թվում գազանին, կոչում է բարիք, իսկ այն, ինչ տհաճ է՝ չարիք: Այդ ամենի մասին նա ուրիշ ոչինչ չգիտի և լոկ արդար ու գեղեցիկ է կոչում այն, ինչն անհրաժեշտ է, իսկ թե որքան է իրականում տարբեր անհրաժեշտի և բարու բնությունը, չի տեսնում և չի կարող ցույց տալ մեկ ուրիշին: Եվ քանի որ այդպիսին է, ասա՛ հանուն Զևսի, մի՞թե նա չէր թվա քեզ անհեթեթ դաստիարակ:

– Իհարկե:

– Իսկ նրանից ինչո՞վ է տարբեր նա, ով իմաստություն է համարում այն, որ տեսել է, թե ինչն է հաճելի և ինչն է տհաճ
d հավաքված ամենատարբեր մարդկանց բազմությանը, ասենք

գեղանկարչության, երաժշտության կամ նույնիսկ քաղաքականության մեջ: Եթե նրանց ներկայությամբ նա ցույց է տալիս իր բանաստեղծական կամ ուրիշ գործերը և կամ էլ պետությանը մատուցած ծառայությունը, ապա հարկ եղածից ավելի շատ է իրեն տիրակալ դարձնում բազմությանը: Այդժամ «դիոմեդյան կարիքը»[6] ստիպում է նրան անել այն, ինչ արժանի է համարում բազմությունը: Իսկ իրականում լավ է դա թե վատ,– մի՞թե լսել ես երբևէ, որ նրանք հիմնավորեն դա՝ չվերածելով զավեշտի:

– Կարծում եմ, երբեք չեմ էլ լսի: e

– Մտապահելով այդ ամենը՝ հիշիր նաև այն, ինչի մասին արդեն խոսեցինք. կարո՞ղ է արդյոք ամբոխը ընդունել և ճանաչել հենց գեղեցիկը, և ոչ բազում գեղեցիկ իրերը, այսինքն՝ յուրաքանչյուր իրի էությունը, և ոչ իրերի բազմությունը: 494

– Բնավ:

– Հետևաբար ամբոխը չի կարող փիլիսոփա լինել:

– Ոչ, չի կարող:

– Ուրեմն փիլիսոփայությամբ զբաղվողները անհրաժեշտաբար կրելու են նրա կշտամբանքը:

– Անհրաժեշտաբար:

– Նաև կշտամբանքը բոլոր այն առանձին մարդկանց, որոնք, շփվելով ամբոխի հետ, ձգտում են սիրաշահել նրան:

– Ակնհայտ է:

– Ելնելով սրանից՝ ի՞նչն ես համարում փրկարար փիլիսոփայական բնության համար, որպեսզի սա չթողնի իր զբաղմունքը և հասնի նպատակին: Քննիր դա՝ ելնելով նախկինում b
ասվածից. մենք համաձայնվեցինք, որ այդպիսի բնությանը հատուկ է սովորելու հակումը, հիշողությունը, արիությունը և մտածողության վեհությունը:

– Այո:

– Այդպիսի մարդը մանկուց առաջինը կլինի բոլորի մեջ, հատկապես եթե նաև մարմնով ի բնե այնպիսին է, ինչպես հոգով:

– Ինչու՞ չպիտի լինի:

– Իսկ հարազատներն ու համաքաղաքացիները, երբ հասակ առնի, կցանկանան նրան պիտանի դարձնել [պետությանը]:

– Անկասկած:

c – Ուրեմն նրանք դիմելու են նրան խնդրանքներով և պատիվներ են մատուցելու, որպեսզի սիրաշահեն և ստանան նրա զորեղ աջակցությունը:

– Դա հաճախ է պատահում:

– Քո կարծիքով ինչպե՞ս կպահի իրեն այդ մարդը նման-ների մեջ, հատկապես եթե լինի մեծ պետության հարուստ, երևելի, բարետես ու ազդեցիկ քաղաքացիներից: Չի՞ ունենա արդյոք արտասովոր սպասումներ, չի՞ համարի իրեն ունակ

d վարելու ինչպես հույների, այնպես էլ բարբարոսների գործերը և չի՞ մեծամտանա՝ գոռոզանալով ու լցվելով դատարկ ու անմիտ ինքնավստահությամբ:

– Այն էլ ինչպես:

– Եթե ոմն մոտենա նրան այդ վիճակում և ասի ճշմարտությունը, որ սա չունի խելք, բայց պետք է ունենար, և որ կարելի է ձեռք բերել խելք՝ լծվելով այդ նպատակին, ինչ ես կարծում, հե՞շտ կլսի նա այդ ամենը իրեն համակած արատների անդնդից:

– Բոլորովին:

– Իսկ եթե ոմն իր լավ բնության և այդպիսի ուսմունքներին մոտ լինելու շնորհիվ ձգտի փիլիսոփայության և հակվի

e դրան, մեր կարծիքով ինչպե՞ս կգործեն դրա թշնամիները, որոնք կհասկանան, որ այլևս չեն կարող օգտագործել նրան որպես բարեկամի: Մի՞թե ամեն միջոց չեն ձեռնարկի և ամեն խոսքով չեն փորձի համոզել նրան, որպեսզի նրան խրատող ուրիշ մեկը ի վիճակի չլինի անելու դա: Մի՞թե չեն նյութի մասնավոր և հանրային դավեր, որպեսզի պատժեն նրան:

– Անհրաժեշտաբար:

495 – Իսկ կարո՞ղ է պատահել, որ այդ մարդը զբաղվի փիլիսոփայությամբ:

– Ամենևին:

– Տեսնու՞մ ես, մենք վատ չասացինք, որ փիլիսոփայական բնության հատկությունները, երբ սա գտնվում է վատ պայմաններում, ինչ-որ կերպ պատճառ են դառնում, որ մարդը դադարում է զբաղվել դրանով: Պատճառ են դառնում նաև արդեն հիշատակված բարիքները՝ հարստությունը և ամեն տեսակ ապահովությունը:

– Այո, դա ճիշտ ասվեց:

– Սա է, սիրելիս, որ կործանում և այլասերում է լավագույն բնությունը, որը պիտի զբաղվեր ազնվագույն գործով: Բայց b նման բնությունը, ինչպես ասացինք, հազվագյուտ է: Այդպիսին են մարդիկ, որոնք մեծ չարիքներ են պատճառում պետություններին և առանձին մարդկանց, և նրանք, ովքեր բարիք են գործում, եթե այն ձգում է նրանց: Մանր բնությունը երբեք ոչինչ չի անի ո՛չ առանձին մարդու, ո՛չ էլ պետության համար:

– Շատ ճիշտ է:

– Երբ մարդիկ, որոնց ամենից շատ է պատշաճում փիլիսոփայությամբ զբաղվելը, այդկերպ հեռանում են դրանից, փիլի- c սոփայությունը մնում է պակասավոր և անկատար, իսկ նրանք վարում են անպատշաճ և ոչ ճշմարիտ կյանք: Քանի որ փիլիսոփայությունն այդժամ որբանում է և կորցնում իր հարազատներին, նրանով զբաղվում են ուրիշները՝ ոչ արժանիները, և պատճառ են դառնում հիշատակածդ կշտամբանքին՝ որ փիլիսոփայությամբ զբաղվում են կա՛մ բոլորովին անարժան մարդիկ, կա՛մ էլ նրանք, ովքեր արժանի են ամենայն չարիքի:

– Այո, հենց այդպես էլ ասում են:

– Եվ ճիշտ են ասում: Չէ՞ որ որոշ աննշան մարդիկ, տեսնելով, որ տարածքը պարապ է, սակայն լի է գեղեցիկ անուններով և արտաքին շուքով, ասես բանտից սրբատեղի փախ- d չողների նման արհեստներից անցնում են փիլիսոփայության, հատկապես նրանք, ովքեր իրենց չնչին գործերում առավել ճարպիկ են: Չնայած այս ամենին՝ փիլիսոփայությունը մյուս արվեստների համեմատ ավելի մեծ պատիվ է վայելում, ինչն

էլ ձգում է բնությամբ անկատար շատերին, որոնց հոգին
վնասված է իրենց արհեստով զբաղվելու պատճառով, իսկ
e մարմինը խեղված ու հյուծված է կոպիտ աշխատանքից: Չէ՞
որ դա անխուսափելի է:

– Լիովին:

– Իսկ չե՞ս կարծում, որ նրանք ոչնչով չեն տարբերվում
այն հարստացած ճաղատ ու կարճահասակ դարբնից, որը
վերջերս ազատվելով բանտից, լվացվել է բաղնիքում, ձեռք է
բերել նոր թիկնոց ու զուգվել, ասես փեսացու, և ուզում է
ամուսնանալ աղքատության ու նեղության մեջ հայտնված իր
տիրոջ դստեր հետ:

– Բոլորովին չի տարբերվում:

496 – Ի՞նչ կարող են ծնել այդ մարդիկ: Միայն ապօրինի և ան-
պիտան զավակնե՞ր:

– Անխուսափելիորեն:

– Եվ ի՞նչ: Երբ դաստիարակության անարժան մարդիկ, մո-
տենալով նրան, անպատշաճ վարք են ցուցաբերում, ինչպիսի՞
մտքեր և կարծիքներ կծնվեն այդժամ, ի՞նչ կասենք: Իրակա-
նում դրանք չեն կարող կոչվել իմաստություն, քանի որ զուրկ
են ինչպես ճշմարտությունից, այնպես էլ մտածողությունից:

– Միանգամայն ճիշտ է:

– Իրականում, ո՛վ Ադիմանտոս, մնում են շատ քչերը, որ
զբաղվում են փիլիսոփայությամբ արժանիորեն: Այդպիսիք
b կա՛մ նրանք են, որ աքսորի մեջ նույնպես պահել են իրենց
ազնիվ ու մաքուր բարքը և կործանարար սպառնալիքների
բացակայությամբ չեն թողել փիլիսոփայությունը, կա՛մ էլ մե-
ծահոգի մարդիկ են, որ ծնվել են փոքր պետության մեջ և
քամահրում են պետական գործերը: Փիլիսոփայությամբ
կզբաղվեն նաև ուրիշ արվեստների հետևորդները, որոնք ի
բնե օժտված են, և կթողնեն իրենց նախկին զբաղմունքը:
c Նրանց կարող է պահել նաև մեր բարեկամ Թեագեսին[7] զսպող
սանձը: Նա ամեն կերպ ձգտում էր հեռանալ փիլիսոփայությու-
նից, սակայն մարմնի անառողջության պատճառով չի կարող

տրվել պետական գործերին: Իսկ իմ դեմոնային նշանի[8] մասին անգամ չարժե խոսել, քանի որ այդպիսի բան նախկինում ոչ ոքի չի պատահել: Նշված քչերը կճաշակեն փիլիսոփայական իմացությունից և կհասկանան, թե որքան քաղցր ու երանելի ծեռքբերում է դա: Նրանք բավականաչափ տեսել են բազմության մոլեգնությունը և այն, որ պետական գործերում ոչ ոք ըստ էության առողջ ոչինչ չի գործում, որ այդտեղ չկա դաշնակից, որի հետ հնարավոր լիներ գալ արդարության և փրկվել, և որ հայտնվելով ասես գազանների մեջ՝ մարդ չի ցան- d
կանա նրանց հետ համատեղ անարդարություն գործել, չի կարողանա հաղթել այդ բոլոր վայրենիներին և, նախքան պետությանը կամ բարեկամներին օգուտ տալը, կկործանվի՝ օգուտ չտալով ո՛չ իրեն, ո՛չ էլ ուրիշներին: Այս ամենը նկատի առնելով՝ նա հանգստություն է պահպանում և կատարում է իր գործը՝ ասես ծմռանը մնալով պատի ետնում և այդկերպ թաքնվելով քամիներից: Տեսնելով, որ մյուսները համակված են ան-
օրինությամբ, նա ուրախանում է, եթե կարողանում է ապրել e
կյանքը, զերծ մնալով անարդարությունից և ամբարշտությունից, իսկ հեռանում է զվարթ ու խոնարհ՝ լավագույնի հույսով:

– Ուրեմն, հեռանում է ոչ քիչ բան արած:

– Բայց ոչ էլ շատ, քանի որ պետությունը պատշաճ չէր 497
նրան: Իսկ եթե պատշաճ լիներ, մարդ ինքն էլ կաճեր և կպահպաներ ինչպես մասնավոր, այնպես էլ հանրային բարիքները: Իսկ թե ինչու փիլիսոփայությունն այդքան վատ համբավ ունի,– մի բան, որ անարդար է,– իմ կարծիքով, բավականաչափ քննվեց, եթե դու ասելու ուրիշ ոչինչ չունես:

– Ասելու ոչինչ չունեմ: Սակայն հիմա գոյություն ունեցող պետական կառույցներից ո՞րն ես համարում պատշաճ:

– Չկա այդպիսին, և ես հենց դա եմ արձանագրում, որ b
եղած պետություններից ոչ մեկը արժանի չէ փիլիսոփայի բնությանը: Այդպիսի պետություններում այն այլասերվում և կերպափոխվում է: Ինչպես օտար սերմերը, երբ դրվում են ուրիշ հողի մեջ, կորցնում են իրենց ուժը և ծեռք են բերում

տեղի բույսերի հատկությունները, այդպես էլ նշված բնությունն ունեցողները ներկայումս չեն դրսևորվում և ստանում
են օտար կերպ: Բայց եթե այդպիսի բնությունը հայտնվի ազ-
նվագույն պետության մեջ, նույնքան ազնիվ, որքան ինքն է,
c այդժամ կպարզվի, որ սա իրականում աստվածային է, իսկ
մնացյալը,– ինչպես բնությունները, այնպես էլ զբաղմունքնե-
րը,– մարդկային: Պարզ է, որ սրանից հետո դու կհարցնես,
թե ինչ պետություն է դա:

– Չգուշակեցիր: Ես ուզում էի հարցնել ոչ թե այդպես, այլ
այսպես. սա ուրի՞շ պետություն է, թե՞ այն մեկը, որն արդեն
քննեցինք, երբ հիմնեցինք մեր պետությունը:

– Ընդհանուր առմամբ այն մեկը, որ քննեցինք: Քանզի այն
ժամանակ էլ ասվեց, որ պետության մեջ միշտ պիտի գոյու-
d թյուն ունենա խավ, որը մտածում է, ինչպես դու, երբ որպես
օրենսդիր սահմանում էիր այդ օրենքները:

– Այո, ասվեց:

– Բայց դա բավականաչափ չհստակեցվեց, քանի որ դուք՝
նախապես երկյուղածներդ, որոշեցիք, որ այդ հարցի քննու-
թյունը երկար և բարդ կլինի: Մնացյալը նույնպես հեշտ չէ
քննել:

– Ի՞նչը:

– Թե ինչպես կիրառել փիլիսոփայությունը, որ պետությունը դրանից չտուժի: Չէ՞ որ ամենայն մեծություն անկայուն է,
իսկ գեղեցիկը, ինչպես ասում են, իսկապես դժվար է:

e – Սակայն մեր ապացույցը պարզ կդառնա, միայն երբ
ավարտենք այն:

– Խոչընդոտ կլինի ոչ թե ցանկության բացակայությունը,
այլ անկարողությունը: Դու հիմա կտեսնես իմ ջանքերը: Տե՛ս,
թե որքան ջանադրորեն և արիաբար եմ պատրաստվում
ասելու, որ պետությունը պետք է սկսի գործել միանգամայն
այլ կերպ, քան գործում է հիմա:

– Ինչպե՞ս:

498 – Փիլիսոփայությամբ փորձում են զբաղվել դեռահասնե-

որը, որոնք դեռևս դուրս չեն եկել մանկությունից և չունեն տուն ու աշխատանք: Հազիվ մոտենալով փիլիսոփայության դժվար հարցերին՝ նրանք թողնում են դրանք և իրենց փիլիսոփաներ երևակայում: Իսկ ես պնդում եմ, որ փիլիսոփայության մեջ ամենադժվարը [հենց այդ հարցերի] քննությունն է: Հետագայում, եթե ուրիշների խորհրդով,– նրանց, որ զբաղվում են փիլիսոփայությամբ,– ցանկանում են դառնալ վերջիններիս ունկնդիրները, դա մեծ բան են համարում, թեպետ կարծում են, թե պիտի անեն դա ի միջի այլոց: Ծեր տարիքում, սակավ բացառությամբ, նրանք հանգչում են ավելի արագ, b
քան հերակլիտյան արեգակը[9], քանի որ այլևս չեն բռնկվում:

– Իսկ ինչպե՞ս պետք է զբաղվել փիլիսոփայությամբ:

– Հարկ է անել հակառակը: Դեռահասներն ու տղաները պիտի դաստիարակվեն և հաղորդակից դառնան փիլիսոփայությանը իրենց տարիքի համեմատ, հոգ տանելով իրենց մարմնի մասին, քանի դեռ աճում և առնականանում են, և դա միայն օգտակար կլինի փիլիսոփայությանը: Տարիքի հետ, երբ սկսի կատարելագործվել իրենց հոգին, նրանք պետք է ջանասիրաբար մարզեն այն: Երբ իրենց ուժը նվազի և նրանք
ի վիճակի չլինեն քաղաքական ու ռազմական գործեր կատա- c
րելու, այդժամ ազատություն կստանան և ուրիշ ոչնչով չեն զբաղվի, կամ կզբաղվեն միայն ի միջի այլոց, քանի որ ցանկանում են երանելի կյանք վարել, իսկ մեռնելուց հետո ապրած կյանքին գումարել անդենական պատշաճ բախտ:

– Իրոք, Սոկրատես, ըստ իս՝ դու խոսում ես մեծ խանդավառությամբ, բայց ես կարծում եմ, լսողներից շատերը՝ սկսած Թրասիմաքոսից, ավելի մեծ խանդավառությամբ կառարկեին քեզ, քանզի չես համոզել նրանց:

– Ինձ ու Թրասիմաքոսին մի՛ թշնամացրու. նոր ենք ընկերացել, թեև նախկինում էլ թշնամիներ չէինք: Ամեն միջոց
կփորձեմ, որպեսզի համոզեմ և՛ նրան, և՛ մյուսներին կամ օգ- d
տակար լինեմ նրանց մյուս կյանքում, երբ նորից ծնվելով՝ վերստին բախվեն այս հարցերին:

– Ասածդ շատ ուշ չի՞ լինի:

– Հավիտենության համեմատությամբ այդ ժամանակը ոչինչ է: Իսկ որ մարդկանց մեծամասնությունը չի ցանկա-
e նում հավատալ ասածներիդ, զարմանալի չէ: Չէ՞ որ նրանք երբևէ չեն տեսել այն, ինչի մասին խոսում ենք, և նրանց համար սրանք բառեր են, որոնք դիտավորյալ հարմարեցված են իրար, բայց ոչ բառեր, որոնք ինքնաբերաբար բխում են մեկը մյուսից: Նաև մարդուն, որը հար և նման կլիներ հենց առաքինությանը և հնարավորինս կատարելության կհասներ թե՛ գործով և թե՛ խոսքով ու կիշխեր այսպիսի պետության մեջ, նրանք երբեք չեն տեսել՝ ո՛չ այդպիսի մեկին, ո՛չ էլ շատերին: Թե՞ կարծում ես տեսել են:

– Բնավ:

499 – Բացի այդ, նրանք, սիրելի՛ս, չեն լսել գեղեցիկ ու վեհ զրույցներ, երբ բոլոր եղանակներով ու ամենայն եռանդով հետազոտվում է ճշմարտությունը և դրա ճանաչողության ուղիները, որոնք ոչ մի կապ չունեն փառքի ու մրցակցության համար դատարաններում և մասնավոր շփումների ժամանակ տեղի ունեցող սնապարծ վեճերի հետ:

b – Ոչ, չեն լսել:

– Ահա ինչու մենք այն ժամանակ կանխատեսելով դա՝ վախենում էինք դրանից, սակայն, առաջնորդվելով ճշմարտությամբ, ասում էինք, որ ո՛չ պետությունը, ո՛չ էլ պետական կարգը, ինչպես և առանձին մարդը, երբեք չեն դառնա կատարյալ, քանի դեռ որևէ կարիք չի ստիպել այդ սակավաթիվ փիլիսոփաներին, որոնք ամենևին էլ հոռի մարդիկ չեն, թեպետ նրանց հիմա անպիտան են կոչում, անկախ իրենց կամ-
c քից հոգ տանել պետության մասին: Եվ պետությունը պետք է լսի նրանց: Կամ՝ մինչև որ աստվածային մի ներշնչանքով այժմյան տիրակալների և իշխանների որդիները կամ հենց իրենք չհամակվեն իսկական փիլիսոփայության կրքով: Մտածել, թե այդ երկու հնարավորություններից մեկը կամ երկուսն էլ անհնար են, ես չեմ համարձակվում: Քանզի այդ դեպքում

մեզ արդարացիորեն կծաղրեն, որ զբաղված ենք փուչ բաներով: Այդպես չէ՞:

– Այդպես է:

– Եթե փիլիսոփայության մեջ երևելի մարդկանց համար անսահման անցյալում անհրաժեշտություն է եղել կամ կա հիմա իրենց վրա վերցնելու պետության հոգսը,– որևէ բարբարոսական երկրում՝ հեռու և մեր տեսադաշտից դուրս,– կամ d
եթե այդպիսի անհրաժեշտություն ծագի հետագայում, մենք պատրաստ ենք պաշտպանելու պնդումը, որ այդպիսի պետական կառույց եղել է, կա և կլինի, եթե, իհարկե, հենց այս մուսան է պետության տիրակալը: Այդպիսի պետությունը հնարավոր է, և մենք չենք խոսում անհնարի մասին: Թեպետ, իհարկե, դա դժվար է:

– Ես էլ եմ այդպես կարծում:

– Բայց դու կասես, որ բազմությունն այդպես չի մտածում:

– Գուցե:

– Սիրելի՛ս, պետք չէ մեղադրել բազմությանը: Նա կփոխի
իր կարծիքը, եթե դու առանց կոպտելու, համոզելով հերքես e
իմացատենչության վատ համբավը, ցույց տաս և ասես, թե ովքեր են փիլիսոփաները, սահմանես նրանց բնությունն ու զբաղմունքը, որպեսզի բազմությունը չկարծի, թե խոսում ես իրենց նկատի ունեցած փիլիսոփաների մասին: Եթե բազմությունն այդպիսին համարի նրանց, դու կասես, որ նա կազմել
է ուրիշ կարծիք և ուրիշ դատողություններ է անում նրանց 500
մասին: Մի՞թե քեզ թվում է, թե որևէ մեկը բարկությամբ կվերաբերվի նրան, ով չի բարկանում, և կնախանձի նրան, ով նախանձ չունի: Քեզ կանխելով՝ ասեմ, որ այսպիսի ծանր բնավորություն ունեն քչերը, իսկ շատերը՝ ոչ:

– Հանգիստ եղիր, ես համամիտ եմ քեզ:

– Իսկ համաձա՞յն ես նաև, որ փիլիսոփայության նկատ- b
մամբ բազմության անբարեհաճ վերաբերմունքի պատճառը նրանք են, ովքեր աղմուկ-աղաղակով մուտք են գործում այնտեղ, ուր չպետք է մտնեն, թշնամանք են տարածում, պար-

սավում են ու անվերջ հարձակվում մարդկանց վրա և իրենց պահում են փիլիսոփային բոլորովին անվայել կերպով:

– Լիովին համաձայն եմ:

– Սակայն, Ադիմանտոս, նա, ում միտքն ուղղված է դեպի գոյությունը, ժամանակ չունի նայելու ցած, մարդկային գոր-
c ծերին, և պայքարելով նրանց դեմ՝ լցվելու նախանձով ու ատելությամբ: Տեսնելով և հայելով բարեկազմ ու մշտապես նույնական ինչ-որ բան, որն անարդարություն չի գործում ու չի կրում, լի է կարգով ու իմաստով, նա նմանակում և առավելագույնս նմանվում է դրան: Թե՞ կարծում ես, որևէ հնար կա չնմանակելու այն, ինչով հիանում ես հետը շփվելիս:

– Դա անհնար է:

– Շփվելով աստվածայինի և կարգավորվածի հետ՝ փիլի-
d սոփան նույնպես դառնում է կարգավորված և աստվածային, որքան որ թույլ են տալիս մարդկային ուժերը: Իսկ զրպարտել կարելի է ամեն ինչ:

– Իհարկե:

– Եթե փիլիսոփային անհրաժեշտ է լինում հոգ տանել, որ մարդկանց մասնավոր ու հանրային կենցաղի մեջ մտնի այն, ինչ նա տեսնում է այնտեղ, և եթե նա զբաղված չէ միայն իր կատարելագործմամբ, ինչ ես կարծում՝ կարո՞ղ է նա լինել ժողովրդին օգտակար խոհեմության, արդարության և ընդհանրապես առաքինության վատ վարպետ:

– Բնավ:

e – Բայց եթե բազմությունը հասկանա, որ մենք նրա մասին ճշմարիտն ենք ասում, կբարկանա՞ փիլիսոփաների վրա և կհավատա՞ մեր այն պնդմանը, որ պետությունը ոչ մի դեպքում չի ծաղկի, եթե գեղանկարիչները չպատկերեն այն ըստ աստվածային օրինակի:

501 – Եթե հասկանա, այլևս չի բարկանա: Բայց պատկերման ի՞նչ եղանակի մասին ես խոսում:

– Նախ նրանք կվերցնեին պետությունն ու մարդկային բարքերը և կմաքրեին դրանք, ասես մի տախտակ, որ բնավ

հեշտ չէ: Բայց դու գիտես, որ նրանք ի սկզբանե կտարբերվեին մյուսներից նրանով, որ չէին ցանկանա ծեռք տալ ո՛չ առանձին մարդկանց, ո՛չ էլ պետությանը և չէին գրի օրենքներ, քանի դեռ չեն ստացել մաքուր պետություն կամ իրենք չեն մաքրել այն:

– Ճիշտ է:

– Իհարկե, դրանից հետո նրանք կկազմեն պետական կառույցի ուրվապատկերը:

– Անտարակույս:

– Այնուհետև, կարծում եմ, մշակելով այդ ուրվապատկերը՝ b
նրանք ուշադրություն կդարձնեն երկու բանի վրա. ինչն է ի բնե արդար, գեղեցիկ, խոհեմ և այլն, և ինչպիսին է այդ ամենը մարդկանց մեջ: Միախառնելով և համադրելով մարդկանց զբաղմունքները՝ նրանք կստեղծեն նախատիպն այն մարդու, որին հատուկ է այն, ինչն արդեն Հոմերոսը կոչել է մարդկանց աստվածակերպ և աստվածանման բնույթ[10]:

– Ճիշտ է:

– Եվ ես կարծում եմ, ինչ-ինչ բաներ նրանք կջնջեն, ինչ-ինչ բաներ կպատկերեն նորից, մինչև որ աստվածներին հնարավորինս հաճո դարձնեն մարդկային բարքերը: c

– Դա կլիներ գեղեցկագույն պատկեր:

– Իսկ նրանց, ովքեր շարքով ելնում էին մեր դեմ, մի՞թե չէինք համոզի, որ պետական կառույց ուրվագծողը, որին քիչ առաջ էլ գովեցինք, հենց այդպիսին է, իսկ նրանք բարկանում էին, թե մենք նրան ենք հանձնել պետությունը: Եվ եթե հիմա լսեին մեզ, մի՞թե չէին դառնա առավել բարյացակամ:

– Այն էլ ինչպես, եթե, իհարկե, խոհեմ են:

– Իսկ ինչպե՞ս են առարկելու: Ասելու են, թե փիլիսոփա- d
ները գոյության և ճշմարտության սիրահարներ չե՞ն:

– Դա անհեթեթ կլիներ:

– Կամ էլ՝ թե նրանց բնությունը, որը մենք քննեցինք, ազգակից չէ՞ բարձրագույն բարիքին:

– Ոչ էլ դա:

– Եվ ի՞նչ: Եթե ոչ դա, ուրիշ ի՞նչ բնություն պիտի լինի, եթե պատշաճ զբաղմունք ունենալու դեպքում կարող է կատարելապես առաքինի և փիլիսոփայական լինել: Գուցե ավելի ճիշտ կլինի դա ասել նրանց մասին, որոնց մերժեցի՞նք:

e – Իհարկե ոչ:

– Թե՞ նրանց դեռ բարկացնում են մեր այն խոսքերը, որ ո՛չ պետության, ո՛չ էլ քաղաքացիների համար չարիքները չեն դադարի, քանի դեռ պետության տիրակալ չի դարձել փիլիսոփաների ցեղը կամ գործնականում չի հաստատվել մեր նկարագրած պետական կառույցը:

– Գուցե դա է բարկացնում, բայց պակաս չափով:

– Եթե կուզես, ասենք, որ ոչ միայն պակաս են բարկա-
502 նում, այլև լրիվ խաղաղվել են, համոզվել ու համաձայնվել, թեկուզ և ամոթից:

– Իհարկե:

– Ուրեմն այդ հարցում համոզեցինք նրանց: Իսկ ո՞վ չի համաձայնվի, որ արքաների և տիրակալների հետնորդների ու ժառանգների մեջ կպատահեն փիլիսոփայական բնության տեր մարդիկ:

– Ոչ ոք:

– Իսկ եթե այդպիսիք գոյություն ունեն, մի՞թե լիովին անխուսափելի է, որ նրանք այլասերվեն: Այն, որ նրանց համար դժվար է փրկվել, մենք էլ ենք ընդունում: Բայց մի՞թե անվի-
b ճարկելի է, որ բոլոր ժամանակներում նրանցից ոչ մեկը երբեք չի փրկվի:

– Բնավ:

– Եվ բավական է այդպիսի մեկը իշխի պետության մեջ, նա կկատարի այն ամենը, ինչին հիմա չեն հավատում:

– Այո, բավական է:

– Եթե տիրակալը սահմանի օրենքներն ու ավանդույթները, որոնց մասին խոսեցինք, հնարավոր է, որ քաղաքացիները ցանկանան կատարել դրանք:

– Լիովին:

– Իսկ մեր կարծիքներն ընդունել նրանց համար զարմանալի և անհնա՞ր կլիներ:

– Ես այդպես չեմ կարծում: c

– Բայց մենք նախկինում բավարար չափով պարզեցինք, որ մեր առաջարկածը, եթե այն հնարավոր է, լավագույնն է:

– Այո, բավարար չափով:

– Իսկ հիմա, ինչպես երևում է, օրենսդրության հարցում լավագույնը կլինի, որ տեղի ունենա այն, ինչ մենք ենք ասում, և թեպետ դա դժվար է, սակայն անհնարին չէ:

– Այո, դա կլինի լավագույնը:

– Այդ հարցի քննությունն ավարտելուց հետո հարկ է ասել նաև մնացյալի մասին՝ ինչպե՞ս և ի՞նչ գիտությունների ու d
զբաղմունքների հիման վրա են գոյանում պետական կառույցի պահապանները, ի՞նչ տարիքում է նրանցից յուրաքանչյուրն անցնում իր գործին:

– Այո, այդ մասին պետք է ասել:

– Ես ոչինչ չշահեցի՝ նախապես մի կողմ թողնելով կանանց, ամուսնության, զավակածնության և իշխանական պաշտոնների նշանակման հարցերը. գիտեի, որ կատարյալ ճշմարտությունը կլինի տհաճ և ծանր: Սակայն, միևնույն է, պարզվեց, որ այս դժվարին հարցը ևս պետք է քննել: Կանանց և զավակների հանգամանքը քննվեց, իսկ տիրակալներինը պետք է քննել ասես սկզբից: Եթե հիշում ես, մենք ասացինք, որ նրանք
պետք է սիրեն իրենց պետությունը ինչպես ուրախության մեջ, 503
այնպես էլ տխրության, և պետք է երևա, որ իրենց այդ համոզմունքից նրանք չեն հրաժարվի ո՛չ դժվարության պահին, ո՛չ վտանգի, ո՛չ էլ ուրիշ հանգամանքներում: Թույլին կմերժեն, իսկ նրան, ով այդ ամենից մաքուր դուրս կգա, ինչպես ոսկին հրից, հարկ է նշանակել տիրակալ և պատիվներ մատուցել թե՛ կյանքի օրոք և թե՛ հետմահու: Ահա թե ինչ ասվեց, երբ մեր խոսքը հպանցիկորեն առնչվեց դրան, բայց իսկույն թաքնվեց՝ վախենալով գրգռել այն, ինչ բացվեց մեր առաջ: b

– Շատ ճիշտ ես ասում: Հիշում եմ:

– Այնժամ, բարեկամս, ես չհամարձակվեցի ասել: Իսկ հիմա համարձակվենք ասել, որ իբրև ամենավստահելի պահապանների հարկ է նշանակել փիլիսոփաներին:

– Ասենք նաև դա:

– Նկատի առ, որ քեզ մոտ նրանք քիչ են: Չէ՞ որ նրանց բնությունը պիտի լինի այնպիսին, ինչպիսին է ըստ մեր քննության: Այդ բնությունն ունեցողների այդպիսի որակները հազվադեպ են պատահում համատեղ. ավելի հաճախ դրանք լինում են ցրված:

– Ի՞նչ նկատի ունես:

c – Սովորելու ընդունակությունը, լավ հիշողությունը, սրամտությունը, խորաթափանցությունը և բոլոր նման բաները չեն հանդիպում միասին և միաժամանակ, իսկ աշխույժ մտքի տեր երիտասարդ մարդիկ չեն ցանկանում ապրել չափավոր և հանգիստ, այլ իրենց աշխուժության պատճառով շարժվում են ուր պատահի, և ամեն հաստատուն բան լքում է նրանց:

– Ճշմարիտ ես ասում:

– Իսկ եթե մարդիկ իրենց բնավորությամբ կայուն են և ոչ

d փոփոխական, նրանց կարելի է վստահել. պատերազմի ժամանակ նրանք չունեն վախ, սակայն ուսման մեջ դանդաղամիտ են: Նրանք համառ են, դժվար են սովորում և ասես թմրած լինեն և, երբ հարկ է լինում այդպիսի որևէ բան հաղթահարել, դառնում են քնկոտ ու հորանջող:

– Այդպես է:

– Մինչդեռ մենք ասացինք, որ մարդը երկու հատկություններով էլ օժտված պետք է լինի, այլապես չարժե նրան հիմնավոր կրթություն տալ և պատիվներ ու իշխանություն շնորհել:

– Ճիշտ է:

– Իսկ չե՞ս կարծում, որ այդպես հազվադեպ է պատահում:

– Իհարկե:

e – Ուրեմն նրան պետք է ստուգել դժվարությունների, վտանգների և ուրախությունների մեջ, ինչպես արդեն ասել

ենք: Ավելացնենք նաև այն ժամանակ բաց թողածը: Նրան պետք է վարժեցնել բազում գիտություններում, նայելով՝ կարո՞ղ է արդյոք լուրջ գիտելիքներ ծեռք բերել, թե՞ կվախենա դրանցից, ինչպես վախենում են այլ վարժանքներից: 504

– Դա պետք է տեսնել: Բայց ո՞ր գիտելիքներն ես լուրջ կոչում:

– Հիշու՞մ ես, որ տարբերելով հոգու երեք տեսակ՝ մենք եզրակացրինք արդարության, խոհեմության, արիության և իմաստության մասին, սահմանելով, թե ինչ է դրանցից յուրաքանչյուրը[11]:

– Եթե չհիշեի, իրավունք չէի ունենա լսելու մնացյալը:

– Իսկ հիշու՞մ ես, թե ինչ ասացինք դրանից առաջ:

– Ի՞նչ: b

– Ասացինք, որ դրանք լավագույնս դիտարկելու համար կա մեկ ուրիշ՝ ավելի երկար ճանապարհ, որն անցնելու դեպքում դրանք կլուսաբանվեն: Թեպետ, իհարկե, նախկինում ասվածի հիման վրա կարելի է կառուցել անհրաժեշտ ապացույցներ: Մենք նշեցինք, որ եղածը բավարար է, սակայն, ինչպես ինձ թվում է, շատ բան այդտեղ ճշտված չէ: Իսկ եթե դրանք ձեզ բավարարում են, ինքներդ ասեք դա:

– Սակայն ինձ դրանք բավարար թվացին: Մյուսներին նույնպես:

– Բայց, հարգելիս, եթե բավարարը այդպիսի հարցերում c
ինչ-որ չափով ետ է մնում գոյություն ունեցողից, չի լինի լիովին բավարար: Չէ՞ որ անկատարը ոչ մի բանի համար բավարար լինել չի կարող: Իհարկե, երբեմն ոմանք սա էլ բավարար են համարում և ուրիշ ոչինչ փնտրել չեն փորձում:

– Այդպիսի բավարարում կարող են զգալ շատերը, և պատճառն անտարբերությունն է:

– Բայց այդպիսի զգացում բոլորից քիչ պիտի ունենա պետության և օրենքների պահապանը:

– Իհարկե:

– Ուրեմն, բարեկամս, նա պիտի անցնի երկար ճանա- d

պարհ և ոչ պակաս ջանքեր գործադրի ուսման մեջ, քան մարմնամարզության, այլապես, ինչպես ասացինք քիչ առաջ, երբեք չի հասնի կատարելության կարևորագույնի և իրեն առավելապես համապատասխանող իմացության մեջ:

– Բայց մի՞թե որևէ բան ավելի կարևոր է արդարությունից և այն ամենից, ինչ քննեցինք:

– Այո, կա ավելի կարևոր բան, որ պիտի քննենք ոչ թե ընդհանուր գծերով, ինչպես հիմա, այլ հանգամանորեն և ամեն ինչ հասցնելով կատարելության: Մի՞թե զավեշտ չէ, որ աննշան
e հարցերի պարագայում ջանքեր են գործադրվում, որպեսզի ամեն բան առավելագույնս հստակ և մաքուր լինի, իսկ ամենակարևոր հարցը չի արժանանում մեծագույն բծախնդրության:

– Այո, իրականում արժանի է: Բայց ո՞րն է կարևորագույն այդ իմացությունը, որի մասին խոսում ես, և ինչի՞ մասին է, ինչ ես կարծում: Թե՞ հույս ունես, քեզ բաց կթողնեն առանց այդ հարցը տալու:

– Բնավ, սակայն դու էլ հարց տուր: Դու, իհարկե, ինքդ էլ հաճախ լսել ես այդ մասին, իսկ հիմա կա՛մ չես հասկանում, կա՛մ էլ դիտավորյալ խույս ես տալիս, որպեսզի մեծ գործ բացես ինձ: Կարծում եմ, ավելի շուտ այս վերջինն է: Հաճախ ես
505 լսել, որ բարիքի գաղափարն է կարևորագույն իմացությունը. դա է պիտանիություն և օգտակարություն հաղորդում արդարությանը և մնացյալ ամեն ինչի: Դու հիմա էլ գրեթե համոզված ես, որ հենց այդպես պիտի ասեմ և որ այդ գաղափարը բավականաչափ չգիտենք: Իսկ քանի որ չգիտենք, առանց այդ գաղափարի, անգամ եթե ունենք մյուս բաների մասին ամենահարուստ գիտելիքները, իմացիր, որ մեզ ոչինչ չի օգնի: Սա նման է նրան, որ մենք ձեռք բերենք ինչ-որ իր՝ չմտածելով դրա բերած բարիքի մասին: Թե՞ կարծում ես, որ պետք է ամեն ինչ ձեռք բերել, առանց խորհելու՝ բարիք է արդյոք:
b Գուցե կարելի է խորհել ամեն ինչ, բայց գեղեցիկի և բարիքի մասին բնավ չխորհե՞լ:

– Զևսը վկա, ես այդպես չեմ կարծում:

– Բայց չէ՞ որ դու գիտես, որ ըստ շատերի՝ բարիքը վայելքն է, իսկ ավելի նուրբ հոգիների համար՝ ըմբռնումը:

– Ինչպե՞ս չէ:

– Եվ գիտես, բարեկամս, որ նրանք, ովքեր այդպես են կարծում, ի վիճակի չեն ցույց տալու, թե ինչ է այդ ըմբռնումը, և ի վերջո ասում են, որ դա բարիքի ըմբռնում է:

– Դա շատ ծիծաղելի է:

– Իհարկե, եթե մեղադրելով մեզ բարիքի չիմացության մեջ՝ մեզ հետ խոսում են որպես իմացողների: Նրանք ասում են, որ բարիք է լավի ըմբռնումը, ասես «բարիք» բառը հաճախ լսելիս կսկսենք հասկանալ, թե ինչ նկատի ունեն: c

– Շատ ճիշտ է:

– Եվ ինչ, նրանք, ովքեր սահմանում են հաճույքը որպես բարիք, ավելի քի՞չ են համակված մոլորությամբ, քան ուրիշները: Ստիպված չե՞ն արդյոք համաձայնել, որ լինում են հոռի վայելքներ:

– Այն էլ ինչպես:

– Հետևաբար նրանք, իմ կարծիքով, համաձայն են, որ բարիքներն ու չարիքները նույնն են: Այդպես չէ՞: d

– Այդպես է:

– Ուրեմն պարզ է, որ այդ հարցերում վիճելի և կարևոր շատ բաներ կան:

– Ինչպե՞ս չէ:

– Արդ, մի՞թե պարզ չէ, որ իբրև արդար և գեղեցիկ բաներ շատերը կընտրեին այն, ինչը թվում է այդպիսին, անգամ եթե այդպիսին չէ, և կգործեին, ձեռք կբերեին և կարծիք կկազմեին՝ հիմնվելով իրենց թվացածի վրա: Իսկ ահա բարիքի հարցում ոչ ոք չի բավարարվում կարծեցյալով, այլ փնտրում է իսկականը, իսկ կարծեցյալն արդեն ամեն ոք քամահրում է:

– Իհարկե:

– Բարիքին է հետևում յուրաքանչյուր հոգի և ամեն ինչ գործում հանուն դրա՝ կանխազգալով, որ կա այդպիսի բան, e

սակայն ինքը դժվարանում է և ի վիճակի չէ հասկանալու, թե
ինչ է դա. չի կարողանում արժանի հավատ ընծայել դրան,
ինչպես շատ ուրիշ բաների, ահա ինչու անհաջողության է
մատնվում նաև շատ այնպիսի բաներում, որոնք կարող էին
506 օգտակար լինել: Մի՞թե կասենք, որ պետության լավագույն
մարդիկ, որոնց ուզում ենք հանձնել ամեն ինչ, այդ հարցերի
առնչությամբ պիտի հայտնվեն խավարում:

– Հազիվ թե:

– Ես կարծում եմ, որ արդարությունն ու գեղեցկությունը,
քանի դեռ բարիք չեն ճանաչվել, չեն գտնի արժանի պահա-
պան ի դեմս նրա, ով չի ճանաչում դրանք: Ես կանխազգում
եմ, որ առանց դրա ոչ ոք չի էլ կարող ճանաչել:

– Շատ ճիշտ ես կանխազգում:

b – Ուրեմն պետական կառույցը մեզ մոտ կատարյալ կլինի,
եթե վերակացու նշանակվի այդ գործի գիտակը:

– Անհրաժեշտաբար: Բայց դու, ո՛վ Սոկրատես, իմացու-
թյունը բարի՞ք ես համարում, թե՞ հաճույք: Կամ գուցե մեկ
ա՞յլ բան:

– Ի՜նչ մարդ ես դու: Ինձ քաջ հայտնի է, և դու էլ նախ-
կինում ցույց ես տվել, որ քեզ չի բավարարում, թե ինչ են
մտածում այս ամենի մասին ուրիշները:

– Ինձ, Սոկրատես, ճիշտ չի թվում, երբ այլոց կարծիքները
կարողանում են շարադրել, իսկ սեփական կարծիքները՝ ոչ,
չնայած որ երկար ժամանակ է, ինչ գործ ունեն առարկայի
հետ, որի մասին կազմել են այդ կարծիքը:

c – Ինչպե՞ս: Քեզ ճի՞շտ է թվում, որ մարդիկ կարող են որ-
պես գիտակ խոսել այն բաների մասին, որոնք չգիտեն:

– Բնավ ոչ իբրև գիտակ. թող խոսեն սոսկ որպես կարծիքի
տեր:

– Ինչպե՞ս: Չե՞ս նկատել, որ իմացությունից զուրկ կար-
ծիքները բոլորն էլ անպետք են: Անգամ դրանցից լավագույն-
ները նույնպես կույր են: Եթե մարդիկ կարող են ունենալ
ճիշտ կարծիքներ, որոնք հիմնված չեն ըմբռնման վրա, ապա

ինչո՞վ են, ըստ քեզ, տարբերվում կույրերից նրանք, ովքեր գնում են ճիշտ ճանապարհով:

– Ոչնչով:

– Արդ, դու ցանկանում ես դիտել այլանդակը, աղոտն ու d
անպարզը այն դեպքում, երբ կարելի է ուրիշների՞ց լսել պարզի և գեղեցիկի մասին:

– Զնսը վկա, Սոկրատե՛ս,– բացականչեց Գլավկոնը,– ուրեմն մի կո՞ղմ ես քաշվում, ասես ավարտել ես: Մեզ բավական կլինի, եթե դու քննես բարիքի հարցն այնպես, ինչպես քննել ես արդարության, խոհեմության և մյուս [գաղափարների] հարցը:

– Իսկ ինձ, բարեկամս, դա կլինի ավելի քան բավական: Միայն թե չթերանամ և իմ անտեղի ջանքերով չդառնամ զավեշտի առարկա: Բայց, սիրելիներս, թե ի՞նչ է ինքը այդ բա- e
րիքը, մենք առայժմ չենք քննի: Քանզի կարծում եմ, դա վեր է իմ այն կարծիքներից, որոնց կարելի էր հասնել մեր այժմյան ջանքերով: Սակայն բարիքից ծնվողի և մեծ նմանակի մասին ես կուզեի խոսել, եթե դա նաև ձեր սրտով է, իսկ եթե ոչ՝ թողնենք դա:

– Խոսի՛ր արգասիքի մասին, իսկ հոր[12] մասին կպատմես հետագայում:

– Կուզեի ի վիճակի լինել ամբողջությամբ հատուցելու
ձեզ, և ոչ այնպես, ինչպես հիմա՝ միայն տոկոսները: Ամեն 507
դեպքում ընդունեք տոկոսը՝ այն, ինչ ծնվում է հենց բարիքից: Միայն թե զգույշ եղեք, որ ակամա ձեզ չխաբեմ և սխալ հաշիվ ու տոկոսներ չներկայացնեմ:

– Մենք հնարավորինս զգույշ կլինենք, դու խոսիր:

– Միայն ձեզ հետ համաձայնության գալուց հետո, քանի որ պիտի ձեզ հիշեցնեմ այն, ինչի մասին խոսեցինք քիչ առաջ և հաճախ ենք խոսել նաև նախկինում:

– Ի՞նչը: b

– Մենք ասում ենք, որ կան շատ գեղեցիկ բաներ ու շատ բարիքներ, և սահմանում ենք դրանք:

– Այո, ասում ենք:

– Նաև, որ կա ինքը գեղեցիկը և ինքը բարիքը, և այդպես բոլոր իրերի համար, թեպետ ընդունում ենք, որ դրանք բազում են: Իսկ թե ինչ է յուրաքանչյուր իրը, մենք նշում ենք՝ ելնելով մեկ գաղափարից, որը մեկն է ամեն իրի համար:

– Այդպես է:

– Եվ մենք ասում ենք, որ իրերը տեսանելի են, բայց ոչ
c մտածելի, իսկ գաղափարները մտածելի են, բայց ոչ տեսանելի:

– Իհարկե:

– Ինչո՞վ ենք մենք տեսնում այն, ինչը տեսնում ենք:

– Տեսողությամբ:

– Լսողությամբ լսում ենք այն, ինչը կարելի է լսել, և մյուս զգայարաններով զգում ենք մյուս բոլոր զգայությունները, այդպես չէ՞:

– Եվ ի՞նչ:

– Արդ, հասկանու՞մ ես, որքան թանկ է տեսնելու և տեսնվելու ունակությունը, որ մեր զգայություններում ստեղծել է դեմիուրգոսը:

– Չեմ հասկանում:

– Այսպես մտածիր. որպեսզի լսողությունը լսի, իսկ ձայնը հնչի, պե՞տք է ավելանա երրորդ մի բան ևս, որի բացակայու-
d թյամբ ոչինչ չի լսվում և չի հնչում:

– Ոչ:

– Կարծում եմ, որ շատ ուրիշ, բայց իհարկե ոչ բոլոր զգայությունների համար այդպիսի երրորդ միավոր չի պահանջվում: Թե՞ կառարկես:

– Չեմ առարկի:

– Իսկ չե՞ս նկատել, որ այդ երրորդը պահանջվում է տեսնելու համար և բոլոր այն բաների, որ կարելի է տեսնել:

– Ինչպե՞ս:

– Դու գիտես, որ ինչքան էլ սուր ու գունազգաց լինեն աչքերը, դրանք ոչինչ չեն տեսնի և ոչ մի գույն չեն ընկալի, եթե

մարդը փորձի օգտվել տեսողությունից առանց երրորդ միա- e
վորի, որը հենց դրա համար է:

– Ինչի՞ մասին ես խոսում:

– Նրա, ինչը դու լույս ես կոչում:

– Իրավացի ես:

– Ուրեմն այն, ինչ իրար է կապում տեսողության զգայու-
թյունն ու տեսնվելու հնարավորությունը, աննշան չէ. այս
կապն ավելի արժեքավոր է մյուս կապերից, քանի որ լույսը 508
շատ թանկ է:

– Այն էլ որքա՜ն:

– Երկնային աստվածներից ո՞ր մեկին կնշես որպես լույսի
տիրակալ և ու՞մ լույսն է թույլ տալիս մեր տեսողությանը լա-
վագույնս տեսնել, իսկ տեսանելի իրերին՝ տեսնվել:

– Այն աստծուն, որին նշում ես դու և նշում են մյուսները:
Ակնհայտ է, որ հարցնում ես Արեգակի մասին:

– Իսկ տեսողությունն ի բնե այս աստծո հետ այսպիսի կա-
պի մեջ չէ՞...

– Ինչպիսի՞:

– Ինքը տեսողությունը կամ այն, ինչի մեջ որ գոյանում է,– b
աչք կոչվածը,– Արեգակ չէ:

– Իհարկե ոչ:

– Սակայն զգայության գործարաններից սա, իմ կարծիքով,
ամենից արեգակնակերպն է:

– Լիովին:

– Եվ ունակությունը, որով օժտված է տեսողությունը, Արե-
գակը նրան տվել է որպես արտահոսք:

– Իհարկե:

– Ուրեմն արեգակը նույնպես տեսողություն չէ: Լինելով
տեսողության պատճառ՝ այն ընկալվում է տեսողությամբ:

– Այդպես է:

– Ուրեմն նկատի առ, որ ես դա ասում եմ նաև բարիքի ար-
գասիքի մասին, քանզի բարիքը սերել է այն իր նմանությամբ:
Ինչ որ բարիքն է մտահասու ոլորտում խելքի և մտածելիի c

հարաբերությամբ, դա էլ արեգակն է տեսանելիի ոլորտում տեսողության և տեսանելիի հարաբերությամբ:

– Ինչպե՞ս: Բացատրիր ինձ:

– Դու գիտես, որ երբ աչքերը շրջվում են դեպի այնպիսի առարկաները, որոնք լուսավորված են գիշերվա աղոտ լույսով, այլ ոչ դեպի այնպիսիք, որոնց գույներն ի հայտ են գալիս շնորհիվ ցերեկային լույսի, տեսողությունը թուլանում է, և մարդը դառնում է գրեթե կույր, ասես նրա տեսողությունը լուրջ արատ ունի:

– Իհարկե:

– Բայց ես կարծում եմ, որ նույն այդ աչքերը, երբ Արե-
d գակը լուսավորում է առարկաները, պարզորոշ են տեսնում և գործում են անքերի:

– Եվ ի՞նչ:

– Համարիր, որ այդպես է նաև հոգու պարագայում: Երբ հոգին շրջվում է դեպի լուսավոր ճշմարտությունն ու գոյությունը, նա ընկալում է և ճանաչում դրանք, և դա ցույց է տալիս, որ այն խոհեմ է: Իսկ երբ խառնվում է խավարին, կայացմանն ու կործանմանը, նա թուլանում է ու տարբերվում զանազան կարծիքների միջև, փոխում է դրանք և թվում է անմիտ:

– Թերևս:

– Այն, ինչը ճշմարտություն է հաղորդում ճանաչվող իրե-
e րին, իսկ ճանաչողին տալիս է ճանաչելու ունակություն, համարիր բարիքի գաղափար՝ իմացության և ճանաչվող ճշմարտության պատճառ: Որքան էլ գեղեցիկ են ճանաչողությունն ու ճշմարտությունը, դու, միևնույն է, իրավացի կլինես առավել գեղեցիկ համարելով բարիքի գաղափարը: Ինչպես որ ճիշտ էր լույսն ու տեսողությունը համարել արեգակնակերպ
509 և ճիշտ չէր դրանք համարել Արեգակ, նույնկերպ էլ այստեղ՝ ճանաչողությունն ու ճշմարտությունը ճիշտ է պատկերացնել բարիքի տեսքով, սակայն ճիշտ չէր լինի դրանցից որևէ մեկը համարել բարիք. բարիքն իր հատկությունների համար հարկ է գնահատել առավել:

– Ի՞նչ արտասովոր գեղեցիկ բան ես համարում բարիքը, եթե, ինչպես ասում ես, հենց դա է մղում ճանաչողության և ճշմարտության՝ ինքը լինելով դրանցից շատ ավելի գեղեցիկ: Բայց դու, իհարկե, նկատի չունես հաճույքը:

– Պիղծ բաներ մի՛ խոսիր, ավելի լավ է դիտիր դրա պատկերը հետևյալ կերպ:

– Ինչպե՞ս:

– Արեգակն, ըստ իս, ոչ միայն տեսանելի իրերին տալիս է տեսանելի լինելու հնարավորություն, այլև ծնունդ, աճ և b
սնունդ, չնայած որ ինքը կայացում չէ:

– Իհարկե ոչ:

– Եվ ճանաչվող իրերը ոչ միայն ճանաչվում են բարիքի միջոցով, այլև նրանից ստանում էություն և գոյություն, թեպետ ինքը բարիքը գոյություն չէ, այլ գոյությունից անդին գտնվող ինչ-որ բան, որն ավելի բարձր և ուժեղ է դրանից:

Գլավկոնը ուժգին ծիծաղելով՝ բացականչեց. c

– Ապոլլո՞ն: Այս ի՞նչ դիվային թռիչք էր:

– Դու ես մեղավոր,– ասացի ես,– քանի որ ստիպեցիր հայտնել բարիքի մասին իմ կարծիքը:

– Ոչ մի դեպքում չընդհատես քննությունդ և մի անգամ էլ ցույց տուր Արեգակի հետ նշածդ համաբանությունը, գուցե ինչ-որ բան բաց ես թողել:

– Շատ բան:

– Բաց մի՛ թող անգամ մանրուքը:

– Կարծում եմ, մանրուքներն այստեղ շատ են: Բայց ես կաշխատեմ ոչինչ բաց չթողնել:

– Այո, բաց մի՛ թող:

– Դիցուք, տիրակալները, ինչպես ասացինք, երկուսն են՝ d
մեկը տիրում է մտահասուի բոլոր սեռերին և տարածքներին, իսկ մյուսն ընդհակառակը՝ տեսանելիին. չեմ կոչում դա երկինք, որպեսզի չկարծես, թե իմաստակում եմ: Արդ, դու ունես այդ երկու տեսակները՝ տեսանելին և մտահասուն:

– Այո:

– Պատկերացրու դրանք մեկ գծի տեսքով, որը բաժանված է երկու հավասար մասերի: Յուրաքանչյուր այդպիսի հատված, այսինքն՝ տեսանելիի և մտահասուի տարածքները, բաժանիր նույն եղանակով, ընդ որում տեսանելիի տարածքը՝ ըստ առավել մեծ կամ նվազ հստակության, այնպես որ այդտեղ գոյացած հատվածներից մեկի մեջ հայտնվեն պատկեր-
e ներ: Ես այդպես եմ կոչում նախ և առաջ ստվերները, այնուհետև՝ ջրի մեջ և ամուր, հարթ ու փայլուն իրերի վրա արտա-
510 ցոլված պատկերները և սրանց նման բոլոր բաները: Հասկանու՞մ ես:

– Հասկանում եմ:

– Մյուս հատվածում, որը նման է սրան, դու կտեղադրես մեզ շրջապատող կենդանի էակներին, բույսերը և այն ամենը, որ ստեղծվում է:

– Լավ, կտեղադրեմ:

– Իսկ կհամաձայնե՞ս համարել այդ բաժանումը ճշմարիտ կամ կեղծ. չէ՞ որ իբրև կարծիք այն հարաբերվում է մեր իմացությանը: Այդպես նմանը հարաբերվում է նրան, ինչին նման է:

b – Այո, իհարկե:

– Հետևիր նաև մտահասուի տարածքի բաժանման եղանակին, այսինքն՝ թե ինչի հիման վրա է կատարվում բաժանումը:

– Եվ ինչի՞:

– Մտահասուի մի հատվածը հոգին ստիպված է փնտրել ենթադրությունների հիման վրա՝ օգտվելով նշված հատվածների պատկերներից և ուրեմն շարժվելով ոչ թե դեպի սկիզբը, այլ վերջը: Մյուս հատվածը հոգին գտնում է՝ ենթադրություններից շարժվելով դեպի սկիզբ, որը չունի այդպիսի ենթադրություն: Հոգին իրեն այստեղ ճանապարհ է հարթում առանց պատկերների, շարժվում է հենց գաղափարների միջոցով:

– Ես լավ չհասկացա, թե ինչ նկատի ունես:

– Այդ դեպքում պարզաբանեմ, որպեսզի ավելի հեշտ հաս-

կանաս: Կարծում եմ՝ գիտես, որ նրանք, ովքեր զբաղվում են c
երկրաչափությամբ, հաշվարկով և նման ուրիշ բաներով, յու-
րաքանչյուր հետազոտության պարագայում ենթադրում են, թե
գիտեն՝ ինչ են զույգն ու կենտը, ֆիգուրները, անկյունների
երեք տեսակները և նմանատիպ այլ բաները: Նրանք համա-
րում են սրանք նախադրյալներ և ո՛չ իրենք իրենց, ո՛չ էլ ուրիշ-
ներին դրանցում հաշիվ չեն տալիս, ասես ամեն ինչ առանց
այդ էլ հասկանալի է: Սկսելով այդ նախադրյալներից՝ նրանք d
քննում են մնացյալը և ավարտի հասցնում քննության նյութը:

– Իհարկե, գիտեմ:

– Բայց երբ դիտում են պատկերները և դրանց հիման
վրա եզրակացություններ անում, նրանք մտածում են ոչ թե
պատկերների, այլ այն ֆիգուրների մասին, որոնց դրանք
նման են: Նրանք եզրակացություն են անում միայն ինքնին
քառանկյան և դրա անկյունագծի մասին, և ոչ այն անկյունա-
գծի, որը գծում են: Մյուս պատկերների դեպքում էլ այդպես է:
Այդպես է նաև քանդակների և նկարների պարագայում, e
որոնք կարող են ստվեր գցել և արտացոլվել ջրում՝ իրենք,
սակայն, լինելով սոսկ պատկերներն այն բանի, որը կարելի է
միայն տեսնել մտքով: 511

– Իրավացի ես:

– Մտահասուի այս տեսակի մասին էի խոսում՝ ասելով, որ
հոգին, փնտրելով դա, ստիպված է օգտվել նախադրյալներից,
այնպես որ չի հասնում սկզբին, քանզի անկարող է վեր բարձ-
րանալ նախադրյալներից և օգտվում է միայն պատկերներից,
որոնք արտացոլված են ստորին իրերում, հատկապես այն
բաներում, որոնց մեջ նա գտնում և գնահատում է այդ պատ-
կերների ավելի հստակ արտահայտությունը:

– Հասկանում եմ. դու խոսում ես երկրաչափության և b
դրան ազգակից արվեստների մասին:

– Հասկացիր նաև, որ մտահասուի մյուս հատված ես կո-
չում եմ այն, ինչին ինքը բանականությունը հաղորդակից է
դիալեկտիկական ունակության շնորհիվ: Բանականությունը

ենթադրությունները չի առաջադրում որպես սկիզբ: Իրականում, որպես ենթադրություններ, դրանք սոսկ մոտեցումներ և ուղղորդումներ են դեպի ամեն բանի սկիզբ՝ որն արդեն ենթադրելի չէ: Հասնելով սկզբին և ընդունելով այն՝ բանակա-
c նությունը հանգում է վերջնանպատակին՝ առհասարակ չունենալով զգայական որևէ տվյալ, այլ գործ ունենալով միայն հենց գաղափարների, դրանց հարաբերության և դրանց մասին եզրակացությունների հետ:

– Հասկանում եմ, թեպետ ոչ բավարար չափով: Ինձ թվում է, դու խոսում ես խրթին բաների մասին: Ձգտում ես սահմանել, որ գոյությունն ու մտահասուն դիալեկտիկայի շնորհիվ կարելի է հայել ավելի հստակ, քան այն, ինչը դիտարկվում է այսպես կոչված գիտությունների միջոցով, որոնց սկիզբը ենթադրություններն են և որոնք նույնպես ստիպում են մտածել: Ճիշտ է, այդպես հայողները ստիպված են դիմել ոչ թե զգա-
d յություններին, այլ ըմբռնողությանը, բայց քանի որ ելնում են իրենց ենթադրություններից և չեն հասնում սկզբին, ըստ քեզ՝ ի վիճակի չեն հասկանալու մտահասուի հատվածը մտքով, չնայած որ այդ սկիզբը հասկանալու դեպքում սա էլ լիովին ճանաչելի է:

Իսկ ըմբռնողություն, իմ կարծիքով, դու կոչում ես ունակությունը, որն առկա է երկրաչափների և նրանց նմանների մոտ, բայց դա դեռ խելք չէ, քանզի ըմբռնողությունը կարծիքի և խելքի մեջտեղում է:

– Շատ լավ ասացիր: Ուրեմն չորս հատվածներին համադրիր այն չորս վիճակները, որ գոյանում են հոգու մեջ: Մտա-
e ծողությունը ամենավերևում է, ըմբռնողությունը՝ երկրորդ տեղում, հավատը՝ երրորդ, իսկ նմանությունը՝ վերջին տեղում, և դասավորիր դրանք համապատասխանաբար՝ համարելով, որ ճշմարտությանը հաղորդակից լինելու չափով է դրանցից յուրաքանչյուրը հաղորդակից հավաստիությանը:

– Հասկանում եմ, համաձայն եմ և կդասավորեմ, ինչպես ասում ես:

ԳԻՐՔ ՅՈԹԵՐՈՐԴ

– Դրանից հետո,– ասացի ես,– նմանեցրու մեր բնության 514
կրթվածությունը կամ անկրթությունը հետևյալին: Տե՛ս, մարդիկ բնակվում են ասես ստորգետնյա քարանձավում, որի երկայնքով մուտքից լույս է ծգվում: Մանկուց այդ մարդիկ ոտքերին և պարանոցին շղթաներ են կրում, այնպես որ մնում b
են նույն տեղում և տեսնում են միայն իրենց աչքի առաջ եղածը, քանի որ շղթաների պատճառով անկարող են շրջել գլուխները: Վերևում և հեռվում վառվող կրակի արձակած լույսը նրանք տեսնում են, սակայն կրակի ու շղթայվածների միջև կա վերին ճանապարհ՝ բաժանված ցածր պատով, որի նմանը կառուցում են ածպարարները, որոնք դրա ետևում թաքնվում են մարդկանցից, իսկ իրենք խամաճիկներ ցուցադրում:

– Պատկերացնում եմ:

– Պատկերացրու նաև, որ այդ պատի ետևում ուրիշ մարդիկ կրում են տարբեր առարկաներ, այնպես, որ դրանք երևում են պատի վրայից, կրում են նաև արձաններ, կենդանիների քարե ու փայտյա քանդակներ: Նրանցից ոմանք խո- 515
սում են, ոմանք էլ լուռ են:

– Տարօրինակ տեսարան է և տարօրինակ բանտարկյալներ են:

– Նրանք նման են մեզ: Մի՞թե կարծում ես, թե նրանք ինչոր բան կարող են տեսնել (իրենք իրենց կամ ուրիշներին), բացի ստվերներից, որոնք կրակը գցում է քարանձավի դիմացի պատի վրա:

b – Իհարկե ոչ, եթե ողջ կյանքում նրանք ստիպված են անշարժ պահել գլուխը:

– Իսկ առարկաների հետ, որ կրում են, մի՞թե տեղի չի ունենում նույնը:

– Ի՞նչ:

– Եթե նրանք կարողանային խոսել միմյանց հետ, մի՞թե չէին մտածի, թե անվանում են այն, ինչը տեսնում են:

– Անհրաժեշտաբար:

– Եվ եթե այդ բանտում լիներ արձագանք և անցորդներից որևէ մեկը խոսեր, մի՞թե նրանք կկարծեին, թե ձայնը պատկանում է ոչ թե անցնող ստվերին, այլ ուրիշ որևէ մեկին: Ի՞նչ կասես:

– Ձևսը վկա, այդպես չեմ կարծում:

c – Նրանք կատարելապես ճշմարիտ կհամարեին առարկաների ստվերները:

– Անհրաժեշտաբար:

– Բայց տե՛ս, թե ինչպես են ազատվում և բժշկվում անխոհեմության շղթաներից կամ ինչպես դա տեղի կունենար, եթե նրանք ազատվեին բնական ճանապարհով: Երբ նրանցից որևէ մեկին ազատեին և հանկարծ ստիպեին կանգնել, շրջել գլուխը, քայլել և վեր նայել լույսին, նա ցավով կաներ դա, բայց անկարող կլիներ տեսնել լուսավորված իրերը, որոնց ստվերներն էր միայն տեսել մինչ այդ: Քո կարծիքով ի՞նչ կպատաս-
d խանի նա, երբ իրեն ասեն, որ նախկինում տեսել է ուրվականներ, իսկ հիմա, ավելի մոտենալով գոյությանը և հանդիպելով առավել իսկականին, կարող է ավելի ճիշտ տեսնել: Կամ եթե նրան ցույց տան ամեն անցնող առարկա, հարցնեն՝ ինչ է դա և անգամ ստիպեն պատասխանել, չե՞ս կարծում, որ դա իր համար դժվար կլինի, և նա կմտածի, թե շատ ավելի ճշմարիտ էր նախկինում տեսածը, քան այն, ինչ ցույց են տալիս հիմա:

– Իհարկե:

e – Իսկ եթե նրան ստիպեն նայել հենց լույսին, մի՞թե նրա աչքերը չեն ցավի և մի՞թե նա շրջվելով չի փախչի հետ դեպի

այն, ինչը կարող էր տեսնել՝ կարծելով, թե դա իսկապես ավելի ստույգ է նրանից, ինչն իրեն ցույց են տալիս:

– Այդպես է:

– Եթե ոմն ուժով վեր բարձրացնի նրան այդտեղից և բաց չթողնի, մինչև որ դուրս չբերի այսրաշխարհ, մի՞թե նա չի տառապի և չի բարկանա իրեն բարձրացնողի վրա, իսկ երբ դուրս գա լույս աշխարհ, աչքերի համար ցնցումն այնքան մեծ 516
կլինի, որ նա չի կարողանա տեսնել և ոչ մեկն այն առարկաներից, որոնց ճշմարիտ լինելու մասին իրեն հիմա ասում են:

– Այո, այդպես միանգամից չի կարողանա:

– Որպեսզի տեսնի վերևում եղածը նրան անհրաժեշտ է սովորություն: Նախ պիտի նայի ստվերներին, քանի որ դա հեշտ է, ապա մարդկանց և զանազան իրերի արտացոլանքին ջրում և հետո միայն բուն իրերին: Ընդ որում երկնքում եղածը և ինքը երկինքը նա հեշտությամբ կդիտի ոչ թե ցերեկով, այլ գիշերով, այսինքն նայելով աստղերի և Լուսնի լույսին, և
ոչ թե Արեգակին և Արեգակի լույսով: b

– Անշուշտ:

– Ի վերջո, կարծում եմ, այդ մարդը կկարողանա նայել Արեգակին, այսինքն՝ ոչ թե նրա արտացոլանքին ջրի կամ ուրիշ իրեն օտար տարերքի մեջ, այլ հենց Արեգակին իր իսկ տարերքում:

– Անհրաժեշտաբար:

– Եվ դրանից հետո կեզրակացնի նաև, որ արեգակն է հնարավոր դարձնում տարվա եղանակները, տարիները և տեսանելի աշխարհում տեղի ունեցող անցուդարձը, հետևաբար պատճառն է այն ամենի, որ նա և մյուս բանտարկյալ- c
ները տեսել են քարանձավում:

– Պարզ է, որ կհանգի այդպիսի եզրակացության:

– Եվ ի՞նչ, հիշելով իր առաջին կացարանը, այնտեղի իմաստությունը և իր բախտակիցներին, մի՞թե երջանկություն չի համարի իր հետ կատարվող փոփոխությունը և չի խղճա իրենց:

– Այն էլ ինչպես:

– Իսկ եթե նրանք այնտեղ պատիվներ էին մատուցում միմյանց և սուր տեսողությամբ աչքի ընկնողներին, որոնք բոլորից լավ էին մտապահում, թե անցնող առարկաներից որն է
d շարժվում սկզբում, որը՝ դրանից հետո, իսկ որը՝ միաժամանակ, և ըստ այդմ գուշակում էին ապագան, ինչ ես կարծում, կցանկանա՞ այդ ամենը նա, ով արդեն ազատվել է: Եվ մի՞թե կնախանձի նրանց, որոնց բանտարկյալները պատվում են, և նրան, ով ազդեցիկ է սրանց մեջ: Թե՞ կզգա այն, ինչի մասին խոսում է Հոմերոսը, այսինքն շատ ուժեղ կցանկանա

...ծառայել, հանց չքավոր, խեղճ մարդու մոտ, որի
ապրուստն է աղքատիկ[1],

և ավելի շուտ կրել ամեն բան, միայն թե չմտածի այնպես, ինչպես բանտարկյալները, և չապրի նրանց պես:

e – Կարծում եմ, նա կնախընտրի կրել ամեն բան, միայն թե չապրի այդպես:

– Մտածիր նաև հետևյալը: Եթե այդ մարդը նորից իջներ այնտեղ և նստեր նույն տեղում, մի՞թե խավարը չէր պատի նրա աչքերը, երբ Արեգակը հանկարծ անհետանար:

– Այն էլ ինչպես:

517 – Իսկ եթե ստիպված լիներ նորից մրցել այդ հավերժական բանտարկյալների հետ, փորձելով հասկանալ այդ ստվերների նշանակությունը, քանի դեռ տեսողությունը չի թուլացել և աչքերը չեն վարժվել,– իսկ դրա համար բավական ժամանակ է պետք,– արդյո՞ք զավեշտալի չէր լինի նա: Նրա մասին կասեին, որ իր վերելքից նա վերադարձավ վնասված աչքերով, հետևաբար փորձել անգամ չարժե վեր բարձրանալ: Իսկ նրան, ով կուզեր ազատել բանտարկյալներին և առաջնորդել վեր, մի՞թե իրենց ձեռքն ընկնելուն պես չէին սպանի:

– Իհարկե:

b – Հետևաբար, սիրելի՛ Գլավկոն, հիշյալ առակը հարկ է

կիրառել այն ամենի նկատմամբ, ինչի մասին խոսել ենք: Տեսողությանը հասանելի հատվածը նման է բանտախցին, իսկ կրակը՝ արեգակի լույսին: Վերելքը և վերևում գտնվող իրերի հայեցողությունը հոգու բարձրացումն է դեպի մտահասուի տարածք: Ընդունելով սա՝ դու կհասկանաս իմ միտքը,– եթե կուզես, լսի՛ր,– միայն աստված գիտի՝ արդյոք դա ճշմարիտ է: Ինձ թվում է՝ ճանաչելիի մեջ բարիքի գաղափարը սահման է, և այն դժվար է տեսնել, բայց տեսնելու դեպքում կարելի է եզրակացնել, որ հենց այդ սահմանն է ամեն ճշմարիտի և գեղեցիկի պատճառը: Տեսանելիի մեջ պատճառը ծնում է լույս c
և լույսի տեր, իսկ մտահասուի ոլորտում ինքն է տիրուհի, որ տրամադրում է ճշմարտություն և խելք, և դրան պիտի հետևի նա, ով մասնավոր և հասարակական կյանքում ցանկանում է գործել խոհեմ:

– Համամիտ եմ, որքան որ կարողանում եմ հետևել քեզ:

– Ուրեմն համամիտ եղիր ինձ հետ նաև հետևյալ հարցում: Մի՛ զարմացիր, որ այստեղ եկածները չեն ցանկանում զբաղվել մարդկային գործերով: Փոխարենը նրանք միշտ ձգտում են բարձրանալ վեր: Դա բնական է, քանի որ համապատասխանում է նշված պատկերին: d

– Այո, բնական է:

– Եվ ի՞նչ: Զարմանալի՞ ես համարում, որ ոմն, աստվածային հայեցումներից անցնելով մարդկային ճղճիմությանը, շատ ծիծաղելի է թվում. տեսողությունը տակավին թույլ է և չի վարժվել տիրող խավարին, մինչդեռ նրան ստիպում են հանդես գալ դատարաններում կամ որևէ ուրիշ տեղ և պայքարել արդարության ստվերների կամ այդ ստվերները նետած պատկերների համար և վիճել դրանց շուրջ այնպես, ինչպես դա հասկանում են մարդիկ, որոնք երբեք չեն տեսել e
ինքը արդարությունը:

– Այստեղ զարմանալի ոչինչ չկա:

– Խելք ունեցող ամեն ոք կհիշի, որ կա տեսողության խա- 518
թարման երկու պատճառ. երբ լույսից անցնում են դեպի

խավար կամ էլ՝ խավարից դեպի լույս: Նույնը տեղի է ունենում նաև հոգու հետ, և դա կարելի է հասկանալ տեսնելով, որ հոգին շփոթված է և ինչ-որ բան տեսնելու անկարող: Անիմաստ ծիծաղելու փոխարեն ավելի լավ է նայել՝ արդյոք հոգին եկել
b է ավելի լուսավոր կյանքից և անսովորությունից մթագնել, թե հակառակը՝ կատարյալ տգիտությունից շարժվել է դեպի լուսավոր կյանք և կուրացել է լույսից: Հոգու այս վիճակն ու կյանքը երջանկություն է, մինչդեռ առաջինը՝ դժբախտություն: Եվ եթե նրան նայելիս որևէ մեկը ծիծաղի, ապա թող ծիծաղի ավելի քիչ, քան նրա վրա, ով եկել է վերևից՝ լույսից:

– Շատ ճիշտ ես ասում:

– Եթե դա ճշմարիտ է, մենք պիտի այսպես մտածենք նշված հոգիների մասին. կրթությունն այն չէ, ինչ պնդում են
c ոմանք, երբ ասում են, իբր մարդու հոգում չկա իմացություն և որ իրենք ներմուծում են դա, ինչպես եթե կույր աչքի մեջ ներմուծեին տեսողություն:

– Այո, այդպես են ասում:

– Իսկ մեր քննությունը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր հոգու մեջ կա այդպիսի ունակություն և գործարան, որի միջոցով նա սովորում է: Բայց ինչպես որ աչքը չի կարող խավարից շրջվել դեպի լույս առանց շրջելու ողջ մարմինը, այդպես էլ ողջ հոգով հարկ է շրջվել ամեն կայացումից, մինչև որ
d հոգին ի վիճակի լինի դիմանալու գոյության և դրա մեջ ամենապայծառի հայեցողությանը: Իսկ դա մեր պնդմամբ բարիքն է: Այդպես չէ՞:

– Այո:

– Այստեղ կարող էր դրսևորվել վերափոխության արվեստը, այն, որ վերաբերում է մարդու ամենից դյուրին և հիմնավոր վերափոխության եղանակին: Դա չի նշանակում թույլ տալ նրան տեսնել, քանի որ նա արդեն տեսնում է, թեպետ դեռ ոչ ճիշտ ուղղությամբ, և նայում է ոչ այնտեղ, ուր պետք է: Հենց սա պետք է շտկել:

– Թերևս:

– Հոգուն հատուկ որոշ առաքինություններ մոտ են մարմնի առաքինություններին: Գոյություն չունենալով ի սկզբանե, դրանք գոյանում են հետագայում՝ սովորության և վարժանքի շնորհիվ: Սակայն ըմբռնողությունը, թվում է, առավել աստվա-
ծային է, երբեք չի կորցնում իր ուժը և, կախված իր ուղղվա- e
ծությունից, կարող է լինել պիտանի և օգտակար կամ էլ անպիտան և վնասակար: Չե՞ս նկատել, որ հոռի, բայց իմաստուն հորջորջված մարդկանց նեղ հոգին շատ խորաթափանց է և որ նրանք շատ սուր են տեսնում իրենց առնչվող ամեն
բան: Հետևաբար նրանց տեսողությունը վատը չէ և ստիպված 519
է ենթարկվել իրենց արատավորությանը, այնպես որ ինչքան ավելի սուր են տեսնում նրանք, այնքան ավելի մեծ չարիքներ են գործում:

– Իհարկե:

– Բայց եթե արդեն մանկուց արմատախիլ արվեն այդ բնածին հատկությունները, որոնք, ասես կապարե սուզագնդեր,
մղում են նրանց որկրամոլության, քաղցրակերության և ուրիշ b
նման հաճույքների ու հոգու տեսողությունն ուղղում ցած, հոգին կազատագրվի և կշրջվի դեպի ճշմարիտը, և նրանք նույնքան սուր կտեսնեն այդտեղ, որքան հիմա տեսնում են այստեղ:

– Բնականաբար:

– Եվ ի՞նչ: Մի՞թե մեր ասածի բնական և անհրաժեշտ հետևությունն այն չէ, որ պետությունը կառավարելու համար
պիտանի չեն անկիրթ ու ճշմարտությանն անհաղորդ մարդիկ, և ոչ էլ նրանք, ովքեր ողջ կյանքում զբաղվել են ինքնակա-
տարելագործմամբ: Առաջինները՝ որովհետև չունեն միասնա- c
կան նպատակ, հանուն որի կգործեին հանրային կամ մասնավոր կյանքում: Երկրորդները՝ որովհետև կամովին չեն գործի, կարծելով, թե կյանքի օրոք տեղափոխվել են Երանելիների կղզիներ[2]:

– Ճշմարիտ է:

– Մեր գործն է՝ ստիպել բնությամբ լավագույններին սովորել ուսմունքը, որը մենք նախապես կոչեցինք կարևորագույն,

d այն է՝ տեսնել բարիքը և բարձրանալ դրա ուղղությամբ: Սակայն երբ բարձրանալուց հետո նրանք բավականաչափ լավ տեսնեն դա, մենք թույլ չենք տա նրանց անել այն, ինչն այժմ թույլ ենք տալիս:

– Այդ ի՞նչը:

– Մնալ վերևում ու չցանկանալ իջնել բանտարկյալների մոտ և լավ թե վատ ձևով կիսել նրանց հետ դժվարությունները կամ պատիվները:

– Հետևաբար, անարդար կվարվենք նրանց նկատմամբ և կստիպենք ապրել ավելի վատ, թեպետ նրանք կարող էին ապրել ավելի լավ:

e – Դու կրկին մոռացար, բարեկամս, որ օրենքը հոգ է տանում ոչ թե պետության որևէ խավի բարօրության մասին, այլ՝ ողջ պետության: Ստիպելով և համոզելով՝ այն միավորում է քաղաքացիներին, անելով այնպես, որ նրանք փոխադարձաբար օգտակար լինեն միմյանց, որքան որ իրենցից յուրաքանչյուրը կարող է օգտակար լինել հանրությանը: Օրենքը ներմուծում է այդպիսի մարդկանց պետություն ոչ թե նրա
520 համար, որ յուրաքանչյուրը շեղվի իր ուզած ուղղությամբ, այլ որպեսզի նրանց միջոցով կապակցի պետությունը:

– Իսկապես որ, ես մոռացա:

– Տե՛ս, Գլավկո՛ն, մենք չենք լինի անարդար նրանց նկատմամբ, ովքեր մեզ մոտ փիլիսոփա են դառնում, այլ կլինենք արդար, ստիպելով հոգ տանել ուրիշների մասին և պաշտպանել նրանց: Մենք կասենք. «Ուրիշ պետություններում փիլիսո-
b փաներ դառնալով՝ մարդիկ չեն լծվում ծանր գործերի, որովհետև այդպիսին են դարձել ինքնաբերաբար, անկախ պետական կառույցից, իսկ քանի որ ինքնաբերաբար աճողը ոչ ոքից սնունդ չի ստանում, դրա ծախսը հատուցելու ցանկություն այնտեղ նույնպես չի ծագում: Իսկ ձեզ մենք ծնել ենք ձեր և ողջ պետության համար: Այնպես, ինչպես մեղուների մեջ լինում են առաջնորդներ և արքաներ, այդպես էլ դուք, ավելի լավ ու հիմնավոր դաստիարակված լինելով, քան այդ

փիլիսոփաները, նրանցից ավելի լավ կարող եք զբաղվել ինչ-
պես առաջին, այնպես էլ երկրորդ գործով: Արդ, յուրաքանչ-
յուրդ պետք է իջնի ուրիշ մարդկանց կացարանը և սովորի c
դիտել մութ իրողությունները: Սովորելով՝ դուք հազարապա-
տիկ ավելի լավ կտեսնեք, քան այնտեղ բնակվողները, կճա-
նաչեք ամեն ստվեր և թե ինչի պատկեր է այն, քանզի արդեն
կիմանաք ճշմարտությունը գեղեցիկի, արդարի և բարիքի մա-
սին»: Այդկերպ պետությունը կկառուցվի արթմնի, և ոչ երա-
զում, ինչպես հիմա պատահում է շատ ու շատ պետություն-
ներում, ուր մարդիկ կռվում են միմյանց դեմ և սին պայքար
մղում հանուն իշխանության, ասես դա մեծ բարիք է: Իսկ d
իրականում ամեն բան այսպես է. պետությունները, որտեղ
իշխանության չեն ձգտում նրանք, ովքեր պետք է իշխեն, կա-
ռուցված են ավելի լավ, և գժտություններ չեն լինում: Միան-
գամայն հակառակն է պետություններում, որտեղ իշխանավոր-
ները պահում են իրենց բոլորովին այլ կերպ:

– Իհարկե:

– Բայց դու կարծում ես, որ մեր սաները, լսելով դա, չեն
ենթարկվի մեզ և չեն ցանկանա աշխատել՝ յուրաքանչյուրը
կատարելով աշխատանքի իր բաժինը, այլ կնախընտրեն եր-
կար ժամանակ բնակվել միմյանց հետ մաքրության մե՞ջ: e

– Դա անհնար է, որովհետև մեր արդար խոսքը մենք ուղ-
ղում ենք արդարներին: Ամեն դեպքում, նրանցից յուրաքանչ-
յուրը, հակառակ ամեն պետության մեջ հիմա իշխող կառա-
վարիչներին, կսկսի իշխել, ավելի շուտ որովհետև դա ան-
հրաժեշտ է:

– Բանն այն է, բարեկամս, որ եթե դու նրանց համար, ով-
քեր պիտի իշխեն, գտնես լավագույն կյանք, այդժամ կունե- 521
նաս լավ կարգավորված պետություն: Չէ՞ որ միայն այդպիսի
պետության մեջ են իշխում իսկապես հարուստները՝ նրանք,
որ հարուստ են ոչ թե ոսկով, այլ նրանով, ինչով պիտի հա-
րուստ լինի երջանիկը՝ առաքինի կյանքով և ուղղամտու-
թյամբ: Բայց եթե աղքատներն ու չքավորները ձգտում են

հասարակական բարիքների, միտք ունենալով ձեռք գցել դրանք, բարիք չի լինի: Իշխանությունը դառնում է մի բան, որի համար պայքար է սկսվում, իսկ ներքին, այսինքն տան ներսում տեղի ունեցող պատերազմը կործանում է պատերազմողներին և ողջ պետությունը:

– Շատ ճիշտ է:

b – Կարո՞ղ ես ճշմարիտ փիլիսոփայությունից բացի հիշել մեկ այլ ապրելակերպ, որը քամահրում է պետական իշխանությունը:

– Ոչ, Զևսը վկա:

– Սակայն իշխանության սիրահարները նույնպես չպիտի գան իշխանության: Հակառակ դեպքում նրանք պետք է կռվեն ուրիշ սիրահարների հետ:

– Ինչպե՞ս չէ:

– Ուրիշ ու՞մ կստիպես ստանձնել պետության պաշտպանությունը, եթե ոչ նրանց, ովքեր առավել բանիմաց են պետությունը լավագույնս կառավարելու գործում և ունեն ուրիշ արժանիքներ և ավելի լավ կյանք, քան պետական գործիչների կյանքն է:

– Ոչ ոքի:

c – Ուզու՞մ ես դիտարկենք, թե ինչպես են առաջ գալիս այդպիսի մարդիկ և ինչի շնորհիվ կարելի է նրանց բարձրացնել դեպի լույս, ինչպես որ ոմանք, ըստ ավանդության, Հադեսից բարձրանում են աստվածների մոտ:

– Շատ եմ ուզում:

– Սա, կարծում եմ, նույնը չէ, ինչ շրջել խեցին[3]. այստեղ հարկ է շրջել հոգին մթին օրվանից դեպի գոյության ճշմարիտ օրը: Այդպիսի վերելքը մենք կկոչենք ձգտում դեպի ճշմարիտ փիլիսոփայություն:

– Իհարկե:

d – Իսկ չպարզե՞նք, թե ինչպիսին է ճանաչողությունը, որն ունի այդ կարողությունը:

– Պարզենք:

– Այդ դեպքում, Գլավկոն, ո՞ր ճանաչողությունը կարող է շրջել հոգին կայացումից դեպի գոյություն: Սա ասելիս ահա թե ինչ հիշեցի: Մի՞թե չենք ասել, որ այդ մարդիկ երիտասարդ տարիքում անպայման պետք է ռազմական արվեստ սովորեն:

– Ասել ենք:

– Ուրեմն իմացությանը, որը մենք փնտրում ենք, պետք է ավելանա մի բան ևս:

– Ի՞նչ:

– Այն չպետք է անօգուտ լինի զինվորականներին:

– Իհարկե ոչ, եթե միայն դա հնարավոր է: e

– Մենք արդեն ասացինք, որ նրանք դաստիարակվում են մարմնամարզությամբ և մուսայական արվեստով:

– Այդպես է:

– Եվ մարմնամարզությունն ուղղված է նրան, ինչը կարող է գոյանալ և ոչնչանալ, քանի որ դրանից է կախված մարմնի ուժերի աճը կամ նվազումը:

– Երևում է, այո:

– Բայց չէ՞ որ սա չէ մեր փնտրած իմացությունը: 522

– Ոչ:

– Բայց գուցե այդպիսին է մուսայական արվեստը, որը մենք քննեցինք սկզբում:

– Սակայն հենց դա, եթե հիշում ես, մարմնամարզության հակակշիռն է, քանի որ կրթում է պահապանների բարքերն ու ներդաշնակեցնում դրանք, և թեպետ չի տալիս իմացություն, սակայն ռիթմը հետևողական է դարձնում նրանց գործողությունները: Նրանց խոսքն ունի մուսայական արվեստին ազգակից տարրեր, և դա վերաբերում է ինչպես հորինյալ, այնպես էլ ճշմարտանման երկերին: Սակայն բարիքին առնչվող իմացություն, որը հիմա փնտրում ես, մուսայական արվեստում ամենևին չկա: b

– Շատ ճիշտ հիշեցրիր ինձ: Իսկապես, այդտեղ ոչ մի նման բան չկա: Բայց, սիրելի՛ Գլավկոն, ինչի՞ մեջ այն կարող է լինել: Չէ՞ որ բոլոր արվեստները կոպիտ են:

1915.info

– Իհարկե: Իսկ ուրիշ ի՞նչ իմացություն է մնում, եթե զանց առնենք մուսայական արվեստը, մարմնամարզությունը և մյուս արվեստները:

– Լավ, եթե դրանցից բացի ուրիշ ոչինչ չունենք, վերցնենք այն, ինչը տարածվում է դրանց բոլորի վրա:

– Ի՞նչը:

c – Ընդհանուրը, որից օգտվում են բոլոր արվեստները, ինչպես նաև մտածողությունն ու գիտելիքները, այն, ինչը յուրաքանչյուր ոք պիտի իմանա հենց սկզբից:

– Ի՞նչ է դա:

– Չնչին բան: Պետք է տարբերակել մեկը, երկուսը և երեքը: Ընդհանուր առմամբ ես սա կոչում եմ թիվ և հաշվարկ: Մի՞թե ամեն գործ այնպիսին չէ, որ յուրաքանչյուր արվեստ և իմացություն պետք է հաղորդակից լինի սրան:

– Այն էլ ինչպես:

– Իսկ ռազմակա՞ն արվեստը:

– Անհրաժեշտաբար:

d – Սակայն ողբերգություններում Պալամեդեսը ամեն անգամ ծիծաղի առարկա է դարձնում Ագամեմնոնին որպես զորավարի: Մի՞թե չգիտես, որ իր պնդմամբ՝ Պալամեդեսը թվերի հորինողն է և որ հենց նա է շարքերով դասավորել զորքը Իլիոնի մոտ, հաշվել նավերը և մնացյալ ամեն բան, ասես մինչ այդ դրանք ոչ ոք չէր հաշվել, իսկ Ագամեմնոնը, քանի որ չէր տիրապետում հաշվարկին, չգիտեր անգամ, թե քանի ոտք ունի[4]: Ինչ ես կարծում, ինչպիսի՞ զորավար պիտի լիներ:

– Անհեթեթ, եթե դա իրոք այդպես է:

e – Ուրեմն զորավարի համար պետք է անհրաժեշտ համարենք այդ գիտությունը, այսինքն՝ հաշվելու և հաշվարկելու կարողությունը:

– Դա միանգամայն անհրաժեշտ է, եթե նա ցանկանում է հետևնալ, թե ինչպես են զորք դասավորում, ավելին՝ եթե [illegible]մ է մարդ լինել:

– Բայց տեսնու՞մ ես այդ գիտության մեջ այն, ինչ ես եմ տեսնում:

– Այսի՞նքն:

– Իր բնությամբ սա կարծես պատկանում է նրան, ինչ մեզ 523
մղում է մտածելու, նրան, ինչ մենք փնտրում ենք, բայց ինչից ոչ ոք չի օգտվում իբրև իսկապես գոյությանը մոտեցնող իմացությունից:

– Ի՞նչ նկատի ունես:

– Փորձեմ բացատրել միտքս: Տե՛ս, թե ինչպես եմ ինքս ինձ համար տարբերակում այն, ինչն ուղղորդում է մեզ դեպի քննարկվող առարկան, և այն, ինչը չի ուղղորդում, և ասա՛՝ համաձայն ես, թե ոչ, որպեսզի ավելի հստակ տեսնենք՝ ճիշտ են արդյոք իմ կռահումները:

– Բացատրի՛ր:

– Կբացատրեմ, եթե, իհարկե, հետևում ես: Մեր զգայու- b
թյուններում եղած որոշ բաներ չեն մղում մեր մտածողությունը հետազոտության, որովհետև բավականաչափ որոշարկվում են հենց զգայությամբ, սակայն կան բաներ, որոնք պահանջում են հետազոտություն, որովհետև զգայությունը վստահելի ոչինչ չի տրամադրում:

– Ակներևաբար դու խոսում ես իրերի մասին, որոնք գտնվում են հեռու, ասես մշուշի մեջ:

– Լավ չհասկացար միտքս:

– Բայց ի՞նչ նկատի ունես:

– Հետազոտության չի մղում այն, ինչը միաժամանակ
առաջ չի բերում հակառակ զգայություն, իսկ առաջ բերողը ես c
համարում եմ հետազոտության մղող, որովհետև զգայությունը մի բան բացահայտում է առավել չափով, քան ուրիշը՝ դրա հակադիրը, անկախ նրանից՝ մոտ է իրը, թե հեռու: Դու դա ավելի լավ կհասկանաս, եթե ասեմ այսպես. ահա երեք մատ՝ ճկույթը, ցուցամատը և միջնամատը:

– Լավ:

– Համարիր, որ ես խոսում եմ դրանց մասին որպես

առարկաների, որոնք մոտ են գտնվում: Իսկ հիմա նկատի առ հետևյալը:

– Ի՞նչը:

d – Դրանցից յուրաքանչյուրը մատ է, և այդ իմաստով դրանք ոչնչով չեն տարբերվում. այդպես է, երբ նայում ես դրա միջնամասին կամ ծայրին, անկախ այն բանից՝ սպիտակ է, թե սև, հաստ է, թե բարակ, և այլն: Բոլոր այս դիտարկումներում մեծամասնության հոգին ստիպված չէ հարցնելու մտածողությանը՝ իսկ ի՞նչ է մատը: Չէ՞ որ տեսողությունը երբեք ցույց չի տվել նրան, որ մատը նաև մատին հակադիր ինչ-որ բան է:

– Իհարկե ոչ:

– Այնպես որ սա, բնականաբար, չի մղում մտածողության և չի խթանում այն:

e – Բնականաբար:

– Եվ ինչ, մատների մեծությունը և փոքրությունը մի՞թե կարելի է բավականաչափ որոշել աչքով, և մի՞թե տեսողության համար միևնույն չէ, թե որ մատն է գտնվում մեջտեղում, իսկ որը՝ ծայրից: Եվ կարելի՞ է շոշափելով պարզել, թե ինչպիսին է մատը՝ հաստ, բարակ, նուրբ, թե կոպիտ: Արդյո՞ք նաև մյուս զգայությունները տկար չեն այդ ամենի բացահայտման մեջ: Դրանցից յուրաքանչյուրի դեպքում տեղի ունի հե-

524 տևյալը. զգայությունը, որը նշանակված է որոշելու կոշտությունը, ստիպված է գործ ունենալ նաև նրբության հետ, ահա ինչու հաղորդում է հոգուն, որ միևնույն իրը զգայվում է և՛ որպես կոպիտ, և՛ որպես նուրբ:

– Այդպես է:

– Նման դեպքերում հոգին չի հասկանում, թե ինչն է նշվում այդ զգայությամբ որպես կոպիտ, եթե այդ իրը պիտի կոչվի նաև նուրբ: Այդպես է նաև թեթևի ու ծանրի դեպքում, քանի որ հոգին, եթե զգայությունը նշում է ծանրը որպես թեթև, իսկ թեթևը՝ որպես ծանր, չի հասկանում՝ թեթև է այդ իրը, թե ծանր:

– Այդպիսի հաղորդումներն անհեթեթ են թվում հոգուն և քննության կարիք ունեն:

– Բնականաբար, նման դեպքերում հոգին սկսում է կշռադատել և փորձում է պարզել, թե քանի առարկաների է վերաբերում հաղորդումը՝ մեկ, թե երկու: b

– Իհարկե:

– Արդ, եթե պարզվի, որ դրանք երկուսն են, դրանցից յուրաքանչյուրը կթվա և՛ ուրիշ, և՛ նույնական:

– Այո:

– Եթե յուրաքանչյուրը մեկն է, իսկ միասին երկուսն են, ապա մտքում այդ երկուսը բաժանվում են, քանզի եթե բաժանված չեն, մտածվում են ոչ թե որպես երկու, այլ մեկ:

– Ճիշտ է: c

– Չէ՞ որ տեսողությունը, մեր պնդմամբ, մեծը և փոքրը տեսնում է ոչ թե առանձին-առանձին, այլ որպես միասնական ինչ-որ բան: Այդպես չէ՞:

– Այո:

– Դա պարզելու համար մտածողությունը ստիպված է դիտել մեծը և փոքրը, բայց ոչ թե միասնության մեջ, այլ առանձին-առանձին, այսինքն տեսողության տեսածի հակառակ:

– Ճիշտ է:

– Այստեղից չէ՞, որ ծագում է մեր հարցը՝ ինչ է մեծը և ինչ է փոքրը:

– Հենց այդտեղից:

– Հետևաբար մեկը մենք կոչում ենք մտահասու, իսկ մյուսը՝ տեսանելի:

– Շատ ճիշտ է: d

– Հենց դա էի փորձում հենց նոր ասել. ինչ-ինչ բաներ խթանում են մտածողությունը, իսկ մյուսները՝ ոչ: Այն, ինչ ներգործում է զգայության վրա իր հակադրության հետ միաժամանակ, ես սահմանեցի որպես խթանող, իսկ այն, ինչ այդպես չի ներգործում, չի խթանում:

– Հիմա հասկացա, և ինձ թվում է՝ ամեն բան այդպես է:

– Եվ ինչ, ինչ ես կարծում՝ մեկը և թիվը տեսակներից որի՞ն են պատկանում:

– Չեմ հասկանում:

– Եզրակացրու նախկինում ասվածից: Եթե մեկը բավականաչափ լավ ճանաչվում է ինքն ըստ ինքյան՝ տեսողությամբ կամ մեկ ուրիշ զգայությամբ, մի՞թե չի գոյանում նաև դրա էությունը ճանաչելու ձգտում, ինչպես որ ցույց տվեցի
e մատի օրինակի վրա: Բայց եթե դրա մեջ մշտապես երևան է գալիս հակադրությունը, այնպես որ սա մեկ է ոչ ավելի, քան իր հակադրությունը, անհրաժեշտ է լինում որևէ դատողություն. այդժամ հոգին դատապարտված է չհասկանալու, փնտրելու, գրգռելու իր մեջ միտքը և հարց տալու՝ ի՞նչ է ինքը մե-
525 կը: Այդկերպ դրա ճանաչողությունը կտաներ և կմղեր դեպի գոյության հայեցողություն:

– Բայց ոչ պակաս չափով դա տեղի է ունենում նաև նույնականի հայեցողության պարագայում: Նույնականը մենք տեսնում ենք և՛ որպես մեկ, և՛ որպես անսահման բազմություն:

– Եթե այդպես է մեկի պարագայում, մի՞թե այդպես չէ նաև ամեն թվի պարագայում:

– Ինչպե՞ս չէ:

– Բայց չէ՞ որ հաշվարկն ու թվաբանությունը ամբողջությամբ վերաբերում են թվերին:

– Իհարկե:

b – Ու դրանք էլ, ինչպես երևում է, տանում են դեպի ճշմարտություն:

– Այն էլ ինչպես:

– Ուրեմն դրանք պատկանում են մեր փնտրած իմացությունների թվին: Զինվորը պետք է գիտենա դրանք զորաշարության համար, իսկ փիլիսոփան, կայացման աշխարհից դուրս գալով, գոյությանը հասու դառնալու համար, այլապես երբեք չի դառնա մտածող:

– Այդպես է:

– Չէ՞ որ մեր պահապանը ինչպես զինվոր, այնպես էլ փի-
լիսոփա է:

– Եվ ի՞նչ:

– Այդ իմացությունը, Գլավկոն, հարմար է՝ օրենք սահմա-
նելու և համոզելու նրանց, ովքեր պետության մեջ ցանկա- c
նում են բարձր պաշտոններ զբաղեցնել, դիմել հաշվարկի
արվեստին և զբաղվել դրանով ոչ թե ինչպես պատահի, այլ
մինչև որ մտովի հասնեն թվերի բնության հայեցողությանը:
Ոչ թե հանուն առևտրի, որի մասին հոգ են տանում առևտրա-
կաններն ու վաճառականները, այլ հանուն ռազմական նպա-
տակի և թեթևացնելու համար հոգու անցումը կայացումից
դեպի ճշմարտություն և գոյություն:

– Հրաշալի՛ ասացիր:

– Հիմա, երբ քննեցինք հաշվարկի արվեստը, ես հասկա-
նում եմ՝ որքան նուրբ է այն և որքան օգտակար մեր նպա-
տակի համար, եթե գործի է դրվում ի սեր ճանաչողության, d
այլ ոչ շահի:

– Ինչո՞վ:

– Նրանով, ինչի մասին հենց նոր խոսեցինք: Այն վեր է
մղում հոգին ուժգնորեն և ստիպում նրան մտածել ինքնին
թվերի մասին, թույլ չտալով, որ ինչ-որ մեկը փոխարինի
դրանք թիվ ունեցող տեսանելի կամ շոշափելի մարմիններով:
Չէ՞ որ դու գիտես, որ այս գիտության մեջ ուժեղները կծաղ- e
րեն և չեն ընդունի ինքը մեկը մտովի բաժանելու փորձը,
սակայն եթե դու կոտորակես այն, նրանք կբազմացնեն եղածը՝
վախենալով, որ մեկը կարող է լինել ոչ թե մեկ, այլ մեկի բա-
զում մասեր:

– Շատ ճիշտ ես ասում:

– Ի՞նչ ես կարծում, Գլավկոն, եթե ոմն հարցնի նրանց. 526
«Պատվակա՛ն այրեր, ի՞նչ թվերի մասին եք խոսում: Գուցե
նրա՞նց, որոնց մեջ մեկն այնպիսին է, ինչպիսին որ այն հա-
մարում եք, այսինքն՝ յուրաքանչյուր մեկ հավասար է այլ մեկի

և ոչնչով նրանից չի տարբերվում, և ոչ էլ մասեր ունի իր մեջ»: Ինչ ես կարծում, ի՞նչ կպատասխանեն:

– Ըստ իս՝ կասեն, որ խոսում են այն թվերի մասին, որոնք կարելի է միայն մտածել և որոնց հետ ուրիշ ոչինչ անել հնարավոր չէ:

– Տեսնում ես, բարեկամս, որ իրականում մեզ անհրաժեշտ է այդ գիտությունը, քանի որ պարզվում է, որ դա ստի-
b պում է հոգուն օգտվել մտածողությունից հանուն հենց ճշմարտության:

– Եվ ի՞նչ վստահ է անում դա:

– Իսկ դու տեսե՞լ ես, թե հաշվարկի մեջ ի բնե ուժեղ մարդիկ որքան ընկալունակ են նաև մյուս բոլոր գիտություններում: Նաև նրանք, ովքեր դանդաղամիտ են, սովորելով հաշվել և վարժվելով, անգամ եթե ուրիշ ոչ մի օգուտ չեն ստանում, դառնում են առավել ընկալունակ:

– Այդպես է:

c – Ինձ թվում է, դու մեծ դժվարությամբ և քիչ բան կգտնես, որ սովորողի, անգամ ջանասիրաբար սովորողի համար ավելի դժվար լիներ, քան սա:

– Չեմ գտնի:

– Հանուն այդ ամենի չարժե մի կողմ դնել այդպիսի իմացությունը, ընդհակառակը՝ հենց դրա միջոցով պետք է դաստիարակել բնությամբ ազնիվ մարդկանց:

– Համամիտ եմ:

– Արդ, թող սա լինի մեր առաջին ենթադրությունը: Երկրորդը, որ պիտի քննենք, այն է, թե նպատակահարմար է մեզ արդյոք քննել այս գիտությունը:

– Ո՞ր: Գուցե երկրաչափությու՞նը:

– Այո:

d – Քանի որ այն կիրառվում է ռազմական արհեստում, պարզ է, որ հարմար է ճամբարելիս, տեղանք գրավելիս, զորք գումարելիս, վերախմբավորելիս կամ ուրիշ ռազմական դիրքավորումների և արշավանքների ժամանակ: Երկրաչա-

փության գիտակը կտարբերվի նրանից, ով անտեղյակ է դրանից:

– Բայց դրա համար բավական կլիներ երկրաչափության և հաշվարկի լոկ աննշան մասը: Հարկ է, սակայն, դիտարկել նրա գերակշիռ մասը, որն ավելի լայն տարածում ունի և ծառայում է մեր նպատակին. արդյո՞ք ավելի հեշտ է դարձնում դա բարիքի գաղափարի հայեցողությունը: Այո, պատասխանում ենք մենք, դարձնում է և ստիպում հոգուն շրջվել դեպի այն վայրը, ուր գտնվում է գոյության մեծագույն երանությունը, որը և պետք է տեսնի հոգին ամեն գնով: e

– Իրավացի ես:

– Հետևաբար, եթե երկրաչափությունը ստիպում է հայել գոյությունը, հարմար է մեզ, իսկ եթե ստիպում է հայել կայացումը, հարմար չէ:

– Այո, այդպես կասենք:

– Նրանք, ովքեր երկրաչափության գիտակ են, երբեք չեն 527
վիճարկի, որ այդ գիտությունը միանգամայն հակառակ է այն արտահայտություններին, որոնցից օգտվում են դրանով զբաղվողները:

– Ինչպե՞ս:

– Նրանք արտահայտվում են շատ զավեշտալի և ասես հարկադրյալ: Թվում է՝ զբաղված են ինչ-որ գործով և հանուն այդ գործի ասում են. «Կառուցենք քառանկյուն, գծենք, միացնենք» և այլն: Անվերջ դա են կրկնում: Մինչդեռ այդ գիտությամբ զբաղվում են հանուն ճանաչողության: b

– Իհարկե:

– Հարկ է համաձայնության գալ նաև հետևյալի շուրջ:

– Ինչի՞:

– Այդ գիտությամբ զբաղվում են հանուն հավիտենական գոյության ճանաչողության, այլ ոչ նրա, որ գոյանում և կործանվում է:

– Այո, հարկ է համաձայնել դրան: Երկրաչափությունը հավիտենական գոյության ճանաչողություն է:

– Այն ձգում է հոգին դեպի ճշմարտությունը և ներգործում է փիլիսոփայական մտածողության վրա՝ մղելով այն վեր: Իսկ հիմա, հակառակ անհրաժեշտության, ձգում է ցած:

– Այո, հենց այդպես է:

c – Ուրեմն հարկ է պատվիրել, որ գեղեցիկ քաղաքի բնակիչները ոչ մի դեպքում չթողնեն երկրաչափությունը: Չէ՞ որ երկրաչափության նաև կողմնակի կիրառությունը քիչ բան չէ:

– Ի՞նչ կիրառություն:

– Այն, որի մասին խոսեցիր՝ նշելով, որ դա օգնում է ավելի լավ յուրացնել ռազմական արհեստը, ինչպես նաև բոլոր մյուս գիտությունները: Մենք տեսանք, թե որքան մեծ է տարբերությունը երկրաչափությանը հաղորդակից և անհաղորդ մարդկանց միջև:

– Մեծ է, Զևսը վկա:

– Համարենք սա մեր երիտասարդներին անհրաժեշտ երկրորդ գիտություն[5]:

d – Համարենք:

– Եվ ի՞նչ: Երրորդը համարենք աստղագիտությու՞նը, ի՞նչ ես կարծում:

– Ինձ թվում է, այո, որովհետև տարվա եղանակների, ամիսների և տարիների ընթացքին ուշադիր հետևելն անհրաժեշտ է ոչ միայն հողագործության և նավագնացության, այլև ոչ պակաս չափով ռազմական գործի համար:

– Շատ հաճելի է, որ դու կարծես վախենում ես տպավորություն թողնել բազմության վրա, իբր պատվիրում ես մարդկանց անպետք գիտություններ: Սակայն կարևոր է այն,– թեև

e դժվար է դրան հավատալ,– որ գիտություններում զտվում ու վերակենդանանում է յուրաքանչյուր մարդու հոգու մի գործարան, որը մյուս զբաղմունքներում վնասվում ու կուրանում է, մինչդեռ այն պահպանելն ավելի օգտակար կլիներ, քան բյուր աչքեր ունենալը, քանի որ միայն դրա շնորհիվ կարելի է տեսնել ճշմարտությունը: Նրանք, ովքեր համամիտ են սրան, կասեն, որ դու խոսում ես զարմանալիորեն լավ, իսկ

նրանք, ովքեր սա ոչ մի կերպ չեն զգում, բնականաբար կմտածեն, թե փուչ բաներ ես ասում՝ անօգուտ և անարժեք: Անմիջապես նկատի առ, թե սրանցից որոնց հետ ես զրուցում: 528
Կամ գուցե ո՛չ սրանց, ո՛չ էլ նրանց, այլ ինքդ քեզ համար ես խոսում՝ չդիմելով ոչ ոքի, այնպես որ ցանկացողը կարող է քեզ լսելով իր համար օգուտ քաղել:

– Հիմնականում ես նախընտրում եմ խոսել ինքս ինձ համար՝ հարցեր տալով և պատասխանելով:

– Այդ դեպքում ետ դարձիր, որովհետև մենք ճիշտ չընտրեցինք երկրաչափությանը հաջորդող գիտությունը:

– Ինչու՞ ճիշտ չէր:

– Հարթություններից հետո մենք անցանք պինդ մարմիններին, որոնք պտտվում են, բայց չքննեցինք դրանք ինքնին: Չէ՞ որ ճիշտ կլիներ երկրորդ չափումից հետո անցնել երրոր- b
դին. սա վերաբերում է խորանարդներին և խորություններին[6]:

– Այդպես է: Բայց, Սոկրատես, ինձ թվում է՝ այստեղ դեռ ոչինչ չեն հայտնաբերել:

– Պատճառը երկակի է: Չկա պետություն, որտեղ այս գիտությունը հարգանք վայելեր: Այն թույլ է հետազոտված, քանզի խրթին է: Այստեղ ուսուցչի կարիք կա, առանց որի ոչինչ չեն բացահայտի: Նախ՝ այդպիսի ուսուցիչ գտնելը դժվար է, բայց եթե անգամ գտնվի, ներկայումս այդ հարցերով զբաղվողները չէին հավատա նրան, քանի որ շատ մեծամիտ են: Բայց եթե ողջ պետության մեջ նման գիտությունները հարգանք վայելեն և խրախուսվեն, մարդիկ կհնազանդվեն, և c
նրանց շարունակական ու եռանդուն հետազոտությունները կբացահայտեն ուսումնասիրման առարկայի էությունը: Չէ՞ որ նաև հիմա, արժանանալով շատերի արհամարհանքին և բախվելով նրանց հարուցած խոչընդոտներին, երբ անգամ դրանցով զբաղվողները պատկերացում չունեն դրանց օգտակարության մասին, այդ գիտությունները հակառակ ամեն բանի զարգանում են շնորհիվ իրենց գրավչության: Բնավ զարմանալի չէ, որ այդ գիտությունն ի հայտ գա մեզանում: d

– Այո, այդ գիտությունը յուրահատուկ է: Սակայն ավելի հստակ ձևակերպիր, թե ինչ նկատի ունես. հարթության ուսումնասիրությունը դասում ես երկրաչափությա՞նը:

– Այո, դասում եմ:

– Սրան հետևեց աստղագիտությունը, բայց դու հրաժարվեցիր խոսել դրա մասին:

– Այնքան շտապեցի քննել ամեն բան, որ միայն ավելի դանդաղաշարժ դարձա: Հաջորդը խորության ուսումնասիրությունն է, որը, սակայն, զավեշտալիի աստիճան վատ վիճակում է, և ես շրջանցեցի այն, երկրաչափությունից հետո խո-
e սելով աստղագիտության, այսինքն՝ խորություն ունեցող մարմինների պտույտների մասին:

– Իրավացի ես:

– Չորրորդ գիտությունը կհամարենք աստղագիտությունը, որն այժմ մոռացության է մատնված, սակայն կարող է նորից հառնել, եթե պետությունը զբաղվի դրանով:

– Բնականաբար: Դու, Սոկրատես, քիչ առաջ մեղադրեցիր ինձ՝ ասելով, թե աստղագիտության իմ գովեստը գռեհիկ է: Հի-
529 մա ես գովք կանեմ՝ հետևելով քեզ: Քանզի, ըստ իս, ամենքին էլ պարզ է, որ այն ստիպում է հոգուն նայել վեր և ուղորդում է այնտեղ՝ հեռացնելով այստեղից:

– Գուցե ամենքին պարզ է, բայց ոչ ինձ: Քանզի ես այդպես չեմ կարծում:

– Իսկ ինչպե՞ս:

– Եթե զբաղվենք աստղագիտությամբ այնպես, ինչպես անում են շատերը, որոնք հասցնում են այդ գիտությունը փիլիսոփայության աստիճանի, ապա այն շատ է ստիպում մեզ ցած նայել:

– Ի՞նչ նկատի ունես:

b – Կարծում եմ, դու ինքդ էլ հրաշալիորեն հասկացար, թե ինչ է վերինի մասին գիտությունը: Գուցե ասես, որ ոմն, դիտելով իր գլխավերևում առաստաղի զարդերը և ինչ-որ բան ճանաչելով, օգտվում է ոչ թե աչքերից, այլ մտածողությունից:

Գուցե դու ճիշտ ես մտածում, չէ՞ որ ես խորաթափանց մարդ չեմ: Չեմ կարող պատկերացնել, որ վերև նայել մեր հոգուն ստիպում է մեկ ուրիշ գիտություն բացի նրանից, որն առնչվում է գոյությանը և անտեսանելիին: Անկախ այն բանից՝ բերանը բաց վեր են նայում, թե աչքերը կկոցելով՝ ցած, զգայությունների միջոցով ինչ-որ բան հասկանալ փորձելիս,– ես սա պնդում եմ,– երբեք ոչինչ չեն ճանաչի, որովհետև ճանաչողությունը երբեք գործ չունի նման բաների հետ և հոգին այդ ժամանակ նայում է ոչ թե վեր, այլ վար, անգամ եթե մեջքի c
վրա պառկած են հողին կամ այդպես լողում են ծովում:

– Արդար պատիժ կրեցի: Դիտողությունդ տեղին է: Բայց, քո կարծիքով, ինչպե՞ս պիտի սովորեմ աստղագիտությունը, որ տարբերվի այն եղանակից, որով սովորում են հիմա: Չէ՞ որ մենք ուզում ենք սովորել դա հանուն մեր նպատակի:

– Այսպես: Նախշերը երկնքում, որոնք զարդարում են տեսանելին, բոլոր նման բաների մեջ ամենագեղեցիկն ու ամենակատարյալն են, սակայն շատ են զիջում իսկական իրերին, d
որոնք շարժվում են միմյանց հանդեպ ճշգրիտ արագությամբ և դանդաղությամբ, ճիշտ քանակի են և ունեն ճշմարիտ ամենատարբեր ձևեր. նրանց հետ շարժվում է նաև իրենց պարունակությունը: Դրանք ճանաչելի են բանականությամբ և մտածողությամբ, բայց ոչ տեսողությամբ: Թե՞ կարծում ես՝ տեսողությամբ:

– Ոչ մի դեպքում:

– Ուրեմն, երկնային նախշերից պետք է օգտվել ճշմարիտ գոյությունը ճանաչելու համար, ինչպես եթե գործ ունենայինք Դեդալոսի[7] կամ մեկ ուրիշ վարպետի կատարյալ և մանրակրկիտ գծանկարների հետ: Երկրաչափությանը հաղորդակից մեկը, տեսնելով դրանք, գեղեցիկ կհամարեր դրանց կատա- e
րումը, սակայն զավեշտական կլիներ լրջորեն քննել դրանք գտնելու համար հավասարության, կրկնապատկության և ուրիշ համաչափությունների ճշմարտությունը: 530

– Այո, զավեշտական կլիներ:

– Իսկ ճշմարիտ աստղագետը մի՞թե համոզված չէր լինի դրանում՝ դիտելով աստղերի պտույտը: Նա կորոշեր, որ այդ ամենը կարգավորված է լավագույն ձևով, քանզի դեմիուրգոսն այդպես է ստեղծել երկինքը և ամեն բան երկնքում՝ գիշերվա և օրվա հարաբերությունը, դրանց հարաբերությունն
b ամսվա, ամսվա հարաբերությունը տարվա հետ և աստղերի հարաբերությունն այդ ամենի ու միմյանց հետ: Անհեթեթ չի՞ համարի արդյոք դեմիուրգոսն այն մարդուն, որը կարծում է, թե այդ ամենը միշտ տեղի է ունենում նույն ձևով ու չեն լինում խախտումներ, և չնայած որ աստղերը մարմնավոր են ու տեսանելի, ամեն գնով ցանկանում է դրանց մեջ ճշմարտություն գտնել:

– Ես էլ եմ այդպես մտածում:

– Այդ դեպքում մենք աստղագիտությունը կուսումնասիրենք ինչպես երկրաչափությունը՝ անդրադառնալով դրա հիմնական խնդիրներին: Իսկ երկնքում եղածը թողնենք, եթե իս-
c կապես ցանկանում ենք հասու դառնալ աստղագիտությանը և օգտագործել մեր հոգու ի բնե բանական և տակավին չօգտագործված մասը:

– Շատ բարդ ես ներկայացնում աստղագիտության ուսումնասիրությունը: Ներկայումս դա կարծես թե ավելի դյուրին է:

– Կարծում եմ, մեր մյուս հրահանգներն էլ պիտի այդպիսին լինեն, եթե ուզում ենք, որ մեր սահմանած օրենքները լինեն օգտակար: Իսկ ուրիշ որևէ հարմար գիտություն մտաբերու՞մ ես:

– Հիմա իսկույն չեմ կարողանում մտաբերել:

d – Ինձ թվում է, որ շարժումը ոչ թե միատեսակ է, այլ ունի բազում տեսակներ: Բոլոր տեսակները կարող է նշել թերևս միայն իմաստունը: Մենք տեսնում ենք լոկ երկուսը:

– Որո՞նք:

– Բացի նշվածից, նաև դրան համապատասխանողը:

– Ո՞րը:

– Ինչպես մեր աչքերն են ուղղված աստղագիտությանը, այնպես էլ մեր ականջները՝ ներդաշնակ հնչյունների շարժմանը, հետևաբար հիշատակված երկու գիտություններն ասես քույրեր լինեն: Այդպես են ասում պյութագորականները, Գլավկոն, և մենք կհամաձայնենք նրանց: Այդպես չէ՞:

– Այդպես է:

– Արդ, սա բարդ հարց է, և մենք կլսենք, թե ինչ կասեն e
նրանք և ինչ կավելացնեն: Իսկ մենք բոլոր դեպքերում կպաշտպանենք մեր կարծիքը:

– Այսի՞նքն:

– Նրանք, որոնց մենք դաստիարակում ենք, թող անգամ չփորձեն սովորել անկատար ինչ-որ բան՝ ոչինչ չտվող մեր նպատակի իրագործմանը, որին պիտի ուղղված լինի ամեն բան, ինչպես հենց նոր ասացինք աստղագիտության առիթով:
Թե՞ չգիտես, որ ներդաշնակության առնչությամբ տեղի ունի 531
նույնը: Ինչպես և աստղագետները, նրանք աշխատում են անարդյունք, չափում և համեմատում են լսված ներդաշնակ հնչյունները:

– Աստվածները վկա, դա շատ զավեշտական է, քանի որ նրանք ինչ-որ բան կոչում են սեղմում և սրում են լսողությունը՝ ասես որսում են հարևան տնից եկող ձայները: Ոմանք ասում են, թե լսում են միջին ինչ-որ հնչյուն, որ գտնվում է երկուսի մեջտեղում, որտեղ միջակայքը նվազագույնն է, որով պետք է չափել մնացյալը, իսկ մյուսները վիճում են նրանց հետ՝ ասելով, որ հնչյունները միանման են: Բայց ինչպես
առաջինները, այնպես էլ երկրորդները, ականջները խելքից b
բարձր են դասում:

– Դու խոսում ես այն բարի մարդկանց մասին, որոնք տանջում և խոշտանգում են լարերը՝ ամրացնելով ականջների վրա: Որպեսզի չերկարացնենք այս ամենն ու չխոսենք պլեկտրոնի հարվածների մասին և թե ինչպես են մեղադրում լարերը, մերժում դրանք կամ պարծենում դրանցով, կասեմ, որ նկատի ունեի ոչ թե այդ մարդկանց պատասխանները, այլ

c պյութագորյաններին, որոնց քիչ առաջ որոշեցինք հարցնել ներդաշնակության մասին: Չէ՞ որ նրանք վարվում են աստղագետների պես: Նրանք թվեր են փնտրում լսելի համահնչություններում, սակայն չեն քննում բուն խնդիրները, այսինքն՝ որ թվերն են համահունչ, իսկ որոնք՝ ոչ և ինչու[8]:

– Ասածդ հրաշալի նախաձեռնություն կլիներ:

– Դա օգտակար կլիներ գեղեցիկի և բարու ուսումնասիրության համար, հակառակ դեպքում դրան հետևելն անօգուտ է:

– Բնականաբար:

– Ես կարծում եմ, որ եթե մեր ուսումնասիրած բոլոր առարկաներում կարելի է հաստատել նշված ընդհանրու-
d թյունն ու ազգակցությունը և կարելի է եզրակացնել, թե որ իմաստով են դրանք ազգակից միմյանց, մենք կարող ենք հասնել մեր նպատակին, և աշխատանքը զուր չի լինի: Այլապես այն անօգուտ կլինի:

– Ինձ էլ է այդպես թվում: Բայց դու խոսում ես շատ դժվար խնդրի մասին, Սոկրատես:

– Նկատի ունես նախե՞րգը, թե՞ ուրիշ ինչ-որ բան: Մի՞թե չգիտենք, որ այս ամենը նախերգ է հիմնական մեղեդու հա-
e մար, որը պիտի յուրացնենք: Չէ՞ որ սրա մեջ հմուտ մեկին դիալեկտիկայի վարպետ չես համարում:

– Ոչ, Զևսը վկա, ինձ պատահածների մեջ այդպիսին են միայն քչերը:

– Իսկ նրանք, ովքեր չեն կարող ապացույց ներկայացնել կամ ընդունել այն, մեր կարծիքով անհրաժեշտ իմացություններից ոչինչ չգիտեն:

– Այո, չգիտեն:

– Արդ, Գլավկոն, հենց սա է հիմնական մեղեդին, որ սահ-
532 մանում է դիալեկտիկան: Այդ մեղեդին մտահասու է, սակայն տեսողությունը կուզեր վերարտադրել այն: Բայց չէ՞ որ ինչ-որ բան նշմարելու սրա փորձը միտված է կենդանի էակներին, աստղերին և, վերջապես, Արեգակին: Իսկ երբ որևէ մեկը

փորձում է խորհրդածել, ապա շրջանցելով բոլոր զգայությունները, միայն բանականության օգնությամբ, նա շարժվում է դեպի յուրաքանչյուր առարկայի էությունը և հետ չի քաշվում, մինչև որ մտածողության իսկ միջոցով հասկանա, թե ինչ է բարիքը: Այդպես նա հայտնվում է մտահասուի գագաթին, ինչպես մեկ ուրիշը՝ տեսանելիի գագաթին: b

– Շատ ճիշտ է:

– Եվ ի՞նչ: Մի՞թե չես անվանի այդպիսի ճանապարհը դիալեկտիկական:

– Հետո՞:

– Եվ դա կլինի ազատում շղթաներից, շրջում ստվերներից դեպի պատկերներն ու լույսը, վերելք ստորերկրյա աշխարհից դեպի Արեգակը: Իսկ եթե այդժամ էլ անհնար լինի դիտել կենդանի էակները, բույսերն ու Արեգակը, լավ է դիտել ջրի c մեջ գոյի աստվածային արտացոլանքը, գոյի ստվերները, քան պատկերների ստվերները, որոնք առաջ են գալիս Արեգակի լույսի շնորհիվ, որն ինքը Արեգակի ստվերն է: Նշված գիտություններով զբաղվելը հնարավոր է դարձնում, որ մեր հոգու գեղեցկագույն մասը բարձրանա դեպի գոյության մեջ լավագույնի հայեցողությունը, ինչպես եթե առաջին դեպքում մեր մարմնի ամենահստակ զգայությունն ուղղված լինի մարմնա- d կերպ և տեսանելի ոլորտի ամենալուսավոր հատվածին:

– Ես ընդունում եմ դա, թեպետ այդ ամենն ինձ բարդ է թվում: Մյուս կողմից, դժվար է դա չընդունել: Ամեն դեպքում,– քանի որ մենք միայն հիմա չէ, որ խոսում ենք դրա մասին, հարկ կլինի բազմիցս անդրադառնալ դրան,– համարելով, որ բանն այնպես է, ինչպես նշեցինք, անցնենք հիմնական մեղեդուն և քննենք, ինչպես որ քննեցինք նախերգը: Ասա՛ ինձ, ինչպիսի՞ն է խորհրդածելու ունակությունը, ի՞նչ տեսակներ e ունի և ինչպիսի՞ ճանապարհներ է անցնում: Դրանք, թվում է, մեզ տանում են դեպի մի հանգրվան, որին հասնելով՝ հնարավոր կլիներ հանգիստ առնել և ավարտել ճամփորդությունը:

1915.info

533 – Սիրելի՛ Գլավկոն, դու դեռ ի վիճակի չես ինձ հետևելու, չնայած ես պատրաստ եմ առաջ շարժվել: Դու պետք է որ արդեն տեսնեիր ոչ թե պատկերը նրա, ինչի մասին խոսում ենք, այլ հենց ճշմարտությունը, ինչպես այն երևում է ինձ: Այդպես է իրականում, թե ոչ՝ առայժմ չարժե պնդել: Բայց որ անհրաժեշտ է նման բան տեսնել՝ հարկ է պնդել: Այդպես չէ՞:

– Եվ ի՞նչ:

– Հարկ է հաստատել, որ միայն խորհրդածելու ունակությունը կարող է դա ցույց տալ մեր քննած հարցերում գիտակ մարդուն, որևէ ուրիշ ունակություն չի կարող:

b – Այո, հարկ է հաստատել:

– Ոչ ոք չի առարկի մեզ, թե կարելի է փորձել մեկ ուրիշ եղանակով ըմբռնել յուրաքանչյուր իրն իր ամբողջության մեջ: Մյուս բոլոր արվեստները վերաբերում են մարդկանց կարծիքներին և տենչանքներին, ուղղված են ծագմանն ու համադրությանը կամ էլ ամբողջությամբ հոգ են տանում աճողի և համադրվողի մասին: Մնացյալ արվեստները, որոնք, ինչպես ասացինք, ձգտում են որևէ կերպ ճանաչելու գոյությունը (խոսքը երկրաչափության և դրան հաջորդող գիտու-
c թյունների մասին է), տեսնում են գոյությունը միայն երազում, իսկ հարթմնի չեն կարող տեսնել, քանի դեռ օգտվելով իրենց ենթադրություններից՝ դրանք անսասան են պահում և ի վիճակի չեն բացատրելու: Այն, ինչի սկիզբն անհայտ է, իսկ վերջն ու մեջտեղը անկարելի է միահյուսել,– կարո՞ղ է արդյոք այդպիսի անհամաձայնությունը իմացություն կոչվել:

– Երբեք:

– Ուրեմն այս եղանակով կարող է շարժվել միայն դիալեկտիկան. մի կողմ թողնելով ենթադրությունները՝ նա շարժվում է դեպի սկիզբը, որպեսզի հիմնավորի այն, և ասես ազատում
d է բարբարոսության ցեխից մեր հոգու հայացքը և բարձրացնում դեպի վեր՝ որպես օգնականներ և ուղեկիցներ ունենալով մեր քննած արվեստները: Հաճախ, ըստ սովորության, մենք գիտություններ ենք կոչում դրանք, սակայն ուրիշ

անվան կարիք ունենք, որովհետև այդ հնարքները պակաս ակնառու են, քան գիտությունը, և ավելի հստակ են, քան կարծիքը: Իսկ մտածողությունը մենք արդեն սահմանեցինք քիչ առաջ: Բայց, իմ կարծիքով, կարիք չկա վիճելու անվան շուրջ, եթե քննվելիքն այնքան կարևոր է, որքան մեր դեպ- e
քում:

– Այո, չկա: Միայն թե անունը հստակ արտահայտի այն, ինչ նկատի ունի հոգին:

– Մեզ, ինչպես և նախկինում, կբավարարեն հետևյալ անունները. առաջինը՝ իմացություն, երկրորդը՝ կշռադատում, երրորդը՝ հավատ և չորրորդը՝ երևակայություն: Վերջին եր- 534
կուսը միասին կազմում են կարծիք, իսկ առաջին երկուսը՝ մտածողություն: Կարծիքը վերաբերում է կայացմանը, իսկ մտածողությունը՝ էությանը: Եվ ինչպես էությունը վերաբերում է կայացմանը, այնպես էլ մտածողությունը՝ կարծիքին: Ինչպես որ մտածողությունը վերաբերում է կարծիքին, այնպես իմացությունը վերաբերում է հավատին, իսկ մտածողությունը՝ երևակայությանը: Բաժանումը երկուսի, Գլավկոն, այսինքն՝ կարծածի և մտածածի, և դրանց համապատասխանությունն այն առարկաներին, որոնց դրանք պատկանում են, մենք բաց կթողնենք, որպեսզի խուսափենք շատ ավելի երկար քննությունից:

– Բայց ես համամիտ եմ, որքանով կարողանում եմ հե- b
տևել քեզ:

– Դու դիալեկտիկայի վարպետ ես կոչում նրան, ով հասու է յուրաքանչյուր իրի էության քննությանը: Իսկ նա, ով չի կարող բացատրել դա ո՛չ ինքն իրեն, ո՛չ ուրիշին, ինքն էլ պատկերացում չունի դրա մասին:

– Այո, կոչում եմ:

– Նույնը վերաբերում է նաև բարիքին: Եվ նրա մասին, ով չի կարող փաստարկելով սահմանել բարիքի գաղափարը՝ c
առանձնացնելով այն մնացյալ ամենի ինչից, ով չի գնում ասես մարտի բոլոր խոչընդոտներին ընդառաջ դեպի բացա-

հայտումը, որը հիմնված է ոչ թե կարծիքի, այլ էության ըմբռնման վրա, ով վստահորեն առաջ չի շարժվում այդ ամենի միջով,– նրա մասին դու կասես, որ նա չի ճանաչում ո՛չ բարիքն ինքը, ո՛չ էլ ուրիշ որևէ բարիք, այնպես որ եթե դիպչում էլ է բարիքի որևէ պատրանքի, ապա լոկ կարծիքի միջոցով, և ոչ իմացության: Այդպիսի մարդը կյանքն ապրում է քնի ու երազի մեջ և, դեռ չարթնացած այստեղ, հասնելով Հադես՝ վերջնականապես քուն է մտնում:

d – Ճնսը վկա, ես հաստատապես կպնդեմ դա:

– Բայց սեփական զավակներիդ, որոնց տակավին սնում և դաստիարակում ես լոկ մտովի, եթե ստիպված լինեիր անել դա իրականում, ապա, կարծում եմ, քանի դեռ նրանք անխոս են, ինչպես գծագիրը, թույլ չէիր տա պետության մեջ տիրակալներ և ազդեցիկ մարդիկ լինել:

– Իհարկե ոչ:

– Եվ դու օրենքով կպարտավորեցնես նրանց ստանալ այնպիսի դաստիարակություն, որը թույլ կտա նրանց հմուտ լինել հարցերի և պատասխանների մե՞ջ:

e – Մենք քեզ հետ միասին կսահմանենք այդ օրենքը:

– Իսկ քեզ չի՞ թվում, որ դիալեկտիկան մեզ մոտ կլինի ասես բոլոր մյուս իմացությունների քիվը, և ճիշտ չի լինի նրանից վեր դասել որևէ ուրիշ իմացություն, չէ՞ որ այն մյուս բոլորի գագաթն է:

– Իհարկե:

535 – Քեզ մնում է որոշել, թե ում պիտի հանձնենք այդ իմացությունները և ինչպես:

– Անշուշտ:

– Հիշու՞մ ես, թե որ տիրակալներին ընտրեցինք նախկինում, երբ խոսում էինք այդ մասին:

– Ինչպե՞ս չէ:

– Արդ, պետք է ընտրել այդ նույն բնությունները և գերապատվություն տալ ամենահաստատուններին, արիներին և

b հնարավորինս նաև բարեպաշտներին: Բացի այդ, պետք է

գտնել ոչ միայն ազնիվ և խիստ բարքի տեր մարդկանց, այլև նրանց, ովքեր ունեն այդպիսի դաստիարակության համար պատշաճ բնություն:

– Ի՞նչ բնություն է դա:

– Նրանք, սիրելիս, պետք է ընկալունակ լինեն գիտությունների հանդեպ և հեշտ սովորեն: Չէ՞ որ հոգիները ավելի շատ վախենում են գիտությունների բարդությունից, քան մարմնամարզությունից: Այդ բարդությունն ավելի մոտ է հոգուն. դա հոգու յուրահատկությունն է, որը հոգու և մարմնի համար ընդհանուր չէ:

– Ճշմարիտ է:

– Հարկ է գտնել լավ հիշողությամբ օժտված, համառ և բոլոր առումներով աշխատասեր մեկին: Թե չէ ինչպե՞ս կկարողանա դժվարություններ կրել, սովորել ու վարժվել: c

– Բոլոր առումներով այդպիսի օժտված բնություն չկա:

– Ուրեմն հենց սա է ներկայիս մոլորությունը, և նրանից է փիլիսոփայության անփառունակ վիճակը, քանզի փիլիսոփայությունը, ինչպես ասացինք, չի ստանում արժանի վերաբերմունք: Փիլիսոփայությամբ պիտի զբաղվեն ոչ թե արատավոր, այլ ազնիվ մարդիկ:

– Այսինքն ինչպե՞ս:

– Նախ, փիլիսոփայությամբ զբաղվել ցանկացողի աշխատասիրությունը չպետք է կաղա, այսինքն՝ նա չպիտի լինի աշխատասեր միայն կիսով չափ, կիսով չափ էլ՝ ոչ: Այդպես է, եթե մարդ սիրում է մարմնամարզությունը, որսորդությունը և այն ամենը, ինչ ենթադրում է մարմնական ջանքեր, սակայն ուսումնատենչ ու հետաքրքրասեր չէ և ատում է այդ կարգի դժվարությունները: Կաղ է նաև նա, ով իր աշխատասիրությունն ուղղում է սրանց հակադիր դժվարություններին: d

– Շատ ճիշտ ես ասում:

– Ուրեմն ճշմարտության առումով մենք վնասված կհամարենք հոգին, երբ նա, ատելով միտումնավոր սուտը, որը ծանր է տանում թե՛ իր, թե՛ ուրիշների բերանից, կարեկցա- e

բար թույլ է տալիս ակամա սուտը և չի ամաչում, երբ իրեն
ցույց են տալիս տգիտությունը, որի մեջ խոզի պես թավալ է
տվել թեթևամտորեն:

536 – Լիովին:

– Ինչ վերաբերում է խոհեմությանը, արիությանը և առա-
քինության մյուս մասերին, պետք է ոչ պակաս չափով հե-
տևել, թե ով է ցուցաբերում ազնվություն, իսկ ով՝ սրիկայու-
թյուն: Նա, ով չի տարբերում դրանք, լինի մասնավոր անձ թե
պետություն, ակամա այս կամ այն կարիքների համար որպես
բարեկամներ և տիրակալներ կառաջադրի կաղ և սրիկա
մարդկանց:

– Այդպես հաճախ է պատահում:

– Բայց մենք պիտի խուսափենք այդ ամենից: Եթե ընտ-
b րենք առողջներին ու ողջամիտներին և դաստիարակենք
նրանց բարձրագույն իմացությունների ու լուրջ վարժանքնե-
րի մեջ, ինքը արդարությունը մեզ ոչնչով չի մեղադրի, և մենք
կփրկենք պետությունն ու պետական կառույցը, իսկ եթե
վերցնենք ոչ պատշաճ մարդկանց, կլինի հակառակը, և փիլի-
սոփայությունը է՛լ ավելի կծանակվի:

– Դա շատ ամոթալի կլիներ:

– Իհարկե: Բայց, ինչպես երևում է, ես հիմա էլ ծիծաղելի
վիճակում եմ:

– Ինչու՞:

– Մոռանալով, որ այս ամենը լոկ զվարճանք է, ես խոսեցի
c մեծ եռանդով: Իսկ խոսելիս՝ անընդհատ հայացք էի նետում
փիլիսոփայությանը և, տեսնելով, որ նրա հետ վարվում են ոչ
արժանի կերպով, բարկանում էի վերջիններիս վրա այնպես,
որ խոսքս շատ լուրջ ստացվեց:

– Զնսը վկա, քեզ լսելով ես դա չզգացի:

– Բայց ես զգացի՝ որպես հռետոր: Չմոռանանք, սակայն,
որ նախորդ ընտրության ժամանակ մենք ընտրում էինք տա-
րեց մարդկանց, իսկ հիմա, պարզվում է, դա հնարավոր չէ,
d քանզի չի կարելի հավատալ Սոլոնին, իբր մարդ ծերանալով

կարող է շատ բան սովորել: Ընդհակառակը՝ նա ավելի քիչ է ընդունակ դրան, քան վազքին[9]: Մինչդեռ երիտասարդները կարող են հաղթահարել բազում մեծ դժվարություններ:

– Իհարկե:

– Արդ, հաշիվը, երկրաչափությունը և ամեն տեսակ սկզբնական գիտելիքներ, որ պիտի նախորդեն դիալեկտիկային, հարկ է սովորեցնել դեռ մանկուց՝ ուսուցումը ստիպողական չդարձնելով:

– Այսի՞նքն:

– Ազատ մարդը ոչ մի գիտություն չպետք է սովորի e
ստրկորեն: Քանզի եթե մարմնին բռնի ստիպում են ծանր աշխատանք կատարել, այն չի դառնում ավելի վատը, սակայն հոգու մեջ բռնի կերպով ներդրած գիտելիքը խախուտ է:

– Ճիշտ է:

– Ուրեմն, բարեկամս, զավակներիդ գիտությամբ սնիր ոչ
թե ստիպողաբար, այլ խաղալով, որպեսզի կարողանաս ավե- 537
լի լավ տեսնել յուրաքանչյուրի բնական հակումները:

– Ասածդ իմաստ ունի:

– Հիշու՞մ ես, ասում էինք, որ մանուկներին պետք է պատերազմ տանել ձիերով՝ որպես դիտորդների, իսկ անվտանգ տեղերում շատ մոտ պահել մարտական գործողություններին, որպեսզի առնեն արյան համը, ինչպես լակոտները:

– Հիշում եմ:

– Նրան, ով բոլոր դժվարություններում, գիտություններում, վտանգներում իրեն կդրսևորի որպես ամենից հնարագետ, հարկ է գրանցել հատուկ ցուցակում:

– Ո՞ր տարիքում: b

– Երբ նրան կազատեն պարտադիր ֆիզիկական վարժանքներից: Քանզի այդ ընթացքում, անկախ այն բանից, թե որքան է դա տևում՝ երկու տարի կամ երեք, նա չի կարող զբաղվել ուրիշ որևէ բանով: Հոգնածությունն ու քունը գիտությունների թշնամիներն են: Բայց չէ՞ որ դրա հետ մեկտեղ մարմնամարզության մեջ դրսևորվելը պակաս փորձություն չէ:

– Իհարկե:

– Այնուհետև քսանամյա ընտրյալները մյուսների համեմատ կվայելեն ավելի մեծ պատիվներ, իսկ գիտությունները, որ մանուկ հասակում դասավանդվում էին առանձին, պետք է
c դիտարկվեն իրենց ընդհանուր կապի մեջ, որպեսզի ցույց տրվի դրանց ազգակցությունը միմյանց և գոյության բնության հետ:

– Գիտելիքն ամուր է լոկ այն դեպքում, երբ ձեռք է բերվել հիշյալ եղանակով:

– Եվ դա ամենակարևոր չափանիշն է ստուգելու համար դիալեկտիկայով զբաղվելու բնական ձիրքը: Ընդհանուր դիտարկումներ անել կարողացողը տիրապետում է դիալեկտիկային, իսկ չկարողացողը՝ ոչ:

– Համամիտ եմ:

– Արդ, դու պիտի տեսնես, թե ով աչքի կընկնի, ով հաստատուն կլինի գիտություններում, պատերազմում և օրենքով
d սահմանված ուրիշ բաներում: Երբ այդ պատանիները դառնան երեսուն տարեկան, հարկ է որոշել ընտրյալներին, մեծ պատիվներ մատուցել նրանց, ստուգել նրանց ուժերը դիալեկտիկայում և պարզել, թե նրանցից ով կարող է մի կողմ թողնելով աչքերը և մյուս զգայարանները՝ բարձրանալ դեպի ճշմարտությունը: Այստեղ, բարեկամս, մեծ զգուշավորություն է պահանջվում:

– Բայց ինչու՞:

e – Չե՞ս նկատում, թե որքան մեծ է դարձել չարիքը, որ մեր ժամանակներում կապված է խորհրդածության հետ:

– Ի՞նչ չարիք:

– Այդ մարդիկ լցվել են անօրինությամբ:

– Այն էլ ինչպես:

– Զարմանալի չե՞ս համարում նրանց վիճակը և չե՞ս կարեկցում նրանց:

– Ի՞նչ իմաստով:

– Դիցուք, մի ընկեցիկ երեխա դաստիարակվել է հարս-

տության մեջ, ունևոր և հարգված ընտանիքում, որտեղ նրա
հանդեպ եղել են շատ հոգատար: Դառնալով այր՝ նա իմանում 538
է, որ իր մասին հոգ տարած մարդիկ իրականում իր ծնողնե-
րը չեն և իսկական ծնողներին ինքը չի գտնի: Կարո՞ղ ես գու-
շակել, թե ինչպես կվերաբերվի նա իրեն փայփայողներին և
իր կարծեցյալ ծնողներին՝ նախ, քանի դեռ չգիտի, որ ընկե-
ցիկ է, և հետո, երբ արդեն գիտի: Կուզե՞ս լսել, թե ինչ եմ
մտածում ես:

– Կուզեմ:

– Ես կռահում եմ, որ քանի դեռ չգիտի ճշմարտությունը,
ավելի շուտ կպատվի մորը, հորը, քան իրեն փայփայողներին, b
ավելի ուշադիր կլինի ազգականների հանդեպ, պակաս անօ-
րինություններ կգործի և չի տա ազատություն լեզվին, ավելի
հնազանդ կլինի ծնողներին, քան իրեն փայփայողներին:

– Բնականաբար:

– Իսկ երբ ճանաչի ճշմարտությունը, կարծում եմ, նրա
հարգանքն ու ուշադրությունը կարծեցյալ ազգականների
հանդեպ կնվազի, իսկ իրեն փայփայողների հանդեպ կաճի,
նա ավելի աչալուրջ կլսի նրանց, քան լսում էր նախկինում,
կապրի նրանց պես և անթաքույց կմիանա նրանց, իսկ նախ- c
կին հոր և մյուս ազգականների մասին այլևս հոգ չի տանի,
թեպետ բնությամբ կլինի լավ մարդ:

– Հենց քո ասածի նման էլ լինում է: Բայց ինչո՞վ է դա
առնչվում խորհրդածություններին հաղորդակից մարդկանց:

– Ահա ինչով. մենք մանկուց կարծիք ունենք արդարի և
գեղեցիկի մասին, որով դաստիարակվել ենք մեր ծնողների
կողմից, այնպես որ հնազանդ ենք դրան և կարևորում ենք
այն:

– Այդպես է:

– Բայց կան սրանց հակառակ սովորություններ, որոնք d
կապված են վայելքների հետ. դրանք շոյում և հմայում են մեր
հոգին: Սակայն չափավոր մարդիկ չեն ենթարկվում դրանց,
այլ հնազանդ են հայրերին և նրանց են մեծարում:

– Այդպես է:

– Եվ ի՞նչ: Երբ այդպիսի մարդու մոտ հարց ծագի, թե ինչ է գեղեցիկը, նա կասի այն, ինչ լսել է օրենսդրից, սակայն հետագա խորհրդածությունը կհերքի դա: Հաճախակի և զանա-
e զան հերքումների արդյունքում նա կհանգի այն թյուր կարծիքին, թե գեղեցիկը այլանդակից ավելի գեղեցիկ չէ: Այդպես կլինի նաև արդարի, բարիքի և այն ամենի հարցում, ինչը նա մեծարում է: Եվ ինչ ես կարծում, ի՞նչ կմնա այդժամ հարգանքից և հնազանդությունից:

– Իհարկե, այլևս չի լինի ո՛չ հարգանք, ո՛չ էլ հնազանդություն:

– Իսկ եթե նա չպատվի և չսիրի այդ ամենը, ինչպես նախկինում, և, մյուս կողմից, ի վիճակի չլինի գտնելու ճշմարտությունը, ինչպիսի՞ կյանք կընտրի իր համար բնականորեն,
539 եթե ոչ այն, որը հաճելի է:

– Միայն դա:

– Այդ դեպքում նա օրինապահ մարդուց կվերածվի օրինազանց մեկի:

– Անհրաժեշտաբար:

– Ուրեմն, նման վիճակը հատուկ է նրանց, ովքեր հաղորդակից են խորհրդածությանը և, ինչպես ասացի, այդպիսիք արժանի են կարեկցանքի:

– Նաև խղճահարության:

– Արդ, որպեսզի երեսնամյա տղամարդիկ չառաջացնեն քո խղճահարությունը, պետք է ամենայն զգուշությամբ դիմել խորհրդածությանը:

– Իհարկե:

b – Եվ զգուշություններից մեկը կլինի թույլ չտալ, որ նրանք ճաշակեն խորհրդածությունները երիտասարդ՝ տարիքից: Կարծում եմ, քեզնից աննկատ մնաց այն, որ պատանիները, հազիվ ճաշակելով նման խորհրդածությունները, չարաշահում են դրանք ի սեր զվարճանքի՝ միշտ կառչելով հակասություններից, նմանակելով իրենց հերքողներին և իրենց հեր-

թին հերքելով ուրիշներին: Նրանք ուրախանում են, որ իրենց
փաստարկներով, ինչպես լակոտները, միշտ հոշոտում են
վրա տվողներին:

– Այն էլ ինչպես:

– Այն բանից հետո, երբ արդեն շատերին հերքել են և շա-
տերն էլ հերքել են իրենց, նրանք արագորեն և կտրուկ հրա- c
ժարվում են նախկին կարծիքներից: Իսկ դա ուրիշների աչքե-
րում վարկաբեկում է թե՛ իրենց, թե՛ ողջ փիլիսոփայությունը:

– Շատ ճիշտ է:

– Իսկ ավելի տարեցները չեն ցանկանա հաղորդակից լի-
նել այդպիսի խենթության և ավելի շուտ կնմանակեն նրան,
ով սիրում է զրույցի մեջ քննել ճշմարտությունը, քան նրան,
ով հակաճառում է հանուն զվարճանքի. նրանք կլինեն չափա-
վոր և իրենց զբաղմունքը կդարձնեն պատվավոր և ոչ անար- d
ժան:

– Ճիշտ է:

– Մի՞թե զգուշավորության մասին չէինք խոսում նախկի-
նում, երբ ասում էինք, որ խորհրդածությանը հաղորդակից
պիտի լինեն միայն կարգապահ ու հաստատակամ մարդիկ, և
չպետք է լինի այնպես, ինչպես հիմա է, երբ ով պատահի, դա-
տողություն է անում, նույնիսկ ամենաանպատրաստը:

– Իհարկե:

– Խորհրդածության արվեստին տիրապետելու համար
կբավականացնի՞ մարմնամարզությանը հատկացվող ժամա-
նակի կրկնակին, եթե դրանից բացի ուրիշ ոչ մի բանով
չզբաղվեն:

– Նկատի ունես վեց կամ չորս տարի՞: e

– Կարևոր չէ, թո՛ղ լինի հինգ: Դրանից հետո նրանք նորից
պիտի իջնեն այն անձավը, և նրանց հարկ է ստիպել ստանձ-
նել ինչպես ռազմական, այնպես էլ երիտասարդներին վայել
այլ պաշտոններ, որպեսզի ոչ ոքի չզիջեն իրենց փորձով: Ու
դեռ պետք է պարզել՝ կդիմակայե՞ն արդյոք այլևայլ ազդեցու-
թյուններին, թե՞ կենթարկվեն:

540 – Որքա՞ն ժամանակ ես հատկացնում դրան:

– Տասնհինգ տարի: Իսկ երբ հիսուն տարեկան դառնան, ողջ մնացածներին և նրանց, ովքեր աչքի են ընկել իրենց գործերով ու իմացություններով, հարկ կլինի հասցնել վերջնական նպատակին և ստիպել, որ վեր բարձրացնեն հոգու հայացքն ու տեսնեն այն, ինչը լույս է տալիս ամեն բանի, և տեսնելով ինքը բարիքը, օգտագործեն այն որպես օրինակ,
b կարգավորեն պետությունը, առանձին մարդկանց, իրենք իրենց և բոլորին այնքան ժամանակ, որքան թույլ կտա մնացած կյանքը: Ժամանակի մեծ մասը նրանք կանցկացնեն փիլիսոփայելով, իսկ երբ գա իրենց հերթը, կտքնեն պետական կառույցի կազմակերպման վրա, կստանձնեն պետական պաշտոններ՝ ոչ այն պատճառով, որ դա հրաշալի զբաղմունք է, այլ որ անհրաժեշտ է: Այդկերպ նրանք միշտ կդաստիարակեն իրենց նմաններին, որոնց կհանձնեն պետության պաշտպանությունը, իսկ իրենք կհեռանան Երանելիների կղզիներ: Պետությունը նրանց պատվին հուշարձաններ կկառուցի և
c հանրային զոհաբերություններ կսահմանի, եթե Պյութիան հաստատի, որ նրանք աստվածություններ են, իսկ եթե ոչ՝ կմատուցի դրանք որպես երանելի և աստվածային մարդկանց:

– Սոկրատե՛ս, ասես մի արձանագործ, դու հրաշալիորեն կերտեցիր տիրակալների կերպարները:

– Նաև տիրակալ կանանց, Գլավկո՛ն: Քանզի ես չասացի ոչինչ, որ չվերաբերեր նաև կանանց, բայց այնպիսի, որոնք օժտված են բնատուր ձիրքով:

d – Դա ճիշտ է, եթե կանայք տղամարդկանց հետ հավասարապես մասնակցելու են ամեն բանի, ինչպես որ որոշեցինք:

– Եվ ի՞նչ: Դուք համաձա՞յն եք, որ պետության և պետական կառույցի մասին մենք դատարկ ոչ մի բան չասացինք: Այս ամենը դժվար է, բայց հնարավոր, ընդ որում այնպես, ինչպես նշեցինք: Երբ իշխանության գան իսկական փիլիսոփաները,– լինեն բազում, թե մեկը,– նրանք կարհամարհեն

պետության այժմյան պատիվները, կհամարեն դրանք նսեմ և
սին, իսկ կգնահատեն ուղղամտությունն ու դրա հանդեպ
հարգանքը, սակայն ամենից մեծ և անհրաժեշտ կհամարեն e
արդարությունը. ծառայելով սրան ու բազմապատկելով՝
նրանք կկարգավորեն իրենց պետությունը:

– Ինչպե՞ս:

– Բոլոր նրանց, ովքեր պետության մեջ տասը տարեկա-
նից բարձր են, կտանեն գյուղ, իսկ մյուս մանուկներին զերծ
կպահեն ժամանակակից բարքերից, որ հատուկ են ծնողնե- 541
րին, կդաստիարակեն իրենց ոգով և այն օրենքներով, որոնք
քննել ենք նախկինում: Հենց այդպես ամենից արագ և դյուրին
կհաստատվի պետական կառույցը, որի մասին խոսում ենք:
Պետությունը կբարգավաճի, իսկ ժողովուրդը, որը կունենա
այդպիսի պետություն, մեծ օգուտ կքաղի:

– Այո, մեծ օգուտ: Իսկ թե ինչպես կառաջանա, եթե երբևէ b
առաջանա, ինձ թվում է, դու լավ բացատրեցիր, Սոկրատես:

– Հետևաբար, մենք բավականաչափ խոսեցինք այդ պե-
տության և նրան պատշաճող մարդու մասին: Չէ՞ որ պարզ է,
թե ինչպիսին նա պիտի լինի:

– Պարզ է: Եվ քո հարցը ստացավ բավարար պատասխան:

ԳԻՐՔ ՈՒԹԵՐՈՐԴ

543 – Դիցուք: Մենք արդեն համաձայնվեցինք, Գլավկոն, որ
լավ կարգավորված պետության մեջ կանայք ընդհանուր են,
զավակները՝ նույնպես, և ողջ դաստիարակությունն ընդհա-
նուր է: Նմանապես ընդհանուր են նաև ռազմական և խաղաղ
զբաղմունքները, իսկ թագավորում են այստեղ փիլիսոփայու-
թյան և ռազմական գործի մեջ լավագույնները:

– Համաձայնվեցինք:

– Եվ պայմանավորվեցինք, որ երբ նշանակվեն տիրակալ-
b ները, նրանք կբնակեցնեն զինվորներին այն բնակարաններ-
ում, որոնց մասին արդեն ասացինք: Նրանք չեն ունենա սե-
փականություն, ամեն ինչ ընդհանուր կլինի: Բացի բնակա-
րաններից, եթե հիշում ես, պայմանավորվեցինք նաև, թե ինչ-
պիսին պիտի լինի նրանց ունեցվածքը:

– Հիշում եմ, ոչ ոք ոչինչ չպիտի ձեռք բերի, ինչպես դա
արվում է հիմա: Պատերազմի հերոսներն ու պահապանները
վարձ կստանան մյուս քաղաքացիներից մեկ տարվա պարենի
c ձևով, իսկ իրենք պարտավոր կլինեն հոգ տանել ողջ պետու-
թյան մասին:

– Ճիշտ ես ասում: Եթե այս հարցի քննարկումն ավարտե-
ցինք, հիշենք, թե որտեղից շեղվեցինք, որպեսզի նորից շա-
րունակենք սկզբնական ուղին:

– Դա դժվար չէ: Դու խոսեցիր պետության մասին գրեթե
ինչպես հիմա՝ ասելով, որ մեր քննած պետությունը և իր քա-
d ղաքացին իհարկե լավն են, թեպետ կարող էիր խոսել ավելի

լավ պետության և ավելի լավ քաղաքացու մասին: Քո ասելով, եթե այդ պետությունը ճշմարիտ է, բոլոր մյուսներն արատավոր են:

Որքան հիշում եմ, դու նշեցիր արատավոր պետական կառույցների չորս տեսակ և պատվիրեցիր քննել դրանք՝ տեսնելու համար դրանց և քաղաքացիների արատավորությունը: Պայմանավորվելով քննել լավագույն և վատթարագույն քաղաքացուն, մենք կտեսնեինք՝ արդյո՞ք լավագույնը ամենաերջանիկն է, իսկ վատթարագույնը՝ ամենախղճալին, թե՞ վիճակն այլ է: Երբ ես հարցրեցի, թե պետական կառույցի որ չորս տեսակների մասին ես խոսում, մեզ ընդհատեցին Պոլեմարքոսն ու Ադիմանտոսը, և դու պատասխանում էիր նրանց, մինչև որ ծագեց այս հարցը: 544 b

– Շատ ճիշտ ես հիշում:

– Այդ դեպքում ըմբիշի պես ընդունիր նույն դիրքը[1] և իմ նույն հարցին փորձիր պատասխանել այնպես, ինչպես պատրաստվում էիր:

– Եթե կարողանամ:

– Իսկապես շատ եմ ուզում լսել, թե պետական կառույցի ինչ չորս տեսակների մասին ես խոսել:

– Հիմա կլսես, դա դժվար չէ: Ես նկատի ունեմ այն տեսակները, որոնք շատ հայտնի են: Շատերը գովում են Կրետեի և Լակեդեմոնի պետական կառույցները: Շատ են գովում նաև օլիգարխիա կոչվածը, որը երկրորդ տեղում է և ունի բազում չարիքներ: Նրանից գոյանում է բոլորովին այլ մի տեսակ՝ դեմոկրատիան: Բոլորիս հայտնի բռնապետությունը տարբեր է նշված երեքից և պետության չորրորդ և ծայրահեղ հիվանդությունն է: Գուցե ունես պետական կառույցի ուրի՞շ գաղափար, որը կկազմեր առանձին տեսակ: Չէ՞ որ ժառանգական իշխանությունը, ձեռքբերովի թագավորական իշխանությունը և դրանց նման ուրիշ պետական կառույցները նշվածների միջանկյալ տեսակներ են և բարբարոսների մեջ տարածված են ոչ պակաս, քան հույների: c d

– Այդ մասին տարօրինակ շատ բաներ են պատմում:

– Դու գիտես, որ մարդիկ ևս անհրաժեշտաբար հինգ տեսակ են, այնքան, որքան պետական կառույցի տեսակները: Թե՞ կարծում ես, որ պետական կառույցները ծնվում են ժայ-
e ռից կամ ծառից[2], և ոչ պետության մեջ եղած բարքերից, որոնցից բխում է մնացյալ ամեն ինչ:

– Ուրիշ ոչ մի բանից, միայն բարքերից:

– Հետևաբար, եթե պետության տեսակները հինգն են, առանձին մարդիկ ևս պիտի ունենան հոգու հինգ տեսակ:

– Եվ ի՞նչ:

– Մենք արդեն քննեցինք նրան, ով համապատասխանում է ազնվականների իշխանությանը, և իրավացիորեն համարեցինք նրան բարի և արդար:

545 – Քննեցինք:

– Արդ, պետք է նկարագրել նաև վատթարագույններին՝ մրցասերներին և փառասերներին, որոնց պատրաստում է լակոնական պետական կառույցը, այնուհետև օլիգարխիայի, դեմոկրատիայի և բռնապետության մարդկանց, որպեսզի տեսնելով ամենաանարդարին՝ հակադրենք նրան ամենաարդարին, որով կավարտենք դիտարկումը, թե ինչպես է զուտ ար-
b դարությունը վերաբերվում զուտ անարդարությանը դրանց տեր երջանիկ կամ դժբախտ մարդու տեսանկյունից, որպեսզի հավատանք կա՛մ Թրասիմաքոսին և հետամուտ լինենք անարդարությանը, կա՛մ էլ այժմ արդեն պարզ դարձած և արդարությունը պաշտպանող փաստարկին:

– Անշուշտ, հարկ է այդպես անել:

– Մեկնարկելով պետական, և ոչ մասնավոր մարդկանց բարքերից, քանի որ առաջիններն ավելի հստակ են, հիմա նախ քննենք փառասիրության վրա հիմնված պետական կառույցը (չեմ կարողանում դրա համար ուրիշ անուն գտնել բացի «տիմոկրատիայից»[3] կամ «տիմարխիայից») և դիտարկենք
c համապատասխան մարդուն, այնուհետև օլիգարխիան և օլիգարխիական մարդուն, իսկ հետո դեմոկրատիան և դեմոկրա-

տական մարդուն: Չորրորդը կլինի բռնապետական պետությունը, և մենք կայցելենք այն տեսնելու համար, թե ինչպիսին է բռնապետական հոգին: Կփորձենք նշված հարցերում լինել բավականաչափ տեղյակ դատավորներ:

– Այդպիսի քննությունն ու վճիռը հիմնավոր կլիներ:

– Այդ դեպքում փորձենք ասել, թե ինչ եղանակով է տիմոկրատիան ծագում արիստոկրատիայից: Գուցե դա շատ պարզ է, և պետական ամեն կառույց փոխվում է իշխող դասի ներքին d
պառակտման արդյունքում: Մինչդեռ եթե իշխող խավը համերաշխ է, ապա անգամ շատ փոքր լինելու դեպքում այն չի փոխվում:

– Այո, այդպես է:

– Բայց ի՞նչը կարող է հեղափոխել մեր պետությունը, Գլավկո՛ն: Ո՞րն է վերակացուների ու տիրակալների գժտության պատճառը: Թե՞ կուզես, որ մենք, ինչպես Հոմերոսը, աղերսենք մուսաներին, որպեսզի նրանք պատմեն մեզ, թե
ինչպես առաջ եկավ պառակտումը[4], և պատկերացնենք, որ e
նրանք խոսում են վերամբարձ ու ողբերգական ոճով, ասես լրջորեն, թեպետ իրականում միայն կատակում ու ծաղրում են մեզ, ինչպես մանուկների:

– Ինչպե՞ս:

– Ահա այսպես: «Դժվար է փոխել նման ձևով կառուցված 546
պետությունը: Բայց քանի որ գոյացող ամեն բան ենթակա է կործանման, պետական այդ կարգը չի կարող գոյություն ունենալ հավերժ և կփլուզվի: Իսկ փլուզումն այսպիսին է: Բերք են տալիս ոչ միայն հողից աճող բույսերը, այլև երկրիս երեսին բնակվող կենդանի էակները՝ նրանց հոգիներն ու մարմինները, և դա տեղի է ունենում, երբ շրջապտույտը կազմում է լիարժեք փուլ: Սակավակյացների մոտ սա կարճ է, իսկ
երկարակյացների մոտ՝ երկար: Թեպետ իմաստուն են նրանք, b
որոնց դուք դաստիարակեցիք որպես պետության առաջնորդների, բայց և զգայության վրա հիմնված դատողությամբ նրանք մյուսներից ավելի ճիշտ չեն որոշի ձեր ցեղի համար

պտղաբերության կամ անպտղության ամենապատեհ ժամանակը: Նրանք չեն կարող իմանալ դա և կծննդաբերեն այն ժամանակ, երբ դա պետք չէ անել: Աստվածային սերնդի համար գոյություն ունի շրջապտույտ, որն արտահայտված է կատարյալ թվով, իսկ մարդկայինի համար կա թիվ[5], որի մեջ քառակուսի և խորանարդ աստիճանները, որոնք ունեն երեք միջակայքեր և չորս սահմաններ՝ նմանություն, ոչ նմանու-
c թյուն, աճ և նվազում, ամեն բան դարձնում են չափելի և արտահայտելի: Այդ թվերից չորս երրորդը, կապված լինելով հինգի հետ, երեք ավելացումների արդյունքում կկազմի երկու ներդաշնակ համադրություն՝ մեկը հավասարակողմ և առնված հարյուր անգամ, իսկ մյուսը նույնքան երկար: Հետևաբար հինգի արտահայտելի տրամագծերի թիվն առնվում է հարյուր անգամ և ամեն անգամ հանվում է մեկ: Ոչ արտահայտելիներից հանվում է երկուս, և դրանք հարյուր անգամ առնվում են երեքի խորանարդով: Ընդհանուր առմամբ այս թիվը երկրաչափական է և վճռորոշ է ծննդաբերությունների առավել հաջող կամ վատթար ելքերի համար: Եթե մեր պահապանները հասու չեն դրան և ճիշտ ժամանակին չմիացնեն հարսնացուներին և փեսացուներին, լավ բնությամբ օժտված
d և բախտավոր զավակներ չեն ծնվի: Նախկին պահապաններն իրենց հետնորդներ կընտրեն լավագույն զավակներից, որոնք, միևնույն է, չեն լինի արժանի և ստանձնելով իրենց հայրերի իշխանությունը՝ կարհամարհեն մեզ, չնայած որ պահապաններ են, և չեն գնահատի մուսայական արվեստներն ու մարմնամարզությունը: Որպես հետևանք՝ պատանիներն ավելի անկիրթ կլինեն մեզանում և նրանցից դուրս կգան տիրակալներ, որոնք չեն կարողանա լիարժեք պահել և կրել հե-
e սիոդյան սերունդները, քանի որ դրանք նույնպես բաժանվում են ոսկե, արծաթե, պղնձե և երկաթե տեսակների[6]: Երբ երկաթը խառնվում է արծաթին, իսկ պղինձը՝ ոսկուն, առաջ են գա-
547 լիս տարաձայնություններ և ոչ անհեթեթ շեղումներ[7], իսկ դա, որտեղ էլ պատահի, առաջ է բերում պատերազմ և թշնամու-

թյուն: Որտեղ էլ ծագի պառակտումը, այն միշտ այդպիսին է:»

– Ուրեմն, մուսաները ճիշտ են պատասխանում:

– Իհարկե: Չէ՞ որ նրանք մուսաներ են:

– Իսկ ի՞նչ են ասում դրանից հետո:

– Քանի որ պառակտում եղավ, երկու սեռերից յուրա- b
քանչյուրը ձգում էր դեպի իրեն: Երկաթը և պղինձը ստիպում էին հարստանալ, այսինքն ձեռք բերել հող, տուն, ոսկի և արծաթ, իսկ ոսկե և արծաթե սեռերը, որոնք աղքատ չեն, այլ բնությամբ հարուստ են, մղում էին հոգին դեպի առաքինություն և հին կարգ: Միմյանց նկատմամբ բռնություն կիրառելով
և մրցակցելով՝ նրանք եկան միջին ինչ-որ բանի. համաձայն- c
վեցին հաստատել հողի և տան մասնավոր սեփականություն, նրանց, որոնց պաշտպանում էին որպես իրենց ազատ բարեկամների և սնողների, ստրկացրին՝ դարձնելով գյուղական աշխատողներ և տնային ծառաներ, իսկ իրենք իրենց վերապահեցին ռազմական և պաշտպանական գործառույթները:

– Ինձ թվում է՝ հեղաշրջումն այդպես սկիզբ առավ:

– Ուրեմն, այդպիսի պետական կառույցը միջին ինչ-որ բան է արիստոկրատիայի և օլիգարխիայի միջև:

– Իհարկե:

– Անցումն այդպիսին կլինի: Իսկ ինչպիսի՞ն կլինի հեղաշրջված պետությունը: Մի՞թե պարզ չէ, որ մասամբ այն կնմանակի նախորդող պետական կառույցին, մասամբ էլ՝ օլիգար- d
խիային, քանի որ ինքը մեջտեղում է: Թեպետ այն կունենա նաև իր առանձնահատկությունը:

– Այդպես է:

– Արդ, տիրակալների փառավորման և բոլոր նման հարցերում՝ որ երկրի պաշտպանները հեռու պիտի մնան հողագործությունից, արհեստներից և այլ շահեկան զբաղմունքներից, սնվելու են համատեղ, մարզվելու են և մասնակցելու են ռազմական մրցույթների,– պետական կարգը նմանակելու է նախորդողին:

– Այո:

– Այնտեղ կզգուշանան իշխանության գլուխ կանգնեցնել
e իմաստուններին, քանզի այլևս չեն լինի պարզամիտ ու շի-
տակ, այլ՝ միայն խառը բարքերի տեր մարդիկ, կհակվեն դե-
պի այնպիսիները, որոնք սրտոտ են և առավել հասարակ՝ ի
բնե ավելի հարմար պատերազմի համար, քան խաղաղու-
548 թյան: Այնտեղ պատիվ կվայելեն ռազմական հնարներն ու
ճարպկությունը, և նման պետությունը մշտապես կպատերազ-
մի: Այսպիսին կլինեն պետական այդ կարգի բազմաթիվ
առանձնահատկությունները:

– Այո:

– Այդպիսի մարդիկ կլինեն ընչաքաղց, ինչը սովորական է
օլիգարխիայի ժամանակ: Մթագնման մեջ նրանք, վայրենիներ-
ի պես, երկրպագում են ոսկին և արծաթը, ունեն պահեստ-
ներ և գանձարաններ այդ ամենը թաքցնելու համար: Նրանք
b ցանկապատում են իրենց կացարանները և, ասես սեփական
որջում, անխնա մսխում դրամը կանանց և բազում ուրիշ
բաների վրա:

– Շատ ճիշտ է:

– Մյուս կողմից, նրանք խնայում են դրամը, քանի որ մե-
ծարում են այն, թաքցնում են իրենց ունեցվածքը և սիրում
են ապրել ուրիշների հաշվին: Վայելքներին տրվում են
գաղտնի, փախչելով օրենքից, ինչպես զավակները խիստ հո-
րից. չէ՞ որ նրանց դաստիարակել է ոչ թե համոզումը, այլ
բռնությունը, քանի որ նրանք քամահրել են ճշմարիտ մուսա-
յին, որը հովանավորում է խոսքն ու փիլիսոփայությունը, իսկ
c մարմնամարզությունն ավելի բարձր են դասել մուսայական
արվեստից:

– Դու խոսում ես խառը տեսակի պետության մասին, որ-
տեղ չարիքն ու բարիքը լրիվ միախառնվել են:

– Այո, խառնվել են, և կարելի է հստակ տեսնել միայն
մրցակցություն ու փառատենչություն, քանի որ այստեղ իշ-
խում է սրտոտությունը:

– Եվ շատ լավ կարելի է տեսնել:

– Նման պետական կառույցն առաջանում է այդ եղանակով և այդպիսին է, իսկ ես ներկայացրի այն ոչ շատ հանգամանորեն, որովհետև ասվածն էլ բավական է՝ պատկերացնելու, d
թե ինչպիսին է այնտեղ ամենաարդար և ամենաանարդար մարդը, իսկ պետական բոլոր կառույցների և բոլոր բարքերի քննությունը, ընդ որում առանց որևէ բան բաց թողնելու, չափազանց երկար գործ է:

– Իսկապես:

– Ինչպիսի՞ն է ուրեմն այդպիսի պետական կառույցին համապատասխանող այրը: Ինչպե՞ս է նա կազմավորվում և ինչպիսի՞ն է դառնում հետագայում:

– Կարծում եմ,– ասաց Ադիմանտոսը,– որ հաղթամոլությամբ մոտ կլինի Գլավկոնին:

– Գուցե, բայց ինձ թվում է՝ իր բնությամբ նա տարբեր է e
Գլավկոնից[8]:

– Ինչո՞վ:

– Նա ավելի կամակոր է, պակաս կրթված ու, թեև սիրում
է մուսայական արվեստները և լավ ունկնդիր է, ամենևին 549
ճարտարախոս չէ: Ստրուկների հանդեպ նման մարդը դաժան է, թեպետ չի արհամարհում նրանց, քանի որ բավականաչափ դաստիարակված է: Ազատների հետ սիրալիր է, տիրակալներին՝ հնազանդ, իշխանասեր է և փառասեր, գտնում է, որ խոսելու կամ մեկ այլ շնորհը չէ, որ պետք է տա իշխանություն, այլ ռազմական արվեստը և դրա հետ կապված ամեն ինչ, ուստի և սիրում է մարմնամարզությունն ու որսը:

– Այո, նման պետական կառույցը ծնում է այդպիսի բնավորություն:

– Երիտասարդ ժամանակ այդպիսի մարդը քամահրում է
դրամը, բայց տարիքի հետ ավելի ու ավելի է արժևորում այն, b
նրա բնությունը դառնում է ավելի ընչասեր: Արդյունքում, քանի որ ազնիվ պահապանը նրան լքում է, նրա առաքինությունը տեղի է տալիս:

– Ի՞նչ պահապան,– հարցրեց Ադիմանտոսը:

– Խոսելու ձիրքը, որը հղկված է մուսայական արվեստով: Միայն դա ողջ կյանքում փրկարար կլինի խոսքով օժտված մարդու առաքինության համար:

– Շատ լավ ես ասում:

– Եվ այդպիսի պատանին նման է տիմոկրատական պետությանը:

– Իհարկե:

– Նա կազմավորվում է այսպես: Կարող է լինել առաքինի
c մարդու հասուն զավակ, որը բնակվում է վատ կարգավորված պետության մեջ, ուստի խուսափում է պատիվներից, իշխանությունից, դատական գործերից և նման բաներից՝ ձգտելով ապրել համեստ, որպեսզի չունենա հոգսեր:

– Բայց ինչպե՞ս է ձևավորվում որդու բնավորությունը:

– Նախ, նա լսում է մոր տրտունջը, որ ամուսինն իշխա-
d նավոր չէ և ինքը կանանց մեջ համեստ դիրք է գրավում: Կինը տեսնում է, որ ամուսինն առանձնապես հոգ չի տանում դրամի մասին, չի պայքարում և չի պատասխանում մասնավոր դատերի ժամանակ կամ հանրային հավաքներում, այլ անհոգ կրում է ամեն բան: Նկատում է, որ ամուսինը միշտ սևեռված է ինքն իր վրա, իսկ իրեն առանձնապես չի հարգում, թեև չի էլ վիրավորում: Այս ամենի համար տրտնջալով՝ կինն ասում է որդուն, որ իր հայրը տղամարդ չէ, որ շատ թույլ է և
e այլն, այսինքն այն ամենը, ինչ կանայք սովորաբար երգում են նման դեպքերում:

– Կանանցից շատերն են այդպիսին:

– Քեզ հայտնի է, որ այդպիսի մարդկանց ծառաներն անգամ ծածուկ նման բաներ են ասում զավակներին, իբր կարեկցանքից ելնելով, երբ տեսնում են, որ հայրը դատական գործ չի հարուցում որևէ պարտապանի կամ իրեն մեկ ուրիշ անարդարություն գործած մեկի դեմ: Որդուն ասում են. «Երբ
550 մեծանաս, վրեժ լուծիր բոլորից և ավելի մեծ մարդ կդառնաս, քան հայրդ է»: Զավակը նույնն է տեսնում և լսում նաև տանից

դուրս: Նրանք, ովքեր անում են իրենց գործը, պետության մեջ
պարզամիտների համարում ունեն և բանի տեղ չեն անցնում,
իսկ նրանք, որ զբաղված են ոչ իրենց գործով, պատիվներ են
վայելում ու փառաբանվում: Լսելով և տեսնելով այդ ամենը,
պատանին միևնույն ժամանակ լսում է նաև հորը, ի մոտո
տեսնում նրա զբաղմունքը հակառակ ուրիշների ցանկության,
և ահա թե ինչ է ստանում երկու կողմերից: Հոր օգնությամբ
նրա մեջ զարգանում և աճում է հոգու բանական մասը, իսկ b
մյուսների օգնությամբ՝ տենչացող և սրտոտ մասերը: Ի բնե
չլինելով հոռի մարդ և սոսկ գտնվելով հոռիների մեջ՝ նա
բռնում է միջին ճանապարհը, թույլ է տալիս, որ իր մեջ իշխի
միջին մի գիծ՝ մրցակցությունն ու սրտոտությունը, դառնում է
ամբարտավան և փառասեր մարդ:

– Ինձ թվում է, դու լիովին բացատրեցիր, թե ինչպես է
ձևավորվում բնավորությունը:

– Արդ, երկրորդ պետական կառույցի և համապատասխան c
մարդու հերթն է:

– Այո:

– Գուցե կրկնե՞նք Էսքիլոսին՝ ասելով. «Ուրիշն է նշանակ-
ված ուրիշ քաղաքին»[9], թե՞ համաձայն մեր ենթադրության՝
նախ քննենք պետությունը:

– Իհարկե վերջինը:

– Կարծում եմ, որ հաջորդ պետական կառույցը կլինի օլի-
գարխիան:

– Խոսի՛ր դրա հաստատման մասին:

– Այս պետական կառույցի հիմքը իշխանության հարստու-
թյունն է: Այստեղ իշխում են հարուստները, իսկ աղքատները d
անմասն են իշխանությանը:

– Հասկանում եմ:

– Հարկ է նախ խոսել այն մասին, թե ինչպես է տիմոկրա-
տիան փոխվում օլիգարխիայի:

– Այո:

– Բայց կույրին էլ պարզ է, թե ինչպես է փոխվում:

– Ինչպե՞ս:

– Մասնավոր մարդկանց կուտակած ոսկին կործանում է այդ տիմոկրատիան: Մարդիկ սկսում են փնտրել այդ ոսկու կիրառության եղանակներ և այդ նպատակով վերածնելով
e օրենքները՝ հեռանում են դրանցից: Այդպես են անում և՛ այրերը, և՛ նրանց կանայք:

– Բնականաբար:

– Որքան ավելի շատ են գնահատում շահը և ընկնում դրա ետևից, այնքան ավելի քիչ են գնահատում առաքինությունը: Մի՞թե այդպիսին չէ հարստության և առաքինության հարաբերակցությունը, որ եթե դնես կշեռքի զույգ նժարներին՝ նրանցից մեկը մշտապես կգերակշռի մյուսին:

– Իհարկե:

551 – Եթե պետության մեջ գնահատում են հարստությունն ու հարուստներին, չեն գնահատում առաքինությունն ու առաքինիներին:

– Ակնհայտ է:

– Չէ՞ որ մարդիկ տրվում են նրան, ինչը գնահատում են, և քամահրում են այն, ինչը չեն գնահատում:

– Այդպես է:

– Ի վերջո, նախանձախնդրության և փառասիրության փոխարեն առաջ է գալիս շահամոլությունը, և պատիվներ են վայելում հարուստները, արժանանում են հիացմունքի, նրանց վստահում են պետական պաշտոններ, իսկ աղքատն արհամարհված է:

– Իհարկե:

– Դրամի առատությունը դառնում է օլիգարխիական պե-
b տության օրենքը: Որքան ավելի օլիգարխիական է պետությունը, այնքան ավելի մեծ է դրամի պաշտամունքը, որքան քիչ օլիգարխիական է, այնքան այդ պաշտամունքը նվազ է: Նախապես հայտարարվում է, որ իշխանության չեն գա նրանք, ովքեր չունեն անհրաժեշտ չափով հարստություն: Այդ պետական կառույցը պահպանվում է զինված ուժերի օգնությամբ և

կամ էլ ի սկզբանե հիմնված է քաղաքացիներին ահաբեկելու վրա: Այդպես չէ՞:

– Այո:

– Կարճ ասած՝ այդպես է հաստատվում:

– Այո: Իսկ ինչպիսի՞ն է դրա բնույթը և ո՞րն է այն արատավորությունը, որն, ինչպես նշեցինք, հատուկ է դրան: c

– Գլխավոր արատը նրա գլխավոր հատկանիշն է: Դիցուք, նավավարներին ընտրում են՝ ելնելով նշված բարեկեցությունից, իսկ աղքատին, անգամ եթե նա ավելի լավ է գլուխ հանում նավավարությունից, այդ բանն անել թույլ չեն տալիս:

– Շատ վատը կլիներ այդպիսի նավավարությունը:

– Բայց մի՞թե այդպես չէ նաև ուրիշ գործերում, որտեղ ղեկավարության հարց կա:

– Կարծում եմ, այո:

– Բացառությա՞մբ պետության, թե՞ նաև պետության դեպքում:

– Պետության դեպքում առավել ևս, քանի որ իշխանության հարցն այստեղ ավելի բարդ է և կարևոր:

– Սա նշված օլիգարխիայի առաջին էական թերությունն է: d

– Երևում է, այո:

– Բայց մի՞թե պակաս էական է հաջորդը:

– Ո՞րը:

– Այն, որ այդպիսի պետությունը անհրաժեշտաբար կլինի ոչ թե մեկը, այլ երկուսը: Մեկը՝ աղքատներինը, իսկ մյուսը՝ հարուստներինը, չնայած որ դրանք կգտնվեն մեկի մեջ և դավեր կնյութեն միմյանց դեմ:

– Ձևը վկա, դա պակաս էական արատ չէ:

– Բայց վատ է նաև այն, որ դրանք թերևս անկարող են պատերազմ մղել, քանի որ հանձնելով զենքը ամբոխին, օլիգարխները նրանից ավելի շատ կվախենան, քան թշնամուց, և կամ էլ իրենց կդրսևորեն ինչպես իսկական օլիգարխներ e նույնիսկ պատերազմի ընթացքում և չեն զինի ամբոխին, չէ՞ որ չեն ցանկանում միջոցներ վատնել: Ագահ են:

– Դա լավ չէ:

– Եվ ի՞նչ: Մենք նախկինում էլ քննադատել ենք այն, որ
552 այդպիսի պետության մեջ հողագործությամբ, հարստություն դիզելով և զինվորական արվեստով զբաղվելու են միևնույն մարդիկ: Թե՞ կարծում ես՝ դա ճիշտ է:

– Ոչ մի դեպքում:

– Տե՛ս, մի՞թե այդպիսի պետությունը չէ, որ ծնում է չարիքներից մեծագույնը:

– Ո՞րը:

– Երբ վաճառելով սեփականությունն ուրիշին՝ շարունակում են ապրել այդ պետության մեջ, չհարելով դրա խավերից և ոչ մեկին՝ ո՛չ գործարարներին, ո՛չ վարպետներին, ո՛չ հեծյալներին, ո՛չ հոպլիտներին, և դառնում են մեկը, որին կոչում են չքավոր ու անվճարունակ:

– Այդպիսի պետական կառույցը ասես ստեղծված է դրա համար:

b – Օլիգարխիական կարգերի օրոք դա պատահում է շատ հաճախ: Այլապես ոմանք չէին լինի այստեղ չափից դուրս հարուստ, ոմանք էլ՝ ծայրահեղ աղքատ:

– Ճիշտ է:

– Նկատի առ նաև հետևյալը: Երբ հարուստը վատնում է իր հարստությունը, օգտակա՞ր է արդյոք դա պետությանը մեր նշած իմաստով: Թե՞ միայն թվում է, որ նա իշխանության գլուխ կանգնածներից է, իսկ իրականում պետության մեջ ո՛չ տիրակալ է, ո՛չ էլ հպատակ, այլ՝ սոսկ վատնիչ:

c – Այո, միայն թվում է. իրականում նա ոչ այլ ոք է, եթե ոչ վատնիչ:

– Եթե կուզես, մենք կասենք նրա մասին, որ ինչպես խորիսխի մեջ հայտնված բոռը հիվանդություն է պարսի համար, այնպես էլ նման մարդն իր տան մեջ հիվանդություն է պետության համար:

– Իհարկե, Սոկրատես:

– Ադիմանտո՛ս, բոլոր թռչող բոռերին աստված ստեղծել է

առանց խայթի, մինչդեռ քայլող բոռերի մի մասին զրկել է
խայթից, մյուսին էլ օժտել է ահավոր խայթով: Նրանք, ովքեր
չունեն խայթ, աղքատ են մինչև խոր ծերություն, իսկ խայթ d
ունեցողներից դուրս են գալիս նրանք, որոնց կոչում են հան-
ցագործներ:

– Շատ ճիշտ է:

– Ուրեմն հասկանալի է, որ պետության մեջ այնտեղ, ուր
տեսնում ես աղքատներին, թաքնված են նաև գողերը, գրպա-
նահատները, սրբապիղծները և բազում այլ չարագործներ:

– Հասկանալի է:

– Եվ ի՞նչ: Մի՞թե օլիգարխիական պետություններում չես
տեսնում բազում աղքատների:

– Այնտեղ աղքատ են գրեթե բոլորը, բացի տիրակալներից:

– Ուրեմն կարող ենք մտածել, որ այնտեղ շատ են նաև e
խայթ ունեցող հանցագործները, որոնց իշխանավորները մի-
այն ուժով են զսպում:

– Կարող ենք:

– Չե՞նք ասի, որ մարդիկ այդպիսին են դառնում դաստի-
արակության ու կրթության բացակայության և վատ պետա-
կան կառույցի պատճառով:

– Կասենք:

– Այդպիսին է օլիգարխիական պետությունը, և սրանք են
դրա չարիքները: Թերևս դրանք ավելի շատ են:

– Թերևս:

– Ուրեմն օլիգարխիա կոչվող պետական կառույցի քննու- 553
թյունը սրանով ավարտված համարենք: Իշխանությունն այս-
տեղ որոշվում է հարստության չափով: Հիմա դիտարկենք հա-
մապատասխան մարդուն, ինչպես է նա կայանում և ինչպի-
սին է:

– Դիտարկենք:

– Անցումը տիմոկրատիայից օլիգարխիայի հիմնականում
այսպիսին է:

– Ինչպիսի՞ն:

– Ծնվելով՝ զավակը նախ նմանվում է հորը և գնում է նրա հետքերով, իսկ այնուհետև հանկարծ տեսնում է, որ հայրը իր ողջ ունեցվածքով կործանվել է՝ դեմ առնելով պետությանը,
b ասես ստորջրյա խութի: Հայրը կարող էր լինել զորավար կամ մեկ ուրիշ պաշտոնյա և ահա դավադիրների մեղադրանքով հանկարծ հայտնվում է բանտում՝ դատապարտվելով կա՛մ մահվան, կա՛մ աքսորի, կա՛մ անպատվության, կա՛մ էլ ունեցվածքի առգրավման:

– Անշուշտ:

– Տեսնելով դա, բարեկա՛մս, կրելով զրկանքներ և կորցնելով ունեցվածքը, կարծում եմ, վախենալով սեփական կյան-
e քի համար՝ նա հոգու խորքում գահընկեց է անում փառասիրությունը և սրտոտությունը: Աղքատության մեջ դառնալով ավելի հնազանդ՝ նա սկսում է դրամ կուտակել ու խնայել և քիչ-քիչ հավաքում է վաստակած դրամը: Կարծում ես, այդպիսի մարդը գահ չի՞ բարձրացնի իր ագահությունն ու ընչաքաղցությունը, չի՞ դարձնի դրանք մեծ արքա՝ խույրով, մանյակներով և գոտուց կախված թրով:

– Իհարկե:

d – Իսկ արքայից աջ ու ահյակ որպես ծառաներ կնստեցնի բանականությունն ու սրտոտությունը: Նա թույլ չի տա ուրիշ մտքեր բացի նրանցից, որոնք առնչվում են իր համեստ սեփականության ավելացմանը: Նրա հիացմունքին և գնահատանքին արժանի կլինեն միայն հարստությունն ու հարուստները, իսկ փառասիրությունը միտված կլինի միայն դրամի կուտակմանը և դրան նպաստող ամեն ինչի:

– Ոչ մի ուրիշ փոփոխություն երիտասարդի մոտ այդքան արագ և ազդեցիկ չի լինում, որքան փառասիրության վերածումը ընչաքաղցության:

e – Մի՞թե դա չէ օլիգարխիական մարդու օրինակը:

– Դա փոփոխություն է, որ տեղի է ունենում օլիգարխիային նախորդած պետական կառույցին համապատասխանող մարդու հետ:

– Պարզենք, համապատասխանու՞մ է արդյոք նա այդ օլիգարխիային:

– Պարզենք:

– Նախ համապատասխանությունն այն է, որ վերջինս ամենից շատ սիրում է դրամը:

– Ինչպե՞ս չէ:

– Նա խնայող է ու գործունյա և բավարարում է միայն ան- 554
հրաժեշտ իր կարիքները, թույլ չի տալիս ուրիշ ծախսեր և ճնշում է մյուս տենչանքները իբրև ավելորդ:

– Իհարկե:

– Նա փնթի տեսք ունի, ամեն ինչից փորձում է օգուտ քաղել և հարստություն կուտակել: Ամբոխը պատվում է այդպիսի մարդկանց: Մի՞թե այդ մարդը չի համապատասխանում որոշակի պետական կառույցի:

– Ինձ թվում է, համապատասխանում է: Դրամը շատ են գնահատում և՛ այդպիսի պետությունը, և՛ այդպիսի մարդը:

– Եվ ես կարծում եմ, որ եթե նա այդպիսին է, ուրեմն հոգ b
չի տարել սեփական դաստիարակության մասին:

– Կարծում եմ, ոչ: Հակառակ դեպքում կույրին չէր նշանակի երգչախմբի ղեկավար և չէր պատվի[10]:

– Լավ: Քննի՛ր նաև հետևյալը: Չե՞նք ասում արդյոք, որ դաստիարակության բացակայության պատճառով նրա մոտ առաջ են գալիս բոռի տենչանքներ՝ մասամբ չքավորների, մա- c
սամբ հանցագործների, թեպետ նա սանձում է դրանք՝ զգուշանալով այլ վտանգներից:

– Իհարկե:

– Իսկ գիտե՞ս, թե ինչին պիտի ուշադրություն դարձնես տեսնելու համար այդպիսի մարդկանց հանցավորությունը:

– Ինչի՞ն:

– Նրան, թե ինչպես են հոգ տանում որբերի մասին և ինչ են անում, երբ հնարավորություն են ստանում գործելու արդարության դեմ:

– Ճշմարիտ է:

– Մի՞թե պարզ չէ, որ ուրիշ գործերում բարի համբավ վա-
յելող այդպիսի մարդը, քանի որ նրան համարում են արդար,
d իր մեջ եղած լավի շնորհիվ սանձում է իր մյուս հոռի տեն-
չանքները, թեպետ համոզված չէ, որ այդպես ավելի լավ է. նա
անում է դա ոչ թե խոհեմությունից, այլ անհրաժեշտությունից
ու վախից, քանզի դողում է իր ունեցվածքի վրա:

– Իհարկե:

– Զնսը վկա, բարեկա՛մս, այդ մարդկանցից շատերի մոտ
կհայտնաբերես բոռի տենչանքներ, բավական է ընձեռվի
ուրիշի հաշվին օգտվելու հնարավորություն:

– Այո, այդ տենչանքները նրանց մոտ շատ ուժեղ են:

– Մի՞թե այդպիսի մարդը ներսից պառակտված չէ, մի՞թե
չի դադարում լինել մեկը և չի դառնում երկուսը: Որոշ տեն-
e չանքներ հաղթում են մյուսներին, ընդ որում հաճախ՝ լավերը
հոռիներին:

– Այդպես է:

– Կարծում եմ, այդ մարդը շատերից գերադասելի է, թե-
պետ իհարկե նա շատ հեռու է հոգու ներդաշնակության և ան-
խռովության ճշմարիտ առաքինությունից:

– Ինձ էլ է այդպես թվում:

555 – Եվ նրա խնայողությունը կխանգարի նրան ծախսել սե-
փական դրամը, երբ պետության մեջ կմրցակցեն հանուն
հաղթանակի կամ մեկ ուրիշ ազնիվ փառքի: Նա չի ցանկանա
ծախսել իր դրամը հանուն այդպիսի մրցակցության՝ վախե-
նալով դառնալ մսխող և ցոփությունը դաշնակից դարձնել
սնապարծությանը: Պատերազմների ժամանակ, լինելով օլի-
գարխիական կարգի ներկայացուցիչ, նա ներդնում է քիչը,
ահա ինչու հիմնականում պարտվում է, փոխարենը մնում է
հարուստ:

– Այն էլ ինչքան հարուստ:

– Մի՞թե դեռ չհամոզվեցինք, որ խնայող և գործարար մար-
դը համապատասխանում է օլիգարխիական պետությանը:

b – Համոզվեցինք:

– Ինձ թվում է, դրանից հետո հարկ է քննել դեմոկրատիան՝ թե ինչպես է այն առաջանում և ինչպիսին է, որպեսզի ճանաչելով համապատասխան մարդուն, կարողանանք դատողություն անել նրա մասին:

– Այդպես մենք իհարկե կկարողանայինք առաջ շարժվել:

– Եղանակը, որով օլիգարխիան փոխվում է դեմոկրատիայի, պայմանավորված է ենթադրյալ բարիքի տենչանքով, և այդ բարիքը հնարավորինս հարուստ լինելն է:

– Ինչպե՞ս:

– Կարծում եմ, օլիգարխիայի ժամանակ իշխանության c
եկած տիրակալները, լինելով շատ հարուստ, չեն ցանկանա
օրենքով սահմանափակել երիտասարդների սանձարձակությունը և չեն արգելի նրանց մսխել ու վերացնել իրենց ունեցվածքը, իսկ իրենք կգնեն այն և վարկեր տրամադրելով՝ կդառնան ավելի հարուստ և ազդեցիկ:

– Դա է նրանց համար ամենից կարևորը:

– Մի՞թե պարզ չէ, որ այդ պետության քաղաքացիները չեն
կարող միաժամանակ պատվել հարստությունն ու լինել խո- d
հեմ և որ դրանցից մեկը անհրաժեշտաբար կանտեսվի:

– Միանգամայն պարզ է:

– Օլիգարխիական պետություններում սանձարձակությանը ուշադրություն չեն դարձնում, և անգամ ազնվազարմ մարդիկ երբեմն աղքատանում են:

– Իհարկե:

– Այդ պետության մեջ մարդիկ, ըստ իս, նստած են անգործ, սակայն ունեն խայթ ու զենք: Նրանցից ոմանք պարտքերի մեջ են, մյուսները չունեն քաղաքացիական իրավունքներ, ոմանք էլ՝ երկուսը միասին: Ատելով նրանց, ովքեր ձեռք են բերել իրենց ունեցվածքը, ու նաև ուրիշներին, նրանք դավեր են նյութում ու հեղաշրջում պատրաստում:

– Այդպես է: e

– Մինչդեռ գործարարները, կլանված իրենց գործով, կարծես չեն նկատում այդպիսի մարդկանց. նրանք հետևում են

այլոց և վարկեր են տալիս դյուրահավատներին: Գանձելով մայր գումարը շատ անգամ գերազանցող տոկոս՝ նրանք լցնում են պետությունը բազմաթիվ բոռերով ու աղքատներով:

556 – Այո, բազմաթիվ:

– Իսկ երբ պետության մեջ բռնկվի այդպիսի մի չարիք, նրանք չեն ցանկանա վերացնել այն՝ արգելելով վարվել սեփականության հետ ով ինչպես կուզի, և չեն դիմի հնարքի, որը փրկում է այդ չարիքից շնորհիվ ուրիշ օրենքի:

– Ո՞ր օրենքի:

– Դա երկրորդ օրենքն է և ստիպում է քաղաքացիներին ձգտել առաքինության: Չէ՞ որ եթե պատվիրեն, որ կամավոր
b գործարքների մեծ մասը կնքվի սեփական պատասխանատվությամբ, հարստանալու տենչն այդքան ամոթալի չի լինի և պետության մեջ ավելի քիչ կլինեն չարիքները, որոնք հիշատակեցինք:

– Շատ ավելի քիչ:

– Ներկայումս նման բաների պատճառով տիրակալները հենց այդպես են տրամադրել հպատակներին: Իսկ տիրակալների և նրանց շրջապատի երիտասարդները շփացած են, մարմնով ու հոգով՝ ծույլ, դիմացկուն չեն ո՛չ հաճույքների, ո՛չ
c տառապանքի մեջ, և ընդհանրապես անաշխատունակ են:

– Իհարկե:

– Շահից բացի, այդ տիրակալներին ուրիշ ոչինչ չի հետաքրքրում, իսկ առաքինության մասին նրանք հոգ են տանում ոչ ավելի, քան աղքատները:

– Այո:

– Այսպիսին է տիրակալների և հպատակների դրությունը: Մինչդեռ ճանապարհորդությունների և այլ համատեղ ձեռնարկների՝ ներկայացումների, արշավանքների, համատեղ նավարկությունների կամ զորահավաքների ժամանակ նրանք ստիպված են լինել կողք կողքի: Նրանք միասին են նաև վտանգների մեջ, և բոլոր նման դեպքերում աղքատները եր-
d բեք արհամարհված չեն հարուստների կողմից. ընդհակա-

ռակը, հաճախ աղքատ մարդը՝ պապակած ու արևահարված, մարտի ժամանակ հայտնվելով հարուստի կողքին, որը միշտ զովացել է ստվերում և պարարտացել ուրիշի հաշվին, տեսնում է, թե ինչպես է սա շնչահեղձ լինում և շվարում: Չե՞ս կարծում, որ աղքատը կմտածի, թե այդ մարդիկ հարուստ են աղքատների փոքրոգության շնորհիվ և իր նման մեկ ուրիշ աղքատի հետ զրուցելիս կասի. «Մեր տերերը ոչինչ չարժեն»:

– Վստահ եմ, որ աղքատները հենց այդպես էլ անում են: e

– Ինչպես որ հիվանդոտ մարմնի դեպքում բավական է ընդամենը փոքրիկ խթան, որպեսզի հիվանդությունը բորբոքվի,– իսկ երբեմն դա տեղի է ունենում նաև առանց արտաքին ազդակների,– այնպես էլ տկար պետությունը կռվում է ինքն իր հետ ամեն աննշան առիթով, ընդ որում ոմանք դաշնակցում են օլիգարխիական, ոմանք էլ դեմոկրատական պետությունների հետ, թեև երբեմն կռիվը սկսվում է առանց արտաքին միջամտության:

– Իհարկե: 557

– Դեմոկրատիան, ըստ իս, առաջ է գալիս այն ժամանակ, երբ աղքատները հաղթանակ տանելով՝ հակառակորդների մի մասին սպանում են, մյուս մասին՝ արտաքսում, իսկ մնացյալին քաղաքացիական հավասար իրավունքներ շնորհում և պաշտոններ զբաղեցնելու հնարավորություն տալիս, որ հիմնականում տեղի է ունենում քվեարկությամբ:

– Այո, այդպես է հաստատվում դեմոկրատական կարգը՝ լինի դա զենքի օգնությամբ, թե ահաբեկված հակառակորդների նահանջի արդյունքում:

– Իսկ ինչպե՞ս են այդտեղ ապրում մարդիկ: Ինչպիսի՞ն է b
այդ պետական կառույցը: Չէ՞ որ պարզ է, որ դա անդրադառնում է նաև դեմոկրատական գծեր ձեռք բերող մարդու վրա:

– Ակնհայտ է:

– Նախ այդպիսի մարդիկ ազատ են, պետությունը լիովին բաց և ազատ է, և ամեն ոք կարող է անել ինչ ցանկանա:

– Այդպես են ասում:

– Իսկ որտեղ դա թույլ է տրվում, այնտեղ յուրաքանչյուր
ոք կկազմակերպի կյանքն իր ուզածի պես:
c – Պարզ է:
– Կարծում եմ, այդպիսի պետական կառույցի պայմաններում մարդիկ կլինեն առավելագույնս տարբեր:
– Իհարկե:
– Թերևս սա պետական կառույցներից ամենահրաշալին է: Ամենատարբեր գույներով զարդարված գործվածքի պես այս կառույցը, որ հարուստ է բազում բարքերով, թվում է ամենահրաշալին: Եվ գուցե շատերը, խայտաբղետ իրերով զմայլվող մանուկների ու կանանց պես որոշեն, որ սա լավագույնն է:
– Անշուշտ:
d – Այդպիսի պետության մեջ, սիրելիս, շատ հարմար է ընտրել [ճիշտ] պետական կառույցը:
– Ինչպե՞ս:
– Այստեղ հնարավոր են պետական կառույցի բոլոր սեռերը, և եթե ոմն ցանկանա, ինչպես մենք հիմա, պետություն հիմնել, նա պիտի այցելի դեմոկրատական պետություն և, ասես շուկայում, ուր վաճառվում են տարատեսակ պետական կառույցներ, ընտրի իրեն պիտանի տեսակը և ընտրելուց հետո հիմնի այն:
e – Նա թերևս չի ունենա օրինակների պակաս:
– Դեմոկրատական պետության մեջ կարիք չկա կառավարելու, անգամ եթե բավականաչափ հմուտ ես դրանում: Այստեղ պետք չէ հպատակվել, եթե չես ցանկանում, պատերազմել, երբ մյուսները պատերազմում են, կամ խաղաղություն պահպանել, եթե դա սրտովդ չէ: Եվ դարձյալ, եթե որևէ օրենք խանգարում է քեզ իշխել, կամ դատել, դու կարող ես ցանկության դեպքում և՛ իշխել, և՛ դատել: Մի՞թե հրաշալի և հաճելի չէ նման կյանքը:
558 – Թերևս, բայց կարճ ժամանակով:
– Իսկ մի՞թե հրաշալի չէ [այդ պետության մեջ] կարեկցանքը որոշ բանտարկյալների հանդեպ: Թե՞ չես տեսել, թե ինչ-

պես մահվան կամ աքսորի դատապարտված մարդիկ այստեղ շարունակում են մնալ քաղաքում և երևալ հասարակության մեջ: Այդպիսի մարդը շրջում է ասես մի հերոս, որին ոչ ոք չի հիշում և չի նկատում:

– Այդպիսիք շատ են:

– Դեմոկրատական պետության այդ հանդուրժողականությունը բնավ մանրուք չէ, քանի որ ցույց է տալիս քամահրանքն այն ամենի հանդեպ, ինչը մենք կարևոր համարեցինք՝ հիմնելով մեր պետությունը: Եթե մարդը չունի երևելի բնություն, եթե մանկուց խաղի և դաստիարակության մեջ չի հաղորդակցվել գեղեցիկին, երբեք չի դառնա առաքինի այր: Ամբարտավանորեն քամահրելով այդ ամենը՝ դեմոկրատական կառույցը հոգ չի տանում այն մասին, թե ինչ զբաղմունքներից են անցնում պետական գործերին: Այստեղ կարևորվում է լոկ այն, որ մարդը բարեհաճ լինի ամբոխի հանդեպ:

– Շա՜տ ազնիվ հանդուրժողականություն:

– Այս և ուրիշ նման հատկությունները բնորոշ են դեմոկրատիային, որը, ինչպես երևում է, կառավարման հաճելի, անիշխան և բազմերանգ տեսակ է: Այստեղ գոյություն ունի որոշակի հավասարություն, որը հավասարեցնում է հավասարներին և անհավասարներին:

– Մենք գիտենք, թե ինչ նկատի ունես:

– Մտածի՛ր, թե ինչպիսին է ըստ այդմ առանձին մարդը: Կամ, գուցե, նախ պետք է տեսնել, թե ինչ եղանակով է նա կազմավորվում, ինչպես որ տեսանք պետության պարագայում:

– Այո:

– Դա տեղի է ունենում այսպես: Խնայող և օլիգարխիական մարդու մոտ, կարծում եմ, կծնվի որդի, որը կդաստիարակվի հոր բարքերի ոգով:

– Եվ ի՞նչ:

– Նա նույնպես կսանձի իր մեջ այն վայելքների ծարավը

(կոչենք դրանք ոչ անհրաժեշտ), որոնք առաջ են բերում ոչ թե շահույթ, այլ դրամի վատնում: Դրանք անհրաժեշտ չեն:

– Պարզ է:

– Իսկ կուզե՞ս, որպեսզի մեր զրույցը չլինի մթին, նախ որոշենք, թե որ տենչանքներն են անհրաժեշտ, իսկ որոնք՝ ոչ:

– Իհարկե կուզեմ:

– Տենչանքները, որոնցից մենք չենք կարող ազատվել, արդարև կարելի է կոչել անհրաժեշտ: Այդպիսին են նաև
e նրանք, որոնց բավարարումը օգտակար է մեզ: Երկուսի կարիքն էլ մեր բնությունն ունի: Այդպես չէ՞:

– Անշուշտ:

– Ուրեմն, դրանց մասին իրավացի է ասել, որ անհրաժեշտ են:

– Իհարկե իրավացի է:

559 – Իսկ նրանք, որոնցից կարելի է ազատվել, եթե այդ մասին հոգ տանենք երիտասարդ տարիքից, և որոնք ոչ մի լավ բան չեն բերում, իսկ մի քանիսն էլ, ընդհակառակը, վնասում են, մի՞թե ճիշտ չենք վարվի՝ ընդհանուր առմամբ կոչելով ոչ անհրաժեշտ:

– Այո, դա ճիշտ է:

– Գուցե երկուսից էլ օրինակներ ընտրենք, տեսնենք ինչպիսին են և որոշենք դրանց ընդհանուր տիպը:

– Այո, պետք է այդպես անել:

b – Սնվելը, այսինքն՝ հացի և համեմունքի կարիքը, մի՞թե առողջության և լավ ինքնազգացողության համար չէ:

– Կարծում եմ, այո:

– Հացն անհրաժեշտ է երկու առումով, քանի որ օգտակար է և չի դադարում այդպիսին լինելուց, քանի դեռ ապրում ենք:

– Այո:

– Իսկ համեմունքը անհրաժեշտ է, որովհետև օգտակար է մեր լավ ինքնազգացողության համար:

– Իհարկե:

– Իսկ ի՞նչ կասենք տենչանքի մասին, որը չի սահմանա-

փակվում դրանով և ձգտում է ուրիշ կերակուրների: Եթե այդ տենչանքը սանձենք երիտասարդ տարիքից ճիշտ դաստիարակությամբ, շատերը կազատվեն դրանից: Չէ՞ որ այն վնասակար է մարմնի, հոգու, բանականության և ողջախոհության համար: Ճիշտ կլինի կոչել այն ոչ անհրաժեշտ: c

– Շատ ճիշտ է:

– Մենք կասենք, որ այս տենչանքները կապված են դրամի վատնման հետ, իսկ այն մյուսները՝ շահույթի և օգտակար են մեր գործերում:

– Անշուշտ:

– Այդպես է նաև սիրային և մյուս նման տենչանքների պարագայում:

– Այդպես է:

– Իսկ նա, ում մենք հիմա կոչեցինք բոռ, լեցուն է այդպիսի ոչ անհրաժեշտ հաճույքներով և տենչանքներով, որոնք իշխում են նրան, մինչդեռ խնայող և օլիգարխիական մարդուն իշխում են միայն անհրաժեշտ տենչանքները: d

– Իհարկե:

– Դարձյալ փորձենք ասել, թե ինչպես է օլիգարխիական մարդուց առաջանում դեմոկրատական մարդը: Ինձ թվում է, դա հիմնականում տեղի է ունենում այսպես:

– Ինչպե՞ս:

– Երբ երիտասարդը մեծանում է այնպես, ինչպես նշեցինք քիչ առաջ, այսինքն՝ առանց դաստիարակության և համեստ պայմաններում, հանկարծ փորձում է բոռերի մեղրից ու հայտնվում վտանգավոր և ահեղ գազանների մեջ, որոնք կարող են նրան տալ ամենաբազմազան և ճոխ հաճույքները, դա կլինի օլիգարխիական տեսակից դեմոկրատականին անցնելու սկիզբը: e

– Դա միանգամայն անխուսափելի է:

– Ինչպես որ պետության մեջ տեղի է ունենում հեղաշրջում և բնակչության մի մասը պետությունից դուրս իրեն համախոհ դաշնակիցներ է գտնում, այդպես էլ փոխվում է երի-

տասարդը, երբ նրա տենչանքների մի մասին դրսից օգնում է տենչանքների այն մասը, որն ազգակից է դրանց և նման:

– Իհարկե:

– Եվ ես կարծում եմ, որ եթե սրան հակառակ ինչ-որ բան օգնում է օլիգարխիական մասին, օրինակ՝ հոր կամ մյուս հարազատների համոզումները կամ կշտամբանքները, նա խռովվում է, ընդվզում և սկսում պայքարել ինքն իր հետ:

– Ինչպե՞ս չէ:

– Եվ իմ կարծիքով դեմոկրատական մասը երբեմն զիջում է օլիգարխիականին, և որոշ տենչանքներ վերանում և վտար-
560 վում են, իսկ երիտասարդի հոգում ամոթխածություն է առաջանում, և ամեն բան կարգավորվում է:

– Այո, դա երբեմն պատահում է:

– Բայց հետագայում, կարծում եմ, մյուս տենչանքները, որոնք ազգակից են վերացածներին, հոր տված անշնորհք
b դաստիարակության պատճառով բազմանում են և ուժգնանում:

– Դա պատահում է հաճախ:

– Դրանք երիտասարդին մղում են դեպի նախկին միջավայրը, և այդ գաղտնի շփումից առաջ են գալիս բազում ուրիշ տենչանքներ:

– Իհարկե:

– Ինձ թվում է, որ նրանք ի վերջո գրավում են երիտասարդի հոգու պարապ ակրոպոլիսը, քանի որ այնտեղ չկան ո՛չ գիտելիքներ, ո՛չ գեղեցիկ սովորություններ, ո՛չ էլ ճշմա-
c ռիտ խոսքեր, որոնք աստվածահաճ մարդկանց մտածողության լավագույն պաշտպաններն են ու պահապանները:

– Անշուշտ:

– Դրանց փոխարեն նրա վրա կհարձակվեն կեղծ կարծիքներն ու պարծենկոտ խոսքը և կգրավեն այդ բերդը:

– Այն էլ ինչպես:

– Եվ նա դարձյալ կվերադառնա իր լոտոֆագոսների[11] մոտ և բացահայտ կբնակվի նրանց մեջ: Եթե նրա հարազատները

փորձեն օգնության գալ նրա հոգու խնայող մասին, նրա
պարծենկոտ խոսքը կփակի նրա մեջ թագավորական պատի
դարպասը, չի ընդունի ո՛չ դաշնակից զորքը, ո՛չ էլ դեսպան- d
ներին, այսինքն՝ սովորական կյանքում չի անսա ավելի ավագ
մարդկանց խոսքին: Հաղթահարելով խնայողությունը և ան-
պատվության հետ միասին քշելով ամոթխածությունը՝ նրանք
կկոչեն սա հիմարություն, իսկ ողջախոհությունը՝ արիության
պակաս և վատաբանելով ցեխ կնետեն վրան: Համոզված լի-
նելով, որ ժուժկալությունն ու կարգը դրամ ծախսելուն առնչ-
վող հարցերում տգիտություն և փոքրոգություն են, նրանք
դուրս կբերեն դրանք իրենց սահմաններից և ազատորեն
կտրվեն բազում անօգուտ տենչանքների:

– Իհարկե:

– Պարպելով ու մաքրելով երիտասարդի հոգին, որն ար-
դեն գրավել են ու հաղորդակից դարձրել մեծ խորհուրդնե-
րին, նրանք այնուհետև մեծ երգչախմբի ուղեկցությամբ ներս e
կհրավիրեն լկտիությունը, սանձարձակությունն ու անառա-
կությունը՝ զարդարելով դրանք պսակներով ու փառաբանե-
լով: Լկտիությունը նրանք կկոչեն բարեկրթություն, սանձար-
ձակությունը՝ ազատություն, անառակությունը՝ վայելչություն,
անամոթությունը՝ արիություն: Անհրաժեշտ տենչանքների մեջ
դաստիարակված մարդը մի՞թե այդպես չէ արդեն երիտա-
սարդ տարիքում դիմում ոչ անհրաժեշտ տենչանքներին և 561
անօգուտ հաճույքների բավարարմանը:

– Դա շատ ակնհայտ է:

– Իմ կարծիքով, այդպիսի երիտասարդի կյանքում դրամի
ծախսը, ջանքերը և ազատ ժամանակն այդուհետ ոչ անհրա-
ժեշտ տենչանքներին միտված կլինեն ոչ պակաս, քան ան-
հրաժեշտներին: Բայց եթե իր բախտից բաքոսական մոլեգ-
նությունը նրա մեջ չլինի չափից շատ և հասակ առնելով նա b
մի կողմ թողնի մեծ խռովքը, ապա մասամբ կվերադառնա իր
մերժած տենչանքներին, ամբողջությամբ չի հանձնվի նոր
ձեռք բերածներին, և նրա հաճույքների միջև կհաստատվի

հավասարակշռություն: Նա ամեն անգամ հակված կլինի այն մեկին, որը նրան տրվել է ասես քվեարկությամբ, մինչև որ բավարարի այն, իսկ հետո ուրիշ հաճույքի՝ գերապատվություն չտալով որևէ մեկին, այլ սնելով դրանք հավասարապես:

– Իհարկե:

– Նա չի ընդունի ճշմարիտ խոսքը, չի թողնի դարպասից ներս, եթե ոմն ասի նրան, որ հաճույքների մի մասը լավ, իսկ
c մյուսը վատ տենչանքների արդյունք է, և որ մի մասը պետք է սնել և պատվել, իսկ մյուսները՝ կանխել և ճնշել: Նա կճոճի գլուխը և կասի, որ բոլոր հաճույքները նման են և հավասարապես պատվի արժանի:

– Նման մարդն իհարկե այդպես կանի:

– Օր-օրի նա ապրում է, տուրք տալով իրեն համակած առաջին իսկ տենչանքին, մե՛րթ տրվելով գինարբուքի՝ ֆլեյ-
d տաների ուղեկցությամբ, մե՛րթ վերադառնալով ջրին ու զրկանքներին, մե՛րթ զբաղվելով մարմնամարզությամբ: Երբեմն ծուլանում և պարապուրդի է մատնվում, իսկ երբեմն, թվում է, զբաղվում է փիլիսոփայությամբ: Հաճախ զբաղվում է պետական հարցերով, վեր է թռչում տեղից և անում մտքին եկածը: Երբ նրան հրապուրում են զինվորական մարդիկ, հետևում է նրանց, իսկ երբ գործարարները, ապա սրանց: Նրա կյանքը չի ճանաչում ո՛չ կարգ, ո՛չ էլ անհրաժեշտություն. նա
e հաճելի, ազատ և երջանիկ է կոչում այդ կյանքը և անվերջ օգտվում է դրանից:

– Դու լիակատար ներկայացրիր անտարբեր մարդու կենսակերպը:

– Կարծում եմ, նա լեցուն է ամենատարբեր բարքերով, գեղեցիկ է և հարուստ, ինչպես իր պետությունը: Շատ են տղամարդիկ և կանայք, որոնք կնախանձեին նրա կյանքին, որի մեջ բազմաթիվ են պետական կառույցի ու բարքերի օրինակները:

– Այդպես է:

562 – Եվ ի՞նչ: Ընդունե՞նք, որ նման մարդը համապատասխա-

նում է դեմոկրատական կարգին և որ մենք ճիշտ կվարվենք՝ կոչելով նրան դեմոկրատական:

– Ընդունենք:

– Սակայն ամենահրաշալի պետական կառույցը և ամենահրաշալի մարդը դեռ մնում են չքննված. դրանք են բռնապետությունը և բռնակալը:

– Իհարկե:

– Այդ դեպքում, սիրելի՛ բարեկամ, դիտարկենք, թե ինչ եղանակով է առաջանում բռնապետությունը: Որ առաջանում է դեմոկրատիայից, թերևս պարզ է:

– Պարզ է:

– Ինչպես որ օլիգարխիայից ծագել է դեմոկրատիան, այնպես էլ դեմոկրատիայից ծագում է բռնապետությունը:

– Ինչպե՞ս:

– Բարիքը, որը առաջադրված էր որպես նպատակ,– ինչի b
արդյունքում հաստատվեց օլիգարխիան,– հարստությունն էր: Այդպես չէ՞:

– Այո:

– Իսկ հարստության անհագ ձգտումը և ամեն ինչի անտեսումը հանուն շահի կործանեցին օլիգարխիան:

– Ճշմարիտ է:

– Այն, ինչ դեմոկրատիան սահմանում է որպես բարիք և ինչին ձգտում է, կործանում է վերջինիս:

– Իսկ ի՞նչն է սահմանում որպես բարիք:

– Ազատությունը: Դեմոկրատական պետության մեջ միշտ
լսում ես, թե ինչ գեղեցիկ է ազատությունը և որ միայն նման c
պետության մեջ արժե, որ բնակվի նա, ով ի բնե ազատ է:

– Այո, այդպես են ասում, և բավական հաճախ:

– Արդ, ինչպես արդեն ասացի, որոշ բաների անհագուրդ նման ձգտումը, իսկ որոշ բաների անտեսումը խարխլում են այդ պետական կարգը և առաջ են բերում բռնապետության անհրաժեշտություն:

– Ինչպե՞ս:

– Կարծում եմ, երբ ազատության ծարավի դեմոկրատա-
կան պետության գլուխ անցնում են վատ մատռվակները, այդ
d պետությունն արբենում է անխառն ազատությունից, պատ-
ժում է պաշտոնյաներին, եթե սրանք բավականաչափ գթա-
սիրտ չեն ու չեն տալիս բոլորին կատարյալ ազատություն, և
մեղադրում ատելի օլիգարխիական կարգի մեջ:

– Այդպես է լինում:

– Տիրակալներին հնազանդ քաղաքացիներին այնտեղ
պախարակում են որպես կամավոր ստրուկների, որոնք ոչինչ
չարժեն, իսկ տիրակալները, որոնք նման են հպատակների,
և հպատակները, որոնք նման են տիրակալների, փառաբան-
վում են և պատիվներ վայելում ինչպես մասնավոր, այնպես
e էլ հասարակական կյանքում: Մի՞թե այդպես չէ տարածվում
նման ազատությունը:

– Իհարկե:

– Ազատությունը, բարեկամս, կմտնի նաև մասնավոր
տներ, և ի վերջո անիշխանությունը կփոխանցվի նաև կենդա-
նիներին:

– Ինչպե՞ս հասկանանք դա:

– Օրինակ, հայրը սկսում է նմանվել մանկանը և վախե-
նում է իր որդիներից, իսկ որդին՝ հորից: Այստեղ ազատու-
563 թյան անվան տակ չեն ամաչում և չեն վախենում ծնողներից:
Եկվորը հավասարվում է բնիկին, իսկ բնիկը՝ եկվորին, և նույ-
նը պատահում է նաև օտարների հետ:

– Այդպես պատահում է:

– Եվ համանման շատ ուրիշ մանրուքներ. օրինակ, ուսու-
ցիչը վախենում է աշակերտներից և քծնում է նրանց, իսկ
աշակերտները բոլորովին չեն հարգում իրենց ուսուցիչներին
ու դաստիարակներին: Եվ ընդհանրապես երիտասարդները
նմանակում են ավագներին և մրցում նրանց հետ ինչպես
խոսքով, այնպես էլ գործով, իսկ մեծահասակները, հարմար-
b վելով և նմանակելով երիտասարդներին, սրամտում են և կա-
տակում, որպեսզի չթվան տափակ ու չոր:

– Իհարկե:

– Սակայն այդպիսի պետության բնակչության համար մեծագույն ազատությունը, բարեկամս, այն է, որ գնված ստրուկներն ու ստրկուհիները պակաս ազատ չեն իրենց գնողներից: Եվ քիչ մնաց մոռանայինք ասել կանանց ու տղամարդկանց միջև տիրող հավասարության և ազատության մասին:

– Էսքիլոսի խոսքով՝ «Կասենք լեզվի ծայրին եղածը»[12]: c

– Հենց դա նկատի ունեմ: Իսկ թե որքան ավելի ազատ են այստեղ, քան ուրիշ վայրերում, մարդու տնօրինության տակ գտնվող կենդանիները, ոչ ոք չի հավատա մինչև չտեսնի: Ինչպես առածն է ասում՝ «շները տիրուհիներ են»[13]: Անգամ ձիերն ու էշերը այստեղ քայլում են ազատ և հպարտ՝ վրա քշելով իրենց հանդիպած մարդուն, եթե սա չի զիջում ճանապարհը: Այդպես էլ մնացյալ ամեն բան այստեղ լի է ազատու- d
թյամբ:

– Դու ասես պատմում ես իմ իսկ երազը. ինքս եմ բախվում դրանց, երբ գյուղ եմ գնում:

– Այս բոլորն ի մի բերելու դեպքում գլխավորը, ինչպես հասկանում ես, այն է, որ քաղաքացիների հոգին զգայուն է դառնում, այնպես որ ամեն հարկադրանք վրդովեցնում է նրանց և առաջ է բերում անհանդուրժողականություն: Լավ գիտես, որ ի վերջո նրանք ընդվզում են ինչպես գրված, այնպես էլ չգրված օրենքների դեմ, որպեսզի ոչ մի բանում տեր չունենան:

– Իհարկե գիտեմ: e

– Արդ, բարեկամս, հենց այսպիսի հրաշալի և հանդուգն իշխանությունից էլ, ըստ իս, ծագում է բռնապետությունը:

– Իրոք որ հանդուգն: Իսկ ի՞նչ է լինում հետո:

– Օլիգարխիան համակած և կործանած նույն այն հիվանդությունը, միայն թե ավելի սաստիկ ու դաժան, գոյանում է այստեղ ամենաթողության պատճառով և ստրկացնում դեմոկրատիան: Իսկապես, չափն անցածը փոփոխություն է առաջացնում հակառակ ուղղությամբ՝ լինի տարվա եղանակ, բույս 564

թե մարմին: Ոչ պակաս չափով դա տեղի է ունենում նաև պետական կառույցներում:

– Բնականաբար:

– Չէ՞ որ չափազանց ազատությունը ինչպես առանձին մարդու, այնպես էլ պետության համար թերևս ոչ այլ ինչ է, եթե ոչ չափազանց ստրկություն:

– Անկասկած:

– Հետևաբար, բռնապետությունը չի գոյանում ոչ մի այլ կարգից, այլ հենց դեմոկրատիայից: Եվ ըստ այդմ՝ չափազանց ազատությունից գոյանում է ծայրահեղ և ծանրագույն ստրկություն:

– Դա տրամաբանական է:

b – Բայց, կարծում եմ, որ դու հարցնում էիր ինձ ոչ թե դրա, այլ այն մասին, թե ինչ հիվանդություն է, որ գոյանալով օլիգարխիայում, հանդիպում է նաև դեմոկրատիայում և ստրկացնում է այն:

– Ճիշտ ես ասում:

– Ես նկատի ունեի պարապ և շվայտ մարդկանց տեսակը, որոնց առաջնորդում են քաջարիները և հետևում պակաս քաջերը: Մենք նմանեցրինք նրանց բոռերին, որոնց մի մասն ունի խայթ, իսկ մյուսը չունի:

– Ճիշտ է:

– Հայտնվելուն պես նրանք խաթարում են ցանկացած պետական կառույց և պետության մեջ ներմուծում են անկարգություն, ինչպես լեղին ու մաղձը՝ մարմնի մեջ: Թե՛ լավ բժիշ-

c կը, թե՛ պետական օրենսդիրը պետք է զգուշանա դրանցից ոչ պակաս, քան հմուտ մեղվապահը, գլխավորապես բոռերի բազմացումից խուսափելու համար, բայց եթե բազմանան, նա պետք է իսկույն մեղրաբջիջներով հանդերձ վերացնի դրանց:

– Զնսը վկա, իհարկե:

– Որպեսզի ավելի հստակ տեսնենք մեր նպատակը, անենք հետևյալը:

– Ի՞նչ:

– Մեր քննության մեջ բաժանենք դեմոկրատական պետությունը երեք մասի, ինչպես որ այն իրականում բաժանված է: d
Մի մասը բաղկացած կլինի բոռերից, որոնք գոյանում են ամենաթողությունից և ավելի քիչ չեն, քան օլիգարխիական պետության մեջ:

– Այդպես է:

– Բայց այստեղ դրանք շատ ավելի թունավոր են, քան օլիգարխիայի պայմաններում:

– Ինչու՞:

– Այնտեղ նրանք չեն վայելում պատիվ, և նրանց մշտապես պաշտոնանկ են անում, ահա ինչու նրանք չեն հմտանում և չեն զարգանում: Մինչդեռ դեմոկրատական պետության մեջ նրանք, աննշան բացառությամբ, կանգնած են իշխանության գլուխ, նրանցից ամենաթունավորները ճառեր են ասում ու գործում, իսկ մյուսները նստում են բեմին մոտ, որտեղ անվերջ բզզում են և թույլ չեն տալիս, որ ոմն այլ կարծիք արտահայտի: Հետևաբար այդպիսի պետության մեջ, փոքր բա- e
ցառությամբ, իշխում է հիշյալ դասը:

– Իհարկե:

– Սակայն ամբոխի մեջ առանձնանում է մեկ ուրիշ մաս նս:

– Ո՞րը:

– Գործարարներից հատկապես հարստանում են ի բնե կարգապահները:

– Թերևս:

– Կարծում եմ, բոռերը հենց նրանցից կարող են ամենից շատ մեղր հավաքել:

– Իհարկե, քանզի անհնար է հավաքել նրանցից, ովքեր քիչ մեղր ունեն:

– Այդ հարուստներին կարելի է կոչել բոռերի մեղրաբջիջներ:

– Թերևս:

– Երրորդ խավը նրանք են, ովքեր իրենք են աշխատում, 565
գործարարներ չեն և չունեն մեծ ունեցվածք: Քանակով

նրանք մյուսներից շատ են և ավելի ազդեցիկ են դեմոկրատիայի օրոք, եթե իհարկե միավորվում են:

– Այդպես է: Բայց նրանք չեն ցանկանում անել դա հաճախ, եթե չեն ստացել իրենց մեղրը:

– Բայց մի՞թե միշտ չեն ստանում: Չէ՞ որ իշխանությունն ի վիճակի է խլելու ունևորներից իրենց ունեցվածքը և բաժանել ժողովրդին՝ ճիշտ է, մեծ մասը թողնելով իրեն:

– Այդպես նրանք կստանան իրենց հասանելիքը:

b – Իսկ նրանք, որոնցից խլում են ունեցվածքը, ստիպված են պաշտպանվել, հանրային ճառեր ասել և անել ամենայն հնարավորը:

– Իհարկե:

– Անգամ եթե չցանկանան հեղաշրջում գործել, միևնույն է կմեղադրվեն ժողովրդի դեմ դավեր նյութելու և օլիգարխիական նկրտումների մեջ:

– Եվ ի՞նչ:

– Ի վերջո հասկանալով, որ դավադիրների կողմից խաբված ժողովուրդը չիմացությունից փորձում է վնասել իրենց,

c նրանք ուզած-չուզած իսկապես դառնում են օլիգարխներ: Քանզի այն բոռը խայթել էր նրանց և չարիք ներարկել:

– Իհարկե:

– Սկսվում են մեղադրանքներ, դատական քննություններ և վեճեր:

– Այն էլ ինչպես:

– Մի՞թե ժողովուրդը սովոր չէ առանձնացնել ինչ-որ մեկին, խնամել նրան և մեծարել:

– Սովոր է:

– Այդ դեպքում պարզ է, որ երբ հայտնվում է բռնակալը,

d նա առաջ է գալիս վերակացուների հենց այդ արմատից, և ոչ այլ տեղից:

– Այո, դա լիովին պարզ է:

– Բայց ինչպե՞ս է վերակացուն վերածվում բռնակալի: Պարզ է, որ դա տեղի է ունենում, երբ վերակացուն անում է

այն, ինչի մասին պատմում է Արկադիայում Լիկեյան Զևսի սրբատեղիի առասպելը:

– Այսի՞նքն:

– Նա, ով ճաշակել է մարդկային փորոտիքը՝ զոհաբերվող կենդանիների մսի հետ կտրատված, անխուսափելիորեն վերածվում է գայլի: Չե՞ս լսել այդ պատմությունը: e

– Լսել եմ:

– Մի՞թե այդպես չէ նաև ժողովրդի ներկայացուցչի դեպքում: Գլխավորելով շատ հնազանդ բազմության՝ արդյո՞ք նա զերծ կմնա ցեղակիցների արյունից: Թե՞ անարդար մեղադրանքներով դատարան կբերի և կվարկաբեկի իրեն՝ խլելով նրանց կյանքը: Իր անպատկառ լեզվով ու բերանով նա կըմբոշխնի ցեղակիցների սպանությունը: Աքսոր ու մահապատիժ 566
իրագործելուն զուգահեռ նա կխոստանա պարտքերի վերացում և հողի վերաբաշխում: Մի՞թե այդ ամենից հետո նա անհրաժեշտաբար չի կործանվի թշնամիների ձեռքով և մի՞թե չի դառնա բռնակալ՝ մարդուց վերածվելով գայլի:

– Անհրաժեշտաբար կվերածվի:

– Նա գլխավորում է սեփականատերերի դեմ ըմբոստացողներին:

– Այո, հենց նա:

– Եթե պարտվել է և աքսորվել, իսկ հետագայում, ի հեճուկս իր թշնամիների, վերադառնում է՝ վերադառնում է որպես կատարյալ բռնակալ:

– Պարզ է:

– Իսկ եթե նրան աքսորածները չկարողանան կրկին տա- b
պալել և պետության առաջ զրպարտելով սպանել, կծրագրեն գաղտնի սպանություն:

– Այո, այդպես է լինում:

– Բոլորին հայտնի է բռնակալի պահանջը. գալով իշխանության՝ նա թիկնապահներ է պահանջում, որպեսզի ժողովրդական պաշտպանն անվնաս լինի:

– Իհարկե:

c – Եվ ժողովուրդը տալիս է թիկնապահներ, որովհետև տագնապում է նրա համար, իսկ իր համար հանգիստ է:

– Անշուշտ:

– Երբ դրամ ունեցող մարդը տեսնում է դա, իսկ դրամի հետ միասին ունի նաև ժողովրդին ատելու պատճառ, այդ-ժամ, բարեկամս, ինչպես ասում է Կրեսոսին տրված գուշակությունը.

Շտապ փախիր ափերը խճառատ Հերմոսի.
Մի՛ վախիր, թե մարդիկ քեզ երկչոտ կանվանեն[14]:

– Երկրորդ անգամ նա այլևս չի ամաչի:

– Կարծում եմ, եթե նրան բռնեն, մահվան կդատապարտեն:

– Անկասկած:

– Իսկ վերակացուն, պարզ է, վեհորեն «պառկած չէ փոթորկվող խիտ փոշու մեջ»[15], այլ հաղթելով շատ ուրիշների,
d կանգնած է իր պետության կառքի մեջ՝ վերակացուից վերածվելով բռնակալի:

– Անշուշտ:

– Փորձենք պարզել, թե որն է այդ մարդու երջանկությունը և այն պետության, որի մեջ գոյանում է այդպիսի էակ:

– Իհարկե պարզենք:

– Առաջին օրերին, այսինքն սկզբում նա ժպտում և ողջունում է իրեն պատահած յուրաքանչյուր մարդու, իսկ իր մա-
e սին ասում է, որ բոլորովին էլ բռնակալ չէ: Շատերին տալիս է հանրային և մասնավոր խոստումներ, ազատում է պարտքերից, հող է բաժանում ժողովրդին և իր շրջապատի մարդկանց: Բոլորին ներկայանում է առատաձեռն ու հեզ:

– Անհրաժեշտաբար:

– Իսկ երբ հաշտվի իր թշնամիներից ոմանց հետ և կործանի մյուսներին նրանցից ազատվելու համար, կարծում եմ՝ մշտապես պատերազմներ կհրահրի, որպեսզի ժողովուրդը առաջնորդի կարիք ունենա:

– Բնականաբար:

– Եվ որպեսզի մարդիկ աղքատանան հարկերի պատճառով, ստիպված լինեն քարշ տալ իրենց գոյությունը ծայրահեղ կարիքի մեջ և դավեր չնյութեն իր դեմ: 567

– Պարզ է:

– Իսկ եթե նա կասկածի որևէ մեկին ազատամտության և իր իշխանությանը դեմ գնալու մեջ, այդպիսի մարդկանց կոչնչացնի՝ հիմնավորելով, որ նրանք անցել են թշնամու կողմը: Հանուն այդ ամենի բռնակալը պետք է մարդկանց լարման մեջ պահի պատերազմներով:

– Այո:

– Բայց նման գործերը նրան ավելի ատելի կդարձնեն քաղաքացիների աչքերում:

– Իհարկե: b

– Արդ, նաև իրեն իշխանության գալու օգնած մարդիկ, որոնք կիսում են իր հետ այդ իշխանությունը, հատկապես ամենախիզախները, ինչպես թաքուն, այնպես էլ բացահայտ կհայտնեն իրենց դժգոհությունը:

– Բնականաբար:

– Որպեսզի պահպանի իշխանությունը, բռնակալը պիտի ոչնչացնի նրանց բոլորին, այնպես որ ո՛չ ընկերների, ո՛չ էլ թշնամիների մեջ նրա համար պիտանի ոչ ոք չի մնում:

– Պարզ է:

– Ուրեմն նա պետք է լավ տեսնի, թե ով է խիզախ, ով է մեծահոգի, ով է խոհեմ և ով է հարուստ: Բռնակալի բարությունը հիմնված է այն բանի վրա, որ նա կամա-ակամա թշնամի է բոլոր այդ մարդկանց և դավում է նրանց դեմ, մինչև որ չի մաքրում նրանցից պետությունը: c

– Հրաշալի՛ մաքրագործում:

– Բայց դա ներհակ է բժիշկների կիրառածին: Նրանք հեռացնում են վատագույնը և թողնում լավագույնը, մինչդեռ բռնակալը՝ ընդհակառակը:

– Ինչպես երևում է, նա ստիպված է այդպես վարվել, եթե պիտի պահպանի իր իշխանությունը:

d – Նա երանելի անհրաժեշտությամբ հարկադրված է կա՛մ բնակվել հոռիների բազմության հետ, որոնք ատում են իրեն, կա՛մ էլ հրաժարվել կյանքից:

– Այո, հարկադրված է:

– Եվ որքան ավելի ատելի է դառնում քաղաքացիներին իր այդ գործողություններով, այնքան ավելի շատ հավատարիմ թիկնապահների կարիք ունի:

– Իհարկե:

– Իսկ ովքե՞ր են հավատարիմ, և որտեղի՞ց գտնի նրանց:

– Իրենք կգան, և այն էլ շատերը, եթե միայն վճարի նրանց:

– Շունը վկա, դու նորից խոսում ես բոռերի և ամեն տեսակ օտարականների մասին:

e – Ճիշտ ես կարծում:

– Եվ ի՞նչ: Մի՞թե չի ցանկանա թիկնապահներ վերցնել տեղացիներից:

– Ինչպե՞ս:

– Քաղաքացիներից կխլի ստրուկներին, կազատի նրանց և կդարձնի տեգակիրներ:

– Շատ ճիշտ է: Եվ նրանք շատ հավատարիմ կլինեն իրեն:

– Ա՛յ թե երանելի մարդ կկոչես նման բռնակալին, եթե այդ-
568 պիսիք են իր հավատարիմ բարեկամները, իսկ նախկիններին՝ իսկականներին, նա կործանել է:

– Նա ստիպված է բավարարվել նրանցով:

– Այո, մարդիկ կհիանան նրանով և կբարեկամանան նրա հետ, և այդպիսով նոր քաղաքացիներ կշրջապատեն նրան, մինչդեռ լավագույնները կատեն և կխուսափեն նրանից:

– Անկասկած:

– Զուր չէ, որ ողբերգություն հորինելը դժվար գործ է, և այդ հարցում բոլորից շատ աչքի է ընկել Եվրիպիդեսը:

– Ինչու՞ ես այդպես ասում:

b – Նա է արտահայտել հետևյալ խոր միտքը.

Բռնակալները իմաստուն են իմաստունների հետ շփվելով[16]:

Նա ակնհայտ է համարում այն, որ բռնակալը շփվում է իմաստունների հետ:

– Իսկ ինչպե՞ս է փառաբանում բռնապետությունը և դրան առնչվող շատ ուրիշ բաներ: Ե՛վ նա, և՛ ուրիշ բանաստեղծներ:

– Ահա ինչու ողբերգակ բանաստեղծները, քանի որ իմաստուն են, թող ներեն մեզ և բոլոր նրանց, ովքեր պետություն են կառուցում մեզ նման, եթե չընդունենք նրանց հենց բռնապետությունը այդպես փառաբանելու պատճառով:

– Կարծում եմ՝ բարեկիրթները կներեն: c

– Շրջելով ուրիշ պետություններում, հավաքելով մեծ բազմություն, որի մեջ կան գեղեցիկ, ուժեղ և ազդեցիկ ձայն ունեցող մարդիկ՝ նրանք մղում են քաղաքացիներին դեպի բռնապետություն և դեմոկրատիա:

– Այն էլ ինչպես:

– Բացի այդ, նրանք վարձք ու պատիվ են վայելում, ընդ որում ամենից շատ,– և դա բնական է,– բռնակալներից, այնուհետև դեմոկրատական իշխանությունից: Բայց որքան ավելի բարձր պետական պաշտոններ ունեն, այնքան ավելի է պակասում նրանց փառքը, ասես առաջ շարժվելու համար նրանց չի բավականացնում շնչառությունը: d

– Իհարկե:

– Բայց մենք շեղվեցինք: Վերադառնանք բռնակալի բանակին, որը հոյակապ է, բազմամարդ, խայտաբղետ ու հարափոփոխ, և տեսնենք, թե ինչ միջոցներով է այն պահվում:

– Պարզ է, որ բռնակալը ծախսում է պետության տաճարներում հավաքվող դրամը, և քանի դեռ այն բավարար է, նա թեթևացնում է ժողովրդի հարկերը:

– Իսկ եթե բավարա՞ր չէ:

– Հասկանալի է, որ այդժամ և՛ իրեն, և՛ իր կողմնակիցներին ու բարեկամներին նա կպահի հայրական միջոցներով: e

– Հասկանում եմ: Եթե ժողովուրդն է ծնել բռնակալին և իր բարեկամներին, ինքն էլ պիտի հոգ տանի նրանց մասին:

– Դա միանգամայն անհրաժեշտ է բռնակալին:

– Ի՞նչ նկատի ունես: Իսկ եթե ժողովուրդը վրդովված
ասի՞, որ արդար չէ, երբ հասուն որդին ապրում է հոր հաշ-
վին, այլ հակառակը՝ հայրը պետք է սնվի որդու հաշվին, և որ
569 հայրը նրա համար չի ծնել որդուն ու ոտքի կանգնեցրել, որ-
պեսզի երբ որդին հասակ առնի, ինքը՝ հայրը, դառնա սեփա-
կան ստրուկների ստրուկը և կերակրի ինչպես որդուն, այն-
պես էլ ստրուկներին և ամեն տեսակ տականքի: Ընդհակա-
ռակը, քանի որ ժողովրդի ներկայացուցիչը այդքան առաջ է
գնացել, ժողովուրդը ակնկալում է ազատվել հարուստ և
արժանի մարդկանցից: Իսկ հիմա ժողովուրդը հրամայում է
թե՛ նրան, թե՛ նրա ընկերներին հեռանալ պետությունից. այդ-
պես հայրը հարբած գավաթակիցների հետ վռնդում է տնից
որդուն:

– Զնսը վկա, ժողովուրդը կիմանա, թե ինչ ճիվաղ է ծնել
b ու սիրով սնուցել և թե որքան հզոր են նրանք, որոնց նա
փորձում է վտարել իր տկար ուժերով:

– Ի՞նչ նկատի ունես: Մի՞թե բռնակալը կհանդգնի բռնանալ
հոր վրա և, եթե սա չզիջի, անգամ ծեծի ենթարկել նրան:

– Այո, և կխլի նրանից զենքը:

– Ուրեմն, բռնակալը հայրասպան է և վատ դայակ ծերե-
րին: Ինչպես երևում է, բռնապետության բնույթը հստակվեց:
Ըստ ասացվածքի՝ «ծխից փախչողը կրակն է ընկնում», այդ-
c պես ժողովուրդը ազատներին ծառայելու փոխարեն սկսում է
ծառայել բռնակալներին և իր անսահման ազատությունը փո-
խում է ամենածանր ու վատթար ստրկության հետ՝ դառնալով
ստրուկների ստրուկ:

– Այո, հենց այդպես էլ լինում է:

– Եվ ի՞նչ: Կարելի՞ է առանց չափազանցության ասել, որ
մենք բավարար չափով պարզեցինք, թե ինչպես է դեմոկրա-
տիայից գոյանում բռնապետությունը և ինչպիսին է այն:

– Միանգամայն բավարար:

ԳԻՐՔ ԻՆՆԵՐՈՐԴ

– Մնում է քննել բռնապետական մարդուն՝ թե ինչպես է նա 571
գոյանում դեմոկրատական մարդուց, ինչպիսին է և ինչպես է
ապրում՝ դժբախտ, թե երջանիկ:

– Այո, նրան դեռ չենք քննել:

– Իսկ գիտե՞ս, էլ ինչ կուզեի:

– Ի՞նչ:

– Ինձ թվում է՝ մենք բավականաչափ չքննեցինք տենչանք-
ները, թե ինչպիսին են և որքան են: Իսկ քանի դեռ դա չենք
արել, պարզ չի լինի նաև ներկայիս քննությունը:

– Ուրեմն ճիշտ կլինի անել դա: b

– Իհարկե: Տե՛ս, թե ինչ կուզեի հասկանալ: Ոչ անհրաժեշտ
տենչանքներից մի քանիսն ինձ թվում են հակաօրինական:
Դրանք թերևս հատուկ են բոլորին, սակայն երբ սանձվում են
օրենքներով ու լավագույն տենչանքներով, կա՛մ իսպառ վե-
րանում են որոշ մարդկանց մոտ, կա՛մ էլ նվազում ու թուլա-
նում: Սակայն ոմանց մոտ դրանք ուժգնանում են և շատա- c
նում:

– Ի՞նչ տենչանքների մասին ես խոսում:

– Նրանց մասին, որոնք առաջ են գալիս քնած ժամանակ,
երբ հոգու գլխավոր՝ բանական և համեստ մասը ննջում է, իսկ
գազանակերպ և վայրի մասը, ուտելիքից ու գինուց գրգռված,
վեր է թռչում և քշելով քունը՝ փորձում է բավարարել իր բնու- d
թյունը: Դու գիտես, որ այդ վիճակում մարդ կարող է անել
ցանկացած բան՝ մի կողմ դնելով ամեն ամոթ ու ողջախոհու-

թյուն: Եթե մտքով անցնի, չի խորշի անգամ խառնակվել իր մոր հետ և առհասարակ ում հետ պատահի՝ մարդկանց, աստվածների կամ գազանների: Կդիմի արյունահեղության և չի հրաժարվի ոչ մի կերակուրից: Մի խոսքով՝ չկա ոչինչ, որ նրան անմիտ կամ ամոթալի թվա:

– Շատ ճիշտ ես ասում:

– Իսկ երբ մարդն ապրում է առողջ ու խոհեմ և քուն մտնելիս արթուն է պահում իր բանական մասը, նա հրամցնում է վերջինիս գեղեցիկ փաստարկներ ու խորհրդածություններ և առաջ է բերում գիտակցություն: Եվ չնայած չի
e խլացնում իր տենչացող մասը, բայց չի էլ բավարարում, որպեսզի սա հանդարտվի և իր ուրախություններով ու տվայտանքներով չանհանգստացնի մարդու մեջ եղած լավագույ-
572 նին: Թո՛ղ այդ լավագույնը ինքնըստինքյան և անբասիր ձգտի քննել ու զգայել այն, ինչը դեռ չի ճանաչում՝ լինի անցյալ, ներկա կամ ապագա: Ճիշտ այդպես մարդը կսանձահարի իր ցասումը, որպեսզի քուն մտնելիս չընկնի ջղային վիճակի մեջ, այլ խաղաղեցնելով այդ երկու տեսակները և շարժման մեջ դնելով երրորդը, որին բնորոշ է խոհեմությունը, հանգիստ առնի: Դու գիտես, որ այդ դեպքում նա առավելագույնս
b կառնչվի ճշմարտությանը և երազում նրան նվազ չափով կայցելեն ապօրինի տեսիլները:

– Լիովին համաձայն եմ:

– Բայց մենք շատ շեղվեցինք մեր քննությունից: Մենք միայն ուզում էինք պարզել, որ յուրաքանչյուր մարդու, նաև միանգամայն ժուժկալ թվացողի մեջ կա տենչանքների զարհուրելի, վայրի և անօրեն մի տեսակ: Հենց դա էլ հանդիպում է երազներում: Տե՛ս, ճի՞շտ բան եմ ասում, և համաձա՞յն ես արդյոք:

– Համաձայն եմ:

– Հիշիր, թե ինչպես նկարագրեցինք դեմոկրատական
c մարդուն: Նա ծնված իսկ պահից և մանկուց դաստիարակվել է խնայող հոր կողմից, որն արժևորել է միայն հարստության

տենչանքը, իսկ ոչ անհրաժեշտ տենչանքները, որոնք գոյանում են սոսկ հաճույքի և գեղեցկության համար, անարգել է: Այդպես չէ՞:

– Այդպես է:

– Շփվելով առավել նրբաճաշակ մարդկանց հետ, որոնք համակված են հենց նոր քննված տենչանքներով, նա ներքաշվում է նրանց ապրելակերպի և ամեն սանձարձակության մեջ, քանի որ ատում է հոր կծծիությունը: Սակայն բնությամբ նա իրեն այլասերողներից ավելի լավն է, ուստի կանգնում է d
երկու այդ մոտեցումների մեջտեղում, որոնցից յուրաքանչյուրը հավասարապես ձգում է նրան: Ճաշակելով, ինչպես ինքն է կարծում, չափավոր կերպով երկուսից էլ, նա չի ապրում նսեմ կամ անօրեն կյանք և օլիգարխիական մարդուց վերածվում է դեմոկրատականի:

– Նման մարդու մասին եղել է և կա այդպիսի կարծիք:

– Ընդունենք՝ այդ մարդը հասակ առնելով կունենա երիտասարդ որդի, որը դաստիարակվել է հոր բարքերով:

– Ընդունենք:

– Ընդունիր նաև, որ նրա հետ էլ կպատահի նույնը, ինչ պատահել է հորը: Նա կձգտի ամեն տեսակ անօրինություն-
ների, որոնք նրան այլասերողները կոչում են ազատություն: e
Հայրը և մյուս բոլոր հարազատները նրան օգնում են մնալ մեջտեղում, սակայն այլասերողները ձգում են հակառակ ուղղությամբ: Իսկ երբ այդ հմուտ հրաշագործները և բռնակալներ պատրաստողներն այլևս կորցնում են երիտասարդին որևէ այլ կերպ տիրելու հույսը, նրան ներշնչում են որևէ կիրք, որն իշխում է պարապ և ցոփ կյանքի տենչանքների
վրա: Այդ կիրքը իսկական մեծ ու թևավոր բոռ է: Թե՞ կարծում 573
ես՝ այդ կիրքն ուրիշ ինչ-որ բան է:

– Ոչ, հենց դա է:

– Բայց այդ կրքի շուրջ պտտվում են մյուս տենչանքները, որոնց ետևից ձգվում են անուշահոտ քսուքների, մյուռոնի, պսակների, գինու և զանազան խրախճանքների ժամանակ

b սովորական ուրիշ անդիմադրելի վայելքները: Ծայրաստիճան մեծացնելով ու սնելով հեշտանքի խայթը՝ այդ տենչանքներն օժտում են դրանով բոռին, և հոգու այդ վերակացուն, ընկնելով մոլեգնության մեջ, խայթում է: Եվ եթե որսում է երիտասարդի մեջ որևէ կարծիք կամ տենչանք, որը պիտանի է և չափավոր, սպանում է այն, դուրս է մղում, մինչև որ նա լիովին մաքրվի խոհեմությունից և լցվի մոլեգնությամբ:

– Դու խոսում ես իսկական բռնակալի գոյացման մասին:

– Բայց մի՞թե այս ամենի և սրա նման այլ բաների պատճառով չէ էրոսը կոչվում բռնակալ:

c – Թերևս:

– Հարբածի գլխում, բարեկամս, նույնպես իշխում է բռնակալ:

– Այո, իշխում է:

– Իսկ խենթն ու մոլագարը հույս ունի, որ կկարողանա իշխել ոչ միայն մարդկանց, այլև աստվածներին:

– Իհարկե:

– Ամբողջովին բռնակալ, սիրելի՛ս, մարդ դառնում է, երբ հարբած, սիրահարված կամ շատ մելամաղձոտ է: Դա պայմանավորված է նրա բնությամբ, սովորությամբ կամ էլ երկուսով միասին:

– Միանգամայն ճիշտ է:

– Ինչպես երևում է, նա ծնվում է այդպես: Իսկ ինչպե՞ս է ապրում:

d – Սրախոսությունն ասում է. «Հենց դու էլ կասես»[1]:

– Կասեմ: Կարծում եմ, դրանից հետո նրանց մոտ կսկսվեն տոնախմբություններ, երթեր, խնջույքներ, և այդպես շարունակ: Չէ՞ որ բռնակալ էրոսը, որ բնակվում է նրանց մեջ, ղեկավարում է ողջ հոգին:

– Անհրաժեշտաբար:

– Ամեն օր ու գիշեր կծաղկեն բազում ահավոր տենչանքներ և կպահանջեն ավելին:

– Այո, դրանք շատ կլինեն:

– Հետևաբար շուտով եկամուտները, եթե այդպիսիք կա-
յին, կնվազեն:

– Ինչպե՞ս չէ:

– Հետո կկրճատվեն ծախսերը, և ունեցվածքը գրավ e
կդրվի:

– Եվ ի՞նչ:

– Երբ ամեն բան սպառվի, ուռճացած տենչանքների պար-
սը, որ բույն է դրել նրանց մեջ, կսկսի բզզալ, և ասես էրոսի
թիկնապահների զանազան տենչանքներով խթահար՝ մարդիկ
կսկսեն խայթել, տեսնելով, թե ով ինչ ունի և ինչ կարելի է
խլել նրանից խաբեությամբ կամ բռնի:

– Իհարկե:

– Նրանք թալանի մեծ ծարավ ունեն, այլապես անչափ 574
մեծ ցավեր ու տառապանք են կրում:

– Աճելով նրա մեջ՝ այդ հաճույքները գերազանցում են իր
նախկին տենչանքները և ճնշում դրանք: Այդպես նա փորձում
է գերազանցել հորն ու մորը, քանզի նրանցից երիտասարդ է,
և ծախսելով իր բաժինը՝ յուրացնում ու վատնում է հորական
ունեցվածքը:

– Եվ ի՞նչ:

– Եթե հայրն ու մայրը դա թույլ չտան, չի փորձի՞ արդյոք b
նախ թալանել և խաբել նրանց:

– Անկասկած:

– Իսկ եթե չկարողանա այդպես, չի՞ թալանի արդյոք բռնի
ուժով:

– Կարծում եմ, այո:

– Իսկ եթե ծերուկներն ընդդիմանան և պայքարեն, սիրե-
լիս, կխնայի՞ նրանց և կզգուշանա՞ արդյոք բռնակալին հա-
տուկ արարքներից:

– Բնավ: Ես վախենում եմ այդպիսի մարդու ծնողների հա-
մար:

– Սակայն, Ադիմանտոս, ի սեր Զևսի, մի՞թե հանուն մի նոր
ընկերուհու, որը բնավ անհրաժեշտ չէ, նա կծեծի մանկուց

c սիրելի և անհրաժեշտ մորը, կամ հանուն նորահայտ փթթուն պատանու, որը նույնպես անհրաժեշտ չէ, կծեծի արդեն ծեր, բայց անհրաժեշտ և իր ամենահին բարեկամին՝ հորը: Կարծում ես՝ այդպիսի մարդը կստրկացնի հորն ու մորը և կհանձնի իր նոր ընկերների՞ն՝ բերելով սրանց իր տուն:

– Կհանձնի, Զևսը վկա:

– Մեծ երջանկություն է, սակայն, բռնակալ որդի ծնելը:

– Շա՛տ մեծ:

d – Իսկ ի՞նչ կլինի, երբ հայրական և մայրական աղբյուրները սպառվեն, մինչդեռ նրա մեջ կուտակվել է տենչանքների մի ամբողջ պարս: Մի՞թե նա աչք չի տնկի որևէ մեկի տան պատերին կամ գիշերային անցորդի թիկնոցին և չի՞ թալանի արդյոք որևէ տաճար: Բոլոր այս արարքներում գեղեցիկի և ամոթալիի մասին մանկուց ձեռք բերված և ճիշտ համարված կարծիքները կենթարկվեն այժմ ստրկությունից ազատված տենչանքներին, որոնք ուղեկցում են էրոսին և առաջնորդ-

e վում նրա կողմից: Նախկինում, քանի դեռ մարդը ենթարկվում էր օրենքներին, հորը և ներքուստ դեմոկրատ էր, այդ տենչանքներն ազատություն էին ստանում միայն քնած ժամանակ, երազներում: Սակայն ենթարկվելով էրոսի բռնապետությանը՝ նա դառնում է այնպիսին, ինչպիսին երբեմն լինում էր երազում, և չի խուսափում սպանությունից, որկրամոլությունից, հրեշավոր մեղսագործությունից: Ամենայն անիշխանության և անօրինության պայմաններում նրա մեջ ապրում է

575 բռնավոր էրոսը: Որպես ինքնակալ՝ սա իրենով համակված մարդուն, ասես մի պետության, հասցնում է ամեն տեսակ հանդգնությունների, որպեսզի նա բավարարի և՛ իրեն, և՛ իր հրոսակախմբին, որը բաղկացած է մասամբ դրսի վատ ազդեցությունից գոյացած, մասամբ էլ իր ներսում եղած համանման տենչանքներից, որոնց նա այժմ ազատ արձակեց: Թե՞ այդ մարդու կյանքն այդպիսին չէ:

– Այդպիսին է:

– Երբ նման մարդիկ պետության մեջ սակավ են, իսկ

մնացյալ բազմությունը խոհեմ է, մեկնում են օտար երկրներ b
և ծառայում որպես որևէ բռնակալի թիկնապահներ կամ վարձկաններ, եթե որևէ տեղ պատերազմ է: Երբ այդ տեն-
չանքներն ի հայտ են գալիս խաղաղ պայմաններում, իրենց պետության մեջ իսկ նրանք բազում մանր չարիքներ են գործում:

– Ի՞նչ նկատի ունես:

– Որ նրանք գողություն են անում, հաղթահարում բոլոր պատնեշները, կտրում քսակները, մերկացնում անցորդներին, սրբապղծություններ գործում և մարդկանց ստրկության վաճառում: Պատահում է, նրանք մատնություններ են անում, եթե իհարկե գիտեն համոզիչ խոսքեր, կեղծ վկայություններ են տալիս կամ կաշառք վերցնում:

– Ա՛յ թե մանր չարիքներ են: Իհարկե, եթե այդպիսի մարդիկ քիչ են: c

– Այդ չարիքները մանր են մեծ չարիքի կողքին. այն վնասի և դժբախտության համեմատ, որ պատճառում են պետությանը բռնակալի գործած չարիքները, դրանք աննշան են: Երբ պետության մեջ լինեն շատ այդպիսի մարդիկ և իրենց հետևորդներ և երբ նրանք զգան իրենց բազմաքանակությունը, այդժամ հենց իրենցից էլ կծնվի բռնակալ, և դրա պատճառը կլինի ժողովրդի անխոհեմությունը: Դա կլինի նրանցից այն մեկը, որն ինքն իր մեջ, այսինքն իր հոգում, կրում է մեծագույն և ծայրահեղ բռնակալի: d

– Բնականաբար, քանի որ այդպիսի մարդն է ամենամեծ բռնակալը:

– Եթե նրան զիջեն կամավոր: Իսկ եթե պետությունը խոչընդոտի դրան, ապա, ինչպես ասացինք քիչ առաջ, երբ հիշեցինք հոր ու մոր նկատմամբ նրա գործած բռնությունը, նա հնարավորության դեպքում նույնը կանի նաև պետության հանդեպ: Նա կպատժի պետությանը՝ ներմուծելով իր նոր բարեկամներին, ստրուկ վիճակում կպահի և կդաստիարակի նախկինում սիրելի «մայր երկիրը», ինչպես ասում են կրե-

տացիք, այսինքն՝ հայրենիքը: Ահա՛ այդպիսի մարդու տեն-
չանքների վերջնանպատակը:

e – Այո, հենց դա է:

– Այդ մարդիկ այդպիսին են նաև մասնավոր կյանքում, նախքան իշխանության գալը: Ում հետ էլ շփվեն, պահանջում են շողոքորթություն և կատարյալ հնազանդություն, իսկ երբ ինչ-որ բանի կարիք ունեն, ձգտում են դեպի այդ մարդը,
576 ամեն կերպ ձևացնելով, թե մոտ են նրան, իսկ երբ հասնում են ուզածին, նորից օտար են դառնում:

– Շատ ճիշտ է:

– Նշանակում է՝ ողջ կյանքում ոչ ոքի հետ ընկերություն չեն արել: Մշտապես կա՛մ տիրել են, կա՛մ ստրկացել ուրիշին. այդպես բռնապետական բնությունը երբեք չի ճաշակել ո՛չ ազատություն, ո՛չ էլ ճշմարիտ բարեկամություն:

– Իհարկե:

– Մի՞թե ճիշտ է, որ այդպիսի մարդկանց մենք կոչում ենք անվստահելի:

– Ինչպե՞ս չէ:

– Նաև վերին աստիճանի անարդար, եթե ճիշտ էր մեր հա-
b մաձայնությունն այն հարցի շուրջ, թե ինչ է արդարությունը:

– Իհարկե ճիշտ է:

– Արդ, ամենաչար մարդու մասին մենք ընդհանուր առմամբ կասենք, որ դա մեկն է, ով նաև հարթմնի այնպիսին է, ինչպիսին էր մեր քննած երազներում:

– Իհարկե:

– Այդպիսին դառնում է նա, ով ունենալով բռնապետական բնություն՝ հասնում է մենիշխանության, և որքան ավելի երկար ժամանակ է ունենում իշխանություն, այնքան ավելի է բռնապետ դառնում:

– Անհրաժեշտաբար,– զրույցին միանալով ասաց Գլավկոնը:

c – Չի՞ լինի արդյոք ամենամեծ սրիկան նաև ամենադժբախտ մարդը: Եվ որքան ավելի երկար ժամանակ ունենա բռնակալի իշխանություն, այնքան ավելի երկար ժամանակ

իրապես կլինի այդպիսին: Թեպետ շատերը տարբեր կերպ են մտածում:

– Ոչ, դա անհրաժեշտաբար հենց այդպես է:

– Բռնակալ մարդը համապատասխանու՞մ է բռնապետական պետությանը, իսկ դեմոկրատական մարդը՝ դեմոկրատական պետությանը, և այլն:

– Անշուշտ: d

– Իսկ ինչպես որ պետությունը առաքինության և բարեկեցության իմաստով հարաբերվում է պետության հետ, այնպես էլ մարդը վերաբերվում է մարդու՞ն:

– Իհարկե:

– Իսկ առաքինության իմաստով ինչպե՞ս է բռնապետական պետությունը վերաբերվում թագավոր ունեցող պետությանը, նրան, որ քննեցինք սկզբում:

– Դրանք միանգամայն հակադիր են իրար, քանի որ մեկը ազնվագույնն է, իսկ մյուսը ստորագույնը:

– Չեմ հարցնում՝ որը որն է, քանզի դա ակնհայտ է: Սակայն բարեկեցության կամ աղքատության առումով դու դարձյա՞լ այդպես ես դատում, թե՞ այլ կերպ: Մենք չպետք է վախենանք նայել բռնակալին՝ ո՛չ այն ժամանակ, երբ նա միայնակ է, ո՛չ էլ այն ժամանակ, երբ շրջապատված է սակավաթիվ շքախմբով, այլ պետք է դիտարկենք ամբողջ պետությունը՝ մտնելով նրա մեջ, և ուսումնասիրելուց հետո միայն կարծիք e
հայտնենք:

– Իրավացի ես: Բայց բոլորին էլ պարզ է, որ չկա ավելի աղքատ պետություն, քան բռնապետականը, և չկա ավելի բարեկեցիկ պետություն, քան այն, որտեղ իշխում են թագավորները:

– Իսկ ճի՞շտ կլիներ, եթե առանձին մարդկանց վերաբերմամբ ես պահանջեի նույնը: Չէ՞ որ նրանց մասին կարող է դատել միայն նա, ով կարող է դիտարկել մարդուն՝ մտովի 577
թափանցելով նրա բնավորության մեջ, և ոչ թե մանկան պես բավարարվելով միայն արտաքինով և ցուցադրական բանե-

րով, որը նպատակ ունի լոկ արտաքին տպավորություն թող-
նել: Պետք է տեսնել բավականաչափ խորը: Ինձ թվում է, մենք
պիտի լսենք նրան, ով կկարենար դատողություն անել, ապ-
րել բռնակալի հետ համատեղ, հետևել նրա ընտանեկան
b կյանքին, նրա և տնեցիների շփմանը: Այդժամ բռնակալը
կներկայանա մեզ առավելագույնս մերկ, առանց ողբերգական
ներկայացմանը հարիր շքեղ զգեստների: Դա տեղի ունի նաև,
երբ պետության մեջ անհանգիստ է, և նա, ով տեսել է այդ ամե-
նը, թող հաղորդի մեզ, թե ինչպիսին է բռնակալի բարեկեցու-
թյունը կամ դժբախտությունը մյուս մարդկանց համեմատ:

– Այդպիսի պահանջը միանգամայն իրավացի է:

– Կուզե՞ս, ենթադրենք, որ մենք նրանցից ենք, ովքեր կա-
րող են այդպես դատել, կամ արդեն հանդիպել ենք նման
մարդկանց: Ուստի նրանք, ովքեր պիտի պատասխանեն մեր
հարցերին, մեր տրամադրության տակ են:

– Իհարկե:

c – Այդ դեպքում մտածիր այսպես՝ ո՞րն է նմանությունը պե-
տության ու մարդու միջև, և հերթով ցույց տուր, թե ինչպիսին
է նրանցից յուրաքանչյուրի բնույթը:

– Ինչպե՞ս անել դա:

– Նախ, եթե խոսենք պետության մասին, ինչպիսի՞ն կկո-
չես բռնապետական պետությունը՝ ազա՞տ, թե՞ ստրկական:

– Առավելագույնս ստրկական:

– Բայց դու տեսնում ես, որ այնտեղ կան տերեր և ազատ-
ներ:

– Այո, բայց նրանք շատ քիչ են, իսկ ամբողջ պետությունը
և նրա մեջ եղած ամենաբարեպաշտը խայտառակ, նողկալի
ստրկության մեջ է:

d – Եթե մարդը նման է բռնապետական պետությանը, նրա
մեջ ևս պետք է լինի նույն կարգը: Նրա հոգին լի է ստրկու-
թյամբ և ստորությամբ, իսկ այն մասերը, որոնք ամենից
բարեպաշտն էին, ենթարկված են վատթարագույն և մոլեգին
մասին, որ տիրում է նրանց:

– Անհրաժեշտաբար:

– Եվ ինչ, ստրկակա՞ն կկոչես այդպիսի հոգին, թե՞ ազատ:

– Ստրկական:

– Բայց չէ՞ որ ստրկական և բռնապետական պետությունը հազիվ թե կարողանա անել այն, ինչ ցանկանում է:

– Իհարկե:

– Ուրեմն նաև բռնապետական կարգերի օրոք հոգին դժվար թե անի այն, ինչ ցանկանա, եթե իհարկե խոսում ենք ողջ հոգու մասին: Մշտապես խթանվելով և բռնության ենթարկվելով կատաղի բոռի կողմից՝ այն լի է խռովքով ու զղջմամբ: e

– Բնականաբար:

– Իսկ բռնապետական պետությունն անհրաժեշտաբար կլինի հարու՞ստ, թե՞ աղքատ:

– Աղքատ:

– Ուրեմն նաև բռնապետական հոգին միշտ անհրաժեշտաբար աղքատ է ու դատարկ: 578

– Այդպես է:

– Եվ ինչ, մի՞թե այդպիսի պետությունը և այդպիսի մարդը անհրաժեշտաբար լցված չեն վախով:

– Այն էլ ինչպես:

– Ուրիշ ո՞ր պետության մեջ, քո կարծիքով, կգտնենք ավելի շատ տառապանք, արցունք, լաց և ողբ:

– Ոչ մի:

– Իսկ չե՞ս կարծում, որ այդ ամենը ավելի շատ է հենց բռնապետական մարդու մոտ, որը մոլեգնում է իր տենչանքների և կրքերի պատճառով:

– Իհարկե:

– Տեսնելով այս ամենը, կարծում եմ, դու որոշեցիր, թե նման պետությունը պետությունների մեջ ամենաթշվա՞ռն է: b

– Դա ճիշտ չէ՞:

– Շատ ճիշտ է: Բայց ի՞նչ կասես բռնապետական մարդու մասին, եթե տեսնես նրա մեջ նույնը:

– Նա բոլոր մյուսներից շատ ավելի դժբախտ է:

– Այստեղ արդեն իրավացի չես:

– Ինչու՞:

– Ես կարծում եմ, որ նա չէ ամենադժբախտը:

– Իսկ ո՞վ:

– Գուցե քեզ ավելի դժբախտ թվա այսպիսի մարդը:

– Ինչպիսի՞:

c – Նա, ով լինելով բռնապետական մարդ, չի կարողանա ապրել իր կյանքը որպես մասնավոր անձ, քանի որ նրան կպատուհասի բռնակալ դառնալու դժբախտությունը:

– Նախապես ասվածից եզրակացնում եմ, որ իրավացի ես:

– Այո, բայց մեզ չպիտի բավարարեն ընդհանուր բնորոշումները, այլ պետք է ամեն բան քննել հանգամանորեն: Չէ՞ որ քննությունը վերաբերում է ամենակարևորին՝ լավ և հոռի կյանքին:

– Անտարակույս:

d – Տե՛ս, ճի՞շտ եմ ասում արդյոք: Ինձ թվում է, տվյալ քննության մեջ հարկ է նկատի առնել հետևյալը:

– Ի՞նչը:

– Այն, թե ինչպիսին է բազում ստրուկներ ունեցող հարուստներից յուրաքանչյուրի կացությունը: Այդ մարդիկ նման են բռնակալներին, քանզի իշխում են շատերի վրա: Տարբերությունն այստեղ քանակի մեջ է:

– Այո:

– Դու գիտես, որ այդպիսի մարդիկ ապրում են անհոգ և չեն վախենում ծառաներից:

– Իսկ ինչու՞ պիտի վախենան:

– Չպիտի վախենան: Բայց ո՞րն է քո կարծիքով դրա պատճառը:

– Այն, որ ամեն առանձին մարդու օգնում է ողջ պետությունը:

e – Իրավացի ես: Իսկ եթե որևէ աստված հիսուն և ավելի ստրուկ ունեցող այդպիսի մարդուն, իր կնոջը, զավակներին,

ծառաներին ողջ ունեցվածքով հանդերձ տեղափոխի այնտեղ, ուր չեն լինի ազատ մարդիկ, որոնք կկարողանան օգնել նրան, քո կարծիքով՝ որքա՞ն ահ ու տագնապ նա կունենա իր, զավակների և կնոջ համար, որ չլինի թե ծառաները կործանեն նրանց:

– Միշտ վախի մեջ կլինի:

– Մի՞թե չի քծնի ստրուկներից ոմանց, չի տա բազում 579
խոստումներ և չի ազատի նրանց՝ առանց որևէ անհրաժեշտության: Նա կդառնա սեփական ծառաների շողոքորթը:

– Անհրաժեշտաբար, այլապես կկործանվի:

– Իսկ ի՞նչ կլինի, եթե նրա շուրջն աստված բնակեցնի բազում հարևանների, որոնք չեն հանդուրժում ուրիշի իշխանություն և, եթե այդպիսի մեկը նրանց ձեռքն ընկնի, կպատժեն ամենախիստ ձևով:

– Այդ դեպքում, եթե շուրջը միայն թշնամիներ են, նա b
կհայտնվի ծանրագույն վիճակի մեջ:

– Իսկ մի՞թե այդպիսի բանտում չէ բռնակալը, որի բնությունը մենք քննեցինք, չէ՞ որ նա լի է արտառոց վախերով ու կրքերով: Իր ժլատ հոգով միայն նա է պետության մեջ անզոր որևէ տեղ մեկնելու կամ գնալ տեսնելու այն, ինչ տենչում են
ազատ մարդիկ: Հիմնականում նա, ասես կին, ապրում է մե- c
կուսի և նախանձում է մյուս քաղաքացիներին, երբ նրանք հեռանում են երկրից և կարող են ինչ-որ լավ բան տեսնել:

– Հենց այդպես է:

– Բացի այդ, շատ ավելի վատ կլինի նրան, ով վատ է կազմակերպված ներքուստ, այսինքն նրան, ում դու հենց նոր կոչեցիր ամենից դժբախտ՝ բռնապետական մարդուն, եթե նա չապրի լոկ մասնավոր կյանքով, այլ ստիպված լինի ինչ-որ պատահականությամբ բռնակալ դառնալ և, չկարողանալով իշխել ինքն իրեն, փորձի իշխել ուրիշներին: Ասենք՝ ինչպես մարմնով հիվանդ մարդը, որը չկարողանալով տիրապետել
ինքն իրեն, ստիպված լինի պայքարել և մրցել ուրիշ մարդ- d
կանց հետ:

– Նրանք շատ նման են, Սոկրատես, դու իրավացի ես:

– Այդ դեպքում, սիրելի՛ Գլավկոն, այդպիսի վիճակը կատարյալ դժբախտություն է, և բռնակալի կյանքը ավելի ծանր է այն կյանքից, որը դու համարեցիր ամենածանրը:

– Իհարկե:

– Ու թեև ոմն կարող է չմտածել այդպես, սակայն ճշմարտությունն այն է, որ իսկական բռնակալը իրոք մեծագույն
e երեսպաշտության և ստրկության ստրուկն է, որը շողոքորթում է ամենահոռի մարդկանց: Նա չի կարող բավարարել իր տենչանքները, քանզի նրան շատ բան է պակասում, և հիրավի աղքատ է երևում մարդկանց, որոնք կարող են տեսնել իր ողջ հոգին: Ամբողջ կյանքում նա ապրում է վախի մեջ, դողում ու տառապում, քանզի նման է այն պետական կառույցին, որին իշխում է: Մի՞թե նման չէ:

– Շատ նման է:

580 – Մենք նաև կնշենք այդ մարդու մեջ այն գծերը, որոնց մասին արդեն խոսել ենք. որ իշխանությունն անհրաժեշտաբար դարձնում է նրան նախանձոտ, ուխտադրուժ, անարդար, ընկերամոռ և ամբարիշտ: Նա պաշտպանում ու սնուցում է ամեն չարիք, և այդ ամենը շատ ավելի է զարգանում նրա մեջ: Նա շատ դժբախտ կլինի և կդժբախտացնի իր մերձավորներին:

– Խելք ունեցող ոչ մի մարդ չի վիճարկի դա:

b – Այդ դեպքում՝ առա՛ջ: Հիմա արդեն մենք ունենք բոլոր հարցերի դատավոր: Որոշի՛ր ուրեմն, թե թագավորական կարգի, տիմոկրատիայի, օլիգարխիայի, դեմոկրատիայի և բռնապետության հինգ ներկայացուցիչներից ով է առաջին տեղում, երկրորդ տեղում և այլն:

– Դա հեշտ է որոշել: Ես դասակարգում եմ նրանց ըստ առաքինության և արատի, երջանկության և սրա հակադրության՝ այնպես, ինչպես դասակարգում են երգչախմբերը[2]:

– Ե՛կ մունետիկ վարձենք, կամ էլ ես ինքս կհայտարարեմ,
c որ Արիստոնի որդին որոշեց ամենից երջանիկը համարել

ամենաառաքինի և ամենաարդար մարդուն, իսկ այդպիսին է ամենաարքայական, իր վրա իշխել կարողացող մարդը: Ամենից դժբախտ նա համարում է ամենաարատավոր և անարդար մարդուն, որը ծայրահեղ բռնակալ է արդեն իր իսկ հանդեպ և այդպիսին է նաև պետության մեջ:

– Հայտարարի՛ր:

– Իսկ չավելացնե՞մ, որ այս ամենը կախված չէ նրանից՝ գաղտնի կմնա՞ն արդյոք այդ հատկությունները բոլոր մարդկանց և աստվածների համար:

– Ավելացրու:

– Լավ: Թո՛ղ դա լինի մեր առաջին ապացույցը: Երկրորդը d
կլինի հետևյալը... Եթե այն, իհարկե, ինչ-որ բան արժե:

– Ի՞նչ ապացույց է դա:

– Եթե պետությունը բաժանվում է երեք խավերի, ուրեմն յուրաքանչյուր մարդու հոգին նույնպես ունի երեք սկզբունք: Այստեղ, իմ կարծիքով, կա ևս մեկ ապացույց:

– Ի՞նչ ապացույց:

– Հետևյալը: Եթե հոգու մեջ կան երեք սկզբունքներ, ինձ թվում է, դրանց համապատասխանում են երեք հաճույքներ՝ յուրաքանչյուրին համապատասխանում է մեկը: Ճիշտ այդպես բաժանվում են նաև տենչանքները և դրանց իշխելու եղանակները:

– Ի՞նչ նկատի ունես:

– Մենք ասացինք, որ մի սկզբունքի միջոցով մարդը ճանաչում է, մյուսի միջոցով՝ բոցավառվում: Երրորդի համար,
քանի որ այն շատ բազմազան է, մենք չկարողացանք գտնել e
իրեն բնորոշ մի անուն, այլ կոչեցինք դրա մեջ եղած ամենամեծ և ամենաազդեցիկ հատկության անունով. տենչացող այն կոչեցինք ուտելիքի, խմիչքի, սիրային վայելքների և այս ամենի հետ կապված մյուս բաների նկատմամբ շատ ուժեղ ցանկության պատճառով: Դրամասիրությունը նույնպես պատկանում է տենչանքների այս տեսակին, որովհետև նշված
տենչանքների բավարարման համար անհրաժեշտ է դրամ: 581

– Ճիշտ է:

– Եթե այս սկզբունքի վայելքի և սիրո մասին ասեինք, որ դրանք միտված են շահին, այդկերպ կարտահայտեինք դրա գլխավոր առանձնահատկությունը, այնպես որ մեզ պարզ կլիներ, թե հոգու որ մասն ենք ակնարկում, և եթե մենք այն կոչեինք դրամասեր և շահամոլ, մի՞թե ճիշտ չէինք վարվի:

– Ինձ թվում է, այո:

– Եվ ինչ, մի՞թե չենք ասի, որ սրտոտությունը մշտապես միտված է ինչ-որ մեկին իշխելու, հաղթելու և համբավ ձեռք բերելու:

b – Անպայման:

– Այնպես որ սխալ չի՞ լինի կոչել այն հաղթասեր և փառասեր:

– Միանգամայն ճիշտ կլինի:

– Իսկ այն սկզբունքը, որի միջոցով մենք ճանաչու՞մ ենք: Չէ՞ որ ամենքին էլ պարզ է, որ սա միշտ միտված է ճշմարտության ճանաչողությանը, այսինքն՝ թե ինչ է ճշմարտությունը, իսկ դրամի և համբավի մասին չի մտածում:

– Ընդհանրապես չի մտածում:

– Նրան ուսումնատենչ և փիլիսոփա կոչելով՝ մենք ճի՞շտ ենք վարվում:

– Անշուշտ:

c – Բայց որոշ մարդկանց հոգիներում իշխում է մի սկզբունք, իսկ ուրիշների հոգիներում՝ այլ սկզբունք, ում մոտ ինչպես պատահի:

– Այդպես է:

– Ահա ինչու նախ ասենք, որ մարդիկ երեք տեսակ են՝ փիլիսոփաներ, փառամոլներ և շահամոլներ:

– Իհարկե:

– Եվ գոյություն ունի հաճույքի երեք տեսակ, որոնցից յուրաքանչյուրը համապատասխանում է այդ մարդկանցից յուրաքանչյուրին:

– Այո:

– Իսկ գիտե՞ս, որ եթե ցանկանաս այդ երեք տեսակի մարդկանց հերթով հարցնել, թե որ կյանքն է ամենից հաճելին, յուրաքանչյուրը ամենից շատ կգովի իրենը: Գործարարը կասի, որ շահույթի բերած հաճույքի համեմատ փառքի կամ d
իմացության հաճույքը ոչինչ չարժե, եթե, իհարկե, դրանցից էլ չհաջողվի շահ կորզել:

– Ճշմարիտ է:

– Իսկ փառասե՞րը: Մի՞թե նա չի կարծում, թե դրամի պատճառած հաճույքը նսեմ ինչ-որ բան է, իսկ իմացության պատճառածը, քանի որ իմացությունը փառք չի բերում, ծուխ և պատրանք է:

– Այդպես է:

– Իսկ ի՞նչ են փիլիսոփայի կարծիքով մյուս հաճույքները, e
եթե համեմատելու լինենք ճշմարտության ճանաչողության հետ, և ի՞նչ է այդ ճանաչողությունը, որին նա միշտ նվիրված է: Մի՞թե մնացյալ ամեն բան նրա կարծիքով շատ հեռու չէ հաճույքից: Մյուս հաճույքների կարիքը չունի, սակայն դրանցից անհնար է խուսափել, ահա ինչու դրանք անհրաժեշտ է կոչում:

– Դա պետք է լավ իմանալ:

– Իսկ երբ վեճի առարկա են դառնում այդ երեք տեսակի մարդկանց հաճույքներն ու կենսակերպը,– ոչ թե ավելի գեղեցիկի և ամոթալիի, ավելի լավի և վատի առումով, այլ՝ թե
ինչն է առավել հաճելի և ինչն է պակաս ցավալի,– ինչպե՞ս 582
իմանանք՝ որն է դրանցից ավելի ճշմարիտ:

– Դրան պատասխանել չեմ կարող:

– Իսկ դու մտածիր այսպես. ինչի՞ հիման վրա պետք է դատել, որպեսզի դատողությունը լինի ճիշտ: Մի՞թե ոչ փորձի, բանականության և փաստարկման: Թե՞ սրանցից ավելի լավ չափանիշ կա:

– Իհարկե ոչ:

– Այդ դեպքում տե՛ս. մեր նշած հաճույքների մեջ այդ երեք մարդկանցից ո՞վ է ամենափորձառուն: Շահամո՞ւն է արդյոք ավելի փորձառու ճշմարտության ճանաչողության մեջ, երբ

մարդը ճանաչում է ինքը ճշմարտությունը, այսինքն՝ թե ինչ-
b պիսին է այն, թե՞ փիլիսոփան է ավելի փորձառու շահ ստանալու հաճույքի մեջ:

– Փիլիսոփան շատ է տարբերվում շահամոլից: Չէ՞ որ պետք է մանկուց ճաշակած լինի երկուսից էլ: Շահամոլը, նույնիսկ եթե ի բնե կարող է ճանաչել գոյը, կարիք չունի ճաշակելու այդ հաճույքը և փորձից իմանալու դրա քաղցրությունը. ավելին, եթե ձգտում էլ է դրան, դա նրա համար հեշտ չէ:

– Այդ դեպքում փիլիսոփան երկու հաճույքների հարցում էլ մեծապես տարբեր է շահամոլից իր փորձով:

c – Մեծապես:

– Իսկ փառասերի՞ պարագայում: Մի՞թե փիլիսոփան ավելի անփորձ է փառքի ընձեռած հաճույքի մեջ, քան փառասերը՝ խորհրդածության հաճույքի:

– Սակայն փառքի արժանանում է ամեն ոք, եթե հաջողության է հասնում: Շատերն են գնահատում հարուստ, արի և իմաստուն մարդուն, այնպես որ գնահատված լինելու հաճույքի փորձ և իմացություն ունեն բոլորը, իսկ գոյի հայեցողություն տրված է ճաշակել բացառապես փիլիսոփային:

– Հետևաբար փորձառության շնորհիվ երեք տեսակի
d մարդկանցից հենց նրա դատողությունը կլինի լավագույնը:

– Իհարկե:

– Եվ միայն նա կունենա փորձառություն բանականության հետ մեկտեղ:

– Անկասկած:

– Բայց նաև գործիքը, որի շնորհիվ կարելի է դատել, պատկանում է ոչ թե շահամոլին կամ փառասերին, այլ փիլիսոփային:

– Ո՞րը:

– Մենք ասացինք, որ պետք է դատել ապացույցների միջոցով: Այդպես չէ՞:

– Այո:

– Ուրեմն դա է փիլիսոփայի հիմնական գործիքը:

– Անկասկած:

– Եթե դատի ենթակա բաների մասին դատենք ելնելով հարստությունից ու շահից, այդժամ շահամոլի գովեստը կամ e
կշտամբանքը անհրաժեշտաբար կլինեն ամենաճշմարիտ դատողությունները:

– Իհարկե:

– Իսկ եթե դատենք փառքի, հաղթանակի, արիության հիման վրա, մի՞թե ամենաճշմարիտը չեն լինի փառասերի և հաղթասերի դատողությունները:

– Ակնհայտ է:

– Իսկ եթե դատենք փորձի, բանականության և ապացույցի՞ շնորհիվ:

– Այդժամ անհրաժեշտաբար ամենաճշմարիտն այն է, ինչ 583
գովում է փիլիսոփան և խորհրդածության սիրահարը:

– Հաճույքների երեք տեսակից այն մեկը, որը համապատասխանում է հոգու ճանաչող մասին, կլինի ամենից ամբողջականը, և ում մեջ այդ մասն իշխում է, նրա կյանքը կլինի առավել հաճելի:

– Ինչպե՞ս չլինի: Գլխավոր գնահատողը՝ խոհեմ մարդը, այդպես է գնահատում իր կյանքը:

– Իսկ ո՞ր կյանքին և ո՞ր հաճույքներին նա կհատկացնի երկրորդ տեղը:

– Պարզ է, որ ռազմասեր և փառասեր մարդու հաճույքներին: Դրանք ավելի մոտ են առաջիններին, քան գործարարի հաճույքները:

– Վերջին տեղում, ըստ էության, շահամոլի հաճույքներն են:

– Իհարկե:

– Եվ այսպես, տեղի ունեցավ երկու մրցություն, և երկու b
անգամ էլ արդարը հաղթեց անարդարին: Երրորդը կլինի օլիմպիական մրցություն օլիմպիական փրկիչ Զևսի պատվին, և նկատի՛ր, որ բացառությամբ խոհեմ մարդու, մյուսների հաճույքներն իսկական չեն, այլ նման են ստվերապատկերների:

Ինձ թվում է, ես դա լսել եմ իմաստուններից ինչ-որ մեկից: Բայց չէ՞ որ դա կլիներ մեծագույն և ծանրագույն պարտություն:

– Լիովին: Բայց ի՞նչ նկատի ունես:

– Ես կգտնեմ դա, եթե օգնես ինձ քո պատասխաններով:

c – Հարցրու՛:

– Ասա ինձ, մի՞թե մենք չենք ասում, որ ցավը հակադիր է հաճույքին:

– Անշուշտ:

– Իսկ կա՞ ինչ-որ բան, որ ո՛չ հաճելի է, ո՛չ էլ ցավալի:

– Կա:

– Այդ երկուսի մեջտեղում կլինի այդ երկուսի նկատմամբ հոգու ինչ-որ հանգստությու՞ն: Թե՞ դա նկատի չունես:

– Ոչ, դա:

– Չե՞ս հիշում հիվանդների խոսքերը, թե ինչ են ասում հիվանդ ժամանակ:

– Ի՞նչ խոսքեր:

– Որ առողջ լինելուց ավելի հաճելի բան չկա: Բայց հիվանդությունից առաջ նրանք չէին նկատում՝ որքան հաճելի է դա:

d – Հիշում եմ:

– Դու լսե՞լ ես, թե որևէ ցավից տառապելով ինչպես են ասում, որ ամենից հաճելին ցավի դադարումն է:

– Լսել եմ:

– Եվ բազում ուրիշ դեպքերում, կարծում եմ, նկատում ես, որ մարդիկ, երբ ցավերի մեջ են, որպես ամենամեծ հաճույք նշում են ոչ թե ուրախությունները, այլ ցավի կտրվելն ու դադարը:

– Այդժամ դադարը գուցե դառնում է ավելի հաճելի և ցանկալի:

e – Իսկ երբ մարդը զրկվում է ուրախությունից, հաճույքին հետևող դադարը ցավալի է:

– Ըստ երևույթին:

– Հետևաբար, ինչպես ասացինք քիչ առաջ, երկուսի միջև գտնվողը՝ դադարը, և՛ ցավ է, և՛ հաճույք:

– Թերևս:

– Իսկ մի՞թե հնարավոր է, չլինելով դրանցից և ոչ մեկը, լինել երկուսն էլ:

– Կարծում եմ, ոչ:

– Ուրեմն հաճույքը, որ գոյանում է հոգում, և ցավը, երկուսն էլ շարժում են: Այդպես չէ՞:

– Այդպես է:

– Իսկ այն, ինչը ո՛չ ցավ է, ո՛չ էլ հաճույք՝ դադարը, մի՞թե 584
հենց նոր չհայտնվեց դրանց երկուսի մեջտեղում:

– Հայտնվեց:

– Ուրեմն ճի՞շտ է ցավի բացակայությունը համարել հաճույք, իսկ ցավ համարել հաճույքի բացակայությունը:

– Ոչ մի դեպքում:

– Հետևաբար դա տեղի չի ունենում, այլ թվում է այդպես. դադարը միայն այնժամ է հաճույք, եթե հնարավոր է համեմատել ցավի հետ, և ցավ է, եթե համեմատելի է հաճույքի հետ: Սակայն ճշմարիտ հաճույքի հետ այդ պատրանքը ընդհանուր ոչինչ չունի, քանի որ առողջ ոչ մի բան չկա նրանում, այն սոսկ խաբկանք է:

– Մեր խոսքից դա է բխում:

– Քննիր այն հաճույքները, որոնց չի նախորդում ցավը, որ b
չմտածես, թե հիմա էլ բնությունն է արել այնպես, որ հաճույքը ցավի դադարն է, իսկ ցավը՝ հաճույքի:

– Որտե՞ղ և ինչպիսի՞ն են հաճույքները, որոնք նկատի ունես:

– Դրանք շատ են և բազմազան, բայց եթե ցանկանում ես հասկանալ դա, վերցրու հաճույքները, որոնք կապված են հոտառության հետ: Մենք զգում ենք դրանք հանկարծակի, առանց նախորդող ցավի, իսկ երբ դրանք դադարում են, ցավ չեն թողնում:

– Շատ ճիշտ է:

1915.info

c – Հետևաբար մենք չենք հավատա, թե ցավի դադարը հաճույք է, իսկ հաճույքի դադարը՝ ցավ:

– Այո, չենք հավատա:

– Սակայն հաճույքները, որոնք զգում է հոգին մարմնի միջոցով,– իսկ դրանք գրեթե ամենաուժեղն են ու բազմաթիվ,– պատկանում են այդ տեսակին և գոյանում են ցավի դադարից:

– Այդպես է:

– Նաև ապագա հաճույքների և ցավերի առումո՞վ է այդպես, երբ մենք նախապես ուրախություն կամ ցավ ենք զգում:

– Այո, նաև դրանց:

d – Իսկ գիտե՞ս, թե ինչ է դա և ինչ է շատ նման:

– Ինչի՞:

– Կարծում ես, բնության մեջ գոյություն ունի վերև, ներքև և մեջտե՞ղ:

– Իհարկե:

– Արդ, եթե ինչ-որ մեկին ներքևից տեղափոխում են մեջտեղ, չի՞ մտածում արդյոք նա, որ բարձրանում է վեր, և ոչ այլուր: Իսկ կանգնելով մեջտեղում և տեսնելով՝ որտեղից է եկել՝ չի՞ կարծի, թե գտնվում է վերևում, և ոչ ուրիշ ինչ-որ տեղ: Չէ՞ որ նա չի տեսել ճշմարիտ վերևը:

– Ճնսը վկա, այդպիսի մարդը չի կարող մտածել այլ կերպ:

e – Բայց եթե տեղափոխվի ետ, կկարծի, թե շարժվում է ցած, և ճիշտ կկարծի:

– Ինչպե՞ս չէ:

– Այդ ամենը կպատահեր նրան, որովհետև նա չունի իսկական վերևի, մեջտեղի և ներքևի փորձառություն:

– Ակնհայտ է:

– Կզարմանա՞ս, եթե շատ ուրիշ հարցերի առնչությամբ ճշմարտությանն անհաղորդները չունենան ողջամիտ կարծիքներ: Իսկ հաճույքի, ցավի և դրանց մեջտեղում գտնվող վիճակի հանդեպ մարդիկ այնպես են տրամադրված, որ երբ շարժվում են դեպի տառապանքը, նրանց իսկապես թվում է,

թե իրենք տառապում են, բայց երբ ցավից շեղվում են դեպի 585
միջանկյալ վիճակը, շատ են հակված մտածելու, թե դա բե-
րում է բավարարում և հաճույք: Ասես մոխրագույնը համեմա-
տում են սևի հետ՝ չիմանալով սպիտակը: Այդպես են խաբ-
վում՝ համեմատելով տառապանքը դրա բացակայության հետ
և չիմանալով, թե ինչ է հաճույքը:

– Զևսը վկա, չեմ զարմանա: Ավելի կզարմանայի, եթե
ամեն ինչ լիներ այլ կերպ:

– Մտածիր հետևյալի մասին. սովը, ծարավը և նման ուրիշ
բաները մի՞թե մեր մարմնում եղած դատարկության վիճակ- b
ներ չեն:

– Եվ ի՞նչ:

– Իսկ չիմացությունը և անխոհեմությունը մի՞թե հոգու դա-
տարկության վիճակներ չեն:

– Այն էլ ինչպես:

– Հետևաբար, նշված դատարկությունը մարդը կարող է
լցնել սնունդով կամ խելքով:

– Իհարկե:

– Իսկ ի՞նչը կլիներ առավել ճշմարիտ՝ լցնել առավել իրա-
կան գոյությամբ, թե՞ պակաս իրական գոյությամբ:

– Պարզ է, որ առավել իրական գոյությամբ:

– Իսկ գոյի ո՞ր սեռերն ես համարում առավել հաղորդա-
կից զուտ գոյությանը: Հացը, խմիչքը, համեմունքը, ամեն տե-
սակ կերակուրնե՞րը, թե՞ դա կլինի ճշմարիտ կարծիքի, իմա-
ցության, խելքի կամ ամենայն առաքինության ինչ-որ տեսակ:
Դատի՛ր այսպես. այն, ինչը հաղորդակից է նույնականին, ան- c
մահին և ճշմարտությանը, ինքը նույնական է և գոյանում է
որպես նույնական: Չե՞ս համարում սա ավելի ճշմարիտ, քան
այն, ինչը երբեք նույնական չէ, հաղորդակից է մահկանացու-
ին, ինքն այդպիսին է և գոյանում է դրա մեջ:

– Հավետ նույնականը շատ ավելի իրական է:

– Իսկ ոչ նույնականի էությունը մի՞թե ավելի հաղորդակից
չէ գոյությանը, քան իմացությանը:

– Բնավ:

– Եվ ի՞նչ: Գուցե ճշմարտությա՞նը:

– Ոչ:

– Իսկ եթե պակաս չափով է հաղորդակից ճշմարտությանը, մի՞թե պակաս հաղորդակից չէ գոյությանը:

– Անհրաժեշտաբար:

d – Ուրեմն, մարմնի ամեն խնամք պակա՞ս հաղորդակից է ճշմարտությանն ու գոյությանը, քան հոգու խնամքը:

– Շատ ավելի պակաս:

– Չե՞ս կարծում, որ նույն հարաբերությունը տեղի ունի նաև հենց մարմնի և հենց հոգու համեմատության մեջ:

– Իհարկե:

– Արդ, այն, ինչը լցվում է առավել իրականով և ինքը առավել իրական է, լցվում է ավելի՞, քան այն, ինչը լցվում է պակաս իրականով և ինքը պակաս իրական է:

– Ինչպե՞ս չէ:

– Եթե հաճելի է լցվել ի բնե պատշաճ բաներով, ուրեմն առավել իրական բանով լցվելը հիրավի կուրախացներ ճշմա-
e րիտ հաճույքով, իսկ պակաս իրականը կլցներ պակաս ճշմարիտ ու հաստատուն կերպով և կպատճառեր պակաս հավաստի և ճշմարիտ հաճույք:

– Անհրաժեշտաբար:

– Խոհեմության ու առաքինության մեջ անփորձները,
586 խրախճանքի և նման այլ հավաքների սիրահարները իջնում են ներքև, իսկ հետո նորից մեջտեղ. այդպես նրանք շրջում են ողջ կյանքի ընթացքում: Երբևէ տեսած չլինելով իսկապես վեհը և չբարձրանալով վեր՝ իրականում չեն լցվում իրականով, չեն ճաշակում հավաստի և մաքուր հաճույքը: Անասունի նման նրանք էլ միշտ նայում են վար՝ գլուխը խոնարհած հողին և սեղաններին. նրանք արածում են, լափելով ու խառնակվելով, ագահությունից մեկը մյուսին աքացի է տալիս և հարվածում երկաթյա եղջյուրներով ու սատակում միմյանց
b սմբակների հարվածներով, և դրա պատճառը անկշտությունն

է, քանզի իրական որևէ բանով չեն հագեցնում ո՛չ իրենց իսկական էությունը, ո՛չ էլ ստամոքսը:

– Ասես մի գուշակ, Սոկրատես, պատկերում ես մեծամասնության կյանքը,– ասաց Գլավկոնը:

– Իսկ մի՞թե հաճույքներին անհրաժեշտաբար չեն միախառնվում նաև տառապանքները. թեպետ դրանք ճշմարիտ հաճույքի սոսկ աղոտ պատկերներն են, որոնք դրա հետ համեմատելիս ավելի դժգույն են, սակայն երևում են ազդեցիկ, մարդկանց հասցնում են մոլեգնության, լցնում նրանց կրքով c
և առաջ բերում գժտություններ: Ինչպես ասում է Ստեսիքորոսը, այդպես Տրոյայի պատերի տակ կռվում էին սոսկ Հեղինեի ուրվականի համար՝ չիմանալով ճշմարտությունը[3]:

– Անհրաժեշտաբար պիտի որ այդպես եղած լինի:

– Եվ ինչ, մի՞թե դա հետևանք չէ մեր ներքին սրտոտության. մարդն այդպես է վարվում նախանձից, որը բխում է փառասիրությունից, կամ բռնություն է գործում մրցակցելով և կամ էլ ցասման մեջ է ընկնում, ինչը վատ բնավորության հետևանք է, երբ անխոհեմաբար և անմիտ կերպով վազում է փառքի և հաղթանակի ետևից՝ դառնալով սրտոտ: d

– Դա էլ անհրաժեշտաբար այդպես է:

– Եվ ինչ, կհանդգնե՞նք ասել, որ անգամ այնտեղ, ուր իշխում են ընչաքաղցության և մրցակցության տենչանքները, եթե դրանք հետևում են իմացությանն ու բանականությանը և դրանց ընկերակցությամբ հետամուտ են հաճույքների, որոնք քննում է խոհեմությունը, հասնում են ամենաճշմարիտ հաճույքներին, որովհետև վերջիններս հասու են ճշմարտության հետևորդներին: Դրանք հատուկ հաճույքներ են, քանզի յուրաքանչյուրի համար լավագույնն այն է, ինչն ամենից շատ է e
համապատասխանում նրան:

– Այո, այն, ինչն ամենից շատ է համապատասխանում:

– Եթե ողջ հոգին հետևում է իր փիլիսոփայական մասին և չի պառակտվում, ապա յուրաքանչյուր մասի համար հնարավոր է ոչ միայն մնացյալ ամեն բան անել արդար կերպով,

587 այլև գտնել իրեն հատուկ լավագույն և հնարավորինս ամենաճշմարիտ հաճույքները:

– Իհարկե:

– Իսկ եթե հաղթի մեկ ուրիշ մաս, անհնար կլինի գտնել իրեն հատուկ հաճույքը, և մյուս մասերը ստիպված կլինեն հետևել օտար և ոչ ճշմարիտ հաճույքներին:

– Այդպես է:

– Եվ որքան ավելի հեռանան փիլիսոփայությունից և բանականությունից, այնքան ավելի շատ դա տեղի կունենա:

– Այո, ավելի շատ:

– Իսկ ամենից շատ բանականությունից հեռանում է այն, ինչը հեռանում է օրենքից և կարգից:

– Պարզ է:

– Ըստ երևույթին, բանականությունից ամենից շատ հեռանում են սիրային և բռնապետական տենչանքները:

– Այն էլ որքան:

b – Իսկ ամենից մոտ գտնվում են արքայական և համակարգված տենչանքները:

– Այո:

– Ամենից շատ իր ճշմարիտ և իրեն հատուկ հաճույքից հեռանում է բռնակալը, իսկ ամենից մոտն է արքան:

– Անհրաժեշտաբար:

– Ուրեմն բռնակալը կապրի հաճույքներից զուրկ, իսկ արքան՝ հաճույքներով լի կյանք:

– Անխուսափելիորեն:

– Իսկ գիտե՞ս, թե որքան ավելի պակաս են հաճույքները բռնակալի, քան արքայի կյանքում:

– Ինքդ ասա:

– Ինչպես երևում է, գոյություն ունեն հաճույքի երեք տեսակներ. դրանցից մեկը ճշմարիտ է, իսկ երկուսը՝ կեղծ: Բռնակալը, խուսափելով օրենքից և բանականությունից,
c հայտնվում է կեղծ հաճույքների տարածքում, որտեղ նրան թիկնապահ են ծառայում ստրկական հաճույքները, իսկ թե

որքան պակասեցին նրա հաճույքները, այնքան էլ դյուրին չէ ասել: Գուցե ասենք այսպես:

– Ինչպե՞ս:

– Օլիգարխիական մարդուց հետո բռնակալը երրորդ տեղում է, իսկ նրանց մեջտեղում դեմոկրատն է:

– Այո:

– Եվ ճշմարիտ հաճույքի մասին բռնակալը կունենա դրա երրորդ աղոտ պատկերը, եթե, իհարկե, ճիշտ է նախապես ասվածը:

– Այդպես է:

– Մինչդեռ օլիգարխիական մարդը թագավորական մարդուց սկսած երրորդն է, եթե նույնական համարենք թագավորական և արիստոկրատական մարդկանց: d

– Այո, երրորդն է:

– Հետևաբար բռնակալի հաճույքները ինն անգամ պակաս են ճշմարիտ հաճույքներից:

– Թվում է, այո:

– Ուրեմն այդ աղոտ պատկերը կլիներ քառակուսի հարթություն, որը թվով կարտահայտեր բռնակալի հաճույքի մեծությունը:

– Իհարկե:

– Իսկ եթե վերցնենք երկրորդ և երրորդ չափը, կերևա, թե որքան հեռու է բռնակալը արքայից:

– Կերևա նրան, ով գիտի հաշվել:

– Իսկ եթե ոմն հակառակ եղանակով սահմանի, թե որքան հեռու է արքան բռնակալից հաճույքի իրականության առումով, ապա, ավարտելով բազմապատկումը, կհայտնաբերի, որ արքայի կյանքը յոթ հարյուր քսանինը անգամ ավելի հաճելի է, իսկ բռնակալի կյանքը՝ նույնքան անգամ ծանր: e

– Նշելով արդար և անարդար մարդու և նրանց հաճույքի 588
և տառապանքի միջև եղած տարբերությունը՝ զարմանալի հաշվարկ կատարեցիր:

– Բայց այդ թիվը ճշմարիտ է և համապատասխանում է

նրանց կյանքերին, քանի որ գիշերն ու ցերեկը, ամիսներն ու տարիները համապատասխանում են դրանց[4]:

– Այո, համապատասխանում են:

– Եթե անգամ հաճույքի առումով լավ և բարի մարդը այդքան բարձր է կանգնած հոռի և անարդար մարդուց, որքա՞ն ավելի բարձր կլինի նա իր կյանքի բարեկարգությամբ, գեղեցկությամբ և առաքինությամբ:

b – Անչափ, Զևսը վկա:

– Լավ: Այժմ, երբ խոսեցինք այդ մասին, վերադառնանք նախապես ասվածին ու տեսնենք, թե ինչպես հանգեցինք սրան: Ասվեց, որ լրիվ անարդար մարդուն շահավետ է լինել անարդար, եթե իրեն համարում են արդար: Թե՞ այդպես չէր:

– Այդպես էր:

– Արդ, քննենք դա, մանավանդ որ համաձայնության եկանք արդար և անարդար գործունեության նշանակության վերաբերյալ:

– Ինչպե՞ս քննենք:

– Մենք կստեղծենք հոգու պատկեր, որպեսզի այդ պնդման հեղինակը տեսնի, թե ինչ է ասում:

c – Ինչպիսի՞ն է այդ պատկերը:

– Այն նման է հին հրեշներին, որոնց ծնունդ են տալիս առասպելները՝ Քիմեռներին, Սկիլլեին և Կերբերոսին: Դրանց և շատ ուրիշ պատկերների մասին ասում են, որ նրանց մեջ միավորվել են բազում տարբեր տեսակներ:

– Այո, ասում են:

– Այդ դեպքում ստեղծիր բազմադեմ և բազմագլուխ գազանի պատկեր: Նա ունի ընտանի և վայրի գազանների գլուխներ, որոնք աճում են շուրջանակի, կարող է փոխել դրանք և ստեղծել այդ ամենն իր միջից:

d – Դա մեծ վարպետի գործ կլիներ: Բայց քանի որ ավելի հեշտ է կերտել բառերից, քան մոմից ու նման ուրիշ բաներից, ընդունենք, որ այդպիսի պատկերն արդեն ստեղծված է:

– Ստեղծի՛ր նաև առյուծի պատկեր և մարդու պատկեր,

ընդ որում առաջինը կլինի շատ ավելի մեծ, իսկ երկրորդը՝ շատ ավելի փոքր:

– Դա հեշտ է. արդեն ստեղծեցի:

– Մենք ունենք երեք պատկեր, բայց դու միավորի՛ր դրանք, որպեսզի սերտաճեն իրար:

– Սերտաճեցին:

– Հիմա դրսից հաղորդիր նրանց մեկ ընդհանուր տեսք՝ մարդու տեսք, որպեսզի կարողանա տեսնել նա, ով չի տեսնում ներսում եղածը և տեսնում է միայն արտաքին թաղանթը: e

– Պատրաստ է:

– Իսկ նրան, ով կպնդի, թե այդ մարդուն շահավետ է անարդարություն գործել, իսկ արդար վարվելը շահավետ չէ, մենք կպատասխանենք, որ այդկերպ նա նկատի ունի ոչ այլ ինչ, եթե ոչ այն, որ օգտակար է սնել բազմագլուխ գազանին, հզորացնել առյուծին և այն ամենը, որ առնչվում է առյուծին, իսկ մարդուն սովահար անել և տկարացնել, որպեսզի դրանք կարողանան տանել մարդուն ուր ցանկանան, և նա ստիպ- 589
ված չլինի դրանց բարեկամություն սովորեցնել, այլ թողնի, որ կրծեն, կռվեն ու հոշոտեն իրար:

– Հենց այդպես կասի նա, ով գովերգում է անարդարությունը:

– Իսկ նա, ով ճանաչում է արդարության օգտակարությունը, պնդում է, թե պետք է գործել և ասել այն, ինչի շնորհիվ ներքին մարդը կկարողանա տիրապետել այն մյուսին, և հոգ b
կտանի բազմագլուխ հրեշի մասին, ինչպես հողագործը, խնամելով և մշակելով նուրբը և խանգարելով վայրի որակների զարգացմանը: Նա դաշինք է կնքում առյուծի հետ և նրա հետ միասին հոգ է տանում բոլոր մասերի մասին՝ դրանք բարեկամ դարձնելով միմյանց և իրեն:

– Իհարկե, դա նկատի ունի նա, ով գովում է արդարությունը: c

– Բոլոր դեպքերում իրավացի է նա, ով փառաբանում է արդարությունը, իսկ նա, ով գովերգում է անարդարությունը,

ստում է: Քննելով այս ամենը հաճույքի, փառքի և օգուտի տեսանկյունից՝ իրավացի կլինի նա, ով մեծարում է արդարությունը, իսկ նա, ով պարսավում է արդարությունը, ասելու ողջամիտ ոչինչ չունի և պարսավում է սոսկ պարսավելու համար:

– Ինձ թվում է, նա ոչինչ չի հասկանում:

– Մենք զգուշորեն կհամոզենք նրան,– չէ՞ որ նա սխալվում է ակամա,– և կհարցնենք. «Ո՛վ երանելի, մի՞թե գեղեցիկին և
d ամոթալիին վերաբերող կարծիքները չեն ծագել հենց այսկերպ: Երբ սեփական բնության գազանակերպ մասը ենթարկում են մարդկայինին կամ ավելի շուտ՝ աստվածայինին, դա հրաշալի է, իսկ երբ հնազանդ մասը ստրկացած է վայրի մասին, ամոթալի է և այլանդակ»: Կհամաձայնվի՞, ի՞նչ ես կարծում:

– Այո, եթե համոզվի:

– Այդ դատողությունից ելնելով՝ արդյո՞ք որևէ մեկին օգուտ կբերի անարդար եղանակով ձեռք բերված ոսկին: Չէ՞ որ այդժամ պատահում է հետևյալը. նա կվերցնի ոսկին և միաժամանակ վատագույն մասով կստրկացնի իր լավագույն մա-
e սը: Իսկ եթե ոսկու դիմաց ստրկության տա իր որդուն կամ դստերը, այն էլ վայրենի և հոռի մարդկանց, դրանով ոչինչ չի շահի անգամ շատ ոսկի ստանալու դեպքում: Եթե նա անգթորեն ստրկացնում է իր ամենաաստվածային մասը և ենթարկում ամենաանաստվածայինին ու ամենաստորին, մի՞թե նողկալի չէ նա, և մի՞թե ձեռք բերված վարձը չի տանում դե-
590 պի ավելի սոսկալի կործանման, քան Էրիփիլեին[5], որն ապարանջան ստացավ իր ամուսնու հոգու դիմաց:

– Այո, ավելի նողկալի է, ե՛ս պատասխանեմ զրուցակցիդ փոխարեն,– ասաց Գլավկոնը:

– Իսկ չե՞ս կարծում, որ անժուժկալությունը հնուց ի վեր պարսավվել է հենց այն պատճառով, որ գլուխ է բարձրացնում սարսափելի և բազմակերպ գազանի՝ անսանձ մարդու մեջ:

– Այդպես է:

– Իսկ ինքնահավանությունն ու փնթփնթանությունը մի՞թե b
պարսավվում են ոչ այն ժամանակ, երբ անչափ լարվում է մարդու առյուծակերպ և օձակերպ կողմը:

– Իհարկե:

– Մեղկությունն ու ալարկոտությունը քննադատվում են թուլության ու սանձարձակության պատճառով, քանի որ մարդու մեջ արմատավորում են վեհերոտություն:

– Ինչպե՞ս չէ:

– Ստրկամտությունն ու անազատությունը առաջ են գալիս, երբ սրտոտ մասը ենթարկում է ամբոխակերպ գազանին, որը, լինելով դրամատենչ և անկուշտ, փոքրուց սովորում է ստրկացնել այդ մասը՝ առյուծից վերածվելով կապկի:

– Իհարկե այդպես է: c

– Քո կարծիքով, ինչու՞ են արհեստներն ու ձեռագործ զբաղմունքները քննադատության ենթարկվում: Կնշե՞նք արդյոք ուրիշ պատճառ, բացի նրանից, որ մարդու լավագույն մասը, տկարանալով և չկարողանալով իշխել իր միջի գազաններին, սկսում է ծառայել նրանց: Միայն դա գիտի անել:

– Թերևս:

– Որպեսզի նաև այդպիսի մարդը ղեկավարվի սկզբունքով, d
որով ղեկավարվում է լավագույն մարդը, մենք կասենք, որ նա պիտի լինի լավագույն մարդու ստրուկը, որի մեջ իշխող մասն աստվածայինն է: Նա չպիտի ստրկանա ի վնաս ինքն իրեն, ինչպես կարծում է Թրասիմաքոսը[6] բոլոր ստրկացածների մասին, այլ՝ ամեն մարդու համար ավելի լավ է ղեկավարվել աստվածայինով ու խոհեմությամբ, հատկապես եթե ունես այն ներսումդ որպես սեփական մի բան, իսկ եթե ոչ, թող այն ներգործի դրսից, որպեսզի լինենք հնարավորինս նման ու բարեկամ և ղեկավարվենք միևնույն սկզբունքով:

– Ճիշտ է:

– Ակնհայտ է նաև, որ բոլոր քաղաքացիների դաշնակից e
հանդիսացող օրենքն ունի նույն նպատակը: Այդպիսին է նաև

իշխանությունը զավակների հանդեպ, քանզի նրանք, քանի դեռ ոտքի չենք կանգնեցրել, չեն կարող լինել ազատ, ինչպես
591 պետությունը, որը մենք բարեկարգում ենք և որին, զարգացնելով մեր մեջ լավագույնը, պահապան և առաջնորդ ենք նշանակում նրանց մեջ եղած լավագույն մասին: Միայն դրանից հետո ենք նրանց ազատ արձակում:

– Ակնհայտ է:

– Գլավկո՛ն, բայց ինչպե՞ս և ի՞նչ հիմունքով կասեինք, թե շահավետ է գործել անարդար, սանձարձակ և ամոթալի, որի արդյունքում մարդ դառնում է ավելի վատը, թեկուզ և ձեռք է բերում շատ դրամ և ուրիշ կարողություն:

– Ոչ մի հիմունք չկա:

– Իսկ ի՞նչ շահ անարդար մարդուն, եթե նրա արարքները
b մնան քողարկված, և նա չհատուցի դրանց համար: Չէ՞ որ թաքնվողն ավելի վատն է դառնում: Իսկ նա, ով չի թաքցնում իր արարքները և պատժվում է, սանձում ու չափավորում է իր գազանակերպ մասը և ազատագրում հեզ մասը, և նրա ամբողջ հոգին, որ այլևս ուղղված է լավագույն բնությանը և ձեռք է բերում խոհեմություն ու արդարություն, համակվում է բանականությամբ և ավելի արժեքավոր դառնում, քան մարմինը,– թեկուզ և սա ձեռք է բերում ուժ, գեղեցկություն և
c առողջություն,– որքան որ ընդհանրապես հոգին արժեքավոր է մարմնից:

– Միանգամայն ճշմարիտ է:

– Եվ խելամիտ մարդը կապրի այնպես, որ իր բոլոր ջանքերն ուղղի հենց դրան. նախ կգնահատի իմացությունները, որոնք այդպիսին են դարձնում իր հոգին, իսկ մյուս իմացությունները կարհամարհի:

– Պարզ է:

– Այնուհետև. իր մարմնի վիճակն ու սնունդը նա չի ենթարկի գազանակերպ և անիմաստ հաճույքին՝ դրա ուղղությամբ շրջելով իր ողջ գոյությունը: Ուշք չի դարձնի առողջությանը, չի ցանկանա դառնալ ուժեղ, առողջ կամ գեղեցիկ, եթե

դա չի նպաստում խոհեմությանը: Նա կհասկանա, որ կարող է կազմակերպել մարմնի ներդաշնակությունը հանուն հոգու ներդաշնակության:

– Իհարկե, եթե ցանկանում է իսկապես կիրթ լինել: d

– Նաև ունեցվածքի հարցում կլինի չափավոր և ներդաշնակ: Չի՞ տրվի արդյոք բազմության և ամբոխի մոլուցքին և չի՞ սկսի ավելացնել իր ունեցվածքը՝ բախվելով բազում չարիքների:

– Կարծում եմ, այո:

– Կհարգի և կպահպանի իր ներքին կարգը, կանի այնպես, որ չլինի թե առատությունից կամ, հակառակը, դրա պակասից ինչ-որ բան խախտվի. այդպես նա կղեկավարի իր ծախսն ու եկամուտը: e

– Իհարկե:

– Բայց նաև պատիվների հարցում կանի նույնը. չի մերժի դրանք և սիրով կճաշակի, եթե համարի, որ պատիվներն իրեն ավելի առաքինի են դարձնում: Սակայն եթե դրանք խախտեն նրա ձեռք բերած համաձայնության վիճակը, կխուսափի 592
դրանցից թե՛ մասնավոր, թե՛ հանրային կյանքում:

– Բայց եթե հոգ է տանում դրա մասին՝ նա չի ուզի զբաղվել պետական գործերով:

– Շունը վկա, շատ կուզի, բայց իր պետության մեջ, իսկ հայրենիքում՝ գուցե և ոչ, եթե, իհարկե, այդպես չպատվիրի աստվածային ճակատագիրը:

– Հասկանում եմ: Դու նկատի ունես մեր քննած պետությունը, որ գտնվում է դատողությունների ոլորտում, իսկ երկրի վրա, կարծում եմ, ոչ մի տեղ չի հանդիպում:

– Բայց գուցե երկնքում գոյություն ունի դրա օրինակը, որ b
հասանելի է յուրաքանչյուրին, ով ցանկանում է տեսնել այն և բնակվել նրանում: Եվ կարևոր չէ՝ որտեղ գոյություն ունի այդպիսի պետություն և գոյություն ունի արդյոք երկրի վրա: Այդ մարդը կզբաղվեր այս և միայն այս պետության գործերով:

– Թերևս:

ԳԻՐՔ ՏԱՍՆԵՐՈՐԴ

595 – Ես շատ ուրիշ բաներից էլ տեսնում եմ, որ մենք ճիշտ կազմակերպեցինք մեր պետությունը և հատկապես ճիշտ վարվեցինք պոեզիայի հետ:

– Ի՞նչ նկատի ունես:

– Պոեզիան ոչ մի դեպքում չպետք է թույլատրվի, քանի որ նմանակող է: Իմ կարծիքով, պոեզիայի անթույլատրելիությունը հիմա ավելի հասկանալի դարձավ հոգու յուրաքանչյուր տեսակը առանձին-առանձին քննելուց հետո:

b

– Ինչպե՞ս:

– Խոսքը մեր մեջ,– միայն թե չմատնեք ինձ ողբերգու պոետներին և բոլոր մյուս նմանակողներին,– պոեզիան խոց է բոլոր ունկնդիրների մտքի համար, որոնք միջոց չունեն հասկանալու, թե ինչ է դա:

– Ի՞նչ նկատի ունես:

– Ստիպված եմ ասել, թեպետ Հոմերոսի հանդեպ մանկուց տածած սերն ու ակնածանքը խանգարում են ինձ խոսել: Երևում է, նա բոլոր այդ հրաշալի ողբերգակների առաջին ուսուցիչն ու առաջնորդն է: Սակայն չի կարելի գնահատել մարդուն առավել, քան ճշմարտությունը, այնպես որ ասում եմ այն, ինչ ասում եմ:

c

– Իհարկե:

– Ուրեմն լսիր, իսկ ավելի լավ է՝ պատասխանիր:

– Հարցրու՛:

– Կարո՞ղ ես ասել ինձ՝ ինչ բան է նմանակումը: Ինքս այնքան էլ լավ չեմ հասկանում, թե դա ինչ է:

– Որեմն ես նույնպես չեմ կարող հասկանալ:

– Ամենևին զարմանալի չէ, քանի որ շատ դեպքերում, նախքան սրատեսների տեսնելը, ամեն բան առաջինը տես- 596
նում են կույրերը:

– Այդպես է: Սակայն քո ներկայությամբ ես ոչինչ չէի ասի, անգամ եթե դա ինձ ավելի հասկանալի դառնար: Ինքդ նայիր:

– Կուզես՝ սկսենք հետազոտությունն այստեղից, ընդ որում հավատարիմ մնալով մեր սովորական մեթոդին: Իրերի յուրաքանչյուր բազմության համար, որոնք կոչում ենք մեկ անունով, մենք սովորաբար հաստատում ենք միայն մեկ տեսակ: Հասկանու՞մ ես:

– Հասկանում եմ:

– Այժմ վերցնենք որևէ բազմություն: Դիցուք, եթե կուզես, մահճակալներն ու սեղանները շատ են: b

– Իհարկե:

– Սակայն դրանց գաղափարներն ընդամենը երկուսն են. մեկը մահճակալի գաղափարն է, իսկ մյուսը՝ սեղանի:

– Այո:

– Արդ, մենք ասում ենք, որ վարպետը պատրաստում է այս կամ այն իրը՝ հայելով դրա գաղափարը: Մեկը պատրաստում է մահճակալներ, մյուսը՝ սեղաններ, որոնց կարիքը մենք ունենք, և այդպես շատ ուրիշ բաներ: Սակայն վարպետներից ոչ ոք չի ստեղծում հենց գաղափարը: Եվ ինչպե՞ս պիտի ստեղծեր:

– Ոչ մի կերպ:

– Բայց տե՛ս, մի՞թե վարպետ կկոչես նաև այսպիսի մարդուն:

– Ինչպիսի՞: c

– Նրան, ով ստեղծում է այն ամենը, ինչ անում է արհեստավորներից յուրաքանչյուրը:

– Դու խոսում ես զարմանալիորեն հմուտ մարդու մասին:

– Այո, բայց մի՛ շտապիր: Այդ արհեստավորը ոչ միայն կարող է պատրաստել տարբեր բաներ, այլև ստեղծում է այն

ամենը, որ աճում է հողից, առաջ է բերում բոլոր կենդանի էակներին, այդ թվում ինքն իրեն, նաև երկիրը, երկինքը, աստվածներին, այն ամենը, ինչ երկնքում է, և այն ամենը, որ երկրի տակ է՝ Հադեսում:

d – Զարմանալի վարպետի մասին ես խոսում:

– Չե՞ս հավատում: Այդ դեպքում ասա, մի՞թե ընդհանրապես չկան այդպիսի վարպետներ, թե՞ կարելի է ինչ-որ կերպ դառնալ այդ ամենի արարիչը, բայց միայն մի եղանակով: Չե՞ս նկատում, որ ինքդ էլ կարող էիր ինչ-որ կերպ անել այդ ամենը:

– Ինչպե՞ս:

– Դա դժվար չէ, ընդ որում դա անում են հաճախ և արագ: Եթե ուզում ես առավել արագ, վերցրու հայելին և պտտիր բոլոր կողմերում. իսկույն կստեղծես արեգակը, երկնքում եղա-

e ծը, երկիրը, ինքդ քեզ, բույսերը և այն ամենը, ինչի մասին խոսեցինք:

– Այո, բայց այդ բոլորը միայն պատկերներ են, և ոչ ճշմարիտ իրեր:

– Շատ լավ: Քննությունը սկսեցիր արժանի ձևով: Ինձ թվում է, գեղանկարիչը նույնպես այդպիսի վարպետ է: Թե՞ ոչ:

– Ինչպե՞ս չէ:

– Բայց դու կասես, որ նա իրականում չի ստեղծում այն, ինչ ստեղծում է: Թեպետ ինչ-որ իմաստով նա էլ է մահճակալ ստեղծում: Այդպես չէ՞:

– Այո: Բայց դա սոսկ պատրանք է:

– Իսկ հյու՞սնը: Մի՞թե դու հենց նոր չասացիր, որ նա

597 ստեղծում է ոչ թե գաղափարը,– քանզի, մեր կարծիքով, հենց դա էլ կլիներ մահճակալ,– այլ ինչ-որ մահճակալ:

– Ասացի:

– Եթե ստեղծում է ոչ այն, ինչը կա, նա չի ստեղծի իրական գոյ, այլ՝ դրան նման ինչ-որ բան, ոչ իսկական գոյ: Եվ եթե ոմն ասեր, որ հյուսնի կամ մեկ ուրիշ արհեստավորի ստեղծածը կատարյալ գոյ է, դա հազիվ թե լիներ ճշմարիտ:

– Նման հարցերի քննությամբ զբաղվողները չէին կիսի այդ կարծիքը:

– Ուրեմն չենք զարմանա, եթե նրա ստեղծածը լինի սոսկ ճշմարիտ գոյի թույլ նմանակը:

– Ոչ:

– Կուզե՞ս, ելնելով դրանից, փնտրենք նմանակողին և պարզենք, թե ով է նա: b

– Կուզեմ:

– Արդ, նշված մահճակալները երեք տեսակի են: Մեկը գոյություն ունի բնության մեջ, և նրա մասին մենք կասենք, որ այն աստծո ստեղծածն է: Թե՞ ուրիշ ինչ-որ մեկի:

– Ոչ, հենց նրա:

– Մյուսը հյուսնի արտադրանքն է:

– Այո:

– Երրորդը գեղանկարչի ստեղծածն է, այդպես չէ՞:

– Դիցուք:

– Գեղանկարիչը, հյուսնը, աստված՝ սրանք են մահճակալի երեք տեսակների ստեղծողները:

– Այո, այդ երեքն են:

– Աստված, չցանկանալով կամ էլ ելնելով անհրաժեշտությունից, ըստ որի բնության մեջ ստեղծվել է միայն մեկ մահճակալ, ստեղծել է հենց այդ մեկ մահճակալը, իսկ երկու համանմանները, կամ ավելի, աստված չի ստեղծել, և դրանք բնության մեջ չեն հանդիպում: c

– Ինչու՞:

– Որովհետև եթե նա ստեղծեր միայն երկուսը, միևնույն է՝ կլիներ մեկը, այն, որի տեսքը կունենային երկուսն էլ: Հենց դա կլիներ իսկական մահճակալ, և ոչ այդ երկուսը:

– Ճիշտ է:

– Կարծում եմ, աստված, իմանալով դա, կուզեր լինել իրական մահճակալի իրական ստեղծող, բայց ոչ մահճակալի ինչ-որ վարպետ: Ահա ինչու նա ստեղծել է իր բնությամբ եզակի մահճակալը: d

– Թերևս:

– Կուզե՞ս՝ կոչենք նրան այդ իրի արարիչ կամ մեկ ուրիշ նման բան:

– Դա արդար կլիներ, որովհետև ըստ բնության նա ստեղծել է և՛ այդ, և՛ բոլոր մյուս իրերը:

– Իսկ ինչպե՞ս կոչենք հյուսնին: Գուցե մահճակալի վարպե՞տ:

– Այո:

– Իսկ գեղանկարչի՞ն, նրա՞ն էլ այդ իրերի արարիչ և ստեղծող կոչենք:

– Ոչ մի դեպքում:

– Ուրեմն ի՞նչ կկոչես նրան մահճակալի պարագայում:

e – Ինձ թվում է, ամենից շատ նրան համապատասխանում է վարպետների ստեղծածը նմանակողի անունը:

– Լավ, ուրեմն նմանակող կկոչես նրան, ով ստեղծում է էությունից հետո երրորդ տեղում կանգնած բաները:

– Իհարկե:

– Ուրեմն, այդպիսին կլինի նաև ողբերգակը: Եթե նա նմանակող է, ապա արքայից և ճշմարտությունից հետո կանգնած է երրորդ տեղում[1]: Նույնը նաև մյուս նմանակողները:

– Թերևս:

– Նմանակողների հարցում համաձայնության եկանք: Հիմա գեղանկարչի մասին ասա ինձ հետևյալը. ըստ քեզ, փորձում է արդյոք նա նմանակել բնությա՞ն մեջ եղածը, թե՞ նմա-
598 նակում է վարպետների գործերը:

– Վարպետների գործերը:

– Այնպիսին, ինչպիսին դրանք իրականու՞մ են, թե՞ ինչպիսին թվում են: Չէ՞ որ դա էլ պիտի սահմանազատես:

– Ի՞նչ նկատի ունես:

– Հետևյալը: Մահճակալը, եթե դիտես այն կողքից կամ առջևից կամ ուրիշ որևէ կողմից, տարբերվու՞մ է արդյոք ինքն իրենից: Թե՞ բոլորովին չի տարբերվում, այլ միայն թվում է ուրիշը, և նույնը տեղի ունի նաև ուրիշ բաների դեպքում:

– Այդպես է: Միայն թվում է, թե տարբերվում է, բայց ոչնչով չի տարբերվում:

– Հենց դա էլ դիտարկիր: Ինչի՞ն է միտված ամեն անգամ b
նկարչությունը: Ձգտում է նմանակել գոյությունն, ինչպես որ այն կա՞, թե՞ թվացողությունը, և ուրեմն ինչի՞ նմանակում է՝ պատրանքների՞, թե՞ ճշմարտության:

– Պատրանքների:

– Ուրեմն նմանակումը հեռու է ճշմարիտ իրերից և, ինչ-պես երևում է, այդ պատճառով կարող է առաջ բերել ամեն բան, չէ՞ որ աննշան չափով է շոշափում յուրաքանչյուր իր և ստեղծում է պատրանքներ: Օրինակ՝ գեղանկարիչը պատկե-
ռում է կոշկակարի, հյուսնի, ուրիշ վարպետների, սակայն c
ոչինչ չի հասկանում այդ արհեստներից: Բայց եթե նա լավ գեղանկարիչ է, ապա պատկերելով հյուսնին և հեռվից ցույց տալով դա մանուկներին, և ոչ խելացի մարդկանց, կարող է խաբել նրանց, և նրանք կկարծեն, թե նա ճշմարիտ հյուսն է:

– Անշուշտ:

– Բայց ես կարծում եմ, բարեկամս, որ այդպես պետք է մտածել բոլոր նման բաների մասին: Եթե ոմն հաղորդի մեզ, որ հանդիպել է ամեն ինչ իմացող մարդու, որն ուրիշներից
ավելի լավ է տիրապետում յուրաքանչյուրի արհեստին, ապա d
պետք է առարկել, որ նա ինքը, ըստ երևույթին, պարզամիտ մարդ է, եթե խաբվել է ինչ-որ ստախոսից և նմանակողից, որին համարել է մեծ իմաստուն, քանի որ չի կարողացել տարբերել իմացությունը տգիտությունից և նմանակումից:

– Շատ ճիշտ է:

– Արդ, պետք է դիտարկել ողբերգությունը և դրա հիմնա-
դրին՝ Հոմերոսին, քանզի լսել ենք ոմանցից, որ ողբերգակ-
ներին հայտնի են մարդկային բոլոր գործերը՝ առաքինի և e
ստոր, ինչպես նաև աստվածային: Չէ՞ որ լավ բանաստեղծը, որպեսզի իր գործերը գեղեցիկ լինեն, պետք է գիտենա այն, ինչի մասին գրում է, հակառակ դեպքում չի կարողանա ստեղծագործել: Հարկ է քննել՝ խաբվե՞լ են արդյոք մարդիկ,

599 հանդիպելով այդ նմանակողներին, նկատե՞լ են արդյոք, դի-
տելով նրանց երկերը, որ դրանք երիցս հեռու են իրականու-
թյունից և որ դրանք հեշտությամբ կարող է ստեղծել ճշմար-
տությունից անտեղյակը: Չէ՞ որ այստեղ ստեղծում են պատ-
րանքներ, և ոչ թե գոյը: Թե՞ ճիշտ են ասում, որ լավ բանա-
ստեղծներն իրականում գիտեն այն, ինչի մասին, շատերի
b կարծիքով, այդքան լավ են խոսում:

– Դիտարկենք:

– Իսկ եթե ոմն կարողանար ստեղծել և՛ բնօրինակը, և՛ նմանությունը, կարծում ես նա կջանար ստեղծել միայն նմանություններ և կհամարեր դրանք իր կյանքի լավագույն բա՞նը:

– Չեմ կարծում:

– Բայց եթե նա իսկապես իմանար այն, ինչը նմանակում է, նրա ջանքերը նախ և առաջ ուղղված կլինեին հենց ստեղծագործելուն, և ոչ նմանակմանը: Նա կփորձեր իր մասին որպես հուշարձան թողնել բազում գեղեցիկ երկեր՝ ցանկանալով, որ փառաբանեն իրեն, և ոչ թե ինքը փառաբանի ուրիշներին:

– Կարծում եմ, դա հավասարապես կբերեր նրան և՛ փառք, և՛ օգուտ:

c – Մյուս հարցերի առնչությամբ Հոմերոսից կամ մյուս բանաստեղծներից հաշիվ չենք պահանջի: Չենք հարցնի՝ եղե՞լ են նրանք բժիշկներ, թե՞ միայն բժիշկների լեզուն նմանակողներ, և գոյություն ունի՞ արդյոք պատում, ըստ որի բանաստեղծներից՝ հներից և նորերից մեկը վերադարձրել է որևէ մարդու առողջությունը, ինչպես արել է Ասկլեպիոսը, կամ որ բանաստեղծը բժիշկ աշակերտներ է թողել, ինչպիսին էին Ասկլեպիոսի աշակերտները[2]: Չենք հարցնի նրանց նաև ուրիշ տարբեր արհեստների մասին և հանգիստ կթողնենք: Բայց երբ Հոմերոսը փորձում է խոսել ամենակարևորի և ամենագեղեցիկի՝ պատերազմի, զորավարության, պետություններ ղեկավարելու, մարդկանց դաստիարակելու մասին, կարող

ենք հարցնել նրան այսպես. «Սիրելի՛ Հոմերոս, եթե դու կա- d
տարելությամբ երրորդ տեղում չես իրականից, եթե ստեղ-
ծածդ պատրանքներ չեն, այնպես, ինչպես մենք սահմանե-
ցինք դրանք, ապա լինելով երկրորդ տեղում՝ կիմանայիր, թե
որ գործերն են մարդկանց դարձնում ավելի լավը կամ վատը
մասնավոր և հանրային կյանքում: Ասա՛ մեզ, պետություններ-
ից ո՞րն է քո շնորհիվ ստացել ավելի լավ կարգ, այնպես,
ինչպես Լակեդեմոնը Լիկուրգոսի կամ շատ ուրիշ մեծ ու
փոքր պետություններ բազմաթիվ ուրիշ օրենսդիրների շնոր- e
հիվ: Ո՞ր պետությունն է համարում քեզ իր լավ օրենսդիրը,
որին պարտական է ամեն բանով: Իտալիան և Սիկիլիան այդ-
պիսին են համարում Քարոնդասին[3], իսկ մենք՝ Սոլոնին: Իսկ
քեզ՝ ո՞վ»: Հոմերոսը կարո՞ղ է նշել որևէ պետություն:

– Չեմ կարծում,– պատասխանեց Գլավկոնը,– դրա մասին
հոմերիդներն էլ չեն խոսում:

– Իսկ հիշատակվու՞մ է արդյոք որևէ պատերազմ, որի ըն- 600
թացքում Հոմերոսը բանակներ է առաջնորդել կամ հաջողու-
թյամբ ռազմական խորհրդական է եղել:

– Ոչ մի պատերազմ չի հիշատակվում:

– Իսկ պատմու՞մ են տարբեր և հնարամիտ գործերի մա-
սին արվեստներում կամ ուրիշ բնագավառներում, որտեղ Հո-
մերոսը կդրսևորեր իրեն այնպես, ինչպես միլետցի Թալեսը
կամ սկյութ Անաքարսիսը[4]:

– Բնավ այդպիսի բան չեն պատմում:

– Բայց եթե ոչ հանրային, ապա գուցե մասնավոր հար-
ցերում Հոմերոսը կյանքի օրոք ղեկավարել է ոմանց դաս-
տիարակությունը, և նրանք գնահատել են շփումը իր հետ և
ավանդել են հոմերյան կենսակերպ, ինչպես դա յուրա- b
հատուկ կերպով գնահատվում էր Պյութագորասի[5] դեպքում,
իսկ նրա հետևորդները մինչ այժմ իրենց կենսակերպը
կոչում են պյութագորյան և ակնհայտորեն տարբերվում են
մյուսներից:

– Ոչ մի նման բան Հոմերոսի մասին չեն պատմում: Չէ՞ որ

Կրեոփիլոսը, ո՛վ Սոկրատես, որը գուցե Հոմերոսի մերձավորն էր, իր անկրթությամբ ավելի զավեշտական կարող է թվալ, քան իր անունը[6], եթե ճշմարիտ է Հոմերոսի մասին ասվածը, քանզի ասում են, որ Հոմերոսն իր կյանքի օրոք անուշադրության է մատնվել:

c

– Այո, ասում են: Բայց մտածիր, Գլավկո՛ն, եթե Հոմերոսն իրականում կարողանար դաստիարակել մարդկանց և ավելի լավը դարձնել նրանց, ընդ որում ոչ թե նմանակման, այլ իմացության շնորհիվ, մի՞թե ձեռք չէր բերի բազում բարեկամներ, մի՞թե չէր գնահատվի և չէր պաշտվի նրանց կողմից: Աբդերացի Պրոտագորասը, կեոսցի Պրոդիկոսը և շատ ուրիշներ մասնավոր շփումների ժամանակ կարող են համոզել մարդկանց, իբր սրանք չեն կարող կատարել ո՛չ իրենց տնային, ո՛չ էլ պետական գործերը, եթե չդիմեն կրթության, և այդ իմաստության համար այնքան սիրված են, որ բարեկամները գրեթե իրենց գլխի վրա են պահում նրանց[7]: Մի՞թե Հոմերոսին, եթե նա կարողանար նպաստել մարդկանց առաքինությանը, ինչպես և Հեսիոդոսին թույլ կտային շրջիկ երգիչների կյանքով ապրել ու չէին գնահատի նրանց ոսկուց առավել, չէին ստիպի հիմնավորվել որևէ կոնկրետ տեղում, ընդ որում՝ եթե նրանք չհամաձայնեին, մի՞թե չէին հետևի կրնկակոխ, ուր էլ որ գնալու լինեին, և չէին սովորի նրանցից:

d

e

– Ինձ թվում է, Սոկրատես, միանգամայն ճշմարիտ ես ասում:

– Ուրեմն չե՞նք հաստատի արդյոք, որ Հոմերոսից սկսած բոլոր բանաստեղծները ստեղծում են առաքինության և մյուս

601

առարկաների սոսկ պատրանքները, սակայն չեն դիպչում ճշմարտությանը: Դա նման է քիչ առաջ ասվածին. գեղանկարիչը պատկերում է կոշկակարին, որը մեզ թվում է այդպիսին, մինչդեռ գեղանկարիչը ոչինչ չի հասկանում կոշկակարությունից, ինչպես նաև ուրիշները, որոնք տեսնում են միայն գույներն ու ձևերը:

– Իհարկե:

– Նույնը, կարծում եմ, կասենք նաև բանաստեղծի մասին: Յուրաքանչյուր արվեստի երանգները նա փոխանցում է բառերի և արտահայտությունների միջոցով, թեպետ դրանցից ոչինչ չի հասկանում, այլ գիտի լոկ նմանակել այլոց՝ անգետ մարդկանց, այնպես որ ուրիշները նրա խոսքի հիման վրա b
կարծիք են կազմում, թե այդ ամենը լավ է ասված, երբ նա գեղեցիկ, չափաբերված և ներդաշնակ խոսում է կոշկակարության, զորավարության կամ մեկ այլ բանի մասին, այնքան մեծ է այդ ամենի բնական գեղեցկությունը: Բայց եթե զրկենք բանաստեղծների երկերը մուսայական արվեստի գույներից, կարծում եմ, գիտես, թե ինչպիսին դրանք կերևան ինքնին: Չէ՞ որ տեսել ես:

– Այո:

– Մի՞թե նրանք նման չեն երիտասարդ, բայց տգեղ այն դեմքերին, որոնք զուրկ են ավյունից:

– Շատ նման են:

– Ուրեմն նկատիր, որ պատրանքների բանաստեղծը՝ նմանակողը, ինչպես ասացինք, ոչինչ չգիտի գոյության մասին և գործ ունի միայն թվացյալի հետ: Այդպես չէ՞:

– Այո: c

– Որպեսզի ասվածը չմնա կիսատ, դիտարկենք դա բավարար չափով:

– Խոսի՛ր:

– Մենք ասում ենք, որ գեղանկարիչը կարող է նկարել երասան և սանձ:

– Այո:

– Եվ դրանք կպատրաստեն փոկագործն ու դարբինը:

– Իհարկե:

– Մի՞թե գեղանկարչին հայտնի է, թե ինչպիսին պիտի լինեն երասանն ու սանձը: Դա չգիտեն նաև նրանք, ովքեր դրանք պատրաստել են, այլ՝ միայն նա, ով կարողանում է օգտագործել՝ հեծյալը:

– Շատ ճիշտ է:

– Մի՞թե չենք ասի, որ այդպես է նաև բոլոր մյուս իրերի դեպքում:

– Ինչպե՞ս:

d – Յուրաքանչյուր իրի դեպքում առկա է երեք արվեստ՝ օգտագործման, պատրաստման և նմանակման:

– Այո:

– Հետևաբար որևէ իրի, կենդանի էակի և գործողության արժեքը, գեղեցկությունը և ճշտությունը հարաբերվում են ոչ այլ բանի, քան այն կիրառության հետ, հանուն որի պատրաստվել է կամ ի բնե գոյացել:

– Այդպես է:

– Ուրեմն որևէ իր օգտագործողը անհրաժեշտաբար կունենա մեծ փորձառություն և կարող է այդ իրը պատրաստողին ցույց տալ դրա արժանիքներն ու թերությունները, որ

e երևացել են օգտագործելիս: Օրինակ, ֆլեյտահարն իր գործիքը պատրաստող վարպետին ասում է, թե որ ֆլեյտան է ավելի նախընտրելի, խորհուրդ է տալիս, թե ինչպիսիք պետք է պատրաստել, և վարպետը հետևում է նրա խորհրդին:

– Անշուշտ:

– Գիտակը նշում է ֆլեյտաների արժանիքները և թերությունները, իսկ նրան հավատացողը պատրաստում է ֆլեյտան:

– Այո:

– Ուրեմն միևնույն իրի արժանիքների ու թերությունների

602 մասին պատրաստողը ճշմարիտ վստահություն կունենա՝ շփվելով գիտակ մարդու հետ և ստիպված լինելով լսել նրա խորհուրդները: Սակայն իմացություն կունենա օգտագործողը:

– Իհարկե:

– Իսկ նմանակողը փորձի՞ց է ստանում իմացությունն իրերի մասին, որոնք նկարում է, այսինքն՝ լավն են դրանք, թե վատը, թե՞ նա ճիշտ կարծիք է կազմում՝ շփվելով գիտակ մարդու հետ և լսելով նրա խորհուրդներն այն մասին, թե ինչպես պետք է նկարել:

– Ո՛չ մեկը, ո՛չ էլ մյուսը:

– Ուրեմն իր պատկերած իրերի արժանիքների և թերությունների մասին նմանակողը ո՛չ իմացություն, ո՛չ էլ ճիշտ կարծիք կունենա:

– Թերևս ոչ:

– Հրաշալի՛ կլինի այդպիսի նմանակողի իմաստնությունը:

– Ոչ այնքան:

– Բայց նա, միևնույն է, կնմանակի իրերը՝ դրանցից ոչ մեկի մասին չիմանալով, թե որ առումով է այն լավ կամ վատ: b
Ահա ինչու, նա գեղեցիկ է պատկերում այն, ինչն այդպիսին է թվում տգետ բազմությանը:

– Ուրիշ էլ ի՞նչ պատկերի:

– Այս հարցում մենք կարծես համաձայնության եկանք: Իր պատկերած իրի մասին նմանակողը արժանի ոչինչ չգիտի: Նմանակումը զվարճանք է, և ոչ լուրջ զբաղմունք, իսկ ողբերգական պոեզիայի (լինի յամբային թե էպիկական) հետ առնչվող բոլոր բանաստեղծները մեծ մասամբ նմանակողներ են:

– Իհարկե:

– Հանուն Զևսի, այդ դեպքում մի՞թե նմանակումը ճշմարտությունից հետո երրորդ տեղում չէ[8]: Թե՞ ոչ:

– Այո:

– Իսկ նմանակման ազդեցությունը մարդու ո՞ր կողմին է c
ուղղված:

– Ի՞նչ ազդեցություն նկատի ունես:

– Հետևյալը: Միևնույն մեծությունը մոտիկից կամ հեռվից հավասարաչափ չի երևում մեր տեսողության պատճառով:

– Այո:

– Նույնը տեղի ունի նաև առարկաների բեկվելու և ճիշտ արտացոլվելու հետ, երբ դրանք դիտում ենք ջրի մեջ կամ դրսից, դրանց գոգավորության կամ ուռուցիկության հետ, երբ տեղի ունի դրանց գույնով պայմանավորված տեսողության
որոշակի շեղում: Եվ պարզ է, որ ամբողջ այդ խառնաշփոթը d

մեր հոգու մեջ է, և մեր բնության այդպիսի վիճակից է ելնում գեղանկարչությունն իր բոլոր հմայքներով[9], նաև տարբեր աճպարարությունները և շատ ուրիշ նման հնարքներ:

– Ճշմարիտ է:

– Մի՞թե չափելը, հաշվելը և կշռելն այստեղ ամենաօգտակար օգնականները չեն և մեր մեջ իշխող է ոչ թե այն, ինչն ավելի մեծ, ավելի փոքր, բազում և ծանր է թվում, այլ այն, ինչը հաշվում է, չափում է և կշռում:

– Ինչպե՞ս չէ:

e – Բայց չէ՞ որ այդ ամենը մեր հոգու բանական մասի գործն է:

– Այո, նրա գործն է:

– Չափման միջոցով այդ մասը պարզում է, որ ինչ-ինչ իրեր ավելի մեծ են, մյուսները՝ փոքր, իսկ երրորդները՝ միմյանց հավասար, հակառակ նրա, թե ինչպիսին են միևնույն ժամանակ դրանք երևում մեզ:

– Այո:

– Մենք ասացինք, որ հոգու նույն մասը չի կարող միաժամանակ տարբեր կարծիքներ կազմել նույն իրի մասին:

– Եվ իրավացի էինք:

603 – Ուրեմն, մեր հոգու այն մասը, որը կարծիք է կազմում իրերի չափերին հակառակ, նույնական չէ հոգու այն մասին, որը կարծիք է կազմում այդ չափերի հիման վրա:

– Այո:

– Մինչդեռ չափմանն ու հաշվարկին հավատացողը կլիներ մեր հոգու լավագույն մասը:

– Իհարկե:

– Իսկ այն ամենը, որ հակառակվում է դրան, կլիներ մեր հոգու հոռի մասերից մեկը:

– Անհրաժեշտաբար:

– Հենց սրա շուրջ էի ցանկանում, որ համաձայնության գանք, երբ ասում էի, որ գեղանկարչությունը և ամեն նմանակող արվեստ ստեղծում է երկեր, որոնք հեռու են իրական

ճշմարտությունից, այն գործ ունի մեր հոգու բանական մա- b
սից շատ հեռու մի բանի հետ և ոչ մի առողջ ու ճշմարիտ
բանի ուղեկից և ընկեր լինել չի կարող:

– Միանգամայն ճիշտ է:

– Լինելով հոռի և կենակցելով հոռիի հետ՝ նմանակող ար-
վեստը ծնում է հոռին:

– Բնականաբար:

– Դա վերաբերում է միայն տեսողակա՞ն արվեստին, թե՞
նաև լսողականին, որը մենք կոչում ենք պոեզիա:

– Թերևս նաև դրան:

– Չհավատանք նմանությանը, որը ստեղծվում է միայն
գեղանկարչությամբ, այլ քննենք հոգու այն մասը, որի հետ
գործ ունի նմանակող պոեզիան, և տեսնենք՝ հոռի է այն, թե c
լուրջ:

– Այո, հարկ է անել դա:

– Շարժվենք այսպես. նմանակող արվեստը պատկերում է
մարդկանց այնկերպ, որ նրանք գործում են հարկադրված
կամ կամավոր և, կախված իրենց արարքներից, կարծում են,
թե գործել են լավ կամ վատ, և բոլոր այդ հանգամանքներում
կա՛մ ողբում են, կա՛մ ուրախանում: Թե՞ նմանակող արվես-
տը այլ բան էլ է պատկերում:

– Այլևս ոչինչ:

– Իսկ մի՞թե բոլոր այդ հանգամանքներում մարդը պահ-
պանում է նույն հոգեվիճակը: Թե՞ ինչպես տեսողությանը հա- d
սու իրերի դեպքում ներքին պայքար մղելով ինքն իր հետ և
նույն հարցերի շուրջ միաժամանակ ունենալով հակադիր
կարծիքներ՝ իր գործողություններում ևս անցնում է այդպիսի
բախման և պայքարի միջով: Իմ հիշելով՝ հիմա այդ հարցը
քննել այլևս պետք չէ: Նախորդ քննության մեջ մենք արդեն
բավարար չափով ապացուցեցինք այդ ամենը, այսինքն՝ որ
մեր հոգին լեցուն է միաժամանակ ծնվող հազարավոր այդ-
պիսի հակասություններով:

– Ճիշտ է:

– Այո, ճիշտ է, սակայն ըստ իս՝ պետք է քննել այն, ինչ այն
e ժամանակ բաց թողեցինք:

– Ի՞նչը:

– Մենք ինչ-որ տեղ արդեն ասացինք, որ իսկական մարդը ուրիշներից ավելի հեշտ է տանում որևէ դժբախտություն՝ որդու կորուստը կամ այլ մի բանի կորուստ, որը նա ամենից շատ է գնահատում:

– Իհարկե:

– Իսկ հիմա պարզենք՝ մի՞թե այդպիսի մարդը բոլորովին չի տառապի,– դա անհնա՛ր է,– թե՞ ավելի զուսպ կլինի իր ցավի մեջ:

– Ճշմարտությանն ավելի մոտ է վերջինը:

604 – Ասա ինձ նրա մասին նաև հետևյալը. նա կպայքարի իր ցավի դեմ և կդիմադրի ավելի շուտ այն ժամանակ, երբ մարդկանց մե՞ջ է, թե՞ երբ կմնա մենակ, ինքն իր հետ:

– Մարդկանց առաջ ավելի զուսպ կլինի:

– Միայնության մեջ, կարծում եմ, նա չի դիմանա և լաց կլինի, իսկ եթե ոմն լսի դա, կամաչի: Եվ առհասարակ կանի շատ բաներ, որ չէր ուզի, որ անեին ուրիշները:

– Այդպես է:

– Եվ նրան խորհուրդ են տալիս դիմադրել բանականու-
b թյունն ու օրենքը, իսկ վշտի մեջ է պահում տառապանքը:

– Ճշմարիտ է:

– Ուրեմն եթե միևնույն բանի հանդեպ ծնվում է միաժամանակ երկու մղում, անհրաժեշտ է ասել, որ մարդու մեջ կա երկու տարբեր սկզբունք:

– Իհարկե:

– Մեկը ձգտում է հնազանդ լինել և հետևել օրենքին:

– Ինչպե՞ս:

– Օրենքն ասում է, որ դժբախտությունների մեջ լավագույնը հանգիստ ու անխռով մնալն է: Չէ՞ որ դեռ պարզ չեն դրանց առավելություններն ու թերությունները, այնպես որ արցունք թափելով՝ առաջ չես գնա: Մարդու գործերից ոչ մեկն

արժանի չէ մեծ ցավի, իսկ վիշտը շատ կխանգարի նրան, ինչն c
ամենից կարևորն է նման դեպքերում:

– Ի՞նչ նկատի ունես: Ինչի՞ն կխանգարի:

– Պատահածը հասկանալու համար, եթե մեզ ասես զառ խաղալու ժամանակ բաժին է ընկել այդպիսի վիճակ, պետք է կարողանանք տնօրինել սեփական գործերը, խոհեմաբար ընտրելով լավագույնը, ոչ թե նմանվենք մանուկներին, որոնք վայր ընկնելիս բռնում են ցավոտ տեղը ու լաց են լինում: Մենք պետք է սովորեցնենք հոգուն հնարավորինս շուտ դիմել բուժման և ուղղել թերին՝ բժշկությամբ խլացնելով ողբը: d

– Այո, դժբախտություններին այդպես վերաբերվելը միանգամայն ճիշտ կլիներ:

– Ուրեմն կասենք, որ մեր հոգու լավագույն մասը կուզի հետևել բանականության խորհուրդներին:

– Ակնհայտ է:

– Իսկ այն մասը, որը ստիպում է հիշել տառապանքը, տրտնջալ և չի բավարարվում դրանցով, մենք կհամարենք ոչ բանական, պարապ ու վախկոտ: e

– Այո, կհամարենք:

– Հոգու խռովալից մասը բազմապիսի նմանակումների տեղիք է տալիս, իսկ բանական և խաղաղ բարքը, որը միշտ ինքնատիրապետող է, դժվար է նմանակել և անգամ եթե նմանակում են, այն դժվար է հասկանալ՝ հատկապես տոնակատարություններում ու թատրոններում, որտեղ հավաքվում են ամենատարբեր մարդիկ: Քանզի դա կլիներ նրանց համար օտար վիճակի նմանակում:

– Միանգամայն: 605

– Պարզ է, որ նմանակող բանաստեղծն ի բնե ընդհանուր ոչինչ չունի հոգու բանական մասի հետ և սրա բավարարման համար չէ, որ մեծացնում է իր իմաստությունը, երբ ցանկանում է հաջողության հասնել բազմության առջև, այլ դիմում է խռովալից և փոփոխական բարքին, որը լավ է տրվում նմանակման:

– Պարզ է:

– Ուրեմն, մենք կարող էինք վերցնել բանաստեղծին և
b դնել գեղանկարչի հետ միևնույն շարքում: Չէ՞ որ նա նման է գեղանկարչին և նրա պես ստեղծում է ոչ թե ճշմարիտը, այլ կեղծը: Նա գործ ունի հոգու այն մասի հետ, որին կապված է գեղանկարիչը, այսինքն ոչ լավագույն մասի, և դրանով իսկ նման է նրան: Հետևաբար, մենք իրավամբ չէինք վերցնի նրան ապագա բարեկարգ պետություն, եթե նա արթնացնում, սնում և ուժգնացնում է հոգու վատ մասը և կործանում բանականը: Դա կնշանակեր հանձնել պետությունը հոռի մարդկանց ձեռքը, իսկ առավել ազնիվներին վերացնել: Մենք կասենք, որ նույն բանն անում է նաև նմանակող բանաստեղծը՝ յուրաքանչյուրի հոգու մեջ ներմուծելով վատ պետական կառույց, քանի որ խրախուսում է հոգու անմիտ մասը, որը չի
c տարբերում առավել մեծը և առավել փոքրը, այլ միևնույն բանը համարում է մե՛րթ մեծ, մե՛րթ փոքր՝ ստեղծելով պատկերներ, որոնք շատ հեռու են ճշմարտությունից:

– Իհարկե:

– Սակայն մենք դեռ չներկայացրինք ամենածանր մեղադրանքը: Պոեզիան ի վիճակի է այլասերել անգամ լավագույն մարդկանց, և սարսափելին այն է, որ միայն քչերն են խուսափում դրանից:

– Ուրիշ ի՞նչ կարող ենք ակնկալել, եթե իսկապես դա է անում:

– Լսի՛ր և տե՛ս. մեզնից լավագույնները, լսելով, թե ինչպես է Հոմերոսը կամ մի ողբերգակ նմանակում որևէ հերոսի, որը
d վշտահար արտասանում է տրտունջներով լի երկար ճառ, իսկ ուրիշներին ստիպում է երգել և կուրծք ծեծել, ինչպես գիտես, ուրախանում են և, տրվելով այդ տրամադրությանը, հետևում են հերոսի կրքերին ու դրանք լուրջ ընդունում: Մենք գովում ենք այն բանաստեղծին, որն առավելագույնս այդպես է տրամադրում մեզ:

– Գիտեմ, ինչպե՞ս չէ:

– Իսկ երբ մեզնից մեկի հետ որևէ չարիք է պատահում,
նկատե՞լ ես, որ մենք ցուցադրում ենք հակառակը, այսինքն՝ e
ի վիճակի ենք հանգստություն պահպանել և տիրապետել
մեզ, ինչպես վայել է տղամարդուն, իսկ այն, ինչ մի ժամա-
նակ գովում էինք, հատուկ է կանանց:

– Նկատել եմ:

– Իսկ տեղի՞ն է այդ գովեստը, երբ տեսնում ենք մի մար-
դու, որպիսին չարժե և ամոթալի է լինել, և չենք խորշում նրա-
նից, այլ ողջունում և գովում ենք:

– Զնսը վկա, դա անխոհեմ է:

– Այո, եթե դիտես այսպես... 606

– Ինչպե՞ս:

– Եթե հասկանաս, որ այդժամ բանաստեղծներից բավա-
րարում և հաճույք է ստանում մեր հոգու այն մասը, որը մեր
դժբախտությունների ժամանակ զսպում ենք, մինչդեռ սա
ձգտում է ուզածին պես արտասվել, ողբալ և այդկերպ հան-
գստանալ, քանզի այդպիսին է իր բնությունը: Մեր հոգու ի
բնե լավագույն մասը, որը դեռ բավականաչափ չի խրատվել
բանականությամբ և բարքերով, թուլացնում է սգացող մասի b
իր հսկողությունը և ուրիշի կրքերը դիտելիս ամոթալի չի հա-
մարում, որ ուրիշ մարդը, թեև ձգտում է լինել առաքինի,
պատշաճ կերպով չի սգում: Գովում և խղճում է այդ մարդուն,
անգամ մտածում է, թե այդպիսի հաճույքը շահ է բերում իրեն,
և չէր ցանկանա զրկվել դրանից՝ արհամարհելով ամբողջ եր-
կը: Կարծում եմ, քչերն են հասկանում, որ օտար կրքերը ան-
հրաժեշտաբար ազդում են մեզ վրա: Քանզի նրանց հանդեպ
ծագող ուժեղ խղճահարությունից հետագայում հեշտ չէ խու-
սափել նաև սեփական կրքերի ժամանակ:

– Շատ ճիշտ է:

– Նույնը չե՞նք ասի արդյոք նաև զավեշտականի մասին: c
Դու ինքդ ամաչում ես ծիծաղեցնել մարդկանց, սակայն կա-
տակերգական ներկայացումներում կամ մասնավոր զրույց-
ներում մեծ հաճույքով լսում ես զավեշտականը, չես մերժում

1915.info

այն որպես հոռի ինչ-որ բան և մոտենում ես դրան մեծահոգաբար: Բանականությամբ դու ճնշում ես քո մեջ զավեշտական բաներ գործելու ցանկությունը՝ վախենալով ծաղրածուի համբավից, սակայն այս դեպքերում ազատություն ես տալիս նրան և, ոգևորված, տանը հաճախ աննկատ դառնում ես կատակերգակ:

– Այո, շատ հաճախ:

d – Թե՛ սիրային վայելքները, թե՛ ցասումը, թե՛ բոլոր տեսակի տենչանքները՝ տառապանքներն ու հաճույքները, որոնք, ինչպես ասացինք, ուղեկցում են ամեն մեր գործողություն, առաջ են գալիս բանաստեղծական նմանակման արդյունքում: Սա սնում և ոռոգում է այն ամենը, ինչը պիտի չորանար, և հաստատում է իր իշխանությունը մեզ վրա: Մինչդեռ պետք էր հնազանդության մեջ պահել այդ զգացումները, որպեսզի մենք, ավելի վատը և ավելի դժբախտ լինելու փոխարեն, ավելի լավը և ավելի երջանիկ դառնայինք:

– Դրա դեմ առարկելու ոչինչ չունեմ:

e – Ուրեմն, Գլավկոն, երբ պատահես Հոմերոսին փառաբանողներին, որոնք ասում են, թե այդ բանաստեղծը դաստիարակել է Հունաստանը, և հանուն մարդկանց առաջնորդելու և կրթելու հարկ է ուսումնասիրել նրան, որպեսզի նրա պոեզիայի օրինակով կառուցենք մեր ողջ կյանքը, պետք է հնարավորինս բարեկամանաս և սիրես նրանց, քանի որ հրա-
607 շալի մարդիկ են: Համաձայնիր, որ Հոմերոսը ամենաբանաստեղծականն է և ողբերգակներից առաջինը, բայց հիշիր, որ մեր պետության մեջ պոեզիան թույլատրվում է լոկ որպես ծոն աստվածներին և գովք առաքինի մարդկանց: Իսկ եթե ընդունես քաղցր մուսային,– լինի դա մելոս թե էպոս,– քո պետության մեջ օրենքի և ընդհանուր կարծիքի համաձայն լավագույնը համարվող բանականության փոխարեն կիշխեն հաճույքն ու տառապանքը:

– Շատ ճիշտ է:

b – Թող այս հիշեցումն արդարացնի մեզ պոեզիայի առաջ

այն բանի համար, որ մենք վտարեցինք այն պետությունից: Չէ՞ որ դա անել մեզ ստիպեց բանականությունը: Իսկ որպեսզի չմեղադրվենք կոպտության և չորության մեջ, կավելացնենք, որ դեռ հնուց պառակտում ենք նկատել փիլիսոփայության և պոեզիայի միջև: Եվ այնպիսի ասացվածքներ, ինչպիսիք են, օրինակ, «տիրոջ վրա հաչող և գռմռացող շուն»[10], c
«անմիտների դատարկաբանության առաջնորդ», «իմաստունների թափորն ամենահաղթ է», «մտածում են մանրուքների մասին, որովհետև աղքատ են», կամ բյուրավոր ուրիշ ասացվածքներ վկայում են հին վեճի մասին: Այդուհանդերձ, հարկ է ասել, որ եթե բանաստեղծությունն ու նմանակումը, որոնք միտված են հաճույքին, կունենան բարեկարգ պետության մեջ տեղ գտնելու համար որևէ փաստարկ, մենք ուրախությամբ կընդունենք դրանք: Մենք գիտակցում ենք, որ հմայված ենք դրանցով, սակայն դավաճանել այն, ինչը ճշմարիտ ես կարծում, ամբարշտություն է: Մի՞թե, բարեկա՛մս, դու նույնպես d
հմայվում ես դրանցով, երբ Հոմերոսի միջոցով տեսնում ես դրանք:

– Իհարկե:

– Հետևաբար, թո՛ղ պոեզիան արդարացվի՝ լինի դա մելոսում թե ուրիշ տաղաչափության մեջ, և վերադառնա պետություն:

– Իհարկե:

– Իսկ դրա սիրահարներին, որոնք բանաստեղծ չեն, սակայն սիրում են բանաստեղծներին, մենք թույլ կտայինք պաշտպանել պոեզիան նաև ոչ չափածո և ասել, որ դա ոչ միայն հաճելի է, այլև օգտակար պետական կառույցի և մարդկային կյանքի համար: Մենք սիրով կլսեինք նրանց, քանզի շահած կլինեինք, եթե պարզվեր, որ պոեզիան ոչ միայն հա- e
ճելի է, այլև օգտակար:

– Իհարկե, մենք կուզեինք շահել:

– Իսկ եթե դա չհաջողվի, բարեկա՛մս, կվարվենք երբեմնի սիրահարվածների պես, որոնք հետագայում որոշեցին, որ

սերն անօգուտ է և ակամա հրաժարվեցին դրանից: Մեր դեպ-
608 քում նույնպես. մեր հրաշալի պետական կառույցի շնորհիվ մեր մեջ սեր է գոյացել այդպիսի պոեզիայի հանդեպ, և մենք բարեհաճ ենք նրա նկատմամբ՝ որպես լավագույն և ամենաճշմարիտ բանի: Բայց քանի դեռ պոեզիան չի արդարացվել, մենք, ունկնդրելով, կգոտեպնդենք մեզ ասվածով, ինչպես հմայական խոսքով, և կզգուշանանք կրկին ընկնելուց բազմությանը տիրող այդ երեխայական սիրո գիրկը: Լուրջ չէ մտածել, թե այդպիսի պոեզիան ծանրակշիռ մի բան է և առնչվում է ճշմարտությանը. լսողը պետք է զգուշանա դրանից,
b վախենալով իր ներքին պետական կառույցի համար, և ճշմարիտ համարի այն, ինչ ասացինք պոեզիայի մասին:

– Լիովին համամիտ եմ:

– Քանզի, սիրելի՛ Գլավկոն, մեծ է վեճը մեծ բանի մասին, ավելի մեծ, քան թվում է,– այն է՝ արժանի կամ հոռի լինելու մասին, այնպես որ ո՛չ պատիվը, ո՛չ դրամը, ո՛չ ամեն տեսակ իշխանությունը, ո՛չ էլ պոեզիան չարժեն, որ հանուն դրանց քամահրենք արդարությունը և ամենայն առաքինություն:

– Համամիտ եմ՝ ելնելով արդեն ասվածից: Կարծում եմ, ով էլ լինի՝ կհամաձայնի:

c – Բայց մենք դեռ չենք քննել առաքինության մեծագույն պատիվներն ու համապատասխան մրցանակները:

– Դու անկասկած խոսում ես նշանակալի բանի մասին, որն ավելի կարևոր է հիշյալ մրցանակներից:

– Բայց ո՞ր նշանակալին կարող է պատահել կարճ ժամանակում: Չէ՞ որ հավիտենության համեմատ մանկությունից ծերություն ընկած ժամանակը կարճ է:

– Գրեթե ոչինչ է:

d – Եվ ինչ, կարծում ես, որ անմահ էակը պիտի հոգ տանի լոկ այդ կարճ ժամանակի մասին, և ո՞չ հավիտենության:

– Հավիտենությա՛ն մասին: Բայց ի՞նչ նկատի ունես:

– Մի՞թե չես մտածել, որ մեր հոգին անմահ է և երբեք չի կործանվի:

Գլավկոնը զարմացած նայելով ինձ՝ ասաց.

– Զնսը վկա, ոչ: Իսկ դու կարո՞ղ ես դա ասել:

– Եթե չկարողանայի, իրավացի չէի լինի: Կարծում եմ, դու էլ կարող ես, և այստեղ բարդ ոչինչ չկա:

– Իրականում բարդ է: Բայց ես հաճույքով կլսեի անգամ ոչ բարդ բանի մասին:

– Ուրեմն՝ լսի՛ր:

– Խոսի՛ր:

– Որևէ բան կոչու՞մ ես բարիք կամ չարիք:

– Այո:

– Իսկ դրա մասին մտածում ես նու՞յնը, ինչ ես: e

– Այսի՞նքն:

– Կործանարար և վնասակար ամեն ինչ չարիք է, իսկ փրկարարն ու օգտակարը՝ բարիք:

– Այո:

– Եվ ինչ, կարծում ես, որ ամեն իրի համար գոյություն ունի իր բարիքն ու չարի՞քը: Օրինակ, աչքերի համար՝ բոր-
բոքումը, ողջ մարմնի համար՝ հիվանդությունը, հացի համար՝ 609
հասկաժանգը, փայտի համար՝ փտումը, պղնձի ու երկաթի համար՝ ժանգը, մի խոսքով՝ ամեն ինչ ունի իրեն հատուկ չարիքն ու հիվանդությու՞նը:

– Իհարկե:

– Երբ որևէ իրի հետ այդպիսի բան է պատահում, դա անպիտան է դարձնում այն, ինչին պատահել է, և ի վերջո քայքայում ու կործանում է ողջ իրը:

– Անշուշտ:

– Յուրաքանչյուր իրին հատուկ չարիքն ու արատավորությունը կործանում են այն, բայց եթե չեն կործանում, ուրիշ
ոչինչ չի վնասի դրան: Բարիքը երբեք չի կործանի, և b
կործանիչ չի կարող լինել նաև այն, ինչը ո՛չ չարիք է, ո՛չ էլ բարիք:

– Այո:

– Արդ, եթե գոյություն ունեցողի մեջ գտնենք մի բան, որն

ունի չարիք, որից փչանում է, բայց չի կործանվում, մենք կի-
մանանք, որ այդ մի բանը իր բնությամբ անկործան է:

– Ըստ երևույթին, այդպես է:

– Եվ ինչ, մի՞թե հոգին չունի այն, ինչն իրեն դարձնում է
վատը:

– Այն էլ ինչպես: Քիչ առաջ հենց նման երևույթներն էինք
c քննում՝ անարդարությունը, սանձարձակությունը, վախկոտու-
թյունը և տգիտությունը:

– Իսկ դրանցից որևէ մեկը կարո՞ղ է քայքայել և կործանել
հոգին:

– Ինքդ քննիր, բայց տես՝ չխաբվենք, կարծելով, թե անար-
դար և անմիտ մարդը, երբ նրան բացահայտեն, կործանվում
է իր անարդարությունից, որը հոգու չարիք է: Ասենք այսպես.
մարմնի չարիքը՝ հիվանդությունը, քայքայում և կործանում է
մարմինը, ինչը հանգեցնում է նրան, որ սա դադարում է մար-
մին լինել, և այն ամենը, որ հիմա նշեցինք, դադարում է գոյու-
թյուն ունենալ սեփական արատավորության պատճառով, որն
d իր ներկայությամբ ներսից կործանում է ամեն բան: Այդպես
չէ՞:

– Այո:

– Այդ դեպքում հոգին էլ նույն կերպ դիտարկիր: Կարո՞ղ
են դրա մեջ եղած անարդարությունը և ուրիշ չարիքները
վնասել ու քայքայել այն՝ հասցնելով մահվան և բաժանելով
մարմնից:

– Ոչ մի դեպքում:

– Բայց չէ՞ որ անհեթեթ կլիներ, եթե ինչ-որ բան կործան-
վեր արտաքին չարիքից, իսկ սեփական չարիքից՝ ոչ:

– Այո, անհեթեթ:

e – Տե՛ս, Գլավկո՛ն, չէ՞ որ մենք չենք կարծում, թե մարմինը
պիտի փչանա վնասակար սննդից, ինչպիսին էլ լինի այդ
փչացումը՝ հնությունից, փտածությունից կամ ուրիշ նման բա-
նից: Իսկ երբ վնասակար սնունդը թուլացնում է մարմինը,
610 մենք կասենք, որ թեև մարմինը փչանում է սննդից, բայց

փչանում է սեփական արատի պատճառով՝ հիվանդության: Իսկ սննդի վնասակարությունից, քանի որ սնունդը և մարմինը տարբեր բաներ են, մենք կարծում ենք, որ մարմինը երբեք չի կործանվի, քանի դեռ օտար չարիքը նրանում առաջ չի բերել մարմնին հատուկ չարիք:

– Շատ ճիշտ ես ասում:

– Միևնույն սկզբունքով, եթե մարմնի փչացումը առաջ չի բերում հոգու վնասվածություն, որը հատուկ է հենց հոգուն, երբեք չենք համարի, թե հոգին կործանվում է օտար չարիքից, այլ միայն իր սեփական վնասվածությունից: Յուրաքանչյուրն ունի իր չարիքը:

– Դա ճիշտ սկզբունք է:

– Ուրեմն մենք կա՛մ կհերքենք ասվածը որպես ոչ ճիշտ, կա՛մ էլ, քանի դեռ չենք հերքել, չենք համաձայնվի, իբր հոգին b
մահանում է տենդից, մեկ ուրիշ հիվանդությունից կամ կոկորդը կտրելուց: Անգամ եթե փոքր մասերի կտրատենք ողջ մարմինը, դա բնավ չի մեծացնի հոգու կործանման հավանականությունը, քանի դեռ մեզ չեն ապացուցել, որ մարմնի այդ տառապանքներից ինքը հոգին դառնում է պակաս արդար և բարեպաշտ: Եթե օտար չարիքը ծագում է ուրիշ ինչ-որ բանից, իսկ սեփական չարիքը չի գոյանում, մենք չենք ասի, թե հոգին կամ մեկ ուրիշ բան կործանվում է: c

– Բայց չէ՞ որ ոչ ոք երբեք չի ապացուցի, որ մեռնողների հոգիները մահվան պատճառով պակաս արդար են դառնում:

– Եթե որևէ մեկը համարձակվի դուրս գալ մեր փաստարկի դեմ, միայն թե ստիպված չլինի համաձայնելու, որ հոգիներն անմահ են, և պնդի, թե մեռնողը դառնում է պակաս արդար և առավել հոռի, մենք, եթե նա իրավացի է, մահացու կհամարենք անարդարությունը, ճիշտ ինչպես հիվանդությունը հիվանդի համար, և կասենք, որ դա ունեցողը մահանում է d
դրա մահաբեր բնությունից, ոմանք ավելի արագ, մյուսները ավելի դանդաղ, և ոչ այնպես, ինչպես լինում է հիմա, երբ անարդարները մահվան են դատապարտվում այլոց վճռով:

– Զևսը վկա, ուրեմն անարդարությունը չի լինի ամենասոսկալի բանը, եթե մահացու է նրա համար, ով անարդար է: Չէ՞ որ դա փրկություն կլիներ չարիքներից: Բայց ինձ թվում է, տեղի կունենա հակառակը, և անարդարությունը մահացու
e է այլոց համար, եթե ի վիճակի է իրեն կրողին ավելի կենսունակ դարձնելու և դրանից զատ՝ նաև անխոնջ: Ինչպես երևում է, նման դեպքերում այն հեռու է ամեն մահացուից:

– Լավ ասացիր: Եթե սեփական արատավորությունն ու չարիքը բավարար չեն սպանելու և կործանելու հոգին, ապա չարիքից, որի նպատակն է կործանելը, հազիվ թե կործանվի հենց հոգին կամ մեկ այլ բան. կկործանվի լոկ այն, ինչին այդ չարիքն ուղղված է:

– Այո, հազիվ թե, և դա բնական է:

611 – Բայց եթե ինչ-որ բան չի կործանվում նշված չարիքներից և ոչ մեկից՝ ո՛չ սեփականից, ո՛չ օտարից, պարզ է, որ դա անհրաժեշտաբար հավերժական կլինի, իսկ եթե հավերժական է, անմահ է:

– Անհրաժեշտաբար:

– Թող այդպես լինի, իսկ եթե այդպես է, ինչպես հասկանում ես, հոգիները միշտ նույնական են: Բայց եթե ոչ մեկը չի կործանվում, դրանք ո՛չ պակասում են, ո՛չ էլ ավելանում: Չէ՞ որ եթե անմահ գոյերն ավելանային, դա, ինչպես գիտես, կլիներ մահկանացուի հաշվին, և ի վերջո ամեն բան անմահ կդառնար:

– Ճշմարիտ ես ասում:

b – Սակայն մենք այդպես չենք կարծում, քանի որ մեր քննությունը դա թույլ չի տալիս, և բացի այդ, հոգու ճշմարիտ բնությունն այնպիսին է, որ նա լեցուն է ամեն տեսակ բազմազանությամբ, աննույնականությամբ և տարբերությամբ:

– Ի՞նչ նկատի ունես:

– Բազում բաներից համադրված գոյին հեշտ չէ լինել հավերժական, եթե սա լավ չի կազմավորված: Մինչդեռ հոգին մեր զրույցի ընթացքում ներկայացավ հենց այդպիսին:

– Թերևս:

– Որ հոգին անմահ է, անհրաժեշտաբար բխում է ինչպես
ներկայիս, այնպես էլ մեր մյուս զրույցներից: Թե ինչպիսին է
հոգին իրականում, կարելի է իմանալ, դիտելով այն ոչ թե c
քայքայման վիճակում, որի պատճառը հոգու շփումն է մարմ-
նի և ուրիշ չարիքների հետ, ինչպես որ հիմա ենք դիտում,
այլ այնպիսին, ինչպիսին է զուտ վիճակում: Սա հարկ է բա-
վականաչափ քննել, այնժամ դու շատ ավելի գեղեցիկ
կգտնես հոգին և ավելի հստակ կտեսնես արդարությունը,
անարդարությունը և բոլոր մյուս բաները, որոնց մասին խո-
սեցինք: Մենք ճիշտ ենք խոսել հոգու մասին, ինչպիսին որ
այն կա ներկայում: Սակայն մենք դիտարկեցինք միայն դրա
այժմյան վիճակը, և ինչպես ծովային աստված Գլավկոսի[11]
դեպքում, այստեղ էլ դյուրին չէ տեսնել դրա նախնական d
բնությունը: Չէ՞ որ այդ աստծո մարմնի նախկին մասերը կա՛մ
կոտրտված ու տրորված են, կա՛մ էլ այլանդակված են ալիք-
ներից, և բացի այդ, այն ծածկվել է ոստրեներով, ջրիմուռնե-
րով ու քարերով, այնպես որ ավելի շատ նմանվում է գազանի,
քան այն բանին, ինչ է՝ իր բնությամբ: Այդպես նաև հոգին, որը
մենք դիտարկում ենք, բազում չարիքների ազդեցության
պատճառով գտնվում է նույնպիսի վիճակում: Մինչդեռ, Գլավ-
կոն, հարկ է ուշադրություն դարձնել հետևյալի վրա:

– Ինչի՞:

– Որ հոգին սիրում է իմաստությունը: Եվ պետք է նկատել,
թե ինչպիսի իրերի է այն դիպչում, ինչ շփումների կարիք ունի, e
եթե ազգակից է աստվածայինին, անմահին, հավերժ գոյողին,
ինչպիսին կդառնար, եթե ամբողջովին հետևելով նման սկզ-
բունքի՝ դուրս գար ծովից, որի մեջ հիմա գտնվում է, և ազատ-
վեր իրեն պատած քարերից ու ոստրեներից. քանի որ նա ճա-
շակում է երկրայինը, որի մեջ, ինչպես ասում են, կայանում է 612
երջանկությունը, նա պատվում է բազմաթիվ հողեղեն, քարե,
վայրի բաներով: Այդժամ նրա ճշմարիտ բնությունը կարելի
կլիներ տեսնել՝ արդյոք բազմակերպ է, միակերպ, թե՝ այլ: Իսկ

հիմա, կարծում եմ, պատշաճ կերպով քննեցինք մարդկային կյանքում հոգու հնարավոր վիճակներն ու տեսակները:

– Լիովին:

b – Արդ, մենք ազատվեցինք այս զրույցի ընթացքում ծագած նաև ուրիշ հարցերից և խուսափեցինք արդարության մրցանակների կամ փառքի մասին խոսելուց, ինչը, ձեր ասելով, անում են Հեսիոդոսն ու Հոմերոսը: Մենք գտանք, որ ինքը արդարությունը լավագույնն է հոգու համար, և հոգին պետք է արդարություն գործի, անկախ նրանից՝ ստացել է Գիգեսի մատանին, թե ոչ, իսկ դրանից բացի, նաև Հադեսի սաղավարտը[12]:

– Շատ ճիշտ ես ասում:

– Իսկ հիմա, Գլավկոն, չի լինի որևէ առարկություն, եթե մենք ցույց տանք, որ արդարության և մնացյալ առաքինությունների համար կա հատուցում, և պարզենք, թե որքան և

c ինչպես է մարդու հոգին ստանում մարդկանցից և աստվածներից՝ լինի մարդու կյանքի օրոք, թե հետմահու:

– Այո, ոչ մի առարկություն:

– Ուրեմն կվերադարձնե՞ք ինձ զրույցի ընթացքում պարտք վերցրածը:

– Ի՞նչ պարտք:

– Ես թույլ տվեցի ձեզ մտածելու, որ արդար մարդը կարող է համարվել անարդար, իսկ անարդարը՝ արդար: Դուք կարծում էիք,– թեպետ դա անհնար է թաքցնել աստվածներից և մարդկանցից,– որ դա պետք է թույլ տալ հանուն քննության, որպեսզի ինքը արդարությունը համեմատվի հենց անարդարության հետ: Թե՞ չես հիշում:

d – Անարդարություն գործած կլինեի, եթե ասեի, որ չեմ հիշում:

– Քանի որ համեմատությունն արվել է, ես խնդրում եմ հանուն արդարության վերադարձնել այդ ենթադրությունը: Համաձայնեք, որ աստվածների և մարդկանց մեջ արդարության վայելած պատիվը դուք էլ պիտի մատուցեք: Արդարներին այն շնորհում է իր պատիվը, չէ՞ որ արդարությունն ինքը իսկա-

կան բարիք է նրա համար, ով իսկապես հետևում է իրեն. դա պարզ է:

– Արդար պահանջ է:

– Նախ և առաջ վերադարձրեք ինձ փաստարկը, ըստ որի աստվածների համար այս կամ այն մարդու որպիսությունը մնում է անհայտ:

– Վերադարձնում ենք:

– Իսկ եթե դա հայտնի է դառնում աստվածներին, ապա մեկը կվայելի աստվածների բարեհաճությունը, իսկ մյուսը՝ ոչ, ինչպես արդեն ընդունեցինք սկզբում:

– Այդպես է:

– Մի՞թե չենք համաձայնվի, որ աստվածահաճո մարդ- 613
կանց համար աստվածներից եկած ամեն բան լավագույնը կլինի, եթե գործած մեղքի դիմաց նրանց որևէ չարիք սահմանված չէ որպես պատիժ:

– Իհարկե:

– Ուրեմն նույնը պետք է հաստատել նաև արդար մարդու համար, անկախ այն բանից՝ աղքատ է, հիվանդ, թե կրում է մեկ ուրիշ չարիք. այդ ամենն ի վերջո բարիք կլիներ նրա համար կյանքի օրոք կամ մահվանից հետո: Չէ՞ որ աստվածները երբեք չեն դադարի հոգ տանել մարդու մասին, որն ուզում է արդար դառնալ և, վարժվելով առաքինությանը, ըստ
կարելվույն նմանվում է աստծուն: b

– Բնականաբար, նմանը չի դադարի հոգ տանել նմանի մասին:

– Բայց անարդարի մասին պետք է մտածել ճիշտ հակառակը:

– Իհարկե:

– Արդար մարդու համար աստվածները կունենան համապատասխան մրցանակներ:

– Իմ կարծիքով, այո:

– Իսկ մարդի՞կ: Մի՞թե սա չէ հարցը, եթե նկատի առնենք իրականությունը: Անարդար մարդիկ, ճարպիկ լինելով, գոր-

ծում են այն վազորդների պես, որոնք սկզբնական ճանա-
պարհը վազում են շատ արագ, իսկ վերջում հապաղում են և,
c մնալով առանց պսակի, գլխիկոր հեռանում: Մինչդեռ իս-
կական վազորդները հասնում են նպատակին, ստանում են
մրցանակներ և պսակներ: Այդպես չէ՞ նաև արդար մարդկանց
դեպքում: Նրանց ամեն արարք, շփում և ապրելակերպ մարդ-
կանց մոտ առաջ է բերում հարգանք, և դա է նրանց մրցանա-
կը:

– Այն էլ ինչպես:

– Ուրեմն կընդունե՞ս, եթե արդարների մասին ասեմ այն,
ինչ դու ասում էիր անարդարների մասին: Կասեմ, որ բոլոր
d արդար մարդիկ տարիքի հետ իշխանության են գալիս իրենց
պետության մեջ, եթե, իհարկե, ձգտում են դրան, աղջիկներ
են կնության առնում իրենց ուզած ընտանիքներից և իրենց
դուստրերին ամուսնացնում, ում հետ կուզեն: Կարճ ասած՝
այն ամենը, ինչ ասել ես անարդարների մասին, հիմա ես
ասում եմ արդարների մասին: Սակայն անարդարների մասին
նաև ասում եմ, որ նրանցից շատերին, անգամ եթե երիտա-
սարդ տարիքից նրանք կարողանան թաքնվել, կբացահայտեն
e կյանքի վերջում ու կենթարկեն ծաղրի, և ծերությունը նրանց
կլինի թշվառ: Նրանց կանարգեն թե՛ օտարները, թե՛ յուրային-
ները, նաև կծեծեն և, ինչպես քո հիշած ամենասարսափելի
պատիժն է, ցցի կհանեն ու կխարեն: Համարիր, որ ես եմ խո-
սել այն ժամանակ բոլոր այս խոշտանգումների մասին, ոչ թե
դու: Կդիմանա՞ս, եթե ասեմ այդ ամենը:

– Այո, չէ՞ որ դու իրավացի ես:

614 – Սրանք են մրցանակները, ընծաներն ու պարգևները, որ
տրվում են արդար մարդուն աստվածներից ու մարդկանցից
կյանքի օրոք և գումարվում այն բարիքներին, որ շնորհում է
արդարությունը:

– Դրանք հրաշալի և հուսալի պարգևներ են:

– Սակայն քանակով ու մեծությամբ դրանք ոչինչ են նրա
համեմատ, ինչ սպասում է արդարին և անարդարին իրենց

մահից հետո: Հարկ է լսել այդ մասին, որպեսզի երկուսն էլ
օգուտ քաղեն մեր խոսքից:
– Խոսի՛ր, քանզի լսելու համար առավել հաճելի ոչինչ b
չկա:
– Ես կհաղորդեմ ոչ թե Ալկինոոսի, այլ մի քաջ մարդու՝
Պամփիլիայից սերող Արմենիոսի որդի էրի պատմությունը[13]:
Նա սպանվել էր պատերազմում, և երբ տասն օր անց հավա-
քում էին մահացածների արդեն քայքայված դիակները, նրան
գտան անվնաս և բերեցին տուն, իսկ երբ տասներկուերորդ
օրը պատրաստվում էին հողին հանձնել, արդեն խարույկի
վրա պառկած՝ նա հանկարծ կենդանություն առավ ու պատ-
մեց, թե ինչ էր տեսել այնտեղ:
Ասում էր, որ իր հոգին, դուրս գալով մարմնից, շատ ուրիշ
հոգիների հետ ճանապարհ ընկավ ու եկավ աստվածային մի
վայր, որտեղ հողի մեջ բացված էր երկու ծերպ և ևս երկուսը c
դիմացը՝ երկնքում[14]: Դրանց մեջտեղում նստած էին դատա-
վորները, որոնք վճիռ կայացնելուց հետո արդար մարդկանց
կարգադրում էին գնալ աջ, վեր՝ դեպի երկինք, նրանց առջևից
ամրացնելով համապատասխան նշանը, իսկ անարդարներին՝
ձախ, ներքև, և սրանք, նույնպես, ունեին իրենց զանցանքնե-
րի նշանները՝ թիկունքներին: Երբ էրը մոտեցավ դատավոր- d
ներին, նրանք ասացին, որ ինքը պիտի դառնա մարդկանց
բանբերը և հաղորդի այն, ինչ տեսել է այստեղ, այնպես որ
պատվիրեցին լսել ամեն ինչ և հետևել ամեն բանի: Նա տե-
սավ, ինչպես իրենց դատավճիռը ստացած հոգիները հեռա-
նում էին երկու ծերպերով՝ երկնքի և երկրի, իսկ մյուս երկու
ծերպերով՝ ժամանում: Մի ծերպով երկրից բարձրանում էին
կեղտով ու փոշով լի հոգիները, իսկ մյուսով երկնքից իջնում
էին մաքուր հոգիները: Եվ բոլոր եկածներն ասես վերադառ-
նում էին մի մեծ ուղևորությունից: Նրանք հանգրվանում էին
մարգագետնի վրա, ինչպես ժողովրդական տոնակատարու- e
թյունների ժամանակ, ծանոթները ողջունում էին միմյանց և
հարցուփորձ անում երկրից եկածներին երկրային, իսկ երկն-

քից ժամանածներին՝ երկնային անցուդարձի մասին: Եվ
615 նրանք պատմում էին՝ ոմանք ողբ ու սուգով հիշելով իրենց զրկանքները և այն, ինչ տեսել են ստորերկրյա ուղևորության ընթացքում,– այդ ուղևորությունը տևում է հազար տարի,– իսկ մյուսները՝ երկնքից եկածները, պատմում էին երանության և անասելի գեղեցիկ տեսարանների մասին:

Այդ ամենը պատմելու համար, Գլավկոն, շատ ժամանակ կպահանջվեր: Սակայն գլխավորը, նրա ասելով, այն էր, որ յուրաքանչյուր վիրավորանքի համար և յուրաքանչյուր վիրա-
b վորվածի համար վիրավորանք հասցնողը պատժվում է տասնապատիկ և հարյուր տարով (քանի որ այդքան է մարդու կյանքի տևողությունը), որպեսզի պատիժը տասնապատիկ մեծ լինի հանցանքից: Նա, ով շատերի մահվան պատճառ է դարձել կամ դավաճանել է պետությանն ու զորքին, որը ստրկության է գերեվարվել, կամ մեղավոր է մեկ ուրիշ չարագործության մեջ,– այդ ամենի համար պիտի կրի տասնապատիկ մեծ տառապանք: Իսկ նա, ով բարի գործեր է կատարել և եղել է արդար ու բարեպաշտ, ստանում է իրեն արժանին:

c Թե ինչ պատմեց էրը կարճ ժամանակ ապրածների մասին, հիշել չարժե: Նա պատմում էր նաև աստվածների ու ծնողների հանդեպ ոչ բարեպաշտ և բարեպաշտ վերաբերմունքի և ինքնասպանության համար սահմանված հատուցման մասին: Նա ասում էր, որ ներկա է եղել այսպիսի հարց ու պատասխանի. «Որտե՞ղ է մեծն Արդիևսը»: Այդ Արդիևսը Պամփիլիայի ինչ-որ քաղաքի բռնակալն էր սրանից դեռ հազար տարի առաջ և, ինչպես ասում են, սպանել էր իր ծեր հորը, ավագ եղբորը և գործել բազմաթիվ այլ պիղծ հանցանք-
d ներ: Նա, ում ուղղված էր հարցը, էրի ասելով պատասխանեց. «Արդիևսը չի ժամանել և չի էլ գա այստեղ: Մեր տեսած ամենասարսափելի տեսարաններից մեկը սա էր. երբ շատ տառապանք կրելուց հետո մենք մոտեցանք մուտքին և պատրաստվում էինք մտնել, տեսանք Արդիևսին և ուրիշների,

որոնք գրեթե բոլորը բռնակալներ էին, ինչպես նաև սովորա-
կան մարդկանց, որ մեծագույն չարագործներ էին: Նրանք
մտադիր էին մուտք գործել, սակայն մուտքը չընդունեց e
նրանց, այլ շառաչում էր, երբ այդ հանցագործներից որևէ
մեկը, որ անուղղելի էր իր արատավորության մեջ կամ դեռ
բավականաչափ պատժված չէր, փորձում էր մուտք գործել:
Եվ այդտեղ նա տեսավ նաև հրով պատված վայրի մարդկանց,
որոնք մուտքի շառաչին անսալով՝ բռնեցին մեղսագործներին 616
և տարան, իսկ Արդիևսի և մյուսների ձեռքերն ու ոտքերը
կապկպելով՝ նրանց գետնին տապալեցին, մաշկեցին և քարշ
տվեցին ճամփեզրով, փշերի միջով, բոլոր հանդիպողներին
հայտնելով, թե ինչի համար է այդ պատիժը, և ասում էին, որ
նրանց տանում են Տարտարոս: Չնայած, որ արդեն բազմա-
թիվ այլևայլ սարսափներ էինք տեսել, սակայն դրանցից ամե-
նաազդեցիկն այն վախն էր, որ չլինի այնպես՝ նորից լսենք
մուտքի շառաչը, երբ նորից այնտեղ հայտնվենք,– այդ իսկ
պատճառով յուրաքանչյուրն ուրախանում էր, երբ ներս մտնե-
լուց հետո այլևս չէր լսում այն»:

Ահա ինչպիսին էին վճիռները ու պատիժները: Բարեգործ-
ների հատուցումը միանգամայն հակառակն էր: Այդ մարգա- b
գետնում յոթ օր մնալուց հետո պետք էր բարձրանալ և ճա-
նապարհ ընկնել՝ չորս օրում հասնելու համար այնտեղ, որ-
տեղից երևում է վերևից երկնքի և երկրի միջով անցնող լույ-
սի սյունաձև ճառագայթը, որը շատ նման էր ծիածանի, սա-
կայն ավելի պայծառ ու մաքուր էր: Նրանք հասան դրան,
անցնելով մեկ օրվա ճանապարհ, և տեսան լույսի այդ սյան c
մեջտեղում երկնքից կախված շղթայի ծայրեր: Քանզի այդ
լույսը երկնքի հանգույցն է. ինչպես քառակող գերանը տրիե-
րաների վրա, այն կապում է երկնակամարը[15]: Այդ շղթայի ծայ-
րերից կախված է Անանկեի իլիկը, որի շնորհիվ ամեն բան
պտտվում է: Իլիկի սուր և կեռ ծայրերը ադամասից են, իսկ
իրանը՝ ադամասից և այլ նյութերի խառնուրդից: Իրանի բնու-
թյունն այսպիսին է. տեսքով նման է մեր սովորական իլիկնե-

d րին, բայց էրի ասելով՝ սնամեջ է և դրա մեջ տեղադրված է մեկ
ուրիշ, ավելի փոքր իրան, ինչպես որ մեկը մյուսի մեջ դրվում
են արկղերը: Այդպես նրանում տեղադրված են նաև երրորդը,
չորրորդը ու ևս չորս իրան: Դրանք թվով ութն են և դրված են
մեկը մյուսի մեջ, իսկ ծայրերը վերևից երևում են որպես մեկ
առանցքի շուրջ հավաքված օղակներ, այնպես որ դրսից
դրանք կազմում են իլիկի մեկ միասնական իրանի մակերեսը,
e իսկ առանցքը անցկացված է ութերորդ իրանի միջով: Առաջին
և ամենաարտաքին իրանն ունի շրջանի ամենամեծ մակերե-
սը, վեցերորդն իր մակերեսի մեծությամբ երկրորդն է, չոր-
րորդը երրորդն է, ութերորդը՝ չորրորդը, յոթերորդը՝ հինգե-
րորդը, հինգերորդը՝ վեցերորդը, երրորդը՝ յոթերորդը, երկրոր-
դը՝ ութերորդը[16]: Ամենամեծ իրանի շրջանը խայտաբղետ է,
յոթերորդը ամենապայծառն է, ութերորդը ստանում է իր գույ-
617 նը յոթերորդի պայծառությունից, երկրորդն ու հինգերորդը
գույնով մոտ են միմյանց և մյուսներից առավել դեղին են, եր-
րորդը ամենաճերմակն է, չորրորդը կարմրավուն է, իսկ վեց-
երորդը ճերմակությամբ երկրորդն է[17]: Ողջ իլիկը, պտտվելով,
ամեն անգամ կատարում է միևնույն պտույտը, բայց իր
պտույտի հետ միաժամանակ ներքին յոթ շրջանները պտտ-
վում են ամբողջովին հակառակ ուղղությամբ: Ամենից արագ
b շարժվում է ութերորդ շրջանը, երկրորդ տեղում են միաժա-
մանակ յոթերորդը, վեցերորդը և հինգերորդը: Երկրորդն է,
ինչպես նկատեցին, իր շրջապտույտով չորրորդը: Չորրորդն
է երրորդը, իսկ հինգերորդը՝ երկրորդը: Այդ ամենը պտտվում
է Անանկեի ծնկներին[18]:

Վերևից իլիկի շրջաններից յուրաքանչյուրի վրա նստած է
մի Սիրեն, որը շարժվում է ամբողջի հետ միասին և արձա-
կում է միշտ նույն բարձրության մեկ ձայն: Բոլոր ձայները,
որոնք ութն են, ներդաշնակություն են կազմում[19]: Սիրեններից
հավասար հեռավորությամբ, յուրաքանչյուրն իր գահին,
նստած են նաև երեք ուրիշ էակներ՝ Անանկեի դուստրերը՝ Լա-
c քեսիսը, Կլոթոն և Ատրոպոսը՝ ճերմակազգեստ և պսակազարդ

Մոյրաները: Սիրենների հետ համահունչ՝ Լաքեսիսը երգում է անցյալը, Կլոթոն՝ ներկան, իսկ Ատրոպոսը՝ ապագան: Կլոթոն աջ ձեռքով դիպչում է իլիկի իրանի արտաքին բոլորակին՝ օգնելով, որ այն պտտվի: Ատրոպոսը ձախ ձեռքով պտտում է ներքին շրջանները, իսկ Լաքեսիսը հերթով դիպչում է դրսի և ներսի շրջանակներին[20]: d

Եվ երբ էրն ու մյուսները հասան այդտեղ, անմիջապես պետք է մոտենային Լաքեսիսին: Ոմն գուշակ դասավորեց նրանց շարքով, այնուհետև Լաքեսիսի ծնկներից վերցնելով քվեներն ու կյանքի նմուշները, ելավ բարձր ամբիոն և ասաց. «Ահա՛ Անանկեի դուստր, կույս Լաքեսիսի խոսքը: Մեկօրյա՛ հոգիներ, սա մեկ ուրիշ, մահկանացու ցեղի համար մահացու շրջապտույտի սկիզբն է: Քվեարկությամբ ոգին[21] ձեզ չի ստանա, այլ՝ դուք ինքներդ կընտրեք նրան: Նա, ում քվեն կլի- e
նի առաջինը, թո՛ղ առաջինն ընտրի կյանքը, որն անհրաժեշտաբար բաժին է ընկնում նրան: Առաքինությունը չունի տեր. պատվելով կամ չպատվելով նրան՝ յուրաքանչյուր ոք հաղորդակից է նրան առավել կամ պակաս չափով: Դա ընտրողի մեղքն է: Աստված անմեղ է»:

Սա ասելով՝ նա գցեց քվեները ամբոխին, և յուրաքանչյուրն ընտրեց իրենը: Չընտրեց միայն էրը, որին թույլ չտվեցին: Յուրաքանչյուրն իմացավ իր համարը: Դրանից հետո գցեց 618
նրանց կյանքի նմուշները, որոնք ներկաներից ավելի շատ և բազմապիսի էին: Դրանց թվում կային նաև կենդանիների և ամեն տեսակ մարդկային կյանքի նմուշներ: Կային բռնապետական կյանքի նմուշներ. մի մասը ցմահ, մի մասը՝ կյանքի կեսից թուլացած, որոնց վերջը աղքատությունն է և աքսորը: Կային նաև այնպիսի մարդկանց կյանքի նմուշներ, որոնք նշանավոր էին իրենց տեսքով, գեղեցկությամբ, մրցություններում դրսևորած ուժով կամ իրենց նախնիների ազնիվ ծագումով ու առաքինություններով: Կային նաև վատ հռչակ վայե- b
լողների, նմանապես նաև կանանց կյանքեր: Բայց դա չէր որոշում հոգու նկարագիրը, որովհետև հոգին կարող է դառ-

նալ ուրիշ, եթե ընտրի ուրիշ կյանք: Հարուստներն ու աղքատները, հիվանդներն ու առողջները, ինչպես նաև միջանկյալ վիճակի մեջ գտնվողները խառնված էին իրար:

Ինչպես երևում է, այստեղ է, բարեկա՛մ Գլավկոն, մարդու համար ամբողջ վտանգը, ահա ինչու հարկ է առավելագույնս հոգալ, որ մեզնից յուրաքանչյուրը, անուշադրության մատնե-
c լով մյուս գիտությունները, հետազոտող և աշակերտ դառնա այս ճանաչողության մեջ, եթե ի վիճակի է որևէ կերպ սովորելու և գտնելու նրան, ով կկարողանա սովորեցնել իրեն ճանաչել պիտանի ու հոռի կյանքը և ամենուր լավագույնն ընտրել ընձեռված հնարավորություններից: Հաշվի առնելով, թե ինչ ասվեց բոլոր այս բաների մասին, և համեմատելով այդ ամենը՝ մարդը պիտի հասկանա, թե ինչ է աղքատությանը
d կամ հարստությանը միացած գեղեցկությունը և հոգու ինչ վիճակի զուգակցությամբ է այն չարիք կամ բարիք գործում, նաև՝ ինչ է ազնվատոհմ կամ ոչ ազնվատոհմ ծագումը, մասնավոր կյանքը, պաշտոնները, ուժն ու թուլությունը, սովորելու ընդունակությունը և անընդունակությունը: Հոգու բնական հատկությունները որոշ բարենպաստ համադրությունների դեպքում թույլ են տալիս մարդուն խորհրդածելով ընտրություն կատարել: Ավելի վատը նա կհամարի այն կյանքը, որը
e մղում է հոգուն անարդարության, դարձնում անարդար, իսկ ավելի լավը՝ երբ հոգին ավելի արդար է դառնում: Մնացյալ բոլոր բաները նա մի կողմ է թողնում: Մենք արդեն տեսանք,
619 որ կյանքի օրոք և մահից հետո սա ամենակարևոր ընտրությունն է: Պետք է հեռանալ Հադես՝ ունենալով ադամասի պես ամուր այդ համոզմունքը, որպեսզի այնտեղ չկուրանանք հարստությունից և ուրիշ նման չարիքներից, չվերածվենք բռնակալների և զանազան հանցանքներով բազում չարիքների պատճառ չդառնանք, ինքներս չկրենք առավել մեծ չարիքներ, այլ կարողանանք ընտրել միջին ուղին և չընկնենք ծայրահեղությունների մեջ ինչպես այս, այնպես էլ հետագա կյանքում,
b քանզի դա է մարդու համար մեծագույն երջանկությունը:

Անդրաշխարհի բանբերը հաղորդեց նաև, որ գուշակն ասել է այսպես. «Անգամ նրա համար, ով ընտրության կդիմի վերջինը, կյանքն այստեղ լավն է, եթե իհարկե ընտրությունը կատարվի խոհեմաբար, և ընտրողը զուսպ կյանք վարի: Նա, ով ընտրում է սկզբում, թող ուշադիր լինի, իսկ նա, ով ընտրում է վերջում՝ չվհատվի:»

Այս խոսքից հետո իսկույն մոտեցավ նա, ում բաժին էր ընկել առաջին քվեն. դա մեծագույն բռնակալի կյանք էր: Իր անխոհեմության ու ագահության պատճառով նա ընտրեց առանց c
մտածելու, և այդ ընտրությունը նրա համար ճակատագրական էր. նա պիտի խժռեր սեփական զավակներին և ենթարկվեր ուրիշ չարիքների: Երբ հետո հանգամանորեն մտածեց այդ ամենի մասին, սկսեց կուրծք ծեծել և սգալ, որ ընտրություն կատարելիս հաշվի չառավ գուշակի զգուշացումը: Եվ այդ չարիքների համար մեղադրում էր ոչ թե իրեն, այլ իր բախտը, դեմոններին,– ամեն-ամեն ինչ, բայց ոչ ինքն իրեն: Մինչդեռ նա երկնքից եկածների թվում էր և նախորդ կյանքը
ապրել էր բարեկարգ պետության մեջ. ճիշտ է, նրա այդ առա- d
քինությունը սոսկ սովորություն էր և չէր բխում փիլիսոփայական մտորումից: Ըստ էության քիչ չէին նրանք, ովքեր եկել էին երկնքից, բայց այս աշխարհում ծուղակն էին ընկել, քանզի անփորձ էին դժվարություններում: Իսկ երկրից եկածները ավելի շրջահայաց էին իրենց ընտրության մեջ, քանի որ իրենք արդեն տեսել էին դժվարություններ, ինչպես նաև նրանց, ովքեր կրել էին դրանք: Ահա ինչու, նաև քվեարկության պատահականությունների արդյունքում, շատ հոգիների
համար տեղի է ունենում լավի և վատի փոփոխություն: Իսկ e
եթե գալով այս կյանք մարդն առողջ փիլիսոփայում է և ընտրության ժամանակ նրան բաժին է ընկնում ոչ ամենավերջին քվեն, ապա այն աշխարհից եկած լուրերի համաձայն երջանիկ կլինի ոչ միայն այստեղ. նրա ճանապարհը այստեղից այնտեղ և այնտեղից այստեղ չի լինի ստորերկրյա ու փշոտ, այլ՝ հարթ և երկնային:

Արժե տեսնել, ասում էր էրը, թե ինչպես են տարբեր հո-
620 գիներն ընտրում իրենց կյանքերը: Դա խղճալի, զավեշտական և տարօրինակ տեսարան էր: Շատերն ընտրում էին՝ ելնելով նախորդ կյանքի սովորությունից: Տեսավ՝ ինչպես երբեմնի Օրփեոս եղած հոգին ընտրեց կարապի կյանք: Ատելով կանանց, որոնք նրա մահվան պատճառը դարձան, նա չցանկացավ ծնվել կնոջից: Տեսավ Թամիրասի[22] հոգին, որը սոխակի
b կյանք էր ընտրել: Տեսավ նաև կարապ, որը նախընտրեց մարդկային կյանքը, և այլ մուսայական կենդանիներ: Հոգին, որն ուներ քսաներորդ քվեն, ընտրեց առյուծի կյանք. դա Տելամոնի որդի Այասն[23] էր: Սա խուսափում էր մարդ ծնվելուց՝ հիշելով զենքերի դատը: Նրան հաջորդում էր Ագամեմնոնի հոգին: Կրած տառապանքների պատճառով սա նույնպես դժկամությամբ էր նայում մարդկային ցեղին և ընտրեց արծվի կյանք[24]: Այդ ընթացքում իր քվեն ստացավ Ատալանտեի[25] հոգին: Տեսնելով, թե ինչ մեծ պատիվ է վայելում մրցույթներում հաղթողը, չկարողացավ դիմանալ և ընտրեց այդ կյանքը: Այն-
c ուհետև տեսավ՝ ինչպես Պանոպսի որդի էպեյոսի[26] հոգին առավ արվեստներում հմուտ կնոջ բնություն: Հեռվում, ամենավերջին եկողների մեջ նա տեսավ ծաղրածու Թերսիտեսի[27] հոգին, որը մտավ կապիկի մեջ: Ոդիսևսին բախտ վիճակվեց ընտրել վերջինը: Հիշելով նախկին զրկանքները և մի կողմ դնելով ամեն փառասիրություն՝ երկար ժամանակ փնտրում էր սովորական, գործերից հեռու մարդու կյանք և հազիվ գտավ այն ինչ-որ տեղ ընկած և բոլորի կողմից անու-
d շադրության մատնված: Բայց Ոդիսևսի հոգին, տեսնելով սա, ասաց, որ նույնը կընտրեր, անգամ եթե իրեն բաժին ընկներ առաջին քվեն: Կենդանիների հոգիները ևս ընտրում էին մարդկային կյանքեր և փոխանակում միմյանց կյանքերը. անարդարներն այստեղ ընտրում էին վայրի, իսկ արդարները՝ հեզ կյանք, և այդպես բոլորը խառնվում էին:

Արդ, երբ բոլոր հոգիներն ըստ քվեարկության ընտրեցին իրենց կյանքը, հերթով մոտեցան Լաքեսիսին: Վերջինս յուրա-

քանչյուրի ընտրած դեմոնին ուղարկում էր նրա հետ որպես d
կյանքի պահապան և ընտրությունն իրականացնող: Նախ,
պահապանը տանում էր հոգին Կլոթոյի մոտ՝ նրա ծեռքի և
պտտվող իլիկի շրջապտույտի տակ. այդկերպ նա հաստա-
տում էր յուրաքանչյուրի ընտրած ճակատագիրը: Կլոթոյի
հպումից հետո նա տանում էր հոգին Ատրոպոսի գործվածքի 621
մոտ, ինչն այլևս անփոփոխ էր դարձնում կյանքի թելերը: Այս-
տեղից հոգին, առանց շրջվելու, գնում էր դեպի Անանկեի գա-
հը և անցնում դրա միջով: Երբ մյուս հոգիները նույնպես ան-
ցան դրա միջով, նրանք բոլորը շոգի և տապի պայմաններում
ուղևորվեցին Լեթեի հովիտը[28], որտեղ չկար ո՛չ ծառ, ո՛չ էլ
ուրիշ բուսականություն: Արդեն երեկոյան նրանք հանգրվա-
նեցին Ամելետոն[29] գետի ափին, որի ջուրը ոչ մի անոթի մեջ
չի կարող պահվել: Բոլորը պիտի չափավոր խմեին գետի
ջրից, սակայն անխոհեմները խմում էին առանց չափի, իսկ
այդ դեպքում նրանք ամեն ինչ մոռանում են: Երբ պառկեցին b
քնելու, կեսգիշերին որոտ թնդաց և երկրաշարժ եղավ: Հան-
կարծ նրանք տարվեցին տարբեր կողմեր և ապա այնտեղ,
ուր պիտի ծնվեին, այնպես որ ցրվեցին երկնքում, ինչպես
աստղերը: Էրին արգելված էր խմել այդ ջրից: Նա չիմացավ,
թե ինչպես նորից հայտնվեց իր մարմնի մեջ: Ուշքի գալով՝ նա
տեսավ, որ պառկած է խարույկի վրա:

Ահա այսպես է փրկվել և չի կորել այս պատմությունը,
Գլավկոն: Այն կփրկի նաև մեզ, եթե հավատանք դրան, և մենք
կանցնենք Լեթեն առանց պղծելու մեր հոգին: Բայց հավատա- c
ցեք ինձ. մտածելով, որ հոգին անմահ է և ունակ է կրելու
ամեն չարիք ու ամեն բարիք, բոլորս կընթանանք վերին ճամ-
փով և, խոհեմաբար պահպանելով արդարությունը, բարեկամ
կլինենք և՛ ինքներս մեզ, և՛ աստվածներին: Իսկ եթե շահենք
մրցանակը, ինչպես դա անում են մրցույթների՝ ամենուր
ընծաներ հավաքող հաղթողները, ապա և՛ այստեղ, և՛ հազա-
րամյա այդ ճամփորդության ընթացքում, որը քննեցինք, d
կմնանք բարյավ:

ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

Գիրք առաջին. Աթենքի մերձակայությամբ գտնվող Պիրևս քաղաքում, Կեփալոսի տանը զրուցում են Սոկրատեսը, Կեփալոսը, Պոլեմարքոսը, Թրասիմաքոսը, Ադիմանտոսը, Գլավկոնը և Արիստոնը: Արդարության ինչ լինելու իր համար ավանդական հարցադրումից հետո Սոկրատեսն անցնում է պետության հասկացությանը: Արդարությունը կարող է տեղ գտնել միայն կատարյալ պետության մեջ:

Գիրք երկրորդ. Իդեալական պետության մեջ հարկ է կատարել աշխատանքի բաժանում ըստ բնական հակումների, օժտվածության և պահանջների: Անհրաժեշտ է նաև դաստիարակել պահապանների դասը: Այդ դաստիարակության մեջ առանձնապես կարևորվում են մուսայական արվեստները, մարմնամարզությունը, առասպելների և պոեզիայի ուսումնասիրությունը:

Գիրք երրորդ. Պլատոնն արտահայտում է իր պատկերացումը արվեստի և դրա դաստիարակչական նշանակության մասին: Պահապանները պետք է լրջագույն և խստագույն փորձության ենթարկվեն ինչպես պատանի, այնպես էլ հասուն տարիքում: Նրանք պետք է լինեն արի, ժուժկալ, ներդաշնակ, սթափ և իրենց ողջ գործունեությամբ նպաստեն պետության բարօրությանը: Չպիտի ունենան մասնավոր սեփականություն, պիտի սնվեն համեստ կերակուրներով, փոքրուց լսեն միայն վեհության և քաջության օրինակներ ներկայացնող պոեզիա, լսեն միայն ոգեշունչ երաժշտություն:

Գիրք չորրորդ. Ադիմանտոսի այն առարկությանը, թե այդպիսի պետության քաղաքացիները չեն լինի երջանիկ, Սոկրատեսը տալիս է հետևյալ հակափաստարկը: Միայն այդպիսի պետության քաղաքացիները կլինեն երջանիկ, քանի որ երջանիկ կլինի ողջ պետությունը, այլ ոչ այս կամ այն խավը: Չէ՞ որ դա է պատվիրում արդարությունը: Քննվում են պետության չափը, օրենքները, արժանիքները: Բնորոշվում են մարդկային հոգու երեք սկզբունքները, որոնցից բխում է պետության բաժանումը երեք խավերի: Անգամ պետական հինգ կարգերը դուրս են բերվում այդ երեք սկզբունքներից:

Գիրք հինգերորդ. Կանայք և զավակները իդեալական պետության մեջ պետք է լինեն ընդհանուր: Բացի այդ, կանայք պիտի կիսեն տղամարդու շատ զբաղմունքներ և նույնիսկ պետության պահապաններ լինեն: Այս ամենը առավել միասնական կդարձնի պետությունը: Պետության գլուխ պետք է կանգնած լինի բացառապես փիլիսոփա կառավարիչը, քանի որ միայն փիլիսոփաները կարող են ճանաչել հավերժականը և ճշմարիտը, այլ ոչ թե անցողիկն ու կարծեցյալը:

Գիրք վեցերորդ. Խոսելով փիլիսոփա կառավարիչների մասին՝ Սոկրատեսը առանձնացնում է փիլիսոփայական հոգու հիմնական հատկությունները: Փիլիսոփայական հոգու առաքինությունները համընկնում են իդեալական պետության առաքինություններին հետ: Փիլիսոփայի գերադաս դիրքը պետության մեջ պայմանավորված է բարձրագույն բարիքի՝ էյդոսի իմացությամբ: Բարիքը նման է Արեգակի, որը լուսավորում է ամեն բան, և դրա շնորհիվ ողջ գոյը ճանաչելի է դառնում: Պատմվում է Քարանձավի միթոսը:

Գիրք յոթերորդ. Քննադատության են ենթարկվում կառավարման արատավոր ձևերը, որոնք չորսն են՝ տիմոկրատիան, օլիգարխիան, դեմոկրատիան և բռնապետությունը: Նշվածներից յուրաքանչյուրը աստիճան է, որը կառավարման նախորդ ձևը կապում է հաջորդ ձևի հետ: Այդպես արատները, որոնք սկզբնավորվում են տիմոկրատիայի օրոք, հանգեցնում են օլիգարխների իշխանության հաստատմանը:

Գիրք ութերորդ. Կառավարման արատավոր ձևերի քննադատությունը շարունակվում է: Օլիգարխիան վերափոխվում է դեմոկրատիայի, որի օրոք քաղաքացիների ֆորմալ կառավարումը հավասարեցնում է տարբեր արժանիքների տեր մարդկանց ու նրանց իրավունքները և սկիզբ է դնում անտեղյակության ու անօրինության, օխլոկրատիայի (ամբոխավարության), որն ավարտվում է կառավարման ամենավատթար ձևով՝ բռնապետությամբ: Պլատոնը դուրս է բերում բռնապետությունը հենց դեմոկրատիայից, այսինքն՝ ծանրագույն ստրկությունը «մեծագույն ազատությունից»:

Գիրք իններորդ. Տրվում է մարդու տենչանքների վերլուծությունը: Բռնապետի հոգին հոռի տենչանքների գերին է, և այն դժբախտ է: Փիլիսոփան գիտի հաղթահարել հոռի տենչանքները, ահա ինչու նա և բռնապետը, որը սեփական տենչանքների գերին է, կազմում են բացարձակ հակադրություն: Փիլիսոփան պետության կառավարման մեջ ներմուծում է բանական սկզբունքներ և ազատում է պետությունը հոռի տենչանքներով համակված բռնապետի ստրկությունից:

Գիրք տասներորդ. Ներկայացվում է հոգիների վերաբնակության ուսմունքը: Սոկրատեսը վերադառնում է իդեալական պետության մեջ պոեզիայի և արվեստի նշանակությանը, զարգացնելով արվեստի՝ որպես նմանակման նմանակման տեսությունը: Բանաստեղծը ստեղծում է սոսկ պատրանքներ, այլ ոչ ճշմարիտ գոյություն: Ներկայացվում է էրի հանդերձյալ աշխարհ կատարած ուղևորության միթոսը, որի միջոցով Պլատոնը տալիս է հոգու ինքնանույնականության և ինքնաբավության իր տեսությունը: Անմահ հոգին մաքուր պահելու համար երկրային կյանքում հարկ է համադրել արդարությունը խոհեմության հետ և բարեկամ լինել ինքն իրեն և աստվածներին:

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թարգմանությունն արվել է Plato, Republic (Loeb Classical Library, Volume V, Harvard University Press) հին հունարեն/անգլերեն հրատարակությունից: Նկատի են առնվել հետևյալ թարգմանությունները. անգլերեն՝ Republic, նշվ. հրատ., with an English translation by Paul Shorey, գերմաներեն՝ Platon, Der Staat, Sämtliche Werke in drei Bänden, Band III, Darmstadt, 2004, Buch I–V übersetzt von Wilhelm Sigismund Teuffel, Buch VI–X von Wilhelm Wiegand, ռուսերեն՝ Платон, Сочинения, том 3 (1), Москва, 1970, Государство, перевод А. Н. Егунова, հայերեն՝ Պլատոնի Հանրապետությունը, Լոս Անջելես, 1940, թարգմ. հունարենից՝ Արսեն Երիցյանի:

Գիրք առաջին

[1] Հավանաբար նկատի ունի Բենդիսին՝ թրակիական դիցուհուն, որը նույնացվում էր հունական Արտեմիսի հետ: – *7*

[2] *Կեփալոսի որդի Պոլեմարքոս* – Կեփալոսը հայտնի հռետոր էր, ծագումով սիկիլիացի, Աթենք էր տեղափոխվել Պերիկլեսի հրավերով: Որդիներն են հռչակավոր հռետոր Լիսիասը և Պոլեմարքոսը, որին Երեսունի իշխանության օրոք հրամայված էր թույն խմել: – *7*

[3] *Թեմիստոկլես* (ծնվ. Ք.ա. 525) – աթենացի զորավար և պետական գործիչ: Աթենքի ծովային գերիշխանության սկզբնավորողը և Ք.ա. 480 թ. Սալամիսի ճակատամարտում պարսիկների նկատմամբ հույների տարած հաղթանակի կազմակերպիչը: *Սերիփոսը*՝ կիկլադյան կղզիներից մեկը, բնակիչների աղքատության պատճառով

ծաղրի առարկա էր հարուստ հույների համար: Սերիփոսցու և Թեմիստոկլեսի զրույցի մասին հաղորդում է նաև Պլուտարքոսը իր «Կենսագրություններում» («Թեմիստոկլես», XVIII): – *10*

[4] *Պինդարոսը* (Ք.ա. 522–442) երգչախմբային քնարերգության խոշորագույն ներկայացուցիչն է: Իր ներբողներում երգել է համահելլենական մրցախաղերում հաղթած հերոսներին: – *12*

Այստեղ մեջբերվում է Պինդարոսի 214-րդ դրվագը (տողացի թարգմ.՝ Ս. Ստեփանյանի):

[5] *Սիմոնիդես* (Ք.ա. VI–V դդ.) – քնարերգու, գրել է ինչպես էլեգիաներ, այնպես էլ խմբերգեր: – *12*

[6] Որ բարեկամներին բարիքով, իսկ թշնամիներին չարիքով հատուցելն արդարություն է, Սոկրատեսը վիճարկում է նաև «Կրիտոնում» և «Գորգիասում»: – *14*

[7] Հոմերոսն այսպես է ասել Ավտոլիկոսի մասին.

Ավտոլիկը՝ նրա մոր հայրն հռչականուն, գերազանցում էր միշտ մարդկանց
Որպես քաջ գող, երդմնազանց: Չիրքն այդ նրան շնորհել էր Հերմես աստվածն,
Որին նա միշտ հաճոյական զոհ էր բերում և այրում էր ոչխարների
Ու այծերի պարարտ ազդրեր, ուստի Հերմեսն ուղեկցում էր նրան սրտանց:

(«Ոդիսական», XIX, 395–398, թարգմ.՝ Հ. Համբարձումյանի, Ե., 1988): – *17*

[8] Նկատի ունի յոթ իմաստուններին՝ Պիտտակոսին, Բիասին, Թալեսին, Քիլոնին, Կլեոբուլոսին, Սոլոնին և Պերիանդրոսին: Պիտտակոսը (Ք.ա. VI դ.) հայտնի է որպես Միտիլենեի ընտրյալ կառավարիչ: Պիտտակոսի մասին գրել է նրա քաղաքական հակառակորդ, մեծ քնարերգու Ալկայոսը: Բիասը (Ք.ա. VI դ.) հայտնի է իր «Իմ ամեն բանն ինձ հետ է» արտահայտությամբ: – *20*

[9] *Պերիանդրոսը*՝ Կիպսելոսի որդին, Կորնթոսի տիրակալն էր (Ք.ա. VII–VI դդ.): Երևելի քաղաքական գործիչ էր և իմաստուն այր, յոթ իմաստուններից մեկը: «Պրոտագորաս» տրամախոսության մեջ (343a) Պլատոնը չի համարում նրան իմաստուն:

Նկատի ունի *Պերդիկաս Երկրորդին*՝ Մակեդոնիայի արքա Արքելաոսի հորը:

Նկատի ունի պարսից արքա Քսերքսես I-ին (Ք.ա. մոտ. 519–465), որը պատերազմ սկսեց հույների դեմ և պարտություն կրեց Սալամիսում, Պլատեայում և Միկալեում:

Նկատի ունի Թեբեի դեմոկրատական, հակասպարտայական կուսակցության պարագլուխ Իսմենիասին: Սա հարստացել էր պարսկական այն դրամի հաշվին, որով պարսիկները ձգտում էին կաշառել Թեբեի, Կորնթոսի և Արգոսի քաղաքական գործիչներին՝ Սպարտայի դեմ նոր պատերազմ սկսելու համար: – *21*

[10] Ծիծաղել *սարդանիաբար* նշանակում է ոիծաղել հեգնորեն, թունոտ: Պավսանիասը, գրելով սարդանիական ծիծաղի և Սարդինիա կղզու միջև եղած կապի մասին, նշում է, որ Սարդինիայի թունավոր մի խոտաբույսն առաջ է բերում ծիծաղ հիշեցնող ջղաձգումներ, որոնք ուղեկցում են հոգեվարքին (X 17, 13): – *22*

[11] Արդարությունը որպես ուժեղի իրավունք պաշտպանում է սոփեստ Կալլիկլեսը «Գորգիաս» (485a–492c) տրամախոսության մեջ: – *24*

[12] Սխոլիաստը հաղորդում է, որ թեսալացի *Պոլիդամասը* ամենաուժեղ հնգամարտիկը, լինելով պարսից արքայի մոտ, սպանել է առյուծներ և կռվել է մերկ: – *24*

[13] Սոփեստ Կլիտոփոնն հեգնում է իր հակառակորդին: – *26*

Գիրք երկրորդ

[1] *Գիգեսի* մասին, որը սպանել է իր տիրակալին՝ Լիդիայի արքային, և տիրացել նրա երկրին ու կնոջը, հաղորդում է Հերոդոտոսը (I 8–15): Գիգեսի մատանին հիշատակվում է նաև «Պետության» վերջին գրքում (612a), որտեղ Պլատոնը համեմատում է այն Հադեսի սաղավարտի հետ: – *53*

[2] Տե՛ս Էսքիլոս, «Յոթն ընդդեմ Թեբեի» (592): – *55*

[3] Էսքիլոս, «Յոթն ընդդեմ Թեբեի» («Ողբերգություններ», թարգմ.՝ Ա. Թոփչյանի, Ե. 1991, էջ 114): – *56*

[4] Հոմերոսի «Իլիականում» (XXI 308) Սկամանդրոսն օգնության է կանչում իր եղբայր Սիմոնոսին և ասում. «Անգի՜ն եղբայր, ե՛կ միասին զսպենք զայրույթն ահեղ քաջի» («Իլիական», թարգմ.՝ Հ. Համբարձումյանի, Ե., 1955, էջ 398): – *57*

[5] Հեսիոդոս, «Աշխատանք և օրեր» («Անտիկ, միջնադարյան, Վերածննդի գրականություն, I. Անտիկ գրականություն», թարգմ.՝ Ա. Թոփչյանի, Ե., 1990, էջ 400): – *57*

[6] Հոմերոս, «Ոդիսական» (թարգմ.՝ Հ. Համբարձումյանի, նշվ. հրատ., էջ 299): – *58*

[7] *Մուսեոսը* և իր որդին դիցաբանական երգիչներ են: Մուսեոսը համարվում է նաև Օրփեոսի ուսուցիչը, երբեմն աշակերտը: Մուսեոս

անունն արդեն ցույց է տալիս նրա կապը մուսայական արվեստների հետ: – *58*

[8] Հեսիոդոս, «Աշխատանք և օրեր» (թարգմ.՝ Ա. Թոփչյանի, նշվ. հրատ., էջ 402): – *59*

[9] Ծեր Փյունիկն այդպես է դիմում Աքիլլեսին, որը մերժում է աքայացի դեսպանների խնդրանքը («Իլիական», թարգմ.՝ Հ. Համբարձումյանի, նշվ. հրատ., էջ 187): – *60*

[10] Տե՛ս 7-րդ ծանոթագրությունը, ինչպես նաև «Իոն» տրամախոսության 28-րդ ծանոթագրությունը (Պլատոն, Երկեր հատոր III): – *60*

[11] Նկատի ունի օրֆեականների խորհրդավոր ծեսերը: – *60*

[12] Պինդարոս, դրվագ 213 (թարգմ.՝ Ս. Ստեփանյանի): – *60*

[13] *Արքիլոքոսը* (Ք.ա. VII–VI դդ.) ունի երկու չափածո առակ աղվեսի և կապիկի մասին (81 և 88–95 դրվագներ), որոնք ակնարկում են իր՝ Արքիլոքոսի և իր սիրելի Նեոբուլեի հոր՝ Լիկամբոսի փոխհարաբերությունները: Լիկամբոսը խաբել էր Արքիլոքոսին: Երկու առակներն էլ հայտնի են Եզոպոսի վերամշակմամբ: – *61*

[14] *Արիստոնի որդիներ* բառացիորեն նշանակում է «լավագույնի որդիներ»: Էլեգիան, որի մեջ հիշատակվում է Մեգարայի ճակատամարտին Գլավկոնի և Ադիմանտոսի հերոսական մասնակցությունը (Ք.ա. 409 կամ 405), ենթադրաբար գրել է Կրիտիասը: Հիշյալ դրվագը չի պահպանվել: – *64*

[15] Հմմտ. «Օրենքներ» (III 676a–682e):

Ի դեպ, Արիստոտելը քննադատել է Պլատոնի «Պետության» այս գաղափարը, քանզի «հավիտենական պետությունը» կյանքի կոչել կարող է ոչ թե կենցաղային կարիքների բավարարման տենչը, այլ «գեղեցիկ գոյության» նպատակը («Պոլիտիկա», IV 3, 12, 1191a 10–19): – *66*

[16] «Պոլիտիկայում» (1254b 18) ըստ Արիստոտելի՝ իրենց ֆիզիկական ուժը վաճառողները հոգով ստրուկներ են: – *70*

[17] *Որսալը և նմանակելը* Պլատոնի հաճախ գործածած կատեգորիաներից են: Տե՛ս «Սոփեստ» (221d–e): – *72*

[18] Դաստիարակության երկու տեսակների մասին տե՛ս նաև «Իոն» (50d–e): – *78*

[19] Հոմերոսին և Հեսիոդոսին քննադատել են դեռ նախասոկրատյան փիլիսոփաները, հատկապես Քսենոփանեսը, Հերակլիտոսը և Պյութագորասը: – *79*

[20] Հեսիոդոս, «Թեոգոնիա» (154–181): – *80*

[21] Նկատի ունի Էլևսինյան միստերիաները, որոնց ժամանակ զոհաբերում էին խոճկոր: – *80*

[22] «Հերայի շղթայումը» ողբերգությունը գրել է *Էպիքարմոսը* (Ք.ա.

մոտ. 540–450), որը չի պահպանվել: Օլիմպոսից Հեփեստոսի վտարման մասին տե՛ս «Իլիական» (IX 586–594): – *81*

[23] Տե՛ս Հոմերոս, «Իլիական» (XX 1–74): – *81*

[24] Հոմերոս, «Իլիական» (թարգմ.՝ Հ. Համբարձումյանի, նշվ. հրատ., էջ 460): – *82*

[25] Այս տողի հեղինակն անհայտ է: – *82*

[26] Տե՛ս Հոմերոս, «Իլիական» (IV 68–126): – *83*

[27] Տե՛ս Հոմերոս, «Իլիական» (I 5): – *83*

[28] Էսքիլոս, դրվագ 156 («Նիոբե» չպահպանված ողբերգությունից, թարգմ.՝ Ս. Ստեփանյանի): – *83*

[29] *Նիոբեն*, որը հպարտանում էր իր բազմազավակությամբ, արժանացավ Ապոլլոնի և Արտեմիսի նախանձին: Վերջիններս սպանեցին նրա բոլոր զավակներին:

Պելոպյանները՝ Պելոպս արքայի սերունդը, անիծվել են Զևսի կողմից, քանզի Պելոպսը ուխտադրուժ կերպով սպանել էր կառապան Միրտիլոսին: Նրանց պատմությունը նյութ է ծառայել Էսքիլոսի, Սոփոկլեսի և Եվրիպիդեսի մի շարք ողբերգությունների համար: – *83*

[30] Հոմերոս, «Ոդիսական» (թարգմ.՝ Հ. Համբարձումյանի, նշվ. հրատ., էջ 277): – *85*

[31] *Պրոտևս* – տե՛ս «Իոն» տրամախոսության 37-րդ ծանոթագրությունը (նշվ. հրատ., հատոր III):

Թետիս – Ներևսի դուստրը, ծովային դիցուհի, մահկանացու Պելևսի կինը և Աքիլլեսի մայրը: Պրոտևսի պես Թետիսը ունակ էր անվերջ կերպարանափոխվելու: – *85*

[32] Սխոլիաստը Արիստոփանեսի «Գորտերի» այս տողը (1344) վերագրում է Էսքիլոսին (դրվագ 168): Ինաքոսի դուստր Իոն՝ Զևսի սիրեցյալը, Հերայի քրմուհին էր: – *85*

[33] Զևսը կեղծ երազ էր ուղարկել Ագամեմնոնին՝ փորձելու համար աքայական զորքի հաստատակամությունը (Հոմերոս, «Իլիական», II 1–41): – *88*

[34] Մեջբերվում է Էսքիլոսի անհայտ ողբերգության տողը (դրվագ 350, թարգմ.՝ Ս. Ստեփանյանի): – *88*

Գիրք երրորդ

[1] Այդպես է պատասխանել Հադես իջած Ոդիսևսին Աքիլլեսի ստվերը (Հոմերոս, «Ոդիսական», թարգմ.՝ Հ. Համբարձումյանի, նշվ. հրատ., էջ 178 և հաջ.): – *90*

[2] Հոմերոս, «Իլիական» (նշվ. հրատ., էջ 378): – *90*

[3] Այդպես է խոսում Աքիլլեսը, երբ չի կարողանում պահել իրեն այցելած Պատրոկլեսի հոգին (Հոմերոս, «Իլիականե, նշվ. հրատ., էջ 424): – *90*

[4] Հադեսում մտածելու ունակությունը պահպանել էր միայն թեբեացի գուշակ Տիրեսիասը, մինչդեռ մյուս հոգիները մահից հետո զրկվում էին ինչպես բանականությունից, այնպես էլ հիշողությունից (Հոմերոս, «Ոդիսական», նշվ. հրատ., էջ 160): – *90*

[5] Խոսվում է Հեկտորի ձեռքով սպանված Պատրոկլեսի հոգու մասին, որը հեռանում է Հադես (Հոմերոս, «Իլիական», նշվ. հրատ., էջ 325): – *90*

[6] Այսպես Պատրոկլեսի հոգին փախչում է իրեն գրկել փորձող Աքիլլեսի ձեռքից (Հոմերոս, «Իլիական», նշվ. հրատ., էջ 424): – 90

[7] *Ղղջիկների* հետ են համեմատվում Պենելոպեի սպանված հոմանիների հոգիները, որոնց Հերմեսը տանում է Հադես (Հոմերոս, «Ոդիսական», նշվ. հրատ., էջ 372): – *90*

[8] Տե՛ս «Ֆեդոն» տրամախոսության 54-րդ և 55-րդ ծանոթագրությունները (նշվ. հրատ., հատոր I): – 91

[9] Այստեղ մեջբերվում են «Իլիականի» երկու դրվագներ (Հոմերոս, «Իլիական», նշվ. հրատ., էջ 446 և 348): – *92*

[10] Այդպես է ասում ծովային դիցուհի Թետիսը, որը փորձում էր փարատել Պատրոկլեսին կորցրած իր որդու՝ Աքիլլեսի վիշտը (Հոմերոս, «Իլիական», նշվ. հրատ., էջ 348): – *92*

[11] Այդպես է ասում Զևսը, երբ տեսնում է Աքիլլեսից փախչող Հեկտորին (Հոմերոս, «Իլիական», նշվ. հրատ., էջ 411): – *93*

[12] Այդպես սգում է Զևսը, գուշակելով իր որդու՝ Սարպեդոնի մահը (Հոմերոս, «Իլիական», նշվ. հրատ., էջ 314): – *93*

[13] Հոմերոս, «Իլիական», նշվ. հրատ., էջ 51: – *93*

[14] *Խոզարած էվմեոսը* թվարկում է նրանց, ովքեր «ցավալի են մահկանացուներին» (Հոմերոս, «Ոդիսական», նշվ. հրատ., էջ 274): – *94*

[15] Հոմերոս, «Իլիական», նշվ. հրատ., էջ 100: – *95*

[16] Հոմերոս, «Իլիական», նշվ. հրատ., էջ 76: – *95*

[17] Այդպես է Աքիլլեսը պարսավում Ագամեմնոնին (Հոմերոս, «Իլիական», նշվ. հրատ., էջ 41): – *95*

[18] Այդպես Ոդիսևսը, լսելով Ալկինոոսի դղյակում Դեմոդոկոսի երգը, փառաբանում է խրախճանքի ուրախությունը (Հոմերոս, «Ոդիսական», նշվ. հրատ., էջ 128): – *95*

[19] Այդպես է խոսել Ոդիսևսը, համոզելու համար իր ընկերներին մորթել Հելիոսի սրբազան կովերին (Հոմերոս, «Ոդիսական», նշվ. հրատ., էջ 193): – *96*

[20] Հոմերոս, «Իլիական», նշվ. հրատ., էջ 276: – *96*

[21] Այդպես է զսպում ինքն իրեն Ոդիսևսը, երբ տեսնում է իր տանը հոմանիների անօրինությունները (Հոմերոս, «Ոդիսական», նշվ. հրատ., էջ 316): – *96*

[22] Տողը վերագրվում է Հեսիոդոսին (Սուդա): – *96*

[23] Հոմերոս, «Իլիական», IX, 517–526: – *97*

[24] Հոմերոս, «Իլիական», XIX, 278–280: – *97*

[25] Հոմերոս, «Իլիական», XXIV, 175 և հաջ.: – *97*

[26] Հոմերոս, «Իլիական», նշվ. հրատ., էջ 407: – *97*

[27] Հոմերոս, «Իլիական», XXI, 130–132, 211–226, 223–329: – *97*

[28] Հոմերոս, «Իլիական», նշվ. հրատ., էջ 425: – *97*

[29] Հոմերոս, «Իլիական», XXII, 395–405: – *97*

[30] Հոմերոս, «Իլիական», XXIII, 175–183: – *97*

[31] *Պելևս* – միրմիդոնցիների արքան, էակոսի որդին և Զևսի թոռը, Աքիլլեսի հայրը: – *97*

[32] *Քիրոն* – Կրոնոսի որդին, իմաստուն կենտավրոս, շատ հերոսների, այդ թվում՝ Պելևսի դաստիարակը: – *97*

[33] Թեսևսը և նրա ընկերը՝ Պիրիթոոս արքան, փորձել են առևանգել Հադեսի կնոջը՝ Պերսեփոնեին: – *98*

[34] Էսքիլոս, «Նիոբե» (դրվագ 162): – *98*

[35] Հոմերոս, «Իլիական», I, 1–42: – *100*

[36] Հոմերոս, «Իլիական», նշվ. հրատ., էջ 35: – *100*

[37] Հոմերոս, «Իլիական», I, 7–21: – *100*

[38] Հմմտ. «Խնջույք» (223d): – *103*

[39] *Տրիգոն* – քնարի նման լարային նվագարան (եռանկյունի): *Պեկտիս* – քնարի լիդիական տարատեսակը: – *110*

[40] Ապոլլոնի գործիքը քնարն է, իսկ Մարսիասինը՝ սրինգը: Ըստ առասպելի՝ Ապոլլոնը հրամայել է մորթազերծ անել երաժշտական մրցության մեջ իրեն ձեռնոց նետած Մարսիասին և կախել նրա մորթը քարանձավում, որտեղ այն, քամուց ճոճվելով, արձակում էր ողբագին ձայներ: – *110*

[41] *Դամոնը* եղել է Պերիկլեսի երաժշտության ուսուցիչը: Ստեղծել է «իջեցված» լիդիական (հիպոլիդիական) եղանակը, որը հակադիր էր միջին լիդիականին, սակայն շատ նման էր հոնիականին (Plut. De mus. 16): – *111*

[42] *Դակտիլային ոտքը* պատկանում է էպիկական հեքսամետրին, ահա ինչու այստեղ միանում է հերոսական չափին (էնոպլիոսին), որը նույնացվում է կրետիկոսի և ամփիմակրոսի (-U-) հետ: – *111*

[43] *Յամբոս* (U-) և *տրոքեոս* (-U): – *111*

[44] Մարդու ֆիզիկական և հոգևոր առողջության վրա երաժշտու-

1915.info

թյան բարերար ազդեցության մասին սովորեցնում էին պյութագորյանները: Արթուր Շոպենհաուերը, արձագանքելով Պլատոնին, նշում է, որ եթե արվեստի մյուս տեսակները սոսկ տիեզերական կամքի արտաքին մանիֆեստացիաների նմանակումներն են, ապա երաժշտությունը հենց ինքը կամքն է: – *113*

[45] *Միրակուլյան սեղանը* – դարձվածք է, այնպես, ինչպես հաջորդիվ նշվող *ատտիկյան թխվածքը* և *կորնթացի աղջիկը*: – *117*

[46] Ասկլեպիականներ – բժիշկների ընկերություն, որը գործում էր Հռոդոսում, Կոսում և Կնիդոսում: Բժշկության աստծո՝ Ասկլեպիոսի մասին տե՛ս «Ֆեդոն», 59-րդ ծանոթագրություն (նշվ. հրատ., հատոր I): – *119*

[47] *Ասկլեպիոսի որդիները* – Մաքաոնը և Պոդալիրիոսը մասնակցել են Տրոյայի պաշարմանը: Բուժել են Փիլոկտետոսին: – *119*

[48] Պլատոնը հիշատակում է «Իլիականի» երկու տարբեր դրվագներ: Տասնմեկերորդ գրքում (638–641) Նեստորի գերուհին՝ Հեկամեդեն, մատուցում է Նեստորին և վիրավոր Մաքաոնին պրամնեսյան գինուն խառնած այծի պանիր և ձվի փոշի: Իսկ նույն գրքի մեկ այլ դրվագում (842–848) Պատրոկլեսը բուժում է վիրավոր Եվրիպիլոսին՝ հեռացնելով նրա կոնքից նետի սլաքը և վերքին դնելով դառը արմատի փոշի: – *119*

[49] *Հերոդիկոս* – Հիպպոկրատես Կոսացու ուսուցիչն է: Աթենքում հիմնել էր գիմնասիոն: Երկարացնում էր հիվանդի կյանքը՝ ամբողջությամբ չապաքինելով նրան: – *119*

[50] *Փոկիլիդես* – ապրել է Միլետում (Ք.ա. VI դ.): Գնոմիկական բանաստեղծ, գրել է բարոյախրատական էլեգիաներ: – *121*

[51] Հոմերոս, «Իլիական», նշվ. հրատ., էջ 95: – *122*

[52] *Միդաս* – Փռյուգիայի արքա, որը հայտնի էր ոսկու հանդեպ իր մոլեգին կրքով: Հայտնի է նաև նրանով, որ Պանի սրինգը գերադասել է Ապոլլոնի կիթառից, որին ի պատիժ Ապոլլոնը տվել է նրան ավանակի ականջներ: – *122*

[53] Պինդարոսը մանրամասնորեն նկարագրում է Ասկլեպիոսի ծնունդն ու բժշկական հմտությունները: Նա պատմում է նաև, որ ոսկու տենչը այլասերում է Ասկլեպիոսին և նա փրկում է մահվան ճիրաններից մի մարդու, որին մահվան էին դատապարտել աստվածները, ինչի համար Զևսը շանթահարում է նրան (Pyth. III 55–58 Sn.): – *122*

[54] Տե՛ս Հոմերոս, «Իլիական», XVII 587 և հաջորդ: – *126*

[55] Հմմտ. «Կրատիլոս» (414c), որտեղ ասվում է, որ փոխելով բառերը և նրանց արտասանության եղանակը՝ կարելի է դրանց հաղորդել «ողբերգական» բնույթ: – *130*

[56] Փորձության նշված երեք տեսակները կիրառվում էին հատկապես Սպարտայում: – *131*

[57] Տե՛ս վերը, 389 b–d: – *131*

[58] Սխոլիաստը նշում է, որ Պլատոնը հավանաբար նկատի ունի փյունիկեցի Կադմոսին, որը, համաձայն առասպելի, կարողացավ խուսափել վիշապի ժանիքներից և սպանել նրան: Տե՛ս նաև «Օրենքներ», II 664e: – *132*

[59] Հմմտ. «Սոփեստի» 27-րդ ծանոթագրությունը (նշվ. հրատ., հատոր II) և «Տիմեոսի» 26-րդ ծանոթագրությունը (հատոր III): – *132*

[60] Պլատոնն այստեղ օգտվում է պատմության շրջափուլերի հեսիոդյան անվանումներից: Հեսիոդոսը իր «Աշխատանք և օրեր» պոեմում (110–200) տվել էր պատմության հոռետեսական պատկեր, որտեղ ոսկեդարին հաջորդում էր արծաթե դարը, այնուհետև պղնձե դարը, հերոսական դարը և երկաթե դարը, որն, ըստ Հեսիոդոսի, վատագույնն է մարդկանց համար: – *133*

Գիրք չորրորդ

[1] Նկատի ունի տամախաղը, երբ «քաղաքը» ասես բաժանված է երկու թշնամի ճամբարների: – *141*

[2] Հմմտ. «Պետություն» (449c) և «Օրենքներ» (739): – *142*

[3] Հոմերոս, «Ոդիսական», նշվ. հրատ., էջ 15: – *143*

[4] Հմմտ. «Օրենքներ» (VII 797b): – *144*

[5] Մեկ արատավոր օրենքի ընդունումը ծնում է բազում պետական չարիքներ, ինչպես Լերնեյան Հիդրայի գլուխը, որի հատման տեղում աճում են տասը նոր գլուխներ: – *147*

[6] Հմմտ. «Օրենքներ» (VI 759c): – *147*

[7] *Քալեստրյան պոտաշ* – հիմնային նատրիում: Այսպես է կոչվում Քալեստրա քաղաքի անունով: – *151*

[8] Հմմտ. «Պետություն» (X 616c–617c): – *152*

[9] Սխոլիաստը նշում է, որ «գեղեցիկը դժվար է» ասույթը պատկանում է Սոլոնին: Պերիանդրոսը՝ Կորնթոսի տիրակալը, նախապես լինելով ժողովրդի բարեկամը, հետագայում դարձել էր բռնակալ: Միտիլենեի տիրակալ Պիտտակոսը իմանալով այդ մասին՝ նստել է զոհասեղանի առաջ և խնդրել իրեն ազատել իշխանությունից՝ ասելով, որ դժվար է առաքինի լինել: Իմանալով դա՝ Սոլոնն ասել է. «Գեղեցիկը դժվար է»:

Տե՛ս նաև Պլատոն, «Հիպպիաս Ավագ» (304e): – *160*

[10] Այս պատմությունը հիշատակվում է ատտիկյան կատակերգու

Թեոպոմպոսի դրվագներում (Kock, I, p. 739, Theopompi fr. 24): – *166*

[11] Հոմերոս, «Ոդիսական», նշվ. հրատ., էջ 316: – *168*

Գիրք հինգերորդ

[1] Այս հարցի պատասխանը տրվում է «Պետության» VIII գրքում: – *176*

[2] Տե՛ս «Պետություն», Գիրք IV, 424a: – *176*

[3] *Ադրաստեան՝* նույն ինքը Նեմեսիսը, ճակատագրի և վրեժի դիցուհին է: – *178*

[4] Կրետացիք և լակեդեմոնացիք հույների մեջ առաջինը պարտադիր դարձրին ֆիզիկական դաստիարակությունը: – *181*

[5] Մեջբերվող արտահայտության հեղինակն է Պինդարոսը (դրվագ 209): Տվյալ հատվածում Պլատոնը ակնարկում է Արիստոփանեսի «Կանայք ազգային ժողովում» կատակերգությունը, որտեղ կանայք հաստատում են գույքի, դրամի, ստրուկների, կացարանի, կանանց և զավակների համընդհանրությունը: – *188*

[6] Ասելով երկրաչափական անհրաժեշտություն՝ Պլատոնը նկատի ունի տրամաբանական անհրաժեշտությունը: – *190*

[7] Հմմտ. «Օրենքներ» (VI 772d, 785b):

Տե՛ս նաև Արիստոտել, «Պոլիտիկա» (VII 14, 1335b 29–31): – *194*

[8] *Պյութիա* – Ապոլլոնի քրմուհին Դելփիքում: – *195*

[9] Օլիմպիական մրցույթներում հաղթողներն ունեին բազում արտոնություններ: Նրանք կարող էին ողջ կյանքի ընթացքում ճաշել պետության հաշվին, իսկ պատերազմի ժամանակ կռվում էին արքաների կողքին: – *201*

[10] Հեսիոդոս, «Աշխատանք և օրեր» (40): – *202*

[11] Տե՛ս Հոմերոս, «Իլիական» (322 և հաջ.): – *206*

[12] Հոմերոս, «Իլիական», նշվ. հրատ., էջ 162: – *206*

[13] Հեսիոդոս, «Աշխատանք և օրեր», նշվ. հրատ., էջ 397: – *206*

[14] Հույների «երրորդ ալիքը» նույնն է, ինչ մեր «հիններորդ ալիքը»: «Պետության» չորրորդ գրքում (441c) Սոկրատեսն ասում է, որ արդեն հաղթահարել է առաջին ալիքը, իսկ հինգերորդ գրքում (457b) նշում է, որ խույս է տալիս ալիքից, որ չխեղդվի: – *211*

[15] *Տրիտտիա* – Աթենքը բաժանվում էր 10 ֆիլեների, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած էր երեք մասերից՝ տրիտտիաներից: Յուրաքանչյուր տրիտտիա ուներ իր տրիտտարքոսը: – *215*

Գիրք վեցերորդ

[1] *Մոմոս* – ծաղրի և սրախոսության աստված՝ Գիշերվա որդին («Թեոգոնիա», 214): – *229*

[2] *Այծակերպ եղջերու* – այս ֆանտաստիկ կենդանին Արիստոֆանեսի «Գորտերում» (937) խորհրդանշում է էսքիլոսի ողբերգության վերամբարձ ոճը: – *231*

[3] *Մանդրագոր* – բույս, որի արմատն ունի մարդանման տեսք: Քնաբեր է: – *231*

[4] Արիստոտելն իր «Ճարտասանության» մեջ Սիմոնիդես Կեոսցուն վերագրել է հետևյալ արտահայտությունը. «Իմաստունները միշտ հարուստների դռան առաջ են»: Սակայն սխոլիաստը տվյալ դրվագի վերաբերյալ նշում է, որ Սոկրատեսը ոմն Եվբալոսի ասել է, որ իմաստունները հարուստների դռան առաջ գիտեն՝ ինչ կարող են ստանալ հարուստներից, իսկ հարուստները չգիտեն, թե ինչ կարող են ստանալ իմաստուններից: – *232*

[5] Ասացվածքը ակնարկվում է «Խնջույքում» (176c): – *237*

[6] Ըստ սխոլիաստի մեկնության՝ «դիոմեդյան կարիք» արտահայտությունը ծագում է պատմությունից, ըստ որի Դիոմեդեսը և Ոդիսևսը Տրոյայում գողացան Աթենայի պալլադիոնը (Աթենա Պալլասի սրբազան հմայիլ-արձանը): – *239*

[7] *Թեագես* – հիշատակվում է «Սոկրատեսի պաշտպանականում» (33e) որպես Սոկրատեսի աշակերտ: Պլատոնը նրան է նվիրել իր «Թեագես» տրամախոսությունը: – *242*

[8] Դեմոնային նշանի մասին տե՛ս «Սոկրատեսի պաշտպանականը», 25-րդ ծանոթագրություն (նշվ. հրատ., հատոր I): – *243*

[9] Ըստ Հերակլիտոսի՝ արեգակը ոչ միայն ամեն օր նոր է, այլև մշտապես նորոգվում է (B6 D9): – *245*

[10] Հոմերոսն իր պոեմներում «աստվածանման» և «աստվածային» էր կոչում հերոսներին: – *249*

[11] Տե՛ս «Պետություն», Գիրք IV, 439 c–d: – *253*

[12] Հայրը գերագույն բարիքն է: «Տիմեոսում» այն կոչվում է դեմիուրգոս: – *257*

Գիրք յոթերորդ

[1] Հոմերոս, «Ոդիսական», նշվ. հրատ., էջ 179: – *268*

[2] *Երանելի կղզիները* հիշատակում են՝ Հեսիոդոսը («Աշխատանք և օրեր», 721–728), Պինդարոսը («Իսթմյան ներբողներ», VIII, 156–

23) և Հերոդոտոսը («Պատմություն», III, 26): Վերջինս նշում է, որ Երանելի կղզի է կոչվում եգիպտական Թեբեի հարևանությամբ անապատում գտնվող Օասիս քաղաքը: – *271*

[3] *Շրջել խեցին* նշանակում է վիճակ նետել, այսինքն՝ հիմնվել դիպվածի ու պատահականության վրա: – *274*

[4] Տե՛ս «Սոկրատեսի պաշտպանականի» 41-րդ ծանոթագրությունը (նշվ. հրատ., հատոր I): Պալամեդեսը համարվում է տամախաղի, թվերի և հաշվի հորինողը: – *276*

[5] Պլատոնյան Ակադեմիայի մուտքին գրված էր՝ «Թո՛ղ երկրաչափություն չիմացողը ներս չմտնի»: – *284*

[6] *Խորանարդ* ասելով՝ Պլատոնը նկատի ունի երեք չափում ունեցող ամեն մարմին: – *285*

[7] *Դեդալոս* – Մետիոնի որդին, Աթենքի միֆական գյուտարար և նկարիչ: Կառուցել է Կրետեի լաբիրինթոսը: – *287*

[8] Պլատոնը քննադատում է պյութագորյան փիլիսոփա Հիպպասին, որին պակասում է ուսմունքը հնչյունների արագ և դանդաղ շարժման մասին (18a–12d): – *290*

[9] Տե՛ս Սոլոն, դրվագ 22D: – *297*

Գիրք ութերորդ

[1] Սխոլիաստը նշում է, որ «ըմբիշի պես նույն դիրք ընդունել» արտահայտությունը նշանակում է, որ նախորդ վեճի ընթացքում կողմերից ոչ մեկը չի հաղթել, հետևաբար մարտը պիտի կրկնվի: – *305*

[2] Տե՛ս Հոմերոս, «Ոդիսական» (XIX 162): – *306*

[3] *Տիմոկրատիան* ենթադրում է բարեկեցիկների իշխանություն: Տիմոկրատական էր Աթենքի իշխանությունը նախքան Սոլոնի սահմանադրությունը: – *306*

[4] Տե՛ս Հոմերոս, «Իլիական» (XVI 112): – *307*

[5] Պլատոնը, խորապես ազդված լինելով պյութագորյանների ուսմունքից, հավատացած է, որ տիեզերքի, մարդու և հասարակության ճանաչողությունը կապված է դրանց հիմքում գործող թվային հարաբերությունների իմացության հետ: Մարդու ստեղծած պետական կառույցը կատարյալ կլինի, եթե յուրացնի «հավասարակողմ» և «քառակուսի» ներդաշնակությունները: – *308*

[6] Տե՛ս Հեսիոդոս, «Աշխատանք և օրեր» (109–201): – *308*

[7] Հմմտ. «Պետություն», Գիրք II, 415a: – *308*

[8] Քսենոփոնի հաղորդմամբ՝ արդեն քսան տարեկանում Գլավկոնը տենչում էր կանգնել պետության գլուխ: Սակայն ի վերջո Սոկրա-

տեսը ետ է պահել նրան այդ մտքից (տե՛ս Քսենոփոն, «Հուշեր Սոկրատեսի մասին», Գիրք II, գլուխ VI): – *311*

[9] Սա էսքիլոսի «Յոթն ընդդեմ Թեբեի» ողբերգության մեջ էտեոկլեսի խոսքի փոխասությունն է: Դիմելով բանբերին՝ էտեոկլեսը խնդրում է պատմել առաջնորդների մասին, որոնք իրենց զորքով կանգնած են ուրիշ դարպասի մոտ (տե՛ս էսքիլոս, «Յոթն ընդդեմ Թեբեի», 451 և հաջ.): – *313*

[10] Նկատի ունի հարստության կույր աստված Պլուտոսին: – *319*

[11] *Լոտոֆագոսները* առասպելական ցեղ են, որոնք սնվում են լոտոսով: Օտարերկրացիները, հայտնվելով լոտոֆագոսների երկրում և համտեսելով լոտոսը, կորցնում էին հիշողությունը և մոռանում էին իրենց հայրենիքը: Տե՛ս «Ոդիսական» (IX 83–102): – *328*

[12] էսքիլոս, դրվագ 351: – *333*

[13] Սխոլիաստը նշում է, որ ասացվածքն ակնարկում է տերերի և հպատակների հավասարությունը: – *333*

[14] *Կրեսոսի՝* Դելփիքում ստացած այս պատգամի մասին հիշատակում է Հերոդոտոսը (I 55): Բերված տողերի թարգմանությունը՝ Սիմոն Կրկյաշարյանի (Հերոդոտոս, «Պատմություն ինը գրքից», Ե., 1986, էջ 24): – *338*

[15] Հոմերոս, «Իլիական», XVI 775: – *338*

[16] Սխոլիաստն այս տողը վերագրում է Սոփոկլեսին: Ամենայն հավանականությամբ, դա ողբերգակի «Լոկրեցի Այաս» չպահպանված ողբերգության տողն է: – *340*

Գլուխ իններորդ

[1] Սխոլիաստը նշում է, որ ասացվածքը նկատի ունի նրանց, ովքեր, չիմանալով պատասխանը, վերադարձնում են հարցը զրուցակցին: – *346*

[2] Երգչախումբը հունական դրամայում խորհրդանշում էր անձնավորված իմաստնություն և գնահատականներ էր տալիս դեպքերին և անձանց: – *356*

[3] *Ստեսիքորոս* (Ք.ա. VII–VI դդ.) – սիկիլիացի քնարերգու, գրել է խմբերգեր: Ստրոփեին և անտիստրոփեին ավելացրել է էպոդոսը՝ կրկներգը: Սուդան ասում է, որ Ստեսիքորոսը անարգ տողեր է գրել Հեղինեի մասին և այդ պատճառով կուրացել է: Հետագայում երազում փառաբանող տողեր է ձոնել Հեղինեին և վերադարձրել տեսողությունը: – *367*

[4] Բռնակալի երջանկությունը սոսկ իսկական երջանկության

ստվերի ստվերն է և կարող է արտահայտվել միայն քառակուսով, որի կողմը հավասար է 9-ի, իսկ մակերեսը՝ 81-ի: Սակայն բռնակալի անկման ողջ խորությունն արտահայտելու համար հարկ է ստեղծել եռաչափ մարմին՝ խորանարդ (9 x 9 x 9 = 729): Արդ, թագավորական երջանկությունը 729 անգամ գերազանցում է բռնակալի հաճույքին: Այդ թիվն, ըստ Պլատոնի, համապատասխանում է տարվա օրերի և գիշերների գումարին: – *370*

[5] *Էրիփիլեն* Ամփիարայասի կինն է և Ալկմեոնի մայրը: Ամփիարայասը, լինելով բարեպաշտ, չէր ցանկանում արշավել Թեբեի դեմ: Թանկարժեք զարդով հմայված Էրիփիլեն մատնել է իր ամուսնուն (Հոմերոս, «Ոդիսական», XI 326 և հաջ.): – *372*

[6] Տե՛ս «Պետություն», գիրք առաջին, 343a–b: – *373*

Գիրք տասներորդ

[1] Նմանակողը երրորդ տեղում է, որովհետև առաջին տեղում իսկական գոյն է, որին նմանակում է, իսկ երկրորդ տեղում արքան է, այսինքն՝ դեմիուրգոսը: – *380*

[2] Տե՛ս վերը՝ Գիրք III, 46-րդ ծանոթագրություն: – *382*

[3] *Քարոնդասը* (Ք.ա. V դ.), ինչպես և Սոլոնը, օրենքներ է տվել իր երկրին՝ Սիկիլիային: – 383

[4] *Անաքարսիսը* առասպելական սկյութ է, որը Հունաստան կատարած ուղևորության ժամանակ հանդիպել է Սոլոնին, ազդվել է նրանից և դարձել փիլիսոփա (Հերոդոտոս, IV 76): – *383*

[5] Հայտնի է, որ Պյութագորասը Իտալիայի հարավում՝ Կրոտոնում, հիմնել է դպրոց, որտեղ մեծ տեղ էին տալիս մաթեմատիկական գիտություններին և վարում ասկետի կյանք: – *383*

[6] *Կրեոփիլոսը*, որը ծագումով Քիոս կղզուց էր, ամուսնացել է Հոմերոսի դստեր հետ, աներոջից նվեր է ստացել «Իլիականը» և հյուրընկալել իր մոտ պոետին: «Կրեոփիլոս» հունարեն նշանակում է «մսի սեռից»: – *384*

[7] Այս ասացվածքն, ըստ երևույթին, կապ ունի մանուկներին զամբյուղի մեջ գլխի վրա կրելու սովորության հետ: – *384*

[8] Բանաստեղծը, ինչպես և գեղանկարիչը, երրորդ աստիճանի նմանակող է, մինչդեռ երաժիշտ-ֆլեյտահարը գիտի իր արվեստի օգտակարության մասին և, հետևաբար, ավելի մոտ է բնօրինակի ըմբռնմանը, քան նմանակող պոետը: – *387*

[9] Նկատի ունի հեռանկարի օրենքը: – *388*

[10] «Օրենքներում» Պլատոնը գրում է, որ բանաստեղծները հա-

մեմատում են փիլիսոփաներին վայրահաչող շների հետ (XII 967b–c): – *395*

[11] *Գլավկոսը* ձկնորս է եղել, սակայն կախարդական խոտ ուտելով՝ դարձել է անմահ և իրեն ծովն է նետել: Օվկիանոսը և Տեթիսը նրան դարձրել են աստված: – *401*

[12] *Գիգեսի* մասին տե՛ս Գիրք II, 1-ին ծանոթագրություն: *Հադեսի սաղավարտը* անտեսանելի դարձնելու կախարդական զորություն ուներ: Մահկանացուներին անտեսանելի կերպարանքով այցելելու համար դրանից օգտվում էին աստվածները: – *402*

[13] *Էր* անունը Սուդայի բառարանում նշվում է որպես «հրեական հատուկ անուն«: Կղեմենտոս Աղեքսանդրացին նույնացնում է նրան Զրադաշտի՝ պամփիլիացի Արմենիոսի որդու հետ (Stromat. V. գլ. XIV, 103, 2–4): Էրի ճանապարհորդության մասին պատմում է նաև Պլուտարքոսը (Quaest. Conv. X 740): – *405*

[14] *Երկու ծերպերի* մասին պատմում է նաև Պլուտարքոսը (De genio Socrat. 591c): – *405*

[15] Լուսային ոլորտը կապում և պարուրում է երկիրն ու երկինքը և անցնում է երկնքի և երկրի միջով աշխարհի առանցքի ուղղությամբ, որի ծայրերը համընկնում են բևեռների հետ: – *407*

[16] *Անանկեի իլիկը* գտնվում է լուսավորվող սյան կենտրոնում: Ընդ որում, իլիկի առանցքը հենց աշխարհի առանցքն է, իսկ իրանը հիշեցնում է կիսագունդ կամ հատած կոն, որը ներառում է յոթ ուրիշ կիսագնդեր, որոնք առաջինի հետ միասին կազմում են ութ ոլորտ: Ութ երկնային ոլորտները իրենց մակերեսով տարբեր են և կազմում են որոշակի համամասնություն: Առաջին ոլորտը, որը բովանդակում է մյուս յոթը, ամենամեծն է և անշարժ աստղերի երկինքն է (տե՛ս նաև «Տիմեոսի» 42-րդ ծանոթագրությունը, նշվ. հրատ., հատոր III): – *408*

[17] *Ոլորտների գույները* համապատասխանում են մոլորակների գույներին: Անշարժ աստղերի ոլորտը ամենախայտաբղետն է, քանի որ ունի իր կազմի մեջ մտնող բոլոր լուսատուների գույները: Յոթերորդ ոլորտը արեգակնայինն է և բոլորից պայծառը: Ութերորդ ոլորտը, որը լուսնի և երկրի ոլորտն է, փայլում է արեգակի անդրադարձող լույսից: Երկրորդ և հինգերորդ ոլորտները, որոնք պատկանում են Սատուռնին և Մերկուրիին, ոսկեգույն են: Երրորդ՝ Յուպիտերի ոլորտը սպիտակ է: Չորրորդ՝ Մարսի ոլորտը կարմիր է, վեցերորդ՝ Վեներայի ոլորտն ունի կուրացնող ճերմակություն: – *408*

[18] Տե՛ս «Տիմեոսի» 47-րդ ծանոթագրությունը (նշվ. հրատ., հատոր III): – *408*

[19] Ութ ոլորտների միջև ինտերվալները կազմում են օկտավա կամ

հարմոնիա: Տե՛ս «Տիմեոսի» 42-րդ ծանոթագրությունը (նշվ. հրատ., հատոր III): – *408*

[20] *Լաքեսիսը* բախտ բաժանողն է, *Կլոթոն՝* բախտի թելը մանողը, իսկ *Ատրոպոսը՝* անդրդվելին, որը թույլ չի տալիս, որ մարդու բախտը ետ շրջվի: Արդ, առաջին Մոյրան գործ ունի մարդու անցյալի հետ, երկրորդը՝ ներկայի, իսկ երրորդը՝ ապագայի: – *409*

[21] Խոսքը մարդու հոգու դեմոնի մասին է: Հմմտ. «Ֆեդոն» (107d), որտեղ մարդու դեմոնը ուղեկցում է նրան նաև մահից հետո: – *409*

[22] Տե՛ս «Տիմեոսի» 14-րդ ծանոթագրությունը (նշվ. հրատ., հատոր III): – *412*

[23] Աքիլլեսի մահից հետո նրա զենքը բաժին հասավ ոչ թե ամենաքաջ հույնին՝ Այասին, այլ խորամանկ Ոդիսևսին: – *412*

[24] *Ագամեմնոնը*, Տրոյական պատերազմից վերադառնալով, սպանվում է իր կնոջ՝ Կլիտեմնեստրայի ձեռքով: Նրա հոգին ընտրում է արծվի կյանք՝ հավանաբար մարդկանցից և նրանց ճղճիմ գործերից բարձր գտնվելու համար: – *412*

[25] *Ատալանտեն* արկադացի որսորդուհի է, մասնակցել է Կալիդոնյան որսին և Մելեագրոսի ձեռքից ստացել սպանված կինճի գլուխը: – *412*

[26] Տե՛ս «Իոնի» 13-րդ ծանոթագրությունը (նշվ. հրատ., հատոր III): – *412*

[27] *Թերսիտեսի* մասին տե՛ս Հոմերոս, «Իլիական», II 212–277: – *412*

[28] *Լեթեն* Հադեսում գտնվող մոռացության գետն է, որի ջրից խմող հոգիները մոռանում են երկրային իրենց կյանքը: – *413*

[29] *Ամելետոն* գետը կլանում է մարդկանց հոգսերը և դարձնում նրանց անհոգ: Տե՛ս նաև «Ֆեդոն», 113a–d: – *413*

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Ագամեմնոն 88, 97, 100,101, 276, 412
Ագլայոն 166
Ադիմանտոս 7, 8, 56, 64, 65, 68, 70, 77, 80, 81, 85, 89, 93, 99, 102, 107, 136, 140, 142–144, 176, 177, 229, 232, 236, 242, 248, 305, 311, 312, 316, 347
Ադրաստես 178
Աթենա 83
Այաս 206, 412
Անանկե 407–409, 413
Անաքարսիս 383
Ապոլլոն 97, 101, 147, 261
Ասկլեպիականներ 119
Ասկլեպիոս 119–122
Ավտոլիկոս 17
Ատալանտե 412
Ատրոպոս 408, 409, 413
Արդիևս 406, 407
Արիստոն 7, 64, 147
Արիստոնիմոս 8
Ափրոդիտե 96
Արմենիոս 405
Աքիլլես 92, 97

Բենդիս 49
Բիաս 20

Գիգես 53, 408
Գլավկոն 7, 8, 23, 36, 38, 50, 55–58, 63–67, 71, 73, 74, 76, 77, 108, 113, 125, 128, 131, 134, 135, 148, 155, 160, 169, 172, 176–179, 181–183, 190, 191, 195, 213, 214, 216, 225, 257, 261, 268, 272, 275, 281, 289, 290, 292, 293, 303, 304, 307, 311, 350, 356, 367, 372, 374, 383, 384, 394, 396–398, 401, 402, 406, 413
Գլավկոս 401

Դամոն 111, 143
Դեդալոս 287
Դիոմեդես 95
Դիոնիսոս 216

Եվրիպիդես 340
Եվրիպիլոս 122

Զևս 82, 83, 86, 96–98, 110, 206, 337, 361

Էպեյոս 412
Էսքիլոս 83, 313, 333
Էր 405, 406, 408, 409
Էրոս 346, 348

Թալես 333
Թամիրաս 412
Թեմիս 83
Թեմիստոկլես 10
Թեսևս 98
Թետիս 85
Թերսիտես 412
Թրասիմաքոս 8, 21–23, 25–28, 30, 31, 33–36, 38, 39, 41–45, 49–51, 63, 64, 177, 178, 245, 306, 373

Ինաքոս 85
Իսմենիաս 21

Լաքեսիս 408, 409, 412
Լեոնտիոս 166
Լիդոս 53
Լիկուրգոս 383
Լիսանիաս 11
Լիսիաս 7

Կերբերոս 370
Կեփալոս 7–10, 12, 13
Կլիտոփոն 7, 26, 27
Կլոթո 408, 409, 413
Կրեոփիլոս 384
Կրեսոս 338
Կրոնոս 80

Հադես 90
Հեկտոր 97
Հեղինե 367
Հեսիոդոս 57, 79, 80, 202, 206, 384, 402
Հերա 81, 85, 96
Հերակլես 22
Հերոդիկոս 119
Հեփեստոս 81, 93, 96
Հոմերոս 17, 57, 79, 81, 82, 88, 91–93, 95, 97, 100, 101, 105, 117, 168, 206, 249, 268, 307, 376, 381–384, 392, 394, 395, 402

Մարսիաս 110
Մենելաոս 122
Մենիտյան 93
Միդաս 122
Մոմոս 229
Մուսա 60
Մուսեոս 58, 60

Նիկիոս 7
Նիոբե 83

Ոդիսևս 17, 168, 412

Պալամեդես 276
Պանդարոս 83, 122
Պանոպևս 412
Պատրոկլես 97, 119
Պելոպյաններ 83
Պելևս 97
Պերդիկկաս 21
Պերիանդրոս 21
Պերսեփոնե 90
Պինդարոս 12, 60, 122
Պիրիթոոս 98
Պիտտակոս 20
Պյութագորաս 383
Պյութիա 302
Պոլեմարքոս 7, 8, 12–14, 16, 18, 20, 21, 26, 27, 147, 176, 305

Պոլիդամաս 24
Պոսեյդոն 98
Պրիամոս 92
Պրոդիկոս 384
Պրոտագորաս 384
Պրոտևս 85

Սարպեդոն 93
Սելենե 60
Սիմոնիդես 12–14, 17, 18, 20
Սիրեն(ներ) 408, 409
Սկիլլե 370
Սոլոն 296, 383
Սոկրատես 7–12, 14–16, 18, 20–24, 26, 27, 31, 33, 36, 49, 50, 52, 56–58, 60, 62, 63, 67, 70, 71, 73, 108, 115, 122, 128, 136, 139, 172, 174, 177, 179, 181, 203, 210, 230, 237, 245, 256, 257, 285, 286, 290, 302, 303, 316, 356, 367, 384
Սոփոկլես 9, 10

Տելամոն 412

Ուրանոս 80

Փյունիկ 97
Փոկիլիդես 120, 121

Քարմանիդես 8
Քարոնդաս 383
Քիմեռներ 370
Քիրոն 97
Քսերքսես 21
Քրիսես 100, 101

Օրփեոս 60

Ֆեբոս 88

1915.info

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ 7
ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ 50
ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ 89
ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ 136
ԳԻՐՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ 177
ԳԻՐՔ ՎԵՑԵՐՈՐԴ 226
ԳԻՐՔ ՅՈԹԵՐՈՐԴ 266
ԳԻՐՔ ՈՒԹԵՐՈՐԴ 305
ԳԻՐՔ ԻՆՆԵՐՈՐԴ 344
ԳԻՐՔ ՏԱՍՆԵՐՈՐԴ 377

Մեկնություններ և ծանոթագրություններ 415
Անվանացանկ 435

Պլատոն
Պ 678 **Երկեր չորս հատորով, Հատոր IV** / Պետություն. թարգմ. և ծանոթագր.՝ Ս. Ստեփանյան. – Եր.: Սարգիս Խաչենց, ՓՐԻՆԹԻՆՖՈ, Անտարես, 2017.– 440 էջ

Հույն փիլիսոփա Պլատոնի (Ք.ա. 428/7–348/7) երկերի չորրորդ հատորը բովանդակում է «Պետություն» տրամախոսությունը: Պլատոնն անդրադառնում է իրեն հուզող գրեթե բոլոր հարցերին և փիլիսոփայության բաժիններին՝ գաղափարների տեսություն, իմացաբանություն, էսթետիկա, մետաֆիզիկա, քաղաքագիտություն, էթիկա:

ՀՏԴ 1/14
ԳՄԴ 87

Հրատ. խմբագիր՝ Սամվել Խաչատրյան
էջադրում՝ Անժելա Մանուկյան

Սարգիս Խաչենց հրատարակչություն ՍՊԸ
0010 Երևան, Արամի փ. 1, Ազգային պատկերասրահ
հեռ./ֆաքս. (37410) 56-36-61, e-mail: sargiskhachents@gmail.com

ՓՐԻՆԹԻՆՖՈ ՀՁ ՍՊԸ
0043 Երևան, Շարուրի 37/1
հեռ. (37410) 46-53-80, ֆաքս. (37410) 46-53-84
e-mail: info@printinfo.am
www.printinfo.am

Անտարես հրատարակչատուն
0009 Երևան, Մաշտոցի պող. 50ա/1
հեռ. (37410) 58-10-69
հեռ./ֆաքս. (37410) 58-76-69
e-mail: antares@antares.am
www.antares.am

1915.info